ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1948

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ
ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

ХАЧАТУР АБОВЯН

ЛИТЕРАТУРНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

КНИГА ТРЕТЬЯ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1948

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1948

խմբագրությամբ՝ ԱՍ. ԱՍԱՏՐՅԱՆԻ և ԷԴ. ԹՈՓՉՅԱՆԻ»

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ նոր գրականության ու մանկավարժության հիմնադիր, մեծ լուսավորիչ-դեմոկրատ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ հրատարակվող ներկա ժողովածուն՝ Ինստիտուտի «Գրական բանասիրական հետազոտություններ»-ի երրորդ գիրքը ամբողջովին նվիրված է մեծ լուսավորչի բազմահարուստ կյանքին ու գործունեության։ Նախընթաց ամբողջ 100-ամյակի ընթացքում բազմաթիվ հոդվածներ ու մի շարք մենագրություններ են նվիրված Աբովյանին, բայց այս բնույթի քննադատական-տեսական ու բանասիրական հետազոտությունների ժողովածու չի եղել։

Հարկ է նկատել, սակայն, որ ժողովածվում տեղավորված հոդվածների ոչ բոլոր դրույթներն են անառարկելի։ Կան դրույթներ, (օր. ընկ. ընկ. Դ. Դեմիրճյանի, Մ. Սանթրոսյանի և այլ հոդվածներում), որոնք աբովյանագիտության չլուծված ու դեռ քննության ենթակա պրոբլեմներից են, և որոնց պետք է անդրադառնա մեր գրականագիտությունը հետագայում ևս։ Ժողովածուն պատրաստելիս Ինստիտուտն առաջադրել է ընդգրկելու Աբովյանի կյանքի ու գործունեության, նրա մեծ ժառանգության ոչ բոլոր, այլ մի քանի հիմնական հարցերի լուսաբանությունը։

Ինստիտուտը ներկա ժողովածուն դիտում է իբրև իր գիտական կոլեկտիվի առաջին փորձը՝ Աբովյանի գործունեությունը և նրա թողած ժառանգությունը մարքս-լենինյան թեորիայի լույսի տակ քննության առնելու և գնահատելու ուղղությամբ։

Ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքում հետագայում ևս իր արժանի տեղն է գրավելու՝ ինչպես Աբովյանի գրական ժառանգության գիտական հրատարակությունը, նույնպես և այդ ժառանգության բազմակողմանի ուսումնասիրությունը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

I

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԷԴ. ԹՈՓՉՅԱՆ

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԻ ԻԴԵԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Վերք Հայաստանի» վեպը նշանավորում է հայ գրականության զարգացման նոր դարաշրջանի սկիզբը, հայ հասարակական հարաբերությունների ռեալիստական ճանաչման նոր որակը։ Այս տեսակետից միանգամայն օրինաչափական էր նախասովետական ժամանակաշրջանում «Վերքի» վաթսունամյա կյանքին ուղեկցող պայքարը հայ «ազգային երկու կուլտուրայի» տարբեր սերունդների միջև։

«Վերք Հայաստանին» տպագրվեց հեղինակի ողբերգական կորուստից միայն տաս տարի հետո, 1858 թվին։ Այդ տարիների մամուլում արդեն որոշակիորեն դրսևորվում էր պահպանողականների և դեմոկրատականների վերաբերմունքը Աբովյանի ժառանգության և մասնավորապես նրա վեպի նկատմամբ։ «Վերքի» առաջին գնահատողներից մեկը, «Կռունկի» խմբագիր Մ. Աղաբեկյանը, նշելով Աբովյանի և Նարեկացու նմանությունը, գրում էր. «...Աբովյանը մարդկության և ազգության սիրո ճաշակից սիրտը վառած և միտքն արբած քանահյուսում և բանաճառում էր իր հայրենակցաց նահապետական կամ հովվական տնային և դաշտային կյանքը, մանրամասն նկատելով և նկարելով նրանց բարուց և վարուց այլևայլ հայկական հանգամանքները, նրանց հոգվո և սրտի կրոնական և բարոյական համոզմունքներն, զգացմունքները, նրանց սովորությանց, ավանդությանց և համոզմանց ազգի ազգի ձևերն ու կերպերը...»։[1] Նույն հայացքն է արտահայտված «Սոս և Վարդիթերի», Նալբանդյանի գնահատությամբ, ձախողված առաջաբանում։ Պ. Պռոշյանն ասում է. «Մտածելով այս ամենը— բազմաջան Խաչատուր Աբովյան ուսումնականը և զգալով անշուշտ ազգի ավանդությունները ու ծեսերը կենդանացնելու հարկն, գրեց յուր «Վերք Հայաստանի» արդյունավոր շարադրությունը...»։

1 «Կռունկ», 1860, էջ 875։

Ծաղարեկյանը, Պռոշյանը և հետագայում Սպանդար Սպանդարյանը «Նոր Դարի» էջերում, ընդգծում և առանձնացնում էին «Վերքի» այն հատվածները, ուր արտահայտվում էր Աբովյանի համակրանքը անհետացած անցյալի և գյուղական նահապետական հարաբերությունների նկատմամբ։

Նացիոնալիստական պարտիաների ձևավորման և նրանց արկածախնդիր գործունեության հետագա ժամանակներում Աբովյանի ժառանգությունը, մասնավորապես «Վերքի» գաղափարական բովանդակությունը, ենթարկվում է նորանոր խեղաթյուրումների։ Ազգայնական բախտախնդիրները ջանք չեն խնայել կապ ստեղծել իրենց քաղաքական ավանտյուրիզմի և Աբովյանի հայրենասիրական հորդորների միջև։ Մեծ լուսավորիչ-դեմոկրատի հայացքներում արտահայտված ազգային բացառիկության և սնապարծության որոշ տարրեր նրանք աճեցնում էին անբնական չափերով՝ մինչև մարտնչող նացիոնալիզմի որակը։

Այսպիսով, տասնամյակներ շարունակ պահպանողական, լիբերալ և նացիոնալիստական տարբեր երանգի հոսանքները և պարտիաները խեղաթյուրում էին Աբովյանի ստեղծագործության, հատկապես «Վերքի» խոր ժողովրդային բովանդակությունը, Աբովյանի աշխարհայացքի թուլությունները և սահմանափակությունները խտացնելով հորինում էին «աստվածասեր» բանաստեղծի, ազգային վշտի և տառապանքի ողբասացի ավանդական կերպարը։

Մեկնաբանելով Աբովյանի վեպի ռեալիզմը և ժողովրդայնությունը, Նալբանդյանը գրել է. «Ահա այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը։ Այստեղ, որպես մի կախարդական հայելու մեջ, ցույց է տալիս բանաստեղծը Հայոց Ազգի ընտանեկան կյանքի անշուք և անմխիթար պատկերները։ Այնտեղ տեսնում ենք գյուղերի տանուտերքը, ծանոթանում ենք նոցա հասկացողության հետ։ Բարեխիղճ բանաստեղծը հանդիպեցնում է մեզ հոգևոր մարդերի, խոսեցնում նոցա յուրյանց հասկացողության պես այս և այն բանի մասին, պատկերացնում է մեր առջև նոցա ունկնդիրների հասկացողության վիճակը, սահմանում է այն տխուր հարաբերությունը, որ կար նոցա մեջ։ Մենք տեսանում ենք այդ Ապոլոնյան հայելու մեջ հայկական կյանքի մեռած պատկերը, տեսնում ենք, թե, ինչպես այդ մեռելային դաշտի զանազան կետերում խլրտվում է առաքինությունը և հովվական կամ նահապետական ժամանակների հասկացողությամբ ընդդեմ է զինվորվում այս կամ այն անիրա-

վության, թե ինչպես հաղթվում է այս տարբերությունը և պատճառ լինում բյուր կաթիլներով արտասունքի»:[1]

Նալբանդյանը ոչ միայն ճշտորեն գնահատեց Աբովյանի վեպի բովանդակությունը, այլև խորացնելով Աբովյանի դեմոկրատիզմը, 60-ական թվականներին հանգավ ռևոլյուցիոն-դեմոկրատական եզրակացությունների:

Սակայն անցյալի կուլտուրայի վարպետների ժառանգության իսկական բովանդակությունը հնարավոր էր ամբողջությամբ մեկնաբանել միայն մարքս-լենինյան աշխարհայացքի դիրքերից: Աբովյանի ժառանգությունը իր իսկական ճանաչումը գտավ միայն Սովետական իշխանության պայմաններում: Սովետահայ գրականագիտությունը զգալի աշխատանք է կատարել (թեև ոչ առանց թերությունների) Աբովյանի ժառանգության քննադատական յուրացման համար: Սակայն Աբովյանի գլխավոր երկը՝ «Վերք Հայաստանի» դեռևս անհրաժեշտ ուշադրության չի արժանացել: Ավելին. մի քանի հետազոտողներ նույնիսկ կրկնել են՝ բուրժուական քննադատության տրադիցիոն տեսակետները «Վերքի» մասին: Մեր նպատակը չէ այս հոդվածում հայ գրականության այդ նշանավոր երկի ամբողջական բնութագիրը տալ: Մենք ցանկանում ենք նշել միայն վեպի գաղափարական մի քանի առանձնահատկությունները, որոնք կարևոր են Աբովյանի աշխարհայացքը և «Վերքի» էությունը ճիշտ մեկնաբանելու համար:

* * *

«Վերք Հայաստանի» վեպի գաղափարական բովանդակության հիմքը ազգության պրոբլեմն է: Աբովյանի վեպի մեջ գեղարվեստական արտասովոր ուժով դրսևորվում է հայ ժողովրդի պատմության բախտորոշ շրջաններից մեկը՝ պարսկական բռնակալության վերջը և ռուսական տիրապետության սկիզբը: Տնտեսական, քաղաքական և հասարակական իրադարձություններով հարուստ այդ ժամանակաշրջանը հայերի ազգային ձևավորմանը նախորդող բարդ և հակասական մի ժամանակաշրջան էր, երբ ստեղծվում էին ազգային շարժման գաղափարական նախադրյալները:

Մեկնաբանելով ազգությունների ձևավորման պրոցեսը, ընկեր Ստալինը գրել է. «Ֆեոդալիզմի լիկվիդացման ու կապիտալիզմի զարգացման պրոցեսը միաժամանակ մարդկանց որպես ազգեր կազմավորվելու պրոցեսն է: Այսպես է տեղի ունենում բանը, օրի-

---

[1] Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. I, 1945, էջ 279:

նակ, Արևմտյան Եվրոպայում»:[1] Ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ մի քիչ այլ կերպ է տեղի ունեցել ազգերի կազմավորման պրոցեսը Արևելյան Եվրոպայում: Այն ժամանակ, երբ արևմուտքում առեղծվեցին ազգային պետություններ, արևելքում կազմավորվեցին մի քանի ազգություններից բաղկացած պետություններ: «Ռուսաստանում ազգությունների միավորողի դերն ստանձնեցին վելիկոռուսները, որոնց գլխավորում էր պատմականորեն կազմավորված հզոր ու կազմակերպված ազնվական զինվորական բյուրոկրատիան:

Բանն այդպես է տեղի ունեցել Արևելքում:

Պետությունների գոյացման այդ յուրահատուկ եղանակը տեղի ունենալ կարող էր միայն դեռևս չլիկվիդացված ֆեոդալիզմի պայմաններում, թույլ զարգացած կապիտալիզմի պայմաններում, երբ հետին պլանը մղված ազգությունները դեռ տնտեսապես չէին կարողացել կոնսոլիդացվել որպես ամբողջական ազգեր»:[2]

Այնուհետև ընկեր Ստալինը լուսաբանում է, որ ետ մղված ազգությունների (որոնց թվին պատկանում են նաև հայերը) կյանքի մեջ ներխուժած կապիտալիզմը խռովահույզ է անում ազգություններին և շարժման մեջ է դնում նրանց: «Ծնունդ առած ինտելիգենցիան տոգորվում է ազգային գաղափարով և այդ իսկ ուղղությամբ էլ գործում է»:

Հայերի ազգային շարժման նախապատրաստման պրոցեսում ազգային գաղափարով տոգորվելու ամենացայտուն արտահայտությունը Աբովյանի ստեղծագործությունն է, հատկապես «Վերք Հայաստանի» վեպը:

Սակայն ո՞րն է ազգային շարժման բովանդակությունը:

Ընկեր Ստալինը մեկնաբանում է. «Ճնշված ազգի ամեն կողմից նեղված բուրժուազիան բնականաբար շարժվել է սկսում: Նա «հայրենի ներքնախավերին» է դիմում և սկսում է աղաղակել «հայրենիքի» մասին, իր սեփական գործը հրամցնելով համաժողովրդական գործի տեղ: Նա իր համար բանակ է հավաքագրում «հայրենակիցներից» հանուն... «հայրենիքի» շահերի: Եվ «ներքնախավերը» միշտ չէ, որ անտարբեր են մնում դեպի կոչերը, համախմբվելով նրա դրոշի շուրջը. վերևից եկող ռեպրեսիաները նրանց էլ են դիպչում, անբավականություն առաջ բերելով նրանց մեջ»:[3]

---

1 Ի. Ստալին, Երկեր, հ. 2-րդ, էջ 354:

2 Նույն տեղ, էջ 355:

3 Նույն տեղ, էջ 357:

Ազգային շարժման նախապատրաստման ժամանակաշրջանը տարբեր երկրներում ունեցել է իր առանձնահատկությունները։ Հայ իրականության մեջ նույնպես, մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը, 30—40-ական թվականների սոցիալ-քաղաքական իրադարձությունները վճռական նշանակություն են ունեցել և իրենց կնիքն են դրել ազգի ձևավորման պրոցեսի վրա։

Դարեր շարունակ թյուրքական, պարսկական այլևայլ բռնակալների լծի տակ կեղեքված և ճնշված հայ ժողովուրդը ցարական Ռուսաստանի էքսպանսիայի շնորհիվ ազատագրվում էր արևելյան բռնակալության շղթաներից և միավորվում էր Ռուսաստանին։

Ուշացած ազգության համար դա չարիքի փոքրագույնն էր, որը նախադրյալներ էր ստեղծում հայերի ազգային ձևավորման, նրանց նյութական և հոգևոր զարգացման համար։

Աբովյանի վեպում արտահայտվել է պատմական այս ճշմարտացի հայացքը։

Ի տարբերություն բուրժուական պրակտիկայի անմիջական ջատագովների, ազգության ձևավորման հարցին Աբովյանը մոտենում է լուսավորական դիրքերից և փայփայում բոլոր լուսավորիչներին հատուկ ընդհանուր շահի պատրանքը, միանգամայն անկեղծորեն հավատում ընդհանուր բարօրությանը։

Սահմանելով լուսավորական շարժման առանձնահատկությունները, Լենինը գրում է. «Ինչպես և արևմտա-եվրոպական լուսավորիչները, ինչպես և 60-ական թվականների գրական ներկայացուցիչների մեծամասնությունը, Սկալդինը կրքոտ թշնամությամբ է համակված դեպի ճորտատիրական իրավունքը և նրա բոլոր արտահայտությունները, տնտեսական, սոցիալական և իրավական բնագավառում։ Այս «լուսավորիչի» առաջին բնորոշ գիծն է։ Երկրորդ բնորոշ գիծը, որ ռուսական բոլոր լուսավորիչների համար ընդհանուր է,— լուսավորության, ինքնավարության, ազատության, կյանքի եվրոպական ձևերի և առհասարակ Ռուսաստանի բազմակողմանի եվրոպականացման եռանդագին պաշտպանությունն է։ Վերջապես, «լուսավորիչի» երրորդ բնորոշ գիծը ժողովրդական մասսաների, գլխավորապես գյուղացիների (որոնք դեռևս լիովին ազատագրված չէին կամ նոր միայն ազատագրվում էին լուսավորիչների դարաշրջանում) շահերի պաշտպանությունն է, անկեղծ հավատը, թե ճորտատիրական իրավունքի և նրա մնացորդների

վերացումն իր հետ ընդհանուր բարեկեցություն կբերի և դրան օժանդակելու անկեղծ ցանկությունը»:[1]

Լուսավորական աշխարհայացքի հիմնական գծերը արտահայտվել են նաև Աբովյանի մոտ, բեկվելով հայ իրականության պատմական կոնկրետ պայմանների համապատասխան: Աբովյանի լուսավորական հայացքների բովանդակությունը պայմանավորված էր հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կացությամբ 30—40-ական թվականներին: Պարսկական բռնակալության տակ կեղեքվող և ֆիզիկական ոչնչացման դատապարտված ժողովրդի համար առաջնահերթ էր ոչ թե սոցիալական, այլ քաղաքական ազատության խնդիրը: Այս տեսակետից պատահական չէ, որ Աբովյանի ստեղծագործության իդեական հիմքը, համարյա բոլոր դեպքերում, ժողովրդի քաղաքական ինքնուրույնության հարցն է, մի գաղափար, որով տոգորված է Աբովյանի լուսավորական գործունեությունը: Աբովյանը լուսավորիչ է ամենուրեք, մանկավարժական և հասարակական գործունեության մեջ, գեղարվեստական ստեղծագործություններում՝ վեպի, պատմվածքների, բանաստեղծությունների և նույնիսկ նամակների մեջ: Լուսավորությունը Աբովյանի կիրքն է, նրա տարերքը և իսկական կոչումը: Բայց 30—40-ական թվականներին հայ իրականության մեջ դեռևս թույլ էր դեմոկրատական աշխարհայացքի սոցիալ-քաղաքական հիմքը, այդ պատճառով ողբերգական բնույթ էր կրում Աբովյանի հերոսական մաքառումը ընդդեմ բռնակալության և միջնադարյան մտածողության թանձրացած խավարի:

Ապարդյուն աշխատանք կլինի Աբովյանի գործունեության մեջ որոնել ռոմանտիկական անհատի տառապանքները, օժտել նրան կրոնա-միստիկական տրամադրությամբ, հայտարարել, թե «կարծես նա տառապում լիներ զգայուն խղճի, բորբոքուն սրտի հիվանդությունից» (Կ. Կոստիկյան), կամ իբր թե նա «գործել է հոգեկան հավասարակշռությունը կորցրած» (Ե. Շահազիզ), կամ վերջապես նրա հումանիստական գործունեության մեջ տեսնել հետին նպատակներ (Ալ. Երիցյան): Դժվար էր այլ բան սպասել լիբերալ կամ պահպանողական ֆիլիստերներից: Մեծ լուսավորչի կյանքը և գործունեությունը նրանց համար անըմբռնելի առեղծված էր: Բուրժուական մտքի ներքինիները Աբովյանին ներկայացնում էին ձախողված մանկավարժի կամ կրոնական խենթացյալի կերպարանքով: Դա լոկ հերյուրանք էր:

[1] Վ. Ի. Լենին. «Ո՞ր ժառանգությունից ենք հրաժարվում մենք», էջ 19:

Աբովյանի ողբերգությունը հասարակական խոր հիմքեր ուներ: Մեծ դեմոկրատը մարտնչում էր ուշացած ժողովրդի ազգային զարթման համար, ժողովուրդ, որն ապրել էր բռնակալության պայմաններում, ճնշվել ֆիզիկապես և հոգեպես, ոչ միայն օտար, այլև «հայրենի» բռնակալների կողմից: Միջնադարյան մտածողությունը, եկեղեցին և հոգևորականությունը կաշկանդել էին ժողովրդի միտքը, նրան դուրս մղել կուլտուրական զարգացման առաջընթացից: Պատմական այս իրադրությունն էր որոշում Աբովյանի լուսավորական գործունեության էությունը, նրա ողբերգական բնույթը:

«Վերքի» առաջաբանում, որը հայ լուսավորական շարժման գործունեության ծրագիրն է իդեական և էսթետիկական իմաստով, Աբովյանն արծարծում է նոր բովանդակությամբ և նոր ձևով գրականություն ստեղծելու պրոբլեմը: Բայց դա ծանր ու դժվարին մի գործ էր, հերոսական մի հեղաշրջում դարերով սահմանված մտածողության նորմերի մեջ: Դժվարին մաքառման այդ հոգեվիճակը Աբովյանն արտահայտում է մի հոյակապ համեմատությամբ. աշխարհակալ Կրեսոսին սպառնացող մահվան վտանգը քանդում է նրա համր որդու լեզվի կապանքները: Համրության այդ տառապալից վիճակն է ապրում նաև հայ ժողովրդի երախտապարտ որդին: «Ոչ քսան-երեսուն տարուց ավելի ա՝ իմ ազիզ հե՛ր, իմ սիրելի ազգ, որ սիրտս կրակ ա ընկել, էրվում, փոթոթվում ա, գիշեր, ցերեկ լացն ու սուգը իմ աչքիցը, ա՛խն ու ո՛խը իմ բերնիցս չի՛ պակասում, ա՛յ իմ արյունակից բարեկամք, որ մեկ միտքս ու մուրազս ձեզ պատմեի ու հետո հողը մտնեի»:[1]

Մեծ դեմոկրատին մտատանջում է այն միտքը, որ նա գրաբար ստեղծագործություններով չի կարող օգնել ժողովրդին, իսկ նոր լեզուն դեռևս անմշակ էր ու արհամարհված: «Սիրտս ուզում էր, պատռի, որ էս երեխեքանց ձեռքն էլ՝ ինչ հայի գիրք տալիս էի, չէին հասկանում: Ռուսի, նեմեցի, ֆրանցուզի լեզվումը ինչ բան որ կարդում էին, նրանց ամմեն հոգուն էլ էին՝ էդպես բաները դուր գալիս: Ուզում էի շատ անգամ մազերս պոկեմ՝ որ էս օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարդում էին էն բաները՝ որ մարդի սիրտ կարող է գրավել, շունքի սրտի բաներ

[1] Խ. Աբովյան, «Վերք Հայաստանի», Թեհրան, 1939, էջ 6: Հետագա բոլոր մեջբերումները կատարված են այդ հրատարակությունից:

էին՝ ո՞վ չի՛ սիրել։ Ով չի՛ ուզել լսել՝ թե սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կյանքը ի՞նչ զատ են, բայց մեր լեզվովը՝ թե էսպես բաներ ըլին, թո՛ղ աչքս հանեն։ Էլ ընչով երեխին քո լեզուն սիրել տաս» (էջ 7)։ Որքան մեզ հայտնի է, Աբովյանի այս և նման մտքերը մեծ մասամբ մեկնաբանվել են որպես ոգորում աշխարհաբար լեզվի ստեղծման համար։ Իմ կարծիքով մեջբերած տողերում Աբովյանն առաջին հերթին ընդգծում է նոր աշխարհիկ բովանդակության անհրաժեշտությունը, որովհետև հայ հին գրականության մեջ՝ «ինչ կա եկեղեցու վրա յա, աստծու ու սրբերի»։ Աբովյանի այս արտահայտությունը անշուշտ պոլեմիկական բնույթ ունի. նրան քաջ հայտնի էր, որ հին գրականության մեջ սակավ չեն աշխարհիկ բովանդակությամբ ստեղծագործությունները, բայց հասկանալի է, որ այդ գործերը չէին կարող բավարարել ազգային շարժման նախապատրաստման գաղափարական պահանջներին։ Աբովյանն առաջադրում էր ոչ միայն նոր բովանդակություն և նոր թեմատիկա, այլև նոր մեկնաբանություն։

Սերը, բարեկամությունը, հայրենասիրությունը, «երևելի մարդկանց գործքերը» և այլ թեմաներ արդեն նվաճված բնագավառ էին կամ գեղարվեստորեն նվաճվում էին ռուս և եվրոպական առաջավոր գրականության մեջ։ Աբովյանը խորապես գիտակցում էր, որ այդ գաղափարները կբարձրացնեն ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, բայց այդ նոր բովանդակությունը չէր կարելի արտահայտել գրաբարի միջոցով։ Գրաբարը և՛ որպես լեզու և՛ որպես մտածողություն արդեն հնացել էր. նա մատչելի էր տասնյակներին, իսկ ազգային շարժման կենսական շահերը պահանջում էին նոր գաղափարները շարադրել հարյուր հազարներին մատչելի լեզվով։

Աշխարհաբար գրել են նաև Աբովյանից առաջ, երբեմն նույնիսկ ավելի մաքուր, բայց այդ աշխարհաբարը չի դարձել գրականության լեզու, որովհետև համարյա թե չի դրսևորել նոր բովանդակություն։ Աբովյանի մեծ արժանիքը այն է, որ նա քանդեց հայ գրականության մեջ տիրապետող «միջնադարյան պարտադիր մտածողության շրջանակները» (Էնգելս), հայտնագործեց գեղարվեստական մտածողության նոր դարաշրջան, նոր բովանդակություն և նոր ձև։

Ո՞րն է այդ նոր բովանդակությունը։ Ելնելով ժողովրդական-դեմոկրատական մտածողության ակունքից, Աբովյանը արտասովոր ուժով ընդարձակեց գրականության ընդգրկման սահմանները. նա

հայտաբերեց հասարակության, պետության, ազգային ազատագրական շարժման իդեաները և գեղարվեստական գրականության հերոսի բնավորության ազգային առանձնահատկությունները, պրոբլեմներ, որոնք մինչև այդ չնվաճված բնագավառ էին մեր գրականության համար։

«Վերքի» առաջաբանում հեղինակը գրում է. «Մեկ բարեկենդանի՝ աշակերտներս՝ որ բաց թողի, ասեցի՝ ինչ որ երեխությունից լսած, կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ։ Վերջը իմ չիվան Աղասին միտս ընկավ, նրա հետ հարիր քաշ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին ու ամենն էլ ուզում էին՝ որ իրանց տեղ գնամ։ Մյուսները մեծ մեծ մարդիկ էին, շատն էլ հըլա սաղ սալամաթ՝ փառք աստծո, Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին ղուրբան։ Ասեցի կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցի» (էջ 9)։ Այս տողերի մեջ արտահայտվում է իդեական և էսթետիկական նոր դիրքավորում իրականության հանդեպ. գեղարվեստական ստեղծագործության առարկան ժողովուրդն է, ժողովրդի հերոսը։ Իրականության այդ նոր ըմբռնումը հնարավորություն տվեց Աբովյանին դրսևորելու ժողովրդի կյանքի ու պատմության հիմքում ընկած օբեկտիվ բանաստեղծական սկիզբը, որ անհայտ էր Աբովյանին նախորդող գրական սերնդի՝ Բագրատունու, Ալամդարյանի և Թաղիադյանի համար։

Աբովյանի ստեղծագործության ելակետը իրականությունն է, նրան ոգեշնչում են մարդկային ռեալ փոխհարաբերությունները՝ «ծնող, տուն, երեխայություն, ասած ու լսած բաներ էնպես էին կենդանացել, որ էլ աշխարքը միտս չէ՛ր գալիս։ Ինչ խուլ, կորած, մոլորած մտքեր ունեի, բոլորը բացվել, եդ էին եկել։ Նոր էի իմանում, որ գրաբառ և ուրիշ լեզվներ մինչև էն սհաթը միտքս փակել, բռնվել էին» (էջ 10)։

Այնուհետև Աբովյանը սահմանում է էսթետիկական երկրորդ կարևոր սկզբունքը. հակառակ իրականությունից կտրված մտացածին կրոնական նյութերի, որոնք գրաբար գրականության մենաշնորհն էին, հետամնաց տասնյակների հետաքրքրության առարկան, անհրաժեշտ է ժողովրդի կյանքը, ապրումները և մտքերը գեղարվեստորեն վերարտադրել ժողովրդի համար. «Թող տրամաբանություն գիտեցողը իրան համքյարի համար գրի, ես, քո կորած, շվարած որդին՝ քեզ համար»։ Բայց ազգը, որին ձգտում էր պիտանի լինել, նրա կորած, շվարած որդին, հետամնաց էր, անզարգացած և նրա ազգային արժանապատվությունն արթնացնելու համար

ԳՐԱԴԱՐԱՆ

Աբովյանը դիմում է անցյալին, վկայակոչում «Հիանալի Թագավորաց, իշխանաց գործքն ու կյանքը, մեր հայրենյաց, մեր սուրբ աշխարքի առաջվան աքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի անմոռման բնությունը ու սրած քաջությունները: Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս՝ թե ի՞նչ աշխարքի ծնունդ եմ ես, դրախտը մտքումս էր կենդանի, որ ինձ երազում թե լուրջ՝ միշտ մեր երկրի անունն ու պատվականությունն՝ իմ առաջս էր բերում, Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ բնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրա՛նց որդին եմ. Եվրոպա թե Ասիա, ինձ անդադար ձեն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, Նոյան թոռը, Էջմիածնա որդին...» (էջ 6): Ազգային բացառիկության և անապարծության այս քարոզը, վաղեմի անցյալի մեծարումը, անկասկած Աբովյանի աշխարհհայացքի թուլություններից մեկն է: Պետք է նկատի ունենալ, որ ազգի «հզորության» և բացառիկության» գովքը, ինչպես ցույց են տվել Մարքսը և Էնգելսը Գերմանիայի օրինակի վրա, արդյունք է միանգամայն հակառակ երևույթի, ազգի թուլության, նրա պատմական հետամնացության, տնտեսական և քաղաքական զարգացման ցածր աստիճանի, դասակարգային պայքարի թույլ զարգացման: Չնայած Աբովյանի խանդավառ հավատամքներին, այնուհանդերձ նա նույնպես գիտակցում է, որ ազգի մտավոր զարթոնքի համար դրախտի բնակիչ, Նոյան թոռ և Էջմիածնա զավակ լինելու փաստարկումը բավականաչափ թույլ է և նա դիմում է նոր, ավելի ճիշտ պատճառաբանության՝ լուսավորության միջոցով յուրացնել առաջավոր ազգերի ստեղծած կուլտուրան:

Հայ ռեալիստական գրականության վաղ շրջանը սկսվում է «Վերք Հայաստանի» վեպով, ուր ռեալիզմը ռոմանտիկայի յուրահատուկ երանգով ստեղծագործական մեթոդի է վերածվում: Մեծ գրողը ճշմարտացիորեն նկարագրում է պատմական իրականությունը, իր դարաշրջանի հասարակական կյանքի հակասությունները, մարդկանց ըմբոստումները, հոգեվիճակը, այնքան հարազատ պատմական իրողությունը, որ մինչև այժմ էլ Աբովյանի փաստական տվյալները, չնայած որոշ անճշտությունների, հավաստի աղբյուր են 19-րդ դարի պատմության համար: Բայց «Վերքի» մեջ ռոմանտիկ բնույթ են կրում խոհերի, երևույթների, զգացմունքների և ապրումների վերարտադրությունը, հերոսների բնութագրերը ու բնության նկարագրությունները, որոնք չեն առանձնանում, այլ բխում են վեպի ռեալիստական տարրերից: Աբովյանի ռոմանտիկ

նկարագրությունների մեջ կա իրականության հատիկը և ընդհակառակը իրականությունը նրա մոտ միշտ տոգորված է ռոմանտիկայի շնչով:

Ռոմանտիկական տարրը Աբովյանի հայացքներում մռայլ իրականությունից խուսափելու հետևանք չէր, այլ իդեալի և իրականության բախման արդյունք: Մեծ լուսավորիչը հետամնաց իրականությունը ցանկանում էր հաղթահարել՝ կամուրջ անցկացնելով իրականության և իր ձգտումների միջև: Հետևաբար ռոմանտիկ տարրը Աբովյանի համար պատրանքային ելք էր բռնակալության ճնշումից, իդեալական հիմք՝ մեծարելու իր հորինած բնավորությունների հերոսականությունը պատմականորեն ողբերգական հանգամանքներում:

Ռեալիզմի տարրեր մեր գրականության մեջ արտահայտվել են դեռևս հնագույն ժամանակներից, ժողովրդական բանահյուսության, պատմագրության, միջնադարյան բանաստեղծության մեջ և հատկապես «Սասնա ծռեր» էպոսում: Աբովյանի վեպում ռեալիզմի տարրերը վերածվում են նոր որակի: Բայց Աբովյանը չի սահմանափակվել միայն մեր կուլտուրայի տրադիցիաներով. նա յուրացրել է անտիկ արվեստը, Արևմտյան Եվրոպայի վերածնության և լուսավորության դարաշրջանների, ինչպես և ռուս մեծ գրականության լավագույն տրադիցիաները: Այդ է, որ «Վերք Հայաստանին» դարձնում է խոր ազգային, բայց հիմնականում ազգային սահմանափակվածությունից զերծ մի ստեղծագործություն:

«Վերք Հայաստանին» գեղարվեստական տարբեր տրադիցիաների խաչաձևման արդյունք է, խիստ ինքնատիպ իր ձևով և բովանդակությամբ, ուր մտքի արտասովոր ուժով ընդհանրացվել է հայ ժողովրդի գեղարվեստական իմացության դարավոր զարգացումը, հայ ազգության կազմավորման նախապատմությունը, ժողովրդի անցյալը, ներկան և ապագան մինչև ռևոլյուցիոն-դեմոկրատական գաղափարախոսության ձևավորումը: Աբովյանի մտահորիզոնն ընդհատվում է այնտեղ, ուր մոտավորապես երկու տասնամյակ հետո բարձրանում է Նալբանդյանի անզուգական կերպարանքը:

«Վերքում» նկարագրվում է պարսկական տիրապետության ժամանակաշրջանը, զանգվածային կոտորածների, կողոպուտի և օրստօրե ծավալվող վայրագությունների մահաշունչ տարիները: Արևելյան բռնապետությունը Աբովյանը կարծես սիմվոլացնում է

դաժան ձմռան էպիկական նկարագրությամբ, որով սկսվում է վեպը: «Բարիկենդան էր: Ձյուն էկել՝ գիզվել, սար ու ձոր բռնել էր: Պարզկա գիշերը է՛նպես էր գետինը սառցրել, որ ամեն մեկ ոտքը կոխելիս, հազար տեղից տրաք տրաքում, ճռճռում, ճքճքում էր, ու մարդի շունը սրսռացնում, ձեն տալիս: Ամեն մեկ ծառի ճղներից, ամեն մեկ տան բաշից՝ հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա՝ կախ էր էլել ու բիզ բիզ իրար վրա սառել: Հենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նոր ծերացել՝ մահվան դուռն ընկել. շունչն էր մնացել, որ սա ու աշխարքիս բարով մնա ասի»: Բայց ձմռան ամայացնող շունչը ամեն ինչ չի ոչնչացրել, սառույցի հաստ շերտի տակ տխուր ու տրտում քլքլում է ջուրը: Բռնության և կեղեքման կապանքների մեջ ապրում և տոկում է ժողովուրդը:

Բարիկենդանի ուրախությունը առնական տրամադրությամբ է համակել Քանաքեռ գյուղը: Երիտասարդները Աղասու գլխավորությամբ տարված են ջիրիդով: Ուրախության մեջ են նաև ծերունիները: Գրոտեսկային գծերով նկարագրված այդ մարդիկ, թեև ապրում են խավարի և հետամնացության մեջ, բայց փիլիսոփայում են աշխարհի, կյանքի և լուսավորության անհրաժեշտության մասին, երազում են ռուսաց թագավորի օգնությունը: Բայց հանկարծակի փոխվում է ամեն ինչ: Սարդարի ֆառաշները գյուղ են խուժել գեղեցիկ Թագուհուն հարեմ տանելու համար: Գյուղը լցվել է ահ ու սարսափով: Թագուհին ուշաթափվել է, իսկ խելակորույս մայրը անիծում է անգամ աստծուն: Աղասին, որ հեռվից տեսնում էր այդ ամենը, անսպասելիորեն հարձակվում է առևանգողների վրա, սպանում է մի քանի հոգու, իսկ մնացածներին փախուստի մատնում: Թագուհին փրկված է, բայց Աղասու հերոսական արարքը չի արժանանում համագյուղացիների խրախուսանքին: Նրանք պատկերացնում են Աղասու արարքի սոսկալի հետևանքները և խորհուրդ են տալիս նրան փախչել, հեռանալ գյուղից:

Ուշակորույս հերոսին ընկերները փախցնում են Ապարան: Հալածված երիտասարդների հարազատներին սարդարը բանտարկում և տանջում է Երևանի բերդում: Ռուսական բանակի հարձակման առիթով բանակայինները սկսում են կոտորել հայերին Երևանում, Խլղարաքիլիսայում և այլ վայրերում: Աղասու խումբը հաճախ օգնության է հասնում հանկարծակի, ազատում գերված հայերին և կոտորածի մատնում պարսիկ ջարդարարներին: Երևանի

վրա հարձակվելու օրերին Աղասին միանում է ռուսական զորքին և առաջիններից մեկը մտնում Երևանի բերդը բանտարկված հորը ազատելու համար: Այն պահին, երբ Աղասին գրկում է ծերունի հորը, բերդում թաքնված պարսիկները սպանում են նրան հոր գրկի մեջ: Վեպն ավարտվում է Աղասու հանդիսավոր թաղման նկարագրությամբ: Այս է վեպի սյուժետային զարգացման կմախքը, որի վրա կառուցված է անօրինակ մի ստեղծագործություն, տոգորված շիկացած հույզով, անհուն հայրենասիրությամբ և խոր մարդկայնությամբ:

* * *

Ինչպես նշեցինք, «Վերքը» արտացոլում է պարսկական բռնակալության անկումը և ռուսական տիրապետության սկիզբը: Պատմական այդ իրադրության մեջ Հայաստանը կանգնած էր երկընտրանքի առջև «կամ կլանված լինել շահական Պարսկաստանի և սուլթանական Թյուրքիայի կողմից, կամ անցնել Ռուսաստանի հովանավորության տակ... երկրորդ հեռանկարը այնուամենայնիվ փոքրագույն չարիքն էր»: Այսպես է գնահատված Ռուսաստանի հովանավորության նշանակությունը ՍՍՌՄ Պատմության լավագույն դասագրքի առթիվ կառավարական հանձնաժողովի որոշման մեջ:

Պարսկական բռնակալության ճնշահեղձող պայմաններում հայ ժողովուրդը մեծ հավատով և ակնկալություններով երազում էր Ռուսաստանի հովանավորությունը, այն համարելով ժողովրդի ֆիզիկական և հոգևոր փրկության միակ նախապայմանը: Ռուսական բանակի հրամանատարությանն ուղղած համախոսականներից մեկում հայերը հավաստելով բանակին օգնելու իրենց պատրաստակամությունը, գրում են, որ եթե հարկ լինի թղթի վրա նկարագրել իրենց տառապանքները, «այն ժամանակ ոչ թուղթ և ոչ մելան կբավականանա»:[1] Սա պատկերավոր արտահայտություն չէր, այլ դաժան իրականության պարզ արձանագրություն, մի իրականություն, որի մարդատյաց էությունը չգերազանցված գեղարվեստական ուժով դրսևորված է «Վերք Հայաստանի» վեպում:

Իր հայրենի երկրում, հարազատ հողի վրա ժողովուրդն ապրում է ծնկաչոք, դեգերում ահի ու սարսափի մեջ: Պարսիկ բռնակալները ձեռք են մեկնում գյուղացու ոչ միայն արդար վաստակին, այլև ընտանեկան պատվին և չնչին անհնազանդության հա-

[1] «Փորձ», 1877—78, № 2:

մար բանտարկում և կախաղան են բարձրացնում, կամ վաճառում որպես ստրուկներ: Սոսկալի դրության մեջ էր ժողովուրդը: «Երեխա եմ եղել, որ էն տեղանից դուրս եմ էկել,— գրում է Աբովյանը,— ամա էս օր էլ, որ մտածում եմ՝ թե Զանգվի կամուրջի վրովը, յա բազարի մեյդանովը անց կենալիս, ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ ոտով, ձեռով անում, չունքի լեզվով խոսալն էլ ղաղաբի էր բերում, որ թեզ անց կենանք մեզ թուրք չտեսնի, որ մտածում եմ թե քանի քանի անգամ հենց մեր աչքումը յա մենք ենք ղզլբաշ յալալու արել, յա նրանք մեզ, ջանս վրես սառում ա, միտս վեր թափվում» (էջ 72): Բայց միայն մայրենի լեզվով խոսելը չէ, որ «ղաղաբի» է բերում. եթե շուկայում հայ գյուղացին պատահաբար կպչում էր պարսիկին «էն տեղն էին քցում, էնքան էին ոտին գլխին վեր հատում, որ հացն էլ էր մոռանում, եկած ճամփեն էլ, իր օղլուշաղն էլ... Աշխարքի գլխին հենց գիտես՝ կրակ պետք է վեր գար, էնպես էր ամեն մարդ սասանահարվում, սարսափում, որ իր գլուխը պահի, բալի տակ չընկնի» (էջ 73):

Հայաստանը, Աբովյանի արտահայտությամբ, հազար տարուց ի վեր դարձել էր գողի և ավազակի բնակարան: Միմյանց փոխարինող սարդարների կամ խաների «գործունեությունը» նշանավորվում էր նորանոր ոճրագործություններով, նրանց համար «հո մարդի, հո ոչխի գլուխը, բոլորը մեկ էր» (էջ 71): Հայությունը թեև ապրում էր հարազատ հողի վրա, բայց «ոչ տունն էր իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղլուշաղը»: Այդ պատճառով նույնիսկ հայրենի հողը նրանց համար օտարացել էր, դարձել ատելի: «Դուշն իր բունը սիրում ա, ես իմ հողը ատում, փնովում, չունքի լսած ու տեսած բաներս կրակ են դառել սիրտս էրում, փոթոթում»... (69): «Քար չկա մեր երկրումը, քոլ չկա, որ հայի արինով ներկած չլինի»: Բնական է, որ ժողովրդի սոցիալական վիճակը, թյուրք և պարսիկ բռնակալների ահավոր ոճրագործությունները կարող էին միայն բուռն զայրույթ և ատելություն ծնել: Դրա արտահայտությունն էր Աղասու պոռթկող խիզախությունը: Բարեկենդանի ուրախությունը վերածվում է սոսկալի մի ողբերգության. «հանկարծ էս քեֆի միջումը՝ հենց բռնես՝ մեկ ամպ որոտաց, երկիրը շարժվեց, յա թոփի թոփխանի ձեն եկավ, յա երկինքը փուլ եկավ» (48): Սարդարի ֆառաշները եկել են չքնաղ Թագուհուն տանելու հարեմի համար, ո՞վ կհամարձակվի դուրս գալ ֆառաշ-

ների դեմ, լավագույն դեպքում մարդիկ միայն լուռ կարեկցում են: «Գեղը հենց բանես բիրազի քանդվեցավ: Տղամարդկերանց որը որ վախլուկ էր, գլուխն առավ կորավ, որը որ մի քիչ պինդ սիրտ ուներ, զարզանդելով, դողդողալով մոտ եկավ, չէ՛ թե օգնություն անի, չէ՝ այլ թե տեսնի, ինչպես մարդիկ են եկողները, ինչպես են տանում խեղճ ջրատար աղջկանը» (էջ 49)։

Թյուրքական և պարսկական բռնակալության հարյուրամյակները խեղդել են ժողովրդի մեջ մարդկային բարձր հատկությունները, արժանապատվության և պատվի զգացումը, խիզախությունը, ազատության պաշտպանությունը, մարդիկ ապրում են միայն բուսական արգահատելի կյանքով: Բայց դեռևս ամեն ինչ չի մեռել, դեռ կան խիզախ և անձնազոհ մարդիկ ինչպես Աղասին, որոնց մեջ պահպանվում են հայ ժողովրդի լավագույն գծերը:

Աղասու մտավոր կերպարի և վարքագծի հիմնական տարրերը, որպես իսկական ժողովրդական տարրեր, Աբովյանը ցույց է տալիս նաև այլ էպիզոդների և պերսոնաժների մեջ:

Դատապարտելով եկեղեցական քարոզների վնասակար ազդեցությունը, Աբովյանը հիշատակում է, որ Լոռվա, Ղարաբաղի, Մշու, Բայազետի հայերը մեծանալով բնության մեջ, տերտերի և եկեղեցու ձայն չլսելով այլևս չեն վախենում ավետարանական քարոզներից և թշնամու հարձակումներին պատասխանում են խիզախ հակահարվածով: Այդպիսին է լոռեցի Հովակիմը. մի լեգենդար անձնավորություն, որի անունը նույնիսկ խուճապի է մատնում ավազակներին: Հովակիմների այդ հերոսական ոգին կոփվել է սխոլաստիկական դաստիարակությունից հեռու, հայրենի բնության մեջ: «Ա՞խ, ի՞նչ տեղ են կենում՝ որ էսպես չանեն, էս սիրտը չունենան. վարժատան չէին՝ մեռած փառով, անհոգի շնչով, թուլ լեզվով լսել, թե հայք էլ վաղ թագավորություն ունեին, որ կամ չհավատային, կամ քունները վարպետի անսիրտ պատմության վրա տաներ: Ամեն քար նրանց համար գիրք ա, ամեն ապառաժ նրանց համար պատմություն, ամեն հին բերդ, քանդված մատուռ, կամ եկեղեցի, որ սար ու ձոր լիքն են էստեղ, նրանց համար կենդանի վարժապետ» (112)։

Հայ ժողովրդի ազատասիրական ոգին և հայրենի հողի պաշտպանության կորովը Աբովյանը դրսևորել է Ղլղարաքիլիսայի հերոսական պաշտպանության, ինչպես և Աղասու խմբի հերոսական սխրագործությունների նկարագրության մեջ:

Բնորոշ է այն հանգամանքը, որ Աբովյանի պատկերացման

մեջ խիզախությունը և կրոնական մոլեռանդությունը անհարիր երևույթներ են: Ավելին, Աբովյանը ճշմարտացիորեն ցույց է տալիս, որ բուն ժողովրդական զանգվածները որքան հեռու են եղել կրոնից, այնքան ավելի են սիրել իրենց հայրենիքը: «Զննեք ուշադիր և դուք կտեսնեք, որ դա իր բնույթով խոր աթեիստական ժողովուրդ է, նրան հատուկ չէ միստիկական խանդավառություն, դրա համար նա ունի բավականին առողջ բանականություն, մտքի պարզություն և վճռականություն»:[1] Բելինսկու այս դիտողությունը ռուս ժողովրդի մասին հիմնական գծերով վերաբերում է նաև հայ ժողովրդին:

Աբովյանը իրավացիորեն գտնում է, որ բռնակալությունից հետո ժողովրդի ստրկական կյանքի համար հանցավոր է նաև լուսավորչական եկեղեցին: Բնորոշ է այն, որ Աղասու հերոսական արարքը դատապարտում են ոչ միայն բռնակալական ճնշումից և կրոնական քարոզներից բթացած համագյուղացիները, այլև եպիսկոպոսը: Պատասխանելով աղա Պետրոսի խոսքերին զենքով գործելու անհրաժեշտության մասին, եպիսկոպոսը քարոզում է հնազանդություն և համբերություն. «Քրիստոնեն սրով չի պետք է իր բանը յոլա տանի: Նրա թուրը իր համբերությունը ու հավատն ա...»: «Քրիստոնեն թրի կոթն էլ ձեռ չի պետք է առնի, կարճ, որ քար էլ ալան գլխին»: Այս խոսքերի առթիվ, տողատակի ծանոթագրության մեջ Աբովյանն ասում է. «Այս խոսակցության իմացողը կիմանա, թե ինչ էր մեր խեղճության պատճառը»: Եվ կարծես ի հակադրություն համբերության քարոզի՝ Աբովյանը նկարագրում է պարսիկների հարձակումը, հայերի կոտորածը և գաղթը:

Սակայն հայ եկեղեցու հանցանքը չի սպառվում քրիստոնեական հնազանդության վնասակար քարոզով: Քննադատելով եկեղեցու և հոգևորականների արատները, Աբովյանը չհասավ այն գաղափարին, որ կրոնը և լուսավորությունը անհարիր գաղափարներ են: Աբովյանը միամտորեն կարծում էր, որ եկեղեցին կարող է և պետք է դառնա լուսավորության օջախ: Այդ պատճառով չնայած նա ռաբլեական ծաղրով մերկացնում է տերտերի տգիտությունը ժամասացության պահին, բայց վեպի հետագա մասերում նորից անդրադառնալով լուսավորության հարցին, կսկիծով գրում է. «Ամեն մեչիթի հայաթում դեղ մեդրեսներն էլ՝ մեկ մեծ վարժատուն կա, ուր տեղ երկու, երեք լեզու են սովորում, մեր եկեղեցքանց հա-

[1] В. Г. Белинский, Избр. философские соч. т. I, стр. 470.

յաթներումը լագլագն էլ բուն չի՛ դնիլ, բաս ի՞նչ կըլի՝ որ ազգի միտն էլ քիչ քիչ չի հովանալ» (74)։

Հայ ժողովրդին դարավոր թմրությունից դուրս բերելու և իսկական մարդկային կյանք ստեղծելու հիմնական նախապայմանն Աբովյանը համարում էր լուսավորությունը։ Սակայն լուսավորության կենսագործման համար նա մի կողմից հույսը դնում էր եկեղեցու, մյուս կողմից պատվավոր իշխանների՝ զավրովների, խերխ-գինովների կամ թամամշովների վրա։ Երկու դեպքում էլ Աբովյանը մոլորության մեջ էր։ Ոչ հայ եկեղեցին և ոչ էլ պատվավոր իշխանները չէին կարող շահագրգռված լինել ժողովրդի լուսավորության գործով։ Ավելին. Աբովյանի լուսավորական ծրագիրը իր օբեկտիվ նշանակությամբ ուղղված էր տիրող դասակարգերի դեմ, և դա անիրագործելի մի ուտոպիա էր ցարիզմի տիրապետության պայմաններում։

* * *

Հումանիզմի և մարդկայնության դիրքերից Աբովյանը խստորեն քննադատում է նոր բուրժուական հարաբերությունները։ Բնորոշ է այն, որ Աբովյանի սիրած հերոսները ոչ միայն զերծ են կրոնական մոլությունից, այլև արհամարհանքով են վերաբերվում նոր ձևավորվող բուրժուական պրակտիկային, որը դաժանորեն խեղաթյուրում է մարդկային անհատի բարձր հատկությունները։ Բառացիորեն մի քանի պարբերությունների մեջ Աբովյանը վարպետորեն նկարագրում է կապիտալիստական հարաբերությունների այն նախնական շրջանը, երբ կապիտալը, Մարքսի արտահայտությամբ, հանդես է գալիս իր էլեմենտար ձևերով, որպես ապրանք կամ փող։ «Քաղաքը որ մտնում եմ՝ հենց իմանաս թե աշխարքը սով ա ընկել. էլ ոչ խեր կա ոչ բարաքյաթ։ Հացն ու ջուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ում դուռը գնաս, ո՞ւմ ձեռը դեմ անես։ Բազի վախտ էլ տեսել եմ՝ որ դուքաններումը կիտուկ կիտուկ մանեթները, ոսկին ածած՝ ամեն մեկ փող համրելիս էնպես գիտես՝ թե փողատիրոջ հոգին հետն ա դուս գալիս, էնպես են սրթսրթում իրանց խազինի վրա։ Հենց կիմանաս թե առաջներիցը թև կառնի կթռչի» (էջ 32)։ Աբովյանը գեղարվեստորեն ցույց է տալիս, թե ինչպես ապրանքը և փողը նույնիսկ իրենց էլեմենտար ձևերում, արդեն խեղաթյուրում են մարդկային հարաբերությունները, հարազատներին դարձնում են օտարներ, նույնիսկ թշնամիներ.

«Հերը որդուն չի ճանաչում, որդին հորը, ախպերն ախպորը, լավ ա՝ որ քարը քարի վրա կանգնած մնում ա» (էջ 33)։

Աբովյանը մեծ խորաթափանցությամբ ընդհանրացնում է. «փողի սիրքն ճանաչողը ոչ հոգի ունի ոչ հավատ։ Փող հող— մին ա»։ Բացասելով բուրժուական պրակտիկան, Աբովյանը չի կառչում անցյալին։ Նա օրհնում է հողը և երազում լուսավորված ժողովուրդ և զարգացած երկրագործություն։ Աբովյանի մոտ, դեռևս սաղմնային վիճակում, արտահայտվել են այն գաղափարները, որ հետագայում շարադրեց Մ. Նալբանդյանը իր նշանավոր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ։

Նկարագրելով նոր զարգացած կապիտալիստական հարաբերությունների ոչ հերոսական բնույթը, հակահումանիստական տարերքը, նյութական ուժերի, իրերի, ապրանքների և դրամի տիրապետությունը մարդու վրա, Աբովյանը միաժամանակ իր երազած հումանիստական անհատականության հոգևոր և ֆիզիկական ուժերի գերագույն իդեալը գտնում է ժողովրդի մեջ։ Դրա մարմնացումը դառնում է ժողովրդի աղքատ զավակ Աղասին, որովհետև ազգային ազատագրության համար, բռնակալության դեմ հետևողականորեն մարտնչում էր միայն ժողովուրդը, որն ուներ իր ինքնուրույն պատմական դերը և հեռու էր կանգնած կապիտալիստական շահախնդիր հարաբերություններից։

Մեծ լուսավորիչը գտնում էր, որ բոլոր նրանք, ովքեր չեն ենթարկվել հնազանդության քրիստոնեական քարոզին և բուրժուական հարաբերությունների խեղաթյուրմանը, պահպանել են մարդկայնության բարձր հմայքը։ Աբովյանը տեսնում էր, որ մարդկային անհատը մանկական թոթովանքներից մինչև կյանքի վերջին վայրկյանը կրում է բռնակալության դառնությունները։ Ժխտելով պարսկական բռնակալությունը, Աբովյանը հանգում է այնպիսի եզրակացությունների, որոնք փաստորեն ուղղվում էին նաև ցարական բռնակալության դեմ։

Խորապես ապրելով իր ժողովրդի դառն վիճակը, Աբովյանը չէր հուսահատվում, նա չէր կորցնում հավատը ժողովրդի կարողությունների և նրա լավ ապագայի նկատմամբ։ Աբովյանը ժողովրդի մեջ տեսնում էր մարդիկ, որոնք հակադրվում էին ճնշմանը և կեղեքմանը, բռնակալական կյանքի անհեթեթություններին, մարդիկ, որոնք կրում էին լավը, գեղեցիկը և առաջավորը, այն, որ բովանդակում է ապագայի սաղմը։ Անհրաժեշտ է ընդգծել, որ Աբովյանի հումանիզմը կրելով պատմական սահմանափակության

կնիքը, հիմնականում զերծ է ազգայնական սահմանափակությունից: Բարձր մարդկայնության հատկանիշները Աբովյանը տեսնում է ամեն մի ժողովրդի լավագույն մարդկանց մեջ, հայերի հարևան ժողովուրդների և հատկապես ռուս մեծ ժողովրդի մեջ: Դրա փայլուն ապացույցը այն անհուն սերն է, որ Աբովյանը տածում է դեպի աշխատավոր մարդը: Այդ սերը՝ բռնակալության նկատմամբ տածած Աբովյանի ցասման հակադարձ արտահայտությունն էր և որքան մոլեգնում էր բռնակալությունը, այնքան ավելի խորանում էր Աբովյանի հումանիզմը:

Աբովյանը հայ գրականության մեջ հայտնագործեց մարդկային անհատին իր հասարակական կապերով, ձգտումներով և հայացքներով: Մեր գրականության մեջ այդ առաջին հերոսը Աղասին էր, որ մարմնավորում էր Աբովյանի ողջ հիացմունքը մարդկային անհատի նկատմամբ և հայ ժողովրդի ազգային բնավորության լավագույն հատկությունները:

Աղասու բնութագիրը Աբովյանը սկսում է եկեղեցու և բնության հակադրությամբ: Եկեղեցին արտահայտում է ոչ բանական, մարդու էությանը խորթ նախասկիզբը, իսկ բնությունն ընկալվում է որպես ուսուցիչ, որպես կյանքի և բարիքի աղբյուր: Աղասին ձանձրանում էր եկեղեցական երկար ու ձիգ արարողություններից ոչ միայն նրա համար, որ դա անհասկանալի էր, այլև այն պատճառով, որ դա հակասում էր մարդու նորմալ բնությանը: Կրոնական ծիսակատարության այդ կարգը սահմանողը, Աղասու կարծիքով «Ինքը հացի տեղ խոտ կըլի կըծած» (էջ 16): Խավարամիտ հոգևորականները, որոնք ի վիճակի չեն բացատրելու կրոնական ծիսակատարությունների իմաստը, ավելորդ և վնասակար միջնորդներ են մարդու և աստծու միջև: Աղասու կարծիքով՝ «մեկ երկու ծունր դիր, երեսիդ մեկ քանի խաչ հանիր, պրծանք գնաց. ժամի դուռը պաչ արա, էլ եդ արի քո բանը տես» (էջ 16): Աղասու այս խոսքերի մեջ արտահայտվում է արհամարհանք դեպի կրոնական ծիսակատարությունները և ձգտում վերացնելու եկեղեցու միջնորդությունը մարդու և աստծու միջև:

Եթե եկեղեցական ծիսակատարությունների ժամանակ թմրում է Աղասու միտքը, նա հոգնում և քնում է, ապա դաշտում, բնության մեջ Աղասին ամբողջ էությամբ վերածնվում է: Նա ձգտում է թափանցել բնության ամեն մի երևույթի մեջ, քննել, հասկանալ նրա իմաստը: «Ա՜խ, ո՞վ ես դու, ո՞վ. յարադանիդ ղուրբան՝ աստված, որ էսքան բարիք ես ստեղծել մեզ համար: Ա՜խ՝ ընչի՞

չէ՞ս քո սուրբ երեսը մեկ օր մեզ ցույց տալիս, որ ասենք ընկնենք մեր սիրտը, մեր հոգին քեզ մատաղ տանք։ Թե ասեմ երկիրն ա մենակ գեղեցիկ, հազար ծաղիկներով, բուսով զարդարած, բաս երկինքը ո՞ւր թողամ, որ ցերեկը ինձ լիս ա տալիս, հանդիս պտուղը հասցնում. գիշերը մութն իմ աչքիցս հեռացնում ու էնպես չարքի պես գլխիս վրա կանգնած՝ անձրև, արև տալիս, որ ես ապրեմ, որդիքս պահպանեմ, աշխարքի պետքը գամ որ մեռնելիս էլ՝ գան՝ հողիս վրա, ինձ մեկ դարդակ ողորմի ասեն» (էջ 18)։ Աբովյանի այս տողերի մեջ թեև չի ժխտվում աստծու գոյությունը, բայց արտահայտվում է սկեպտիցիզմի այն առողջ տարրը, որը կասկածանքի է ենթարկում և հակադրվում էր միջնադարյան կրոնական աշխարհայացքի դոգմաներին։

Աղասին իրեն մենակ է զգում անսահման բնության մեջ, նա որոնում է մի էակ, որին կարող է բացել իր տառապած սիրտը։ Այդ էակը, ինչպես որ պատկերացնում է Աղասին, քրիստոնեական աստվածը չէ, դա բնության ոգին է նման մարդու, բայց և տարբեր նրանից։ Աղասու նման հայացքը արդյունք էր ոչ թե կրոնական մոլեռանդության, այլ բնության հրաշալի երևույթների հանդեպ տածած զարմանքի։ «Աչքս մոլորված էս թփից էն թուփ, էս սարից էն սարն ա ընկնում՝ ծառի տակին ասես, սարի գլխին ասես՝ մտիկ անելով աչքս շաղվում ջուր ա կտրում։ Հենց գիտես, մեկ ձեն, մեկ թև, մեկ աներևույթ հոգի տերևները խշշալիս, ջուրը ճռչելիս, աղբյուրը քչքչալիս, բլուլբուլը երգելիս, հովը փչելիս, շաղը երեսիս թափելիս, ամպը գոռալիս, անձրևը գալիս՝ ինձ ձեն ըլի տալիս, ինձ ձեռով ըլի անում, ինձ վրա խնդում՝ թե վայելիր էստոնք՝ հողածին մարդ, բարի կաց, բարություն արա...» (էջ 19)։ Աղասու պատկերացման մեջ բնությունը կենդանի, հարափոփոխ իրականություն է, ոչ միայն անձնավորված, այլ ոգեշնչված։ Նա զրուցում է բնության հետ, բնության մայրենի լեզվով։ Աղասու համար բնությունը սիմվոլ է, այն ամենի, ինչ եղել է և այն ամենի՝ ինչ լինելու է։ Իսկ կա՞ արդյոք այդ ոգին բնության մեջ կամ բնությունից դուրս, Աղասին դժվարանում է պատասխանել, բայց կա՛ բազմերանգ ու անսահման բնությունը, բոլոր բարիքների աղբյուրը, մարդկային կյանքի և գոյության հիմքը։ Բնության և աստծո փոխհարաբերության այս բնապաշտական մոտիվները բնորոշ էին գյուղացիական, դեմոկրատական մտածողության համար, և բովանդակում էին բնության առաջնության գաղափարի սաղմը։

Աղասին ազնիվ և աշխատասեր մարդ է, նա պաշտպանում

է ուրիշի աշխատանքի արդյունքը յուրացնելը, ասելով. «Ես իմ կոպիտ գլխովը էնպես եմ կարծում, նհախ տեղը գտած մալը ուտելը և դատարկ քնելը հարամ ա: Մարդ պետք է ինքն էլ աշխատի, որ կերածը հալալ լի»: Եվ իսկապես ոչ միայն իր աշխատանքն է կատարում Աղասին, այլև անձնուրաց կերպով օգնում է բոլոր նրանց, ովքեր կարիքի կամ փորձանքի մեջ են: Որքան նա հոգատար է դեպի աշխատավոր մարդը, նույնքան անողոք է թշնամիների նկատմամբ: Ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ նա ելնում է բռնակալների դեմ և պատմական իրադրությունների հետագա զարգացման ընթացքում, գյուղական առօրյայի սահմանափակություններից բարձրանում մինչև ժողովրդի քաղաքական բախտը վճռողի աստիճանը: Աղասու մեջ մարմնավորված են հայ ժողովրդի լավագույն գծերը, աշխատասիրություն, հումանիզմ, արդարամտություն, պարզ և խորաթափանց միտք: Աղասին հայ գրականության առաջին իսկական ազգային բնավորությունն է: Աղասին իդեալական հերոս է, բայց խորը ռեալիստական բովանդակությամբ: Իրականության մեջ քիչ էին Աղասիները, բայց նրանք ավելի ճիշտ և ամբողջական էին արտահայտում կյանքի ճշմարտությունը, հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ձգտումները՝ բուռն ատելություն և պայքար պարսկական բռնակալության դեմ՝ հանուն հայ ժողովրդի ազատության:

* * *

Աբովյանի վեպը ավարտվում է Երևանի գրավման նկարագրությամբ. դա ռուսական օրիենտացիայի և ռուս պետականության մի խանդավառ ջատագովություն է, որով տոգորված է ոչ միայն «Վերք Հայաստանին», այլև մեծ լուսավորչի ողջ գործունեությունը: «Վերքը» որպես պատմական վեպ անկասկած արտացոլում էր ժողովրդի նախապաշարումները և ակնկալությունները Ռուսաստանի հովանավորությունից: Բայց «Վերքի» հիմնական խնդիրը, ազգային շարժման գաղափարական նախապատրաստումը, արդեն ցարիզմի տիրապետության հետագա տարիների բուրժուա-դեմոկրատական մտածողության արգասիք էր:

Աբովյանը ճշմարտացիորեն վերարտադրել է, որ պարսկական սոսկալի վայրագություններ ապրած հայերը և հարևան ադրբեջանցիները անսահման երախտագիտությամբ են դիմավո-

յում ռուսական զենքի հաղթանակը: Սկսվում էր հայ ժողովրդի կյանքի նոր ժամանակաշրջանը, ռուս մեծ ժողովրդի հետ բարեկամության ժամանակաշրջանը: «Օրհնվի էն սհաթը, որ Ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ ու ղզլբաշի անիծած շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է գիշեր ցերեկ մեր քաշած օրերը մտքներս բերենք ու ռսի երեսը տեսնելիս երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռի տակը բերեց» (71):

Հայաստանի գրավման պատմական օրերին ժողովուրդը ցնծությամբ էր դիմավորում ռուսական բանակի հաղթական երթը: Նա դեռևս չէր տարբերում հրամանատարական համազգեստով ցարական նվաճողին զինվորի հագուստով ռուս գյուղացուց: Այդ տարբերությունը առաջին տարիներին չէր գիտակցում նաև Աբովյանը: Նա չէր հասկանում և չէր էլ կարող հասկանալ, որ ռուսական ցարիզմի նվաճողական քաղաքականությունը պայմանավորված էր Ռուսաստանի ռազմա-ֆեոդալական-առևտրական վերնախավի՝ ծովային ճանապարհներին, արտաքին առևտրի ընդարձակման և ստրատեգիական պունկտերին տիրանալու պահանջով:

Հայաստանի նվաճումից մի տասնամյակ հետո, ազգային շարժման գաղափարական նախապատրաստման ժամանակաշրջանում, գյուղացիության մեջ արդեն ձևավորվում էր դժգոհությունը և բողոքները ընդդեմ ցարական բյուրոկրատական ռեժիմի: Բայց ինչպես որ ժողովրդական դժգոհությունները և առանձին խռովությունները չվերածվեցին հետևողական պայքարի ընդդեմ ցարիզմի սոցիալական և քաղաքական ճնշման, այնպես էլ Աբովյանը տեսնելով չինովնիկների շահատակությունները, բռնությունները, չհասավ և ի վիճակի չէր հասնելու ցարիզմի դատապարտման, որովհետև դեռևս թույլ էր Աբովյանի սոցիալական հենարանը:

Սակայն պետք է նշել, որ «Վերքի» մեջ համարյա բոլոր դեպքերում ռուսական ցարիզմի «ազատագրական» միսիան Աբովյանը մեծարում է միայն պարսկական բռնակալության համեմատությամբ: Եթե Հասան-խանը կոտորածի և ավերի մարմնացումն էր, ապա նրա դեմ կռվող Պասկևիչը, որը այլ պարագաներում նույնպես ժողովրդի դահիճ էր, զարդարվում է ազատարարի լուսապսակով: Նույնիսկ ցարական գեներալների մեջ Աբովյանը տեսնում էր ազատարար ռուսին և «Վերքի» մի շարք էջերում գովեստով հիշատակվող «աստվածահաստատ» ցարը և նրա գեներալները ոչ

թե Աբովյանի ցարամոլության արգասիք էր, այլ Ռուսաստանին և ռուս ժողովրդին ուղղված երախտագիտության արտահայտություն։

Աբովյանը անհուն ջերմությամբ փարեց ռուս մեծ ժողովրդին, նրա կուլտուրային և «Վերքի» օրգանական մասը կազմող «Ջանգիի» մեջ ռուս և հայ ժողովուրդների բարեկամությունը արտահայտեց Վոլգայի ու Արաքսի սիմվոլիկ գրկախառնումով։ Աբովյանը խորապես գիտակցում էր, որ հայ ժողովրդի և նրա կուլտուրայի հեռանկարը անխզելիորեն կապված է ռուս մեծ ժողովրդի հետ։ Դա նրա պատմական մեծագույն ծառայությունն է։ Աբովյանը չհասավ և չէր էլ կարող հասնել հասարակական կյանքի նկատմամբ Բելինսկու և Գերցենի եզրակացություններին. նա հեռու էր Բելինսկուց, բայց ոչ հակառակ դիրքում։

Ռուսական կուլտուրայի առաջավոր իդեաների յուրացումով Աբովյանը թեև դանդաղ, բայց ինքնուրույն ձևով գնում էր այն ուղիով, որը տանում էր դեպի Բելինսկին։ 40-ական թվականներին ռուսական առաջավոր միտքը հանձինս Բելինսկու և Գերցենի հասել էր իսկական ստեղծագործական ինքնատիպության և ոգեշնչում էր ժողովրդի հզոր շարժումը դեպի առաջ։ Հակառակ ռևոլյուցիոն դեմոկրատների, սլավյանոֆիլները ռուսական կյանքում տեսնում էին միայն անշարժություն, հնազանդություն, կրոնամոլություն և իդեալականացնում էին ժողովրդական կյանքի հենց այդ կողմերը։ Խոմյակովը քարոզում էր «համաժողովրդական հնազանդություն», այդ համարելով ռուսական ոգու ամենաբնորոշ գիծը։ Բելինսկին բուռն զայրույթով դատապարտում էր նման մտայնությունը։ «Գիտակցելով ազգային բարձր սկզբի անհրաժեշտությունը,— ասում է Բելինսկին,— և չգտնելով այն իրականության մեջ, մեզ հրամցնում են **հնազանդությունը**, որպես ռուս ազգության արտահայտություն»։

Աբովյանը նույնպես բուռն կերպով բողոքում էր հնազանդության դեմ, այդ համարելով հայ եկեղեցու ամենավնասակար քարոզներից մեկը։

Բելինսկին գրել է. «Մեր ժամանակներում, օրավուր, ավելի ու ավելի դրսևորվում են ժողովուրդների համակրանքը և սերը միմյանց նկատմամբ։ Այդ մխիթարական և մարդասիրական երևույթը լուսավորության արդյունք է։ Բայց դրանից երբեք չի հետևում, որ լուսավորությունը պետք է համահարթի ժողովուրդները և բոլորին դարձնի միակերպ, ինչպես ջրի երկու կաթիլը։ Ընդհակա-

ռակը, մեր ժամանակը գերազանցապես ազգության ուժեղ զարգացման ժամանակն է»։[1]

Հեռու լինելով անգույն կոսմոպոլիտիզմից ինչպես Բելինսկին, Աբովյանը նույնպես լուսավորությունը համարում էր ազգային ինքնուրույնության և իրավահավասարության կարևոր նախապայման։ Արտահայտելով այս միտքը պատկերավոր կերպով, Աբովյանն ասում է. «Ամենք բլբուլի լեզուն քաղցր ա, վերու հավքին (խոխոբին), սիրամարգին աստված գեղեցիկ ձայն, սիրուն թևեր ու բըմբուլ ա տվել։ Ամենք վարդը շատ գովելի ա, բաս ինչի՞ չի մանուշակը իր ռանգը իր հոտը նրան տալիս։ Մի՞թե վարդին տեսնողը՝ մանիշակին չի սիրել։ Սարի անհոտ ծաղիկն էլ՝ իրան տեղը, իրան փառքը վարդի հետ չի փոխիլ։ Միթե բլբուլի լողը՝ կանարեյկին էլ չի՞ պետք է պահի։ Ամեն բան իր գինն ունի, շաքարեղենը քաղցըր ա, ամա հացի տեղը ե՞րբ կբռնի» (էջ 79)։ Այսպես էր Աբովյանի վերաբերմունքը տարբեր ժողովուրդների նկատմամբ։ Հումանիզմը, հայրենասիրությունը, ժողովուրդների համերաշխության գաղափարները Աբովյանի մոտ կրում էին պատմական ժամանակաշրջանի սահմանափակության կնիքը, սակայն հաճախ ելնելով ժողովրդական մտածողությունից՝ Աբովյանը բուռն պաթոսով ժխտում էր հինը և հետամնացը և հանգում առաջադիմական եզրակացությունների, որը նրան դարձնում է մեր ժամանակաշրջանի արժանավոր նախորդը, անցյալի պրոգրեսիվ-դեմոկրատական աշխարհայացքի մեծագույն ներկայացուցիչը։

1948, հուլիս

---

[1] В. Г. Белинский, Избр. философские соч., т. I, стр. 357.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԺԱՆՐԵՐԸ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ նոր գրականության և լեզվի հայրը ամենայն իրավամբ կարող է կոչվել նաև գրական ժանրերի հայր։ Անշուշտ սա չի ասվում այնպիսի մի խստորոշ, բացառական իմաստով, թե իբրև Աբովյանից առաջ չի եղել աշխարհիկ լեզվի, գրականության և գրական ժանրերի ոչ մի տարր։ Այս խնդիրը որոշ չափով մշակված է։ Սակայն հարկ ենք համարում վերապահել մի բացատրություն։ Մենք կարծում ենք, որ խնդիրը՝ լինի դա լեզվի, թեմատիկայի և ժանրի՝ առանձին առանձին լուսաբանելիս չենք կարող վերցնել դրանք սոսկ մեխանիկ, արտաքին կողմերով, որպես փաստական տվյալներ և անալոգիա անցկացնելով՝ նույնացնել երևույթները։

Թե Սայաթ-Նովան, թե Պաղտասարյանը և թե նրանցից առաջ եղածները իրենց ստեղծագործության և գրական այլ նմուշներում տվել են՝ ճիշտ է, բարբառային աշխարհաբարի սկզբունքը, սակայն դրանց տվածները, իրենց թեմատիկ, լեզվական և ժանրային բնույթով մնացել են այլ արժեք Աբովյանի տվածի հանդեպ։ Այլ է Սայաթ-Նովայի բանաստեղծությունն իր փրանական կանոնական ձևերի ժանրային հատկություններով, այլ՝ Աբովյանի ստեղծագործությունն իր ազատ լիրիկայի՝ խոհրդածությունների, էլեգիայի, երգիծանքի, ասպա և առակի, պոեմի տվյալներով։ Նմանություններն ու նույնացումները արտաքին են ավելի, քան ներքին։

Այլ է նաև այս հակադրության առարկա ստեղծագործությունների գրական դիապազոնը, թեմատիկական բազմատեսակությունը, կուլտուրան և գրական մտածության հորիզոնը։ Աբովյանը հայր եղավ իբրև մտածող, իբրև աշխարհըմբռնում և հասարակական բարձր սկզբունք։ Նա նոր որակ և նշանակություն հաղորդեց նրա ոչ միայն թեմատիկային ու ժանրին, այլ և անգամ լեզվին,

որով և այս վերջինը թվո՞ւմ է միայն թե իբրև աշխարհաբարի սկզբունքային խնդիր նույնարժեք է իր նախորդների լեզվի հետ։

Աբովյանը հանդես եկավ Անդրկովկասի պատմության այն խոշոր իրադարձությունների ժամանակ, երբ ռուս պետականության նվաճումների հետևանքով հիմնովին բեկվում էր անդրկովկասյան ժողովուրդների կենսաձևը։

Մեզ հետաքրքրող առարկայի տեսակետով այս դարաշրջանի մեջ հարկ ենք տեսնում նշելու այն խոշոր հակապատկերը, այն սուր փոփոխությունը, որ ներկայացնում էր այդ բեկումը՝ իբրև պարսկական մի հետամնաց բռնապետության փոխարինումը ռուսական շատ ավելի պրոգրեսիվ պետությամբ և միաժամանակ ռուս-եվրոպական կենսաձևի փոխարինումը ասիականին։

Այս կրկնակ հանգամանքը մենք չենք մոռանա մեր խնդրի լուսաբանության ընթացքում։

Անդրկովկասի մի մասը նվաճված էր ռուսների կողմից, հենց նոր վերջացել էր Երևանի խանության նվաճումը և սկսվել էր Անդրկովկասի պատմության նոր շրջանը։

Առևտրական կապիտալի աննախընթաց աշխուժացումը արագացրեց կուլտուրական կյանքի կենտրոնացումը դեպի խոշոր քաղաքները, հրապարակ եկան նոր ուժեր, լայնացավ հրապարակը, գավառական սահմանափակվածությունը սկսեց տեղի տալ ազգային ընդհանրականության։ Կյանքը սկսեց եվրոպականանալ, ռուսականանալ պարսկական-ասիական կուլտուրայի ավերակների վրա։

Սակայն եթե քաղաքական իշխանությունը փոխվեց իսկույն և եթ, նույնը չի կարելի ասել կենցաղի, կուլտուրայի նկատմամբ։ Դա չէր կարող փոփոխության ենթարկվել մի հարվածի ազդեցությամբ։ Եվրոպական և ասիական կենսաձևերի խիստ կոնտրաստային բախումը որքան էլ ուժեղ լիներ, նա գործ ուներ մի այնպիսի դանդաղաշարժ հանգամանքի հետ, ինչպես կուլտուրան է, որի նվաճումը պահանջում էր երկար ժամանակ և ջանադիր աշխատանք։

Այս հակադիր հանգամանքը միակը չէր նոր կուլտուրայի ճանապարհին։ Հայկական կյանքը ինքը ներկայացնում էր աշխարհագրորեն բացառիկ աննպաստ մի պատկեր։ Թիֆլիսը, ուր կենտրոնանում էր Անդրկովկասի տնտեսական և մտավոր կյանքը՝ դուրս էր Հայաստանից և կլանում էր հայ ժողովրդից դուրս եկած մտավորականությունը և այնտեղից էր լուսավորում հեռավոր գավառներում դարավոր խավարի մեջ ապրող հայ ժողովրդին։

Պայմանները դժվարացնող այս պատկերի վրա հարկ է նաև ավելացնել այն, որ Աբովյանը մտադրվելով տալ ժողովրդին նրան հասկանալի, կրթող, սիրելի մի գրականություն՝ պիտի հանդես բերեր նոր գաղափարներ, նոր մարդկանց, նոր աշխարհ, ուստի և պիտի հակադրվեր եկեղեցական-կղերական իդեոլոգիային, գրականության, լեզվին, պայքարեր աշխարհիկ կյանքի, հասարակ ժողովրդի, նրա կուլտուրայի համար, որոներ նոր միջոցներ և մեթոդներ այդ իրագործելու համար:

Իսկ այս ամենը իրենց հերթին կպահանջեին արդեն առաջ բերել մի իսկական հեղաշրջում ինչպես թեմայի, լեզվի, նույնպես և ժանրի խնդրում:

Ժանրային խնդիրը դարաշրջանի իդեոլոգիական խնդիր է: Ժողովրդայնության սկզբունքը, որ առաջ քաշեց Աբովյանը, իր և իր ժամանակաշրջանից քիչ առաջվա հայ ժողովրդի պատմական-սոցիալական պայմանների արձագանքն էր: Ժողովրդական զանգվածները, հայ գյուղացիությունը, որ կրում էր պարսից բռնակալության կրկնակ ճնշումը՝ ազգային հալածանքը և ֆեոդալների հարստահարությունները՝ զգաց անշուշտ նոր տիրապետության որոշ՝ թեթևացումները, եթե ոչ տնտեսական ճնշման, գոնե ազգային ավելի տանելի հանդուրժողականության գծով,— այդ ժողովրդական կյանքի ցնցումներն ու իրադրությունը պայմանավորեցին Աբովյանի դեմոկրատիկ մտայնությունը: Այն գիրքը, որ պատրաստվում էր տալ Աբովյանը՝ պետք է լիներ այսպիսով հայ ժողովրդի տրամադրությունների պոտենցիալը, առանց որի ոչ մի աբովյանական անհատական ձեռնարկություն չէր կարող հող ունենալ: Այդ պոտենցիալի արթնացման համար էր ահա գալիս Աբովյանը, և նրա այս համազգային գործը անխուսափելիորեն կհանդիպեր դիմադրության և պայքարի՝ ժողովրդից կտրված հոգևորականության և մտավորականների կողմից:

Աբովյանը պիտի պայքարեր հանուն ազգային ինքնագիտակցության, հանուն հայրենասիրության, ընդդեմ չարին չդիմադրելու եկեղեցական գաղափարների, ժողովրդից մեկուսացած գրաբարի և մեռած կուլտուրայի, հանուն հերոսականության, ազատասիրության, լուսավորության, մարդասիրության գաղափարների:

Ժամանակը պահանջում էր լայն կտավ: Հատվածական ձևերի միջոցով չէր կարող արտահայտվել մի էպոխային կյանք: Չէր կարող հատվածական դեպքերի փոքրիկ պատմվածքը ընդգրկել լայն ազգային կյանքը և բավարարել նրա պահանջները: Ժամանակը «պատմական» էր և այն արտահայտելու նյութը բազմաբովանդակ,

հարկավոր էր այդ մեծ նյութը ամփոփել մի միության մեջ: Դա ամենից ավելի և ամենից հարմար կարող էր իրականանալ մի մեծածավալ ժանրի մեջ: Եվ Սունդուկյանն ընկավ այդ ժանրի որոնման մեջ:

Սունդուկյանի պայքարը ժանրի համար դյուրին գործերից չէր: Նա, որ ինչպես կտեսնենք հետագայում՝ քաջածանոթ էր եվրոպական գրական բոլոր ժանրերին՝ չընտրեց նրանցից և ոչ մեկը: Նա հակադրվեց նաև եկեղեցական գրական կուլտուրային և կեղծ դասականության, որ սկսել էին մշակել Մխիթարյանները: Սունդուկյանի ամենամեծ գնահատելի կողմը այն է, որ նա որոնեց, հղացավ և պայքարեց մի նոր ձևի համար այն ժամանակ, երբ եվրոպական ձևերը կային: Այստեղ նա մեզ ներկայանում է ոչ որպես մի գրական ժանրի «գյուտարար», այլ դրանով նա ցույց տվեց այն մեծ ժողովրդական մտայնությունը, ջերմ սերը դեպի ժողովրդի լուսավորության գործը, որի համար նա համառորեն մերժեց բոլոր գոյություն ունեցող գրական ժանրերը:

Այսպիսի մտադրությունն ու անշեղ ձգտումը Սունդուկյանին պիտի մղեր անշուշտ դեպի այն միջավայրը, որի արտահայտիչը պիտի լիներ նա իբրև ստեղծագործող: Դա հայրենի երկիրն էր, հայ ժողովրդական բանահյուսությունը և արևելյան աշխարհը: Մեծ ֆորմայի ժանրը նա կարող էր թերևս փոքրերի կցկցանքով կառուցել, ծավալել նյութերը, ընդլայնել և խորացնել:

Արդ՝ ի՞նչ ուներ Սունդուկյանը իբրև ժառանգություն հայ ժողովրդի անցյալից, իբրև ստեղծագործական ավանդ:

Պարսկա-թյուրքական ֆեոդալական կյանքի ծնունդ՝ ավազակային իշխանությունները, ավանտյուրիստների սխրագործությունները, կովկասյան-արևելյան ասպետների հերոսությունները, ասիական բռնակալության մեջ առաջացող սիրո ողբերգությունները, գեղեցկանիկ վայելքների կարոտ սրտերի ֆանտազիները ծնունդ էին տալիս այնպիսի հերոսավեպերի և սիրավեպերի, ինչպես օրինակ՝ Քյոռօղլին, Ասլի և Քյարամը, Աշուղ Ղարիբը և այլ բազմաթիվ վիպումներ, որոնք անցած դարերի ֆեոդալական և կիսանարխիկ կենսաձևի արտահայտիչը լինելով դեռ մինչև Սունդուկյանը պատմվում էին իբրև նույնանման կյանքի շարունակության արտահայտիչներ:

Արևելյան հերոսավեպերն ու սիրավեպերը ժողովրդական հիմք ունեին: Անգամ՝ պալատական-հարեմական պոեզիան և մասամբ էլ էպոպեն, որ մշակում էին պալատական և կիսապալատական բանաստեղծները, վերջնական հաշվով գերադանցապես ժողովրդի

վրա էին հենվում (դյուցազներգություն, էպոս, պատմական ավանդություններ)։

Եթե էպոսները տվին պալատական պոեզիայի որոշ ձևերը, ապա պոեզիայի հիմնական ձևերը զարգացան ժողովրդի բանահյուսության մեջ։ Ճիշտն ասած՝ պալատական բանաստեղծի և ժողովրդական աշուղի փոխհարաբերությունը ստույգորեն սահմանազատում է այս երկու ստեղծագործողների գործունեությունն ու ասպարեզը։ Մինչ առաջինը ժողովրդական էպոսի գրական մշակող-գրողն էր, երկրորդը ժողովրդական ավանդությունների կամ ինքնաստեղծ ֆաբուլաների կենդանի բանաստեղծ-երգիչն էր։

Աբովյանի ստեղծագործության հիմքը ահա այս իրականությունն էր և նրա ժանրային ձևը։ Ահա հենց այս հիմքը, այս կենդանի, արյունային կապը իրականության և գրողի՝ պայմանավորում է այն գրական ժանրը՝ որի մեջ արտահայտվում է դարաշրջանային գրողի լայն մասսայական նշանակությունը։

Արդյո՞ք ժամանակավրեպ ժանր էր Աբովյանի «Վերքը»։ Չի կարելի այսպիսի բան պնդել։ Ճիշտ է, Աբովյանը «իջավ» «կուլտուրական» գրողի գրասեղանից և գնաց նստեց ժողովրդական հրապարակի վրա, դեմ գնաց ընդունված գրական տրադիցիաներին, մասնավորապես Մխիթարյան հետադեմ գրաբար գրականության, բայց արդյո՞ք դա մի արհեստական քայլ էր։ Չի կարելի այսպիսի բան էլ պնդել։ Եթե Աբովյանը մնար ընդունված «բարձր» գրական տրադիցիաների գիրկում՝ նա բնավ չէր կատարի իր ժողովրդական գործը՝ ժողովրդի գրականության ստեղծումը։ Թո՛ղ որ «բարձր» գրականություն էլ չունեինք այն ժամանակ և մեր շատ սակավաթիվ մտավորականության սեփականությունը սեփականություն չէր այդ մտքով վերցրած, այլ օտարինը։ Աբովյանը չէր ունենա լայն զանգվածային ընթերցող։ Լայն զանգվածը բարբառախոս գյուղացիությունն էր և նրա ժանրային կուլտուրան՝ արևելյան ասպետական հերոսավեպը և սիրավեպը։ Ահա միակ լայն կուռը, միակ ժանրը, միակ ընթերցողական լայն զանգվածը։

«Վերքի» ժանրը, որով Աբովյանը սկիզբ դրեց հայ աշխարհիկ գրականության՝ ունի շատ հետաքրքրական պատմություն և նշանակություն։ Եթե մենք մի անգամ վերհիշենք եվրոպական ռոմանի ծննդաբանությունը և նրա ձևավորման պրոցեսը, ապա մենք կըտեսնենք որ Աբովյանը կանգնած էր— գիտակցաբար թե ինտուիցիայով— մի մեծանշանակ գործի սկզբնավորման առաջ։ Թողնելով մի կողմ եվրոպական ռոմանի կազմավորման շատ հետաքրքրե-

րական պատմությունը՝ միայն կնշենք հատկապես այն փաստը, որ արևելյան ֆանտաստիկ պատումները, արկածալից վիպումները, մեծապես ազդեցին թե՛ վաղեմի հելլենական ռոմանին և թե՛ եվրոպական միջնադարյան ասպետական ռոմանին և այս վերջինը հետզհետե զտվելով էպոսի տարրերից ձևավորվեց իբրև եվրոպական արդիական ռոման։

Ի՞նչն էր այդ բազմադարյան պրոցեսի մեջ հետաքրքրող կողմը։ Նախ՝ արևելքի ուժեղ ազդեցությունը, որով զարգացավ ռոմանի ֆանտաստիկան, երկրորդ՝ շերտավորվածությունը, որով բազմաթիվ ժողովուրդների ստեղծագործություններ փոխանցվելով և հյուսվելով իրար՝ հարստացրին եվրոպական ռոմանը այդ ժողովուրդների կենսափորձի և աշխարհազգացման արդյունքներով։ Այդ շերտավորումը պարունակում է բազմաթիվ հելլենական պատմական տարրեր, էպոսների բանավոր վերապատումներ, այլաբանական պատումներ, զանազան ժողովուրդների կենցաղի պատկերներ, որոնք մանր ձևերով և այլ ուղիներով եկել հյուսվել են այս մեծ ձևին և պայմանավորել նրա բազմաբովանդակությունն ու ծավալը։ Ապա և վերջապես նրա գլխավոր հատկություններից մեկն էլ այն էր, որ այդ ռոմանի ժողովրդական հիմքերը անկասկածելի են։ Ավել կամ պակաս չափով, ենթարկվելով զանազան հոսի կամ նպատակավոր ազդեցությունների, եվրոպական ռոմանը չի կորցրել իր ժողովրդայնությունը, որով և արդարանում է նրա կենսունակությունը իր այնքան թափառական կյանքի մեջ, որ արդարև երկար էլ եղավ... Այդ ժողովրդայնությունը լայն եղավ և նպաստեց, որ համամարդկային միտքը կատարեր դարերի միասնական զարգացման պրոցես, որի նշանակությունը անկարելի է ժխտել։

Եվ ահա այն արևելյան ռոմանը, որ մեծապես ազդեց եվրոպական ռոմանին, որը իր զարգացման ճանապարհին անցավ մի փուլ, երբ նա խառնուրդ էր արձակի և չափածոյի և արդեն վերջին դարերում ստացել էր կայուն արձակի ձև և վերջնականապես ձևավորվել իբրև արդիական եվրոպական ռոման՝ Արևելքում, Աբովյանի ժամանակ դեռ ապրում էր (և դեռ ապրում է) իբրև երգախառն արձակի ձև։ Դա «Քյոռօղլին» «Հեքիաթն» էր և մյուսները՝ կես երգ, կես արձակ,— արևելյան ասպետական ռոմանը։ Հայ ժողովրդական զանգվածների կյանքն ու իրականությունը շատ էլ հեռու չէին այդ ռոմանների թեմատիկայից։ Առաքել Դավրիժեցին եթե ոչ շատ ճիշտ է նշել Քյոռօղլի ավազակ ասպետի իրական անձնավորությունը, համենայն դեպս հարուստ նյութ է տալիս 17—18-րդ դարերի պատմական իրականության մասին, որը իր քյոռ-

օղլիական սխրագործություններով մոտ էր նաև 19-րդ դարի պարսկական Հայաստանի իրականության: «Քյոռօղլին» կենդանի, օգտագործվող ստեղծագործական նյութ էր Աբովյանի ժամանակի հայ զանգվածների համար: Եթե մի կողմ թողնենք «Քեռօղլի»-ի հիպերբոլիկ ոճը՝ ինչո՞վ էր պակաս նրանից Աղասին իր սխրագործություններով: Կամ ինչո՞վ պակաս եղան նրա սխրագործությունների աբովյանական նկարագրությունները իբր հիպերբոլա:

Այսպիսով, ահա, տեսնում ենք, որ Աբովյանը կիրառեց մի կենդանի ժանր, կենդանի նյութով: Դա մեծ ժողովրդայնական քայլ էր նրա կողմից: Նա տվեց արևելյան ասպետական ռոման:

Այսպիսով նաև տեսնում ենք, որ ինչպես արևելյան ռոմանը մտնելով Եվրոպա, այնտեղի տեղական ժանրային տարրերի հետ միանալով հասունացավ և հանգեց եվրոպական վերջին ռոմանի զարգացման, այնպես էլ Արևմուտքի այդ բազմադարյան պրոցեսը ունեցավ իր զուգահեռը Աբովյանի գործի սկզբնավորության մեջ: Ժողովրդական ասպետական ռոմանը մտավ գրականության մեջ և դառավ նոր որակ: Հետագայում մենք կտեսնենք թե ինչպես «Վերքին» հետևում է «Սոս և Վարդիթերը», «Արություն և Մանվելը», «Անուշը», «Հալիվարի որսը» և այլն:

Ուրեմն պարզ է, որ մեր առաջադրած այս ժանրային խնդիրը հեռու է գրականագիտական ֆորմալիստական հանգամանքից, մանավանդ Աբովյանի համար: Եվ զարմանալի չպիտի լինի եվրոպական գրականության քաջածանոթ մի Աբովյանի համար, որ բավական տքնեց ժանրի խնդիրը լուծելիս: Որովհետև Աբովյանի համար ժանրի հարցը ներքին, հասարակական, ժողովրդական կյանքում հեղաշրջում առաջ բերելու, կյանքը հեղաշրջելու հարց էր: Ժանրը Աբովյանի գրական ստեղծագործության ներքին ձևի հարցն էր, նույնարժեք՝ բովանդակության, ուղղության, իդեայի:

Եվ ահա, երբ ժանրի հարցը մեջ եկավ՝ Աբովյանը կանգնեց մեծ դժվարության առաջ: Չէ՞ր կարող Աբովյանը ժողովրդական բարբառով տալ եվրոպական ռոման սրա պատշաճ կառուցվածքով, տիպերով, սրանց ձգտումների, խարակտերների, հակադիր ուժերի բախումների, հոգեբանական բարդ ապրումների վերլուծման, աստիճանական վերափոխումների ու զարգացման նկարագրություններով և այլ ատրիբուտներով, որ պահանջում էր եվրոպական վեպը: Չենք կասկածում: Մենք կարող ենք այդպիսի մի եվրոպական վեպի ձեռնարկում նշել, հենց նույն Աբովյանի կողմից, նրա «Պատմություն Տիգրանի»-ն: Մեզ հայտնի չէ թե այս վեպը բոլո-

բովին ինքնուրույն ստեղծագործություն չէ, կամ ուղղակի փոխադրություն գերմանական կամ այլ լեզվի նման մի գրվածքի, գոնե այս մասին ոչ ոք դիտողություն չի արել: Բայց լեզվի, ոճի կողմից ժողովրդին հասկանալի այս վեպը ո՜րքան անճարակ է և թույլ, ո՜րքան անհրապույր իբրև ընթերցանության նյութ «Վերքի» կողքին:

Համեմատել չի կարելի «Վերքի» հետ: Տարբերությունը այս երկու երկի՝ «Վերքի» լայն, զանգվածային, ժողովրդական նշանակության մեջ է, և «Վերքի» անհամեմատ մեծ առավելությունը նրա բովանդակության և միաժամանակ կավելացնենք՝ նրա յուրահատուկ բնույթի, բուն ժողովրդական ձևի, ժանրի մեջ: Ոչ ոք չի համաձայնում «Վերքն» անվանել վեպ: Միշտ կցել են՝ հերոսական վեպ, վիպասանություն, դյուցազնավեպ, պատմավեպ, էպոպե և այլն: Զուտ վեպ ոչ ոք չի համարել, նամանավանդ վեպ եվրոպական առումով: Այս սահմանումները ցույց են տալիս, որ երկը իրոք պարզորոշ և սովորական վեպի նման չէ: Արդեն իսկ Միքայել Նալբանդյանի և Ոսկանյանի մեջ կարծիքների մի թեթև բախում եղավ այս մասին: «Անհնարին է այս գիրքը դատել **եվրոպական կանոնով**,— *ասում է Ոսկանյանը,— վասն զի...* **ռամիկների համար և ռամկի ոճով** *գրված է այն, և իբրև* **գրական չենք մը** *չընծայվիր մեր աչքին»: «... Համաձայն չեմ»,— ասում է Նալբանդյանը,— «Այո՛, Աբովյանը յուր* **բանաստեղծությանը** *չի տվել այնպիսի* **ընթացք** *և վերջ, որ սովորական է* **եվրոպական** *բանաստեղծներին»: «Աբովյանցի խորհուրդը է՝ գրել այնպես, որ անկիրթ ժողովուրդը* **չկարծե թե գիրք է կարդում**, *այլ կարծե մի մարդ* **խոսում է** *յուր հետ» (բոլոր ընդգծ. մերն են — Դ. Դ.):*

Ինչ խոսք որ Ոսկանյանը միանգամայն սխալ է իր ոչ ուշադիր վերաբերմունքի պատճառով: Սակայն «Վերքի» բարձր գնահատողների մեջ էլ չկա մինչև օրս մի վերջնական կարծիք, «Վերքի» ժանրի մասին: Ի՞նչն է պատճառը:

Աբովյանը կյանք մտավ ոչ իբրև խաղաղ լուսավորիչ ներդաշնակորեն զարգացող մի իրականության մեջ: Նա եկավ իբրև մարտնչող գործիչ, մտքերի հեղաշրջող և իրականությունը վերափոխող մարտիկ: Նրա հոգեկան աշխարհը լի էր իր էպոխայի տագնապներով ու մտքերով: Նա ապրել էր ֆեոդալական պարսկական դաժան իրականության մեջ տառապող հայ ժողովրդի սարսափներն ու տառապանքները: Հայ հերոսների ըմբոստացումը, հայ ժողովրդի ազատագրական ձգտումները, նրա դիմադրական մարտերը, ռուս պետականության հաղթական մուտքը Հայաստան,

հայ ժողովրդի ազատագրումը, հայ ժողովրդի պատմական անցյալի և կուլտուրայի վերհանումը, ազգային գիտակցության, հայրենասիրության արժանապատվության զգացմունքի, հայ լեզվի պաշտպանության, նրա նշանակության ճանաչման կոչը, Հայաստանի բնության, պատմական վայրերի, նշանավոր անձերի գործերի հիշատակումը, հայ ժողովրդի կենցաղի, բարոյական, մտավոր վիճակի, նրա ստեղծագործ ոգու գովք, և այս ամենի հետ խրատական, բարոյախոսական դիդակտիկական այլ և այլ նյութեր...— մի հեղեղ, որ կարելի չէր հասցնել նեղ առվի հունով:

Այո, Աբովյանը շատ բան ուներ ասելու և ուզում էր ասել մի անգամից բոլորը, ուզում էր ասել ողջ հայ ժողովրդին, ողջ անցած սերունդների դարավոր լռություններից հետո, ասել ողջ հոգու խորքերից, առաջին անգամ «փակ լեզուն» բացված... Սա պահանջում էր լայն մասսայական մի ժանր: Եվ այդ ժանրը գտնվեց: Մասամբ գիտակցեց հեղինակը, մասամբ էլ նյութը ինքը ձևավորեց իրեն, ընտրվեց իբրև ժանր: Նախ դեռ դիմենք հեղինակին:— «Էլի էսպես մաքիս հետ ընկած, շատ անգամ՝ որ ղոնաղ էի գնում, յա քաղաքումն անց կենում, ուշ ու միտքս հավաքում էի՝ թե տեսնիմ խալխը խոսալիս, քեֆ անելիս, ի՞նչ բանից ա ավելի հազ անում: Շատ անգամ տեսնում էի, որ մեյդանում, փողոցում մեկ բոռ աշըղի էնպես են հայիլ մայիլ մնացել ու կանգնել՝ ականջ դնում, փող բաշխում նրան, որ բերընների ջուրը գնում էր: Մեջլիս ու հարսանիք հո, առանց սազանդարի ե՞րբ հացը կուլ կերթար: Ասածները թուրքերեն էր, շատը մեկ բառ էլա չէր հասկանում, ամա լսողի տեսնողի հոգին գնում էր դրախտը, եդ գալիս: Միտք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ, արի քո բերականություն, ճարտասանություն, տրամաբանություն ծալիր, զրադ դիր ու մեկ աշըղ էլ դու դառ, ինչ կլի, կլի...»:

Այս նշանակալից վճռից հետո Աբովյանի հոգում փայլում է ստեղծագործության խարույկը: Ստեղծվում է նյութը, ֆաբուլան. «երեխությունից լսած կամ տեսած բաները» և դրանց միջին գլխավոր կերպարանքը՝ Աղասին: «Քսան-երեսուն տարվա փակ լեզուն բաց է անում» գլխավոր հերոսը:

Եվ ահա՝ բացատրել այս «աշըղ դառնալու» հանգամանքը իբրև ժողովրդական, հարազատ գրող դառնալու ցանկության միայն սիմվոլիկ ձևակերպումն, փոխաբերական մի դարձվածք՝ առաջին հայացքից շատ է թվում բնական և միակ հասկանալի բան և անշուշտ ավելորդ կլինեի աշուղ դառնալու որոշումը բառացի մտքով ընդունելը: Բայց փորձենք հետևել «Վերքի» բովանդակու-

թյան և սյուժետային գծին սկզբից մինչև վերջ։ Ի՞նչ են ներկայացնում դրանք։— Բարխվենդանի մի առավոտ Քանաքեռում, Աղասին, գյուղի քեդխուդաների քեֆը, երիտասարդների ջիրիդը, Թագուհու առևանգման դեպքը, Աղասու հերոսական միջամտությունը, ֆառաշների սպանությունը, Աղասու հոր սարսափելը և սուգը, փոքրիկ չափածո ձևով, որ կարևոր չէ։ Բայց ահա հեղինակը տալիս է մի լիրիքական շեղումն. «վայ էն ազգին՝ որ աշխարքումս անտեր ա»— ութ տուն։ Ապա գալիս է Երևանու բերդի էպիքական նկարագրությունը՝ հայ պատմական դեմքերի, հերոսների, Թուրք-պարսիկ բռնակալների, խոշտանգվող հայերի վիճակի հիշեցումներով։ Դրան հետևող մհառլամի սուգը որ համեմվում է ահագին մի սոգի մեջբերումով։ Չափածո ողբերգ։ Սգահանդեսը փոխվում է եկեղեցում հավաքված հայերի չարդ ու թալանով։ Դեպքերը ծավալվում են։ Հայերի բռնի տեղահանությունը, կոտորածն ու այլ սարսափները, և խակույն կրկին չափածո լիրիկական շեղումն (երեք էջ)։ Դրան հետևում է Խլղարաքիլիսի ինքնապաշտպանության գիմադրությունը պարսիկ զորքերին։ Տեսարանը վերջանում է էջ ու կես չափածոյով։ Գրքի երկրորդ գլուխն սկսվում է ռուս-պարսկական պատերազմի պատմական դեպքերի ու դեմքերի հիշատակություններով։ Ապա հետևում է հայերի քշելը Երևանու բերդը, Սվանղուլի-խանի և Մելիք Սհակի միջնորդությունը Սարդարին, որ մեզմ վարվեն հետները, Աղասու փախստական վիճակը, նրա հյուր գնալը Շիրակ, Փամբակ, և այստեղ էլ կրկին նույն վերջավորությունը։ Աղասու սգերգը— խառն և հինգ տուն... Գալիս է այցելության Աղասու հարեղբայրը, նամակներ է բերում նրա մորից և նշանածից։ Կրկին չափածո՝ «Նազլվի սուգը»— չորք տուն։ Քիչ հետո Մուսայի երգը— ութ տուն։ Կրկին մի փոքր հետո Աղասու հրաժեշտի երգը սարեցիներին, մի ամբողջ էջ։ Աղասին Անիում։ Հայ գերիների ազատելը, Անիի առավոտը, որ վերջանում է դարձյալ տասներկու տուն երգով։ Աղասին զորամաս է կազմում, վճռում է Անին վերաշինել և այդ ուխտում է մի երգով (յոթ տուն)։ Ապա նկարագրվում է Աղասու գնալը գեներալ Մադաթովի բանակը, մտնելը ռուս զորքը։ Այստեղ հեղինակը մեջ է բերում Պասկևիչին, Կրասովսկուն, Բենկենդորֆին, Ներսես կաթողիկոսին նվիրած աշուղական մի խաղ (չորս տուն)։ Դրան հետևում է վերջաբանը՝ Երևանու բերդի առումը, Աղասու հոր և իր սպանվելը։ Մի էջ վերջերգով ավարտվում է գիրքը։

Մենք չնշեցինք բազմաթիվ չափածոները, որ շարունակ և

համառ մեջ ընդ մեջ հետևում են իրար և թաքչում են տեքստի արձակաձև շարվածքի տակ: Նաև լիրիկական անթիվ շեղումները…

Անգամ սոսկ մեխանիկական հաշվով այս երգերն ու շեղումները արդեն որակ են դառնում «Վերքի» մեջ, փոխում են ոչ միայն նրա արտաքին կառուցվածքը, այլև բնույթը, նրա վրա դնում են իրենց կնիքը: Տեքստի այս երգերը բայաթիներ են և այլ արևելյան ձևեր՝ «Աշըղ Ղարիբի հանգով», «Քեշիշ օղլու գունով» և բնականաբար երգվում էին մի ժամանակ:

Հենց այդպիսի ձև ու բնույթ ունեն արևելյան հերոսավեպերն ու սիրավեպերը՝ ինչպես Քյոռօղլին, Լեյլին ու Մեջնունը, Քյարամըն ու Ասլին, Աշըղ Ղարիբը, Ասմանն ու Զեյջանը և այլն: Սրանք արևելյան վեպեր են, ավելի ճիշտը՝ վիպասանություններ, բաղկացած արձակից և չափածոյից (երգերից): Երգախառն պատումներ:

Արդ, ինչպե՞ս կարելի է նշանակություն չտալ «Վերքի» նույնանման արձակին և երգերին, չենք ասում դեռ այն աներգ չափածոյին, որին վերածվում է հաճախ արձակ տեքստը: Այս հիմնովին փոխում է վեպի ընդհանուր հասկացողությունը և նրան հաղորդում է յուրահատուկ քնարավիպական (լիրոէպիքական) ժանրային բնույթ, որով և «Վերքը» թեև չի կարելի կոչել զուտ արևելյան երգախառն վիպասանություն, բայց և անկարելի է կոչել զուտ եվրոպական վեպ: Ինչո՞ւ, օրինակ, Գոգոլի «Մեռյալ հոգիները» կոչվում է պոեմ: Ի՞նչ կա պոեմային այդ վեպի մեջ: Շատ բան: Սյուժեի մեծ պայմանականությունը՝ հոգիների ծախման—գնման տարօրինակ, արտակարգ փաստը, սատիրական լիրիզմը, անասնակերպ տիպերի քստմնելի կերպարանքը, հեղինակի հաճախակի միջամտություններն ու լիրիկական մարգարեական խոսքը Ռուսիայի, ռուս ժողովրդի պատմական միսիայի մասին: Ուրեմն այստեղ խնդիրը բովանդակությունը չէր, այլ հեղինակի տրամադրությունը, էմոցիան, երկի բնույթը, որ բովանդակությանը հաղորդում է պոեմական շունչ, դարձնում ժանրով մի տեսակ պոեմ:

Ինչո՞վ առավել մեծ իրավունքներ չունի «Վերքը» կոչվելու պոեմ, թեև մյուս կողմից նա լի է ռեալիստական պատումներով ու նկարագրություններով: Ուրեմն նյութը, բովանդակությունը չէ որ միշտ վճռում է հարցը, այլ ուրիշ բաներ: «Վերքի» նյութը պատմական է գերազանցապես և հեղինակը կոչում է այն պատմական վեպ և ավելացնում է «ողբ հայրենասիրի»: Այսինքն ողբ Հայաստանի վերքերի վրա: Այս ողբը արդեն խոսում է երկի ուլտրալիրիկական բնույթի մասին: Եվ եթե կարծիք հարցնողներից ոմանց համար շփոթեցնող հանգամանք կա «Վերքի» ժանրը որոշելիս՝ դա-

ստացվում է նրանից, որ նրանք ուշադրությունը դարձնում են «Վերքի» բովանդակիչ տարրերի վրա և ոչ երկի բնույթի վրա։ Բովանդակությունը՝ պատմական անցքեր են, հերոսների սխրագործություն, հայ ժողովրդի վիճակը, բայց և այլ տարրեր, որով սյուժետային գիծը կտրտվում է, բովանդակությունը ստվարանում և մթագնեցնում երկի ժանրային հատակությունը։ Սա ստացվել է ամեն բան մի գրքում ասելու անսանձելի կրքից։ Արդ՝ այստեղ կարիք ենք զգում նշելու, որ մենք երկի բովանդակության տարրերի «տակոսային» մեխանիկական հաշիվներով չենք առաջնորդվում, նրա ժանրային հարցը լուծելու համար։ Մեզ չի գրավում նաև երկի արտաքին ձևական կողմը, կարող ենք և վճռական նշանակություն չտալ երկի արձակ և չափածո խառնուրդին, թեև այս վերջինը ցուցանիշ է ներքին հատկությունների։ Մենք ուղղակի ելնում ենք «Վերքի» ուղղությունից, հասարակական իդեաբանական գրքավորումից,— աշխարհզգացման, կյանքի երևույթների հանդեպ ցուցաբերած կենդանի վերաբերմունքից, մարտնչողի, վերափոխողի, կոչողի և անշուշտ նաև որբացողի զգացմունքների վեհումից և առհասարակ ողջ երկի շիկացած ոգուց և բնույթից։ Եվ սակայն քանի որ այս ամենը պետք է մի ձև ընդունեն և այդ ձևը կա, դրսևորվում է ներքին բնույթից, իբրև ներքին ձև, ներքին ոճ, օրգանապես միաձույլ բովանդակության հետ, մենք այս «Վերքը» համարում ենք արևելյան վիպասանություն, արևելյան հերոսավեպ, մի փոքր էլ սիրավեպ իր երգախառն արձակով, մի ձև, որը եթե շատ բանով «Քյոռօղլի», «Լեյլի և Մեջնուն» չէ, ապա և շատ բանով էլ հիշեցնում է այսօրինակ արևելյան[1] վիպասանությունները։ Ուրեմն ոչ վեպ, ոչ պատմավեպ եվրոպական մտքով, այլ արևելյան վիպասանություն, արևելյան ռոման— բուն ժողովրդական ժանր։ Այլապես նա չէր ունենա այն գերազդեցիկ (սուգգեստիվ) ուժը, այն մեծ նշանակությունը, լայն մասսայականությունը՝ այդ երկը «Աղասու պատմություն» կոչող հայ ժողովրդի մեջ։

Այսպիսով Աբովյանը վճռելով «դառնալ աշուղ», որոշ չափով նմանվեց աշուղի, ավելի ճիշտը՝ լիովին կատարեց աշուղի դեր՝ կատարելով նրա նման լայն ժողովրդական մի գործ։

---

[1] Մենք գործ ենք ածում «արևելյան» տերմինը՝ խնդրը լայն սահմանների մեջ դնելու դիտումով և ի հակադրումն «եվրոպական» տերմինին։ Խոսք չի կարող լինել, որ դա միաժամանակ նշանակում է հայկական, հայ ժողովրդական, և վերոհիշյալ «Քյոռօղլի» և այլ վիպասանությունները նույնքան հարազատ էին հայ ժողովրդին, որքան և այլ մերձավոր ժողովուրդներին։ Սա մեծ նշանակություն ունի կուլտուրայի և գրականության տեղայնության սկզբունքի հարցում։

«Վերքի» մինիատյուրան է «Առաջին սերը», և եթե ավարտվեր այնպես, ինչպես ենթադրում ենք, որ սիրահարներ Վանին ու Փարիխանը հեռվից (բերդից ու ձորից) տեսակցում են իրար հետ և ուժեղ սիրուց տանջվում են՝ որ այս բանը լսելով խանը զիջում է աղջիկը տղային (կա այդպիսի մի իրական դեպք)— ապա դա կդառնար լրիվ և տիպիկ մի ռոմանտիկ սիրավեպ արևելյան վիպասանական ժանրի (երգախառն արձակ)։ Այս երկում, սակայն, բացակայում է «Վերքի» կողմնակի նյութերի կուտակումը։ Եվ բնորոշ է, որ հեղինակը կամեցել է մի այդպիսի նյութ խցկել, որ միայն տեքստի սկզբում նշում է միայն «Ծաղկեվանքի պատմությունն անել», բայց որը կամ ավելորդ է համարում հետո կամ չի կատարում երկը անավարտ թողնելու պատճառով։

Շատ հետաքրքրական էր պարզել Աբովյանի մյուս երկերից «Օվսաննայի», «Պատմություն Տիգրանի»-ի, «Ցեղդըրայի» ժանրային խնդիրը, սակայն դրան լրջորեն խանգարում է մի հանգամանք։ Ստուգված չէ լրիվին թե դրանք, որ համարվում են եվրոպացի և ռուս գրողների գործեր՝ ինչ չափով են յուրացվել. արդյոք նյութն է վերցրած և վերամշակված, թե փոխադրած որոշ ազատությամբ։ Մենք «Պատմություն Տիգրանին» ևս չենք համարում ինքնուրույն։ Ուրեմն այստեղ մենք պիտի խոսենք միանգամայն վերապահ և պատմականորեն։ Այսպես. քիչ առավելություն չէր լինի Աբովյանի համար, եթե նա միայն նյութը լիներ փոխառած և վերամշակած. սա որոշ կամ թերևս մեծ չափով ինքնուրույնություն է։ Մնում է խոսել այն տարրերի մասին, որ Աբովյանի այս երկերում փաստորեն ինքնուրույն են, դա ոճն է և լեզուն։ Այս տեսակետով Աբովյանը այս գործերում հանդես է գալիս նոր նվաճումներով՝ դա եվրոպական, արդիական, ռեալիստական վեպի և դրամատուրգիական երկի կուլտուրան է։ Այստեղ արդեն հետևումն են մնում «Վերքի», «Առաջին սիրո», «Թուրքի աղջկա» և «Առակների» զուտ բարբառային անպաճույճ, անմշակ լեզուն և ոճը։ Այստեղ՝ չնայած որ բարբառը մնում է՝ բայց Աբովյանն սկսում է արդեն ոտ դնել գրական լեզվի և ոճի սահմանները։ Բնագրի թելադրությամբ, ճիշտ է, սակայն և սեփական ջանքերով լեզուն՝ ոճը այստեղ դառնում են հակիրճ, պարզ, կառուցիկ, հղկուն։ Աբովյանը այստեղ հայ գրականության մեջ մտցնում է եվրոպական ռեալիստական վեպի շարահյուսություն, խոսքի արվեստ։ Սա նրա ինքնուրույնությունն է արդեն։ Շարահյուսության տեխնիկա։

Ինքնուրույն գեղարվեստական պոեզիայի նմուշ է «Թուրքի աղ-

չիկը», ասենք, պատմվածքը։ Ռոսլենում սա որոշ չափով էլ գեղարվեստական ակնարկ է։

Աբովյանական պրոզան թեև այսքանով չի սահմանափակվում, սակայն կարծում ենք որ բավականին թվեցինք և հարցը պարզվեց։

Գիտական, հրապարակախոսական պրոզան Աբովյանի գործերում քիչ տեղ չի բռնում։ Ինքնուրույն ուսումնասիրություններ, թարգմանական, ավելի շատ՝ փոխադրական բազմաթիվ գրվածքներ պարզում են մեր առաջ մի կողմից Աբովյանին՝ զբաղեցնող խնդիրները, մյուս կողմից կրկին նրա ժանրային բազմազանությունը և գիտական պրոզայի կուլտուրան։

Աբովյանի չափածոն մեծ տեղ է բռնում նրա ստեղծագործության մեջ։ Մեծագույն մասը ինքնուրույն են, մի փոքր, թերևս աննշան մասը՝ փոխադրություն։ Զուտ քնարական բանաստեղծությունները սեփական հղացումներ են՝ բնականաբար։ Իսկ ժողովրդական նյութերի գեղարվեստական մշակումը՝ հեղինակի տերմինով՝ «ինքնահարմար հորինված» կատարված են յուրահատուկ ձևով։ Այսպես՝ հեղինակը որոշում է իբրև «առասպելը» պարզապես և առակը և լեգենդը։ Կամ իբրև առակ է մշակել ժողովրդական պատմվածքը, անեկդոտը, կատակը։ «Խալխի խոսացած բաները»։ «Առակ, մասալա, սուր սուր խոսքեր»։

Այս վերաբերմունքի բուն պատճառը հեղինակի ձգտումն է շարունակ ուսուցանելը, խրատելը, քարոզելը։ «Էնպես եմ դուս բերել, որ մեր խալխի սրտովն ըլի»։ Աբովյանը և աշուղի գործ է ուզում կատարել և առակախոսի, զրույցողի դեր ստանձնել։

Այս կարգի երկերը նա տեղավորել է գլխավորապես «Պարապ վախտի խաղալիքի» մեջ։ Ինչպես նշեցինք՝ Աբովյանը իր այս երկերին տալիս է խրատական-բարոյախոսական բնույթ։ Այդ պատճառով էլ զուտ առակներից բացի, որ անհրաժեշտորեն այս բնույթը պիտի ունենան՝ Աբովյանի համարյա բոլոր ժողովրդական պատմվածքների սկզբում կամ վերջում կցում է նրա խրատական-բարոյականը կամ իդեական իմաստը՝ կրկին խրատականի միտումով։

Չերկարացնելու համար նշենք ուրեմն, որ Աբովյանը իր ժողովրդական նյութերի գեղարվեստական մշակմամբ տվեց՝ լեգենդ, առակ, նովել, անեկդոտ և կատակ։

Աբովյանի երգիծաբանական տաղանդը փայլում է նրա «Վերքի» վերոհիշյալ ժողովրդական նյութերից մշակած երկերի մեջ, իբրև նրանց օժանդակ տարր։ Սակայն նա ունի իր զուտ երգիծական պոեմը՝ «Հազարփեշեն»։ Այստեղ նա սատիրականի հասնող

կծու հումորով ծաղրում է վերևից ներքև նայող մի ռուս-չինովնիկի արարքներն ու խայտառակումը արհամարհված «տեղացիների» կողմից: Ունի նա շատ երգիծական ոտանավորներ, ուր ծաղրում է այս կամ այն հարուստին, այլանդակ բնավորության մարդկանց: Այս առակների, պատմվածքների, անեկդոտների պարզաբանման մեջ ամենակարևորն այն է, որ դրանց գերակշռող բաժինը ժողովրդական նյութեր են՝ «մասալաներ», որոնք թեև նույն և նման են եվրոպական առակներին և այլնին, բայց ունեն նաև առանձին արևելյան կոլորիտ, բնույթ, որով և հարազատ են ժողովրդին:

Աբովյանն ունի նաև «ողբեր», «սուգեր», այսինքն էլեգիաներ և այլ կարգի լիրիքական բանաստեղծություններ: Առանձնահատուկ են նրա «Բայաթիները»— արևելյան քառյակները, շատ ծանոթ նույնաժանր բազմատեսակությունը, որոնք սակայն ոչ պալատական, սալոնային քառյակներն են, այլ ժողովրդական են:

Մենք կանգ չառանք Աբովյանի գործերի գրական-հասարակական և ստեղծագործական-գեղարվեստական վերլուծության և գնահատման մեջ, քանի որ դա մեր նյութին վերաբերում է ոչ ուղղակի: Սակայն որքան որ մենք խոսեցինք Աբովյանի գրական ժանրերի մասին իբրև այդպիսին՝ չէինք կամենա թյուրիմացություն առաջացնել և կարծել տալ, թե մենք զբաղվեցինք ձևաբանական մարզանքով՝ կտրելով ժանրի խնդիրը նրա ներքին հասարակական իդեոլոգիական հանգամանքներից: Կարևոր ենք համարում, որ Աբովյանի երկերի գեղարվեստական արժանիքները ավելի ցայտուն կերևան, եթե նրանց ժանրերի ընտրությունը դիտվի իբրև հեղինակի տենդենցի հետևանք, այն է՝ լինել ժողովրդային ոչ միայն բովանդակությամբ, այլ և ձևով՝ ժանրով: Այս ժողովրդայնությունը Աբովյանը ընտրեց իր գրական գործունեության ժողովրդական ուղղության հետևանքով: Ընտրեց իդեան, ընտրեց բովանդակությունը, ընտրեց և ժանրը, լեզուն, ոճը:

Աբովյանի գործերի գեղարվեստական գնահատության խնդրում մեզ միայն թույլ կտայինք մի դիտողություն: Սխալ է, կարծում ենք, նրա երկարաբանությունները, գռեհկաբանությունները, որոշ բամբասակ տարրերը կարծել իբրև Աբովյանի սոսկ անձնական հատկություն: Դրանց մեջ մեծ դեր են կատարում ժողովրդի ճաշակին հարմարեցրած որոշ նատուրալիզմը, նրա ոճին նմանեցումները: Այդ հումորական անմեղությունները ոչ միշտ խորթ են ժողովրդական ստեղծագործության մեջ. (սասունցի կանանց և Կոզբադինի դիալոգը): Անասունների ձայները, քեդխուդաների կատակները, Երևանի հրապարակի տիպերի նկարագրությունները և

բոլոր երգիծաբանությունները Աբովյան «ողբասացի» մյուս պայծառ ծիծաղողի դեմքն են պարզում։ Աբովյանն անզուգական երգիծաբան, հումորիստ է։ Դժբախտաբար տեղը չէ խոսելու Աբովյանի լեզվի և ոճի մասին՝ իբրև այդպիսին։ Բոլոր իր գրվածքներում, եթե մի կողմ թողնենք բարբառի քերականական կողմը՝ ապա իբրև խոսքի կառուցում՝ Աբովյանի լեզուն ոճական մաքուր կառուցիկ է, ճկուն, կենդանի, պատկերավոր, խարակտերիկ։ Այս պարադոքսային թվացող հանգամանքը ավելի կպարզվի՝ եթե համեմատենք «Վերքի» և «Ֆեոդորայի», «Պատմություն Տիգրանի»-ի լեզուները։ Ճիշտ է՝ վերջինները փոխադրություններ են, բայց շարահյուսական ոճական տեսակետով նույն Աբովյանի լեզվական կուլտուրան է գործում։

Վերջացնելու համար կրկնենք։ Մենք չենք հարուցել ֆորմալիստական խնդիրներ։ Ցարման ֆորմալիզմ չէ, այլ գրական անհրաժեշտություն և Աբովյանի ժանրերը մենք չկամեցանք մեխանիկորեն առանձնացնել նրանց բովանդակությունից և տենդենցներից։ Ում չէ ում՝ Աբովյանի համար ժանրի հարցը ժողովրդին օգտակար լինելու հարց էր։ Ժանրը նրա համար գործիք էր, ժողովրդական գործիք, ժողովրդի տունը կառուցելու համար։ Աբովյանի բոլոր ձևերում չէ հանդես գալիս ռոմանտիզմը — արևելյան սանտիմենտալիզմը։ Նրա ռոմանտիզմը ու սանտիմենտալիզմը անսկզբունք դժգոհության և հոռետեսի հիասթափության արդյունք չէին։ Դրանք բողոք էին հայկական կլասիցիզմի և նրա կրողների դեմ հանուն առաջադեմ գաղափարների։ Աբովյանը կենսահաստատ փիլիսոփա, օպտիմիստ, լուսավորիչ, մարտնչող զինվոր և իր հիմքում ռեալիստ էր։ Նա վերափոխեց, հեղաշրջեց հայ գրականությունը, լեզուն, դպրոցական սիստեմը։ Նա պատմեց, նկարագրեց իր էպոխան և դառավ հայ մտքի զարթոնքի առաջին «զարթիր» երգողը։

Աբովյանի ժանրերը մեծ ազդեցություն ունեցան հետագա հայ գրականության մեջ։

Պռոշյանը («Սոս և Վարդիթեր»), Աղայանը («Արություն և Մանվել»), Հ. Թումանյանը («Անուշ», պատմվածքներ, քառյակներ, լեգենդներ և այլն) և բազմաթիվ «ժողովրդական» ոճով գրողներ՝ սույնանման իրենց երկերով գալիս են Աբովյանի ժանրերից։ Աբովյան «աշուղը» հետագայում մշակվեց, աճեց, դառավ կուլտուրական գրական ժանրերի վարպետը, տվեց նոր գրականություն։

Ահա լուսապայծառ Աբովյանի մեծ ու անմոռաց երախտիքը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. ՊԱՐՏԻԶՈՒՆԻ

ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

«Ռուսաց քաջ հոգին էր, որ մեզ ազատեց»
(Աբովյան)

Հայ գրականության պատմության մեջ Աբովյանի ռուսական օրիենտացիան ոմանք համարել են նրա աշխարհայացքի ամենաթույլ տեղերից մեկը։ Ավելին՝ Աբովյանին հայտարարել են ցարիզմի նվաճողական քաղաքականության երկրպագու և դրանով իսկ աշխատել արժեզրկել նրա գրական հարուստ ժառանգությունը։

Սա միանգամայն հակապատմական և գռեհիկ սոցիոլոգիական մոտեցում է մեծ լուսավորչի նկատմամբ։ ՍՍՌՄ պատմության լավագույն դասագրքի կոնկուրսի կառավարական հանձնաժողովի որոշման մեջ պարզ ասված է, որ սխալ է հարցը քննել պատմական կոնկրետ պայմաններից անջատ և «18-րդ դարի վերջերին Վրաստանի անցումը Ռուսաստանի հովանավորության տակ» ինչպես և «Ուկրաինայի անցումը Ռուսաստանի իշխանության տակ» համարել բացարձակ չարիք. «Հեղինակները (դասագրքի— Վ. Պ.) չեն տեսնում,— ասված է այդ որոշման մեջ,— որ Վրաստանի առջև այն ժամանակ կանգնած էր երկընտրանք— կամ կլանված լինել շահական Պարսկաստանի և սուլթանական Թյուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի հովանավորության տակ, այնպես, ինչպես Ուկրաինայի առջև այն ժամանակ կանգնած էր երկընտրանք— կամ կլանված լինել պանական Լեհաստանի և սուլթանական Թյուրքիայի կողմից, կամ թե անցնել Ռուսաստանի իշխանության տակ։ Նրանք չեն տեսնում, որ երկրորդ հեռանկարը, այնուամենայնիվ, փոքրագույն չարիքն էր»։[1]

[1] «Խորհրդային Հայաստան», 24 օգոստոսի, 1937 թ.։

440—4

Այս ամբողջությամբ վերաբերում է նաև Հայաստանին, որ մինչև 19-րդ դարի քսանական թվականները գտնվում էր խանական Պարսկաստանի և «ֆեոդալիզմի ամենացածր և բարբարոսական աստիճանի վրա գտնվող» (Մարքս) սուլթանական Թյուրքիայի իշխանությունների տակ։ Նույնպիսի երկընտրանք դրված էր նաև Հայաստանի առաջ՝ կամ կուլ գնալ պարսկական և թյուրքական իշխանություններին՝ կամ անցնել Ռուսաստանի հովանավորության տակ։

Այդ թվականներին, մանավանդ, անասելի ծանր էր հայ ժողովրդի վիճակը։ Դաժան ու վայրենի նվաճողները ավերում, հրո ճարակ էին դարձնում հայկական քաղաքներն ու շեները, բնաջնջում. աշխատավոր ժողովրդին, ոչնչացնում նրա կուլտուրան։ Արևելահայաստանում իշխում էր պարսկական վայրագ ռեժիմն ու կամայականությունը։ Սարդարի կամքը, նրա քմահաճույքն օրենք էր. «Հայաստան աշխարքը շատ վախտ էր նեղության, ավերման տակ ընկել, ամա էս ամենիցը անց կացավ,— գրում է Աբովյանը,— սար ու ձոր դառել էր գողի, ավազակի բնակարան։ Ամեն կողմից պարսիկք է՛նպես ոտը բարձրացրին հանկարծ, որ էլ դեմ կենալու ճար չկար»։[1]

Հայ ժողովուրդը դրված էր իրավազուրկ ստրուկի վիճակում. «Ո՛չ տունն էր իրանը, ո՛չ մալը, ո՛չ ապրանքը, ո՛չ ջանը, ո՛չ օղլուշաղը»։ «Քար չկա մեր երկրում, քոլ չկա, որ հայի արնովը ներկած չըլի... Սրանց ամեն մեկի սրտումը հազար թուր կա ցցված»։[2] Աբովյանը սոսկումով ու զզվանքով է հիշում ու նկարագրում պարսկական բռնակալության սիմվոլ, հայ և ադրբեջանական աշխատավոր ժողովրդի արյունով շաղախված «հազար գլխանի դև» Երևանի բերդը։ «Դժոխք», այսպես է արտահայտվում Աբովյանը Պարսկահայաստանի մասին։ Նա նկատել է ու «Վերք Հայաստանի» վեպում ակնարկում է գերիներ վաճառելու, ինչպես և արևելյան բարբարոսության ամենազզվելի մի ձևի՝ աղջկա ժողովի և մանկաժողովի երևույթների մնացորդների գոյությունը Հայաստանում. «աղջիկ սանս, տղա, հարսը, երեխա ծծկեր... Ղարսա դեղերիցը եսիր էին բերել» տանում էին «յա սարդարին փեշքաշ անեն, յա Ախըլցխա ծախեն»[3],— գրում է Աբովյանը և ապա ոչ միայն պատմում, այլև ցուցադրում պարսկական բռնությունների մի քանի ցնցող պատկերներ, ցանկանալով մոտավոր պատկերացում տալ

[1] Աբովյան, Երկերի ժողովածու, 1939—40 թ. թ. հատոր 1-ին, էջ 143։
[2] Նույն տեղ, էջ 107։
[3] Նույն տեղ, էջ 198։

այն ժամանակվա մեր «աշխարքի հալի» մասին: «Վերքում» Հասան Խանը մի քստմնելի հրաման է արձակում, որից երևում է նրա պատժական սիստեմի ողջ վայրագությունն ու դաժանությունը.

«Փշրեցե՛ք, ջարդեցե՛ք, ոտն ու ձեռ կտրեցե՛ք:
Առաջ փորն, հետո գլուխն էրեցե՛ք, շամփրեցե՛ք:
Մատները հաղըհան, ձեռները կաշըհան
Արե՛ք, մեջքն կրակին դեմ արե՛ք, խանձեցե՛ք:
Կտրած ձեռն, ոտն ու մատն եղունքը դաղեցե՛ք:
Ով շուտով սպանի, իր գլուխը կթռչի:
Ոսոլով ու յավաշ կամ կաշին հանեցե՛ք,
Կամ գլուխը քերթեցե՛ք, կամ աչքերն փորեցե՛ք:
Թո՛ղ՝ ոտներն էրվելիս՝ աչքը տեսնի, սիրտն էրվի.
Թո՛ղ ձեռներն կտրելիս՝ բալքի թե ահ ընկնի
Սիրտները ու դարձ դան, մեր հավատն ընդունին:
Խաչը թողան, ղուրանին գլուխ տան, մերն ըլին»:
Հասան-խանն անիրավ էս հրամանն տալով՝
Կրակին էր տալիս սուրբ մանկանցն՝ տանջելով»:[1]

«Քանդվի էսպես տերությունը,— գրում է մինչև իր զգայուն հոգու խորքը հուզված Աբովյանը:

Բնական է, որ Հայաստանը միայն սեփական ուժերով չէր կարող ազատվել բռնակալի լծից, իսկ մնալ այդ լծի տակ կնշանակեր ժողովուրդը ենթարկել լիակատար ֆիզիկական բնաջնջման վտանգին: Ուստի դեռ շատ վաղուց արծարծվել էր մի հզոր պետության իշխանության տակ անցնելու հարցը: Իբրև այդպիսի պետություն, դեռ 18-րդ դարի սկզբից, հայրենիքի փրկության մասին մտածող առաջավոր մարդիկ, նկատի էին ունեցել Ռուսաստանը: Այդ հարցը նոր թափով վերարծարծվեց, մանավանդ, երբ Վրաստանը միակցվեց Ռուսաստանին:

«Վերք Հայաստանի»-ում Աբովյանը պատմում է, որ Լազգի, Չաչան, Չերքեզ, Ղազախ, Բորչալու, Շամշադին, բոլոր Կասպից գավառները՝ «թե էին առել, որ Թիֆլիսն ու ռսի իշխանությունը տեսան»:[2]

«Տե՛ր աստված՝ դու մեր ռուս թագավորի սիրտը ռահմ քցես, որ գա, մեզ ազատի՛, ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչև նրանց

---

[1] Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 141.

[2] Նույն տեղ, էջ 143:

երեսը տեսնինք»,— ասում է «Վերքում», մի գյուղացի ընդհանուր հավանության մթնոլորտում։ Պատմական փաստաթղթերը ևս վկայում են, որ ժողովուրդը ցանկացել է անցնել Ռուսաստանի հովանավորության տակ։

1805 թվին Երևանի հայ և ադրբեջանական բնակիչները իրենց մի դիմումի մեջ խնդրում են շտապեցնել ռուսական օգնությունը. «Անհամբեր սպասում ենք ձեր վաղընդփույթ օգնության,— գրված է այդ թղթում,— եթե ուշացնեք այն ժամանակ մեզ կսպանեն և կվնասեն... Ամենայն ինչ գրում ենք ձեզ և թողնում ձեր կամքին, եթե մեզ պետք լինի թղթի վրա նկարագրել թե ինչ նեղություններ ենք կրում, այն ժամանակ ոչ թուղթ և ոչ մելան կբավականանա»։[1] Պատմական խորաթափանցությամբ Աբովյանը դեռ 19-րդ դարի առաջին կեսին դարձավ հայ ժողովրդի ռուսասիրության, ռուսական օրիենտացիայի ջերմ պաշտպանը, հայ ժողովրդի նվիրական ցանկությունների ու տենչերի հարազատ արտահայտիչը։

Աբովյանը եղբայրական վրաց և հայ ժողովուրդների փրկությունը ռուս հզոր ժողովրդին միանալու, Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու մեջ էր տեսնում։ Իր այդ համոզումը Աբովյանը տվել է հետևյալ գեղեցիկ, միաժամանակ սիմվոլիկ, պատկերով «մեկ ահագին չորս ջաղացի ջուր, դուս ա պրծնում, գնում Երևանու դաշտը՝ նրա սև ջրի դառը արտասունքը իր հետ խառնի... գնա... ու արտասունքը Երասխի հետ՝ Զանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն... գնան Քուռն էլ մեջ անեն, իրանց արտասունքը նրանց հետ խառնեն ու տանեն, Կասպից ծովի սիրտն ածեն, նրա ալի ջրումը կորչեն, Պարսից նավերը ջախջախուրթ անեն, ռուսաց նավերը իրանց քամակի վրա տանեն ու բերեն, որ ճամփին չհուսահատվի, չբեզարի ու էն իր բարի սար մեր աշխարհքը չկտրի, որ բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ էդ՝ իր առաջին փառքին հասնի»։[2]

«Մատծմունք ի տեսիլ հայրենեաց» ինչպես և մի քանի այլ բանաստեղծություններում Աբովյանը դրսևորելով իր խորը ատելությունը պարսկական բռնակալության՝ «հարամի խորշակի» նկատմամբ, սիրով է խոսում հայ ժողովրդին կարկառած ռուս ժողովրդի «հզոր բազկի» մասին.

1 Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր, 1-ին էջ 43։

2 Նույն տեղ, էջ 134—135։

«Այս հզոր բազուկ՝ որ զմեզ տածէ,
Այս հողմ զուարթարար 'ի հիւսիսեան ծոցոյ,
Գրկեսցէ՝ ամուր, հարցէ՛, մեղմեսցէ՛
Զա՛յն չերմ, հրաբորբոք խորշակ հարաւոյ:

Սրբոյն Ռուսիոյ զաւակք քաջաջան,
Կրկին կանգնեսցե՛ն զմեր քակ, աւերակ,
Արծւոյն հիւսիսոյ ընդ թեւօք տիրական
Կրկին զօրասցուք որդիքս հարազա՛տք»:[1]

Փրկության հույսերը կապելով Ռուսաստանի հետ, հայ ժողովուրդը չի խնայել իր ուժերն ու հնարավորությունները նրան օգնելու հարցում: «Վերքում» Աբովյանը պատմում է, որ դեռ Ցիցիանովի ժամանակ հայերն էին ռուսական զորքին «հաց տվողը, ախ քոմակը»: Ժողովուրդը զենքը ձեռքին էլ օգնել է ռուսներին, դրանով իսկ ավելի բորբոքելով պարսիկների վայրագությունը: Ղազախի աղալարներին գրած թղթում պարսից գահաժառանգ և զորապետ Աբբաս Միրզան ասում է, որ «հայերը հավատարիմ են Ռուսիային»:[2]

1826 թ. հուլիսին, երբ այդ նույն Աբբաս Միրզան 60 հազարանոց բանակով հարձակվում է Ղարաբաղի վրա, և ծանր դրություն ստեղծում ռուսական փոքրաթիվ զորքերի համար, հայ ժողովուրդը, բարոյական, նյութական օգնությունից զատ, զենքով է դուրս գալիս ընդդեմ պարսկական ներխուժման: Նկարագրելով Խլղարաքիլիսայում տեղի ունեցած կատաղի ճակատամարտերը (Հասան խանը հարձակվել էր Շորագյալի և Փամբակի վրա) Աբովյանը ցույց է տալիս, որ այստեղ էլ ժողովուրդը հերոսաբար, մինչև վերջին շունչը կռվել է պարսկական զորքի դեմ, օգնել ռուսներին:

«Հարյուր անգամ պարսից սևագունդ զորքը զոռ արին, երիշ քաշեցին, ամեն անգամ էլ հարյուրով կոտորվեցան. իրանք իրանց լաշերի վրովը էլի եդ փախան, շունչ առան՝ էլի կրկի՜ն եկան, էլ կրկին մեկ բուռը խալխի թվանքի համն առան, էլի ամոթով եդ դարձան: Ո՛չ Նաղի խանն էր կարում իր հունարը ցույց տալ, ո՛չ Օրյազ աղեն, ո՛չ Սվանղուլի-խանը, ղազախ, քուրդ, սարվազ՝ ի՜նչ տղամարդություն ունեին՝ թափեցին՝ ո՛չ նիզամով կարացին, ո՛չ ճրշով մեկ քանի հողագործի առաջն առնեն: Որտեղ մոտանում էին՝

[1] Աբովյանի արխիվ, գործ № 105:
[2] Акты, том II, стр. 565. Նաև՝ «Փորձ», 1877—78, № 2, էջ 396:

տան դռներիցը, սելի արանքներիցը թվանքները էնպես էին ճռռում, որ շատ պարսիկ իր ընկերին էր ոտնատակ տալիս»:[1]

Երբ ռուսական բանակները հարձակման են անցնում, նրանց օգնելու համար սկսում են կազմակերպվել հայկական կամավորական խմբեր: 1827 թ. մայիսի 15-ին «հայոց կամավոր գնդի զինվորության երդվեցնելու, դրոշակի օրհնության» և ռազմաճակատ ուղարկելու օրը հայրենասիրական ջերմ ճառ է ասում ժամանակի նշանավոր մանկավարժ և բանաստեղծ, Աբովյանի ուսուցիչ Հ. Ալամդարյանը:

Խոսելով հայ ժողովրդի ռուս զորքին ցույց տված օգնության մասին, Աբովյանը գրում է. «ինչ որ պարսից կռվի ժամանակ հայք արին... թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան: Հալբաթ որ մեկ օր մեկ արդար, անաչառ մարդ Վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակ կերևի թե հայք ի՜նչ արին, ի՜նչ հավատարմություն են ցույց տվել տերությանը, ի՜նչ արին են վեր ածել»:[2] Ռուս-պարսկական կռվի մասնակից ռուս սպաները ևս պատմում են, որ հայերը քաջաբար էին կռվում:

«Ի արիտուր» հայ ժողովրդի օգնության, Նիկոլայ առաջինը հրովարտակ է գրում Ներսես Աշտարակեցուն, շնորհակալություն հայտնելով հայ ժողովրդին՝ ռուս զորքին ցույց տված նրա օգնության համար:

Աշտարակեցին այդ հրովարտակը բազմացնել է տալիս, «Հուշակ ողորմութեան ինքնակալի» վերնագրով և տարածում ժողովրդի մեջ: Արևելահայաստանի միակցումը Ռուսաստանին կատարվեց՝ 1827 թվին, երբ ռուսական զորքը մտավ Երևան:

Ժողովրդի համար դա աներևակայելի մի տոն է եղել: «Թուրք ու հայ հենց իմացան թե աստված վեր էկավ իրանց համար»,— գրում է Աբովյանը, «բախտավոր հրճվանքով խանդավառված» (իր բառերն են— Վ. Պ.) և նկարագրում «հրեշտակ փրկիչ ռուս ժողովրդի» զենքով կործանվող հայակուլ, «հազար գլխանի դև» Երևանի բերդը. «Ամսի 25-ն էր (1827 թ. սեպտեմբերի 25-ը— Վ. Պ.) որ Երևանու բերդը ծխումը կորավ: Հինգ օր հինգ գիշեր սար ու ձոր դղրդում, դմբդմբում էր: Հենց գիտես Սոդոմ Գոմորի քուքուրթն ու կրակը էս օր ա վեր գալիս: Երևանու բերդը ձեթը հատած պատրուքի պես թե մեկ ճրճթում էլ էր մեկ սհաթ քթփի, էլ եդ հանգչում, խավարում էր, էնքան թոփի գյուլլա էր գլխին ու

[1] Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 119.

[2] Նույն տեղ, էջ 143:

սրտին դիպել, հոգին բերանը հասցրել... Սարդարը, Շահզադեն վաղուց էին իրանց սև օրը լաց ըլելով Երևանու երկրիցը ձեռ քաշել, Իրան փախել»։[1] Ապա քիչ հետո Աբովյանը շարունակում է բերդի առման նկարագիրը. «Սալդաթի տուտը հենց բերդը մտավ թե չէ՛, հազար տեղից, հազար փանջարից լացն ու արտասունքը էլ չէին թողնում, որ մարդի բերան բաց ըլի։ Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռները, է՛ն աչքերը, որ քարացել, սառել երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ասում էին, որ դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար... Շատը (ժողովրդից— Վ. Պ.) ընկնում էին սալդաթների ճտովն ու էնպես նվաղած, հոգին քաշված մնում։ Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի հայք իրանց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք քցել, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել»։[2]

Երախտագետ Աբովյանը շնորհակալության առաջին խոսքն ուղղելով ռուս մեծ ժողովրդին, գովում է նրա «քաջությունը, մեծահոգությունը, բարեսրտությունը և մարդասիրությունը»։ «Ուրիշ թշնամու առաջ իրանց արինն էին տալիս, եդո իրանց քաղաքն ու օղլուշաղը, ռուսաց ընդհակառակն բանալիքն էին ընծայում, եդո իրանց տունն ու ընտանիքը... Ռուսաց մարդասիրության շնորհքը ապառաժն էլ կակղացրին»։[3]

Հ. Թումանյանը բերում է ռուս զորքի Երևան մտնելու ակտի ականատեսներից մեկի՝ Ն. Ն. Լաչինովի վկայությունը հայի և ռուսի խիստ ջերմ ու սրտաշարժ հանդիպման մասին։ Լաչինովը «նկարագրում է,— գրում է Թումանյանը,— տաճկական, պարսկական, քրդական գազանությունները, պատմում է, թե ինչպես էին նրանց առաջ սարսափահար փախչում հայերը գեղահան ու տեղահան եղած։

Պատմում է, թե ինչպես էին նրանք վազում դեպի ռուսական զորքերը, ծեր ու մանուկ, մարդ ու կին, աղաղակելով русь! русь! здрасти! здрасти! Եվ էդ մի բառով էին արտահայտում ամեն բան, և՛ սարսափ, և՛ աղաչանք, և՛ սեր, և՛ խնդիր, որովհետև լեզու չգիտեին։ Իսկ մյուս կողմից. не бойтесь! не бойтесъ! ձեն էին տալիս սարսափահար գյուղացիներին թշնամու դեմ վազող զինվորներն ու արագացնում էին իրենց վազքը... Նա, Լաչինովը, պատմում է, թե ինչպես սրտառուչ խանդավառությամբ էր դիմա-

[1] Աբովյան. Երկերի ժողովածու, հ. 1-ին, էջ 207։
[2] Նույն տեղ. էջ 208։
[3] Նույն տեղ, էջ 205։

վարում իրենց՝ հայ կեղեքված ու տանջված ժողովուրդն ամեն տեղ, ինչպես էր ողբում, լալիս ուրախությունից, թե նույնիսկ էն երեխեն էլ որ նոր էր սկսել թոթովել, իրենց տեսնելիս ինչպես էր կանչում „здраствуй! здраствуй!: Իսկ մյուս կողմից ռուս օֆիցերներն էին գանգատվում, թե հայերին օգնության գալիս անկարելի էր կարգ պահպանել զորքի մեջ, զինվորական շարքերում, որովհետև ամեն մի զինվոր առաջ է նետվում ավելի շուտ օգնության հասնելու համար և խանգարում են կարգը: Անկարելի է լինում կարգ պահպանել: Էսպես. էն լացախառն ու ողբախառն „здравствуй“-ներով ողջունում էր բազմատանջ հայ ժողովուրդը ռուսական ազատարար բանակին, հենց էնպես ողբերով ու արտասուքով էլ արձանագրվեց և հավերժացավ «Վերք Հայաստանի»-ի մեջ ինչպես էն «ի խորոց սրտի» խոսքերից մինը, որ երբևիցե արտասանել է հայ ժողովուրդը աշխարհքի առաջ, և իր մշտական տառապանքի մեջ էլ միայն այն ժամանակ է մի իրական օգնություն տեսել, երբ հնչել է եղբայրական հուժկու „Не бойтесь-ը“):[1]

Իբրև պարսից բռնակալության դեմ հայ ժողովրդի անհուն ատելության և Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու ջերմ ցանկության արտահայտիչ, Աբովյանի «Վերք Հայաստանի» պատմական վեպում, հանդես է գալիս Աղասին: Նա սպանում է Սարդարի ֆառաշներին, շուրջը հավաքում հայ քաջ երիտասարդներին, իր խմբով շարունակելով պարտիզանական հանդուգն ու անհավասար կռիվներ մղել Հասան խանի «ղոնշունի» և հայկական գյուղերը թալանող ու ավերող քրդերի դեմ, վերջը միանում է ռուսական զորքին, դառնում «ռսի ապրլատով» «աֆիցեր» և ռուսական զորքի հետ միասին մտնում Երևան: Աղասին դառնում է ժողովրդի սիրելին, որովհետև կռվում է ատելի ղզլբաշի դեմ և «գլուխը եդ է դրել, որ ռսին ղուրբան անի»: «Ով նրա արածն իմացել էր, ուզում էր ոտները ջուր անի խմի», ասում է Աբովյանը: Աղասու արտակարգ հանդիսավորությամբ կատարվող թաղմանը մասնակցում է հայ ժողովուրդը և ռուս զորքը, այդ ակտի մեջ, սիմվոլիկ ձևով, մարմնավորելով հայ և ռուս ժողովրդի սերն ու բարեկամությունը և քաղաքական դաշինքը:

Աբովյանի ժամանակակից գրող Մ. Թաղիադյանը ևս ողջունել է Արևելահայաստանի Ռուսաստանին միակցվելը և ջերմ աչքալուսանք ուղարկել երևանցիներին. «Աչքներդ լույս,— գրում է

[1] «Հորիզոն», 1912 թ. № 196: Լաչինովի „Исповедь„-ից քաղվածքներ, տես „Кавказский Сборник“, том II.

նա,— մեր քաղցր աշխարքը պարսից դառն չարչարանքից ազատվեց»:

Հայաստանը Ռուսաստանին միակցելու պատմական մեծանշանակ ակտը այնքան է ոգևորել ժողովրդին, որ նա դրա շուրջը երգեր է հյուսել և երգել:

«Հարիր տեսակ խաղ հայերեն, թուրքերեն Երևանու թաղերն ու ձորերը լսում էին ու հինգ տարեկան երեխեն էլ էսօր ուրախ վախտը ձեռը բերնին ա դնում ու ասում,— պատմում է Աբովյանը,— որ ասածիս ամեն մարդ հավատա, էն խաղերից մեկը թող օրինակի խաթեր էստեղ գրվի.

Մաստաթովն Ղարաբաղ առավ, ազատեց,
Կրասովսկին Աբարան ոտնատակ տվեց,
Սաղ Իրանն Պասքևիչն չոքեց, ծունր դրեց.
Ղզլբաշն մուկ դառած՝ գլխին վայ տվեց.
Բեկեն դուրթն Սարդարին ջախըփուրթ արեց,
Ասլանի գլուխն արծվին՝ ռուսն մատաղ արեց,
Անիրա՛վ՝ հայերի արինն մի՛ խմի,
Միտք արա՝ էս բաղին բաղմանչի ունի...»

Կամ՝

«Մենք քամակ քամակի կտանք, վեր կկենանք,
Ռսին մեր աշխարքը, կյանքը ղուրբան կտանք»:[1]

Երևանի Գրական թանգարանում մինչև այժմ էլ պահվում է հայ աշուղ Սեֆի Յուսուֆի ասած երգը Երևանի գրավման մասին, որը գրի է առել Աբովյանը իր կազմած ժողովրդական երգերի տետրակներից մեկում՝ Բուդենշտեդտին ուղարկելու համար:[2]

Աբովյանը հասկանում էր Հայաստանը Ռուսաստանին միակցվելու ակտի կարևոր նշանակությունը: Ռուսաստանը իր տնտեսությամբ, վարչաձևով, կուլտուրայով, գրականությամբ, գիտությամբ անհամեմատ բարձր էր միջնադարյան, ֆեոդալա-խանական Պարսկաստանից:

Հայաստանի Ռուսաստանին միակցվելով կարևորագույն ու նոր էտապ էր սկսվում հայ ժողովրդի պատմության մեջ, ժողո-

---

[1] Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 206:

[2] Աբովյանի արխիվ, գործ № 62:

վուրդը ոչ միայն ազատվում էր կորստից, ֆիզիկական բնաջնջման վտանգից, այլև հնարավորություններ էր ստանում երկրի հետագա զարգացման համար։

* * *

Սակայն ցարիզմը թեև պարսկական բռնակալության համեմատությամբ «փոքրագույն» չարիք էր, բայց և այնպես չարիք էր։ Հայաստանի Ռուսաստանին միակցվելուց մանավանդ որոշ ժամանակ անց, պարսիկ խաների և փաշաների վայրագություններից ազատված ժողովուրդը ենթարկվեց ցարիզմի հայահալած քաղաքականությանը։ Ոչ ռուս ազգերին և ժողովուրդներին համարելով «ստոր ռասայի» ներկայացուցիչներ, «այլազգիներ», ցարիզմն ու նրա գործակալները «արհամարհանք ու ատելություն էին դաստիարակում նրանց հանդեպ»։[1]

«Երկար տարիներ,— ասում է ընկեր Մոլոտովը,— համարյա մի ամբողջ դար, ընդհուպ մինչև Խորհուրդների իշխանության հաղթանակը, տաղանդավոր հայ ժողովուրդը գտնվում էր ռուսական ցարիզմի կրնկի տակ։ Ծանր հիշողությունները ցարական ինքնակալության ճնշման մասին, այն ճնշման, որին ենթարկվում էր հայ ժողովուրդը ռուսական կալվածատերերի, կապիտալիստների, գեներալների, տերտերների ու չինովնիկների կողմից, դեռ երկար ժամանակ կապրեն Հայաստանի աշխատավորների մեջ»։[2]

Ցարիզմից դժգոհ էր ինչպես ռուս, այնպես և հայ աշխատավոր ժողովուրդը։ Ռուս մեծ և պայծառ գրականության մեջ վաղուց էր սկսվել ցարիզմի ու ցարական բյուրոկրատիայի մերկացումը։ Պուշկինը, Լերմոնտովը, Գոգոլը, Բելինսկին և մյուս առաջադեմ մարդիկ հակացարական սպանիչ ելույթներ էին ունենում և հալածվում ցարիզմի կողմից։

Այս բոլորը չէր կարող չնկատվել Աբովյանի կողմից և նրա դժգոհությունը չառաջացնել ցարիզմի ու կապույտ մունդիրավորների նկատմամբ։

Աբովյանը, որ լավ ծանոթ էր պարսկական և թյուրքական բռնություններին, և ապա ուսումնասիրել էր Հայաստանի վիճակը նաև նրա՝ Ռուսաստանին միակցվելուց հետո, մեզ բավական նյու-

---

1 Համ Կ(բ)Պ Պատմության համառոտ դասընթաց. 1938 թ., էջ 7։

2 «Խորհրդային Հայաստան», 1936 թ. հունվարի 6. Սովետական Հայաստանի աշխատավորության պատվիրակների ընդունելության ժամանակ 1935 թ. դեկտ. 30-ին, Կրեմլում ընկեր Մոլոտովի արտասանած ճառից։

թեր է տալիս 19-րդ դարի երկրորդ քառորդի հայ իրականության մասին: Այդ շրջանի գյուղացիության դասակարգային շերտավորման պրոցեսի ուժեղացման հետ միասին, սկսվում է ձևավորվել գյուղական սպառաքույծների մի շերտ, որը դաշնակցած ցարական չինովնիկության հետ կեղեքում է գյուղացուն, շահագործում նրա արյուն քրտինքով վաստակածը: Այդ մասին է խոսում Աստախան գյուղի գյուղացիների «լալով ու ողբով» գրած «աղաչանաց թուղթը» առ «ամենաօգոստափառ մեծ միապետն ամենայն ռուսաց»-ին (դիմումը գրել է Աբովյանը, ստորագրել են 30 գյուղացի): Այստեղ գյուղացիները հայտնում են «ամենաողորմած կայսեր», որ գյուղի կառավարիչ Ղազարը «վայրապար նեղում է և տանջում» իրենց, բազմաթիվ կեղծ գործարքներ է կատարում և իրենք պարտավոր են դրանց համար վճարել, նա գյուղացիներին ձրի աշխատեցնում է իրեն համար, մինչև իսկ «ի կանանց այրեաց առնու հարկս» և երբ գյուղացիները ընդդիմանում են այդ բռնություններին, նա «բերէ Ղազախս ի Մօվրովէն և այնքան գանէ զմեզ, մինչև սպրեչափ ժամանակն անկանիլ ի մահիճս հիվանդութենէ».[1] «ազատեցեք զմեզ»,— աղերսագին խնդրում են թագավորից գյուղացիները, չիմանալով, որ այդ ղազախները (որոնցից հետո Միկիտան Սաքոների և Բալասան աղաների կատարելատիպերը պետք է ստեղծվեին) գործում են ցարիզմի գործակալների հետ միասին, հենց ցարիզմի քաղաքականության հար ու նման: Աբովյանը մերկացրել, երբեմն էլ երգիծաբանության նյութ է դարձրել ցարիզմի ներկայացուցիչների գործունեությունը Կովկասում: Դեռ «Վերքում» նա նկարագրում է, թե ինչպես դրանք դեռ Կովկասյան սարը չտեսած, «գինու ռումբին որ տեսնում են, երեսներին խաչ են հանում, կամ շիրախանումը քնում, կամ թուր ու սերթուկ գրավ դնում, կամ թե չէ ցխում, ձնում վեր ընկնում, երազ տեսնում, դելը տալիս»:[2] Կովկաս եկող թուր ու սերթուկ ունեցող մարդիկ ցարիզմի գործակալներն էին անշուշտ: Այդ քննադատական գիծը զարգանում է «Հազարփեշեն» երգիծաբանական գործում, գրված այն «բարի» մարդկանց մասին, որոնք «մեր խալխին (հայերին և վրացիներին— Վ. Պ.) փուղն են դնում»: Առաջաբանում Աբովյանը բացատրում է այդ երգիծաբանության դրդապատճառը. «Ո՞վ չի գիտի որ տեղից վեր կենողը հենց մեր խալխի վրա ա ոտը բարձրացնում». ծաղր ու ծանակի ենթարկում մեր ազգին, «գրով, լեզ-

[1] Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, գործ № 589:

[2] Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 44. ընդգծումը մերն է, Վ. Պ.:

ճով» խայտառակ անում, «կամենալով մեր խալխի բնությունը էնպես իմաստուն մարդկանց բնության հետ մի քիչ համեմատիլ, էս մեր Հազարփեշեն մեջ բերի»։[1] Ապա սկսում է նկարագրել մի «իմաստուն» մարդու, որը կուլտուրայի մասին լսելիս, զահլան գնում է, թուք ու մուր թափում, թե «էսպես երկրումը շունը չի կենալ» և ափսոսում, որ էգպես լավ հողերը «էսպես հիմար մարդկանց ձանկումն են» և ոչ թե իրենց։ Մի օր էլ, բախտի դժբախտ բերմամբ, «սատանի քամին» նրան գցում է Կովկասի սարի այս կողմը, ուր ասիացիների կողմից լավ հյուրասիրվելուց հետո այդ «իմաստունը» տմարդի կերպով «դուելի» կանչելու, սպանելու, ջարդելու մասին է մտածում, զարմանում, որ դրանք այնքան «մարիֆաթ» չունեն, որ «ջուրն էլ փողով ծախեն, այլ իրենց հացն ամենքի առաջըն են ածում»։ Ի հակադրություն դրա, նա շարադրում է իր իդեալը.

«Փող պտի շինած ու ծոցը դրած.
Լավ հաքած, մաշած ու կառեթ լծած,
Բաղ տալ, բալ գնալ, իր փառքը ցույց տալ.
Մոտովդ անցնելիս երեսդ շուռ տված.
Ինչ ունիս, գլխիդ, ոտիդ խարջ արած.
Լավ տեղ ու լավ շին, լավ նշան ճարած»։[2]

Իսկ և իսկ ցարական չինովնիկի պատկերացում կյանքի մասին։ Նա իր պրակտիկայից եկել է այն համոզման, թե անպատիժ ձևերպով կարելի է կուլտուրացուն թալանել։

«Ասիացի մարդն զակոնն ի՞նչ գիտի,
Որ քեզ հետ խոսա կամ համարձակվի։
Գլխին տո՛ւր, ղրաղին կանգնի՛ր, քեֆ արա՛,
Ջերդ լցրո՛ւ, քո երկիր գնա՛։
Ո՞վ ա հարցնում, կամ գլուխդ կտրում»։[3]

Այս միջոցին էլ նա փորձում է դիմել, հարբած տեղից վեր է թռչում «գիժ կովի նման» և սպառնում «նրանց բոլորին տանի պոլիցեն անի»՝ բայց ընկնում է մեկ «շիրի կարասի», մեկ «նավթի պղնձի» մեջ և շարունակում հայհոյել։ Երբ «ասիացիների» համ-

[1] Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 2-րդ, էջ 391։
[2] Նույն տեղ, էջ 156։
[3] Նույն տեղ, էջ 157։

բերությունը հատնում է, նրան այնպես են խփում, որ «հային օրհնելով, վրացուն գովելով» ընկնում է «օջախի քյաբաքի վրա»— նա իրեն կողմնակից չինովնիկներին է կանչում.

«Ամա մեր խալխի մուշտու հոմարը
Դեռ չէին տեսել, որ իրանց ձեռը
Թոխմախ-գլխներով բալի տակ չքցեն:
Հենց սլդուխները լցրին ուշունցով,
Դուռակ ու շելմա՝ էկան ձեն տալով,
Մեր հայու մուշտին, վրացու քացին
Էնպես թունդ գիպավ նրանց գլխին, փորին,
Որ ամեն մեկը հազար տեղ չոքեց:
Թխկաց, գրխկաց, հազաց ու պառկեց»:[1]

Ծեծված չինովնիկները այժմ դառան պես սկսում են գովել «սուրբ հազարփեշեն»: Որքան ներդաշնակ է հնչում երգիծաբանության վերջը և առաջաբանում հայտնված այն միտքը, թե երբ «աստված կտա՝ մեր ախպերք էլ քիչ-քիչ աչքները բաց կանեն, էն ժամանակը չեն թողալ, որ ամեն հայվարա մարդ իրանց վրա բերան բաց անի»:[2]

Ցարական չինովնիկության քննադատությունը մեր գրականության մեջ այսպիսով, Աբովյանից է սկսվում: Վերջապես Աբովյանի թողած հիշատակարանները, նամակները և այլ կարգի արխիվային նյութերը ևս ապացուցում են, որ Աբովյանը դժգոհ է եղել, հիասթափվել է ցարիզմից:

1836 թվին գրած մի նամակում հայտնելով, որ իր հայրենիք վերադառնալը— ինչ ինչ տհաճությունների պատճառ է դարձել, նա ավելացնում է. «Այսպես է Ռուսաստանում, երբ մարդ աստիճան չունի և օժտված չէ մի առանձին պաշտպանությամբ»:[3] Իսկ չին ունենալ, դառնալ ցարիզմի գործակալ, Աբովյանը չի ուզել բնավ:

Սխալվել է Ալ. Երիցյանը, պնդելով թե Աբովյանը թողնելով կուսակրոնությունը «հետամուտ է եղել աշխարհական փառքերի, այն է՝ աստիճանների և շքանշանների»:[4] Տարաբախտաբար մեր բազմավաստակ աբովյանագետ Ե. Շահազիզը նույնպես այդ հարցում սխալվել է՝ միևնույն հոդվածում նախ գրել է թե Աբովյանը

[1] Աբովյան, Երկերի ժողովածու, 1-ին հատոր, էջ 160:
[2] Նույն տեղ, էջ 391:
[3] «Դիվան Խ. Աբովյանի», I հ., էջ 108:
[4] «Արձագանք» 1894 թ., № 123:

ձիրել է աստիճանավորությամբ»[1] և ապա, ընկնելով բացարձակ հակասության մեջ պնդել թե Աբովյանը ստանձնել է «արքունի ծառայություն, որին ցանկացող եղած չէ»:[2] Ճիշտն այն է, որ նա միայն երկար ժամանակ կարիքի մեջ անցկացնելուց հետո՝ «ստիպեալ ի կարոտութենէ» մտավ պաշտոնի՝ «Թերևս ես սովից մեռնեմ, երբ ես իմ հայրենիքին զոհվելու գեղեցիկ իդեալին հետևեմ և ոչ թե մի այլ ճանապարհով իմ ապրուստս հայթայթեմ: Ես ինքս արդեն այս տխուր փորձառությունն ունեցա... Պետք է որ ես ըստ այնմ պետական ծառայությամբ իմ ապրուստս հոգամ— ո՜րպիսի ապատա ինձ համար»[3]— գրում է դառնացած Աբովյանը: «Ա՜խ, աստիճան և նշան ես երբեք մտքովս չեմ անցկացրել»— գրում է Աբովյանը մի նամակում, և եթե, այնուամենայնիվ, նա ստիպված է եղել խնդրել և 1843 թվին մեծ դժվարությամբ պատվո խորհրդականի[4] աստիճան ստանալ, ապա այդ միայն նրա համար, որ ինչպես ինքն է զգացել «Ռուսաստանում այդ ժամանակներն ով որ աստիճան չի ունեցել, մարդ չի համարվել, այլ կես մարդ»:[5] Աս-

---

[1] Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտությունների և Արվեստի Ինստիտուտի, 1928 թ. № 3, էջ 129:

[2] Նույն տեղ, էջ 162:

[3] Դիվան Խ. Աբովյանի, I հ., էջ 109:

[4] Ի դեպ, մեր բազմավաստակ բանասեր Ե. Շահազիզի կազմած «Դիվան Խ. Աբովյանի» գրքում, Աբովյանին պատվո խորհրդականի աստիճան տալու թվականի մասին տեղ են գտել միմյանց հակասող տեղեկություններ: Ե. Շահազիզը երեք տարբեր բաներ է ասում այդ հարցի մասին: Բերում ենք դրանք ըստ էջերի

էջ՝ 96 «Այդ աստիճանը (պատվո խորհրդականի Վ. Գ.) նրան տրվել է 1843 թվի հունվարի 2-ի հրամանով»:

էջ՝ 119. «1842 թվականի հունվարի 2-ին Կառավարիչ Ծերակույտի հրամանագրով Աբովյանին շնորհվել է պատվո խորհրդականի աստիճան՝ ավագությամբ»:

էջ 146. Աբովյանը «երկու անգամ պարգևատրվել է աստիճաններով առաջին անգամ 1840 թ. փետրվարի 26-ին՝ «Պատվո խորհրդականի» աստիճանով, երկրորդ անգամ 1846 թ. հունիսի 19-ին «կոլլեժսկի ասեսորի» աստիճանով»:

Սրանցից ճիշտ է միայն առաջինը, որն ապացուցվում է Աբովյանի թողած վկայությամբ և Կառավարիչ Սենատի 1843 թ. հունվարի 2-ի № 153 հրամանով:

[5] «Դիվան Խ. Աբովյանի», էջ I հ., 96: Նույն միտքը տեսնում 119 և 120 էջերում: Լուր տալով, թե Պարրոտը Աբովյանի համար աշխատում է աստիճան ձեռք բերել՝ Ստ. Նազարյանը, միանգամայն համազգաց Աբովյանին, գրում է. «Ռուսաստանում այդպես է, անձնական արժանիքը բանի տեղ չի դրվում» (Դիվան Խ. Աբովյանի, էջ 257):

տիճանն Աբովյանին պետք է եղել իր գործունեության և ինքնապաշտպանության համար, այսինքն եղել է միջոց և ոչ երբեք նպատակ. «Մի՞թէ վասն ծառայութեան և աստիճանի տանջեցայ ցայս վայր»[1],— գրում է նա 1845 թվին գրած մի նամակում:

Առնվազն սխալ է հայ գրականության պատմության մեջ հայտնված նաև այն կարծիքը, թե Աբովյանը եղել է ցարիզմի հլու կամակատար. մեծավորի ոտքերի առջև ծունր դնող մի սովորական չինովնիկ, «չափազանց դահասեր» (ցարասեր— Վ. Պ.) հլու հնազանդ տիրող օրենքներին և գոյություն ունեցող կառավարության ձևին»,[2] որի համար էլ, որպես թե ցարական կառավարությունն «ըստ արժանվույն գնահատում էր նրան»:[3] Աբովյանի գրական և մանկավարժական գործունեությունից պարզ երևում է, որ նա հիասթափվել է ցարիզմից և շարունակական կոնֆլիկտի մեջ է եղել ցարական չինովնիկության հետ: Հայտնի է Աբովյանի ընդհարումը „Северная пчела“ լրագրի խմբագիր, իբրև լրտես և Պուշկինի հալածող տխուր հռչակ հանած Ֆադեյ Բուլգարինի հետ, որի մասին Պուշկինը գրել է.

Не то беда что ты поляк
Костюшко лях, Мицкевич лях!
Пожалуй, будь и татарин,
И тут не вижу я стыда,
Будь жид, и это не беда,
Беда что ты Видок фиглярин.

Այդ ընդհարման առիթը եղել է հետևյալը.

1834 թ. նոյեմբերին Աբովյանը իր «բազմերախտ ուսուցիչ» Հարություն վարդապետ Ալամդարյանի «հանկարծահաս մահվան դառն խաբարն է» ստանում: Այդ բոթը «այնպես տրտմեցույց, շփոթեցույց իմ սիրտ, որ ես անհանգիստ գոլով, մեկ բանի էլ չէի կարողանում ձեռք տալ: Ա՜խ նրանով մեր ազգի շատ երիտասարդք

---

[1] «Դիվան Խ. Աբովյանի», I հ., էջ 61:

[2] Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և Արվեստի Ինստիտուտի, 1928 թ. № 3, Ն. Շահազիզ—«Խ. Աբովյան»:

[3] Կ. Կուսիկյան, «Հանճարեղ սիրտ» («Դարուն» III գիրք, էջ 14):

[4] Ալամդարյանի սպանությունը կատարվել է 1834 թվի մայիսի 14-ին Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանքում «Ի հորուածոց գիշերազէն աւազակաց» գրում է Մսուր Մսերյանը Աբովյանին:

կորցրին իրենց բախտը,— սրտի ցավով գրում է Աբովյանը,— նա շատին կարեր լուսավորիչ լինել: Թեև նա իմ աշակերտության ժամանակ ինձ դառն աչքով էր մտիկ տալիս և շատ վերք հասցրել ա, բայց և այնպես մտածելով նորա ջանք, գիտություն, ազգասիրություն, գործակատարություն, սիրտս այրվում էր և փոթոթվում: Վասն որո ո՛չ կարելով ես հեռի տեղից գոնե նրա գերեզմանին իմ շնորհակալություն ցույց տալ ուրիշ կերպիվ, թարգմանեցի իմ բարեկամ տիրացու Մսուրից ստացած գիր գերմաներեն և ջանացի տպել ի կաղեթս, որ. օտարականք ևս իմանան, թե ի՞նչ անբախտություն հասել ա մեր ազգին և ո՞րպիսի արժանավոր անձն կորցրել ենք մենք... Գերմաներենն մեր Դորպատի կաղեթումը դուրս էկավ: Ես ուզում էի, որ ռուսերենն էլ իմաց անիլ: Էս պատճառով գնացի պարոն Բուլգարինի մոտ, որ նրա հետ խոսեմ»:

«Ազգին հասած անբախտությունը», սիրելի ուսուցչի մահը. հպարտ ու ինքնասեր Աբովյանին Բուլգարինի մոտ են տանում, թեև նա մինչև այդ էլ գիտեր Բուլգարինի մասին, որ «նրան տեսած ու ճանաչածին պես, ամենայն մարդի զահլեն գնում ա: Բազարում կամ փողոցում նրան տեսնելիս, ոչ ոք չի կարծիլ, թե նա գիտնական ոմն է, այլ շինական և հարբեցող: Նրա երեսի դրություն և փորի հաստություն այնքան այլանդակ է, որ գրեթե կոպտություն և գինովություն նրա աչքերից թափում ա»: Աբովյանն առաջին անգամ Բուլգարինի տանը «մեկ սահաթ քիմի» ներքևում սպասելով, ականատես է լինում այդտեղ կատարվող որոշ դեպքերի, որից հետո այդ տունը նրա վրա անառականոցի տպավորություն է թողնում. «Էսօր էլ իմ գլխանքս գալիս ա, ինչ ժամանակ մտածում եմ, ինչ որ աստ տեսա: Կարեմ ասիլ թե 7—10 աղջիկ մտին և դուրս եկին էս տեղից: Նրանց հրհռալ, քրքռալ, նրանց լիրբ անամոթ խոսակցություն և վարք միհանգամայն սրի պես կտրում էին իմ ցաված սիրտ: Մեկ ջահել տղա իմ աչքիս առաջին ինչ որ կամենում էր նրանց հետ էն էր անում: Իրար ուս կռծելով, ծիծաղելով, մեկ մեծ աման առաջները քաշած, ով կամենում էր շերեփով հանում և խմում էր կերակուր, շատ անգամ մեկ-մեկին նրանով խփում: Էնպես էլ մեկ մեծ շուշայից իրանց գարեջուրն էին լակում... Եվ սա ինձ բավական ապացույց էր, թե պարոն Բուլգարին ինչ մարդ պետք է ըլի»:[1] Այդ օրը Աբովյանը չի կարո-

[1] Աբովյան, Օրագրեր, 1834—1835 ի 21 նն նոյեմբերի մինչև ի 25 մարտի: Տետր № 14, էջ 195—200:

ղանում տեսնել Բուլգարինին։ Հաջորդ օրը նա նորից ստիպված է լինում տեսակցության համար Բուլգարինի տուն գնալ, ուր նրան նորից երկար սպասեցնում են։ Վերջապես Աբովյանը տեսակցություն է ունենում Բուլգարինի հետ, որ անմիջապես կռվի է փոխվում։ Այդ մասին ևս Աբովյանը բավական մանրամասն կերպով մեզ տեղեկություններ է հաղորդում իր տակավին անտիպ օրագրերում. «12 սհաթին գնամ նորա մոտ,— գրում է Աբովյանը,— ծառայն ստիպե զիս երկար սպասել. երիցս առաքեմ զնա ի ներքըս և նա գայ և պատասխանէ, թէ՝ «Տէր իմ իսկոյն ելանէ». յետին անգամ առաքեմ զնա, ասելով եթէ չունի ժամանակ, ես դարձեայց ի տուն, չե՛մ ես ծառայ նորա, զի անդ սպասեցից, հազիւ մտեալ ծառային ի սենեակն, լսեմ ղաղաղակ կանացի ձայնի, ետ որոյ ելանէ և պարոն Բուլգարին ի քնահանդերձս և դիմէ առ իս սառ իմն դիմօք։ Ես մեղադրեմ զնա վասն այնպես վարելոյ նոցա ընդ իս, ասելով վասն է՞ր նա այնպես երկար էր սպասել. նա մեղադրե զծառայ իւր, այլ ո՛չինչ ասե նմա, առ այս սրտնեղեալ, ասեմ. «Ես յայն սակս միայն մնացի աստ, զի տեսցից Ձեզ, թէ վարումն ձեր էր անքաղաքավարի յոյժ» և կամիմ ելանել այլ նա դիմեալ առ իս, ո՛չ տա թոյլ. «ո՞ւր կամիք, զի՞նչ պատահեցաւ Ձեզ»... Ես տրտմեալ ասեմ. նմա... թէ ես վրեժխնդիր եղեց այսմ. այլ նա ո՛չ կամի, թոյլ տալ կրկնելով յիմարաբար. թէ զի՞նչ պատահեցաւ ինձ. առ այս ասեմ թէ ես ասիացի եմ և թէ ոչ արձակէ զիս, ես ինքնին ցուցից նմա զմարդութիւն իւր. «Հանդերձ ձեր չէ հոգևորականի» ասէ. «Միթէ եկի ցուցանել Ձեզ և կնոջ ձերում զկարգութիւն իմ, զի զայս պահանջեք յինէն, պատասխանեալ ելանեմ»։[1] Աբովյանը այս դեպքը պատմում է Պարրոտին և Բարտելսին, որոնք հորդորում են նրան հեռու մնալ «յայնպիսի ամարդի անձէ», որովհետև չարժէ նրա հետ վիճել «նա այնպէս մարդ է, զի զոր ինքն արար, ուրացցի»։

Պուշկինի սպանիչ էպիգրամին արժանացած ցարական լրտեսը Աբովյանի մասին գրում է համալսարանի ռեկտորին «թէ ես սպառնացեալ իցեմ նմա, կամ սպանանել զնա ի ճանապարհին,— գրում է Աբովյանը,— կամ զկին նորա, կամ այրել զտուն նորա». ռեկտորը լսելով Աբովյանի բացատրությունը ասում է, որ եթե դուք ձեր սպառնալիքները չեք կատարելու «տուք ինձ զխօսս պատուոյ ձերոյ և ես գրեցից նմա, զի միամտեսցի»։[2] Աբովյանը տա-

[1] Աբովյան, Օրագրեր, էջ 201—202։

[2] Նույն տեղ, էջ 202։

լիս է այդ խոսքը և ազատվում իր համար ստեղծված սպառնալի պատմությունից։

Բուլղարինների հալածանքը Աբովյանը մի անգամ չէ, որ ըստիպված է եղել տանել։ Իր ողջ գործունեության ընթացքում Աբովյանը հայազգի խավարամոլների հալածանքների հետ միասին, ստիպված էր նաև կապույտ մունդիրավորների հարվածները կրել։ 1839 թվի փետրվարի 23-ին գրած մի նամակում Աբովյանը ասում է, թե ինքը նվիրված լինելով ժողովրդի դաստիարակության գործին, գրեթե ամենուրեք հանդիպում է արգելքների։ Նրան, մանավանդ, խոր վիշտ է պատճառում, որ անդրկովկասյան դպրոցների վերատեսուչ և իր «միակ նեցուկ» Հեսսեն Մյուլլերը գահի նկատմամբ հանցապարտ է ճանաչված և նրա պաշտոնը պետք է տրվի «հայոց ոխերիմ թշնամի» Դեմենտևին. «Սա (Դեմենտևը— Վ. Պ.) ինձ բավականաչափ վիրավորանքներ է պատճառել, որ, բնականաբար, մեր հարաբերությունների մեջ կարող էին տեղի ունենալ,— գրում է Աբովյանը,— մեր բոլոր աշակերտները նրա ձեռքի տակ պիտի տանջվեն, բայց գլխավորապես՝ հայերը և առանձնապես ես, ինչպես որ բոլոր նշաններից ես նկատում եմ... Սրան արդեն ներկայացրել են այդ տեղի համար, ուրեմն ես կորած եմ։ Ես բնավ չեմ կարող սրա խծբծանքը տանել։ Կարողություն ես չունեմ, աստիճան՝ նույնպես»։[1]

Աբովյանը ստիպված մտածում է— իրեն համար «Պետերբուրգում մի անկյուն գտնել», ուր կարողանա իր օրական «հացը հայթայթել»։ Նույն թվի հոկտեմբերի 9-ին Երևանից գրած նամակում Աբովյանը նորից ստիպված էր խոսել ցարական չինովնիկից իրեն սպառնացող վտանգի մասին. «Իմ նախորդ նամակի մեջ մի քանի դժգոհություններ էի հայտնել Հեսսեն Մյուլլերի հաջորդ մեր վերատեսչի մասին, որ այժմ հեռացված է պաշտոնից։ Այս հանգամանքը այժմ նրա ականջն է հասել, թե ինչպես, չեմ կարող բացատրել։ Նա այժմ սաստիկ դառնացած է իմ դեմ։ Նրան պատմել են, թե ես Ձեզանից խնդրել եմ, որ նրա մասին խոսեք նախարարի հետ։ Խնդրում եմ նամակը բոլորովին անհետք ոչնչացնեք։ Մինչև որ ինձ օգնություն հասնի, այս հեռավորության մեջ շատ չարագուշակ բաներ կարող են պատահել։ Անշուշտ, ես անհիմն չէի գրել։ Վերջերս ինձ հետ շատ լավ էր։ Այժմ թեպետ պաշտոնանկ, սակայն կարող է վնասել»։[2]

---

1 «Դիվան Խ. Աբովյանի», I հ., էջ 113։

2 Նույն տեղ, էջ 117։

Վերջապես հայտնի փաստ է արդեն, որ Երևանի գավառապետ Բլավատսկու մեքենայությունների պատճառով էր, որ փոխարքան հրամայեց երեք օրյա կալանքի ենթարկել Աբովյանին, որպես թե Ներսես Աշտարակեցուն Երևանում դիմավորելու ժամանակ իրեն լավ չպահելու համար։ Վիրավորված Աբովյանը 1840 թվի հուլիսի 18-ին Անդրկովկասի դպրոցների վերատեսչին այդ մասին հետևյալն է գրել. «Ձերդ բարեծննդության տարվույս հունիսի 22-ի նո. 738 առաջադրության հետևանքով ես նորին պայծառափայլության Կովկասի կառավարչապետի կամքով կրեցի երեք օրվա կալանքիս պատիժը, բայց և այնպես ես ինքս ինձ մեղավոր չեմ ճանաչում. ես ցույց չեմ տվել ոչ մի տգեղ վարմունք Ներսես կաթողիկոսի Երևան մուտք գործելու ժամանակ։

Դրա պատճառն այն անախորժ դեպքն է, որ տեղի է ունեցել իմ և տեղիս գավառապետի միջև, մանավանդ անցյալ տարվա հանդիսավոր ակտի ժամանակ»։[1] Երկար ժամանակ մեզ հայտնի չէր այդ «անախորժ դեպքի» մասին որևէ բան։ Վերջերս Վրաստանի Կենտրոնական Պետական արխիվում գտնվեց մի փաստաթուղթ, որ թվագրված է 1846 թ. 13 մայիսի և կոչվում է՝ „Дело канцелярии наместника кавказского по письму эриванского уездного начальника об обиде причиненной ему исправляющим должность смотрителя Эриванского уездного училища, титулярним советником Абовяном при встрече патриарха Нерсеса". Պարզվում է, որ ըստ ցարական նենգ ու բանսարկու չինովնիկի, Աբովյանի «աններելի» հանցանքն այն է, որ նա Ներսեսին դիմավորելու ժամանակ քաղաքացիական հագուստով է եղել և ոչ համազգեստով։ Այդ առթիվ Բլավատսկու արած դիտողությանը հպարտ ու ազնվամիտ Աբովյանը, Բլավատսկու որակումով «հանդուգն» պատասխան է տվել։ Կովկասի փոխարքային այդ մասին Բլավատսկու գրած գրության խիստ տենդենցիոզ տոնը կասկած չի թողնում, որ դա ոչ թե պատահական միջադեպ է, այլ նախամտածված հալածանք Աբովյանի նկատմամբ։ Հիշեցնելով նաև այն հանգամանքը, որ ինքը հանդիսանում է դպրոցի պատվավոր վերատեսուչը, իսկ Աբովյանը նրա ստորադրյալը, Բլավատսկին մատնանշում է Աբովյանին Երևանից հեռացնելու անհրաժեշտության վրա. «այդ աստիճանավորի այդ ծայրահեղ արարքը,— գրում է Բլավատսկին,— մյուսների համար՝ ծառայության մեջ

[1] «Դիվան Խ. Աբովյանի», I հ., էջ 175։

ավագներին չհարգելու վատ օրինակ կարող է ծառայել, դրա համար էլ նա չպետք է մնա Երևանում»։[1]

Աբովյանի մանկավարժական գործունեությունը ևս խափանվում էր հենց ցարիզմի, ցարական չինովնիկների կողմից։

1847 թ. ապրիլի 25-ին Երևանի գավառի դատավոր Օրլովսկուն գրած թղթում Աբովյանը նկատում է, որ իր ղեկավարած դպրոցում ուսման անբարեհաջող ընթացքի «գլխավոր» պատճառներից մեկն էլ «տեղական իշխանության աջակցության և ուշադրության պակասությունն է»։ Իբրև տեղական իշխանության «անբավարար» ուշադրության անհամար օրինակներից մեկը, նշենք 1846 թ. գավառական դպրոցի վերանորոգման համար թափած Աբովյանի եռանդուն ջանքերը, որոնք կառավարության առաջ Աբովյանին ներկայացրին աննպաստ կողմից։ Կովկասյան դպրոցների վարչության պետ գեներալ-մայոր Անդրեյ Տրամմ 2-րդը այդ առթիվ Աբովյանին գրում է. «Ձերդ բարեծննդությունը, որոշ նկատառումներով, մոռանալով Ձեզ հանձնված ուսումնարանի և պետության շահը, իշխանության առաջ Ձեզ ներկայացրիք խիստ աննպաստ կողմից, համոզելով նրան, որ դուք չունեք հաստիքավոր վերատեսչի Ձեր պաշտոնին համապատասխան հատկություններ»։ Ապա Տրամմի սպառնալիքն ավելի կոնկրետ է դառնում՝ թե Աբովյանի բռնած ընթացքը կարող է նրան զրկել նաև պաշտոնից։ Գումարենք այդ բոլորին այն խիստ վախը, որ տարիներ շարունակ զգացել է Աբովյանը ցարիզմից և շատ անգամ մտածել այդ «դառըն աշխարհից» գլուխը մահու տալու գնով ազատվել, պարզ կըդառնա հարցի էությունը։

«Թուրքի աղջիկը» պատմվածքում Աբովյանն այդ մասին գրում է. «Որ լսում էի՝ թե մեկ մարդի պատիժ տվին, յա բանդը քցեցին, որ ասում էին՝ թե Ռուսաստանիցը մեծ մարդ ա էկել, որ մեր երկրի ահվալն քննի իմանա, որ կուսակալիցը յա նախարարիցը (մինիստրիցը) մեկ թուղթ էր գալիս, որ կառավարությունիցը (դիրեկցիցը) ստորոժը գիրքը կռնատակին աչքիս չէ՛ր երևում, էնպես էի սարսափում, կարծում, թե էս ա, իմ վերջին օրը հասել, մոտացել ա, իմ արած չարությունը լիս ընկել, Պետերբուրգը, Մոսկով, Թիֆլիզ ինձանից գանգատով լցվել են, իմ բարեկամքը ինձանից ձեռք վերցրել, իմ թշնամիքը ինձ մատնել, ինձ պետք է՞ տանեն սաղ սաղ թաղեն, յա կախ տան»։[2] Մի՞թե ցարիզմի քաղա-

---

[1] „Коммунист", от 31 марта, 1948 г.

[2] Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 245։

քականության երկրպագուլին (ինչպես երբեմն պնդել են Աբովյանի մասին) ծանոթ կլինեին հոգեկան այս տվայտանքները։ Որ մեր մեծ լուսավորիչն ու հայրենասերը իր հայրենիքում, ամբողջ կյանքի ընթացքում ցարական «ստորոժից» իսկ սարսափել է, երևում է նաև նրա անհայտացումից քիչ առաջ, 1847 թվի հոկտեմբերի 19-ին, իր աշակերտ Գևորգ Գեղամյանին գրած նամակից։ Այս նամակում սոսկահար Աբովյանը գրում է. «Կարծում էի ամեն սհաթ թե Սիբիրն է իմ վերջը։ Սիբիրը մարդ աչքի առաջին ունենալիս՝ էլ սե՞ր կգա մտքիցը, եա սիրելի, եա որդի՞»։ Ապա Աբովյանը զգուշացնում է իր սանին. «Համբերությամբ և ծածուկ կարդա ու կամ ճղիր, կամ Շաֆու ձեռովն էլ եդ ղրկիր, որ ուրիշի ձեռ չի ընկնի»։[1]

* * *

Եթե Աբովյանը վախենում էր ցարիզմից և կոնֆլիկտի մեջ մտնում Բուլգարինների հետ, ապա միանգամայն այլ էր նրա վերաբերմունքը ռուս մեծ ժողովրդի ու նրա հարուստ կուլտուրայի նկատմամբ։

Աբովյանը զգացել է երկու Ռուսաստան (Հայաստանը Ռուսաստանին միակցվելուց հետո, մանավանդ կյանքի վերջին շրջանում)։ Նա հիասթափվել ու զզվել է ցարիզմից և, ընդհակառակը, առանձին սիրով կապվել ռուս ժողովրդի հետ, որ նրան տվել է այնքան սիրելի Լոմոնոսովներ և Կռիլովներ։ Աբովյանը Հայաստանի համար միակ ելքը, հայ ժողովրդի բախտը ռուս ժողովրդի հետ կապելու մեջ էր տեսնում՝ նշելով երկու ժողովուրդների միջև մշտական անխզելի կապի և սիրո անհրաժեշտությունը։ «Վերք»-ի հավելված «Զանգի»-ի ձեռագրում՝ անձնավորելով Զանգին, Արաքսը և Վոլգան, Աբովյանը գրում է. «Բացէ՛ք զճակատ ձեր, ցնծացէ՛ք յամայր, իմ քաղցր Վօլգայ քոյր հոգայ միշտ զձեր ճար։ Ես զի՛մ մտերմութիւն ցուցից նմա համակ, նա զիւր քաղցրութիւն տացէ՛ ձեզ՝ ո՛րդեակք։ Այս կապ անխզուն, այս սէր սըրբազան մնացէ ի մէջ մեր ի կեանս յաւիտեան»։[2]

Միանգամայն իրավացի կերպով Թումանյանը «Վերքը» համարել է հայ ժողովրդի ազգային զգացմունքների հավատամքը՝ «հայ ժողովրդի վերքի մռմուռի հետ միասին մի հզոր ջատագովություն ու օրհներգ ռուս ազգին ու իր ուժին»։[3] *«Եվ «Վերք Հայաստանի»-ի*

---

[1] Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ գործ № 252։

[2] Նույն տեղ, գործ № 4, ընդգծումը մերն է Վ. Գ.։

[3] «Սովետական Գրականություն», 1941 թ. № 12, էջ 70։

մեծ գաղտնիքն էդ է, ոչ թե էն, որ նա գրված է աշխարհաբար»[1],— ավարտում է Թումանյանն իր միտքը:

Հարազատ կերպով վերարտադրելով ժողովրդի վերաբերմունքը, Աբովյանը բացասաբար է արտահայտվել եվրոպական խոշոր պետությունների նվաճողական քաղաքականության մասին: Երկար ժամանակ օգնություն ակնկալելով Արևմուտքի «մարդասեր» պետություններից հայ ժողովուրդը համոզվել էր իր հույսերի ապարդյուն լինելու մեջ: Քարոզելով թե «սեր, խաղաղություն պահեն ամենայն ազգս և զաղինս ի բարօրութեան» Աբովյանը միաժամանակ ցույց էր տալիս «կրթված» եվրոպացիների իսկական դեմքը: Դրանք «գծվում են» «ոսկու թողը» տեսնելիս և չեն ամաչում «նեգր ազգերին (այսինքն սև ազգերին) բռնել, ծախել ինչպես անասունը, որ մարդ լսելիս, միսը հալչում ա վրեն... Մարդի սիրտ կրակ է ընկնում, ինչ ժամանակ լսում ա, թե էս լուսավոր եվրոպացիքը ի՞նչ են բերել էն խեղճ ազգի (նեգրերի— Վ. Պ.) գլխին, որդին հորից խլել, աղջիկը մորից, մորը՝ զավակներից, որ տանին իրանց փողի ծառայը կշտացնեն: Էս էլ քո լուսավոր եվրոպացին»[2]— ծաղրով ու դառնությամբ բացականչում է Աբովյանը՝ արձագանքելով ռուս առաջավոր մտածողների նմանօրինակ ելույթներին:

Մերկացնելով ազատարարի պոզայով հանդես եկող եվրոպացի գաղութարարներին, Աբովյանը հիացմունքով է խոսել «ռուս քաջ սրտի մեծագործության և տղամարդության»,[3] ռուս ժողովրդի ազատասեր ոգու և հերոսական պատմության մասին: Տակավին անտիպ «Ալեքսանդր կայսրը Փարիզում և Նապոլեոնի անկումը»[4] հոդվածում Աբովյանը Նապոլեոնին համարում է «հանդուգն բռնավոր» և մերկացնում Ռուսաստանի դեմ նրա մղած պատերազմի նվաճողական էությունը: «Եվրոպական ազգերի խավարագույն զորքերով» հարձակվելով Ռուսաստանի վրա և «գազանություններ անելով Մոսկվայում» Նապոլեոնը ցույց էր տալիս, որ ձգտում է իրեն ենթարկել ամբողջ աշխարհը: Նա ոչ միայն մտածում էր ստրկացնել ժողովուրդներին,— գրում է Աբովյանը,— այլև արմատախիլ անել

[1] «Սովետական Գրականություն», 1941 թ., № 9—10, էջ 114:

[2] Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 2-րդ, էջ 305—306, ընդգծումը հեղինակինն է:

[3] Նույն տեղ, հատոր 1-ին, էջ 205:

[4] Աբովյանի արխիվ, № 37, մեջբերումներն անում ենք աշխարհաբար թարգմանությունից:

նրանց, որոնք օտարին ծառայելու համար չեն ծնված»։ Նապոլեոնին Աբովյանը անվանում է խաղաղության դաշինքի խախտող, աշխարհի անհաշտ թշնամի, մարդկային օրենքները արհամարհող մի բռնակալ, որ ուզում է «ստրկության շղթաների մեջ առնել, իրեն ենթարկել տիեզերքը և կառավարել այն միապետական սրով»։

Ռուսաստանը նվաճելու, ուրեմն և «կորստյան մատնելու» Նապոլեոնի պլանը Աբովյանը «եղեռնագործություն» է համարել։ Հայրենական պատերազմի դուրս եկած ռուս զորքի ու ժողովրդի հարվածների տակ պարտվում են Նապոլեոնի անպարտելի համարված բանակները «Նապոլեոն մեծի հոգու բոլոր ձիրքերն անհետացան և նրա փառքը թեթևասլաց ամպերի պես հյուսիսային հողմից քշվեց։ Նրա ավագ զորապետը զարմանալով բացականչում է. մի՞թե սա այն մեծ զորավարն է, որից դողում էր Եվրոպան»։

Աբովյանը հպարտությամբ, սքանչացումով է խոսում ռուս հզոր ու ազատաբաղձ ժողովրդի մասին։ Նշելով մի քանի ճակատամարտեր, որտեղ ռուսները իրենց փառքով են պսակել, Աբովյանը գրում է. «ռուսները քանի քանի տեսակ անլսելի և անտեսանելի արիությամբ և քաջությամբ ճակատամարտելով մեծամեծ օրինակ ծառայեցին աշխարհին... որով պանծալի դարձրին իրենց ամբողջ Եվրոպայի կամ, ավելի լավ կլինի ասել, ամբողջ աշխարհի առաջ։ Հետագա սերունդները անհավատալի հիացմունքով կարդացին մեր ժամանակակից տարեգրությունը, որ անհամեմատելի է նախկին ժամանակների հետ»։

Ռուս ժողովրդի մասին նույնպիսի հիացմունքով ու սիրով է խոսում Աբովյանը նաև իր այլ գործերում։ Գովելով «հին ու նախագահ մայրաքաղաք Մոսկովը», որը իբրև «զոհ մատուցեցաւ բոցոյ», Աբովյանը գրում է. «Բովանդակ Ռուսաստան ձգեաց յայսմ վայրի զսուսերն վրեժխնդրութեան։ Ծերք, տղայք և կանայք սպանանեին զթշնամիս»։[1] «Թեոդորա կամ որդիական սեր» դրամայում ևս (1841 թ.) Աբովյանը նշում է, որ «Ռուսք Փրանցուզին ջարդեցին»։[2]

Աբովյանը բարձր է գնահատել ռուս ժողովրդի զորավարների, մասնավորաբար հանճարեղ Մ. Ի. Կուտուզովի դերը՝ «ռուսաց զորքի ընտիր հրամանատար Միքայել Սմոլենացին (Կուտուզովը—

[1] «Նոր տեսական և գործնական քերականություն» (անտիպ), թերթ 249

[2] Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 342։

Վ. Պ.) Հաքի Կամելլոսի նման անհնարին հարվածներ հասցրեց թշնամիների զորախմբին։ Եվ երբեմն իրենց լուսավորությամբ դոռոզացող այն բարբարոսների ոսկրներն ու զենքերը դաշտի փոշու հետ խառնելով ցույց էր տալիս նրանց խայտառակությունն ու անպատիվ լինելը»։[1]

Բարձր ոգևորությամբ խոսելով ռուս ժողովրդի, նրա հերոսական պատմության մասին, Աբովյանը, սակայն, հանդես է բերել ողջախոհ մոտեցում, քննադատել ու մերկացրել է նաև ռուսական իրականության մեջ գոյություն ունեցող խոցերն ու թերությունները։ Մի կողմ թողնելով ցարական չինովնիկության մերկացումը, (որի մասին խոսել ենք արդեն), Աբովյանը նկատել ու բացասաբար է արտահայտվել ճորտատիրության մասին, ճիշտ է, ոչ արմատական դիրքերից, բայց հանուն մարդասիրության պաշտպանելով ճորտերին. «Միթե ճորտը հայվանից վատ է,— գրում է Աբովյանը «Պատմութիւն Տիգրանի» վեպում,— նա էլ էնպես մարդ ա, ինչպես ես։ Ինչ անի ինքը, որ ճորտ ա ծնվել։ Նրա հերը որ ազնիվ (ազնվական— Վ. Պ.) ըլեր ու իմը ճորտ, կարելի է ես ըլեի նրա ռահաթը»։[2]

Կապվելով Ռուսաստանին, հայ ժողովուրդը կապվում էր նաև ռուս ժողովրդի հետ, հաղորդակից էր դառնում ռուս առաջավոր ու հարուստ կուլտուրային, գիտությանը, գրականությանը։ «Կուլտուրայի ռուս վարպետները,— գրում է „Правда"-ն,— հակառակ ցարական կառավարության գաղութացնող քաղաքականության, միշտ բարերար ազդեցություն են գործել Ռուսաստանում բնակվող մյուս ազգությունների կուլտուրայի վրա»։[3]

Անհերքելի է ռուս կուլտուրայի բարերար ազդեցությունը նաև հայ գրականության վրա. Աբովյանն առաջին մեծ դեմքն է հայ նոր գրականության մեջ, որ բարձր է գնահատել ռուս կուլտուրան և կրել է այդ կուլտուրայի բարերար ազդեցությունը։ Սխալ է և տրադիցիոն, երբ հայ գրականության պատմության մեջ Աբովյանին աշխատում են կապել միայն եվրոպական կուլտուրայի հետ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա իր կրթությունն ստացել է նաև Դորպատում։ Սխալ այդ տեսակետը առաջին անգամ արտահայտել է Ստ. Նազարյանը, պնդելով թե Աբովյանը ապրե-

1 Աբովյանի արխիվ, գործ № 37։
2 Աբովյան. Երկերի ժողովածու. հատոր 2-րդ, էջ 278։
3 „Правда", от 7 января, 1937 г.

ջով և կրթվելով Դորպատում այդտեղ «վերստին ծնվել է», գտել իր հոգու համար «նոր իմացական ավազան»:[1]

Աբովյանը,— մեր կարծիքով,— իր հոգևոր առաջին մկրտությունը ստացել է Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցում սովորելիս, որտեղ նա կրել է դպրոցի տեսուչ, ռուսական օրիենտացիայի ջերմ պաշտպան Հ. Ալամդարյանի ազդեցությունը: Առաջին անգամ ռուս գրականության հետ Աբովյանը ծանոթացել է Ալամդարյանի միջոցով: Դորպատում ևս, ինչպես և մինչև իր ողբերգական անհայտացումը, Աբովյանը շարունակել է իրեն կապված զգալ ռուս կյանքին ու կուլտուրային: Իր գրական մանկավարժական բազմարդյուն գործունեության ընթացքում նա լիցք է ստացել ռուսական կուլտուրայից, գերազանցապես այդ կուլտուրայի հետ է կապված նա նաև իր դեմոկրատական լուսավորական հայացքներով: Ջերմորեն սիրելով ռուս ժողովրդին, Աբովյանը, հայ նոր գրականության պատմության մեջ առաջին անգամ, ռուսական կյանքից վերցրած թեմայով դրամա է գրել («Թեոդորա կամ որդիական սեր»), ստեղծելով ռուս մարդկանց գրական կերպարներ: Աբովյանի վրա ուժեղ ազդեցություն է թողել ռուս մեծ ժողովրդի սիրելի քաղաք Պետերբուրգը, վերջինս նա նկարագրել է առանձին սքանչացումով. «... Աստ քաղաքք պայծառաշենք, անդ լերինք և անտառք շրջնաղք, այլուրեք գիւղօրայք և դաշտօրայք զուարճալիք, ամենայն անսովոր, վասն որոյ նորահայելի վասն աչաց և սրտի մերոյ և ի վախճանի Պետերբուրգ այս ահագին քաղաք հրաշակերտ, որ յառաջին անդ հայելն յափշտակե զտեսնողն, որ զամենայն հանդերձս և լեզուս բոլոր աշխարհաց երկրագնդի մերոյ կարելի է տեսանել և լսել, ուր ամենայն փողոց, ամենայն արձան, ամենայն տուն երևին զամբողջ զուղեղս մարդկան վատնեալ առ ի հանճարել զայսքան բիւրատեսակ հրաշագործութիւնս»:[2] Աբովյանը նաև բանաստեղծություն է նվիրել Պետրովկայանին (Պետերբուրգին): Պետերբուրգումն է դարձյալ, որ Աբովյանն իր ընկերոջ հետ առաջին անգամ ռուսական թատրոն է գնացել, որը նրա վրա ուժեղ և անմոռանալի տպավորություն է թողել:

Դորպատում պրոֆեսոր Բլումենի տանը ծանոթանալով ռուս նշանավոր բանաստեղծ Ժուկովսկու հետ, Աբովյանը անջնջելի տպավորություն է ստացել և նկարագրել այդ հանդիպումը իր Դորպատյան օրագրերում: Բերում ենք օրագրի այդ հատվածը

---

1 «Հյուսիսափայլ», 1858 թ., № 2, էջ 145:

2 Աբովյանի արխիվ, գործ № 57:

համառոտած ձևով. «Այսօր հրավիրէ զիս պրոֆեսոր Բլումեն ի սեղան. յառաջին ժամուն գնացեալ առ նա, գտանեմ զնորեկ կանդիտատն Իվանով, զայրն բարեմիտ»: Աբովյանը Իվանովի հետ սկըսում է «զրուցատրել զգրականութենէ ռուսաց... Սեղանն մեր մերձ էր աւարտի յանկարծ անակնկալ բանայ ոք զդուռն տան նորա. այր մի վայելչաղէմ, առոյգանձն, լայնակուրծ, լայնաթիկն, բոցաճակատ, ամոքատեսիլ, քաղցրակն, ի սեաւ սերտուքս մտանէ ի ներքս: Պարոն ելանէ խիկոյն և յասելն նորա ցկին իւր՝ «Ահա պարոն Ժուկովսկին», երակք շարժեցան խնդութենէ տեսանել զայրն անուանի, զնախագլուխն գրականութեան ռուսաց...Նա կարի վայելչութեամբ բարեւէ զմեզ զամենեսին... Յետ սակաւ պատմելոյ զճանապարհորդութեան իւրմէ, զոր նա միանգամայն պարզ, սոսկ բանիւ պատմեր, ցուցանէ պրոֆեսոր Բլումեն զԻվանով և զիս. առ Իվանովն դարձեալ հարցանէ զերկրորդ լինելութեան նորա աստ, զինէն, «Հայկազն որ յԱրարատեան» ասէ պրոֆեսոր Բարտելս, ի յառաջարկելն, նա համեստութեամբ գլուխ տուեալ ինձ. «Եւ ես բերեմ ձեզ ի Մոմբլանէ ողջոյն» ասե. վայելեալ նորա զվայելչութիւն առ համայն Իտալիոյ, հոգի նորա բանաստեղծական և հայրենասիրութեան ո՛չ կամեին ստորացուցանել և զարտօնութիւն կողմանցն հիւսիսոյ, որում թէև բազում հակառակ էին պրոֆեսոր Բարտելս և կին իւր, այլ նա ամենայնի կամէր հաստատել թէ «խրճիթ մի բնակեալ ի մանկութենէ, քաղցր է ումէք, քան զհրաշալի կողմանս Իտալիոյ», ի տարակուսելն նորա ի զրոյցս գերմաներէն, նա գաղղիերէն խօսէր, նա արդէն իսկ առեալ էր զչափ հասակի իւրոյ, այլ տակաւին զուարթ, ի բանս իւր հանդարտ, համեստ, և յամենայնի անպաճոյճ, ի շարժմունս քաղաքավար, ծանրաշարժ, բայց առանց իրիք սիգացման, ժպիտ մի քաղցր առաջնորդէր միշտ պատասխանիս նորա:

Ելանելն մեր ի սեղանոյ, դառնայ առ իս Իվանով. «Ահա նախագլուխ գրականութեան մերոյ»... Ո՞ր արիւն, ո՞ր խնդութիւն եռայր յանձն նորա, ցուցանէր բոլոր շարժմունք նորա, որպիսի՜ ազգասիրութիւն: Նա նկատեալ զպատկերս ի տան պրոֆեսորի, հայի ի նոսա և ժամս երկայնս խօսի ի վերայ ճարտարութեանց, արհեստից և այլն: Ի կամելն նորա ելանել, նովին քաղցրութեամբ բարեւէ զամենեսեան: Պրոֆեսոր Բարտելս և մեք ամենեքեան խնդայաք ի վերայ այսպիսի անակնկալ տեսութեան նորա»:[1]

Այս մեջբերումից պարզվում է նախ՝ որ Աբովյանը Դորպա-

[1] Օրագրեր. «Սեպտ. 3. երկուշաբթի 1833»: Տետր XI, էջ 133—134:

տում ևս հետաքրքրվել է ռուս գրականությամբ, զրույցներ ունեցել այդ գրականության շուրջ և երկրորդ՝ որ նա, ի դեմս Ժուկովսկու, իր հիացմունքն է արտահայտել ռուս մեծ ու հարուստ գրականության նկատմամբ։

Մի այլ առիթով նույնպես Աբովյանը խոսել է Ժուկովսկու մասին, գովատելով նրա «չքնաղահյուս» բանաստեղծությունները։[1]

Հետաքրքրական է, որ հետագայում Ժուկովսկու «տաղերի գրավիչ քաղցրության» մասին է խոսել ռուս մեծ քննադատ Դոբրոլյուբովը։[2]

Վերջին տարիները հայտնի դարձավ, որ Աբովյանը իր ընկեր՝ 1831 թվից Պետերբուրգի Կադետական կորպուսի ուսանող Սողոմոն Ավթանդիլյանցից խնդիր է ունեցել իրեն (Ավթանդիլյանցին) նամակներ գրել Իվան Իվանիչ Պանաևի հասցեով։

Հայաստանի Գրական Թանգարանում են գտնվում Ավթանդիլյանի՝ Աբովյանին գրած հինգ նամակները, որոնցից վերջին երկուսը Պետերբուրգից։ Վերջին նամակը թվագրված է «1833 թվի ապրիլի 5»։ Այդ նամակում Ավթանդիլյանը հայտնում է Աբովյանին, որ կորպուսում վաշտի հրամանատարներին կարգադրված է կարդալ կադետներին գրված նամակները, ուստի „Покорнейше прошу тебя не писать ко мне прямо в Корпусе, а напишите здесь знакомому моему и он отдает непременно мне. Когда будете писать ко мне, то прошу покорнейше писать так: Его Благородію Милоставому Государю Ивану Иваничу Панаеву". (ապա հաջորդում է Պանաևի հասցեն)։[3]

Այս փաստը հետաքրքրական է այն տեսակետից, որ կողմնակի աղբյուր է հանդիսանում Աբովյանի՝ ռուս գրական գործիչների հետ ունեցած կապերը ուսումնասիրելու համար։ Հայտնի է, որ Աբովյանը 1830—1836 թվերին մի քանի անգամ եղել է Պետերբուրգում, անհավանական չէ, որ այնտեղ նա իր ընկեր Ավթանդիլյանի մոտ կամ նրա միջոցով հանդիպած և ծանոթացած լինի Պանաևի հետ։[4] Սակայն այսքանը միայն ենթադրություն։

---

[1] Նոր տեսական և գործն. քերականություն, թերթ 264. (անտիպ)։

[2] Добролюбов, Сочинения, том I, стр. 210.

[3] Աբովյանի արխիվ, գործ № 245։

[4] Մենք կարծում ենք սխալվել է «Աբովյանը և ռուս կուլտուրան» հոդվածի հեղինակ Ա. Ղուրբանյանը, պնդելով, թե «երկու մտերիմ ընկերների (Աբովյանի և Ավթանդիլյանի Վ. Գ.) միջև նամակագրական նոր կապը լինում է երիտասարդ Իվան Պանաևը („Современник" հայտնի ժուռնալի խմբագիրը՝ բանաստեղծ Նեկրասովի հետ միասին»)։ («Խորհրդային գրականություն», 1940 թ. № 3, էջ 167)։ Այս կատեգորիկ պնդումը անհիմն է, որովհետև

Աբովյանը ոչ միայն մոտ է եղել ռուս կուլտուրային, այլև եղել է ռուսաց լեզվի և գրականության առաջին մեծ պրոպագանդիստը հայ իրականության մեջ։ Նրան հրապուրել են ռուս հեղինակները՝ Լոմոնոսովը, Ժուկովսկին, Կարամզինը, Կռիլովը և այլք։ Աբովյանին է պատկանում Կարամզինի «Կղզին Բորնհոլմ»[1] և «Թախսա» բանաստեղծությունների գեղեցիկ թարգմանությունները։ Հայտնի է նաև, որ «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի առակների մի մասը թարգմանություններ կամ փոխադրություններ են Խեմնիցերից, Դմիտրիևից և մանավանդ Կռիլովից։[2]

Վերջինիս նկատմամբ մանավանդ Աբովյանը ջերմ սեր է տածել, նրան համարելով «անմահ առակախոս» և իր աշխատավար-

---

եթե նույնիսկ ընդունենք, որ խոսքը իսկապես „Современник"-ի առաջա խմբագիր Պանաևի մասին է, էլի դա իրավունք չի տա պնդել, թե Ալթանդիլյանի և Աբովյանի նամակագրական կապը եղել է „Современник"-ի խմբագրի միջոցով։ Այդ ժամանակ Պանաևը 21 ամյա սկսնակ գրող էր և միայն 14 տարի հետո դարձավ „Современник"-ի խմբագիր։ Իսկ այդ (1833 թվի) նամակից բացի ուրիշ ոչ մի վավերական չկա, որ ապացուցեր, թե 1833 թվից հետո էլ (մանավանդ 1847 թվից հետո, երբ Պանաևը դարձավ „Современник"-ի խմբագիր) շարունակվել է Աբովյանի և Ալթանդիլյանի նամակագրությունը։

[1] Այս բանաստեղծությունը Կարամզինի գործերում կրում է „Законы осуждают" վերնագիրը։ Գրված է 1792 կամ 93 թվին։ 1794 թ. տպված „Остров Борнгольм" պատմվածքում Կարամզինը պատմում է երիտասարդ սիրահարի տառապանքների մասին (որին հանդիպել է Գերմանիայում ճանապարհորդելիս), որը (սիրահարը) երգում է այս երգը։

[2] «Աբովյանը և ռուս կուլտուրան» հոդվածի հեղինակ ընկ. Ա. Ղուրբանյանը Աբովյանի ռուս հեղինակներից կատարած թարգմանությունների մասին գրում է. «Աբովյանի առանձին թղթերի մեջ պատահում են ռուսական պոեզիայից կատարված թարգմանություններ և արտագրություններ։ Այսպես, օրինակ, Աբովյանի արխիվում մենք գտանք Կոբենինի „На смерть сына" ընդարձակ բանաստեղծության արտագրած, որ հավանորեն դուր է եկել նրան, ինչպես նաև „Прощаюсь ангель мой" խոսքերով սկսվող ոտանավորը գրված իր գերմաներեն գրություններից մեկի հետևը։ Իսկ Վոյեյկովի „Плач русского" ոտանավորի հենց լուսանցքում այդ գրվածքից թարգմանված է Աբովյանի ձեռքով 12 տող և անավարտ թողնված»։ Մեզ թվում է, թե ընկ. Ղուրբանյանը բարի ցանկություն ունենալով հանդերձ շատ է շտապել այդպիսի եզրակացություններ հանելիս նախ, ոչ մի փաստ չկա, որ ապացուցեր թե իսկապես „На смерть сына" և „Плач русского" բանաստեղծությունները Աբովյանն է արտագրել և մանավանդ թե նա ցանկացել է դրանք թարգմանել։ Մեզ թվում է թե այդ երկու թղթերը որևէ անզգուշության պատճառով պատահաբար խառնվել են Աբովյանի թղթերին հետագայում։ Մենք այս կարծիքի վրա պնդում ենք, հիմք ունենալով և այն, որ այդ բանաստեղծությունների ձեռագրերը ոչ մի նմանություն չունեն Աբովյանի ձեռագրերին։

ձից հատուկ գումար հատկացնելով նրա հուշարձանի կառուցման ֆոնդին:

«Նոր տեսական և գործնական քերականության» մեջ Աբովյանը քերականական վարժություններ է տալիս ըստ Դմիտրիևի «Աղավնյակ», Դերժավինի «Ճշմարիտ երջանկություն», Լոմոնոսովի «Տաղերգություն ըստ Յովբայ» բանաստեղծությունների: Թե Աբովյանը որ աստիճան հարազատ է զգացել ռուս գրականությունն իրեն, ցույց է տալիս նաև «Կարեմ սրտիս կսկիծը լեզվով քեզ պատմել» բանաստեղծության «Տաղ ի գույն» „Не шей мне Матушка“ ծանոթությունը: Սրտին մոտ զգալով ռուսական երկի այդ ժամանակ տարածված երգը, Աբովյանը այդ երգի եղանակով բանաստեղծություն է գրել:

«Նոր տեսական և գործնական քերականության» մեջ բազմաթիվ առիթներով խոսելով ռուսական իրականության մասին և օրինակներ բերելով ռուսական կյանքից ու պատմությունից, Աբովյանը հատկապես նշում է Գիտությունների Ակադեմիայի դերը ռուս լեզվի զարգացման գործում. «Ակադեմեայն (ճեմարանը) ռուսաց,— գրում է նա,— հիմնեալ ի 1788 ի 21 հոկտ. սկսավ նոր դար յառաջածել վասն լեզուի և գրականութեան ռուսաց: Ի 1802 ամին ընծայեալ նոր ի լոյս զնոր քերականութիւն առավել ևս պայծառացոյց զլեզուն: Երևելի քերականք այժմեան ժամանակի են՝ պարոն Սոկոլովն, Նիկոլսկի, Բօրն, Գրեչ, Վաստոկով, Ֆատեր»:[1] Հակառակ արևմուտքի առջև խոնարհվելու արատավոր տենդենցի, Աբովյանը հատկապես նշել է ռուսական գիտության առաջնությունը՝ «Լոմոնոսով ստեղծ զքերականութիւն իւր, որում հետևեցան Ռոստէ գերմանացի, Լծլեօցեր»:[2]

Աբովյանը մեծագույն ուշադրություն է դարձրել նաև ռուսաց լեզվի դասավանդման վրա, որը ըստ նրա, լավագույն միջոց է ռուսական լուսավորությունն ու կուլտուրան հայ ժողովրդի մեջ տարածելու համար: Նա իր ղեկավարած դպրոցի նպատակն էր համարում «բնիկների մեջ տարածել օգտավետ և անհրաժեշտ գիտությունը և նամանավանդ ռուս լեզվի գիտությունը, և դրանով հետզհետե տեղիս ազգերին բարձրացնել բարոյապես և մտավորապես»:[3]

Աբովյանը բավական ռուսերեն գիտեր դեռ էջմիածնում, ա-

---

1 «Նոր տեսական և գործնական քերականություն», թերթ 7:

2 Նույն տեղ, թերթ 6:

3 «Դիվան Խ. Աբովյանի», I հ., էջ 153—154:

վելին, միակն էր իբրև ռուսագետ, որի համար և եղավ Պարրոտի Թարգմանը Արարատի գագաթը բարձրանալիս:

Դորպատում եա նա եռանդով շարունակում է ուսումնասիրել ռուսաց լեզուն: 1834 թվի հունիսի 10-ին Ներսես Աշտարակեցուն գրած նամակում Աբովյանը ասում է. «Հոկտեմբեր ամսից մինչև հունվար ես ուզում եմ մնալ Պետերբուրգում կամ Մոսկվայում ռուսերենը հաստատապես սովորելու համար»:[1]

Իր կյանքի հետդորպատյան շրջանում Աբովյանը ռուսաց լեզու էր դասավանդում Թբիլիսիի և Երևանի գավառական դպրոցներում և իր մասնավոր պանսիոնում: Աբովյանը աշակերտների համար ռուսաց լեզուն խիստ անհրաժեշտ է համարում, որովհետև ըստ նրա «ռուս լեզուն պետք է հիմք լինի դպրոցում դասավանդվող բոլոր մյուս առարկաների, և առանց պարզ ու ճիշտ հասկանալու այն, բնականապես առաջ կգա միայն և միայն առարկաների մեքենայական ուսումնասիրություն»:[2]

Սակայն, այդ բոլորի հետ միասին, մեր մեծ լուսավորիչը պայքարել է հայ վերնախավերի՝ «մայրաքաղաքում կրթվածների» այն զզվելի տրադիցիայի դեմ, երբ նրանք իբրև իրենց գիտունության ապացույց աղավաղում էին և հայերեն և ռուսերեն լեզուները, անտեղի կերպով խառնելով հայերեն լեզվին ռուսերեն բառեր. «Ախր որ ասում ես փռուֆուլիվարսա արի, սֆուչնա եմ, օփիժարսա էլա, փռոշենի տվի, սանյարին շատ ունիմ, պլուխս բռուժիրսա էլավ, փեզչեստնի մարդ ա, ռազփոյնիկ ա, յափերնիկ օրմին ես, գնանք քուփաթսա ըլինք, ստիրանիեմնն եմ գալիս, փռոիզրարսա արի, ճամփին ֆսեթքի ութոփնու ա, շատ խլափոթ սլուչիթսա չի ըլում և այլն:

Աչքիս լի՛ս, մի՛ մտածիր թե լավըն ի՞նչ կասի: Իսկ գիտուն, լուսավորյալ մարդը նա է, որ ամեն լեզու քանի կարա, խառնի խոսա: Դու քո լեզուն, որ խառնի խոսաս ի՞նչ վնաս ունի, հենց գիտում ես խելքդ ձեռիցդ կառնեն, թե սովորած իմաստությունդ ջուրը կըթափի»:[3]

Աբովյանն այդ «գիտունների» պրածը սուր ծաղրի է ենթարկում հետևյալ համեմատությամբ. «Խառնի՛ր քո սիրական խաշի

---

1 «Սովետական Գրականություն», 1941 թ. № 11, էջ 97:

2 «Դիվան Խ. Աբովյանի», I հ., էջ 138—139:

3 Աբովյան, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 80. ընդգծումները հեղինակինն են:

հետ՝ ձուկը, շաքար, կանֆետ (շաքարեղեն), չամիչ, չիր, խիշխիլա-լա, տես ի՞նչ համ կունենա»։[1]

Ուրեմն Աբովյանը մայրենի լեզվի զարգացման հետ միասին դնում է ռուսաց լեզվի հիմնավոր ուսումնասիրման հարցը, երբեք, սակայն, չհակադրելով հայերեն և ռուսերեն լեզուները միմյանց և մեկը չառաջադրելով մյուսի հաշվին։ Այդ տեսակետից հետաքրքրական փաստ է Աբովյանի ռապորտը անդրկովկասյան դպրոցների վերատեսուչ Հեսսեն Մյուլլերին, որով նա թույլտվություն է խնդրում իր ղեկավարած դպրոցում առաջին իսկ դասարանից հայերեն և վրացերեն անցնել։

«Ինձ հանձնված դպրոցի աշակերտների ծնողներից շատերը և մինչև իսկ, կարելի է ասել, ամենքը,— գրում է Աբովյանը,— խնդրում են ինձ, որ առաջին դասարանում դասատրվի իրենց զավակներին հայ և վրաց լեզուները։ Նրանց այդպիսի ցանկության բավարարություն տալու համար, ցանկություն, որ բարի նպատակ ունի այն մտքով, որ բարձր դասարան փոխադրված աշակերտները հետագայում դժվարություն են քաշում այդ լեզուների գիտության մեջ, որոնք չեն դասատրվել առաջին դասարանում։

Ես, համակերպվելով հասարակության ցանկությանը, նամանավանդ որ տեղիս գավառական դպրոցի աշակերտները մեծ մասով հայեր են, հարկավոր եմ համարում այդ մասին հարգանոք զեկուցել Ձերդ բարեծննդության և խոնարհաբար խնդրել թույլ տալ դասավանդել աշակերտներին հայ և վրաց լեզուները, ինչպես որ այդ կատարվում է մյուս դպրոցներում»։

Աբովյանը հայկական դպրոցների և առհասարակ ռուս լեզուն ուսումնասիրողների համար, կազմել է նաև ռուսաց լեզվի քերականության շուրջ 400 էջանոց դասագիրք[2] («Նոր տեսական և գործնական քերականություն ռուսաց վասն հայոց հանդերձ բազում օրինակոք ՚ի պետս թարգմանութեան՝ ՚ի ռուսաց լեզուէ ՚ի հայկական և հայկականէ ՚ի ռուս ըստ գլխավոր կանոնաց քերականութեան, հանդերձ համառոտ քաղուածով պատմութեան ռուսաց»)։

---

[1] Աբովյան, ընտիր երկեր, հատոր առաջին, 1939, էջ 80։

[2] Իր այդ գրքի նպատակների մասին Աբովյանը գրում է. „Чувствуя недостаток учебника, я принимался за составление его, в желании доставить тем пользу как здешним учащимся, так и многим моим соотечественникам, обитающим в Турции, Персии и Индии, которые охотно бы пожелали познакомиться с этим языком, имея в руках хорошее руководство".

Այս գրքին կցված ռուսերեն ինքնագիր առաջաբանում[1] Предисловие к теоретическо-практической грамматике составленной на русском и армянском языках по руководству Тапе) Աբովյանն ասում է, որ որևէ լեզվի ուսումնասիրությունը նպատակ ունի „более образовать душ и чувства наши чтением различных творений на оном“ և որ ամենագլխավորն է մեզ հետաքրքրող խնդրի տեսակետից „подружиться с духом того народа, котораго языку мы учимся“. Այդ տեսակետից ելնելով Աբովյանը գնահատում է ռուսաց լեզուն հայ ժողովրդի համար՝ իբրև բոլոր լեզուներից ամենակարևորը. „Какой из Восточных, или из Западных языков может в этом отношении споспешествовать нашей нации более всех, как не русский, котораго польза и качества заставили и образованных народов нашего времены заниматься им, тем более армян, которые видят всю необходимость изучения его“.

Մի այլ տեղ՝ դասագրքի «Հատկութիւն ռուսաց լեզուի» բաժնում (16-րդ պարագրաֆ) Աբովյանն ուղղակի գրում է. «Լեզուն ռուսաց է մինն ընդարձակագույն և ամենահարկավոր լեզուաց ի վերայ երկրի» և այդ ոչ միայն այն պատճառով, որ նրանով բազմամիլիոն մարդիկ են խոսում, այլ նաև նրա համար, որ շատ լեզուներ «են ընդ նմա շառավիղ միոյ և նոյն արմատոյ»:

Աբովյանի արխիվում այժմ պահվում են ռուսաց լեզվով գրած նրա բազմաթիվ գրությունները, հոդվածները, ուսումնասիրություններն ու դասագրքերը:

1845 թ. հոկտեմբերի 24-ին իր տված վերատեսչական պաշտոնական հաշվետվության մեջ, Աբովյանը գրում է. «Ռուս անունը պետք է մեզ համար լինի սուրբ, ինչպես և նրա արյունը, որով մենք ազատվել ենք ընդմիշտ... Աշխատենք, ըստ մեր կարողության և հնարավորության, ձեռք բերել օգտավետ գիտություններ, կրթել մեր միտքն ու սիրտը, ձեռք բերել ռուս լեզվի գիտություն և բարի քաղաքացիներ լինել: Սրանով, հենց միայն սրանով, քան մի ուրիշ բանով, մենք կարող կլինենք միանալ ռուս մեծ ազգի հետ, որի միայն անունը ներշնչում է ամենքին, մինչև իսկ օտարին, սեր և անձնվիրություն... Կեցցե՛ Ռուսաստանը»:[2]

---

[1] Գիրքը չի տպագրվել: Ինքնագիրը գտնվում է Երևանի Գրական Թանգարանում: Աբովյանի արխիվ, գործ № 27:

[2] «Դիվան Խ. Աբովյանի» ,1 հ., էջ 158:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Աբովյանը և Եվրոպան» հարցի առնչությամբ եթե մինչև այժմ երբևէ խոսք է եղել, ապա այդ վերաբերվել է՝ եվրոպական գրականության, մանկավարժության և կամ փիլիսոփայության այս կամ այն առաջավոր ներկայացուցչից Աբովյանի կրած ազդեցության հարցին: Մի այլ դեպքում այդ մասին խոսվել է բուրժուազիայի վերելքի շրջանի Եվրոպայի, որպես առաջավոր կուլտուրայի օրրանի հանդեպ Աբովյանի արտահայտած դրական վերաբերմունքի առնչությամբ: Այդ մոմենտներն անշուշտ կան Աբովյանի մոտ, թեև եղածը միշտ էլ ներկայացվել է գունազարդված, չեշտված և ընդգծված, և այդ մասամբ ռուսական կուլտուրայի և կուլտուրական գործիչների՝ Աբովյանի վրա ունեցած ազդեցության ժխտման, կամ լավագույն դեպքում նվազեցման հաշվին:

Տվյալ դեպքում, սակայն, մեզ զբաղեցնողը ոչ թե այն է՝ թե ի՞նչ դեր է խաղացել Աբովյանի կյանքում Ռուսաստանը և ռուսական կուլտուրան, ոչ էլ այն հարցը, թե ի՞նչ նշանակություն է տվել Աբովյանը ռուսական կյանքի ու կուլտուրայի ազդեցությանը:

Մեզ զբաղեցնողը այստեղ հետևյալն է. ճշտել Աբովյանի վերաբերմունքը Եվրոպայի հանդեպ, ցույց տալ, որ բոլոր դեպքերում չէ, որ Աբովյանը հիանում է Եվրոպայով ու եվրոպականով, և որ ընդհակառակը, Աբովյանը՝ ավելի քան մեր նախառևոլյուցիոն գործիչներից մեկ ուրիշը (այստեղ թերևս բացառություն է կազմում Մ. Նալբանդյանը), զարմանալիորեն զգոն է եղել Եվրոպայի և եվրոպականության հարցում: Անշուշտ Աբովյանը հիանում է Դանտեի և Պետրարկի, Վոլտերի և Ռուսսոյի, Գյոթեի և Շիլլերի Եվրոպայով, սակայն մյուս կողմից նա ոչ միայն աչք չի փակում եվրոպական կառավարական սիստեմների, եվրոպական գիտական

մտքի, եվրոպական ժողովուրդների կյանքի և կենցաղի արտառոց, անմարդկային, անբնական արտահայտությունների հանդեպ, այլև դաժան խստությամբ մերկացնում և խարազանում է այդ երևույթները, հանդես գալով բարձր մարդկայնության դիրքերից, որպես ճնշված ժողովուրդների շահերի պաշտպան, որպես ներկայացուցիչ ճշմարիտ գիտության և լուսավորության, որպես ջատագով ապականություններից զերծ մարդկային բանական և բնական կենցաղավարության:

* * *

16, 17 և 18-րդ դարերի Եվրոպայի պատմությունը մարքսիստական գրականության մեջ բնութագրվում է իբրև «գաղութային թալանի» ժամանակաշրջան, մի ժամանակաշրջան, երբ օրինականացված էր, նոր հայտնագործված և նվաճված երկրներում կատարվող ամեն տեսակի ալան թալանը, ավազակային հարձակումները, հնդիկ և նեգր երիտասարդության առևանգումը, ստրուկների վաճառքը, ամբողջ ցեղերի և ժողովուրդների բնաջնջումը, հրեշավոր չափերի հասնող շահագործումը, խաբեբայությունը, անվերջ պատերազմները տեղական ժողովուրդների հետ՝ նրանց հնազանդեցնելու նպատակով և գաղութային տիրապետության համար մրցակցող եվրոպական պետությունների՝ Փորթուգալիայի, Իսպանիայի, Անգլիայի միջև, և այլն:

Կարլ Մարքսը «Կապիտալի» Ա. հատորի 24-րդ գլխում գրում է. «Ոսկու և արծաթի հանքավայրերի հայտնագործում, բնիկ ազգաբնակության արմատախիլում, ստրկացումն ու հանքարաններում ողջ ողջ թաղելը, Արևելյան Հնդկաստանի նոր-նոր սկսվող նվաճումն ու կողոպտումը, Աֆրիկան սևամորթների առևտրային որսի արգելոց դարձնելն արտադրության կապիտալիստական դարագլխի արշալույսն են նշում»:[1] Ահա այսպես էր սկսվում արշալույսն այն դասակարգի, որը իշխանության գլուխ էր բարձրանում հումանիստական լոզունգներով, և փորձում էր ստանձնել մարդկության առաջավոր իդեաների իրագործողի միսիան:

Հանդես էր գալիս նոր հասարակարգ, կապիտալիզմ.— «արտաթորելով արյուն ու ցեխ իր բոլոր ծակոտիներից՝ գլխից մինչև ոտք» (Մարքս):

Բուրժուազիայի վերելքի շրջանի գաղափարախոսների առաջավոր իդեաների և բուրժուական դասակարգի պրակտիկայի միջև

[1] Կ. Մարքս, «Կապիտալ», I հ, Երևան, 1933 թ. էջ 722:

ճղած խոր հակասությունը, որ կապիտալիստական հասարակար-
գի առաջին իսկ քայլերից դրսևորվեց չափազանց ակնառու կեր-
պով, պայմանավորեց այն երկփեղկված վերաբերմունքը, որ
այդ հասարակարգի հետագա շրջանի առաջավոր հայացքների ար-
տահայտիչները ունեին մի կողմից դեպի լուսավորական փիլիսո-
փայությունն ու ողջ լուսավորական կուլտուրան և մյուս կողմից
դեպի կապիտալիստական հասարակարգը:

Աբովյանի լուսավորական աշխարհայացքի տեսակետից «քա-
ղաքակիրթ» Եվրոպայի պետությունների պրակտիկայում ի՞նչն էր,
որ այնքան հրեշավոր էր թվում, այնքան անմարդկային և այնպես
անհամատեղելի բառիս իսկական իմաստով լուսավոր և քաղաքա-
կիրթ մարդկության հասկացողության հետ: Դա նախ և առաջ թույլ
և հետամնաց ժողովուրդների ու պետությունների հանդեպ ցուցա-
բերած եվրոպական պետությունների նվաճողական նկրտումների,
նրանց հանդեպ գործադրվող ահավոր բռնությունների, բնաջնջ-
ման, նրանց մարդկային իրավունքների ամարդի ոտնահարման
խայտառակ փաստն էր:

Ձեռք վերցնելով Խ. Աբովյանի «Ամերիկու լիս քցիլը» աշխա-
տությունը, ընթերցողին մի պահ թվում է, որ այդ երկը Ամերիկա-
յի հայտնագործության պատմության, այսպես կոչված, օբյեկտիվ
շարադրությունն է, որ հեղինակը կատարել է որպեսզի «էսպես
բաները մարդ պարապ ժամանակին ուրախությամբ լսի ու կար-
դա»: Սակայն, առաջին իսկ էջից ընթերցողը համոզվում է, որ
ինչպես իր բոլոր երկերում, այնպես էլ այստեղ, հեղինակի համար
գրականությունը նախ և առաջ մի ամբիոն է, որտեղից նա իր հա-
սարակական-քաղաքական գաղափարներն է քարոզում, իր
սկզբունքները շարադրում:

Ընթերցողը անմիջապես ճանաչում է այն հարազատ ձայնը,
որ բոլոր դեպքերում հնչում է ընդդեմ բռնության, ճնշման, հա-
րստահարության, հանուն մարդկային իրավունքների պաշտպա-
նության, հանուն հումանիզմի:

Հակադրվելով բուրժուական գիտության չակերտավոր օբյեկ-
տիվիզմին՝ «Ամերիկու լիս քցիլը» աշխատության մեջ Աբովյանը
հանդես է բերում խորը քննադատական վերաբերմունք դեպի իր
նկարագրած երևույթներն ու շարադրած փաստերը: Գրքի առաջին
իսկ էջից ընթերցողը տեսնում է հեղինակի ազնիվ ձգտումը՝
ցույց տալ որ բուրժուական գիտական նվաճումները (տվյալ դեպ-
քում Ամերիկայի հայտնագործությունը), որ թվում է թե պետք է

ծառայեն մարդկային բարեկեցության բարձրացմանը և ընդհանուր առաջադիմությանը, վեր են ածվում միլիոնավոր մասսաների դաժան հարստահարության միջոցի, պատճառ դառնում առանձին ժողովուրդների ստրկացման ու բնաջնջման։

Որ Աբովյանի համար ինքնանպատակ գիտություն և գրականություն չկա, այդ բանում մենք համոզվում ենք՝ հենց որ ձեռք ենք վերցնում «Ամերիկու լիս քցիլը»։ Աշխատության հենց սկզբի մասում, երբ քառորդ էջ հատկացնելով Ամերիկայի ընդհանուր նկարագրությանը և այնտեղից եվրոպացիների կողոպտած հսկայական հարստությանը, հաջորդ տողերում արդեն, Աբովյանը շտապում է իր դատապարտության խոսքն ասել այն անլուր բարբարոսությունների հանդեպ, որոնք գործադրվել են «քաղաքակիրթ» եվրոպացիների կողմից բնիկների նկատմամբ։ «Բայց ախ, էն էլ չի պետք է մոռանանք, որ ոչինչ աշխարք էն սև օրը, էն տարաբախտությունը չի՛ տեսել մարդի ձեռիցը, ինչպես Ամերիկա եվրոպացոց ձեռիցը։ Միլիոնավոր ազգեր, որ առաջ էն տեղ կենում, իրանց կյանքը հանգիստ վայելում էին, էս օր փչացել, հող են դարձել»։[1] Այսպես առաջին իսկ էջում Աբովյանը պարզում է իր հիմնական թեզը, այն է, որ եվրոպական ժողովուրդների այսպես կոչված բարեկեցությունը հիմնված է գաղութային ժողովուրդների անխիղճ հարստահարության, ալան թալանի ու ճնշման վրա։

Սակայն նախ փորձենք ծանոթանալ հարցի պատմությանը։

Մագելլանի շուրջերկրյա ճանապարհորդությունը, Ֆերնանդ Կորտեցի կողմից Մեքսիկայի նվաճումը՝ տեղական ժողովուրդներին իրենց իսկ արյան մեջ խեղդելու միջոցով, Ֆրանսիսկո Պիսարրոյի կողմից Պերուի և Չիլիի գրավումը, 16-րդ դարում սկիզբ դրեցին գաղութային թալանի, երբ ոսկու ծարավով տոչորված եվրոպական պետությունները և «ձեռներեց» մարդիկ գիշատիչ կոնկվիստադորների ամբողջ ոհմակներ ոչ մի բանի առաջ կանգ չառնելով՝ սկսեցին կողոպտել Ամերիկայի բնիկներին։ Իսպանացիների կողմից Ամերիկայի նվաճումը հիմնովին փոխեց այդ ժողովուրդների պատմական զարգացման ընթացքը։ Տեղական ժողովուրդներին վերածեցին ստրուկների, հատուկ էքսպեդիցիաներ էին ուղարկվում ստրուկների ետևից, նրանց խարանում էին և ուղարկում հանքերը և պլանտացիաները տաժանելի աշխատանքի, որտեղից նրանք այլևս չէին վերադառնում։

---

[1] Խ. Աբովյան, Ընտիր երկեր, հատոր երկրորդ, 1940 թ., էջ 300։

«Չկա մի ավելի բնորոշ բան,— գրում է Կ. Մարքսը «Կապիտալի» I հ. 24-րդ գլխում,— քան նրա մարդագողության սիստեմը, որ կատարվում էր Ցելեբեսում՝ Ճավայի համար ստրուկներ ունենալու միտումով: Մարդագողները վարժվում էին այս նպատակով: Գողը, թարգմանն ու վաճառողներն այս առևտրի գլխավոր գործակալներն էին, բնիկ իշխանները՝ գլխավոր ծախողները: Գողացած երիտասարդությունը պահվում էր Ցելեբեսի գաղտնի բանտերում, մինչև որ հասունանում էր ստրկանավերով առաքվելու համար: Մի պաշտոնական հաշվետության մեջ ասվում է. «օրինակ, այս Մակասար քաղաքը— լիքն է գաղտնի բանտերով, մեկը մյուսից զարհուրելի, որոնք լեփ լեցուն են թշվառներով, ընչաքաղցության ու բռնակալության զոհերով, որոնք իրենց ընտանիքներից բռնաբար պոկված շղթայի են զարկվել»:[1]

Բնական է, որ գաղութարարներին հեշտությամբ չէր հաջողվում իրենց ենթարկելու Ամերիկայի բնիկներին: Նրանք կատաղի դիմադրություն էին ցույց տալիս, կռվում էին մինչև վերջին մարդը, սպանում էին հարազատ կանանց և երեխաներին, թույլ չտալով որ նրանց վերածեն ստրուկների:

Այսպես արագ թափով տեղի էր ունենում բնիկների ոչնչացում: Օրինակ Էսպանոլա կղզում, այդ կղզու հայտնագործության պահին ապրում էին մի քանի հարյուր հազար բնիկներ: 1508 թվին նրանց թիվը հասավ 60 հազարի, 1512-ին՝ 20 հազարի, իսկ 1548-ին այդ կղզու վրա բնիկներից ապրում էին միայն 500 մարդ:

16, 17, 18-րդ դարերի ընթացքում միայն իսպանացիները Ամերիկայից տարան 28 միլիարդ ֆրանկի ոսկի և այլ թանգարժեք մետաղներ: Իսպանիայի թալանած ոսկին անցնելով արքունիք, հոգևորականությանը, վաճառականությանը, բարձր զինվորականությանը, դրանց միջոցով հեղեղում էր ամբողջ Եվրոպան: Իսպանական արքունիքի բարեհաճ թույլտվությամբ գաղութային այդ թալանից մեծ բաժին էր ստանում նաև կաթոլիկ եկեղեցին, որ իր հերթին ձգտում էր վարձահատույց լինել իսպանական արքունիքին, բնիկներին քարոզելով հնազանդություն: Պարագվայում եզվիտ հոգևորականությունը հատուկ գաղութ ուներ իր իսկ ստեղծած ճորտատիրական սիստեմի վրա հիմնված շահագործման եղանակով: Ամբողջ հողը համարվում էր «աստծունը», որի վրա բնիկները պարտավոր էին աշխատել ձրիաբար: Ստացված եկամուտները դնում էին լցնելու եզվիտ հոգևորականության պահեստները:

1 Կ. Մարքս, «Կապիտալ», 1-ին հատոր, Երևան, 1933, էջ՝ 723—724:

Այսպես սկսվեց գաղութային թալանը Իսպանիայի, Պորտուգալիայի և կաթոլիկ եկեղեցու նախաձեռնությամբ, որը սակայն գնալով ավելի մեծ թափ ու ծավալ ընդունեց, ներգրավելով հետագայում Ամերիկայի վերջնական նվաճման գործում՝ Անգլիային, Ֆրանսիային, Հոլանդիային և այլն։

Բնիկների դիակույտերի վրա կառուցված «նոր աշխարհի» իդեոլոգները փորձել են և այսօր էլ փորձում են Ամերիկան ներկայացնել որպես «ավետյաց երկիր», որպես ազատության հայրենիք, «նոր» աշխարհ, հակադրելով այն «հին» աշխարհին, Եվրոպային, մոռանալով, որ ժամանակակից ամերիկյան բուրժուազիան սերվել է Եվրոպայի ծովահեններից, մաքսանենգներից, ստրկավաճառներից և բոլոր տեսակի հարստահարիչներից ու ավանտյուրիստներից։ Զարմանալի մի հետևողական գիծ է անցնում գաղութային թալանի ժամանակաշրջանի հերոսներից մինչև Ուոլստրիտի հերոսները, մինչև «Կուկլուկս-Կլանի», ֆաշիստական այդ բանդայի տեռորիստները։

* * *

Ինչպես վերը ասացինք, ժողովրդական ընթերցանության համար գրված Աբովյանի «Ամերիկու կիս քցիլը» գիրքը ունի որոշակի նպատակադրում, լայն մասսաներին պատմական-աշխարհագրական որոշ գիտելիքների հետ մեկտեղ, տալ նաև այդ հարցի վերաբերյալ ճիշտ հայեցակետ, հստակ կողմնորոշում։ Իսկ Աբովյանի հայացքը եվրոպական պետությունների գաղութային քաղաքականության նկատմամբ, որոշակի կերպով բացասական է։

Աբովյանը ինքը լինելով ճնշված և օտարների կողմից բազմիցս նվաճված ազգի որդի, խորապես հասկանում էր Ամերիկայի և Աֆրիկայի ժողովուրդներին բաժին ընկած մեծ տարաբախտությունը, որը նա շատ ավելի մեծ էր համարում, քան հարազատ ժողովրդի կրածը, թեկուզ հենց այն տեսակետից, որ իր ժողովուրդը կարողացել էր դիմագրավել իր գլխով անցած աղետներին, սակայն այդ ժողովուրդները, անկարող եղան դիմադրել հակառակորդներին և անլուր տառապանքներ կրեցին ու մեծ մասամբ բնաջինջ եղան։

«Լուսավորյալ, քրիստոնյա խաչապաշտ եվրոպացոց տաը ողորմելի Ամերիկա էնպես քանդեց, ջնջեց, հողի հետ հավասարեց, որ հինգ վեց միլիոն ազգերիցը էս օր հազար հոգի էլ չեն մնացել, էն

էլ սար ու ձոր ընկած, վայրենի գազանների պես են իրենց սև օրը լալիս ու կոտորվում»։[1] Այստեղ Աբովյանը հատկապես շեշտում է լուսավորյալ բառը, որովհետև նրա հասկացած լուսավորության ըմբռնումը բարբարոսության հետ անհարիր, հակադիր մի հասկացողություն է։ Ի՞նչն է, որ Աբովյանի կարծիքով անհամատեղելի է իսկական իմաստով լուսավոր և կուլտուրական մարդու հետ, դա մարդու հանդեպ անմարդկային վերաբերմունքն է։ Այդ էլ հենց Աբովյանին խորապես հուզում է, գրգռում նրա զայրույթն ու ատելությունը իրենց վրա լուսավորության և կուլտուրայի դրոշակակրի պաշտոն վերցրած եվրոպացիների նկատմամբ։ Աբովյանը չկարողանալով թափանցել բուրժուական մասնավոր սեփականատիրական հասարակարգի բուն էության և չկարողանալով դրանից բխող համապատասխան եզրակացություններ անել բուրժուական հասարակարգի պայմաններում ապրող մարդկանց մորալի մասին, բարձր մարդկայնության սկզբունքներով մարդկանց բարոյակըրթելու բուրժուական քաղաքակրթության անզորության մասին, այնուամենայնիվ նա մի որոշ չափով ըմբռնում է, որ կապիտալիստական հասարակարգի մարդկանց գործողությունները թելադրվում են նրանց տնտեսական շահերով և որ այդ հասարակակարգի վայրագ շահամոլներին անհնարին է քաղաքակրթությամբ զսպելը։ Աբովյանը աղոտ կերպով ըմբռնում է շահույթի ամենազոր ուժը, իբրև բուրժուական հասարակակարգի շարժիչ մեխանիզմի։

«Ամերիկու լիս քցիլը» աշխատության մեջ Աբովյանը գրում է. «Ու որ էս քրիստոնյա նավավարները մահմեդական էին ռաստ բերում, հենց իմանում էին քրիստոնեից թշնամիք են, թալանում, սպանում, էրում ու շատին էլ եսիր էին անում։ Սրանից դուս եկավ, որ վերջ ժամանակի, սկսեցին եվրոպացիք աֆրիկացի նեգեր ազգերին (այսինքն սև ազգերին) բռնիլ, ծախիլ, ինչպես անասունը, որ մարդ լսելիս, միսը հալչում ա վրեն։ 1442 թվին սֆթա տեսավ Լիսաբոն, Փորթուգալի մայրաքաղաքը էնպես մարդիք՝ երեսները սև, մազըները խուճուճ, պռոշները հաստ ու դուս պրծած, որ ոսկե գետի մոտ Աֆրիկա էին եսիր արել։ Էս ողորմելիքը, երբ որ իրանց բռնեցին, Ոսկու թոզ բերին, որ իրանց գլուխն ազատեն։ Հենց էս անպիտան թոզը տեսան եվրոպացիք թե չէ, գժվեցին։ Նրանք էլ էն էին ուզում։ Ամենն էլ սկսեցին նոր աշխարների ման գալ։ Ոսկու հասրաթը ամենի սիրտն էլ վառեց, ամենն ոտները

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու». հատոր երրորդ. ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1948 թ., էջ 55։

բարձրացրին, նավ մտան, որ առաջ գնան։ Գենվա ու Վենետիկ քաղաքիցը, որ էն ժամանակը շատ զորեղ էին, էլ վաճառական չմնաց, որ նավ չի սարքի, որ գնա նոր աշխարք գտնի։ Ամենն էլ ուզում էին էնպես աշխար գտնել, որ ոսկու գետ ունենար։ Բայց շունքի էսպես երկրներ չգտան, ընկան ողորմելի նեգր ազգի վրա, ու որտեղ որ գտնում էին, հայվանի պես կամ սպանում էին, կամ առաջ անում, տանում ծախում։ Մարդի սիրտ կրակ է ընկնում, ինչ ժամանակ լսում ա, թե էս լուսավոր եվրոպացիքը ի՞նչ են բերել էն խեղճ ազգի գլխին, որդին հորից խլել, աղջիկը մորից, մորը՝ զավակներիցը, որ տանին իրանց փողի ծառավը կշտացնեն»։[1]

Այստեղ արդեն Աբովյանը՝ լուսավորության և քաղաքակըրթության ոգուն ներհակ փաստերի ահավոր ծանրության տակ մի պահ զինաթափ է լինում և ստիպվում խորին հիասթափությամբ բացականչել. «էս էլ ֆռ լուսավոր եվրոպացին»։[2] Եվ ապա, կարծես վերը արած արտահայտության կոմենտար, ինքն իր համար խընդիրը որպես թե պարզաբանելու իմաստով՝ քիչ ներքև գրում է. «Ա՜խ, ոսկին ո՞ւմ գլուխը չի ծռել»։[3] Եվ քանի որ Աբովյանը տառերայնորեն նկատել է կապիտալիստական հասարակակարգի էական հատկանիշներից մեկը՝ քաղաքակրթության և լուսավորության անզորությունը շահույթի ամենազոր և միահեծան իշխանության առաջ, հապա այնուհետև այլևս նա ոչ թե զարմանքի, կամ հիասթափության բացականչություններ է անում քաղաքակիրթ Եվրոպայի հասցեին, այլ նզովքի զայրագին խոսքեր է ասում նրանց, ովքեր, որ մարդ կոչվելով, կարող են այդպես դաժան ու տմարդի վարվել իրենց նմանի հանդեպ։ Նկարագրելով հնդիկների և նեգրերի նկատմամբ գործադրվող մի շարք այլ դաժանություններ, Աբովյանը գրում է. «Ա՜խ, ո՞վ էսպես բանըն իմանա ու էնպես անողորմ, ագահ մարդքերանց գլխին նզովք չկարդա»։[4] Եվ Աբովյանը խստագույնս նզովում է «ոսկու թոզի» ծարավով բռնված եվրոպական ազգերի բոլոր ընչաքաղց վերնախավերին՝ վաճառականից սկսած մինչև թագավորները։

Բացառիկ խստությամբ Աբովյանը դատապարտում է կաթոլիկ հոգևորականության արարքները գաղութներում։ Աբովյանի զայրույթը գրգռում է ճիզվիտների լկտի երկերեսանությունը. մի կող-

---

1 Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», հատոր երկրորդ, Հայպետհրատ, Երևան, 1940 թ., էջ 305—306։

2 Տես նույն տեղ, էջ 306։

3 Տես նույն տեղ, էջ 314։

4 Տես նույն տեղ, էջ 315։

մից նրանց քարոզները մարդասիրության և թշնամասիրության մասին, մյուս կողմից նրանց հակամարդկային արարքները՝ գաղութային ժողովուրդների հանդեպ գործադրվող դաժանությունները։

Արովյանը գրում է. «Բայց սպանացիք, որովհետև իրանց ուզած ոսկու աշխարը դեռ չէին գտել, անողորմաբար չարչարում, տանջում էին էն ողորմելի անմեղ ազգերին, որ իրանց համար մշակություն անեն, վարեն, ցանեն, որ սրանից էլա օգուտ ստանան։ Ամենից ավելի շաքարի ղամիշ էին էստեղ տարածել, որ էս օր էլ էնտեղանց հարստության աղբյուրը սա է։ Բայց խեղճ ամերիկացիքը էն զորությունը ու սովորությունը չունեին, որ էս ջաֆին դիմանան ու սաղ սաղ մաշվում, մեռնում էին չարչարանքի ձեռիցը։ Էնպես որ Հիսպանիոլա միայն, որ մեկ միլիոն բնակիչ ուներ, մեկ քանի տարուցը եդը կեսը չմնաց, բոլորը ջարդվեցին։ Ով որ էլ սպանիացոցը չէր ուզում հնազանդի, աստված հեռու տանի, ինչ նրա գլխին էին բերում։ Շները կատաղացնում, նրանց տկլոր ջանի վրա էին անում, որին թրով էին աղցան անում, որին թվանքով ու նրանց անճար թագավորներին հո կենդանի կրակն էին դնում, կամաց կամաց էրում, խորովում, որ մյուսներին խրատ ըլի։ Ու էսպես անօրեն գործքերը փափի հոգևորականքն էին անում, որ նրանց հավատի բերեն, էն քրիստոսի սուրբ հավատի վարդապետք ու քահանեքը, որ մեզ խրատում է մարդասիրություն, թշնամասիրություն։ Օ՜, ի՞նչ չեն արել սրանք։ Եվրոպա, թե Ասիա, թե Ամերիկա, որ ինչ ա, իրանց իշխանությունը զորանա, մեծանա»։[1]

Եվ այսպես Աբովյանը մերկացնում է պապականությունը, կաթոլիկ եկեղեցին՝ իբրև եվրոպական պետությունների կապիտալիստական էքսպանսիայի ամենաակտիվ աջակիցն ու մասնակիցը, իսկ երբեմն էլ նաև դրոշակակիրը։

Ամերիկայի բնիկներին բաժին ընկած դաժանագույն ճակատագիրը, Աբովյանը ապրում է ցավագնորեն, իբրև իր հարազատ ժողովրդի ճակատագիրը։ Իբրև արտահայտություն այդ խորը մարդկային ապրումի, այդ մեծ ու ազնիվ կարեկցանքի և դրանից բխող արդարացի ցասման ընդդեմ Եվրոպայից եկած ավերիչ ուժի, նա գրում է իր «Միսիսիպի» բանաստեղծությունը։ Միսիսիպի գետը վրդովված է, նա ամեհի ուժով թնդում է, դղրդում, Նրա

[1] Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», հատոր երկրորդ, Հայպետհրատ, Երևան, 1940 թ., էջ 321։

հորձանքները սպառնում են խորտակել հարազատ ափերը, ավերածություն տարածել շուրջը, քաղաքները սարսափից սասանվում են, թվում է թե նրանք պիտի ճայթեն: Ամերիկայի մայր գետը խորապես հուզված է հարազատ ժողովրդի դառը վիճակի համար, նա իր ցասմամբ բողոքում է ընդդեմ «Եվրոպացին՝ սպիտակ տեսլեամբ թշնամին դաժան», որ եկել է վրդովելու իր ափերը, խափանելու իր հարազատ որդիների բնական, պարզ և խաղաղ կյանքը:

«Ո՛չ ուսումն, ո՛չ դպրոց ուսոյց նոցա զայս սուրբ օրենք
բնութեան։
Այլ իւրեանց անբիծ սիրտ զգա զգին բարեկամութեան...»

Ցմահ բարեկամության ուխտ արած հարազատներին «Տերն անիրաւ մոռացեալ զգութ» փորձում է բաժանել, բաժանել միմյանցից և հարազատ հայրենիքից, գերեվարելով իբրև ստրուկ:

«Այն ի՞նչ սիրելիք տան հրաժարական զմիմեամբք
փարեալ.
Մի՞թե կամին մեզ բաժանել ի միմեանց ի մեր
հայրենեաց,
Մի՞թե այլ իմ աչք ոչ տեսցե զքեզ քաղցր իմ բարեկամ,
Եվ ո՞ւր մեր սուրբ ուխտ ի կենաս և ի մահ մնալ անբաժան,
Մի՞թե ի մեր սիրտ շիջաւ այն սուրբ հուր սիրոյ հոգեկան,
Զրկեմ ես ի քեն իմ սուրբ հայրենիք զրկեմ յաւիտեան,
Սիրտ իմ տոչորի յածելն զմտաւ զայս դառն իմ օրհաս.
Այլ անդ քո գետին եթող զսրբութիւն՝ ջերմին մայրական,
Մինչ թշուառ սպիտակքս եկին ի հեռուստ ի լինել քեզ
իշխան»:[1]

Եվրոպացի նվաճողների դեմ զայրագին ատելության, իսկ բնիկների հանդեպ խանդակաթ սիրո արտահայտություն հանդիսացող այս երկը իր տեսակի մեջ միակը չի Աբովյանի ստեղծագործություններում: Մի շարք անգամներ Աբովյանը անդրադառնում է այդ թեմային: Եթե եվրոպացին, իբրև ուրիշ ժողովուրդների իրավունքներ ոտնահարողի, Աբովյանի գրչի տակ պատկերանում է մարդկային վատթարագույն գծերով, հար ու նման հայ ժողո-

1 Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի, Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, № 71:

վրոդի այնպիսի տխուր թշնամիներին, որպիսիք են օսմանցին ու պարսիկը, հապա ամերիկացի բնիկներին Աբովյանը ներկայացնում է որպես բարձր առաքինություններով օժտված մարդկանց։ Աբովյանը մերթ շեշտում է նրանց անօրինակ հայրենասիրությունը և դրանով պայմանավորված անձնազոհությունը, մերթ նրանց ազատատենչությունը և իրենց գերյալ վիճակի նկատմամբ անհաշտ վերաբերմունքը և մերթ նրանց ընտանեկան բարձր սրբությունները՝ ամուսինների փոխադարձ անձնվեր սերը և այլն։

Աբովյանի «Ազատասիրություն» խորագրով զրույցը պատկերում է Ֆրանսիայում գերության մեջ տառապող մի ամերիկացի երեխայի կյանքը։ «Մեկ օր իր տերը հարցրեց թե այժմ ո՞ր երկիրն ա նրան ավելի դուր գալիս՝ Ֆրանցիա, թե իր հայրենիքը»։ «Իմ հայրենիքը»,— պատասխանում է երեխան, «վասն է՞ր»,— հարցնում է ֆրանսիացին. «որովհետև, այժմ դեռ դու չի կերած՝ ես չեմ կարող ուտիլ, դեռ դու չի քնած՝ ես չեմ կարող քնիլ։ Էսպես գերի միմիայն անասունը կարե լինել և ոչ մարդը...»։[1]

«Ամերիկու լիս քցիլը» ակնարկում նկարագրելով Կորտեց իսպանացու Մեկսիկան նվաճելու առնչությամբ բնիկների դեմ մղած կատաղի կռիվները, Աբովյանը իսպանացիների գործ դրած անմարդկային դաժանություններին զուգահեռ, ցուցադրում է ինքնապաշտպանության համար զենք վերցրած բնիկների հերոսությունը, անձնազոհությունը, հայրենիքի համար անմռունչ կերպով նահատակվելու մեծ առաքինությունը։

Նկարագրելով իրենց հերոսությամբ աչքի ընկած մեկսիկացի երկու երիտասարդների սխրագործությունը, Աբովյանը ավելացնում է. «Քանի որ աշխարքս աշխարք ա դառել, էսպես տղամարդիկ դեռ քիչ կըլեն էլած, ու չեն էլ ըլիլ»։[2] Ի դեպ է ասել, որ այս երիտասարդների սխրագործության մասին Աբովյանը գրել է նաև առանձին զրույց «Օրինակ վեհանձնութեան և հայրենասիրութեան» խորագրով։ Զրույցը վերջանում է մեկսիկացիների անօրինակ քաջագործությամբ հիացած Կորտեց զորավարի հետևյալ խոսքերով. «Յիրավի զայսօրինակ քաջասրտութիւն ոչ ետես Նոր-Սպանիայ և ոչ տեսցէ երբէք որքան կայ և մնա աշխարհ»։[3]

---

[1] Խ. Աբովյան, «Նախաշավիղ», Հայպետհրատ, Երևան, 1940 թ., էջ 56։

[2] Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», հատոր երկրորդ, Հայպետհրատ, Երևան, 1940 թ., էջ 324։

[3] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր չորրորդ, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1947, էջ 101։

Այստեղ արդեն Աբովյանն իր տարերքի մեջ է։ Հայրենասիրական պաթոսի դրսևորման համար Աբովյանը միշտ էլ գտնում է վառ գույներ, զորեղ պատկերներ, հայրենասիրությունը իրոք որ նրա ստեղծագործության կենդանի ոգին է։

«Մեր մայրենի» զրույցի մեջ Աբովյանը խորը մարդկային մի դեպք է պատմում նեգր ամուսինների կյանքից։ Իրենց զավակի հետ գետում նավարկող ամուսինները ընկղմվելու վտանգի մեջ են, նրանցից մեկն ու մեկը պետք է իրեն զոհաբերի մյուսներին փրկելու համար։ Ամուսիններից յուրաքանչյուրը ցանկանում է իր կյանքը զոհաբերել։ Ի վերջո կինը, համոզված, որ արդեն իր խնամքից դուրս եկած երեխայի համար առավել անհրաժեշտ է հոր կյանքը, անմիջապես ջուրն է նետվում, կործանումից ազատելով մյուսներին։[1]

Տառացի կերպով երեք, չորս պարբերություններից կազմված այդ զրույցների մեջ, Աբովյանը կատարում է մեծ ընդհանրացում, լիակատար պարզորոշությամբ արտահայտելով իր դեմոկրատական աշխարհայացքի ամենաբնորոշ գծերից մեկը՝ մարդկանց իրավահավասարության գաղափարը՝ անկախ կրոնի և ազգության տարբերությունից։ Աբովյանի համար մարդը, դա բարձրագույն էակ է, ուստի նրա հանդեպ անհարգալից վերաբերմունքը մեծագույն ոճրագործություն է։ Աբովյանի խորին համոզմունքով, ստրկացված հնդիկը, կամ նեգրը մարդ է բառիս ամենակատարյալ իմաստով, սակայն նրան ստրկացնող եվրոպացին ստորագույն էակ է։ Հենց այս տրամաբանությամբ էլ թելադրվում է Աբովյանի ուժեղ թշնամանքը դեպի, այսպես կոչված, առաջավոր կուլտուրայի այն երկրները, որոնց ձեռքին կուլտուրան սոսկ զենք դարձավ բնաջնջելու կուլտուրական ցածր աստիճանի վրա կանգնած ժողովուրդներին, կամ լավագույն դեպքում արգելակելու նրանց բնականոն զարգացումը, կոնսերվացնելով այդ ժողովուրդներին հասարակական զարգացման ցածր աստիճանի վրա։

Ամերիկայի բնիկների կյանքը և քաղաքական դժբախտ ճակատագիրը պատկերող Աբովյանի երկերը, մեզ համար ունեն կրկնակի նշանակություն, այն տեսակետից, որ նրանք մեզ օգնում են նաև նոր լույսի տակ դիտելու հեղինակի մյուս գործերը։

Կարդալով Ամերիկայի բնիկներին վերաբերող Աբովյանին

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», չորրորդ հատոր, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1947 թ., էջ 102։

հատուկ ջերմ և սրտահույզ տողերը, ընթերցողը ակամա անդրադառնում է «Վերք Հայաստանի» վեպին. տեղի են ունենում անխուսափելի ասոցիացիաներ, որոնցից հետաքրքրական հետևությունն է առաջանում: Ո՞րն է այդ հետևությունը. այն, որ «Վերք Հայաստանի» վեպում մեծագույն ուժով արտահայտություն գտած հեղինակի սերը դեպի հարազատ ժողովուրդը և ատելությունը դեպի օտար նվաճողները՝ դրսևորելով նրա խորը հայրենասիրությունը, միաժամանակ հանդիսանում է նրա հումանիզմի բնորոշ արտահայտությունը: Աբովյանը խորին վիշտ է արտահայտում հայ ժողովրդի պատմական ծանրագույն ճակատագրի նկատմամբ, ոչ միայն որպես մայրենի ժողովրդի, այլև որպես մարդկության մի հատվածի, որին բաժին է ընկած եղել դժբախտ ճակատագիր: Այսպիսի մտածողությունը խիստ բնորոշ է Աբովյանի հումանիստական աշխարհայացքի համար: Աբովյանը հայի և պարսիկի, նեգրի և իսպանացու, հնդիկի և անգլիացու փոխհարաբերությունը դիտում է իբրև ճնշվողի և ճնշողի փոխհարաբերություն ու սրանով էլ դիրքորոշվում դեպի մեկը և մյուսը, առաջիններին կարեկցելով, իսկ երկրորդներին նզովելով: Այսպիսով, ըստ իրենց բնույթի, ազգային ազատագրական պայքարի արտահայտություն հանդիսացող Աբովյանի որոշ երկեր, և առաջին հերթին «Վերք Հայաստանի»-ն, սոցիալական խորը իմաստավորում են ստանում, արտահայտելով թույլի և ուժեղի, գիշատչի և զոհի փոխհարաբերություն:

Աբովյանը գրում է. «Հավի թշնամի ուրուրն էլ, թևերը փռած, չանգերը սրելով, բաց ու խուփ անելով— սուր աչքերը էս դեհն, էն դեհն էր քցում, պտտում, հազրվում, որ բիրդանբիր վեր վազի մեկ վխպոր ճտի գլխի խփի ու ճվճվացնելով, ծղրտացնելով, վեր քաշի, քրքրի, թերթի ու իր ագահ փորին մատաղ անի»:[1] Այս պատկերը ինքնըստինքյան չափազանց գեղեցիկ է և իր տեղում միանգամայն անհրաժեշտ, լրացնելու համար այն նկարագրությունը, որ Աբովյանը տվել է պատկերելով Արարատյան դաշտի ամառը: Սակայն այդ պատկերը հեղինակի գիտակցության մեջ ծնունդ է տալիս մի նոր պատկերի, մի նոր համեմատության, բնությունից արդեն փոխադրված մարդկային հասարակություն: Շարունակելով պատկերը, Աբո-

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր երրորդ, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1948 թ., էջ 86:

վյանը գրում է. «Ահա գեղեցիկ, անզուգ օրինակ՝ անսիրտ, բարբարոս պարսից, ժանդ բռնակալաց, մաշողաց ազգի, երկրի հայկա զավակաց»։[1]

Փոխադարձաբար իրար լրացնող և բացահայտող այս պատկերների միջոցով Աբովյանը խոշոր ընդհանրացում է կատարում, բնութագրելով իրեն որպես ճնշված և հարստահարված մարդկության մեծագույն բարեկամի և ստրկացված ժողովուրդների շահերի անխոնջ պաշտպանի։

Ժողովուրդների և կառավարությունների գնահատականը տալիս Աբովյանը մի հիմնական ելակետ ունի, դա մարդկության ընդհանուր զարգացման, ազգերի և ժողովուրդների նորմալ և բարեկամական համակեցության գործին նպաստելու կամ արգելակելու հանգամանքն է։ Աբովյանը իր ողջ էությամբ ատում է աշխարհակալական ձգտումներ ունեցող բոլոր տիրակալներին, հայտարարում նրանց մարդկության թշնամիներ, որակելով նրանց այդ ձգտումները որպես ցնորամտություն։ Իբրև օպտիմիստական հայացքներ ունեցող քաղաքացու, մի քաղաքացու, որը մարդկության ոսկեդարը տեսնում էր ապագայում և ոչ անցյալում, Աբովյանը խորապես համոզված է, որ հաղթանակը ոչ թե վայրագ ուժի, այլ արդարության կողմն է։ Եվ քանի որ այդպես է, հապա ուրեմն ամեն մի աշխարհակալական ձգտում պատմականորեն դատապարտված է։

Աբովյանը հատուկ քննության առարկա է դարձրել դեպի Ռուսաստան կատարած Նապոլեոնի արշավանքի խնդիրը։ Ինչպես նախորդ դեպքերում, նմանապես և այս պարագայում, Աբովյանը կանգնած է ժողովուրդների ինքնուրույն գոյության իրավունքը անարգ ոտնահարողներին սպանիչ խոսքերով դատապարտողի մարտական դիրքերում։ Իր «Ալեքսանդր կայսրը Փարիզում և Նապոլեոնի անկումը» դեռևս անտիպ հոդվածում Աբովյանը գրում է. «Այն միջոցին, երբ Նապոլեոնը գազանություն էր անում Մոսկվայում, կարո՞ղ էր արդյոք Եվրոպան հույս ունենալ, թե Ալեքսանդրը երևան կգա Փարիզում։ Սա ինքը ռուսների բարեկամը լինելով... հույսը դրել էր իր արդար գործի վրա, իսկ նա իր պատվասիրության կատաղությամբ ինչպես մի ճանդուգն բռնակալ *եվրոպական*

---

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր երրորդ, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1948 թ., էջ 66։

ազգերի խավարագույն զորքերով հարձակվեց Ռուսաստանի սահմանների վրա»։

Աբովյանը գտել է լավագույն խոսքը՝ խավարագույն, բնութագրելու համար ժողովուրդները ստրկացնելու նպատակով կազմած զորաբանակները։

«Նապոլեոնը,— գրում է Աբովյանը,— խաղաղության դաշինքը խախտող է, մարդկային օրենքը արհամարհող, ամբողջ աշխարհի անհաշտ թշնամին, թե իր եղեռնագործությամբ մտածելով Ռուսաստանը կորստյան մատնել, նպատակ ուներ միանգամայն իր հպարտությամբ ստրկության շղթաների մեջ առնելով, իրեն ենթարկել տիեզերքը, և կառավարել այն միապետական սրով։ Իրեն ծառայության ենթարկված աշխարհի և իրենց հայրենիքին դավաճանած, թշվառության կորստի մատնված մարդկանց վիճակը պարզապես ցույց էր տալիս թե նա կործանում է ազատությունը և ձգտում է իրեն ենթարկել ամբողջ աշխարհը։ Նապոլեոնը ոչ միայն մտածում էր ստրկացնել ժողովուրդներին, այլև արմատախիլ անել նրանց, որոնք օտարին ծառայելու համար չէին ծնված»։[1] Սակայն ինչով վերջացավ արյունով արբեցած և փառասիրությամբ կուրացած Նապոլեոնի գազանային ձգտումը՝ բնաջնջման սպառնալիքով ստրկաբար իրեն ծառայեցնելու ժողովուրդներին։ Շուտով վրա հասավ «լուսավորյալ» բարբարոսների խայտառակ կործանումը ի դաս և ի խրատ ժողովուրդների բոլոր կեղեքիչների, մարդկության բոլոր գազանաբարո թշնամիների։

«Ռուսաց զորքի ընտիր հրամանատար Միքայել Սմոլենացին,[2] շարունակում է Աբովյանը,— Հռոմի Կամիլոսի նման անհնարին հարվածներ հասցրեց թշնամիների զորախմբին։ Եվ երբեմն իրենց լուսավորությամբ գոռոզացող այն բարբարոսների ոսկորներն ու զենքերը դաշտի փոշու հետ խառնելով, ցույց էր տալիս նրանց խայտառակությունն ու անպատիվ լինելը»։

Ապա սպանիչ իրոնիայով Աբովյանը ավելացնում է. «Եվ այն անպարտելի զորագլուխը, անհամեմատելին և միակը երեսուն մեծամեծ պատերազմներ էր մղել և ձգտում էր զինվորական փառքով և հաջողությամբ նսեմացնել մեծ զորապետների ամբողջ փառքը, կորցնելով իր նախարարներից ամենաընտիրներին և մեր մեծահրաշ դարը, փախուստի է դիմում իր գնդից մնացած մի քանի դա-

1 Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, № 37։

2 Խոսքը Կուտուզովի մասին է։

տարկապորտների հետ։ Նապոլեոն մեծը, որ ամբողջ աշխարհին սքանչելի երևաց, նրա հոգու բոլոր ձիրքերն անհետացան և նրա փառքը թեթևասլաց ստվերի պես հյուսիսային հողմից քշվեց»։ Դրանից հետո Նապոլեոնի արյունահեղ «տաղանդի» լուսավորյալ երկրպագուներին, այլևս ոչինչ չէր մնում քան եթե միայն զարմանքով բացականչել. «Մի՞թե այս այն մեծ զորավարն է, որից դողում էր Եվրոպան»։

Պարզապես զարմացնում է Աբովյանի հետևողականությունը՝ անկախության համար բռնության դեմ պայքարող ժողովուրդների արդարացի շահերը պաշտպանողի իր դերում։ Մեծագույն կրքով նա նշավակում է բռնակալությունը— բիրտ ուժը, որտեղ էլ այն արտահայտվելու լինի, որ ժողովրդին էլ այն սպառնա, բռնության զոհը հարազատ հայ ժողովուրդն է, հարևան ադրբեջանցին, հեռավոր նեգրը կամ հնդիկը, թե Աբովյանի առանձին սերն ու համակրանքը վայելող ռուս ժողովուրդը։ Բոլոր դեպքերում Աբովյանը ճնշված և հարստահարված ժողովուրդների պաշտպանության դրոշակակրի իր ազնիվ դերի մեջ է։

Այդ նույն հետևողական հայեցակետով էլ պայմանավորվում է հակառակ երևույթի նկատմամբ Աբովյանի միանգամայն հակադիր վերաբերմունքը՝ արտահայտված նույնպիսի կրքով, ինչ որ առաջին դեպքում։

Եթե ազգեր կործանող պետությունների նկատմամբ Աբովյանը զայրույթի և նշավակության ցասկոտ խոսքեր է ասում, հապա նա մեծագույն խանդավառությամբ գովաբանում է այնպիսի պետությունների և ժողովուրդների, որոնք ձեռք են մեկնել օտար լծի տակ կեղեքվող ժողովուրդներին, այդ ժողովուրդների նկատմամբ օբեկտիվորեն ստանձնելով ազատագրողի միսիան։ Այսպես, օրինակ, Աբովյանը ամբողջ մարդկության ճակատագրի համար մեծ ու փրկարար է համարում ռուսների՝ Նապոլեոնի դեմ տարած փայլուն հաղթանակը, մի հաղթանակ, որ նշանակում էր ամենահանդուգն և կատաղի բռնակալի ահեղ սպառնալիքից տասնյակ ժողովուրդների փրկություն. «Լեյպցիգի պատերազմի օրը,— գրում է Աբովյանը վերոհիշյալ հատվածում,— ռուսները քանի քանի չլսված և չտեսնված արիությամբ և քաջությամբ ճակատամարտերով՝ մեծամեծ օրինակ ծառայեցին աշխարհին, որով պանծալի գործեցին իրենց ամբողջ Եվրոպայի կամ, ավելի ճիշտ կլինի ասել, ամբողջ աշխարհի առաջ։ Հետագա սերունդները անհավատալի հիացմունքով կկարդան մեր ժամանակակից տարեգրությունը, որ անհա-

մեմատելի է նախկին ժամանակների հետ, որ այնքան սքանչելի ձևով գովերգեցին նախկին մատենագիրները»:

«Բայց հրաշափառ դարն Ռուսաստանի ի համաշխարհական պատմութեան ակսանի խնկապես ընդ 1812 ամի», — գրում է Աբովյանը իր «Նոր տեսական և գործնական քերականություն Ռուսաց վասն Հայոց»[1] անտիպ աշխատության մեջ: Աբովյանի խորին համոզմունքով այդ դարը հրաշափառ դարձավ Ռուսաստանի համար, շնորհիվ այն բանի, որ ռուս մեծ ժողովուրդը մի մարդու պես համախմբվեց ազատագրական պայքարի դրոշի ներքո՝ պայքարելու համար ընդդեմ ժողովուրդների ստրկացնողի: «Հին և նախագահ մայրաքաղաքն Մոսկով, — կարդում ենք նույն տեղում, — յայս սակս առեալ եղև ի գաղիացւոց և իբրև զոհ մատնեցաւ բոցոյ: Բովանդակ Ռուսաստան ձգեաց յայժմ վայրի զուսերն վրեժխնդրութեան: Ծերք, տղայք և կանայք սպանանէին զթշնամին: Եվ երկինքըն խակ է հաս ի թիկունս Ռուսաստանի, այնզի մահաբեր զենք սով և ցուրտ ջնջէին զեկս միաբանի միասին»:

Ռուսական բանակի Փարիզ մտնելը Աբովյանը համարում է պատմական մեծ իրադարձություն: «Մեծ էր հիրավի և անմոռանալի ռուսաց Փարեժ մտնիլը, — գրում է Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում:[2] Սակայն Աբովյանը նույնքան և նույնիսկ առավել մեծ է համարում Ռուսաստանի դերը Կովկասյան ժողովուրդների կյանքում: Ի հակադրություն եվրոպացիների, նրանք ոչ թե եկան Կովկասյան ժողովուրդներին բնաջնջելու, այլ բնաջնջումից պաշտպանելու: «Այլ եվրոպացիք Ամերիկա ավերեցին, հողի հավասարեցին, ռուսք Հայաստան կանգնացրին ու ասիացվոց բիրտ, գազան ազգերին (պարսիկներին և օսմանցիներին— Հ. Մ.) մարդասիրություն ու նոր հոգի տվին», — գրում է Աբովյանը «Վերքում»:[3]

*

Մերկացնելով Արևմտյան Եվրոպայի պետությունների նվաճողական ձգտումները, աշխարհի բազմաթիվ ժողովուրդների նկատմամբ նրանց բռնած թշնամական դիրքը, Աբովյանը այնու-

---

1 Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, № 27:

2 Խ. Աբովյան. «Երկերի լիակատար ժողովածու», հատոր երրորդ, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1948 թ. էջ 178:

3 Տես նույն տեղ, էջ 180:

հետև նույն հումանիստական դիրքերից հանդես է գալիս Արևմտյան Եվրոպայի գիտության, հատկապես պատմագիտության քննադատությամբ։ Այդ գիտությունը Աբովյանը համարում է ոչ անաչառ, կաշառված գիտություն, գիտություն, որը բացառապես ծառայում է հզոր պետությունների շահերին, նպաստում նրանց էքսպանսիվ ձգտումներին, ոտնահարելով թույլ, ճնշված և հարստահարված ժողովուրդների ու պետությունների քաղաքական ու տնտեսական շահերը։

Խորապես վրդովմունքով բողոքելով, որ եվրոպական պատմաբանները անարդարացի կերպով մոռացության են տվել հայ ժողովրդին ու նրա հարուստ պատմությունը և ընդհանրապես դատապարտելով նրանց ոչ անաչառ լինելը, Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպի սևագիր վարիանտում գրում է. «Թե սիրելի որդիքը պատմության նրանք են՝ որ շատ քաջություն արին, ոչինչ ազգ ուրեմն էնքան բրաբիոն, էնքան պսակ պետք է չստանար որքան Հայք, բայց ի՞նչ անեմ՝ լեզուս կարճ ա, ձեռս բարակ, երկինքը բարձր, երկիրը խոր, անտեր ազգին ով մտիկ անում, աշխարքս զոռովին ա գլուխ վեր բերում, ծունկը համբուրում ու պատմագիրքն էլ ըստ մեծի մասին եվրոպացի ըլելով իրենց ազգերին են առաջ քաշում»։[1]

Մի այլ տեղ՝ «Ի վերա հայրենասիրության» անտիպ նամակաձև երկում[2] Աբովյանը իր ժողովրդի բազմադարյան ծանր ճակատագրի առնչությամբ դարձյալ հիշելով եվրոպացիների կողմից անտեսված նրա բարեմասնությունները, խորին վրդովմունքով գրում է. «Ով՝ անաստված է, անիրավ, անգետ, որ զայսպիսի առաքինական հոգի ազգին մերոյ ուրացեալ, ոչ զգասցի և ծանիցէ լիովին զհարգն հայոց։ Մեծ է հոգի հայոց, ի ճակատիս պատմութեան և ի միտս բարեկամին մարդկութեան»։

Այստեղ բերած փաստերի մեջ ուշագրավը հարցի սկզբունքային կողմն է։ Եվրոպական ռեակցիոն պատմագիտության վերաբերյալ թեև Աբովյանը իր սկզբունքային դիտողությունը հիմնավորում է իր ժողովրդի նկատմամբ ունեցած այդ գիտության անբա-

1 Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», երրորդ հատոր, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1948 թ., էջ 305։

2 Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, № 57։

ընհաճ վերաբերմունքի փաստով, սակայն դրանից հարցի կարևորությունը չի նվազում և խնդրի սկզբունքային նշանակությունը չի կորչում: Աբովյանի համար իր ժողովրդի օրինակը՝ իբրև աշխարհի ամենաճնշված ժողովուրդներից մեկի՝ խիստ բնորոշ էր և հենց դրա համար էլ Աբովյանը առաջ է բերում ա՛յդ օրինակը:

Եթե մեկնաբանելու լինենք վերը առաջ բերած Աբովյանի տողերի իմաստը, ապա կտեսնենք, որ այնտեղ արտահայտված է մի խիստ կենսական գաղափար, ըստ որի եվրոպական պատմաբանները սովորաբար գլուխ խոնարհելով բիրտ ու կործանարար ուժի առաջ, միշտ էլ փառաբանել են զորեղ աշխարհակալներին, պատերազմներ հրահրող և աշխարհակործան արշավանքներ ձեռնարկող պետություններին, անարդարացի կերպով մոռանալով այն ժողովուրդներին, որոնք զենք են վերցրել և անհավասար կռվի մեջ մտել բարբարոս ուժերի դեմ, իրենց հերոսական պայքարով պատվար դարձել՝ և՛ իրենց և՛ հարևան ժողովուրդների համար: «Նա է խիկարես այր մեծագործ,— գրում է Աբովյանը,— ազգ մեծ, որ ի յորձանս բիւրատեսակ փորձանաց և վտանգաց, պահպանեաց զանձն, և ոչ կերակուր եղև համակործան հեղեղին»:[1]

Բայց հակառակ Աբովյանի այս ճշմարիտ հայացքին, եվրոպական պատմաբանները փառաբանել ու հռչակել են աշխարհներ քանդող «մեկ կալից կտրած հարամի» Չինգիզ-խանի, Թամուր Լանգի, Նադիր Շահի և այլն: Իր մի գրույցի[2] մեջ Աբովյանը Ալեքսանդր Մակեդոնացուն համեմատելով մի ծովահենի հետ, նրանց մեջ միայն մի տարբերություն է տեսնում. այն, որ ծովահենը փոքր ավազակ է, իսկ Մակեդոնացին մեծ ավազակ, որի համար և նրան փոխանակ ավազակ ասելու, անվանում են աշխարհակալ: «Պատմությունը մեծ մեծ ազգերի ա ղուլուղ անում»[3],— դառնությամբ արձանագրում է Աբովյանը:

Ժողովուրդների ինքնապաշտպանության համար մղած պատերազմի մեջ Աբովյանը տեսնում է բարոյական խոր իմաստ, հիմնված ամեն մի ժողովրդի գոյության պատմական և բնական իրավունքի վրա:

Ի հակադրություն նվաճողական պատերազմների ազատագրա-

---

[1] «Ի վերայ հայրենասիրութեան», տես Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, № 57:

[2] «Նախաշավիղ». Հայպետհրատ, Երևան, 1940 թ., էջ 87:

[3] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր երրորդ, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1948 թ., էջ 123:

կամ պայքարի մեջ է, որ ըստ Աբովյանի, ժողովուրդները դրսևորում են իրենց բարձր արժանիքները, անձնազոհ հայրենասիրություն, հերոսականություն՝ հատկություններ, որոնք բարոյական, դաստիարակչական մեծ իմաստ ունեն և կարող են մարդկության համար լինել ուսանելի։

Սակայն այդ չէ, որ շահագրգռում է եվրոպական պատմաբաններին, նրանք հեռու են այդպիսի ազնիվ շահագրգռություններից։ Նրանք անարդարաբար խոնարհվում են հզորների առաջ։ «Պատմությունը, անհավատարիմ պատմությունը հայի համար պապանձվել ա... ու էն ազգերին միայն գլուխ վեր բերի ու անարդարար, կեղծավորությամբ տակը մտնի, որ թագավորություն ունեն ու պատմություն գրողին կամ պարգև, կամ պատիժ կտան...»։ Այս զայրացուցիչ անարդարության դեմ, իբրև ցավոտ բողոքի արտահայտություն, Աբովյանը հաջորդ տողերում գրում է.

«Հարյուրավոր ազգեր ջնջվեցին, Հայք իրանց գլուխը մինչև էսօր էլ պահեցին, բայց ափսո՛ս, ինչի՞ չի աշխարհներ քանդեցին գազանի պես, որ պատմությունը լայաղ անի՝ նրան էլ իր դոշին կպցնի, նրանց էլ գրկի ու իր օթախը տանի»։[1]

Արևմտյան Եվրոպայի պատմաբանները և պատմական գիտությունը ծառայել են եվրոպական պետությունների նվաճողական ձգտումներին և այդ տրամաբանությամբ ղեկավարվելով նրանք փառքի լուսապսակով են զարդարել այնպիսի գլուխներ, որոնք փշյա պսակի էին միայն արժանի։ Նույնիսկ Աթիլլայի, Լենգթեմուրի և Չինգիզխանի պես արյունարբու աշխարհակալները չեն զրկվել այդ պատմաբանների շնորհից։ «Գազանաբարոյն Ատտելայ», «Կատաղին Չինգիզխան», «անկուշտ Թամուրլանգ», ահա թե ինչպես է որակում Աբովյանը նրանց, որոնց համար արևմտաեվրոպական պատմագրությունը իր բառապաշարում ունի «հանճարեղ զորավար», «մեծ աշխարհակալ» և այլն մեծարանքի խոսքեր։ «Մահաբեր ոտք նոցա,— գրում է Աբովյանը նույն անձանց մասին,— բարձին, ջնջեցին զերեսաց երկրի զամենայն գործս, մարդկան, որ շնչեցին դառն նոցա հոգիք»։ Եվ ապա՝ «Անապատ դառնայր, ուր ոտք նոցա մխէին»։[2] Ինչպես տեսնում ենք սրանք նույնպիսի որակումներ են, ինչ որ Աբովյանը գործ էր ածում արևմտա-եվրոպա-

---

1 Խ. Աբովյան. «Երկերի լիակատար ժողովածու», հատոր երրորդ, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1948 թ., էջ 305։

2 «Ի վերայ հայրենասիրութեան», տես Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի Գրական Թանգարան, Աբովյանի արխիվ, № 57։

կյան պետությունների նկատմամբ՝ Ամերիկայի և Աֆրիկայի ժողովուրդների հանդեպ գործ դրած նրանց բարբարոսությունների առթիվ։

Այսպիսով, Աբովյանի աշխարհայացքում հիմնական մի գիծ է անցնում՝ հանուն ազատության ու անկախության զենք վերցնողներին դրվատելու գիծը։ Բռնակալը հարազատ երկրի ու ժողովրդի թշնամին է, թե՞ մի այլ բռնադատված ժողովրդի ու երկրի, միևնույն է, դահիճ է նա, թշնամի մարդկային ցեղի, նրա մասին երկու կարծիք չի կարող լինել։ Այդպես էլ հայրենիքի ազատության համար մարտնչողները, ինչ ազգության էլ նրանք պատկանելիս լինեն, ինչ հայրենիքի զավակներ էլ նրանք հանդիսանան, Աբովյանի առաջ ներկայանում են նրանք հերոսական փառքի լուսապսակով, իբրև իսկական հերոսներ, իբրև մարդկության ազնիվ բարեկամներ։

* * *

Խիստ ուշագրավ են նաև Աբովյանի դիտողությունները արևմտա-եվրոպական գիտական մտքի մի քանի այլ կողմերի՝ նրա սահմանափակության, որոշ նախապաշարմունքներից զերծ չլինելու և գիտական էքսպերիմենտին թերահավատությամբ վերաբերվելու մասին։ Փորձի նկատմամբ արևմտա-եվրոպական գիտական մտքի որոշ ներկայացուցիչների թերահավատ վերաբերմունքը, գիտական մեթոդով որևէ խնդիր լուսաբանելու փոխարեն, հակագիտական դրույթների և առասպելաբանությունների առաջ խոնարհվելն ու դրանց տուրք տալը, ահա թե ինչպիսի երևույթներ է Աբովյանը դատապարտում։ Աբովյանին նման կարգի դիտողության առիթ է տվել Արարատի գագաթը բարձրանալու կապակցությամբ որոշ գիտնականների արտահայտած թերահավատ վերաբերմունքն ու կասկածները, որ հատկապես սուր բնույթ ստացավ Պարրոտի „Reise zum Ararat" գրքի 1834 թ. Բեռլինում հրապարակ գալու առնչությամբ։

«Գյոտինգյան գիտական հայտարարություններում» արտահայտված կասկածանքի և գերմանացի գիտնական Շոպենի՝ մամուլում ունեցած ելույթների կապակցությամբ է, որ Աբովյանը հարկ է համարում հանդես գալու, և ահա, 1835 թ. սկզբներին Պետերբուրգում եղած ժամանակ, տեղի գերմանական թերթում հրապարակում է իր «Նոր վկայություն պ. պրոֆեսոր Պարրոտի՝ Արա-

րատի գագաթը բարձրանալու մասին» հոդվածը, մի հոդված, որի նպատակն էր ցույց տալու այդ առթիվ Եվրոպայում եղած բոլոր կասկածանքների անհեթեթությունը:

Հոդվածի առաջին իսկ պարբերությունից մենք զգում ենք հեգնանքի խորքի մարտնչող տոնը: Կոնկրետ փաստից ելնելով Աբովյանն ընդհանրապես պայքար է հայտարարում ընդդեմ նախապաշարմունքների և սահմանափակության, որ անհամատեղելի է համարում առաջավոր եվրոպական գիտական մտքի հետ: Աբովյանը գրում է. «Եթե իմ հայրենակիցները չկամեցան հավատալ որ պ. քաղաքական խորհրդական Պարրոտը Արարատի ամենաբարձր գագաթն է բարձրացել, այդ ես վերագրեցի այն ավանդության, որ խոր արմատ է գցել նրանց սրտերում, ինչ որ նրանք պատմում են սուրբ նախահայր Հակոբի մասին: Առասպելը հայտնի է... բայց որ մի կրթված եվրոպացի կարող էր բարձրանալ ու ճշմարտության մասին կասկածել, ինձ համար խիստ անբացատրելի է: Սակայն, դժբախտաբար հայտնվեց, որ նույնիսկ զարգացած Եվրոպայում գտնվում են անձնավորություններ, որոնք դեռ ավելի ևս սնոտիապաշտ, սահմանափակ, կանխակալ կարծիքավոր են երևում, քան այն բնության պարզ մարդիկը»:[1] Ինչպես կարելի է եզրակացնել հետագա տողերից, այս հոդվածով Աբովյանը պատասխանում էր ոչ միայն Շոպենին և «Գյոտինգյան գիտական հայտարարությունների» հոդվածագրին, այլ, ըստ երևույթին, նաև այնտեղ, Դորպատում և Գերմանիայում այդ առթիվ գերմանացի գիտնականների շրջանում եղած կասկածանքներին ու թերևս իրեն, Աբովյանին ուղղված հանդիմանական խոսքերին: «Բայց թե կամենայի պատմել,— գրում է Աբովյանը,— թե ինչ տեսակ վիրավորանքներ կրեցի ես իմ ճշմարտության համար, ոչ միայն հայերից, այլ նաև **ուրիշներից**...» (ընդգծումը մերն է—Հ. Մ.): Անշուշտ այդ «ուրիշներին» նկատի ունի Աբովյանը, երբ գրում է. «Ուրեմն ես ասում եմ այստեղ, Պետերբուրգում, դրդված մաքուր զգացմամբ դեպի ճշմարտությունը, այո՛, ես հաստատում եմ ամբողջ Եվրոպայի առաջ, որ ես պ. քաղաքական խորհրդական Պարրոտի հետ երրորդ փորձի ժամանակ Արարատի գագաթն եմ բարձրացել...»: Եվ ապա. «Առանց իմանալու, թե գիտական Եվրոպան դրան ինչ արժեք կտա,

[1] «Դիվան Խ. Աբովյանի», Արմֆանի Հրատարակչություն, Երևան, 1940 թ., էջ 234:

Ասիայի խորքում ամենաերջանիկ մարդն էի, որովհետև գտնվեցի իմ նախնիքների վայրում»։[1]

Աբովյանի համոզմունքը կրթված և գիտնական եվրոպացիների սահմանափակության մասին ավելի ևս խորանում է, մանավանդ երբ նա տեսնում է հակառակ երևույթը իր հայրենիքում՝ հասարակ և համեստ որոշ անձերի մոտ։

«Որովհետև,— գրում է Աբովյանը,— այս վերջիններիս մեջ էլ կային անձնավորություններ, որ մեզ երջանիկ էին համարում անհասանելիին հասած և այնպիսի մեծ պատվի արժանացած լինելու համար։ Օրինակի համար, հիշում եմ սուրբ Հակոբի ծեր և բարեպաշտ վանահայր Կարապետին, որը չնայած ոչ գիտություն ուներ, ոչ էլ մի առանձին աշխարհափորձություն, այլ միայն շնորհիվ իր ուղիղ մտածողության, միանգամայն գրավեց մեր բոլորիս սրտերը»։[2]

Արևմտաեվրոպական գիտնականների նախապաշարմունքներին տուրք տալը մերկացնելու տեսակետից, խիստ բնորոշ է նաև հետևյալ փաստը։

Իր «Ամերիկու լիս բցիլը» աշխատության մեջ, առաջ բերելով Աֆրիկայի մասին եղած զանազան առասպելաբանությունները, Աբովյանը խստագույնս դատապարտում է նման անհեթեթ կարծիքների հավատացողներին, առաջադրելով փորձի միջոցով ճշմարտությանը հասու լինելու գիտական սկզբունքը, մի սկզբունք, որ Աբովյանի խոր համոզմունքով միշտ չի որ կիրառություն է գտնում արևմտաեվրոպական գիտնականների կողմից։ «Շատ մարդիկ էնպես էին կարծում, թե Աֆրիկա ոչ տուտ ունի, ոչ տակ, բայց էս կարծիք էր միայն ու կարծյաց հավատալ ու բանը մտքով չփորձել, կնշանակի իր ձեռքով աչքը կալնել։ Գնացողը չէր էլել, էկող չէր էլել։ Հին ժամանակից էդպես մեկ պառավի մասալա մնացել էր, թե Աֆրիկա պտտիլ չի կարելի ու լսողն էլ տաղ էր անում, բերանը սրբում։ Որն ասում էր, թե հենց մի քիչ առաջ գնա մարդ, գըլխին կրակ կթափի, կերի, որն ասում էր՝ վիշապ ու տասը գլխանի գազաններ մարդի սաղ սաղ կուլ են տալիս, որը՝ թե դժոխքը բերանը բաց, հազար վերստ տեղից նավերը քաշում, փորն է ածում, որն էլ թե ջամաղն էնպես ա բռնած, որ ղուշն իր թևովը չի կարող վրովը թռչիլ։

---

[1] «Դիվան Խ. Աբովյանի», Արմֆանի Հրատարակչություն, Երևան, 1940 թ., էջ 235։

[2] Տես նույն տեղը, էջ 234—235։

Էնպես դեռ չգնացած, չտեսած, ամեն մեկը իր տանը նստած մեկ երազ էր տեսնում։ Ի՞նչ ասես որ մարդիս չոր գոգրիցը դուս չի գա, բայց վայ նրան, որ էնպես ափսու չափսու խոսքերին կհավատա ու իր աստծու տված խելքը ջուր կանի հետը կխմի»։[1]

Աֆրիկայի մասին ստեղծված այդ պառավական զրույցների առնչությամբ, կծու կերպով ծաղրելով եվրոպական գիտությունն ու գիտնականներին, Աբովյանը առիթը չի փախցնում որպեսզի մի անգամ ևս իր ընթերցողներին հիշեցնի նույնպիսի պառավական նախապաշարմունքներից սնունդ առած տարակուսանքները Արարատի գագաթը բարձրանալու հարցի առնչությամբ։

«Մեկ էնպես բան էլ մեր երկրումն անց կացավ ու մինչև էսօր էլ շատ մարդ գլխապատառ, դոլթա՛լար չանա է տալիս, թե՝ չէ՛ կարելի, ցուրտն ու ձյունը մարդի կոտեն։ Բայց ո՛չ ցուրտը արջ ա, ո՛չ ձյունը վիշապ, առաջ փորձիր, խանխխարար— հետո նստիր տունդ պարապ»։[2]

Իհարկե ոչ պատահականորեն է Աբովյանը վերհիշում Արարատի գագաթը բարձրանալու հետ կապված նույն եվրոպացիների նույնքան անհիմն կասկածներն ու անհեթեթ կարծիքները. Նա անշուշտ ընդհանուր կապ է տեսնում այդ երկու իրարից անկախ փաստերի միջև, փաստեր, որոնք ապացուցում են եվրոպական գիտական մտքի որոշ ներկայացուցիչների խեղճությունն ու սահմանափակությունը, ընդդեմ որի Աբովյանը պայքարում է անհաշտ ու հետևողականորեն, հանուն ճշմարիտ գիտության և առողջ բանականության։

* * *

Աբովյանը խիստ շեշտված բացասական վերաբերմունք է հանդես բերել նաև եվրոպական ազգությունների վերնախավերի կենցաղի և նիստ ու կացի այլանդակ կողմերի նկատմամբ։ Ելնելով այն բնական սկզբունքից, որը քարոզում է թե մարդ որքան պարզ ապրի, այնքան ավելի հեռու կլինի ապականություններից և այնքան ավելի երջանիկ կլինի, Աբովյանը դաժան խստությամբ ձաղկում է՝ շռայլությունը, ժլատությունը, քեղխությունը, փառասիրությունը, դաժանությունը, գազանային կրքերը, արատներ, որոնք գերազանցապես լինելով անաշխատ կյանքի հետևանք, բնականա-

---

[1] Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», հատոր երկրորդ, Հայպետհրատ, 1940 թ., էջ 303։

[2] Տես նույն տեղը, էջ 303—304։

քար մեծ չափերով տեղ են գտնում իշխող վերնախավերի շրջաններում։

Մասսայական ընթերցողին նկատի ունեցող Աբովյանի «Զվարճալի ու կարճ պատմություններ» խորագիրը կրող գրքույկի բաժիններից մեկը վերնագրված է այսպես. «Գժություն, կատաղություն, տխմարություն, զվարճություն, զեղխություն, ժլատություն (նաքյաղություն)»։

Մարդկանց ի՞նչպիսի արարքներ է, որ Աբովյանը որակում է «գժություն, կատաղություն, տխմարություն» բառերով։ Հեղինակը այդպիսի բնութագիր է տալիս իշխանությունից և հարստությունից դաժանացած ու անբարոյականացած, պարապ և պորտաբույծ կյանքից հղփացած և անառակացած, շռայլության կամ ժլատության մեջ ծայրահեղության հասած մարդկանց։

«Զվարճալի ու կարճ պատմությունքը», ինչպես նաև «Պարապ վախտի խաղալիք» ու ժողովրդական ընթերցանության համար գրված մյուս գործերը Աբովյանը հորինում է այն նպատակով, որպեսզի ժողովրդին խելացի զրադմունքի միջոց տա։ Բնորոշ է այդ տեսակետից «Զվարճալի ու կարճ պատմությունքի» առաջին պարբերությունը։ «Պարապ մարդն էլ, աշխատավորն էլ՝ եթե փող ունի ու ժամանակ, կուզեն, որ մի քիչ ֆիքրները ցրվեն, կամ քեֆ անեն։ Առաջինն էնդուր համար՝ որ չգիտի՝ թե ինչպես իր ժամանակն ու փողը բանացնի, երկրորդը՝ չունքի շատ աշխատելուցը զորությունը հատնում ա։ Մինն կուզի, որ ժամանակը կորցնի, մյուսը՝ դհա ավելի զորություն ստանա, որ լավ աշխատի»։[1] Ինչ ենք տեսնում այնուհետև. որպեսզի հեղինակը աշխատավորին հնարավորություն տա «դհա ավելի զորություն ստանա, որ լավ աշխատի» և ամենագլխավորը՝ որպեսզի աշխատավորին օգնի հաստատ կանգնելու աշխատավորական կյանքի և դրա վրա խարսխված աշխատավորական ազնիվ ու բարոյական նիստ ու կացի, բնավորության, հոգեբանության և աշխարհայացքի դիրքերում, Աբովյանը հորինում է իր զրույցները, որոնց հերոսները գերազանցապես նրանք են, որ չգիտեն թե ինչպես իրենց ժամանակն ու փողը վատնեն, ուստի և ընկնում են ապականությունների գիրկը, այլանդակվում՝ կորցնելով իրենց մարդկային դեմքը։ Անաշխատ կյանքով ապրող վերնախավերի բացասական օրինակով Աբովյանը մարդկային կյանքի վերաբերյալ իր դրական հայացքներն է շարադրում, դրանով իսկ

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր չորրորդ, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1947 թ. էջ 55։

զգուշացնում աշխատավորությանը հեռու մնալ ապականություններից։ Սակայն, այս զրույցների մեջ ո՞րն է էականը, այն, որ հիշված բացասական երևույթները նա ցույց է տալիս դարձյալ եվրոպացիների մոտ, այն խոր համոզմունքով, որ վերոհիշյալ բացասական երևույթների բնորոշ և տիպական կրողները եվրոպացիք են։

Գրքի առաջին մի քանի էջերը հատկացնելով հռոմեական կայսրերի գժությունների և կատաղությունների նկարագրությանը, խստագույն կերպով դատապարտելով բարբարոսական ժամանակների գոռոզ արքաների և իշխանների վայրի վարքն ու բարքը, Աբովյանը անմիջապես անցնում է նոր ժամանակներին՝ «պատվավոր» տեղը հատկացնելով հատկապես Եվրոպային։ «Հիմիկ Եվրոպիուցը խոսանք»,— գրում է Աբովյանը և շարունակում իր պատմությունը։ «Գոռոզն Վալլենշտեյն՝ որ Ավստրիա թագավորի զորապետն էր ու երեսուն տարի նեմեցի երկիրը կռիվ տալով քանդեց, որ լյութերի հավատը կործանի ու կաթոլիկի օրենքը հաստատ պահի, չունքի նեմեցի շատ փայը լյութերական էր դարձել, էս զորապետը երբ իր գործը թողեց, էնպես տներ, ամարաթներ շինել տվեց, որ նմանը չկար։ Մենակ երեք հարյուր ձի ուներ գոմումը կապած, բայց ի՞նչ գոմ, մեկ հոյակապ ամարաթ։ Ախոռները մարմարից էր, միջումը շատրվաններ, տակը պղնձից շինած։ Վաթսուն ազնվական տղա, մախմուռ ու ոսկեթել շորերով զարդարված՝ նրա սուփրի վրա ղուլուղ պետք է անեին։ Հիսուն թիկնապահ սալդաթ նրա տան ղարավուլ էին... Բոլորն իր գլուխը շհանց տալու համար էր»[1],— եզրափակում է Աբովյանը։

«Էնպես բաներումը ինգլիզները դհա ղոչաղ են»,— քիչ ներքև ավելացնում է հեղինակը, բերելով օրինակներ նաև անգլիացիների կյանքից։

Լուսավորությունն ու կուլտուրան շատ էլ չեն մեղմել մարդկանց բարքերը, իշխանամոլությունը, փառասիրությունը, զեղխությունը շարունակում են մնալ իբրև իշխանավորների անբաժան ուղեկիցներ։ Քաղաքակրթությունը չվերացնելով հին դարերից ժառանգություն մնացած մոլությունները, իր հետ բերել է նոր տեսակի բարբարոսություններ։ Այս է Աբովյանի եզրակացությունը իր բերած փաստերից։

Ժլատությունը, բուրժուական կենցաղի այդ բնորոշ առանձնա-

---

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր չորրորդ, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1947 թ., էջ 60—61։

հատկություններից մեկը, նույնպես Աբովյանը մարդկային գծությունների կարգն է դասում: «Հիմիկ էլ նաքչաղության (ժլատության) գծերի վրա խոսանք»,— գրում է Աբովյանը: Իրենց այլանդակ, անբնական և անմարդկային արարքներով եվրոպացի ժլատության գծերը ոչնչով ետ չեն մնում շռայլության և զեղխության գծերից: Շների ձեռքից խլած ոսկորով սուպ եփող միլիոնատեր ժլատները իրոք որ խելագարներ են: Ժլատը նույնքան էգոիստ է, որքան շռայլը, վատնողը: Այդ երկու կրքերն էլ հակահասարակական բնույթ ունեն: Աբովյանը անգլիացի միլիոնատեր ժլատ Ժան Էլվեսին անվանում է «աղքատ մարդ»: Բերելով ժլատության բազմաթիվ օրինակներ, վերջում իբրև եզրակացություն, Աբովյանը գրում է. «Էսպես պետք է փող դատած, կարելի ա բաղի մարդ մաքամը ասի, բայց հարամ ըլի էն փողն էլ, էն կյանքն էլ, որ էսպես մարդ կունենա: Փող, աչքդ հող, մի դատիր ինչպես գող, այլ վաստակիր վայելիր, քեզ էլ պետք արի, այլոց էլ»:[1] Աբովյանի առաջադրած սկզբունքը բացահայտում է աշխատավորի արդար վաստակի և դրա ազնիվ վայելքի երջանկության հումանիստական բնույթը: Այդպիսի երջանկությունը ոչ թե ձեռք է բերվում ի հաշիվ ուրիշների դժբախտության, այլ հիմք է դառնում հասարակական բարեկեցության:

Աբովյանը ցույց է տալիս, որ այսպես կոչված լուսավոր ազգերի կենցաղում եղած որոշ դրական երևույթները հաճախ ծայրահեղության հասնելով ախտի բնույթ են ստանում՝ հանգելով իրենց հակադրությանը: Այդպես է, օրինակ, մաքրասիրությունը: «Ով ա լսել,— զարմացած հարցնում է Աբովյանը,— թե թամուզությունն էլ մարդի կզզվացնի. գինին, արաղը հեսաբի, ամա թամուզությունը, թամուզությունը»: Եվ Աբովյանը առաջ է բերում Էդմոնդ անունով մի հարուստ անգլիացու օրինակ: «Էս պատվելին,— գրում է Աբովյանը,— էնքան տուն ուներ բռնած քրեհով, ինչքան ամիսը օր ունի, այսինք երեսուն ու մեկ տուն: Ամեն տան թախտը ջոկ էր. շորից բռնած գնաս կառավաթը, յորղան, դոշակը, ծառերը, աշխանեն ու ինչ որ տանը հարկավոր ա: Օրը մեկ տուն էր փոխում. շորերը հո՝ օրը հինգ վեց անգամ: Առավոտը կանուխ՝ վարդաջրով իրան լավ լվանալ էր տալիս ու անուշահոտ կնդրկով խնկով ծուխ տալ տալիս. հետո գնում էր բաղը ման գալու, չունքի ամեն տուն մեկ բաղ էլ պետք է ունենար. ուր հովը նրա թեթև շորերի մեջը

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր չորրորդ. ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1947 թ., էջ 66—67:

պետք է մտներ ու նրան հովացներ։ Ջմեռը չունքի էլ բաղը չէր կարող գնալ, ծառեքն էին նրան՝ փուքսն առած՝ հով տալիս։ Մեկ նուրբ քող ունեը շորերի վրա հաքած, որ վրեն թող չի նստի։ Առավոտը նհար անելիս՝ չայը մեկ ոսկե լուլով էր ծծում, որ թող չի մտնի բողազը։ Էստուց եդը կարդում էր։ Գրքերն էլ թամուզության վրա էին խոսում, որ էլի առաջ ծուխ էր տալ տալիս, հետո ձեռն առնում։ Ամեն ճաշի ութ տեսակ կերակուր էր նրա կերածը։ Ամեն մեկ կերակուրը՝ մեկ ջուկ օթախում էր ուտում։ Հենց մեկն ուտում պրծնում էր, տեղիցը վեր էր կենում, ձեռները լվանում, բերանն ողողում։ Էսպես ութ անգամ էս հանդեսը կատարում էր։ Էստուց հետո էլի իր քողը քցում, պարկում էր։ Դոշակը փուշկից էր շինած ու խատակ օդով լիքը։ Վեր էր կենում թե չէ, էլի շորերն էր սկսում փոխիլ։— Մոտը էկողիցը հեռու էր կանգնում, ու քողը քցած՝ նրա միջովն էր հետը խոսում, որ իրան շունչ չի դիպչի։ Ամեն մեկ դուրս գնալիս՝ պետք է լողանար»։

Հետևյալ տողերի մեջ Աբովյանը բացահայտում է այդ հիրավի տխմար անգլիացու «մաքրասիրության» ողջ անհեթեթությունը։ «Էլի էնպես մի իմացեք,— գրում է Աբովյանը թունավոր սարկազմով,— թե հազար տարի ապրեց, հիսուն տարուց եդը մեռավ։

Մեր գեղըցոնց շատը հարյուր տասը, հարյուր քսան տարի էլ են ապրում ու կերածները, հաքածները հայտնի ա, թե ի՞նչ ա ու ի՞նչ աշխատություն ունեն»։[1]

Տեղին է այստեղ նկատել, որ Աբովյանը «լուսավոր» ազգերի կուլտուրական համարվող կենցաղի քննադատությունը առաջ է տանում տեղական ժողովուրդների պարզ ու բնական նիստ ու կացի և մարդկային սովորությունների ու բարքերի հակադրության միջոցով։ Այդ հակադրությունը, ինչպես այս դեպքում, խիստ կերպով ընդգծում է բուրժուական բարքերի այլասերվածությունն ու անկումը, մարդու էության այլանդակ աղավաղումը։

Իբրև «լուսավոր» ազգերի բարքերի այլասերման և աղավաղման ցայտուն օրինակ, Աբովյանը մատնանշում է «կուլտուրական» կենցաղով ապրող ընտանիքներում շատ տարածված «շան սերը»։

«Խոզը ինչ կասի,— գրում է Աբովյանը,— որ իմանա թե լուսավորյալ մարդիքը շան համար էլ են խարջ ընկնում։ Լող՝

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր չորրորդ, ԳԱ. Հրատարակչություն, Երևան, 1947 թ., էջ 63։

ի՞նչ ես կարծում, ինչ կուզե, որ անգին շուն ըլի, մեր միջումը ո՞վ նրան տասը մանեթ կտա կամի...: Ամա հիմիկ անկաչ անենք, թե շները ի՞նչ թագավորություն են անում»: Եվ այնուհետև Աբովյանը եվրոպական բազմաթիվ ազգերի կյանքից «շների թագավորության» օրինակներ է բերում, ապացուցելով, որ աշխատավոր մարդկանց լլկող եվրոպական «լուսավորությունն» ու «պրոգրեսը» շների նկատմամբ հովանավորողի դեր է հանձն առել, այնպես որ, ոչ թե հասարակ մարդիկ, այլ հաճախ նույնիսկ իշխաններ, կարող են նախանձել «ազնվական» շների բախտին:

«Մեծ Ֆրիդրիխ Պրուսիո թագավորը,— գրում է Աբովյանը,— մեկ սիրեկան շուն ուներ, որ սատկեց, վրեն մարմարից քար քաշել տվեց: Հերցող Ռեխմոնդի շների ամարաթը վաթսուն հազար մանեթ նստեց: Բեդֆորդ իշխանի շների ամարաթը՝ չորս հարյուր հազար մանեթ: Թալբեյ իշխանի շների ամարաթը մեկ մեծ քաղաքի չափ կա. էնքան շուն ու էնքան նոքար կա մեջներումը: Շատ մեծ գրաֆ, իշխան, էնպես տուն չունի: Մեկ ֆրանցուզի իշխանի աղջիկ, շունը որ սատկեց, սուգ նստեց ու ծանոթ, բարեկամք գնացին մխիթարելու»: Բնորոշ է սակայն հետևյալ օրինակը. «Մեկ նեմեցի իշխանի աղջիկ էլ՝ էնքան էր սիրում իր շներին, որ նրանց համար ջոկ մատուռ էր շինել տվել: Շունը սատկելիս՝ դագաղով, պատվով էին տանում, թաղում: Մեկ օր սրա մեկ շունը սատկեց, ու իր ղարավուլների մեկը սուգ չէր անում վրան: Ասեղն առավ, նրա միտը ծակծկեց, ու տեղը վառած զմուռ ածեց, որ էրվի, կսկծա: Հայտնի բան ա, որ ողորմելին սուգի տեղ, ոտներն էլ էր քարերին ծեծում, գլուխն էլ, ամա էլ անկաչ անող չի կար»:[1]

Այսպես «քաղաքակրթված» «քնքշասիրտ» իշխանուհին, որ օրերով սգում էր իր սիրելի շան դիակի վրա, կարող է գազանային կատաղությամբ խոշտանգել իր անմեղ աղախնի մարմինը: Ասա թե «լուսավորյալ» ազգերի «հումանիզմը» ինչ այլանդակ արտահայտություն է ստացել: Աբովյանին այս բոլորից հետո ոչինչ չէր մնում անելու, քան զայրույթով գոչելու. «Էս էլ քո լուսավորված, ուսումն առած մարդը: Ի՞նչ ուսումն, որ մարդի սիրտը դժոխք կլի»:

Վերը տեսանք, թե ինչպես Աբովյանը մերկացնում է Հռոմի Պապի և կաթոլիկ հոգևորականության աշխարհակալական ձգտումները: Պետք է նկատենք սակայն, որ Աբովյանը նույնպիսի

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր չորրորդ, ԳԱ Հրատարակչություն, 1947 թ., էջ 63:

խստությամբ դատապարտում է կաթոլիկ հոգևորականության և նրա պարագլխի՝ Պապի կենցաղը՝ ներկայացնելով նրանց մերթ որպես եկեղեցու մասունքները վաճառքի առարկա և շահույթի աղբյուր դարձնողների, մերթ որպես վայելքների և զվարճությունների հետևից ընկած պարապ ու պորտաբույծ մարդկանց և մերթ որպես անառակների: Վատթարագույնը, սակայն կաթոլիկ հոգևորականության մեջ, որպես հարստահարողի, սորի ու անբարոյականի, իրեն աստուծո փոխանորդ հռչակող Հռոմի Պապն է:

Աբովյանի դորպատյան օրագրերում պատահում ենք այսպիսի տողերի. «Յառաւօտուն զրոյց ընդ Բլումբերգի. նա պատմէ վասն Պապին Ալեքսանդրիա. 40 բող սիրահարք նորա. Նկրտպայցի մի հանդիպի ի փողոցսի Հռովմայ, զի վաճառեն անդ զանազան նշխարք ընդ որոց և թեյ ինչ հանդերձ գրութեամբ Պապին և կնիքով (իբրև զկապս զփղպայից սրբոյ կուսին). «Թէ որ գայս թել գնէ աղջիկ կամ կին, պառաւ կամ օրիորդ, թողեալ լիցին մեղք նորա, եթէ նա պղծեալ իցէ ընդ մարդոյ, ընդ քրիստոնէի, թէ ընդ հեթանոսի, թէ ընդ մահմեդականի և թէ ընդ անասնոյ»: Աբովյանի պատկերմամբ Հռոմի Պապի ռեզիդենցիան՝ Վատիկանը բառիս կատարյալ իմաստով անառակության և ամեն տեսակի պղծությունների ու խայտառակ արարքների վայր է: «Հռոմի փափին» ծանակելու ոչ մի առիթ Աբովյանը բաց չի թողնում, իսկ առիթներ հեղինակը գտնում է: Իր «Զվարճալի ու կարճ պատմությունը» երկասիրության մեջ, Աբովյանը ունի այսպիսի մի անեկդոտանման գրվածք. «Մեկ գիտուն մարդ մեկ կաթոլիկ եպիսկոպոսի հարցրեց, թե ի՞նչ տեղ չկա աստված: Եպիսկոպոսը հայտնի բան ա, որ նրա խոսքի վրա ծիծաղեց ու ասաց. «Աստված ամեն տեղ ա»: «Բաս Հռոմ ընչի՞ համար ա Քրիստոսի տեղը փափը նստում, մալըմ ա, որ էնտեղ Աստված չկա, որ տեղակալն ա բանը յոլա տանում»:[1]

Դարձյալ Հռոմի Պապի վերաբերյալ Աբովյանն ունի այսպիսի մի զրույց:

1586 թվին Փիլիպոս թագավորն Շպանիո Հռովմա փափի մոտ մեկ երիտասարդ մեծավոր ուղարկեց՝ որ նրա փափությունը շնորհավորի: Փափը շատ անբավական էր իր միջումը, որ էնպես անմիրուք մարդ էին ուղարկել և հարցրեց դեսպանին: Միթե՞ ձեր թագավորը մեկ իմաստուն և խելոք մարդ չուներ, որ քեզ անմիրուք տղային ա ինձ մոտ դեսպան առաքել:

---

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր չորրորդ, ԳԱ Հրատարակչություն, 1947 թ., էջ 77:

Թե իմ Թագավորն իմանար՝ պատասխանից գոռող Շպանացին, թե խելքը և իմաստությունը միմիայն միրուքումն ա՝ ապա քեզ մոտ չէ, թե ինձ, այլ մեկ մեծ էծ կուղարկեր՝ որ քո սրբության տեսությունը վայելի»։[1]

* * *

Այն բոլորից հետո, ինչ որ ասվեց, թվում է թե լիակատար պարզորոշությամբ դրսևորվում է Աբովյանի վերաբերմունքը Եվրոպայի և եվրոպացիների հանդեպ։ Այժմ մեզ համար պարզ է դառնում, թե ինչո՞ւ է Աբովյանը տեղական ժողովուրդներին զգուշացնում եվրոպացիներից և թե ի՞նչով է պայմանավորված Աբովյանի երկերում արտահայտություն գտած տեղացիների բնազդական երկյուղն ու անվստահությունը դեպի եվրոպացին։ «Նրանց սիրտը ուրիշ ա, մերը ուրիշ»,— գրում է Աբովյանը «Վերք Հայաստանի»-[2]ում, ընդգծելով եվրոպացիների և տեղացիների հոգեբանության, աշխարհայացքի, կյանքի ու կենցաղի հակադիր լինելը։ Դարձյալ «Վերք»-ում Աբովյանի արած այն բազմիմաստ արտահայտությունը թե՝ «Եվրոպա չի, որ կովը վեր քաշեն, տեսնեն՝ տակին հորթ կա՞, թե՞ չէ»[3] նույն այդ հակադրության մոմենտն է շեշտում։ Հիշենք վերջապես «Թուրքի աղջիկը» ակնարկի հայտնի փաստը, երբ Թրքուհին եվրոպական զգեստ հագած հեղինակից խուսափում է նրան եվրոպացու տեղ դնելով, ու Թրքուհու տարակուսանքը փարատելու համար հեղինակը ասում է. «Բաջիմ... հայ եմ, եվրոպացի չեմ, քո երկրացի, քո համշարի, մեկ հողի, մեկ ջրի որդի»։[4]

Այդ բոլորից հետո մի՞թե հասկանալի չէ Աբովյանի զայրույթը՝ արժանապատվությունից և ինքնագիտակցությունից զուրկ այն անձանց դեմ, որոնք ստրկաբար խոնարհվում են Եվրոպայի առաջ, ամեն բանում գերադասություն տալով Եվրոպային ու եվրոպականին, անտեսելով սեփական ժողովրդի արժանիքները։ «Հենց բերաններս բաց ենք անում,— գրում է Աբովյանը,— առակ ենք ասում, ուրիշ լեզվից ա, օրինակ ենք բերում, նմանապես, հենց ասում ենք «Եվրոպա, Եվրոպա», բայց մեր վրա խոսելիս, Աստված

---

1 Խ. Աբովյան, «Նախաշավիղ», Հայպետհրատ, 1940 թ., էջ 62։

2 Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր երրորդ, ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1948 թ., էջ 65։

3 Տես նույն տեղը, էջ 34։

4 Տես նույն տեղ, էջ 26։

հետու տանի, ի՞նչ չենք ասում. բաս մեր երեխեն մեզ կսիրի՞։ Բաս աղքի սրտումն էլ բարի նշան կմնա՞»։[1]

Ամեն բանում եվրոպականին գերադասություն տալը, Եվրոպայի առաջ խոնարհվելը, Աբովյանի կարծիքով ոչ թե իբրև մի երկրորդական խնդիր, յուրաքանչյուրի անձնական գործն է՝ թելադրված նրա անձնական ճաշակով, այլ դա յուրաքանչյուր ժողովրդի արժանապատվության, նրա քաղաքական, տնտեսական և կուլտուրական շահերից բխող խնդիր է, որի հանդեպ անհոգությունն ու անտարբերությունը, մեղմ ասած, հարազատ ժողովրդի շահերի նկատմամբ իներտ ու անտարբեր լինել կնշանակի։ Եվրոպայի հանդեպ ստրաքարշություն անողը, Աբովյանի արդարացի կարծիքով, իր ժողովրդի թշնամին է, որովհետև Եվրոպայով ու եվրոպականով կուրորեն հիացողը, նախ և առաջ կուրորեն անտեսում է իր ժողովրդի արժանիքները, հակվում ամեն բանում վատը տեսնել, ամեն ինչ վատ կողմից մեկնաբանել։ Իսկ նման հայացք, երբ մանավանդ այն դառնում է հասարակական հոգեբանություն, Աբովյանի խոր համոզմունքով, ունենում է իր կործանարար հետևանքները, հուսահատեցնում է ժողովրդին, կաշկանդում նրա ուժերը, արգելակում նրա առաջխաղացումը։ Խնդրին նայելով մանկավարժական տեսակետից, Աբովյանը այն կարծիքն է հայտնում, «որ վատ մարդին գովելով կարելի է լավացնել, բայց լավին՝ վատացնել»։ Այս է, որ Աբովյանի կարծիքով շատերը չեն գիտակցում և չգիտակցելով, հաճախ ոտնահարում են իրենց ժողովրդի շահերը, արգելակում նրա զարգացումը, նրա հոգևոր անբավ հարստությունների դրսևորումը։

Աբովյանի զգոն քննադատական վերաբերմունքը դեպի եվրոպական պետությունների էքսպանսիվ ձգտումները՝ դեպի եվրոպական գիտությունն ու կուլտուրան, մյուս կողմից նրա բարձր կարծիքը ռուս ժողովրդի և նրա կուլտուրայի, ինչպես նաև հարազատ հայ ժողովրդի բարձր արժանիքների մասին, չափազանց մեծ կարևորություն է ստանում, ոչ միայն պատմական այն ժամանակաշրջանի համար, երբ ապրել ու գործել է մեծ լուսավորիչը, այլև այսօր, մեզ համար, երբ այնքան ակտուալ է պայքարը ռեակցիայի պատվար դարձած Ամերիկայի և Եվրոպայի դեմ, նրանց նեխված և անկում ապրող կուլտուրայի դեմ։

---

1 Խ. Աբովյան. «Երկերի լիակատար ժողովածու». հատոր չորրորդ. ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1947 թ., էջ 99։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱԲՈՎՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1

Ինչպես բոլոր դեմոկրատ լուսավորիչները, այնպես էլ Խաչատուր Աբովյանը գրական-հասարակական ասպարեզ է դուրս եկել հին ու խավար ֆեոդալական կարգերի քննադատության և նոր ու լուսավոր կարգերի և ժողովրդի շահերի պաշտպանության նշանաբանով: Ամենից ավելի ժողովրդասեր լուսավորիչների նման, Աբովյանի գործունեության ծրագրի մեջ, ի թիվս կուլտուր-լուսավորական այլ խնդիրների (լեզու, դպրոց, գիտություն և այլն) հիմնական տեղ է գրավել նաև գրականությունը ժողովրդայնացնելու, այն՝ լայն մասսաներին հասկանալի ու հարազատ դարձնելու հարցը: Վերջինիս լուծման մոտեցումն է, որ Աբովյանին բերել է դեպի ժողովրդի բանավոր գեղարվեստական ստեղծագործությունը: «Վերք Հայաստանի»-ի նշանավոր առաջաբանում, մենք այդ առթիվ կարդում ենք հետևյալ բնորոշ տողերը. «... Շատ անգամ որ ղոնաղ էի գնում, յա քաղաքումն անց կենում, ուշ ու մութը հավաքում էի, թե տեսնիմ խալխը խոսալիս, քեֆ անելիս, ի՞նչ բանից ա ավելի հազ անում: Շատ անգամ տեսնում էի, որ մեյդանում, փողոցում մեկ քոռ աշըղի էնպես են հալիլ-մալիլ մնացել ու կանգնել՝ ականջ դնում, փող բաշխում նրան, որ բերնըների ջուրը գնում էր: Մեջլիս ու հարսանիք հո՝ առանց սազանդարի ե՞րբ հացը կուլ կերթար: Ասածներս Թուրքերեն էր, շատը մեկ բառ էլ չէր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր դրախտը, ետ գալիս: Մի՛տք արի, մի՛տք արի, մեկ օր էլ ասեցի ինձ ու ինձ. արի՛ քո քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն

ծալի՛ր, ղրաղ դի՛ր. ու մեկ աշըղ էլ դու դառ, ինչ կըլի, կըլի, խանչալից քարը հո վեր չի՛ ընկնիլ, գառ վարաղըդ հո չի՛ գնալ»:[1]

Ժողովրդական բանահյուսությունը Աբովյանի ուշադրությունը գրավել է, նախ և առաջ, իր հասարակական-գաղափարական բովանդակության համար: Բանահյուսության մեջ նա տեսել է ժողովրդի հոգևոր կյանքի ու մտածելակերպի ճշմարտացի արտացոլումը: Իր «Քրդեր» վերնագրով ուշագրավ ազգագրական հոդվածում, խոսելով քրդական ժողովրդական երգերի մասին, նա այդ երգերը «թանգարժեք» է համարում, որպես այն ստեղծող ժողովրդի «հոգևոր կյանքի և մտածելակերպի արտահայտություն»:[2] Բնական է, որ Աբովյանը այլ կարծիք չէր կարող ունենալ նաև իր հարազատ ազգի ժողովրդական երգերի, ինչպես նաև նրա բանավոր ստեղծագործության մյուս տեսակների ու ժանրերի մասին:

Ժողովրդական ստեղծագործության մեջ Աբովյանը, այնուհետև, տեսել է ժողովրդի հայրենասիրական ոգու անդրադարձումը, մասսաների մեջ հայրենասիրության կրակը միշտ բորբոք պահելու նրա հատկությունը: Բնորոշ է այս առումով, «Վերք Հայաստանի»-ի մեջ՝ Հայկի ու Բելի, Արայի ու Շամիրամի, Տիգրանի ու Աժդահակի առասպելների հիշատակման փաստը, իբրև հայ ժողովրդի բուռն հայրենասիրության և նրա ազատասիրական ոգու բանահյուսական կենդանի արտահայտությունների:[3]

Սակայն, ժողովրդական բանահյուսությունը Աբովյանի համար միայն հասարակական-գաղափարական տեսակետից չէ որ նշանակալից է եղել: Նա ըստ արժանվույն կարողացել է գնահատել նաև այդ բանահյուսության արվեստը: Այսպես, օրինակ, մի տեղ խոսելով ժողովրդական երգիչների ու աշուղների ստեղծագործությունների մասին, Աբովյանը գրում է. «Այդ ասիական տրուբադուրների բանաստեղծական ստեղծագործությունները իրոք արժանի են հատուկ ուշադրության և բավարարում են ամենախիստ քննադատության պահանջները»:[4] Մի ուրիշ տեղ նա բարձր գնահատական է տալիս երկու անվանի հայ աշուղների, նրանց բանաստեղծական մեծ տաղանդի ու վարպետության համար: Նա գրում է. «Մի Քեշիշ-օղլի (քահանայի որդի), մի Ալլահվերդի (Աստվածա-

---

[1] Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», խմբագրությամբ Ռ. Զարյանի, հատոր Ա., Երևան, Պետհրատ, 1939 թ., էջ 9:

[2] Х. Абовян, Курды, «Кавказ», 1848, стр. 47.

[3] Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», հատոր Ա, էջ 67:

[4] Տես՝ նույն «Курды» հոդվածը:

տուր) հանճարներ են եղել, որ մի ժողովրդի գրական փառք ու պատիվ կերտեին»:[1]

Աբովյանի խոր համոզմամբ ժողովրդական բանահյուսությունը կարող է դառնալ և պետք է դառնա գրականության կենսատու աղբյուրներից մեկը: «Գրականության համար չափազանց արժեքավոր գանձ կլիներ եթե մեկը ժամանակ և միջոցներ ունենար հասարակ ժողովրդի բազմազան երգերը, պատմությունները, անեկդոտներն ու առակները հավաքելու»[2],— գրում է նա այդ առթիվ:

Նման հայացք ունենալով, ահա, ժողովրդական ստեղծագործության մասին, և հիմնական մեկնակետ ընդունելով վերջինիս լայն մասսաների համար հարազատ լինելու կարևոր հանգամանքը, Աբովյանն իր գրական ստեղծագործության մեջ համարձակորեն և վստահ կերպով դիմում է ժողովրդական բանահյուսությանը:

2

Ժողովրդական բանահյուսության հետ առնչվող Աբովյանի գրական գործերից են նրա առակները, որ տեղ են գտել հեղինակի՝ «Պարապ վախտի խաղալիք» հայտնի ժողովածուի մեջ, ինչպես նաև նրա «Նախաշավիղ» վերնագրով դասագրքում: Թե՛ իրենց ժանրային ընդհանուր նկարագրով և թե՛ սյուժեներով ու գործող անձանցով դրանք հիշեցնում են ֆոլկլորի համանուն ստեղծագործությունները: Ժողովրդական առակների նման դրանք՝ կենդանիների, բույսերի և մարդկանց կյանքը, վարքն ու բարքը պատկերող հորինվածքներ են, սյուժետավոր փոքրիկ զրույցներ կամ պատմվածքներ: Ժողովրդական առակների նման Աբովյանի առակները ևս այլաբանական ստեղծագործություններ են: Նրանց մեջ, ինչպես և բուն ժողովրդական առակներում զուգահեռ է անցկացվում կենդանիների ու մարդկանց բնավորության, վարք ու բարքի միջև: Կենդանիների կամ բույսերի կյանքը պատկերող սյուժեն, այստեղ, ծառայում է իբրև իլյուստրացիա այս կամ այն բարոյական, սոցիալական խրատի համար: Կենդանիների և բույսերի միջոցով, Աբովյանը իր առակներում ժողովրդական առակաբանների նման ցուցադրում է՝ դասակարգային հարաբերությունները, մարդկանց բնա-

---

1 Խ. Աբովյան, «Նախաշավիղ», Երևան, 1940 թ., առաջաբանով և ծանոթ. Ռ. Զարյանի, էջ XLIII:

2 Խ. Աբովյան, «Նախաշավիղ», էջ XLIII:

վորությունը, նրանց կրքերն ու ձգտումները. և ցուցադրելով՝ ձաղկում, ծաղրում ու խարազանում է մարդկային և հասարակական այլանդակությունները։

Հիշյալ նմանությունների հետ մեկտեղ, Աբովյանի առակները ժողովրդականի համեմատությամբ ունեն և նկատելի տարբերություններ։ Մինչդեռ ժողովրդական առակները իբրև օրենք արձակ ստեղծագործություններ են, Աբովյանի գործերը գրված են չափածո և հանգավոր խոսքով։ Այնուհետև, մինչդեռ ժողովրդական առակներում վերջիններիս բարոյախոսությունը արտահայտվում է գլխավորապես անուղղակի կերպով, եզրակացվում կամ հասկացվում է ինքնաբերաբար, Աբովյանի մոտ առակի բարոյախոսականը ընդգծված ձևով և առանձին դրվում է նրա վերջում, իսկ երբեմն էլ սկզբում կամ առակի մեջ։ Վերջապես, մինչդեռ ժողովրդական առակները առանց բացառության սյուժետային մի ամբողջական կորիզով և միասնական կառուցվածքով ստեղծագործություններ են, Աբովյանի առակների մեջ կան գրական և բանահյուսական տարբեր մոտիվներից ու տարրերից կառուցված, այսպես ասած, կոմպիլյատիվ բնույթի ստեղծագործություններ։

Իբրև օրինակ, վերցնենք «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուի հենց առաջին առակը, որ կրում է՝ «Էս գրքի ճամփի խրատը» վերնագիրը, և որը տիպական է ստեղծագործական այն մեթոդի բնութագրման տեսակետից, որ կիրառել է հեղինակն իր գործերի զգալի մասի նկատմամբ։

Իր «Էս գրքի ճամփի խրատը» առակի մեջ Աբովյանը բոլորովին ինքնուրույն մի թեմայի համար օգտագործել է մի ժողովրդական ասած («Աշխարքի բերան չվալի բերան»), մի ասացվածք («Խոսողին էլ՝ միշտ հասկացող պըտի») և մի արձակ անեկդոտ (Իշով ճանապարհ գնացող հոր և որդու առակը)՝ ստեղծելով ուրույն բարոյախոսությամբ մի գործ, որի մեջ բացահայտված է հեղինակի խորը մտահոգությունը՝ ժողովրդին հասկանալի լեզվով գիրք գրելու անհրաժեշտության մասին։

Աբովյանի «Էս գրքի ճամփի խրատը» գրվածքը, առականման, չափածո, հանգավոր մի պատմվածք է, որն իր ամբողջության մեջ չունենալով համապատասխան բանահյուսական բնագիր, իր առանձին տարրերով և ընդհանուր ոգով սերտորեն առնչվում է ժողովրդական ստեղծագործության հետ և հարազատ ու համահնչուն է վերջինիս։

Ստեղծագործական նույն մեթոդով է հորինված նաև «Պարապ

վախտի խաղալիք» ժողովածուի «Ծառերն ու կացինը» առակը, որը բնորոշ է հատկապես Աբովյանի սոցիալ-դասակարգային նկրտումների տեսակետից։ Առակը ամենայն հավանականությամբ գրված է՝ «Ծառը գանգատ գնաց Աստծու մոտ կացնի ձեռիցը, ասաց՝ կոթը քեզանից ա» հայտնի առածի կամ սրա նախամայր համապատասխան առակի հիման վրա, ուր Աբովյանը կոչ է անում իր ժողովրդին զգաստ ու զգույշ լինելու ներքին թշնամիներից՝ բռնությունից ու հարստահարությունից ազատ լինելու համար։ Ընդարձակելով հիշյալ առածը կամ առակը և չափածո, հանգավոր ձևով պատմելով իր նյութը, Աբովյանը հատկապես ընդգծել ու սրել է նրա գաղափարական էությունը հանդիսացող վերոհիշյալ մոմենտը, ընդհանրացման բնույթ տալով դրան։

«Թող իմացողը ինքը իմանա,
Ու նհախ տեղը կացնի կոթ չտա,
Թե չէ սկիզբը իրան կկտրի,
Հետո փոշմանիլը բանի պետք չի»։

Ժողովրդական առածների նմանողությամբ գրված ինքնուրույն գործերի հետ, Աբովյանը ունի նաև հայ, ռուս և այլազգի նշանավոր առակախոսներից թարգմանված ու փոխադրված գործեր ևս։ Վերջիններս, նրա ինքնուրույն ստեղծագործությունների պես աչքի են ընկնում ժողովրդական-ազգային առակների հետ իրենց ունեցած մոտիկ նմանությամբ։ Հիշյալ հանգամանքը պատահական բնույթ չունի. այն եղել է Աբովյանի հատուկ ուշադրության առարկան։ «Թարգմանածներս էլ էնպես եմ դուրս բերել, որ մեր խալխի սրտովն ըլի»[1],— գրում է նա այդ առթիվ։ «Ռուսերենից, գերմաներենից, ֆրանսերենից ինչ էլ թարգմանում էր, լեզուն այնպես էր փոխում, որ մեր խալխի սրտովն ըլի, այսինքն հայերեն լինի ոչ միայն բառերով, այլև հոգով, իմաստով»[2],— պատմում է Աբովյանի աշակերտներից մեկը իր հուշերում նույն կապակցությամբ։ Այս առումով հատկապես բնորոշ է ռուս նշանավոր առակագիր Ի. Ա. Կռիլովի «Գայլն ու գառը» հայտնի առակի փոխադրությունը։ Աբովյանի թարգմանած ու փոխադրած մյուս ա-

[1] Խ. Աբովյան, «Պարապ վախտի խաղալիք»-ի «Հառաջաբան»ից, Ընտիր երկեր, հատ. Բ., էջ 390։

[2] «Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին», կազմեց և ներածականները գրեց՝ Հր. Մուրադյան, Երևան, 1941 թ., էջ 112։

առակների նման և դրանցից ավելի այն մոտիվից հիշեցնում է ժողովրդական առակների ոճով ու ոգով գրված նրա ինքնուրույն ստեղծագործությունները: «Գայլն ու գառը» առակի թարգմանության կապակցությամբ ավելորդ չենք համարում շեշտել մի հանգամանք, որը որոշ լույս է սփռում Աբովյանի ստեղծագործության սոցիալական նպատակասլացության հարցի վրա: Բավական հարազատորեն վերարտադրելով ռուս նշանավոր առակախոսի գըրվածքի բովանդակությունը, Աբովյանը նկատելիորեն ուժեղացրել է վերջինիս բարոյախոսական սկվածքի սոցիալական իմաստը, ընդգծելով այն հանգամանքը, որ թույլերը ոչ միայն մեղավոր են դուրս գալիս ուժեղների առաջ, ինչպես կա Կռիլովի մոտ, այլև անխնա կերպով հարստահարվում են նրանց կողմից, ենթարկվում ֆիզիկական տանջանքների ու գանակոծության:

Կռիլովի առակի մեջ ասված է.

„У сильного всегда бессильный виноват:
Тому в Истории мы тьму примеров слышим,
Но мы Истории не пишем:
А вот о том как в Баснях говорят“.

Նույն տողերը Աբովյանի փոխադրություն-թարգմանության մեջ այսպես է.

«Ով զոռ ունի, հենց անճարի գլխին
Է քացի տալիս, հանում աչքն ու հոգին:
Իր արած մեղքն էլ նրա վզին դնում.
Օրինակ շատ կա էս մեր աշխարքում»:

3.

Ժողովրդական բանահյուսության ոճով գրված Աբովյանի ստեղծագործություններից են նրա մի շարք երգերն ու խաղերը: Վերջիններիս մասին խոսելիս Աբովյանը գրեթե միշտ հիշատակում է բանահյուսական և աշուղական այն ստեղծագործությունների ու դրանց հեղինակների անունները, որոնց նմանությամբ ինքը հորինել է իր գործերը: Այսպես, օրինակ, ժողովրդական բայաթիների ձևով գրված իր երգերի համար նա գրում է. «Բայաթի», «Բայաթու ձայնով»: Աշուղական խաղերի ձևով գրվածների համար Աբովյանը

գրում է՝ «Քեշիշ-օղլու գոմով», «Աշըղ Ղարիբի հանգով»: Այս կարգի գործերից են՝ Աբովյանի «Աղասու խաղը» վերնագրով ժողովրդական բառ ու բանով համեմված ու ոճավորված ընդարձակ գործը, «Վերք»-ի մեջ տեղ գտած չափածո մի քանի կտորները և այլն:

Ինչպես առակներ գրելիս, այնպես էլ այստեղ Աբովյանի հիմնական նպատակն է եղել ստեղծել «խալխի» համար օգտակար ու հասկանալի, նրա գեղարվեստական ճաշակին համապատասխան գրականություն: Հիշյալ երգերն ու խաղերը գրելիս, նա հատկապես մտահոգված է եղել դրանց միջոցով մշակել ու կատարելագործել իր ժողովրդի լեզուն:

«Բայաթիքը էն մտքով եմ գրել, որ չունքի մեջլըսում, հացի վրա Թուրքեվար են էսպես բաներ ասում. լավ հայը հայեվար ասի, որ քիչ քիչ լեզուն քաղցրանա, չունքի ոչի՛նչ բան լեզուն էնքան չի քաղցրացնի, որքան խաղն ու տաղը»:[1]

Ժողովրդական և աշուղական բանաստեղծության ոճով գրված Աբովյանի ստեղծագործություններից ուշագրավ են հատկապես նրա «Բայաթիները»:

«Բայաթի» է կոչվում մեզանում 7—8 վանկանի տողեր ունեցող արևելյան ժողովրդական փոքր երգերի տարածված մի տեսակը: Պարսկական քառյակների մի մասի նման, բայաթիները բաղկացած են չորս տողից, որոնցից առաջին, երկրորդ և չորրորդ տողերը նույն հանգն ունեն, իսկ երրորդ տողն անհանգ է: Նույն այս երգերը Հայաստանի մի շարք շրջաններում հայտնի են նաև «Ջանգյուլում», «Ջանիման», «Լիլե», «Մանի» անուններով: Ժողովրդական բայաթիների հիմնական թեման սերն է իր տարբեր արտահայտություններով, որը սովորաբար հանդես է գալիս սերտորեն շաղկապված և միահյուսված ժողովրդական բարքերի, գյուղացու աշխատանքային-արտադրական կյանքի, կենցաղի, նրա հասարակական հույզերի ու մտորումների հետ: «Բայաթի» բառը մեզանում, բացի սիրո երգերի վերոհիշյալ տեսակից, գործ է ածվում նաև երկատող տներ ունեցող սգո կամ լացի երգերի համար, որոնք ասվում են մեռածների վրա, ողբ անելիս:

Ահա ժողովրդական այս երգերի նմանությամբ են գրված Աբովյանի «Բայաթիները»: Ժողովրդականի նման Աբովյանի «Բայաթիները» ևս ունեն 7—8 վանկանի տողեր. առաջին, երկրորդ և չոր-

1 Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», հատոր Բ. էջ 390:

2 Խ. Աբովյան, «Բայաթիներ», Երևան, 1941 թ. (տես՝ Մ. Աբեղյանի «Առաջաբանի փոխարեն»-ը, էջ 5—8.):

թորդ տողերը նույնահանգ, իսկ երրորդ տողը անհանգ։ Իրենց ձևով ու կազմությամբ հար և նման լինելով ժողովրդական երգերի հիշյալ տեսակին, Աբովյանի «Բայաթիները» իրենց բնույթով ու բովանդակությամբ զգալիորեն տարբերվում են դրանցից։ Մինչդեռ ժողովրդական երգերի մեջ, իբրև տարբեր հեղինակների ստեղծագործություններ, հանդես են գալիս անձնական ու հասարակական տարբեր տրամադրություններ ու մոտիվներ, Աբովյանի «Բայաթիները» իբրև մի անհատ հեղինակի գործեր, կրում են իրենց վրա նրա անձնական ապրումների ու խոհերի ուժեղ կնիքը։ Մինչդեռ ժողովրդական երգերի մեջ սիրո հիմնական թեմայի հետ լայնորեն երևան է գալիս ժողովրդի կյանքն ու կենցաղը, Աբովյանի «Բայաթիների» գլխավոր թեման չբավարարված սերն է, վերջինիս հետ կապված մինորային տրամադրություններով։ Օրինակ.

«Ման եմ գալիս, մութն է մութ,
Քեզ չեմ գտնում, ա՜յ անգութ,
Արեգակն էլ որ բացվի,
Իմ սիրտս հո՝ մութն է, մութ»։

կամ

«Սիրտս պատկեր չի, քաշեմ,
Քեզ տամ, ինձ էլ չմաշեմ.
Միս ա, թուր էլ խփում ես,
Ի՞նչ անեմ, «ա՜խ» չի քաշեմ»։

Թեև սակավաթիվ, բայց Աբովյանի «Բայաթիների» մեջ հանդիպում են նաև հասարակական խնդիրներին նվիրված քառյակներ, որոնք իրենց բովանդակությամբ առնչվում են նրա առակների համապատասխան մոտիվների հետ։ Այդօրինակ բայաթիների բնորոշ մի նմուշն է հետևյալ քառյակը, որի մեջ Աբովյանը բողոքում է աշխարհում գոյություն ունեցող անարդարության ու բռնի շահագործման դեմ.

«Տա՛ր էդ հավին՝ ա՛յ ուրուր,
Աշխարքս դատարկ ա ու սուր.
Ջոռ մարդի թուրն ա կտրում,
Խեղճն ո՞ւր կորչի, ա՜խ՝ ո՞ւր, ո՞ւր»։

Ինչպես նշեցինք վերևում, բայաթիների հետ միասին Աբովյանը գրել է նաև աշուղական խաղերի տիպի գործեր։ Այդ գործերի մեջ նա օգտագործել է գլխավորապես աշուղական խաղերի տաղաչափական ձևերն ու հանգավորման եղանակը։ Առանձնապես բնորոշ է այս տեսակետից նրա «Ջանումս ջան չի մնաց» սկսվածքով հայտնի խաղը, որը հիշեցնում է ականավոր հայ աշուղներ՝ Ալլահվերդու, Քեշիշօղլու, մանավանդ Սայաթ-Նովայի սիրային խաղերը, և պերճախոս կերպով վկայում է Աբովյանի բանաստեղծական շնչի մասին.

«Ջանումս ջան չի մնաց, որ իմ ահվալն քեզ ասեմ,
Բերանս խոսք չէ գալիս, որ իմ խիալն քեզ ասեմ,
Թափ ու թախխանս ես սարքել, քանդեցիր բուրջ ու բադանս,
Քանի որ քեզ եմ տեսել, էրվեց, մաշվեց, ա՜խ, իմ ջանս։

Դարդիմանդ ես, մի փիքր արա, ի՞նչպես խլի էս իմ բանս,
Օշովեմեն ումուդ չունիմ, դուն ես իմ ճար ու դարմանս,
Թե ուզում ես գիփոնիմեն դուն ըլիս իմ սերն ու ջանս,
Էս իմ յարիս մեկ ճար արա, որ սկսեմ լավիցն ասեմ։

Վարդի պես դուս ես էկել, հովն տալիս, բաց ես ըլում,
Երկնքի ցողն երեսիդ շաղակոլոլ թաց ես ըլում,
Բլբուլի սիրտն մնացած տեսնելիս հեչ չես լաց ըլում,
Մին ու մին որ քեզ եմ տեսել, մտիցս անմոռաց ես ըլում,
Ի՞նչ անեմ, որ դու ինձ լսես, էլ միշտ քո գովքն ասեմ»։

4.

Ժողովրդական բանահյուսության ոգով ու ոճով գրելու Աբովյանի գիտակցական ձգտումը իր ստեղծագործական առավել լրիվ մարմնավորումն է գտնում նրա «Վերք Հայաստանի» վեպի մեջ։ Այստեղ է, որ զարգացվել, բյուրեղացվել և նոր աստիճանի վրա է բարձրացվել ժողովրդական սյուժեների, մոտիվների և բանաստեղծական պատկերավորման բազմազան միջոցների օգտագործման նրա ստեղծագործական պրակտիկան։ Այստեղ է, որ ժողովրդական բանահյուսության տարրերը խառնվելով ու միաձուլվելով Աբովյանի ստեղծագործական տարրերի հետ, ծնել են հայ նոր գրականու-

թյան շատ կողմերով ինքնատիպ ու նշանակալից առաջին գեղարվեստական մեծ վեպը։

«Վերք Հայաստանի» ժողովրդական բանահյուսության հետ կապված է, նախ և առաջ, իր սյուժեով։ Ճիշտ է, վեպն իր ամբողջությամբ ինքնահնար է, հյուսված 1826—1827 թվի ռուս-պարսկական պատերազմի ժամանակաշրջանի իրական-պատմական այն դեպքերի ու դեմքերի շաղախից, որոնց ժամանակակից է եղել հեղինակը, սակայն իր կորիզով և առանձին մասերի ու մանրամասների մեջ այն ավելի կամ պակաս չափով կապված է վերոհիշյալ դեպքերի ու դեմքերի մասին ժամանակակիցների մեջ ստեղծված ժողովրդական զրույցների, երգերի ու խաղերի, ինչպես նաև տակավին լրիվ բանահյուսական գունավորում չստացած բանավոր հիշողությունների հետ։ Հիշյալ կարգի նյութերը և հատկապես ժողովրդական բանավոր հիշողությունները, ամենայն հավանականությամբ, Աբովյանը օգտագործել է, նախ և առաջ, «Վերքի» սյուժեի առանցքը հանդիսացող Աղասու պատմության մեջ։ Պետք է ենթադրել, որ նա պատանի հասակում իր տեսածին ու իմացածին միացրել է նաև Աղասու սխրագործությունների շուրջը ավելի ուշ («Վերքը» գրելու ժամանակ) տակավին պատմվող զրույցներն ու հիշողությունները, որոնց արձագանքը հասել է մինչև անցյալ դարի 90-ական թվականները, և մինչև մեր օրերը։[1]

---

[1] Այդպիսի հիշողություններից մեկն է Երևանի նախկին Ուսուցչական սեմինարիայի դասատու Կ. Ռուլգինի 1884 թ. հրատարակած հետևյալ պատմությունը, որը նա իր աշակերտների օգնությամբ գրի է առել դեպքերին ականատես երևանցի ծերերից և որը մոտիկից հիշեցնում է «Վերքում» Աբովյանի պատմածը։ Քանաքեռցի Աղասին լավ հարաբերության մեջ էր Սարդարի հետ և հաճախ լինում էր նրա մոտ։ Մի անգամ Սարդարը Քանաքեռ է ուղարկում իր սպասավորներին՝ հարեմի համար գեղեցիկ աղջիկներ ընտրելու։ Ընտրվածների մեջ է և Աղասու հարսնացուն Լուսը։ Իմանալով այդ մասին, Աղասին մի քանի քաջերի հետ հարձակվում է Սարդարի մարդկանց վրա և փրկում նրանց։ Հետապնդումից ազատվելու համար, Աղասին թողնում է Քանաքեռը, ընկերներով սկսում է հետևել Սարդարի մարդկանց և խուլ տեղերում վրեժառու լինել նրանցից։ Երբ Պասկևիչը մոտենում է Երևանին, Աղասին ներկայանում է նրան և առաջարկում է իր ծառայությունները՝ քաղաքի թույլ ամրացված տեղերը ցույց տալու։ Աղասուց վրեժառու լինելու համար Սարդարը բանտ է նետել տալիս նրա ծերունի հորը և հրամայում է պահակներին սպանել թե՛ որդուն և թե՛ հորը՝ եթե առաջինը փորձ անի հորն ազատելու, իսկ վերջինը՝ փախուստի դիմելու։ Երևան մտնող Պասկևիչի հաղթական բանակի ռուս զինվորների հետ է և Աղասին։ Նա շտապով ցատկում է բերդի պատից և վազում դեպի բանտը հորն ազատելու։ Սակայն, պահակները, որ դեռ չէին

Նմանօրինակ ֆոլկլորային նյութերի հիման վրա են գրված նաև «Վերքի» սյուժեի մեջ մտնող այնպիսի հատվածներ, ինչպիսիք են՝ Նեմեցի Կոլոնի թալանը քուրդ Օքյուզ աղայի կողմից և շուլավերցի երկու մելիքների նահատակվելը քրդերի կողմից Հասան խանի օրով:

Հիշյալ երկու պատմություններն էլ Աբովյանը լսել է՝ Բոլնիսի Ս. Գևորգի տոնախմբության ժամանակ և Շուլավերում եղած միջոցին, ուխտավորներից ու ծերունիներից: Այդ մասին վկայում է նրա աշակերտներից մեկը, Գ. Աքիմյանը:[1]

«Վերքի» սյուժեի հետ առնչվող ժողովրդական նյութերի գոյության և այդ նյութերի Աբովյանի կողմից օգտագործված լինելու հնարավորության հանգամանքը կողմնակի կերպով ակնարկված է նաև իրեն՝ Աբովյանի մի վկայությամբ: Իր վեպի մեջ նկարագրելով Երևանի բնակչության անհուն բերկրանքը ռուսական զորքի հաղթական մուտքի առթիվ, Աբովյանը գրում է.

«Էն ժամանակվան խաղերը, որ հանել ասում էին, հավիտյանս հավիտենից կարող են աշխարքին վկայություն տալ՝ թե թուրք ու հայ հենց իմացան թե աստված վեր էկավ իրենց համար: Հաթիր տեսակ խաղ հայերեն, թուրքերեն Երևանու թաղերն ու ձորերը լսում էին, ու հինգ տարեկան երեխեն էլ էսօր ուրախ վախտը ձեռը բերնին ա դնում ու ասում»:[2] Որպեսզի իր ասածին «ամեն մարդ հավատա», Աբովյանն իբրև օրինակ մեջ է բերում նաև այդ խաղերից մեկը (տես «Վերքը»):[3]

«Վերք Հայաստանի»-ն ժողովրդական բանահյուսության հետ կապված է նաև իր կառուցվածքով և ժանրային ընդհանուր նկարագրով: Այն հիշեցնում է մեկից ավելի զուգահեռ սյուժեների ու մոտիվների համակցում հանդիսացող ժողովրդական ընդարձակ վեպերն ու հեքիաթները: Հիշյալ կարգի հեքիաթների ու վեպերի նման «Վերքը» ևս մի ընդարձակ վիպական պատմություն է, որն

թողել իրենց պահակակետերը, տեղն ու տեղը սպանում են և՛ Աղասուն և՛ նրա հորը, կատարելով Սարդարի հրամանը (СМОМП 4, III, стр. 34): Նմանօրինակ մի ուրիշ ավանդություն 1938 թ. գրի է առել Վ. Բդոյանը Աշտարակի շրջանի Դովրի գյուղի բնակիչ, 70 տարեկան Հովհաննես Հովհաննիսյանից, որը. բանահավաքի վկայությամբ «մանկությունից նման մի զրույց լսել է իրենց գյուղացիներից» (տես Ա. Ղանալանյան—Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1941 թ., էջ 59—60):

[1] «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», էջ 119:

[2] Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», հատ. Ա., էջ 206:

[3] Նույն տեղ՝ 206—207:

ամփոփում է իր մեջ ինքնուրույն կենտրոն ունեցող մի շարք առանձին ավելի մանր պատմություններ: Հիշյալ կարգի հեքիաթների նման «Վերք Հայաստանի»-ի առանձին մասերը վեպի հիմնական սյուժեի հետ միանում, կամրջվում են յուրահատուկ ոճերով ու բանաձևերով. օրինակ. «Ես էս եմ ղառնում, էլի իմ պատմությունն անեմ» (69),[1] «Հիմիկ էս թողանք, գնանք էլի մեր սիրելի Աղասու մոտ» (149), «Աղասու արածները թողանք ուրիշ ժամանակի ու գնանք մեր բանը» (124), «Բայց էլի մենք մեր պատմության տուտըն սկսենք (147) և այլն:

Ժողովրդական դյուցազնական վեպերի և ավելի արևելյան-աշուղական հեքիաթների նման «Վերքը» ունենալով ընդհանրապես արձակ, վիպական պատմվածքի ձև, երբեմնապես ընդմիջվում է առանձին չափածո, երգային կտորներով («Աղասի ջան՝ գլխիդ ղուրբան», «Վա՜յ էն աղգին, որ աշխարքումս անտեր ա», «Սար ու ձոր ընկած՝ մեկ չոր թիփի տակ», «Ա՜խ վաթան, վաթան, քու հողին ղուրբան» և այլն):

Բանահյուսական վերոհիշյալ տարրերը, ինչպես ճիշտ կերպով դիտել է ընկ. Դ. Դեմիրճյանն իր «Աբովյանի գրական ժանրերը» վերնագրով արժեքավոր հոդվածում, միանալով ու ձուլվելով «Վերքի» մեջ բավական ցայտուն կերպով արտահայտված գրական ռոմանի մի քանի առանձնահատկությունների հետ, ստեղծում են բոլորովին նոր, ինքնուրույն և ինքնատիպ «ժողովրդական-արևելյան (այսինքն նաև հայկական) գրական մի ժանր»:[2]

«Վերք Հայաստանի» ժողովրդական բանահյուսության հետ սերտ կապի մեջ է նաև բանաստեղծական պատկերավորման իր մի քանի կարևոր միջոցներով: Դրանք են՝ հիպերբոլան, շնչավորում-անձնավորումը և պատկերավոր զուգահեռականները: Վերջիններս, ինչպես հայտնի է, լայնորեն կիրառված են ժողովրդական բանահյուսության տարբեր տիպի ստեղծագործությունների մեջ, և իրենց ծագումով սերում են նախնադարյան մարդու միֆոլոգիական աշխարհայացքից: Դրանք արդյունք են զարգացման նախնական աստիճանի վրա կանգնած մարդկանց երևակայության մեջ բնության երևույթների «անգիտակցական մշակման» (Մարքս): Սկզբնապես լինելով արտաքին աշխարհի ճանաչողության յուրահատուկ ձևեր, թե՛ շնչավորում-անձնավորումը, թե՛ հիպերբոլան և

[1] Այս և հաջորդ բոլոր թվերը ցույց են տալիս Աբովյանի Ընտիր Երկերի Ա. հատորի համապատասխան էջերը:

[2] «Սովետական գրականություն», 1941 թ., № 2:

թե՛ պատկերավոր զուգահեռականները ժամանակի ընթացքում վեր են ածվում իրականության գեղարվեստական ընկալման ձևերի և իբրև այդպիսիք մնում ժողովրդական բանահյուսության մեջ, իսկ այստեղից էլ, իբրև արդեն բուն արտահայտչական միջոցներ օգտագործվում գրականության մեջ:

Ժողովրդական բանահյուսությունից եկող բանաստեղծական պատկերավորման վերոհիշյալ միջոցներից Աբովյանի ուշադրությունը, նախ և առաջ, գրավել է անձնավորումը: Լավ զգալով վերջինիս գեղարվեստական ներգործման մեծ ուժը, նա իր «Վերքի» մեջ հաճախակի դիմել է անձնավորման օգնությանը: Աբովյանի գրչի տակ լեզու ու շունչ են առնում սարերն ու ձորերը, առուն ու գետը, բերդն ու պարիսպը, դառնում կենդանի ու խոսուն, զգացող ու գիտակցող էակներ: Այսպես, օրինակ, նա գրում է.

1. «Արագը ինչպես մեկ մեծ օձ, կամ էրծաթի գոտի, արևմտյան կողմիցը, ձորերի միջիցը՝ իր սուր լուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել, ու մրմունջ, հանդարտ, լուռ գալիս՝ Մասսա փեշին մի քիչ թեքով խփում էր, շփում ու էլի ծուռն աչքով նայելով, նրան հաթաթա տալով, ձենը ձոր անելով, գլուխը պտտելով՝ գնում Զանգվին ու Գառնու գետն իր ծոցն առնում ու խաղալով խայտալով, վռվռալով՝ հեռանում քվերտանց հետ, ու պռունգ պռնգի, դոշ դոշի, քամակ քամակի տված, իրար գլխի, երեսի, ձեռները քսելով, փաղաքշելով, համաք անելով, աչքները խփում, նղղում ու Շարուրի դուզ ծոցումը՝ ծեծված, ջարդված, քուն մտնում» (83):

2. «Արեգակը կրակ դառած՝ Ալագյազի կողմիցը բարձրացավ: Աչքերը սև՝ երկրի մեջն էր ուզում մտնի, քարերը հոթքի, որ պակաս տեսնի մեր ազգի քաջահաղթությունն ու տղամարդությունը» (119):

3. «Աստղերը դուս են եկել, պելացել. ցավակից լուսինը՝ տխուր դառնավարած հենց աչքը Ապարանի երեսին առավ թե չէ, էլ եդ չոքը չոք արևմտան ա փախչում, որ ականջները կալնի, էս ողբալի աղաղակը չը լսի. երկինքն իր սև սգի շորը հագավ, աչքերը խփեց, որ էս դառը տեսարանը չտեսնի» (135):

4. «Լեռ քարափի վրա՝ ցից գլուխը բարձրացնում, թամաշա ա անում, հանդարտ՝ հազար գլխանի վիշապի պես՝ Երևանու՝ հազար տարեկան քավթառ, պառավված, չորս կողմը խանդակով կապած, բրջերով ղայիմացրած, սուր սուր ատամները գլխին շարած, հինգ-գազաչափ հաստ պարսպով երկու տակ բռնած, մեկ ոտը Կոնդումը, մեկ ոտը Դամուրբուլաղի գլխին դրած, մեկ բերանը հյուսիս,

մեկը հարավ բաց արած, չոլացած գլուխը երկինքը ցցած, լեն փեշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոխած, սվաղած, հազար քնով, հազար փանջարա աչքերը դես ու դեն չռած, գլուխը չանգերով Զանգվի՝ քարոտ, զարհուրելի, սևադեմ ձորը խոթած, դուշին կպցրած, անմաղ, անլեզու, մարդակեր բերդը, ու գեղնած երեսը հեռու տեղից ծածկում, ագահ աչքերը գետին քցում, որ միամիտ տեսնողին դհա շուտով խաբի, դհա հեշտ իր ծոցը քաշի ու բիրադի անձեն, անսաս կուլ տա, փչացնի» (66), և այլն:

Անձնավորման միջոցով ստեղծված այս և նման մի շարք այլ նկարագրությունները Աբովյանի վեպի լավագույն գեղարվեստական էջերից են:

Պակաս նշանակալից տեղ չի գրավում «Վերքի» մեջ նաև հիպերբոլան: Իր հերոսների հոգեկան և մարմնական բարեմասնությունները գովերգելու, նրանց կատարած սխրագործությունները ավելի ցայտուն ցուցադրելու համար, Աբովյանը ժողովրդական վիպասանների ոճով դիմում է բանաստեղծական պատկերավորման տվյալ միջոցին, ստեղծելով մեկը մյուսից գունեղ և վառ հիպերբոլիկ պատկերներ ու կերպարներ: Այս տեսակետից հատկապես բնորոշ են Աղասու և Հովակիմի կերպարները, որոնցից առաջինը իր որոշ գծերով հիշեցնում է հայկական էպոսի գլխավոր հերոս Սասունցի Դավթին, իսկ երկրորդը՝ կարծես Առյուծաձև Մհերի մի նոր տարբերակը լինի: Ահա թե ինչ է գրում Աբովյանը Աղասու մասին.

«Էնքան ղվաթով էր, որ ձեռը մեկ տղամարդի գոտիկը որ չէր քցում, հավի ճուտի պես բարձրացնում, գլխի ծերն էր հանում, պտիտ տալիս, էլ ետ վեր բերում: Զին նի ըլեյիս՝ որ ձեռը չէր բարձրացնում, ասլան ձին կզանում էր, մեջքը դեմ անում: Հինգ մարդ վրա թափեին, բաանց ձեռը կոլորեին: Գոմշի կամ եզան բողազը մեկ թուր խփելով էնպես էր գուդ կտրում, որ թրի ծերը գետնին էր խրվում: Շատ անգամ քսան հարամի հենց թրի ուժովն էր հետ ածում: Թուրքերը նրա անունը լսելիս՝ լեղապատառ էին ըլում: Շատ անգամ կռիվ քցած վախտը հենց նրա ձենն իմանում էին թե չէ, ճանճի պես ցրվում, դես ու դեն էին կորչում, գյում ըլում: Ավելի անունը՝ Ասլան բալասի էին դրել: Զենքերն էլ կապած, որ հարամու, թուրքու մեջ բաց թողեիր, կարող էր՝ որ իր գլուխը պրծացներ» (25):

Ահա և Հովակիմի բնութագիրը. «Սարերի, ձորերի միջում մեծացած, գազանի ու հարամու արինը թափելով էր նրա ոսկորները

հաստացել: Երկու տղամարդ նրա մեջքը չէին կարող խոտել, հինգ մարդ նրա մեկ ձեռը չէին կարող ոլորել, նրա գլուխը մեկ օր չէր ցավել... Աժդահա ու ոչ տղամարդ: Չորս գազ ու կես բոյն էր, գազ ու կես թիկունքի լենությունը, դոշը ապառաժի պես հաստ, ամեն մեկ ձեռը մեկ սնի ղադար, ամեն մեկ ոտը, մեկ կաղնու ճյուղ, շլինքը մեկ ծառի բոքի հաստությունով...» (110):

Աղասու և Հովակիմի կերպարների մեջ այնքան ցայտուն կերպով արտացոլված ժողովրդական հիպերբոլան, ավելի կամ պակաս չափով մենք գտնում ենք նաև Աբովյանի վեպի այլ էջերում:

«Վերք Հայաստանի»-ի մեջ աջ ու ձախ շաղ են տրված ժողովրդական բանահյուսությունից վերցված և այդ բանահյուսության ոճով ու ժողովրդական մտածողությամբ՝ իրեն՝ Աբովյանի ստեղծած բազմաթիվ գեղարվեստական պատկերներ, պատկերավոր զուգահեռականության նմուշներ, փոխհարաբերություններ ու այլաբանություններ, որոնք աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ ու բանաստեղծական շեշտված արժանիքներով: Հիշենք դրանցից մի քանիսը միայն.

«Ջրու անկաջը մտած՝ էնպես էր բշում, կրակին տալիս՝ որ հենց իմանաս՝ թևավոր ղուշ ըլի» (47): Համմտ.՝ Արտաշես և Սաթենիկ վեպի՝ «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ և անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն...» տողերի հետ:

«Արտասուքը գետի պես էր թափում» (152): Համմտ.՝ Սասունցի Դավիթ էպոսի «Մհերի արտասունք գետին արեց խանդաղ ու գնաց» տողի հետ:

«Աչքերը ծով դառած» (18):

«Ամպերը օխտը գլխանի վիշապի նման» (13):

«Սիրտը բարակել, փոշի էր դառել» (177):

«Ինչպես մեկ բռնը քանդված մեղրաճանճի թարուն» (84):

«Արինը սրտումը թան դառավ» (126):

«Ոտների տակին կրակ էր վառվել» (158):

«Սև սև ունքերն էնպես էին բռնել ու նրա արծվի աչքերն ու քիթը կոխել, ինչպես կարկտախառը ամպը՝ գիշերվան աստղերը: Քիթ ու պռունգն էնպես էին մազի միջումը կորել՝ ինչպես մեկ ապառաժ քար՝ ջանգալի թփի միջումն» (110):

«Էն սևացած, արնի, անձրևի տակին մուր դառած ունքերի տակիցը՝ որ աչքը չէր ընկնում մարդի երեսի՝ էնպես էր իմանում, թե կայծակն ա խփում» (111) և այլն:

Բերված օրինակները մի փոքր մասն են կազմում Աբովյանի

վեպում եղած բանահյուսական բնույթի գեղարվեստական համեմատությունների, պատկերավոր զուգահեռականության ու փոխաբերության-այլաբանությունների։ Դրանց թիվը կարելի է կրկնապատկել ու բազմապատկել։

Բանաստեղծական պատկերավորման վերոհիշյալ միջոցները (անձնավորում, հիպերբոլա) իրենց ծագումով և ընդհանուր նկարագրով կապվելով ժողովրդական բանահյուսության հետ, միաժամանակ տարբերվում են վերջինից։ Ինչպես ֆոլկլորի օգտագործման բոլոր նախորդ դեպքերում, այստեղ էլ Աբովյանը հեռու է սոսկ նմանվող կամ փոխ առնող լինելուց։ Մինչդեռ թե անձնավորումը և թե հիպերբոլան ու պատկերավորման մյուս միջոցները ժողովրդական բանահյուսության մեջ արտահայտվում են մեծ սեղմությամբ, գործողության մեջ ու գործողության միջոցով՝ Աբովյանի մոտ դրանք, հատկապես անձնավորումն ու հիպերբոլան գլխավորաբար հանդես են գալիս գրականության հատուկ համեմատաբար ընդարձակ ու ինքնաբավ նկարագրությունների ձևով։

Ժողովրդական բառ ու բանը իր կնիքն է դրել նաև Աբովյանի վեպի լեզվի ու ոճի վրա։ Գրված լինելով բուն ժողովրդական կենդանի, խոսակցական լեզվով (Քանաքեռի բարբառ) «Վերքը» բնականորեն պետք է համեմված լիներ ժողովրդական լեզվին ու ոճին հատուկ առածներով, ասացվածքներով, ոճերով ու մակդիրներով։ Սակայն, Աբովյանի լեզուն ու ոճը Քանաքեռի բարբառի սոսկական պատճենավորումը չէ։ Իր լեզվին ու ոճին հատուկ երանգ տալու, բայց մանավանդ իր ծով հույզերն ու խոր խորհուրդները առավել հաջող տեղ հասցնելու համար, նա կրկնապատկել ու բազմապատկել է ժողովրդական լեզվի վերոհիշյալ տարրերը, միաժամանակ ինքն էլ իրենից հորինել նմանօրինակ ոճեր, դարձվածքներ, ու մակդիրներ։ Ժողովրդական բառ ու բանի այսօրինակ օգտագործումով Աբովյանը ժողովրդի համար ավելի հասկանալի ու առավել պատկերավոր է դարձրել իր մտքերն ու դատողությունները, մերկացրել է պարսիկ և թուրք խաների ու բեգերի շահատակությունները, բացահայտել իր տիպերի ներքին աշխարհը, և այլն և այլն։ Այսպես օրինակ, դառնացած եվրոպական «բազի գրքերում» տեղ գտած այն թյուր կարծիքի համար, ըստ որի «... հայ ազգը պետք է որ սիրտ չի ունեցած ըլի, որ էնքան բաները գլխովն անց են կացել, մեկ մարդ էլա չի դուրս էկել, որ մեկ սրտի բան գրի, ինչ կա՝ եկեղեցու վրա ա, աստծու ու սրբերի», Աբովյանը գրում է.
«Լավ գիտում էի, որ մեր ազգը էնպես չէր, ինչպես նրանք ասում

էին, համա ինչ անես, անաղուն ջաղացի քարն էլ չի պտիտ գալիս, ո՞ւմ ասես» (7)։ Բնութագրելու համար իրեն ժամանակ հայ իրականության մեջ իշխող թանձր խավարը, Աբովյանը գրում է. «Այբբենը մեր միջումը գարով էին բռնում, գլուխով վեր գցում» (8)։ Խոսելով ժողովրդին մոռացած և իրենց շահի ու որովայնի մասին միայն մտածող ագետ ու որկրամոլ քահանաների մասին, Աբովյանը գրում է. «Սար ու ձոր տերտերի փոր» (23)։ Պատմելով պարսիկ, քուրդ, թուրք, հրոսակների՝ Երևանի վրա կատարած անակնկալ հարձակումներից մեկի մասին, Աբովյանը գրում է. «Տանող տանողի էր, քաշող քաշողի, շունը տերը չէր ճանաչում, ճերը որդուն ուրացել էր, գլուխը դառել էր մեկ սոխի գլուխ» (104, 108)։ Իր սիրեցյալ հերոսի՝ Աղասու ազնիվ անշահախնդրությունը ընդգծելու համար Աբովյանը պատմում է, թե ինչպես իրեն հավատափոխ լինելու պայմանով մեծ հարստություն ու պատիվ խոստացող պարսիկ ու թուրք խաներին ու բեգերին նա պատասխանում է. «Իմ ցամաք ճացը լավ աշեմ ինձ ճամար, քանց ձեր ղաբլու փլավը» (57), և այսպես շարունակ։

Հար և նման ձևով «Վերք Հայաստանի»-ի մեջ օգտագործված են նաև ժողովրդական մակդիրները, որոնց բնորոշ նմուշներից են հետևյալները. կանաչ արև (59), պարզկա գիշեր (13), անկուշտ հող (114), լեն ճակատ (116), թուխ ունքեր (25), բլբուլի լեզու (51), չինարի բոյ (27), էրված սիրտ (67), դառը քրտինք (67), քյահլան ձի (74) և այլն։

Այսպիսի տեղ ու դեր է ունեցել, ահա, ժողովրդական բանահյուսությունը Աբովյանի ստեղծագործության, մասնավորապես նրա «Վերք Հայաստանի»-ի մեջ։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Աբովյանը հայ նոր գրականության այն հեղինակներից է, (առաջինը ըստ ժամանակի), որի գրական ստեղծագործությունը բազմակողմանի և խորը կերպով կապված է ժողովրդական բանահյուսության հետ։

2. Ժողովրդական բանահյուսությունը եղել է ստեղծագործական այն տիպար-օրինակը, որից ազդվելով և որի ոճն ու ոգին վարպետորեն օգտագործելով նա ձգտել է, ի հակակշիռ տիրող կղերա-ֆեոդալական գրաբար գրականության, ստեղծել և ստեղծել է՝

ձևով և թե՛ բովանդակությամբ ժողովրդին հարազատ ու հասկանալի, նրա կյանքն ու պայքարը, ապրումներն ու մտորումները արտացոլող իր գրական գործերը, մասնավորապես իր գլուխ գործոց «Վերք Հայաստանի» վեպը— հայ ժողովրդի կյանքում կատարված պատմական բախտորոշ շրջադարձի (Ռուսաստանի հետ միանալու) առաջին գեղարվեստական մեծ ընդհանրացումը։

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ մեկ հարյուրամյակ հայ հասարակական մտքի զարգացման վրա խոշոր ազդեցություն են թողել մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը և ռևոլյուցիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Աբովյանի և Նալբանդյանի գաղափարները հայ ժողովրդին պայքարի են կոչել տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր վայրերում, հասարակական, քաղաքական կյանքի տարբեր պայմաններում: Աբովյանն ու Նալբանդյանը սիրված դեմքեր են եղել ինչպես Կովկասում, արևելահայ իրականության մեջ, այնպես էլ ամբողջ աշխարհով մեկ ցրված հայ գաղութներում, Թյուրքիայից սկսած, մինչև Եվրոպա ու հեռավոր Ամերիկա: Ըստ որում հարկ է նշել այն բնորոշ փաստը, որ նրանց անունները գրեթե միշտ միաժամանակ են հիշատակվում արևմտահայ մամուլում:

Արևմտահայ գրականության վրա Աբովյանի և Նալբանդյանի ունեցած ազդեցությունը մի շատ լուրջ հարց է, որը սակայն բավարար չափով դեռ չի լուսաբանվել: Այս հարցի՝ Նալբանդյանին վերաբերող մասը փոքր ինչ լուսաբանված է մեր գրականագիտության մեջ, սակայն ոչ երբեք սպառիչ չափով: Իսկ ինչ վերաբերում է Աբովյանին, ապա հարցը շատ մասնակի, աննշան չափով է քննության առնված:

Ինչպես Աբովյանի, նույնպես և Նալբանդյանի՝ արևմտահայ գրական ու հասարակական մտքի վրա թողած ազդեցության, արևմտահայ գրողների՝ նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի բազմակողմանի ու սպառիչ լուսաբանությունը դեռ մնում է մեր գրականագիտության չվճարված պարտքերից մեկը:

Այս հոդվածում մեր նպատակը չէ քննության առնել արևմտահայ մամուլում և գեղարվեստական գրականության մեջ տեղ գտած

այն բոլոր գնահատումներն ու հիշատակումները, որոնք վերաբերում են Խ. Աբովյանին։ Դժվար է գտնել արևմտահայ որևէ պարբերական, որը գոնե մի քանի առիթով հիշատակած չլինի Աբովյանի անունը, կարծիք հայտնած չլինի նրա այս կամ այն երկի մասին։

Մեր նպատակն է այստեղ կանգ առնել երեք խնդրի վրա։ Նախ՝ փորձ անել պարզելու Աբովյանի գեղարվեստական արձակից «Աշխարհիկ բարբառ Երևանցի հայոց» պատառիկի՝ առաջին անգամ «Արշալույս Արարատյան»-ում տպագրվելու հանգամանքները և այդ առթիվ կանգ առնել Իզմիրի ու Երևանի հայերի փոխադարձ կապի վրա։ Երկրորդ՝ ցույց տալ թե ինչ ազդեցություն է թողել Խ. Աբովյանը 60—70-ական թվականների արևմտահայ դեմոկրատական գրողների վրա։ Երրորդ՝ ցույց տալ նաև թե 80—90-ական թվականների արևմտահայ գրողներն ինչպես են գնահատել Աբովյանին ու պրոպագանդա արել Աբովյանի ու Նալբանդյանի գաղափարները Համիդյան բռնապետության շրջանում։ Մենք այս հոդվածում հնարավորություն չունենք անդրադառնալու այն հարցին, թե Աբովյանի երկերից ի՞նչ է տպագրվել արևմտահայ մամուլում 1850 թվից հետո։ Հոդվածի սահմանները և ժամանակը թույլ չեն տալիս այդ հարցով ևս զբաղվելու։

I

Խաչատուր Աբովյանի անունը առաջին անգամ արևմտահայ մամուլի էջերում երևացել է նրա անհայտացումից երկու տարի հետո՝ 1850 թվականին։ Ինչպես հայտնի է, այդ թվին է, որ Իզմիրում հրատարակվող «Արշալույս Արարատյան» պարբերականը տպել է Աբովյանից մի հատված «Աշխարհիկ բարբառ Երևանցի հայոց» վերնագրով, իր կողմից ավելացնելով միայն հետևյալ բացատրությունը «Գրյալ 'ի պատվելի Խաչատուր վարժապետե Ապովյան»։[1]

Այդ գրական հատվածը, որի մեջ պատմվում է մի հիվանդ ու թշվառ կնոջ ցույց տրվող օգնության մասին, ըստ էության Աբովյանի տպագրված առաջին գեղարվեստական ինքնուրույն ստեղծագործությունն է։

Աբովյանի այս գործի «Արշալույս Արարատյան»-ում տպագրվելու փաստը երկար տարիներ անծանոթ է մնացել Աբովյանով

[1] «Արշալույս Արարատյան», 1850 թ. թիվ 360։

զբաղվողներին և միայն մեր օրերում է գրավել բանասերների ուշադրությունը, մտքեր հուզել և զանազան ենթադրությունների տեղի տվել։ Այսպիսով՝ Աբովյանի ծննդյան թվի, հոր անվան անստուգության, իր անհայտացման հանգամանքների անորոշության վրա ավելացել է այդ հատվածի տպագրման կիսաառեղծվածը, ստեղծվել է մի նոր հանգույց, որի լուծումով արժե զբաղվել։

Առաջին միտքը, որ զբաղեցնում է ուսումնասիրողին, այն է, թե ինչ նպատակով է «Արշալույս Արարատյանը» տպագրել այդ գործը։ Աբովյանի «Երկերի լիակատար ժողովածվի» ակադեմիական հրատարակության համապատասխան հատորի ծանոթագրություններում, որտեղ, ի դեպ՝ գրեթե ամբողջովին մեջ է բերվում այն երկար պատմությունը, թե մեր օրերում ով է առաջին անգամ նկատել «Արշալույս Արարատյանի» տպած հոդվածը, բայց չի հիշատակում ամենից կարևորը՝ «Արշալույս Արարատյանի» բացատրությունը՝ «Գրյալ ի պատվելի Խաչատուր վարժապետէ Աբովյան», այն միտքն է հայտնվում, թե՝ թերթի նպատակն է եղել պարզապես մի նմուշ տալ արևելահայ աշխարհիկ բարբառից։ Զժխտելով հանդերձ այդ հանգամանքը, մեզ թվում է, թե հիշյալ բացատրությունը կարիք ունի որոշ լրացման։ Աբովյանի նշված գործը ոչ միայն իր աշխարհաբար լեզվով, այլև իր գաղափարական բովանդակությամբ և գրական մշակմամբ կարող էր գրավել խմբագրության ուշադրությունը և տպագրվել։

Այդ հատվածն ի՞նչ ճանապարհով է հասել Իզմիր, ի՞նչպես է պատահել, որ մինչդեռ Աբովյանի կենդանության օրով Կովկասի հայ պարբերական մամուլում հազիվ մի երկու պատառիկ էր տպագրվել նրա երկերից,[2] հեռավոր Իզմիրի լրագրում լույս էր տեսնում նրա ինքնուրույն ստեղծագործությունը իր մահվանից երկու տարի հետո։ Այդ նյութը ինքը՝ Աբովյա՞նն է ուղարկել, թե՞ ուղարկել են նրա աշակերտները և կամ թե մի այլ ձևով է այն ընկել Իզմիր։ Աբովյանի անունն արդյոք «Արշալույս Արարատյանի» խմբագիր Ղ. Պալտազարյանին ծանո՞թ էր նախքան «Աշխարհիկ բարբառ»-ի տպագրումը։ Սրանք հետաքրքիր հարցեր են, որոնց պատասխանները դեռևս չեն տրված։

---

1 Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր 4. Երևան, 1947 թ. էջ 320—321։

2 «Կովկաս» լրագրի 1846 թ. № 49-ում և 1847 թ. № 1-ում տպված է Խ. Աբովյանի «Աղելայիդա» Ջվլեհսի առաջին գործողությունը, այն էլ ոչ լրիվ։

Նախ անհրաժեշտ է պարզել թե ինչպիսի տնտեսական և կուլտուրական կապ է եղել Երևանի և Իզմիրի միջև, որը և կլուսաբանի հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների մերձեցման փորձերը, կպարզաբանի նաև թե կարո՞ղ էր Աբովյանն անձնական կապեր ունենալ «Արշալույս Արարատյանի» խմբագրության հետ։

Իզմիրը և Երևանը ուղիղ հարյուր տարի առաջ տնտեսական և կուլտուրական հարաբերություններ են ունեցել միմյանց հետ։ Երևանում գտնվել են վաճառականներ, որոնց ընտանիքի անդամներից մի քանիսը եղել են Իզմիրում և գրագրություն ունեցել Երևանի հետ։ Այդպիսի ընտանիքներից է Մարգար Խոջենցը։ Սրա որդին Զաքար Խոջենցը ապրել է Իզմիրում։ Երևանաբնակ Մարգար Խոջենցը իր մահվան օրերին գրել է «Կտակագիր հոգեշահ բանից» աշխատությունը և ուղարկել Իզմիր՝ իր որդուն, որը այն տպագրել է 1853 թվականին Երուսաղեմում։

Կան ավելի ուշագրավ փաստեր։

Հայտնի է, որ Աբովյանի ապրած վերջին տարիներին Կովկասում լույս էր տեսնում միայն «Կովկաս» պարբերականը, որը հրատարակվում էր Թիֆլիսում, գրաբար լեզվով և գերազանցապես զբաղվում էր առևտրական հարցերով։ Գրական աննշան թոթովանքներ են միայն տպագրված «Կովկաս»-ի էջերում։

Այդ նույն ժամանակամիջոցում Մ. Թաղիադյանի խմբագրությամբ Հնդկաստանում լույս էր տեսնում «Ազգասեր Արարատյանը», նույնպես գրաբար լեզվով և մատչելի չէր ընթերցող լայն մասսաներին, չնայած Կովկասում (անշուշտ նաև Երևանում) ստացվում էին այդ պարբերականի համարները։

Մի աշխարհաբար թերթի պահանջը շատ մեծ էր արևելահայերի մոտ և այդպիսի թերթի բացակայության շնորհիվ է, որ «Արշալույս Արարատյանը» ծանոթ էր կովկասահայությանը և լայնորեն սպառվում էր ինչպես Թիֆլիսում, Կովկասի և Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքներում, այնպես էլ Երևանում։

«Կովկաս» թերթը հաճախ արտատպություններ էր կատարում «Արշալույս Արարատյանից», այսպիսով իր ընթերցողներին ծանոթացնելով թե արևմտահայ աշխարհաբար լեզուն և թե ստեղծելով առաջին կուլտուրական կապը արևմտահայ իրականության հետ։[1]

«Արշալույս Արարատյանն» էլ իր հերթին մոտիկից հետաքըր-

[1] «Արշալույս Արարատյան»-ից արտատպություններ կան «Կովկաս»-ի 1847 թվի 27, 33, 38 համարներում։

քըրվում էր «Կովկաս»-ով և այդ թերթի միջոցով Թիֆլիսի ու Երևանի կուլտուր-կրթական, տնտեսական կյանքով: Այդ թերթի էջերում տպագրված են Թիֆլիսից ուղարկված նյութեր, արտատպություններ են կատարվել «Կովկասից»:

«Արշալույս Արարատյանը» պարբերաբար իր ընթերցողներին իմացրել է «Աղգասեր Արարատյան» և «Կովկաս» պարբերականների ստացումը: Երբ 1847 թվականի դեկտեմբեր ամսին դադարում է «Կովկասը» և մի քանի ամիս «Արշալույս Արարատյանը» անհամբեր սպասելուց հետո համոզվում է, որ կարող է մի բան պատահած լինի, 1848 թվի հուլիսի 9-ին գրում է.

«Քանի մը ամիս կա, Տփխիսի «Կովկաս» լրագիրը չի հասնիր Իզմիր և չենք գիտեր թե ինչ է պատճառը այս երկար հապաղման, բայց ցանկալի է մեզ հավատալ թե՛ հիշյալ հայերեն լրագրի հրատարակությունը կշարունակվի միշտ»:[1]

Առանձնահատուկ ուշադրություն է ներկայացնում այն վերաբերմունքը, որ ունեցել է արևմտահայ թերթը Երևանի նկատմամբ: Մոտիկից հետաքրքրվել է Երևանի կուլտուրական, դպրոցական կյանքով, գավառական դպրոցի գործերով, որի տեսուչն էր Խաչատուր Աբովյանը:

Միայն 1848 թվականի հոկտեմբեր ամսին «Արշալույս Արարատյան»-ի խմբագրությունը որոշակի տեղեկանում է «Կովկաս» լրագրի փակման մասին և հայտնում է իր ընթերցողներին հետևյալ տողերով. «ցավալի սրտիվ իմացանք թե Տփխիսի «Կովկաս» անուն հայերեն լրագրույն հրատարակությունը դադարեր է: Այս տրտմալի լուրը քիչ մը չափավորելու համար արժան կհամարենք հիշյալ թերթին 46-րդ թվույն մեջ եղած հետևյալ հոդվածը հաղորդել մեր ընթերցողաց»:[2]

«Արշալույս Արարատյանի» արտատպած ինֆորմացիայի մեջ խոսվում է այն մասին, թե Երևան քաղաքի գավառական դպրոցը մի խրախուսելի նախաձեռնություն է կատարել, հիմնել է մի թանգարան, որտեղ ամփոփվելու են զանազան էքսպոնատներ, թե այդ թանգարանում արդեն հավաքված են Հայաստանի հանքային հանածոներից մի քանի նմուշներ, ձեռք են բերված հնություններ, այդ թվում Տրդատ թագավորի տաճարի սյուների մասերը:

Այս հատվածը ցույց է տալիս, որ Երևանի գավառական դըպրոցի մասին իմացել են «Արշալույս Արարատյանի» խմբագիրները:

---

1 «Արշալույս Արարատյան», 1848, № 315:

2 «Արշալույս Ուրարատյան», 1848, № 322:

Անկասկած է, որ այդ թանգարանի կազմակերպումը կապվում է գավառական դպրոցի տեսչի՝ Խաչատուր Աբովյանի անվան հետ, չնայած «Կովկաս» լրագրում տպված և «Արշ. Արարատյան»-ի արտատպած ինֆորմացիայում բացակայում է նրա անունը:

Ավելորդ չենք համարում այդ հատվածը ամբողջապես մեջ բերել «Կովկաս»-ից.

«Երևան: Գովութեամբ և ուրախութեամբ հայտնեմք զբարի խորհուրդ նահանգապետի կողմանս, որ հաստատեաց ի նահանգական դպրոցին Երևան զթանգարան, յորում հաւաքել ջանա զամենայն բերս Արարատ գաւառին և արդեն գտանին անդանօր բեկոր ի մի կճեա քարէ և ի ծծմբոյ, որ բերեաւ ի գագաթանէ Ալագեազ* լերին, օքսիդեան, և պղնձահանք առաց: Առաւել խնդամք ընդ գեղեցիկ միւս մտադրութիւն սորա, քանզի փութոյ եռանդեամբ գոն գործէ խմ ի վայր հաւաքել զպէսպէս հնութիւնս Հայաստանի, որք սփիւռ և անտերունչ տարածեալ կան յաւերակս քաղաքաց, վանօրեից և շինից, ամենևին անտես ի մերոց համազգեաց. և ահա այժմէն տարեալ են ի նոյն դպրոցն չորս անարատ պահպանեալ ործաքար կամարակապք հոյակապ սեանց Արքունեաց Մերս թագաւորի սրբոյն Տրդատա: Ո՞վ աչք հայրենասիրաց, երբ տեսանեն զայսոսիկ վէմս, զայսոսիկ նշխարս փառաց մերոյ թագաւորութեան, յո՞ր դարս խորանան երևակայութեամբ զո՞րն ի կորստեանց հայրենի փառաց ոչ ի յուշ ածեն: Հայրենիք մեր երախտապարտ եղիցին սրտովական առնս, որ խորհուրդ ի մտի եդ ազատել ի ժանեաց ժամանակին և ի ձեռաց շինականացն զանգին նշխարս հնութեան մերոյ աշխարհի»:[1]

Անհավանական չենք համարում նաև այն, որ Աբովյանը բացի «Աղեկսանդրիա»-ից, տեղական բնույթի թղթակցություններ էլ է ուղարկել «Կովկաս»-ին, որոնց թվում գուցե և այս լուրը և Ներսես կաթողիկոսի Երևանից անցնելու նկարագրությունը և այլն:

Երևանի պատմությամբ զբաղվողները, այդ թվում և մեծավաստակ բանասեր Երվանդ Շահազիզը իր «Հին Երևանը» արժեքավոր ուսումնասիրության մեջ, Լեոն իր «Հիսնամյակ հայոց հոգևոր թեմական դպրոցի Երևանա» սովորածավալ գրքում, խոսելով Աբովյանի շրջանի Երևանի կուլտուր-կրթական կյանքի մասին, ցույց են տվել երկու դպրոց: Դրանցից մեկը հիմնվել է 1832 թվա-

---

* Ալագյազ-Արագած: Ծանոթ. «Կովկաս»-ի խմբագրության:

[1] «Կովկաս», 1847, № 46: Այս մասին տես նաև «Դիվան Խ. Աբովյանի», Երևան, 1940, էջ 182—184:

կանի հունվարի 14-ին և եղել է Երևանի երկդասյա պետական գավառական դպրոցը[1] և երկրորդը բաց է արել Էջմիածինը 1837 թվականին։ Այդ էլ եղել է հայերի հոգևոր դպրոցը, որը հետագայում, 1857 թվականին վերածվել է թեմական դպրոցի։[2]

Ինչպես հայտնի է՝ Աբովյանը 1843 թվականի հուլիսի 11-ին՝ ազատվելով Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի պաշտոնից, փոխադրվել է Երևան և ստանձնել գավառական դպրոցի տեսչի պաշտոնը։ Հայտնի է, որ նա ունեցել է Երևանում նաև մասնավոր դպրոց։ Սրանք են մինչև այժմ հայտնի փաստերը Աբովյանի շրջանի Երևանի դպրոցական կյանքի մասին։

Հայկական ՍՍՌ Գրական Թանգարանի կողմից վերջերս ձեռք բերված՝ Խաչատուր Աբովյանի դասընկեր Առաքել Արարատյանի տետրակներից մեկում Աբովյանի հիշատակին նվիրված ոտանավորը ցույց է տալիս, որ իր կյանքի վերջին օրերին Աբովյանը, փոխարքա Վարանցովի կնոջ կողմից հրավեր է ստացել պաշտոնավարելու Թիֆլիսի Նունյաց իգական դպրոցում։ Այդ ոտանավորում (որ գրել է Առ. Արարատյանը) ասված է.

«Ըստ հաճութեան տիկնոջ մեծի
Փոխարքային Վորոնցովի
Ի դպրոցին Նունեաց կուսի
Նշանակեալ պետ մեկուսի։
Մինչ պատրաստեալ ի չու յայս կոյս
Առեալ զտուն, զամենայն կոյս,
Ի գիշերի ընդ արշալոյս
Երրորդ աւուր ապրիլ ամսոյ
Յանկարծ կորաւ իմ Աբովեան,
Թափուր թողուլ զիւր նոջարան»։[3]

Թիֆլիսի Նունյաց իգական դպրոցը բացվել է 1846 թվին[4] և այնտեղ գերազանցապես սովորել են հարուստ դասի աղջիկները։ Արդյոք այդպիսի մի իգական դպրոց էլ Երևանում եղե՞լ է թե ոչ, և եթե եղել է, Աբովյանը որևէ մասնակցություն ունեցե՞լ է այդ

[1] Ե. Շահազիզ, «Հին Երևանը», Երևան, 1931 թ., էջ 250։

[2] Նույն տեղում։

[3] Հայկական ՍՍՌ Գրական Թանգարան, Առաքել Արարատյանի արխիվ «Արդասիք Ներսիսյան դպրոցի» էջ 141։

[4] „Кавказский Календарь". 1853, стр. 562.

կրթական հիմնարկի բացման նախապատրաստման գործին, կամ ինչո՞ւ գավառական դպրոցից ազատվելու օրերին Աբովյանը հրավիրվել է Թիֆլիսի իգական դպրոցը և ոչ Երևանի։ Դժբախտաբար այս հարցերի մասին ոչ մի տող չի գրվել մինչև այժմ։ Բայց զարձյալ Իզմիրի «Արշալույս Արարատյան»-ի օգնությամբ կարելի է լուսաբանել այդ հարցերը։

«Արշալույս Արարատյանի» էջերում տպագրվել է մի ուշագրավ ոտանավոր, որից պարզվում է, որ 1850-ական թվականներին Երևանում եղել է Հռիփսիմյանց իգական վարժարան։

Ըստ էության այս առաջին իգական դպրոցն է Հայաստանում, և հենց դրանով էլ անպայման ուշադրության արժանի։

Մեր նշած ոտանավորը ստորագրված է Իզմիրի Հռիփսիմյանց վարժարանի աշակերտուհիներից մեկի՝ Տիգրանուհի Շահինյանի կողմից և գրված է տարեվերջին քննությունների և հանդեսների առթիվ։ Ուշագրավ է, որ Իզմիրի Հռիփսիմյանց դպրոցի այդ աշակերտուհին ողջունում է Երևանի Հռիփսիմյանց դպրոցի աշակերտուհիներին։

Տիգրանուհի Շահինյանը, որը հանդես է գալիս որպես առաջին հայ բանաստեղծուհիներից մեկը, մեծ գովասանքով է խոսում ոչ միայն երևանաբնակ հայուհիների մասին, այլև շոշափում է հասարակական-քաղաքական հարցեր, ողջունում Ներսես Աշտարակեցուն, արտահայտելով անշուշտ ժամանակի հայ բուրժուազիայի գաղափարախոսությունը։

Ավելորդ չենք համարում մեջ բերել այդ ոտանավորը ամբողջությամբ, որպես հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների, ըստ որում մասնավորապես Երևանի ու Իզմիրի մտավոր-կուլտուրական կապի առաջին արտահայտություններից մեկը։

ԴՐՈՒՍՏ

Առ աշակերտուհիս սրբոց Հռիփսիմեանց դպրատան, որ յԵրևան, ի դիմաց աշակերտուհեաց Հռիփսիմեանց դպրոցի Զմիւռին։

Այն ինչ ոգին զմիտս խրախուսէր նորընտել,
Թռչիլ, յածիլ զհայրենեօք բան երգել,
Ձայն աւետեաց ի հայրենեաց անտի բարձր,
Ի Հայկազանց տանէ հնչեաց, քանի՜ քաղցր։

Զի Երևանն հան յերևան զնոր զարդաստ,
Հոփի տուն, յոր դուստրք փայլին ի հաստ,
Զի զի՞նչ լաւ քաղցր, ո՛ օրիորդք համազգիք,
Քան զձեր ի մէջ ուսմանց ծաղկիլն միասիրտք:
Ոչ շատացաւ ուսանելք պարծիլ Երևան,
Այլև զստերցդ եբաց լուսոյ ճեմարան:
Ձեր օրիորդք, որք նորա ծոցն զարմանիք,
Շնորհաց կաթամբ, սուրբ գիտութեամբ սնանիք,
Ձեր քաջ համբաւն, որպէս զեփիւռ զուարթագին
Շնչեաց ա՛ռ մեր սուրբ Հռիփսիմեանց նոր այգին,
Փառազգեցցի՛ Թո՛ղ Այրարատն ձեր վարուք,
Հարսն լուսոյ ձեր լուսաւոր իմաստիւք
Այցելուն մեր պատկառելին սրբազան,
Կեցցե՜ Ներսես կաթողիկոսն ազգախնամ
Մեկենասն ձեր, կեցցե՜ այս՛ վեհ իշխանն,
Որ ոչ խնայեաց առ ձեր ուսմանն զպատկան:
Մնա մեզ արեմն կրթիլ յերկիւղն առ աստուած
Լապտեր ունիլ ըստ իմաստուն կուսանաց:

Տիգրանուհի Հովհաննու Շահինյան Վ. Մ.
Աշակերտուհի սրբոց Հռիփսիմեանց դպրատան Զմիւռնիո:[1]

Ակնհայտնի փաստ է, որ Երևանում և Իզմիրում նույն թվականներում եղել է Հռիփսիմյանց իգական դպրոց և որ Երևանի Հռիփսիմյանց դպրոցը իր ուսումնական ծրագրով ու առաջադրած նպատակներով նման է եղել Թիֆլիսի Նունյանց իգական դպրոցին:

Մեր այս ենթադրությունը հաստատում են այն ժլատ տեղեկությունները, որ գտնում ենք „Кавказский календарь"-ի այդ թվականների համարներում: Նախ այդ տվյալներից պարզվում է, որ Երևանի Հռիփսիմյանց դպրոցը բացվել է Նունյանց դպրոցից 4 տարի հետո՝ 1850 թվականի հունվարի 1-ին, որ այդ դպրոցում սովորել են երևանաբնակ բազմազգի աղջիկներ՝ հայ, ռուս և ադրբեջանցի աշակերտուհիներ: Տիգրանուհի Շահինյանի ուղերձը գրվելու թվին Երևանի Հռիփսիմյանց իգական դպրոցում սովորում էին 28 աշակերտուհիներ, որոնցից 11-ը հայեր, 10-ը՝ ռուսներ և 7-ը ադրբեջանուհիներ: Եվ որ Հռիփսիմյանց իգական վարժարա-

[1] «Արշալույս Արարատյան», 1853 թիվ 421:

նի հայոց կրոնի ու լեզվի ուսուցիչն է եղել ոմն Առաքել Տեր-Համբարձումյանը։[1]

Ո՞վ է այս Տեր-Համբարձումյանը, արդյոք Աբովյանի աշակերտներից կամ ընկերներից մե՞կը, դժբախտաբար հայտնի չէ։ Մի բան պարզ է, որ դպրոցը 1850 թվականին բացված լինելով, այսինքն Աբովյանի անհայտանալուց երկու տարի հետո, Աբովյանը չէր կարող հրավիրվել այնտեղ պաշտոնի։

Անհավանական չէ անշուշտ, որ եթե ոչ Հախվերդյանց դպրոցի բացման, գոնե նրա նախապատրաստման աշխատանքներին մասնակցել է Աբովյանը և գուցե դիմել փոխարքային՝ Նունյաց դպրոցի ծրագրով մի դպրոց էլ Երևանում բաց անելու համար, մանավանդ որ այդպիսի դպրոցներ բացվել էին արդեն Քութայիսում, Շամախիում և ուրիշ տեղերում։

Մեր բերած փաստերը վկայում են, թե ինչպիսի սերտ օրգանական կապ է եղել 100 տարի առաջ արևմտահայ և արևելահայ հատվածների և մասնավորապես Երևանի ու Իզմիրի միջև։ Հավանական ենք համարում Խաչատուր Աբովյանի մասնակցությունն այդպիսի սերտ կապի մեջ։ Իսկ այդ՝ լավագույն ձևով կարող էր արտահայտվել գրավոր կերպով, թղթակցություններով։

Որ Խաչատուր Աբովյանի անունը ծանոթ է եղել «Արշալույս Արարատյանի» խմբագրությանը, դա նույնպես հավանական է։ Այդ ցույց է տալիս, գուցե նաև «Արշալույս Արարատյանի» այն բացատրությունը, որ կա «Աշխարհիկ բարբառ երևանցի հայոց» պատմվածքի վերնագրի տակ՝ «Գրեալ ի պատուելի Խաչատուր վարժապետէ Աբովեան»։ Պարզ է, որ եթե «պատվելի» բառը, որպես հարգանքի արտահայտություն՝ կարող էր դրվել նրա անվան մոտ, ապա **վարժապետ** բառը խմբագրությունը կարող էր գրել միայն լավ իմանալով, որ Աբովյանը Երևանում մանկավարժական աշխատանք է կատարում և հայտնի է իբրև մանկավարժ-ուսուցիչ։ Իսկ թե Երևանի գավառական դպրոցը ծանոթ էր «Արշալույս Արարատյանի» խմբագրությանը, այդ արդեն տեսանք նախորդ էջերում։

Որ գրվածքը ինքը Աբովյանն է ուղարկել «Արշալույս Արարատյանի» խմբագրությանը և ոչ արտատպություն է մի որևէ հրատարակությունից, կամ՝ ավելի ճիշտ, Աբովյանի ձեռագի՞րն է եղել Իզմիրում, և ոչ որևէ տպագրված օրինակ, այդ էլ երևում է այն մասնակի խմբագրական աշխատանքից, որին ենթարկվել է գըր-

[1] „Кавказский Календарь", 1853 стр. 563.

վածքը։ Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակության ծանոթագրությունների մեջ ասված է, թե գրվածքը արևմտահայ ընթերցողներին առավել մատչելի դարձնելու դիտավորությամբ, խմբագիրը «մի քանի տեղ հեղինակի լեզվի մեջ մտցրել է արևմտահայ ձևեր», ինչպես «չկորսնցնի», «կորսնցնի», «բացի քեն», «մի խավարեցներ», «չի արևր» և այլն։[1]

Մեզ թվում է, որ Գ. Պալտաղարյանը Աբովյանի լեզվի մեջ ոչ մի փոփոխություն չի մտցրել. միայն մի երկու տեղ, որտեղ առավել անհասկանալի բարբառային արտահայտություններ են եղել, փակագծերի մեջ գրել է դրանց արևմտահայ նշանակությունը, օրինակ, չարչարեց բառի մոտ փակագծերի մոտ գրված է բարկացուցյալ, նշանած բառի մոտ՝ հարս և այլն։ Մնացած «շտկումները» մեր կարծիքով արդյունք են գրաշարական սխալի, ձեռագրի վատ ընթերցման։ Օրինակ Աբովյանը գրել է «Մեր օրը մի խավարեցնի՛ր, դեդա ջան, մեր կյանքը մի ոչնչացնի՛ր»։ Այստեղ մի խավարեցնիր բառը գրաշարը շարել է «մի խավարեցներ», նախ շփոթելով արևմտահայ ոճի հետ, և հետո Աբովյանի ե և ի տառերի շատ նմանության պատճառով։ Այլապես մի՞թե «մի խավարեցնիր» ձևը ավելի անհասկանալի էր, քան, ասենք օհմիե, վարավուրդ, էնդուր ձևերը, որոնցից և ոչ մեկը ոչ ուղղված է և ոչ էլ բացատրըված։ Ամենայն հավանականությամբ գրաշարը գործ է ունեցել ձեռագրի, այն էլ հենց Աբովյանի ձեռագրի հետ։ Հնարավոր էր անշուշտ ենթադրել, որ ուրիշի կողմից արտագրված մի օրինակ է ընկել Իզմիր, եթե համոզիչ չլիներ մեր այն պնդումը, թե Աբովյանը կարող էր կապ ունենալ «Արշալույս Արարատյան»-ի խմբագրության հետ։

Անշուշտ, Աբովյանը շահագրգռված էր, որ իր երկերը լույս տեսնեին «Արշալույս Արարատյան»-ում։ Նախ՝ այն պատճառով, որ Թիֆլիսում և Երևանում Աբովյանը ուներ հակառակորդներ ղեկավար շրջաններում, ուստի հնարավոր է, որ նա զգուշանար գրգռելու իր հակառակորդներին աշխարհիկ բովանդակությամբ ու լեզվով մի գործի տպագրումով Կովկասի լրագրերում և երկրորդ, Աբովյանը՝ լինելով աշխարհաբարի ջերմ ջատագով ու պաշտպան, հասկանալի է, որ պետք է ցանկանար տպագրվել մի աշխարհաբար պարբերականում, որը լայնորեն տարածված էր գրեթե բոլոր հայ գաղութներում։

Ինչո՞ւ Աբովյանի այդ հատվածը լույս է տեսել 1850 թվակա-

[1] Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր 4, էջ 320—321։

նին, նրա անհայտացումից ուղիղ երկու տարի հետո։ «Արշալույս Արարատյանի» և «Կովկասի» փոխադարձաբար օգտագործած նյութերի համեմատությունը ցույց է տալիս, որ երբեմն մոտ մեկ տարի տարբերություն կա դրանց գրության և տպագրման ժամանակի միջև։ Կոշանակի Աբովյանի ուղարկելուց մոտ 8—10 ամիս հետո միայն կարող էր հասած լինել նյութը «Արշալույս Արարատյանի» ձեռքը՝ երևի առևտրական ճանապարհով, իսկ թե ինչու մոտ մեկ տարի էլ մնացել է խմբագրատանը, այդ էլ գուցե պետք է բացատրել նյութի ոչ ընթացիկ բնույթով։

II

Ակներև է Խ. Աբովյանի և Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը 60—70-ական թվականների արևմտահայ դեմոկրատ գրողների և առաջավոր գաղափարներով տոգորված երիտասարդության վրա։ Ստեփան Ոսկանի «Արևմուտք»-ի և Հ. Սրվանձյանի «Մեղվի» դիրքը Մ. Նալբանդյանի ու Աբովյանի նկատմամբ, Նալբանդյանի այցելությունը Փարիզ և Կ. Պոլիս, նրա շփումը արևմտահայ գրողների ու հրապարակախոսների հետ, մասնակցությունը Պոլսի սահմանադրական և առաջադիմական հոսանքների պայքարին, մերձեցումը Պոլսի երիտասարդության հետ, Բարեգործական ընկերության ժողովներին նրա մասնակցությունն ուժեղ ազդեցություն են թողել այդ շրջանների վրա։[1]

[1] Թե ինչպիսի մեծ հեղինակություն է ունեցել Նալբանդյանը Արևմտահայ երիտասարդության մեջ, երևում է այն բանից, որ մինչև սուլթանական խստագույն ցենզուրայի հաստատումը և հալածանքները, Նալբանդյանի ոտանավորները, մանավանդ «Ազատն Աստված»՝ շարունակ արտասանվում էին Պոլսի բեմերից, երգվում, արտագրվում տետրակից տետրակ ու անգիր արվում։ Այսպես կոչված «ազգային սահմանադրության» հաջորդող քսանամյակում Նալբանդյանը Կ. Պոլսի առաջավոր շրջաններում ամենից շատ սիրված հայ հեղինակն էր։ Այդ հմայքը քառապատկվեց հատկապես ռուս-թուրքական պատերազմի օրերին, երբ Նալբանդյանի բանաստեղծությունները արդեն պայքարի էին կոչում հայ երիտասարդությանը, ընդդեմ սուլթանական բռնակալության։

«Մշակի» թղթակիցը, Հայկակը 1878 թվին առանձնահատուկ հրճվանքով գրում էր «Այս գիշեր փառավոր հանդես պիտի լինի Օրթագյուղի հայոց թատրոնին մեջ։ «Աղքատք Փարիզու» ներկայացվելե հետո պ. Ադամյանց, առաջին կարգի դերասանը, շարժումներով պիտի կարդա Նալբանդյանցի երգը, ինչպես ուրիշ անգամ ալ կարդացած է Պատկանյանցի «Հիմի էլ լռենք»։ Մեծ ոգևորություն կա այժմ այստեղ»։ («Մշակ», 1878, № 43)։

Նույնպիսի հմայք ուներ և Խ. Աբովյանը Կ. Պոլսում, որի «Աղասու երգը», «Վերքից հատվածներ» երգվում ու արտասանվում էին Կ. Պոլսի երիտասարդական հավաքույթներում, հափշտակությամբ ընթերցվում էր «Վերք Հայաստանին»։

Եթե առաջին տասնամյակներում Աբովյանի անունը հիշատակվել է արևմտահայ մամուլում գերազանցապես մեր հիշատակած «Արշալույս Արարատյանի» տպած հոդվածի, կամ Պարրոտի հետ նրա՝ Մասիս սարը բարձրանալու առնչությամբ, ապա 60—70-ական թվականներին արևմտահայ դեմոկրատական շերտերում նկատվում է «Վերք Հայաստանի»-ի ուղղակի ազդեցությունը։

Ամենայն հավանականությամբ «Վերք Հայաստանի» վեպը արտասահման է ընկել հենց հրատարակված թվին։ Հնարավոր է, որ նույն թվին նա հասել է և Փարիզ, Ստեփան Ոսկանի ձեռքը, Պոլիս՝ Հ. Սվաճյանի ձեռքը։ Համենայն դեպս Սվաճյանի «Մեղվի» շուրջ համախմբված դեմոկրատական մտավորականությանը ծանոթ էր «Վերքը»։ «Մեղուն», «Աղասու խաղից» մի հատված տպագրել էր «Վերքի» լույս ընծայումից մի տարի առաջ՝ 1857 թվականի հուլիսի 15-ին, անշուշտ արտատպելով Գամառ Քաթիպայի հայտնի «Ազգային երգարանից», որը լույս էր տեսել Պետերբուրգում՝ վեպից մեկ տարի առաջ, 1856 թվին։[1]

Գամառ Քաթիպայի երգարանի վերնագրի «հին և նոր գործա-

Ռուս-թուրքական պատերազմին նախորդող տարիներին Կ. Պոլսում Վարդան Մամիկոնյանի, Տիգրան մեծի նկարներից ավելի Նալբանդյանի նկարներն էին մեծարվում ու հազարներով վաճառվում լրագրավաճառների մոտ, կրպակներում։ Թերթերում հայտարարություններ էին լույս տեսնում Նալբանդյանի նկարների վաճառման վերաբերյալ։

Նալբանդյանի ազդեցությունը այնքան խոշոր էր երիտասարդության վրա, որ երբ 1876 թվականին հիմնվում է «Արարատյան» ընկերությունը, որի նպատակն էր օգնել գավառին, գյուղերում դպրոցներ բաց անել, այդ ընկերության անդամներից Արփիարյանը առաջարկում էր ընկերությունը կոչել Մ. Նալբանդյանի անունով։

«Կփափաքեի ընկերության անունը «Նալբանդյանց» դնել,—գրում է իր հուշերում Արփիարյանը։ Կովկասցի հեղափոխական բանաստեղծը գրաված էր մեր պատանեկության սրտերը։ Սիրելի մնացած էր Նալբանդյանց իբր հեղափոխական ու «Ազատն աստվածը» իր խոկ սրտեն դուրս ժայթքած էր մեկ ցասումով ... «Ազատն աստվածը» միշտ մեր ազգային երգն էր... անջնջելի հիշատակ մը թողած էր սրտերնուս վրա» («Նոր կյանք», 1890, № 14)։

[1] Ազգային երգարան հայոց—Ծաղկաքաղ հին և նոր գործածական ամեն պարունակության երգերու կամ տաղերու, այբբենի կարգով աշխատասիրեց Գամառ Քաթիպա։ Ս. Պետերբուրգ, 1856։

ծական երգեր» արտահայտությունը ցույց է տալիս, որ «Ազատու խաղը» 19-րդ դարի կեսերին արդեն երգվում էր ժողովրդի մեջ և անհավանական չէ, որ անցած լիներ նաև արևմտահայերի մոտ և «Մեղուն» էլ «Երգարան»-ից արտատպեր այն երգերը, որոնք ծանոթ էին արևմտահայերին («Հայոց աղջիկներ», «Ազատու երգը» և այլն), մանավանդ որ այդ երգերը թե «Երգարան»-ում և թե «Մեղվում» տպագրված են անստորագիր:

Այդ նույն երգերից մի քանիսի, նաև Իզմիրի «Ծաղիկ» ամսագրում տպագրվելը ենթադրել է տալիս, որ դրանք ծանոթ էին արևմտահայերին:

* * *

Խաչատուր Աբովյանի մասին առաջին լուրջ հոդվածը գրել է Ստեփան Ոսկանն իր խմբագրած «Արևմուտք» թերթում, որտեղ խոսում է Աբովյանի կենսագրության մի քանի ուղենշային դեպքերի մասին ու վերլուծում «Վերք Հայաստանի» վեպը:

Ոսկանի հոդվածաշարքը լույս է տեսել «Արևմուտք» պարբերականի 1859 թ. երեք համարներում (թիվ 6, 7 և 10):[1]

Առաջին հոդվածում խոսվում է Աբովյանի կենսագրության մասին, ծանոթացվում նրա անձնավորությունը, հիշատակվում է անհայտացման վերաբերյալ տարածված կարծիքները:

Ոսկանի վկայությամբ Աբովյանի անունը իրեն, հետևաբար և ուրիշ արևմտահայ մտավորականների, հայտնի է եղել վաղուց՝ «շատ առենե ի վեր», իսկ «Վերք Հայաստանի» վեպը նա ստացել է «երևանցի ազգասեր բարեկամներու շնորհիվ»: Ոսկանն ըստ երևույթին ունեցել է մի մտերիմ գաղափարակից, որը եղել է գուցե Աբովյանի աշակերտներից կամ՝ համենայնդեպս, նրան շատ մոտիկ մարդկանցից մեկը: Այդ մասին նա ունի որոշակի հիշատակություն: Մեջ բերելով Աբովյանի անհայտացման դեպքը, գրում է.— «Այս տրտում դեպքը մեզի պատմողը դժբախտ հեղինակին աշակերտներեն մեկն է և չի կրնար Աբովյանին անունը հիշել առանց ափսոսալու անոր ճակատագրին և մեր ազգին վրա, որ հազվագյուտ տաղանդ մը կորուս անմեկնելի կերպով»:[2]

Թե ով է եղել Ոսկանի «երևանցի ազգասեր բարեկամը», Աբո-

---

1 Մատենագրական ցուցակներում այս աղբյուրը զարմանալի կերպով գրեթե միշտ ցույց է տրվել «Արևմուտք»-ի երկու համարները՝ 6 և 7-ը՝ անտեսելով 10-րդը, ուր տպագրվել է Ոսկանի հոդվածի վերջին մասը:

2 «Արևմուտք», 1859 թիվ 6, էջ 41:

վյանի աշակերտներից ո՞րը, դժբախտաբար հայտնի չէ, բայց հոդվածից երևում է, որ այդ անձնավորությունը եղել է Աբովյանին շատ մոտիկից, իր անձնական կյանքում ու խոհերի մեջ ճանաչող մի մարդ։ Ոսկանը հաղորդում է այնպիսի մանրամասնություններ Աբովյանի բնավորության, սովորությունների, հակումների վերաբերյալ, որոնք չէր կարող քաղած լինել «Վերք Հայաստանի»-ից կամ «Հյուսիսափայլ»-ում Ստ. Նազարյանցի հաղորդած կենսագրական մի քանի տեղեկություններից,[1] որոնք լույս տեսած լինելով մեկ տարի առաջ, 1858 թվին հնարավոր էր, որ ծանոթ լինեին Ոսկանին։

Անշուշտ Ոսկանը այդ թվին ծանոթ է եղել նաև օտարազգիների կարծիքներին, նա մեջբերումներ է կատարում ոչ միայն մեզ հայտնի եվրոպացիների գրածներից (Վագներ) այլև անծանոթ ֆրանսիացիներից, որոնք իր հետ ունեցած նամակագրությունների մեջ գովասանքով են խոսել Աբովյանի մասին։

Ոսկանը նույն «երևանցի բարեկամից» պետք է իմացած լիներ նաև Աբովյանի անհայտացման վերաբերյալ այն կարծիքները, որոնք մինչև այսօր էլ դեռ հուզում են Աբովյանով զբաղվողների մտքերը։ Ոսկանի կարծիքով անհավանական է Աբովյանի Սիբիր աքսորվելը։ Նա գտնում է, որ ինչքան էլ որ Աբովյանը «վառվռուն երևակայություն և մեծ հայրենասիրություն է ունեցել», այնուամենայնիվ նա կարող էր իրեն զսպել և օրենքի սահմանած գծից դուրս չգալ։ Ոսկանն ավելի հավանական է համարում Աբովյանի ինքնասպանությունը։ Այս կարծիքը հիմնավորելու համար մեջ է բերում «Վերքից» ընդարձակ ցիտատներ, որոնք վկայում են Աբովյանի հուսահատության նոպաները, անձնասպանության որոշ հակումը։

Հետաքրքրականն այն է, որ Ոսկանը՝ հակվելով ինքնասպանության վերսիայի կողմը, ինքնասպանությունը բացառապես կապում է հասարակական պատճառների հետ։ Նա Աբովյանին ներկայացնում է իր միջավայրում չգնահատված, չհասկացված ու չըմբռնված մի մեծություն, կղերականության կողմից արհամարհված ու հալածված մի մարդ։ Ինչպես հայտնի է, Ոսկանի այս ենթադրությունը ունի իր շատ որոշ հիմնավորումը։ Էջմիածինը նրան համարում էր լուսավորչական կրոնից հեռացած, օտարացած մի մարդ։ Նույնիսկ Աբովյանին սիրող շատ մարդիկ զգուշանում էին

---

1 «Հյուսիսափայլ», 1858 թ. էջ 144—148։

410—10

նրա հետ մտերմական կապեր ունենալուց: Մենք պատահական չենք համարում նաև Թիֆլիսի «Կովկաս» թերթում առհասարակ Աբովյանի անվան շուրջ պահպանված քար լռությունը՝ նույնիսկ նրանից թարգմանական էջեր տպագրելիս, այնինչ նույն «Կովկասի» էջերում շատ ու շատ երկրորդական, երրորդական անձնավորությունների, գրողների, հասարակական գործիչների անունները լույս էին տեսնում հաճախ: Անգամ Աբովյանի գործունեության մասին խոսելիս, Աբովյանի գավառական դպրոցի կյանքը նկարագրելիս «Կովկասը» զգուշացել է Աբովյանի անունը տալուց:

Ստեփան Ոսկանը Աբովյանի կենսագրությանը նվիրված հոդվածը վերջացնում է հետևյալ ջերմ տողերով:

«Այլ, հուսահատություն, թե դիպված, անհնարին է, որ իր վրա շողքանք և գրագետներու համակրությունը չգրգռենք իր հիշատակին համար: Ոչ, չպիտի բավի, որ խրավունք ունեի, երբ կգրեր «Մեկ օր էլ դու վեր կընկնես, կմեռնես, մեկ ողորմիս տվող էլ չես ունենար». իր աշակերտները և այս տողերը գրողը իր վրա պիտի գթան միշտ, երբեք չպիտի դասեն զինքը այն սուտ ազգասերներու կարգը, որք անձնական փառքի համար ամեն խրավունք ոտքի տակ կառնեն և որք գրիչ ունենալով ձեռքերնին, երկու տող չուզեցին իր վրա գրել»:[1]

Ոսկանի վերջին ակնարկը վերաբերում է անշուշտ արևելահայ ինտելիգենցիային, որը բացի Մ. Նալբանդյանցից ու Ստ. Նազարյանցից, քար լռություն էր պահպանել Աբովյանի շուրջը ու միայն «Արևմուտքի» հիշյալ հոդվածի լույս ընծայումից մեկ տարի հետո՝ 1860 թվականին, Մ. Աղաբեկյանը «Կռունկ Հայոց աշխարհի» հանդեսում խզում է լռությունը և առաջին ընդարձակ կենսագրական տեղեկությունները տալիս Աբովյանի մասին:[2]

Ոսկանի երկրորդ և երրորդ հոդվածներում խոսվում է «Վերք Հայաստանի» վեպի արժանիքների մասին, ընդարձակ մեջբերումներ կատարելով «Վերք»-ից:

«Արևմուտքի» խմբագիրը Աբովյանի «Վերքը» քննության է առնում երկու տեսակետից: Նախ՝ ծանոթացնում է այն, որպես բանահյուսական, ազգագրական հարուստ նյութ պարունակող մի աշխատություն, որը մանրամասն տեղեկություններ է տալիս հայ ժողովրդի նիստ ու կացի, բարքերի, սովորությունների, կենցաղի մասին: Եվ երրորդ, «Վերքը» քննության է առնում որպես վեպ,

1 «Արևմուտք», 1859 6, էջ 42:

2 «Կռունկ հայոց աշխարհի», 1860, էջ 866—875:

այդ բառի ժանրային առումով, կանգ առնելով նրա թե գաղափարական բովանդակության և թե գեղարվեստական արժանիքների վրա։

Ոսկանին ամենից շատ ուրախացնում է այն, որ Աբովյանը առաջինը փորձել է գեղարվեստական գրականության նյութ դարձնել ոչ օտարների կյանքը, հերոսությունները և ոչ էլ հայ ժողովրդի խոր անցյալի դեպքերը, այլ ժամանակակից կյանքի հուզող հարցերը իրենց կոնկրետ հերոսներով։ Նա գովում է «Վերքի» հեղինակին, որը «օտար ժողովուրդները ու դյուցազունները թողնելով կամք ըրեր է մեր քաջերեն մեկը ընտրել, անոր վարքը վիպական ձևով զարդարել և ազգին առջև դնել, որպեսզի տեսնե, կարդա և սփոփվի»։[1]

Ոսկանը հրճվանքով է նշում, որ Աբովյանը հրաժարվել է ճարտասանությունից, աստվածաշնչից և կյանքը քննել է «փիլիսոփայի աչքով», համոզվել է, որ «ժողովուրդը թե ընտանի և թե հրապարակի կյանքին մեջ այն գործերը կը սիրե, այն կիրքերով կըմայլի, որք հեռուեն կամ մոտեն արձագանքն են մարդկային զգացումներու և հայրենիքի փառքին կամ աղետքին»։[2] Ըստ Ոսկանի Աբովյանի մեծագույն արժանիքներից մեկն էլ այն է, որ նա առաջինը մոտիկից շփվել է բուն աշխատավոր ժողովրդի հետ, լսել նրա անգիր ավանդությունները, գրի առել դրանք ու հրամցրել ընթերցողներին։ «Աբովյանը գեղջուկին վարքը կը նկարագրե, վարք, ուր երբեմն ավելի քաջություն և վսեմություն կա, քան թե թագավորի մը գործերուն մեջ»։[3]

Հոդվածի շարունակության մեջ Ոսկանը փորձում է հիմնավորել այն կարծիքը, որ հայ ժողովրդի թշվառության պատճառներից մեկն էլ եղել է այն, որ ունենալով հանդերձ արիության, քաջության, համարձակության ու խիզախության սքանչելի օրինակներ, բազմաթիվ անձնազոհություններ, կարող լինելով հանդերձ ներքին և արտաքին թշնամու դեմ հերոսական կռիվ մղելու, մարդիկ միշտ խուսափել են այդ բոլորը նկարագրելուց, դրանցով երիտասարդներին ոգևորելուց և հայ ժողովրդին նկարագրել են հլու հնազանդ մի մասսա. «Կրոնամոլ եռանդ մը միշտ խավարեր է իրենց միտքը»։[4]

---

[1] «Արևմուտք», 1859, 6, էջ 54։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում։

Ստ. Ոսկանի հոդվածաշարքում լայն տեղ է տրված Աբովյանի լեզվին ու ոճին:

Հայտնի է, որ Ստեփան Ոսկանը արևմտահայ աշխարհաբարի ամենամեծ ջատագովներից էր: Նա հետևողական և համառ պայքար է մղել Մխիթարյանների ոչ միայն պահպանողական գաղափարախոսության, այլև նրանց կեղծ ու շինծու, մասսաների անհասկանալի գրաբարի դեմ:

Ոսկանից առաջ ամբողջ մեկ տասնամյակ ուժեղ կերպով բորբոքվել էր գրապայքարը և աշխարհաբարը հիմնականում իր տեղը նվաճել էր գրականության ու մամուլի մեջ: Արդեն հրապարակի վրա էին Նիկողայոս Զորայանի «Ընթերցասիրությունը», Գ. Օտյանի «Առաջարկություն աշխարհաբարի վրա» գրքույկը, Ն. Ռուսինյանի «Ուղղախոսության» առաջաբանը, որոնք արևմտահայ աշխարհաբարի առաջին անկյունաքարերն են հանդիսանում: Աշխարհաբարով լույս էին տեսնում մի շարք թերթեր՝ «Արշալույս Արարատյան», «Մասիս» և այլն: Նույնիսկ պահպանողական բանակը իր հրատարակությունները կատարում էր նոր լեզվով: Աշխարհաբարով էին լույս տեսնում Մխիթարյանների «Բազմավեպ» ու «Եվրոպա» պարբերականները, հայ լուսավորչական եկեղեցու գաղափարախոսությունն արտահայտող պահպանողական «Երևակը», որովհետև գրաբարը որպես լայն հաղորդակցության միջոց, դադարել էր գոյություն ունենալուց:

Ոսկանը Փարիզում շարունակում էր աշխարհաբարյանների սկսած գործը և իր «Արևմուտք» պարբերականում կռվում, հղկում էր արևմտահայ աշխարհաբարը, այն հարստացնում նոր տերմիններով, երբեմն ընկնելով ծայրահեղության մեջ ու փորձելով գրել Նահապետ Ռուսինյանի առաջարկած արհեստական «ուղղախոսությամբ»: Պայքարը գրաբարի դեմ ոչ միայն չէր դադարել, այլ շարունակվում էր ավելի մեծ կատաղությամբ և հասկանալի է, որ Աբովյանի «Վերքը» աշխարհաբարյանների ձեռքին կարող էր դառնալ մի լավագույն զենք՝ գրաբարամոլների դեմ պայքարելու համար: Ահա թե ինչու Ոսկանն իր հոդվածաշարքում լայն տեղ է տվել Աբովյանի լեզվին:

«Ինչպես կերևի,— գրում է նա,— պարոն Աբովյանը շատ հեռատես ազգասիրություն ուներ և գտալով ի վերջը, որ գրաբար լեզուն, մանավանդ այն, որ Վենետիկի վանքին հետևելով կը գրվի, արգելք է, քան թե գործի մեր առաջ երթալուն, իր գրագետի փառքը կը զոհե և կսկսի հին գրությունները հրաժարիլ: Այսօր քիչ ուսում-

ճանկան կա, որ իր կարծիքեն չըլլա, և իր բրածը չգովե»: Ապա շարունակում է «... Կի հասկնա ժողովուրդը, կ՚ըմբռնե անոր միտումները, կը շոշափե անոր վերքը, բայց կը տրտմի, հայու սիրտը հայու բերան չունի... Կը տրտմի, որ օտար լեզվով և օտարին հիշատակովը հայ սիրտը կզբոսնու և միտքը կը գնե այս ազգավեր սովորությունին դեմ զինիլ: Կ՚ընտրե ռամիկ լեզուն, և կաշխատի գրել ինչպես ռամիկը կը խոսի, այն աստիճան կը հաջողի, որ ռամիկը կարդալու սեր մը կզգա»:[1]

Արևմտահայ պահպանողական բանակը միշտ էլ չկարողացավ հանդուրժել Խաչատուր Աբովյանի աշխարհաբարը, այն համարեց «գռեհիկ» բառերով լի մի լեզու: Այդ կարծիքին էին մանավանդ Մխիթարյանները, որոնք այս կամ այն առիթով չէին թաքցնում իրենց վերաբերմունքը:

Մխիթարյանները Աբովյանի նկատմամբ ունեցած իրենց ատելության մեջ այնքան առաջ էին գնում, որ նույնիսկ խուսափում էին նրա անունը հոլովելուց, անգամ այն դեպքում, երբ այդ անհրաժեշտ էր: Օրինակ, Վեննայի Մխիթարյանների օրգան «Եվրոպան», նկարագրելով Պարրոտի Արարատ սարը բարձրանալը, խոսում է նրան ուղեկցող մարդկանց մասին, բայց Աբովյանի անունը չի հիշատակում: Խոսում է այն մասին, թե իբր կասկածի տակ է առնվել Պարրոտի մինչև Մասիս սարի գագաթը բարձրանալու փաստը, նրան ուղեկցող մարդկանցից երկուսը գրավոր վկայություն են տվել, էլի խուսափում է այդ վկայությունը տվող Աբովյանի անունը հիշելուց:[2] Նույնիսկ այնպիսի խոշոր գիտնական, ինչպիսին է Ս. Այտընյանը, իր «Քննական քերականություն արդի հայերեն լեզվի» աշխատության մեջ սքանչելի կերպով հիմնավորելով հանդերձ աշխարհաբարի վերջնական հաղթանակը և զարգացման օրինաչափությունը, որոշ վերապահում է անում «Վերքի» լեզվի մասին և ասում թե այդ գործը «ըստ կարի ռամիկ լեզվով գրված տաճկախառն, մի երկ է»:[3]

Անշուշտ Մխիթարյանների այս վերապահումը բոլորովին պատահական բան չէր և չպետք է միայն լեզվի խնդրով բացատրել: Աբովյանի գաղափարական թշնամիները լինելով՝ նրանք առհասարակ թշնամական դիրք էին բռնել մեծ լուսավորչի նկատմամբ:

---

[1] «Արևմուտք», 1859, 7, էջ 54:

[2] «Եվրոպա» 1860 № 25:

[3] Հ. Ա. Այտընյան.—«Քննական քերականություն արդի հայերեն լեզվի», էջ 235:

Ոսկանը միանգամայն այլ կարծիքի էր։ Մխիթարյանների թերություն համարածները նա նշում է հենց որպես Աբովյանի մեծագույն արժանիքները։ Նա արդարացնում է Աբովյանի՝ վեպի նյութը ժողովրդի կյանքից վերցնելը, ժողովրդի սովորությունների նկարագրումը, բարբառով գրելը, նույնիսկ այդ բարբառի մեջ օտար բառերի առկայությունը և այդ բացատրում է լեզվի օրինաչափ զարգացումով, անտեսական և հոգևոր պայմանների թելադրումով, հետևաբար այն համարում է ոչ թե թերություն, այլ առավելություն։ Ոսկանը գրում է.

«Իր ոճը ռամկի բերանը լսելով, կատարելապես կը հայտնե այն ամեն փոփոխությունները, որ մեր լեզուն ընդունեց ժամանակի, կլիմայի, օտարի և առօրյա դեպքերու ազդումեն։ Այս փոփոխությունները միշտ խանգարում չեն կրնար սեպվիլ և հետևաբար արհամարհվիլ։ Ընդհակառակը շատ հեղ ընդունելի և գովելի են։ Անհնարին է, որ լեզու մը անփոփոխ մնա, վասնզի միտքը միշտ կը շարժի և լեզուն, որ թարգման է, պետք է որ հնազանդի իր շարժումներուն»։[1]

Այսքան բարձր կարծիք ունենալով հանդերձ Խաչատուր Աբովյանի լեզվի, թեմատիկայի, նրա արտահայտած գաղափարախոսության մասին, Ոսկանը կատարել է մի վերապահում, որով անշուշտ տուրք է տվել ժամանակի տիրապետող ըմբռնումներին։ Նրա կարծիքով իր բոլոր արժանիքներով հանդերձ դժվար է «Վերք Հայաստանի» վեպը դատել «եվրոպական կանոններով, վասնզի, ինչպես ըսինք, ռամիկներու համար, և ռամիկ ոճով գրված է այն և իբրև գրական շենք մի չընծայվիր մեր առջև»։[2]

Ոսկանի սխալն այստեղ այն է, որ նա՝ սուր կերպով քննադատելով կլասիցիզմի ճոռոմ ու վերամբարձ ոճը, առաջ քաշելով հանդերձ ժողովրդական գրականության անհրաժեշտությունը, չի կարողացել ամբողջովին ըմբռնել բուն ժողովրդական գրականության էությունը և շարունակել է այդ գրականությունը դիտել «եվրոպական կանոնների» պահանջով։ Ոսկանը Աբովյանի վեպի թերությունը վերագրել է նրա գերմանական պատրաստականությանը։

«Գերմանական ճապաղություն մը, շատ կրկնություններ, և ռամկական առավելություններ կտեսնեն հոն»,— գրում է նա։

Այդ սխալն անելով՝ Ոսկանն ինքը կատարում է վերապա-

[1] «Արևմուտք», 1859, 10, էջ 74։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

հություն և գրում է. «Բայց այս պակասություններու քով, հայրենական վառվռուն սեր մը, հնարավոր երևակայություն մը և նուրբ դիտումներ կգտնվի գրեթե ամեն էջերու վրա... Կարդացողը կարծես թե Հայաստանի գյուղերու մեջ կփոխադրվի և համայնքում եղբայրներու պարզության, գոհ չքավորության, երբեմն ալ սոսկալի աղետներու մասնակից կըլլա, տեղ տեղ այնպիսի մանր և փափուկ նկարագրություններ կան, որ Բալզակի և Էժեն Սուի գրածներեն վար չեն մնար և վիպասանի թանկագին տաղանդ մը կհայտնեն»:[1]

Հայտնի է, որ Ոսկանի սխալ մեկնաբանությունը շատ խիստ քննադատության ենթարկեց ռևոլյուցիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Նալբանդյանն իր «Մեռելահարցուկ»-ի ծանոթագրություններից մեկում ջերմ կերպով ողջունելով Ոսկանի հոդվածը, բարձր է գնահատում նրա մատուցած ծառայությունը Աբովյանին ծանոթացնելու գործում և գրում է.

«Փարիզի «Արևմուտք» անունով հայկական օրագիրը, որը հրատարակվում է ներկա 1859 հունվարից, արդո Ստեփաննոս Ոսկանյան գիտնական պարոնի ձեռքով, յուր վեց համարի մեջ առիթ ստանալով այս գրքի հայտնությենից, խոսում է Աբովյանի վարքի վերա, իսկ 7 համարի մեջ հայտնում է յուր կարծիքը «Վերք Հայաստանին» անունով գործի մասին: Առհասարակ գիտուն հրատարակողը «Արևմուտքի» գովությամբ խոսում է Աբովյանի մասին և հասկացել է բոլորովին թե գրքի խորհուրդը և թե հեղինակի արժանավորությունը, բայց այդ աշխատության մասնավոր կողմերին վերաբերված մի քանի կարծիքների մեջ չեմ կարող համաձայնել պրն. Ոսկանյանի հետ»:

Նալբանդյանը չի ընդունում Ոսկանի այն դիտողությունը, թե «Վերքը» «Ռամկի համար է և ռամկի ոճով գրված է»:

Ռամիկ բառը ըստ երևույթին Ոսկանի մոտ շատ ավելի նեղ իմաստ է ունեցել. նա միայն անգրագետ մասսա է հասկացել, իսկ Նալբանդյանը հասկանում է ամբողջ ժողովրդին, դուրս թողնելով նրանից միայն փոքրաթիվ վերնախավին: Նալբանդյանը գրում էր. «Համաձայն չեմ: Բոլոր ազգի համար է գրված. այնտեղ կա ուսանելիք ոչ միայն շինականի համար, այլև քաղաքացու, այլև հայոց կիսատ-թերատ ուսումնականների համար ևս»:[2]

Ուշագրավ է, որ այն, ինչ որ Ստեփան Ոսկանը համարում է

---

1 «Արևմուտք», 1859 թ. № 7, էջ 55:

2 Մ. Նալբանդյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատ. I, էջ 280:

գերմանական դաստիարակության արդյունք, Նալբանդյանը բացատրում է բուն հայ ժողովրդի ազդեցությամբ։

«Լեզվի և ոճի ճապաղությունը,— գրում է Նալբանդյանը,— հետևանք չէ բանաստեղծի գերմանագիտությանը, այլ բուն ազդեցության տեղական ժողովրդի կյանքին և միտք հայտնելու ձևերին։ Նույնանշան բառերի անհամ կրկնությունք տեսանում ենք, այո, բայց չմոռանանք, որ Աբովյանցի խորհուրդը է գրել այնպես, որ անկիրթ ժողովուրդը չկարծե թե գիրք է կարդում, այլ կարծե թե մի մարդ խոսում էր յուր հետ»։[1]

Իր հիշյալ փոքր վրիպումով հանդերձ Ստեփան Ոսկանի հոդվածաշարքը մնում է Աբովյանի մասին գրված առաջին լուրջ ուսումնասիրությունը։ Կարևորն այն է, որ Ոսկանը սոսկ հիացող չի եղել Աբովյանի ստեղծագործության նկատմամբ։ Նա միաժամանակ կրել է Աբովյանի գաղափարական և գրական ուժեղ ազդեցությունը և այդ ազդեցությամբ գրել է մի վիպակ «Հայ դյուցազնուհի մը» վերնագրով, որի սյուժեն բավականաչափ նման է «Վերքի» սյուժեին։ Այստեղ էլ հիմնականը հայ ժողովրդի պայքարն է՝ պարսիկ բռնապետության դեմ։ Այստեղ էլ առկա է հայ դյուցազնուհու առևանգումը Հյուսեին խանի ֆառաշների կողմից, նրա չարչարումը, անձնատուր չլինելու անհողդողդ կամքը, նրա սիրած երիտասարդի պայքարը պարսիկների դեմ և այլն։ Այստեղ էլ խոսվում է Երևանի հռչակավոր բերդի մասին, Զանգու գետի մասին։

Առհասարակ «Վերք Հայաստանի»-ի շունչը շատ որոշակիորեն իր վրա կրելով հանդերձ, Ոսկանի գործը իր թե գաղափարական և թե գեղարվեստական արժանիքներով հեռու է «Վերքի» հետ համեմատվելուց։

* * *

Եթե 60-ական թվականներին Կ. Պոլսի առաջադիմական տարրերի կենտրոնն էր «Մեղու», ապա Իզմիրում այդպիսի կենտրոն էր Գ. Չիլինգիրյանի «Ծաղիկը», որի հիմնական ուժերը՝ Գ. Չիլինգիրյանը, Մ. Մամուրյանը, Արմենակ Հայկունին արտահայտում էին ժամանակի առաջավոր գաղափարները և հանդիսանում են արևմտահայ խոշոր լուսավորիչներ։ Նրանք խիզախ ու համարձակ պայքար են մղել ռեակցիոն տարրերի դեմ։ «Ծաղիկը» փայլում էր մեծ հեղինակություն առաջավոր երիտասարդության մեջ։ «Ծաղի-

[1] Մ. Նալբանդյան. «Երկերի լիակատար ժողովածու», հատ. I, էջ 280։

կը» ջերմ էջեր է նվիրել Նալբանդյանին, միշտ հիշատակելով նաև Աբովյանի անունը։

1861 թվականի նոյեմբերի 18-ին, երբ Մ. Նալբանդյանը Ալեքսանդրիայից հասնում է Իզմիր, «Մեղվի» շուրջ համախմբված երիտասարդներից մի քանիսը, որոնք նաև «Հաշտենց» և «Վասպուրական» ընկերությունների անդամ էին, դիմավորում են մեծ ովացիաներին և հանդիպում ունենում նրա հետ։

«... Իր տեսությունը թեև կարճատև եղավ,— գրում է «Մեղվիկը»,— սակայն մեր հիշողությունը համակրության այնպիսի դրոշմով մը կնքեց, որ ժամանակին թևը անկարող պիտի ըլլա սրբել և ջնջել»։[1]

Եվ իսկապես այդ տողերը գրողները չմոռացան Նալբանդյանին։ Երբ 1866 թվին լսվեց Նալբանդյանցի մահը, առաջին դայբույթի բողոքը բարձրացնողը եղավ Իզմիրի «Մեղվիկը»։

Մամուրյանը՝ խարազանելով «Հայկական աշխարհ» պարբերականի դավաճանական վերաբերմունքը դեպի Նալբանդյանը, գրում էր․

«Սակայն ինչպես Աբովյանը, և իր մահը անվրեժ կմնան, նույնպես կմնան և Նալբանդյանցը և իր մահը մութին մեջ»։[2]

Նույն հոդվածի շարունակության մեջ Մամուրյանը գրում էր, որ հաճելի բան է սկզբունքի համար մեռնելը, թե այդպիսի նահատակություններն են, որ ապահովում են մարդկության առաջադիմությունը։ Ուստի այժմյան դարում, երբ կա տպագրություն, մարդկանց սպանելով հնարավոր չէ սպանել նրանց գաղափարները։

«... Անօգուտ է, այո,— գրում էր նա,— վասնզի եթե Նալբանդյանցը Աբովյանի պես աներևույթ լիներ անգամ, ազատասեր գրիչները չպիտի դանդաղեին անոր նահատակության պարագաները փնտռել, երևան հանել և հռչակել, ինչպես որ այսուհետև երկարորեն ևս պիտի հռչակվին անշուշտ, եթե ոչ ի Ռուսաստան, գեթ այլուր, վասնզի Նալբանդյանցը, ինչպես կենդանության ատեն, նույնպես մահվանեն ետև, պիտի գործե ազգին մեջ, քանի, որ շղթան և սուրը չեն կրնար կաշկանդել և սպանել այն լուսատու գաղափարները, որոնց հռետոր կանգնեցավ նա և որոնք իբրև ամպրոպային փոթորիկներ կորոտան թագավոր բռնավորներու գլուխներուն վրա, մինչև որ փայլակն ու կայծակը պայթին և թագ

1 «Մեղվիկ» 1861, էջ 120։

2 «Մեղվիկ», 1866, էջ 190։

ու փոխ այրին տոչորին… Նալբանդյանցի ազատագրական հայրենասիրությունը անդադար հրավէր մ'ունի կարդալու մեզ և ազգը նվիրական պարտք մը կատարելու»։[1]

* * *

60—70-ական թվականներին իշխող կղերա-պահպանողական և լիբերալ գաղափարախոսության դեմ համարձակ ու որոշակի դիրքավորումով հրապարակ է իջնում Սեդրակ Տեր Սարգսենցը, իր «Վառարանի մը կայծեր» բանաստեղծությունների ժողովածուով և «Շահենն ի Սիպիր» շեշտված քաղաքական վեպով,[2] որը արժանանում է Նալբանդյանի «Երկրագործության» բախտին, արգելվում է, բռնագրավվում ոչ միայն Թյուրքիայում, այլև Ռուսաստանում։

Ահա այս բացառիկ աշխատությունն էլ իր վրա կրում է Խ. Աբովյանի և Մ. Նալբանդյանի շատ որոշակի գաղափարական, նույնիսկ գրական ազդեցությունը։ Մեր նյութից դուրս համարելով Նալբանդյանի ազդեցության քննարկումը, կանգ առնենք այն մի քանի բնորոշ կետերի վրա, որոնցով Տեր Սարգսենցը մոտենում է Խաչատուր Աբովյանին։

Այդ վեպի մեջ Տեր Սարգսենցը՝ հավասարապես սուր, ոչընչացնող քննադատության է ենթարկում ինչպես ցարական բյուրոկրատիան, ցարիզմի ազգային քաղաքականությունը, որի պատճառով Ռուսաստանը դարձել էր «ազատամիտ մարդոց բանտ», նույնպես և տնտեսական քաղաքական ավելի ռեակցիոն պայմաններում գտնվող սուլթանական Թյուրքիան։ Տեր Սարգսենցը առաջինն էր արևմտահայ իրականության մեջ, որ սոցիալական անհավասարությունը դարձրեց վեպի նյութ, ցույց տվեց, որ մինչդեռ Կ. Պոլսում հայ բուրժուազիան եվրոպական երկրների մարդասիրության վրա հույս դրած խաղում է հայ ժողովրդի բախտի հետ, գավառում հայ գյուղացիությունը ապրում է ամենադաժան պայմաններում, ենթարկվում կրկնակի, եռակի շահագործման ու ճնշման։ Մի կողմից պարտքատերն է գյուղացու մեջքին նստել, մյուս կողմից՝ «թրով թվանքով մարդիկ», այսինքն պետական պաշտոնյանե-

[1] «Ծաղիկ» 1866, էջ 490։

[2] «Շահենն ի Սիպիր» վեպը գրված է 1871 թվին, բայց լույս է տեսել 1877 թվին։

րը, և վերջապես «սևավոր մարդիկ»՝ այսինքն հոգևորականությունը։ Ահա այս երրորդությունն է, որ քամում է հայ գյուղացու արյունը, խլում նրա ճակատի քրտինքով ձեռք բերած հացի կտորը։

Ո՞րն է Տեր Սարգսենցի քաղաքական համոզմունքը, պայքարի նրա առաջարկած ուղին։ Այն՝ որ հայ ժողովրդի փրկությունը չի կարող սպասվել ոչ աստծուց, իր խոսքով ասած՝ «Հոգևոր տիրոջմեն», ոչ «ստամբոլա պատրիարքեն», ոչ «Էջմիածնա կաթողիկոսեն», ոչ «թագավորեն», այլ հայ ժողովրդի ազատագրությունը կարող է ձեռք բերվել միայն և միայն բուն այդ ժողովրդի ջանքերով։

«Շահենն ի Սիպիր» վեպի սյուժեն նույնպես շատ է հիշեցնում «Վերք»-ի սյուժեն։ Այստեղ էլ, տիրող բռնապետական կարգերի դեմ ըմբոստացող Շահենը հարկադրված է թողնել իր սիրելի հայրենիքը ու թափառել այս ու այն կողմ, փրկել թշվառների կյանքը, ազատել կանանց բռնապատիչների ճիրաններից։

Որ Տեր Սարգսենցը Շահենի կերպարը գծելիս նկատի է ունեցել Աղասուն, այդ ամեն կասկածանքից վեր է։ Շահենն էլ նույն հոգևորական կաշկանդումների, աղոթքների, հեղձուցիչ մթնոլորտից փախչելով այդ բոլորը սուր քննադատելով սկսում է իր գործունեությունը։ Շահենը Աղասու նման որոշ սանտիմենտալ գծեր ունի, ազգասիրությունը նրա մոտ արտահայտվում է մի տեսակ բուռն կարոտով և ինքն էլ շատ հաճախ, ինչպես Աղասին, սիրում է հայրենասիրական զեղումներ կատարել, խոսել, երգեր երգել հայրենիքի մասին։

Ինչպես Աղասին, այնպես էլ Շահենը իր գործունեության մանավանդ Տաճկահայաստանյան շրջանում, մտահոգված է հայ ժողովրդի փրկության գործով, հենց նույն Հայաստանի վերքը բուժելու դուրս եկած մի հերոս է նա։

Գաղափարական տեսակետից Աղասու կերպարը անշուշտ ավելի խտացած է, ամբողջացած, տիպականացված։ «Շահենն» էլ ունի այլ կարգի առավելություններ։ Եթե հասարակական պայմանների քննադատությունը Աղասու մոտ հանդես է գալիս հիմնականում օտար տիրապետողների դեմ ծառանալով, եկեղեցական որոշ դոգմաների քննադատությամբ, ապա Շահենը ամենից առաջ տեսնում է եկեղեցու ու կալվածատերերի շահագործող բնույթը, ցույց է տալիս, որ հայ ժողովրդի արյունը քամողները, նրա ձեռքի վերջին պատառ հացը խլողները ամենից առաջ ներքին ցեցերն են։

Ահա հասարակական այս պայմաններից է, որ փախչում է Շահենը, ծառանում է այդ պայմանների դեմ, ընդվզում է, ձերբակալվում, բանտարկվում, ազատվում ու կազմակերպում հայ գաղթականության անցումը դեպի Ռուսահայաստան, որտեղ իշխողն է քրիստոնյա մի պետություն:

Այստեղից էլ երկրորդ տարբերությունը «Վերքի» ու «Շահենի» միջև: Ավելի քան մի քառորդ դար էր անցել «Վերք»-ի հղացումից հետո, փոխվել էին հասարակական-քաղաքական պայմանները, եթե Աբովյանի շրջանում նոր էր սկսվել Անդրկովկասի ռուսական գրավումը ու այն հակադրվելով պարսկական ծանր լծին, Աբովյանը տեսնում էր քաղաքական ու տնտեսական նոր պայմանների անուրանալի առավելությունը, գովքն էր անում ռուսական տիրապետության, ապա Տեր Սարգսենցը, որ տեսել էր փոքր ժողովուրդների հանդեպ ցարական կառավարության ցուցաբերած դաժան քաղաքականությունը, մանավանդ աշխատավոր ժողովրդի կեղեքումը չինովնիկների ձեռքին, չէր կարող նույն ձևով գնահատել ռուսական տիրապետությունը, չէր կարող չնկատել ցարական պաշտոնյաների կամայականությունները, ցարիզմի գաղութային քաղաքականության ծանրությունը Կովկասի ժողովուրդների համար և այդ քաղաքականության պայմաններում ստեղծված հասարակական-քաղաքական այն ծանր մթնոլորտը, որ արևելահայերի մոտ այնքան ցայտուն կերպով գծել են Պռոշյանը, Աղայանը, Աբովյանից քառորդ դար հետո:

Դրա համար էլ Շահենի երկրորդ շրջանի՝ Թիֆլիսյան գործունեությամբ Տեր Սարգսենցը բացահայտում է ցարական ինքնակալության էությունը, ցույց է տալիս, որ այդ կարգերը ծառայում են միայն տիրապետող դասակարգերին: Տեր Սարգսենցի մոտ կա որոշակի քաղաքական գիծ, նրա համար Շահենի դժբախտության պատճառը նույնքան հայ չինովնիկները, դավաճան իշխան Մելիքովներն են, որքան ռուս նահանգապետները:

Տեր Սարգսենցը կատարում է վերապահում: Շահենը միամտաբար հայտնելով իր գաղտնիքը լրտես Մելիքովին, ասում է.

«Այո, վշտացել եմ ռուսներից, ոչ թե ամենազոր թագավոր կայսրից, որու համար եթե հազար անգամ մեռնիմ ոչինչ չեմ զգալ, ու փառք եմ համարում ինձ, **ոչ էլ ռուս պարզ ժողովրդից դժգոհ եմ** (ընդգծումը մերն է— Գ. Ստ.), այլ նրանց պաշտոնյաներից, որ վատ վատ օրենքներով այս աշխարհի ամեն բնական

իրավունքներն ու ազատությունը ջնջել են, զորս տրաքում, պատռում են, ախր էլ չեմ կարողանում համբերել»։[1]

Շատ պերճախոս է Տեր Սարգսենցի այս բացատրությունը։ Նրա ակնարկած «Թագավոր-կայսրը» հենց ռուսական տիրապետությունն է, նա դրան կողմնակից է, դժգոհ չէ «ռուս պարզ ժողովրդից», բայց նրա ամբողջ ցասումը տիրապետող կարգերն են, կաշառակեր չինովնիկները։

Նա ոչ միայն անհատ չինովնիկներին, այլ առհասարակ ցարական կարգերն է քննադատել։ Այդ երևում է վեպի երկրորդ մասի յուրաքանչյուր տողից, մանավանդ Սիբիրի նկարագրությունից, որը ներկայացված է որպես «ազատամիտ մարդոց բանտ», որտեղ ներկայացուցիչներ ունին բոլոր ժողովուրդները՝ ռուսները, ուկրաինացիները, լեհերը, հայերը, վրացիները։ Տեր Սարգսենցը՝ նկարագրելով իր հերոսի գործունեությունը Թիֆլիսում, մի վանեցի ժամկոչի միջոցով պատմում է թե այդ օրերին մի աննշան խոսքի համար ձերբակալվել ու սև կառքով Սիբիր է աքսորվել մի զարգացած, եվրոպայում ուսում առած հայ երիտասարդ, որը հոր ու մոր մի հատիկն է եղել, սիրել է իր ժողովրդին։

Արդյոք Շահենի խոսակցի՝ ժամկոչի ակնարկած այս երիտասարդը Աբովյանը չէ՞։ Դժբախտաբար հեղինակը չի կարողացել ամբողջացնել այդ կերպարը, հարևանցի նկատողություններով է միայն ներկայացրել, բայց մի փոքր փաստ վկայում է, որ Տեր Սարգսենցը նկատի է ունեցել Աբովյանին։ Այս դեպքերը նկարագրելուց հետո Տեր Սարգսենցի վեպի չորրորդ մասն է սկսում, որի առաջին վերնագիրն է «Տասնեվմեկ տարի վերջ»։ Շահենի Թիֆլիսում գտնվելու թվականը որոշ չէ։ Վեպի չորրորդ մասում, սակայն մեջ է բերվում մի նամակ, որը ցույց է տալիս, որ խոսքը վերաբերվում է 1860 թվականին։ Եթե 1860-ից հանենք 11—12 տարի, ապա ստանում ենք ճիշտ Աբովյանի անհայտացման թվականը։

«Շահենն ի Սիպիր» վեպում անշուշտ առկա է նաև Միքայել Նալբանդյանը։ Նա հանդես է գալիս հատկապես վեպի վերջում, երբ Սիբիրում խոսում են աքսորյալների ոգիները։ Նալբանդյանը այնտեղ գծագրված է շատ ավելի ամբողջական։

Նալբանդյանի ոգին Սիբիրում ասում է.

... Ես տնտեսական խնդիր հարուցի, յուրաքանչյուր մարդուն ապրելու չափ հողի սեփականության իրավունք պետք է, ասացի և

[1] Ս. Տէր-Սարգսենց, «Շահենն ի Սիպիր», Բ. տպ. Կ. Պոլիս, 1911, էջ 250։

տերության ու ժողովրդյան շահն այս միջոցավ կարող է բարեկարգել. ազնվական հողատիրաց մատնեցին զիս իշխանության, թե մեր ճորտեր, սորուկներ մեր դեմ կգրգռե. իշխանության պաշտոնյայք զիս կանչելով սաստեցին.

— Լսեցինք թե երկրագործության շատ կսիրես, հրամմե Սիբիր, ուղածիդ չափ հող կա հոն, վարե ու ցանե:

Սիբիրի ոգիների մեջ, մեր կարծիքով, առկա է նաև Աբովյանը և Աբովյանի ոգին է, որ ասում է՝

— Եվ ես իմ տառապյալ ազգի և հայրենյաց վէրքեր քննելու համար [եկա] և զիս վիրավորեցին. սև արծիվներ վրաս խոյացան. ճանկարծ ազգիս ու բնտանյացս գրկեն ճափշտակեցին: Նոքա դեռ զիս կը փնտռին»:[1]

Տեր-Սարգսենցը, որ ամբողջ վեպը գրել է Աբովյանի «Վերք»-ի ազդեցությամբ, «Շահենի» մեջ ակնարկներ է արել Աբովյանի անհայտացման մասին, չէր կարող Սիբիրում ցույց չտալ նրան, թեկուզ համոզված չլիներ թե նա աքսորված է: Անտարակուսելի է, որ «ազգի և ճայրենյաց վէրքեր քննող», ազգի ու բնտանյաց գրկից ճանկարծ անհայտացողը Աբովյանն է, որին դեռ «նոքա կը փնտռեն»:

Մեր այս ենթադրությունը ավելի ևս հաստատում է Տեր-Սարգսենցի մի բանաստեղծությունը, որը նույնպիսի գնահատումներով է ծանոթացնում «Հայաստանի վէրքը» պատմող հեղինակին, որին հափշտակել են «բնտանիքից և ազգից»:

Այդ բանաստեղծությունը, որ տպված է «Շահեն և Սիպիր» վեպից առաջ, 1875 թվին տպված «Վասպուրանի մը կայծեր» քաղաքական բանաստեղծությունների ժողովածուի մեջ, ունի հետևյալ վերնագիրը՝ «Ի հիշատակ Խ. Աբովյանի»:

Այստեղ երևում է հեղինակի ամբողջ համակրությունն ու վերաբերմունքը դեպի մեծ լուսավորիչը:

Ամենից առաջ նկատենք, որ Տեր Սարգսենցը իր այդ ոտանավորը գրելիս (1875 թ.) իր սեղանի վրա ունեցել է «Վերք Հայաստանի» վեպը և նրա թարմ տպավորության տակ է, որ գրել է այդ ոտանավորը: Ի՞նչ հիմք ունենք այս ենթադրությունը անելու: Տեր Սարգսենցը իր ոտանավորը սկսում է գրեթե այն տողերով, ինչ տողերով, որ վերջանում է «Վերք Հայաստանին»:

«Վերքի» վերջին էջում կարդում ենք՝

[1] Սեդրակ Տեր-Սարգսենց, «Շահեն և Սիպիր», բ. տպ., էջ 278:

«Գերեզմանն կորած, հողումը թաղված,
Աչքից հեռացած, մտքից մոռացած,
Իրանք անլեզու աշխարհս անիրավ,
Որ հայոց ազգիցն անթիվ ու անքավ
Էսպես քաջ որդիք խլեց՝ չկշտացավ»։[1]

Տեր Սարգսենցի ոտանավորն էլ սկսվում է այսպես.

«Գերեզմանդ կորած,
Աչքից հեռացած,
Մտքից մոռացված,
Դու ինքդ անլեզու,
Աշխարհս անիրավ,
Ոչ ոք չհարցուց
Թե խեղճ Աբովյանն
Ո՞ւր գնաց կորավ»։
Ոչ սուրբ հիշատակդ
Սերտել կարացին,
Ոչ քարե արձան
Վրադ կանգնեցրին,
Արդյոք Հայաստանի
Վերք պատմող մարդուն
Սրտի թոքի մեջ
Զարկեցին դաշույն»։[2]

Այս տողերը շատ բնորոշ են։ Աբովյանի անհայտացման առեղծվածը նույնքան խստությամբ չարչարել է Տեր Սարգսենցի միտքը, որքան շատ շատերին, սկսած Աբովյանի դասընկեր Առաքել Արարատյանից, վերջացրած մեր օրերի բանասերներով։ Տեր-Սարգսենցն էլ Աբովյանի անհայտացման բոլոր վերսիաները հիշատակում է.

«Երևանի բե՞րդն
Արդյոք քեզ ծածկեց,
Թե՞ ապերախտ Հրազդան
Քեզ մունջ փուլ տվեց.
Արդյոք Սիբիրը

---

1 Խ. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատ. Գ., Երևան, 1948 թ., էջ 188։

2 Օ. Տեր-Սարգսենց, «Վասպուրականի մը կայծեր», Կ. Պոլիս, 1875, էջ 15—16։

Խավարին երկիր
Մունջ խեղճ ըրին
Քեզ տարագիր»։[1]

Աբովյանի անհայտացումից ուղիղ քառորդ դար հետո Տեր-Սարգսենցը դեռ չի հաշտվում, որ Աբովյանը մեռած է ու հեռացած այս աշխարհից և գրում է.

«Արդյոք մեռած ես,
Թե դեռ կենդանի,
Հյուսիսի սառույցք
Դեռ ոտքդ կշափի,
Արդյոք արջային
Բևեռի վրա
Կանգնած կխորհի՞ս,
Թե երբ կկենա։
Ո՛չ, ո՛չ Աբովյան,
Ինչ որ ալ լինիս,
Դու կենդանի ես
Թեպետև խապառ
Կորած կըսեն քեզ»։[2]

Տեր Սարգսենցը իր այս միտքը զարգացնում է հետևյալ ձևով։ Նա հավատացած է, որ Աբովյանի մտքերը նախապատրաստել են մի ամբողջ սերունդ, պայքարի են հանել ամբողջ հայ ժողովրդին և դրանով էլ կենդանի կմնա հավետ։

«Եթե արգելեն քեզ օդ չի շնչել,
Ջուր սառված տվեր էր քեզ անարգել,
Եթե զրկեցին քեզ հայրենիքեդ,
Ընտանիրդ և ազգդ խլեցին գրկեդ,
Եվ եթե վաղ ես մարմնույդ փոշիներ
Տիեզերքի մեջ ցրվեր կորցվեր,
Ո՛չ, ո՛չ Աբովյան, դու կենդանի ես
Խոսքով ու հոգով մեր սրտին մեջ ես,
Եվ մարմնույդ մեն մի փոշիի վրա
Ճշմարիտ հայու սրտե արձան կա»։[3]

1 Ս. Տեր-Սարգսենց, «Վառարանի մը կայծեր», Կ. Պոլիս, 1875, էջ 15—16
2 Նույն տեղում։
1 Նույն տեղում։

Բայց ո՞րն է Տեր Սարգսենցի կարծիքով Աբովյանի ամենագլխավոր արժանիքը, Աբովյանի ո՞ր գաղափարներն են հատկապես նրան հրապուրում, որոնցով նա ցանկանում է դաստիարակել նոր սերունդներին: Այդ պարզորոշ երևում է «Ի հիշատակ Խ. Աբովյանի» ոտանավորի վերջին տողերից.

«Աղոթե երկնից, որ քո փոշիներ
Եթե Աբովյան չեն հարուցանեն,
Թող Նալբանդյաններ շնորհե հայ ազգին
Որ մեր ազգության անհաշտ թշնամին
Երբ աղվեսն կփախչի
Խիստ գայլերուն հանդիպի»:[1]

Պատահական չէ, որ Աբովյանին նվիրված այս բանաստեղծությանը հաջորդում է «Նալբանդյանի ուխտը» ոտանավորը, որտեղ Տեր-Սարգսենցը առաջ է քաշում ազատության գաղափարը և տարբեր բառերով ու արտահայտություններով ներկայացնում Նալբանդյանի ազատության երգը:

III

80-ական թվականներին առանձնահատուկ աշխատանք կատարվեց հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների միջև սերտ կապ ստեղծելու, նրանց գրականությունները փոխադարձաբար ծանոթացնելու գծով: Այս ուղղությամբ խոշոր դեր կատարեցին Կովկասում «Մշակ» թերթը, Կ. Պոլսում «Արևելք», «Մասիս» և «Հայրենիք» թերթերը: Իսկ այս բոլորի մեջ էլ եզակի աշխատանք է կատարել Արփիար Արփիարյանը, որը խմբագրում էր Պոլսի վերոհիշյալ թերթերը և ամբողջ 30 տարի թղթակցել է «Մշակ»-ին:

Արփիարյանը մեծ գործ է կատարել ռուսական գրականությունը և այդ գրականության բարերար ազդեցությամբ զարգացող արևելահայ գրականությունը արևմտահայ ընթերցողներին ծանոթացնելու ուղղությամբ, առաջարկելով արևմտահայ գրողներին՝ հետևելու արևելահայ բնաշխարհիկ գրականության տրադիցիաներին:

Արփիարյանի կարծիքով արևելահայ գրականության ամենամեծ առավելությունն այն է, որ նա միշտ կապված է եղել բուն երկրի հետ, ժողովրդի հետ: Արևելահայ գրողները իրենց երկերի

1 Ս. Տեր-Սարգսենց, «Վառարանի մը կայծեր», Կ. Պոլիս, 1875, էջ 15—16:

համար նյութ են քաղել անմիջապես ժողովրդի կյանքից, իրենք էլ դուրս են եկել այդ աշխատավոր ժողովրդի միջավայրից։ Նա հաճախ էր հիշում այդ փաստը ու հիշատակում Աբովյանի, Պռոշյանի, Աղայանի անունները, որոնք ծագել են գյուղական միջավայրից։

Արփիարյանի համար պաշտամունքի առարկա են դարձել մասնավորապես Արևելահայ գրողներից երեքը՝ Միքայել Նալբանդյանը, Խաչատուր Աբովյանը և Րաֆֆին։ Հատկապես առաջին երկուսի մեջ է նա տեսել հայ ժողովրդի դարավոր պայքարի ճիշտ արձագանքը, այդ ժողովրդին դեպի մի որոշակի ապագա առաջնորդելու կոչումը։

Արփիարյանը, որ բազմաթիվ առիթներով տվել է ռեալիստական գրականության սկզբունքները, այն կարծիքին էր, որ գրողը ոչ միայն պետք է հարազատորեն, ճշմարտացիորեն արտահայտի օբեկտիվ իրականությունը, այլև ակտիվ կերպով միջամտի այդ իրականությունը վերափոխելու գործին, կարողանա ոչ միայն իրականությունը իր հակասություններով ցուցադրել, այլ նպաստել այդ իրականության վերափոխմանը։ Խոսքը մասնավորեցնելով Աբովյանի մասին, հայտնում է այն կարծիքը, որ Աբովյանը՝ ինչպես նաև ուրիշ կովկասահայ գրողներ, շատ մոտիկից կապված է ժողովրդի հետ, իսկ գրականությունը ժողովրդի «բազմադարյան արմատի վրա բնականորեն պիտի ծլեր, ծաղկեր, ուռճանար իր հյութը հայրենի հողեն ծծելով։ Աբովյանեն մինչև այսօր Կովկասյան հայոց գրականությունը տոհմային զարգացմամբ կմեծնա»։

Մի այլ առիթով Արփիարյանը նույն միտքը արտահայտել է հետևյալ տողերով.

«Ի Կովկաս—Արարատ սակավաթիվ հայեր իրենց հզոր անհատականության դրոշմը զարկած են ժողովրդին սրտին ու մտքին վրա և առաջ բերած են սերունդ մը ուժեղ, կորովի։ Այդ հայերը եղան Աբովյան, Նազարյանց, Նալբանդյանց, Գամառ Քաթիպա, Րաֆֆի և ուրիշներ»։[1]

Արփիարյանը առանձին հոդված չի գրել Խաչատուր Աբովյանի մասին, բայց տարբեր առիթներով բազմաթիվ անգամ նրա արտահայտած մտքերը եթե ի մի բերենք, կարող ենք ասել, որ նա միանգամայն ճիշտ է ըմբռնել Աբովյանի մեծությունը, «Վերք Հայաստանի» վեպի տեղը հայ գրականության մեջ։

Նա ամենից առաջ Աբովյանին ներկայացրել է որպես մեծ

---

1 «Մասիս», 1890, № 3940։

հայրենասեր, ամբողջովին իր ժողովրդին նվիրված, իր ողջ կարողությունը և ուժը նրան տրամադրած մի գրող, որն ապրել է, շընչել բացառապես ժողովրդի համար, մտածել է նրա բարօրության համար:

«Աբովյան ազգի սրտի հետ խոսեցավ իր «Վերքովն» ժողովրդի բարբառով»,— կտրուկ կերպով բնորոշում է նա:[1]

Հիմնականում ճիշտ է նա ըմբռնել նաև «Վերք Հայաստանի»-ի էությունը, Արփիարյանի կարծիքով «Վերք Հայաստանին» ոչ եվրոպական և ոչ էլ ասիական տիպի վեպերի հետ պետք է համեմատել: Այն հայ ժողովրդի ամբողջ տառապանքն ու վիշտը, բռնակալների դեմ նրա պայքարելու անհողդողդ կամքը արտահայտող մի դյուցազներգություն է, էպոպեա: Աղասին մի լեգենդար հերոս է, որի մեջ հայ ժողովուրդը դրել է իր ողջ արժանիքները և՛ հայրենասիրությունը, և՛ նվիրվածությունը, և՛ ֆիզիկական ուժն ու կարողությունը, հումանիզմը: Արփիարյանի կարծիքով «Վերք Հայաստանին» դասել որպես սովորական սյուժետային մի վեպ, կնշանակի չըմբռնել այն ամբողջությամբ: Եվ միայն որպես դյուցազներգություն, որպես ժողովրդի կենդանի իղձերի իսկական արտահայտություն է, որ կարողացել է «Վերք Հայաստանի» վեպը ազդել ամբողջ հայ ժողովրդի վրա, կապել նրան իր հետ, սիրվել բոլորի կողմից: Ահա թե ինչու ոչ մի վեպ չի կարողացել կատարել այն, ինչ որ կատարել է «Վերք Հայաստանի» գիրքը:

«Աբովյանի «Վերքը»,— գրում է նա,— ամբողջ ժողովուրդ մը ցնցած է, սրտերը գալարած է և արդի գրականության նոր ուղի մը բացած է»:

Պահպանողական, ռեակցիոն տարրերի դեմ իր մղած երկարատև պայքարի տարիներին Աբովյանը դարձել էր դրոշակ Արփիար Արփիարյանի համար: Նա Աբովյանի միջոցով պաշտպանել է աշխարհաբարը, աշխարհաբարի միջոցով՝ Աբովյանին:

Եթե 50—60-ական թվականներին պահպանողական բանակը առհասարակ զգուշանում էր Աբովյանի անունը տալուց, իսկ 70-ական թվականներին հարևանցիորեն հիշում էր նրա անունը ու քմծիծաղով վերաբերվում նրա «գռեհիկ» լեզվին, ապա 80—90-ական թվականների լեզվապայքարի փոթորկոտ օրերին պահպանողական բանակն արդեն նիզակներ էր ճոճում նաև Աբովյանի դեմ: Ահա այս պայքարումն է, որ Արփիարյանը իր անդրադարձ նետերով

[1] «Մասիս», 1890, թ. 3940:

խոցում է հակառակորդներին ու իր պաշտպանության տակ առնում անմահ լուսավորչին:

900-ական թվականներին «Մասիս»-ի և «Արևելք»-ի մեջ բորբոքված լեզվապայքարի շրջանում, երբ գրաբարյաններից Էմանուել Եսայանը փորձեց Աբովյանի անունն էլ հոլովել ու նրա լեզուն համարել ժարգոն, Արփիարյանը «Մասիս»-ի 1890 թվի № 3944-ում գրված իր մի հոդվածում անարգանքի սյունին գամելով Էմանուել Եսայանին, գրում էր.

«Եթե «Վերքը»՝ մեր սրտերը թունդ հանող այդ գիրքը անհասկնալի է, կհասկնա՞նք Վիրգիլիոսը»:

Ապա՝ Վիրգիլիոսի գրաբար թարգմանությունից մեջ բերելով մի խրթին ու անհասկանալի ցիտատ, շարունակում է.—

«Այս տեսակ գրքեր աշակերտներու կուտաք, դպրոցներու մեջ օտարներու բանաստեղծությամբն ու պատմությամբը կսնուցանեք աշակերտները, կչարչարեք խեղճերը հասկնալու համար այս անհասկնալի տխմարաբանություններու գեղեցկությունը և կծաղրեք Աբովյա՞նը, որուն մեկ տողին իսկ արժանի չեն ձեր պաշտած «մշակականքը» և նմանքը:

«Ո՛չ, պրն. Եսայան, «Վերքը» ծաղրելու համար անսիրտ, անդգա ըլլալու է հայ մը»:

«Առայժմ այսքան»:[1]

* * *

1880-ական թվականների վերջերից սաստկանում է համիդյան ճնշումը, սահմանվում են աննկարագրելի պայմաններ, արգելվում է ազգային պիեսների բեմադրությունը, հայոց պատմության դասավանդումը դպրոցներում, մամուլի համար մշակվում են հատուկ օրենքներ, որոնք արգելում են հարյուրավոր անմեղ բառերի գործածությունը: Կազմվում են նաև «անբարեհույս» տարրերի ցուցակները: Այդ ցուցակների մեջ մտած մարդկանց մասին հնարավոր չէր գրել ոչ մամուլում և ոչ էլ առանձին հրատարակությունների մեջ: Հիշյալ ցուցակների մեջ տեղ են գտնում ամենից առաջ պատմական անցյալի բոլոր հայ թագավորներն ու զորավարները՝ Տիգրան, Արշակ, Վարդան, Աշոտ և այլն: Բանն այնտեղ է հասնում, որ անհնար է դառնում, նույնիսկ «Արշակ Բ.» պիեսի հիշատակումը մամուլում և որպեսզի չհասկացվի Արշակ թագավոր-

[1] «Մասիս», 1890 թ., 3944:

խմբագիրները դեն են գցում Բ.-ն, տպում են միայն Արշակ, այսինքն՝ Արշակ էֆենդիի նման մի բան։ «Անբարեհույս տարրերի» ցուցակների մեջ են մտնում նաև այն բոլոր հեղինակները, որոնք ազգային ազատագրական գաղափարներ են տարածել, պայքարի կոչ են արել ժողովրդին։ Ցուցակների մեջ մտնում են հատկապես մի շարք արևելահայ գրողներ, առաջին հերթին Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյանը, Րաֆֆին, Պատկանյանը և ուրիշներ։

1890-ական թվականների սկզբից այս գրողներից և ոչ մեկի անունը չի տպագրված արևմտահայ մամուլում կամ գրականության մեջ։

Այս պայմաններում ահա հասկանալի է, որ Աբովյանի և Նալբանդյանի մասին խոսել բոլորովին անհնարին էր։ Եթե 1870-ական թվականներին Միքայել Նալբանդյանի նկարը վաճառվում էր փողոցներում, ու զարդարում էր առաջավոր հայ մտավորականների սենյակները, ապա այժմ աստիճանաբար այդ նկարները ցած են իջնում պատերից ու Տիգրանների, Վարդանների, Աշոտների նկարների հետ միասին կամ թաքնվում են սնդուկների մեջ և կամ հրո ճարակ դառնում։ Ում տնից որ հայտնաբերվում էին այդպիսի նկարներ՝ աքսորվում էին 5—10 տարով։

Սակայն ինչքան սաստկանում էր ճնշումն ու հալածանքը, այնքան էլ ուժեղանում էր հայ ժողովրդի դիմադրությունը, բորբոքվում նրա ցասումը սուլթանիզմի դեմ։ Պատմության մեջ իր նախընթացը չունեցող այդ դաժան ռեժիմի պայմաններումն էլ հայ ժողովրդի առաջավոր մտածողները գտնում էին պայքարի միջոցը, ժողովրդի հետ խոսելու ձևը։ Գրողների, հրապարակախոսների ու ժողովրդի սրտերի մեջ ստեղծվում էր գաղտնի մի ճանապարհ, պայմանական մի լեզու։

Այսպիսով, 80—90-ական թվականներին արևմտահայ առաջավոր մտավորականները դժվարին, ծանր ու վտանգավոր մի պայքար են մղում Համիդյան բռնապետության դեմ։ Ցենզուրական խստությունների առաջին տարիներին, երբ դեռ մեր թվարկած հեղինակների անունները վախվխելով կարելի էր հիշատակել, «Արևելք»-ը լույս է ընծայում Րաֆֆու «Խամսայի մելիքությունները» այն պարզ գիտակցությամբ, որ անուղղակի կերպով հայոց պատմության կուրսն է, որ անցնում է գաղտնի ճանապարհով։ Արփիարյանը՝ «Կովկասյան հիշատակներ» անմեղ վերնագրի տակ իբր թե պատմելով ոսեթցիների ու կովկասյան այլ ժողովուրդների

ավանդությունները, կոչ էր անում սիրել զենքը, սովորել այն գործածել թշնամու դեմ, պատրաստ լինել ապագա ճակատամարտերի։ Արփիարյանի գրչակից ընկերներից Հրանդը, որ Կենտրոնական Վարժարանում գրաբարի դասատու էր, գաղտնի՝ առանց դասագրքի, առանց գրավոր որևէ հետքի, միայն վստահ՝ հայ ուսանողների հայրենասիրության և գաղտնապահության վրա, զգույշ անցնում էր հայոց պատմության կուրսը։

Նույնը կատարվում էր բանասիրության մեջ։ Այդպիսի մի ուշագրավ աշխատանք է կատարել Աբրահամ Այվազյանը, ցենզուրական ամենախստագույն պայմաններում հրատարակելով իր երեք հատորանոց մի գործը՝ «Շար հայ կենսագրությանց» անմեղ վերնագրի տակ։ Մինչև այժմ, որքան մեզ հայտնի է, ոչ ոք ուշադրություն չի դարձրել Աբրահամ Այվազյանի գրքի բուն նպատակի վրա։ Նրա այդ աշխատությունը դիտվել է սոսկ որպես հայ նշանավոր դեմքերի կենսագրությունները պարունակող մի ուսումնասիրություն։ Սակայն այդ երեք հատորների մանրամասն հետազոտումն ու ծանոթացումը ցույց է տալիս, որ Այվազյանը հետապնդել է շատ որոշակի քաղաքական նպատակ, նախ տալ հայոց պատմության, նորագույն շրջանի պատմության կարևոր էջերը և խոսել այն հեղինակների մասին, որոնք իրենց ստեղծագործությամբ ու քաղաքական գործունեությամբ ակտիվ կերպով ազդել են հասարակական մտքի վրա։

Ի՞նչ հիմք ունենք մեր այս ենթադրությունը հիմնավորող։ Ամենից առաջ մեր ուշադրությունը գրավել է հետևյալ փաստը։ Այվազյանը համեմատաբար քիչ տեղ հատկացնելով մի շարք աչքի ընկնող դեմքերի, ինչպիսիք են Ալամդարյանը, Թաղիադյանը և ուրիշներ, մոտ 200 էջ հատկացրել է Քիթապճի Մարգարին, որը ոչ ավելի, ոչ պակաս 19-րդ դարի սկզբներին գործող մի սովորական գրավաճառ է եղել, սիրել է գիրքը և անշուշտ որոշ աշխատանք կատարել է հայ ժողովրդի մեջ ընթերցասիրություն տարածելու ուղղությամբ։ Ի՞նչպես է պատահել, որ Այվազյանը 200 էջ նվիրել է Մարգարին։

Քիթաբճի Մարգարին նվիրված այս 200 էջերի մեջ փաստորեն 3—4 էջ է հատկացված խնդրո առարկա հեղինակին։ Ակնհայտնի կերպով Այվազյանին զբաղեցրել է այստեղ ոչ այնքան Մարգարի կենսագրությունը տալու հարցը, որքան այդ առիթով մանավանդ այդպիսի անվտանգ ու անվնաս մի դեմքի անվան տակ քնեցնելով Համիդի ցենզորներին, ընդարձակ տեղեկություններ տալ մոտավոր

էր… Արշակ էֆենդում։ Կարող էր լինել և Երևանցի խաչատուր, Թիֆլիսեցի Խաչատուր։ Ցենզորի համար միևնույն էր։

Այս երկու գլուխների մեջ Այվազյանը՝ խոսելով խաչատուր Աբովյանի և Միքայել Նալբանդյանի կյանքի և նրանց ստեղծագործության հիմնական գծերի մասին, երբեք չի գործածել Աբովյան կամ Նալբանդյան ազգանունները։ Աբովյանը սկզբից մինչև վերջը մնացել է Քանաքեռցի Խաչատուր, իսկ Նալբանդյանը՝ դարձել Պայտարյանց, որ պարզ թարգմանություն է Նալբանդյան ազգանվան, մերթ էլ՝ Ղազարյան, որը ինչպես հայտնի է, Նալբանդյանի հայրանունն է։

Աբրահամ Այվազյանը հասկանալի է, որ չէր կարող բացարձակապես խոսել «Վերք Հայաստանի»-ի մասին։ Ամենից առաջ Հայաստան բառը արգելված 150 բառերի ցուցակի մեջ էր, հնարավոր չէր գործածել այն տպագրված որևէ գործի մեջ, դրա համար էլ խուսափելով՝ միայն մի տեղ թեթևակի ակնարկել է «Վերքի» մասին։

Մի տեղ Այվազյանը՝ չհամարձակվելով գրքի անունը տալ, «Վերքի» մասին խոսում է հետևյալ փակ ձևով։ «Նորա ժողովրդական լեզվով գրած գլխավոր երկասիրությունը, որ ի Տփխիս 1858-ին հրատարակվեցավ»,[1] իսկ մի այլ տեղ՝ Հայաստան բառը դեն գցելով, միայն «Վերք» բառի հիշատակումով, խոսում է «Վերք Հայաստանի»-ի մասին, այն համարում «անգուգական գիրք», և ասում, որ այդ գիրքը կարող է պայծառ լույս սփռել հեղինակի «կենաց վերա»։[2]

Այվազյանը գրում է.—

«Ով կանգ չառներ Քանաքեռին առջև, որո մեջ ազգի ազգի տաղանդներ ծնան, ծլեցան և անմահացան։ Ո՞վ չփրեր ողջույն տալ այն հարկին, յորում ծնավ մեծ Քանաքեռցին, շնչել այն օդը, զոր շնչեց նոր դրականության նահապետը, ըմպել այն ջուրը, յորմե քամբախոն գերմանական համալսարանականը կլմեր և կզովանար և նստիլ այն մշտադալար մարգագետիններուն վրա, ուր խաչիկն իր մանկության հիշատակներն անցուց ճժալախտի կամ ձնագնդի խաղերն և աչքակապուկն սարքելով»։[1]

Աբրահամ Այվազյանը մեծ դժվարությամբ, եզոպոսյան լեզվով սակայն կարողացել է հասկացնել ընթերցողներին, թե նրանք

---

[1] Ա. Այվազյան, «Շար հայ կենսագրութեանց» Բ. էջ 84։

[2] Նույն տեղում, էջ 85։

գործ ունեն մի մեծ հայրենասերի հետ, իր ժողովրդին, իր ազգին նվիրված մի գրողի հետ և որ օտար դաստիարակությունը, գերմանական համալսարանը չեն կարողացել Աբովյանից խլել տոհմիկը, ժողովրդականը, հայկականը, թե Գերմանիայումն էլ նա մնացել է հայ, իսկ հայրենիք վերադառնալուց հետո առավել ևս դրսևորվել է նրա հայկական ոգին։ Այս բոլորը Այվազյանը տվել է շատ ջերմ ու խուսափող մի նախադասությամբ։ «Խաչատուր օդ և երկիր փոխելով, սիրտ և հոգի փոխողներեն չէր»։[2]

Այս է ամբողջ Աբովյանի մասին գրվածը։

Գրեթե նույնպիսի զգուշությամբ Այվազյանը խոսել է Միքայել Ղազարյան Պայտարյանցի մասին, հենց սկզբից անելով հետևյալ վերապահումը։

«Իմ բոլոր կենսագրական անձերուս մեջ թերևս չկա մեկը, որ այնքան մտածել տա գրողն, որովհետև ամենեն հզոր և ամենեն խորին խորաթափանց միտքն եղած է առ մեզ Նոր Նախիջևանի արծիվն արհամարհվող Մուխալ, կամ Միքայել Ղազարյան»։[3]

Այվազյանը անհամեմատ ավելի ընդարձակ կենսագրական տեղեկություններ է տվել Նալբանդյանի վերաբերյալ, խոսել է նրա բնական գիտություններով հետաքրքրվելու մասին։

Նա գրում է.

«Ավելի բառ շինող էր, քան բառ գտնող, թեև հետամուտ էր միշտ գավառաբարբառին, Քանաքեռցի Խաչատուրին պես, որու վեպն բառերու շտեմարան է, Արարատյան Աղեքսանդրի պես, որ գրած է «Հիմնարկություն գավառական ուսումնարանի» վեպը, լեզվաբաններու ուշ և ուրուշը գրաված է»։[4]

Խոսելով Նալբանդյանի արտասահմանյան գործունեության մասին, Աբրահամ Այվազյանը մեջ է դնում Մ. Բաբաջանյանի կտակի պատմությունը և զարմանալի հանդգնությամբ, խոսում է Նալբանդյանի լոնդոնյան գործունեության մասին, թե նա «Զանգակ» լրագրույն խմբագրապետին հետ խորհրդակցություն մը կը կատարե»։ Այվազյանը վստահ էր, որ սուլթանական տիմար ցենզորը երբեք չէր կարող գլխի ընկնել, որ Զանգակը Գերցենի օրգան «Կոլոկոլն» է, իսկ Գերցենն էլ ռուս ռևոլյուցիոն էմիգրանտ է,

---

1 Ա. Այվազյան. «Շար հայ կենսագրությանց» Բ. էջ 78։

2 Նույն տեղում, էջ 82։

3 Նույն տեղում , էջ 98։

4 Նույն տեղում։

որի գործունեության հիշատակումը մահվան սպառնալիքով արգելված էր։

Անշուշտ Այվազյանի հիմնական նպատակը եղել է խոսել Նալբանդյանի «Ազատության երգ»-ի մասին, որը արևմտահայության ամենասիրելի երգն էր ու ցենզուրական խստություններից առաջ շարունակ արտասանվում էր բեմերից, խոսել նրա «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գործի մասին, որը հայ երիտասարդները արտագրելով՝ ձեռքից ձեռք անցկացնում ու պահում էին իրենց բարձերի տակ։[1] Հնարավորություն չունենալով այս երկու գործերի մասին խոսել, Այվազյանը «Ազատն աստվածը» հիշատակում է հոգեշունչ երգ արտահայտությամբ, իսկ «Երկրագործության» մասին հազիվ կարողանում է գրել հետևյալ տողերը, առանց գրքի անունը տալու։

«Պայտարյանցի ամենեն ավելի տարածված և ժողովրդականություն վայելած երկն ընկերաբանական մեկ գործն է, որ յուր տնտեսագիտական տեսակետովը ժամանակին գնահատված և գլուխգործոցը համարված է»։

Այսքանն էլ բավական էր, որ և Աբրահամ Այվազյանը և իր ժա-

[1] Թե Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գիրքը ինչպիսի խոշոր ազդեցություն է թողել արևմտահայ երիտասարդության վրա, երևում է հետևյալ բնորոշ փաստից՝ Երբ 1888 թվին Կ. Պոլսում լույս տեսավ Մ. Հովհաննիսյանի «Սփոփանք ամիկին» բանաստեղծությունների ժողովածուն, որտեղ առաջին անգամ բանաստեղծության նյութ էր դառնում բանվորի ու արհեստավորի կյանքը, երգվում էր աշխատանքը, առաջադիմական մամուլը ողջունելով այդ երևույթը, ցույց տվեց, որ Մ. Հովհաննիսյանի գրական ուղղությունը տարբեր ակունքներ ունի, և որ պետք է հետևել այդ ուղղության։

Ա. Արփիարյանը Մ. Հովհաննիսյանի հիշյալ գրքի մասին գրած գրախոսականում կատարել է ուշագրավ մի խոստովանություն։ Արփիարյանը գրում է.

«Հազիվ ութ տարեկան էր Միհրանիկ, հայրը քովը առած զնա կը կարդար գիրք մը, որմէ՞ տղան շատ բան չէր հասկնար, բայց հօրը խրատները կը մնային անոր մտքին մէջ։ Տղա, մտիկ ըրե այս գրքին խոսքերուն, երբ մեծնաս, շարունակ աշխատե, ուրիշներուն ալ միշտ աշխատություն քարոզե։ Մեր ազգին կյանքը արվեստն է, հողագործությունն է։ Պատանին երիտասարդ եղավ, ոչ հօրը խրատները մոռցավ, ոչ ալ այդ գիրքը։ Եվ ով մեզմե մոռցած է զայն։ Այդ գրքին անունն էր «Երկրագործությունը իբր ուղիղ ճանապարհ» հեղինակին անունն էլ Միքայել Նալբանդյան»։ («Արևելք», 1888 թ. № 1389)։

Բայց այս եղավ Նալբանդյան անվան վերջին հիշատակումը պոլսահայ մամուլում մինչև 1908 թվականը։

մանակակից մտածողները իրենց նպատակին հասնեին։ Եականը մտքերը հրահրելն էր, հայրենասեր երիտասարդության Աբովյանի և Նալբանդյանի իդեալները հիշեցնելը։ Նրանք՝ առանց այն էլ բանավոր և գաղտնի կերպով շարունակում էին կարդալ և արտագրել այդ երկու մեծ դեմքերի աշխատությունները։ Մամուլը, պարբերական հրատարակությունները ցանկանում էին ուղղություն տալ, հիշեցնել որ ցենզուրական խստությունների ծանր տարիներին էլ պետք է շարունակել կարդալ Աբովյան և Նալբանդյան, որոնք պայքարի կոչ էին անում հայ ժողովրդին։

Աբրահամ Այվազյանի գրքի լույս ընծայումից հետո անհրաժեշտ էր, որ առաջադեմ մամուլն էլ իր խոսքն ասեր, իր վերաբերմունքը ցույց տար այդ գրքի նկատմամբ, ուշադրություն բևեռեր նրա հատկապես այս կամ այն հատվածի վրա։ Նույնքան դժվար էր այդ գործը, որքան «Նոր հայ կենսագրությանցը» հրատարակելը, սակայն Արփիարյանը կարողանում է այդ անել։ Հակառակ պահպանողական մամուլի խորհրդավոր լռության, Արփիարյանը «Հայրենիք» օրաթերթի 1893 թ. № 464-ի առաջնորդողի մեջ խոսում է Աբրահամ Այվազյանի հրատարակած երեք հատորիկների մասին, ծանոթացնում է նրանց բովանդակությանը, դես ու դեն ընկնելով, ցենզորների ուշադրությունը տարբեր կողմեր գրավելով, հանգում է այն եզրակացության, որ «Այն մանրավեպերու, նկարագրություններու, հոգեկան վիճակներու խառնուրդին մեջ երկու պզտիկ կետեր մեր ուշադրությունը կգրավեն, որովհետև մեծ ու վեհ սկզբունքներու վրա հիմնված են։ Առաջինը կվերաբերի Քանաքեռցի Խաչատուրին։ Այդ շահեկան մեծ դեմքը մասնավոր շողով մը կը փայլի այն մութին մեջ, ուր կորսված է և իր վրա բերնէ բերան լսված պատմությունները արի ու վեհ հոգիի մը տեղը կուտան իրեն՝ մեր մեջ։ Ամենեն առաջ ինքն է, որ հասկցած է ժողովրդական լեզվին ինչ հարուստ գանձարան մը ըլլալը ու այդ լեզվով երգած է ընտանեկան անոր ուրախություններն ու վշտերը։ Հանկարծական բան մը չէ այդ բերումն իր մեջ, այլ երկարատև խորհրդածության ու դատողության արդյունք»։[1]

Ապա մի քանի խոսք էլ ասում է Աբովյանի դորպատյան շրջանի մասին և հիշեցնում, որ Դորպատում էլ նա միշտ մտահոգվել է բացառապես իր ժողովրդի հոգսերով ու վիճակով։

Գուցե ավելորդ չի լինի այստեղ մեջ բերել նաև Նալբանդյանին նվիրված հատվածը, որը, որքան մեզ հայտնի է, Աբրահամ Այվազյանի վերոհիշյալ փորձից հետո երկրորդ հիշատակումն է ամբողջ

համիդյան ցենզորական խստությունների շրջանում, արված նույն գաղտնի լեզվով։

«Մյուս ուշադրության կետն,— գրում էր Արփիարյանը այդ հատորիկներուն մեջ,— Մ. Ղազարյան Պայտարյանցին կվերաբերի։ Ինքն ալ այն մեծ դեմքերեն է, որք ժողովրդի մը զարգացման պատմության մեջ առաջին տեղը կբռնեն։ Հեք անհանդարտ հոգի, որ իր գործունեությունը ապացուցած է ամեն կողմ, իրեն նպատակ ունենալով սակայն միշտ օգտակար ըլլալ այն հասարակության, որուն անդամն էր։ Համալսարանականի ծանր զբաղումներուն մեջ, իր ամեն կարգի մտահոգությանց մեջտեղ մոռցած չէ, սակայն բուն ժողովուրդն»։

Ապա եզրափակելով առաջնորդողը, Արփիարյանը գրել է.

«Ահա երկու մարդիկ, որք իրենց ժամանակին բախտատամամբ մթերած են գիտության ու դպրության մեծ պաշար մը, որք գիտեին թե դասարանին ամբիոնեն կամ մամուլի միջոցով կրնային ազդել իրենց հասարակության վրա, բարեփոխելով մտքերը, ջնջելով նախապաշարումները և փտած սովորությունները և յառաջադիմության ուղին ցույց տալով լայն և անսահման»։[1]

Սրանից ավելին իհարկե Արփիարյանը չէր կարող անել և այսքանն էլ մեծ հանդգնություն էր «Հայրենիք» թերթի կողմից, որը հաճախ էր աննշան պատճառներով փակվում մի քանի ամիս։

Եթե համիդյան բռնապետության տարիներին հատկապես 1890-ական թվականների սկզբից սկսած մինչև 1908 թվականը, մոտ մեկ քսանամյակ բոլորովին անհնար էր Խաչատուր Աբովյանի և Միքայել Նալբանդյանի անունների հիշատակումը, ապա 1908 թ. հետո, երբ երիտասարդ թուրքերի կառավարությունը, այսպես կոչված, «մամուլի ազատություն» տվեց, Նալբանդյանն ու Աբովյանը նորից իրենց պատվավոր տեղը բռնեցին տարբեր հրատարակությունների մեջ և նորից բեմերից հնչեց «Ազատն աստված», իսկ ձեռքերից ձեռք խլվեց Աբովյանի նկարը։ Դասագրքերում լայնորեն օգտագործվեցին նրա գրածները։ Բայց այդ շրջանը համարելով մեր ծրագրած սահմանից դուրս, թողնում ենք այլ հետազոտության։

1 «Հայրենիք» օրաթերթ, 1893, № 464։

2 Նույն տեղում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Մ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Այժմ արդեն Աբովյանի գործունեության և ստեղծագործության քիչ թե շատ ծանոթ յուրաքանչյուրի համար կասկածից վեր է այն, որ Աբովյանը ոչ միայն հայ նոր գրականության, այլ ամենայն իրավամբ նաև հայ նոր մանկավարժության հիմնադիրն է։

Եվ չնայած դրան, Աբովյանը որպես մանկավարժ միանգամայն անբավարար է ուսումնասիրված ոչ միայն նախասովետական, այլև սովետական աբովյանագիտական գրականության մեջ։ Դա մի խոշոր բաց է ինչպես աբովյանագիտության, այնպես էլ հայ մանկավարժական մտքի պատմության մեջ։

* * *

Աբովյանն ապրել և գործել է հայ ժողովրդի պատմության նշանակալից շրջաններից մեկում, երբ վերջապես իրականանում է հայ ժողովրդի և նրա լավագույն զավակների դարավոր իղձը,— Հզոր Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ ազատագրվել շահական Պարսկաստանի և մասամբ սուլթանական Թյուրքիայի դարավոր արյունոտ լծից։ Հայաստանը ռուսական տիրապետության տակ անցնելու ակտի անպայման դրական պատմական նշանակությունը ճիշտ գնահատվեց հայ ժողովրդի, նրա առաջավոր գործիչների, նրանց թվում Աբովյանի կողմից. այդ ակտը պատմականորեն պրոգրեսիվ երևույթ էր, հայ ժողովրդի համար բախտորոշ և շրջադարձային նշանակություն ունեցող։

Անդրկովկասը, Ռուսաստանին միացվելու մոմենտին, թե՛ տնտեսական և թե՛ կուլտուրական տեսակետից չափազանց տխուր պատկեր էր ներկայացնում։

Թեպետ ցարական Ռուսաստանն Անդրկովկասում հետապընդում էր իր գաղութարարական նպատակները, ամեն կերպ արգելակելով տեղական ժողովուրդների ազգային կուլտուրայի՝ մամուլի, գրականության, լեզվի, դպրոցի զարգացումը,— այնուամենայնիվ Ռուսաստանի տիրապետությունն օբյեկտիվորեն դրական նշանակություն ունեցավ նաև Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրայի զարգացման համար։ Հենց ռուս կլասիկ մանկավարժությունը, որի զարգացման սկիզբը պետք է համարել 19-րդ դարի 30—40-ական թվականները և որը աչքի է ընկնում շատ ավելի մեծ գաղափարական խորությամբ, փիլիսոփայական-թեորիական բարձր մակարդակով, խորը դեմոկրատիզմով, հումանիզմով, քան արևմտաեվրոպականը,— բազմակողմանի բարերար ազդեցություն է ունեցել մասնավորապես հայ մանկավարժական մտքի զարգացման վրա։ Աբովյանագիտության մեջ մինչև վերջին տարիներս էլ գերիշխող էր այն սխալ, անհիմն տեսակետը, ըստ որի Աբովյանի ամբողջ ստեղծագործությունը դիտվում էր որպես բացառապես կամ գերազանցապես արևմտա-եվրոպական, մասնավորապես գերմանական ազդեցության արգասիք։ Մինչդեռ, չժխտելով արևմտաեվրոպական առաջավոր մանկավարժական մտքի ազդեցության նշանակությունը Աբովյանի մանկավարժական հայացքների ձևավորման համար, միաժամանակ պետք է անթույլատրելի և կոպիտ սխալ համարել անտեսումը և թերագնահատումը այն դրական և ուժեղ ազդեցության, որ Աբովյանի պրակտիկ մանկավարժական գործունեության ու մանկավարժական հայացքների վրա ունեցել են ինչպես ռուսական, այնպես էլ հայկական դպրոցը և մանկավարժական միտքը։

Համաշխարհային մանկավարժական մտքի երկու հիմնական ուղղություններից,— դեմոկրատական-պրոգրեսիվ և ռեակցիոն բուրժուա-կալվածատիրական,— Աբովյանը, ըստ իր ընդհանուր մտայնության ու աշխարհայացքի, անպայմանորեն ու անվերապահորեն գտնվում էր պրոգրեսիվ-դեմոկրատական ներկայացուցիչների բանակում։

Այդ իմաստով Աբովյանի մանկավարժական հայացքների ձևավորման համար ամենից ավելի «համահնչուն» ակունքները եղան, ինչպես արևմտաեվրոպական մանկավարժական մտքի առաջավոր դեմոկրատական ներկայացուցիչները ի դեմս Կոմենսկու, Ռուսսոյի, Պեստալոցցու, նույնպես և 19-րդ դարի առաջին կեսի

ռուսական առաջավոր մանկավարժական միտքը և պրակտիկան, ըստ որում հավանական պետք է համարել նաև 40-ական թվերի ռևոլյուցիոն դեմոկրատների (Բելինսկի) ազդեցությունը: Վերջապես Աբովյանն օգտագործել է նաև այն բոլոր առաջավորը, որը կար հայկական դպրոցում և հայ մանկավարժական մտքի մեջ:

Սրանից հետո արդեն համեմատաբար անկարևոր է այն, թե հատկապես ի՞նչ ուղիներով և կոնկրետ ո՞ր մտածողների ու նրանց ո՞ր երկերի միջոցով են ժամանակի առաջավոր մանկավարժական գաղափարները հասել Աբովյանին, նրա կողմից քննադատորեն-ստեղծագործորեն վերամշակվել ու օգտագործվել: Այս տեսակետից մեթոդոլոգիապես սխալ պիտի համարել այն, որ որոշ հեղինակներ չափից ավելի են ծեշտում Աբովյանի մանկավարժական հայացքների ձևավորման վրա այս կամ այն առանձին մտածողի, հատկապես Ռուսսոյի ունեցած ազդեցության հարցը: Ի դեպ, ինչ վերաբերում է Ռուսսոյին, ապա պետք է ասել, որ թեպետ անկասկած պիտի համարել նրա ազդեցությունը Աբովյանի վրա, սակայն միանգամայն սխալ է Աբովյանին Ռուսսոյի սովորական աշակերտ, հետևորդ համարելը: Հենց Ռուսսոյի օրինակով կարելի է ցույց տալ Աբովյանի իրապես քննադատական-ստեղծագործական մոտեցումը դեպի այս կամ այն մտածողը: Արձագանքելով Ռուսսոյի խորը դեմոկրատիզմին ու հումանիզմին, Աբովյանը դեն է նետում այն, ինչ ամենախոցելին է Ռուսսոյի մանկավարժական սիստեմում,— նրա ազատ, բնական դաստիարակության թեորիան:

Շատ կողմերով Աբովյանի մանկավարժական պրակտիկ գործունեությունը և մանկավարժական հայացքները ավելի համահնչյուն են Ռուսսոյի «աշակերտ» Պեստալոցցուն, քան Ռուսսոյին:

19-րդ դարի առաջին կեսի ռուսական, անդրկովկասյան ու հայկական մանկավարժական մտքի ուսումնասիրությունն ու մոտիկ ծանոթությունը մեզ իրավունք են տալիս մտածելու, որ շատ բան Աբովյանի մանկավարժական գործունեության ու հայացքների մեջ իր արմատներն ունի այն առաջավորում, դեմոկրատականում, որ կար այդ ժամանակի ռուսական և հայկական դպրոցներում և մանկավարժական մտքի մեջ:

Աբովյանի ուսումնառությունը չի սկսվել ու ավարտվել Դորպատով. նա նաև իր պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին չէր դադարում սովորելուց, իր մանկավարժական սիստեմը կատարելագործելուց: Իսկ Աբովյանի մանկավարժական պրակտիկ գործունեությունն ընթացել է ռուսական դպրոցի շրջա-

նակներում, սերտորեն կապված հայ և անդրկովկասյան մյուս ժողովուրդների դպրոցի ու լուսավորության հետ։ Աբովյանը հենց ինքն է մատնանշում անդրկովկասյան դպրոցը և իր մանկավարժական գործունեության այդտեղ, որպես իր մանկավարժական-դիդակտիկական հայացքների ակունք։ Աբովյանի հիմնական դիդակտիկական հայացքները շարադրված են նրա անտիպ «Նախնական երկդասյան ուսումնարանների ծրագրում» (Աբովյանի արխիվ, № 31)։ Այդ ծրագրի ներածականում Աբովյանը գրում է. «... Այսպիսով իմ դիտողությունները հիմնված են ոչ թե մտքի, գիտական դատողությունների և եզրակացությունների վրա, այլ չափազանց պարզ հիմունքների,— երկարատև փորձի և Անդրկովկասի ուսումնական գործին վերաբերող ամեն ինչի մանրակրկիտ ու բազմակողմանի դիտողության վրա»։

Ինչ վերաբերում է Աբովյանի մանկավարժական հայացքների գաղափարական-գիտական կապի խնդրին այս կամ այն կոնկրետ ռուս մտածողի ու մանկավարժի հետ,— ապա շատ դժվար է այդպիսի որոշակի անհատական կապի սահմանումը։ Մյուս կողմից էլ կարևորը այն չէ, թե Աբովյանը առանձին ինչպիսի մանկավարժական մտքեր է վերցրել այս կամ այն ռուս մանկավարժից։ Ռուսական մանկավարժական մտքի հետ Աբովյանի գաղափարական աղգակցության արմատները շատ ավելի խորն են. այդ արմատները պետք է փնտրել ամենից առաջ դեպի ռուս մեծ ժողովուրդը հայ ժողովրդի ունեցած պատմական ձգողության մեջ, հայ ժողովրդի ու նրա լավագույն զավակների խորը սիրո մեջ դեպի ռուս ժողովուրդն ու նրա բարձր կուլտուրան, այն ուժեղ և բարերար ազդեցության մեջ, որ ռուսական կուլտուրան, գրականությունը, գիտությունը ունեցել են հայ կուլտուրայի և գրական ու հասարակական մտքի ու նրա առանձին ներկայացուցիչների, առաջին հերթին Աբովյանի վրա։

Սակայն դրանից չպետք է հետևեցնել, թե Աբովյանն իբրև մանկավարժ, արդյունք է միայն արտաքին ազդեցությունների, միանգամայն անկախ հայ մանկավարժական մտքի նախընթաց էտապից։

Աբովյանն իր առաջավոր մանկավարժական հայացքներով միանգամայն օրինաչափ երևույթ էր ոչ միայն համաշխարհային մանկավարժական պրակտիկայի և թեորիայի ֆոնի վրա, այլև հայկական իրականության մեջ, հայ մանկավարժական պրակտիկայի և մանկավարժական մտքի համար։ Այդ տեսակետից միանգամայն

անարդար են այն հեղինակները, որոնք չափազանցված, միակողմանիորեն ընդգծում են հայ իրականության մեջ Աբովյանի երևան գալու պատմական վաղաժամությունը, նրա գաղափարական մենակությունն այդ իրականության մեջ։ Աբովյանի ժամանակաշրջանի հայ դպրոցն ու մանկավարժական միտքն իրենցից չէին ներկայացնում մի ամայի անապատ, որտեղ բուսնում էին միայն միջնադարյան կրոնա-սխոլաստիկական դպրոցի ու մանկավարժական մտքի մոլախոտեր, ինչպես պատկերում են շատ հեղինակներ։ Այսպիսի սխալ պատկերացման հետևանքը հանդիսանում է հենց այն, որ Աբովյանի մանկավարժական գաղափարները կատարելապես կտրվում և բացարձակապես հակադրվում են հայ դպրոցին ու մանկավարժական մտքին. դրանք դիտվում են որպես ինչ որ օտարածին բան, որ պատահաբար ընկել է անհարազատ հողի վրա և հենց այդ պատճառով վաղաժամ կերպով կործանվել։ Դրանով էլ հենց պետք է բացատրել այն երևույթը, որ Աբովյանի մանկավարժական (և ոչ միայն մանկավարժական) գաղափարների արմատները փնտրում էին ամենից առաջ ոչ թե հարազատ հողում, այլ բացառապես այս կամ այն արևմտաեվրոպական մանկավարժի մոտ։

Աբովյանի մանկավարժական հայացքները չի կարելի հասկանալ, բոլորովին կտրված այնպիսի անձանց գործունեությունից, ինչպիսիք են Հ. Ալամդարյանը, Մ. Թաղիադյանը, որոնք ոչ միայն Աբովյանի սոսկական ժամանակակիցներ էին, այլ որոնց հետ Աբովյանը այս կամ այն չափով, երբեմն էլ շատ մոտիկից, շփվել է իր ուսման ու գործունեության տարբեր շրջաններում. Աբովյանն Ալամդարյանի աշակերտն է եղել Ներսիսյան դպրոցում։ Նոր մանկավարժության ու դպրոցի պտուղները (ճիշտ է, դեռ ոչ այնքան հասուն) նա առաջին անգամ ճաշակում է Ներսիսյան դպրոցում, առաջին հերթին հենց Ալամդարյանի շնորհիվ։ Ավելի պակաս որոշակիությամբ կարելի է պնդել մանկավարժական գաղափարների գծով Աբովյանի և Թաղիադյանի միջև եղած անմիջական շփման կետերի մասին, բայց պետք է հավանական համարել, որ Աբովյանը ծանոթ էր թե Թաղիադյանի «Ազգասէր» շաբաթաթերթին և թե նրա այբբենարանին, դասագրքերին և մանկավարժական բնույթի այլ աշխատություններին, որոնք գրեթե բոլորն էլ լույս են տեսել մինչև Աբովյանի մահը։

Պետք է նմանապես անկասկած համարել Աբովյանի ծանոթությունը իր ժամանակի հայ այբբենարաններին, դասագրքերին, և

առհասարակ դպրոցական ուսումնական գրականությանը, առանց որոնց նույնպես չի կարելի պատկերացնել հայ դպրոցի ու մանկավարժական մտքի զարգացումը:

Աբովյանն իրապես հանդիսանում է հայ նոր մանկավարժության հիմնադիրը, սակայն դա բոլորովին էլ չի նշանակում, թե այդ նոր մանկավարժության սաղմնավորումը և ստեղծումն սկսվում է միայն Աբովյանով: Աբովյանն ուներ ոչ միայն հակառակորդներ, այլև գաղափարական զինակիցներ, ինչպես և իր նախորդներին հենց հայ իրականության մեջ:

ԱԲՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Աբովյանը ծնվել է Քանաքեռում, նահապետական ընտանիքում (Աբովյանի ծննդյան ճիշտ թվականը հայտնի չէ, դա տատանվում է 1804—5 և 1809 թվերի միջև): Տասնամյա Աբովյանին ծնողները բերում են Էջմիածին, ուսման տալու: Այստեղ Աբովյանը մնում է 5 տարի, ստանալով այն ժամանակվա համար տիպիկ սխոլաստիկական-կրոնական դաստիարակություն ու կրթություն: Ուսման տարիները Էջմիածնում, բնականաբար, ընդունակ և ուսումնատենչ Աբովյանի մեջ պետք է զարթեցնեին զզվանք դեպի սխոլաստիկական ուսուցումը և խորը կարոտ դեպի իսկական, կենդանի գիտելիքները:

1821 թ. Աբովյանի խնամակալ Անտոն եպիսկոպոսը նրան տեղափոխում է Թիֆլիս, ուսումն այնտեղ շարունակելու և ռուսերեն լեզուն ուսումնասիրելու համար: Այստեղ Աբովյանն սկզբում սովորում է հայագետ հռչակ ունեցող Պողոս վարդապետ Ղարադաղցու դպրոցում, իսկ 1824 թ. մտնում է նորաբաց Ներսիսյան դպրոցը, որը և ավարտում է 1825 թ. վերջերին:

Որչափ էլ աղքատիկ լինեին Ներսիսյան դպրոցից Աբովյանի ստացած գիտելիքները, պետք է այնուամենայնիվ նշել Աբովյանի վրա այդ ուսումնարանի, հատկապես նրա ղեկավար Հ. Ալամդարյանի ընդհանուր առմամբ դրական և բարերար ազդեցությունը:

Աբովյանի առաջ բացվում են եկեղեցական կարիերայի լավ հեռանկարներ. սակայն նրան, որն արդեն ճաշակել էր գիտության և լուսավորության պտուղներից և դրանով իսկ ավելի զգացել իսկական գիտության ծարավը, այլևս ամենևին էլ չէր հետաքրքրում այդ կարիերան: Աբովյանի մեջ արդեն զարթնել էր ապագա մեծ հայրենասեր-լուսավորիչը, որին միայն մի միտք է զբաղեցնում,— ստանալ իսկական կրթություն, իր ժողովրդը լուսավորելու և դրանով իսկ օժանդակելու նրա ազգային ու սոցիալական ազատա-

գրմանը: Սակայն նրա փորձերը, ուսման համար Վենետիկ կամ Մոսկվա գնալու, ապարդյուն են անցնում: Վերջապես Աբովյանի այդ ցանկությունը իրականանում է. մեծ դժվարությամբ, բազմաթիվ արգելքներ, առաջին հերթին էջմիածնի դիմադրությունը հաղթահարելով, Աբովյանին 1830 թ. հաջողվում է մեկնել Դորպատ՝ սովորելու: Դրանում Աբովյանին մեծ չափով օժանդակում է Արարատի գագաթը բարձրանալու համար 1829 թ. աշնանը Հայաստան եկած՝ Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտը: Աբովյանը ուղարկվում է Դորպատ պետական միջոցներով՝ 3 տարով, սակայն նա այնտեղ մնում է 5 ու կես տարի:

Աբովյանը Դորպատ էր եկել՝ դառնալու ոչ թե մասնագետ բժիշկ, իրավաբան, աստվածաբան և այլն, այլ պատրաստվելու իր ապագա լուսավորական-մանկավարժական գործունեությանը, որի համար պահանջվում էր ոչ թե նեղ մասնագիտական, այլ լայն, հանրագիտական պատրաստություն: Աբովյանը Դորպատում սովորում է հասուն, անհատական պլանով ու ծրագրով, հաճախելով համալսարանի առանձին դասընթացներ և դասախոսություններ, անհատապես պարապելով համալսարանի առանձին պրոֆեսորների մոտ, հաճախելով տեղի ուսուցչական սեմինարիան:

Որչափ էլ մենք զգուշանանք Դորպատի գերագնահատումից և Աբովյանի կրթության ու դաստիարակության մինչդորպատյան շրջանի թերագնահատումից՝ նրա աշխարհայացքի, մանկավարժական հայացքների ձևավորման գործում,— այնուամենայնիվ Դորպատի նշանակությունը Աբովյանի համար խոշոր է: Առաջին անգամ այստեղ է նա լայն հնարավորություն ստանում հաղորդակից լինելու ժամանակակից գիտական կրթության, այստեղ են վերջնականապես ձևավորվում, բյուրեղանում նրա լուսավորական հայրենասիրական-դեմոկրատական հայացքները, նրա գիտա-փիլիսոփայական, մանկավարժական գաղափարները:

Այս բոլորի հետ միասին, սակայն, չպետք է անտեսել և այն, որ Աբովյանը, իրեն հատուկ չափազանցված ոգևորությամբ ու զմայլանքով հաճախ գերագնահատում ու իդեալականացնում է Դորպատը և իր գերմանացի ուսուցիչ-բարեկամներին, նրանց ազդեցությունը իր վրա:

Շնորհիվ իր բացառիկ ընդունակությունների և աշխատասիրության, Աբովյանն իր 5-ամյա ուսման տարիներին ձեռք բերեց ընդարձակ գիտելիքներ. Նա գիտեր բազմաթիվ արևելյան և եվրոպա-

կան լեզուներ: Վերադառնալով Անդրկովկաս, նա այստեղ ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկն էր:

Աբովյանը վերադառնում է հայրենիք, լայն կուլտուր-լուսավորական ծրագրերով. նա ամենից առաջ ցանկանում էր էջմիածնում բացել մի ժամանակակից, բարեկարգ դպրոց, ուսուցիչներ և լուսավորյալ եկեղեցականներ պատրաստելու համար: Սակայն ամեն առաջադիմության, գիտության ու լուսավորության թշնամի, խավարամիտ կաթողիկոս Հովհաննես Կարբեցին Աբովյանին ընդունում է բացահայտ թշնամանքով. նա Աբովյանին դիմավորում է հանրածանոթ թունոտ խոսքերով. «Հրամանա՞ւ (դավանությունների մինիստրության հանձնարարական նամակը— Մ. Ս.) գաս ի վերայ իմ, վտարանդեալդ ի հաւատոյ. դու լաւ խմորիլ կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսա, չէ քո գործ»:

էջմիածնի այդ մերժումից հետո Աբովյանի համար սկսվում են անասելի ծանր ամիսներ. տարիներով փայփայված նրա երազները խորտակվում են:

Աբովյանի համար արդեն վերջնականապես պարզ է դառնում, որ նա էջմիածնի հետ ընդհանուր լեզու գտնել չի կարող և որ իր լուսավորական-մանկավարժական գաղափարները հարկադրված է իրականացնել ոչ էջմիածնի միջոցով: Միաժամանակ նա գիտակցում է, որ արքունի դպրոցում ծառայելու ուղին, որի վրա նա հարկադրաբար և սրտի ցավով ոտք է դնում,— դա այն չէ, որի մասին նա այնքան ժամանակ երազել է. «Ստիպեալ ի չքաւորութենէ, մտի ի պաշտօն արքունի, զոր ոչն երբեք կամէի»,— գրում է Աբովյանը: Բայց ուրիշ ուղի նա այնպես էլ մինչև իր կյանքի վերջը չտեսավ, թեև Աբովյանը իր ամբողջ հետագա կյանքի ընթացքում չի հրաժարվում հայկական դպրոցներում աշխատելու իր վաղեմի ցանկությունն իրականացնելու հույսերից ու փորձերից:

Աբովյանը 1837 թ. փետրվարի 12-ին նշանակվում է Թիֆլիսի գավառական ուսումնարանի տեսուչ և ուսուցիչ:[1]

[1] Սակայն Աբովյանի մանկավարժական գործունեության սկիզբը դրանից շատ ավելի վաղ պետք հաշվել.—Սանահնի վանքի առաջնորդի կողմից Աբովյանին տրված վկայական-բնութագրից (տես «Աբովյանի դիվան», էջ 197) կարելի է եզրակացնել, որ Աբովյանը անգամ Ներսիսյան դպրոց մտնելուց առաջ, 1824 թ. աշնանը, Սանահնի վանքում ինչ որ ժամանակի ընթացքում ուսուցչություն է արել: Իսկ Վարդանյան—Տերմազանյանի կողմից 1828 թ. հունիսի 26-ին Աբովյանին գրած նամակից (Աբովյանի արխիվ գ. № 363) էլ կարելի է հետևցնել, որ Աբովյանը՝ նախ քան Դորպատ մեկնելը, էջմիածնում («ժա—

Այստեղ, բացի տեսչություն անելուց, Աբովյանը դասավանդում էր ռուսաց լեզու, ֆրանսերեն, պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն։

Սակայն աշխատանքն արքունի դպրոցում Աբովյանին լրիվ կերպով բավարարել չէր կարող. նա այստեղ իրեն կաշկանդված է զգում աստիճանավորի վիճակով, որի հետևանքով նա ի վիճակի չէր լրիվ կերպով կենսագործելու իր մանկավարժական գաղափարներն ու ծրագրերը։ Այդ պատճառով էլ Աբովյանը հենց սկզբից մտածում է մանկավարժական գործունեության մի ուրիշ օջախ էլ ստեղծելու մասին, որտեղ նա իրեն ավելի անկաշկանդ զգար իր գաղափարները կենսագործելու։ Այդ օջախը, որտեղ Աբովյանը աշխատում էր գավառական ուսումնարանին զուգընթաց, դարձավ նրա հայտնի մասնավոր պանսիոնը։

Ինչպես ինքը Աբովյանն է գրում[1] որոշելով իր ազատ ժամանակը նվիրել մասնավոր աշակերտների հետ պարապելուն, ինքը ամենևին էլ չի ղեկավարվել շահադիտական նպատակներով, այլ այդ գործի վրա նայել է, «որպես վաղուց արդեն կանխագծած՝ իր նպատակի կենսագործման առաջին քայլեր»։ Ավելի ուշ, ակադ. Ֆրենին գրած նամակում Աբովյանն ավելի որոշակի հայտնում է, որ ինքը իր այդ «սիրելի հիմնարկությունը» բաց է արել «իբրև նախապատրաստական՝ ապագա ժողովրդական ուսուցիչների համար»։[2]

Աբովյանի պանսիոնը փաստորեն գոյություն է ունեցել 1837

անդավորաց» դպրոցում, թե այլ տեղ ու այլ ձևով) զբաղվել է մանկավարժական աշխատանքով։ Դորպատից վերադառնալուց հետո, մինչև գավառական դպրոցում աշխատանքի անցնելը նույնպես Աբովյանը Թբիլիսիում զբաղվելիս է եղել մանկավարժական աշխատանքով.—Նա տնային ուսուցչություն անելիս է եղել Ներսիսյան դպրոցի Բարեկարգության Կոմիտեի անդամ Սող. Տ. Ղուկասյանի տանը (տես Աբովյանի արխ. գ. № 287). բացի դրանից, Աբովյանը պահելիս է եղել մասնավոր դպրոց, որը շարունակում է իր գոյությունը նաև Աբովյանի կողմից գավառական ուսումնարանում պաշտոնի անցնելուց հետո և որը դարձել է նրա ապագա հայտնի պանսիոնի հիմքը։ Վերջապես Աբովյանի մանկավարժական գործունեության վրա բոլորովին նոր լույս է սփռում նրա արխիվում պահված մի փաստաթուղթ,—դիմում «յարգելի իշխանաց քաղաքիս...» (Աբ-ի արխ. № 46), որից անկասկած է դառնում, որ Աբովյանը 1836—37 թ. թ. ժամանակաշրջանում, երևի կարճ ժամանակով, ուսուցչություն է արել և Ներսիսյան դպրոցում։

[1] «Դիվան Խաչատուր Աբովյանի», կազմեց Ե. Շահազիզ, Երևան, 1940 թ. էջ 192։

[2] Նույն տեղ, էջ 121։

թվից մինչև 1843 թ., այսինքն նրա Թբիլիսյան գործունեության ամբողջ ժամանակաշրջանում, սակայն պաշտոնապես ճանաչված, «լեգալ» կերպով գործել է շատ կարճատև,— 1840 թվի փետրվարից մինչև նույն տարվա հուլիսը։

Աբովյանի պանսիոնում հիմնականում ավանդվում էին նույն առարկաները և նույն ծրագրով, ինչ գավառական ուսումնարանում, բայց դաստիարակության ու ուսուցման ոգին արմատապես տարբերվում էր արքունի դպրոցից։ Բացի Աբովյանից, որը դասավանդում էր ռուսերեն, գերմաներեն և պատմություն, պանսիոնում դասավանդում էին նաև 4 այլ մանկավարժներ (Երեցփոխյան, Տեր-Աղեքսանդրյան, Ալադարով, Կերնատես)։

Աբովյանի հռչակը, որպես էնտուզիաստ ու փորձված մանկավարժի, կապված է, առաջին հերթին, նրա պանսիոնի հետ, որը թողել է շատ պայծառ, անջնջելի տպավորություն ինչպես պանսիոնի նախկին սաների, այնպես էլ պանսիոնը այցելած և նրան ծանոթ ժամանակակիցների վրա։ Աբովյանի մասնավոր պանսիոնը հայ նոր դպրոցի ու մանկավարժության պատմության ամենաերևելի էջերից մեկն է։ Բազմաթիվ ականավոր գիտնական ճանապարհորդների հիացական վկայությունները, առաջին հերթին, վերաբերում են Աբովյանի գործունեությանը իր պանսիոնում։ Բավական է հիշատակել Վագների, Կոխի, ինչպես և պանսիոնի նախկին սաների բազմաթիվ վկայությունները։ Վագներին հաճելի կերպով զարմացնում են պանսիոնի սաների լավ գիտելիքները (հատկապես լեզուներից), կարգապահությունը, դաստիարակվածությունը, Աբովյանի և նրա սաների միջև եղած հարազատ, մտերմական հարաբերությունները։ Պանսիոնի մասին է վկայում և նրա տված «արտադրանքը»,— այդտեղ սովորած սաները, որոնցից շատերը, իրենց ուսումը շարունակելով միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում, հետագայում դարձան հայտնի գործիչներ, գրողներ, ինչպես Գաբր. Սունդուկյան, Գ. Աքիմյան, Գ. Խատիսյան և այլն։

*
* *

ե. Աբովյանն իր առաջավոր հայացքներով ու մանկավարժական գաղափարներով արքունի դպրոցի պիտանի ու հարմարավոր աստիճանավոր, տեսուչ-ուսուցիչ լինել չէր կարող. սկսվում են բացահայտ ու քողարկված ոտնձգությունները, հետապնդումները, հալածանքները՝ կապված գավառական ուսումնարանում նրա աշխա-

տանքի հետ, նրա պանսիոնի հետ, «Նախաշավիղ»-ի տպագրության, Ղազանի համալսարան հրավիրելու հարցերի հետ և այլն։ Ստեղծվում է այնպիսի վիճակ, որ Աբովյանի հետագա աշխատանքը Թիֆլիսի գավառական ուսումնարանում անհնար է դառնում։ 1843 թ. ամռանը Աբովյանին իբրպես («համաձայն իր դիմումի») ազատում են Թիֆլիսի գավառական ուսումնարանից և տեղափոխում Երևանի գավառական ուսումնարան։ Այդ տեղափոխումը Աբովյանի համար ոչ միայն փաստորեն «պաշտոնի իջեցում» էր, հետևաբար և որոշ բարոյական հարված, այլև դա մի նոր լրացուցիչ արգելակ էր նրա լուսավորական նպատակների իրագործման ճանապարհին։ Ճիշտ է, Երևան տեղափոխվելով, Աբովյանը գործելու էր բուն հայրենիքում, շատ ավելի մոտ իր հարազատ ժողովրդին. սակայն անգամ Թիֆլիսի համեմատությամբ շատ ավելի հետամնաց գավառական Երևանը շատ ավելի քիչ հնարավորություններ էր ներկայացնում այն լայն կուլտուր-լուսավորական գործունեության համար, որին ձգտում էր Աբովյանը. այստեղից էլ այն հակասական զգացմունքներն ու մտքերը, որոնցով Աբովյանը գալիս է Երևան։

Երևանի գավառական ուսումնարանը, որը թեև արդեն ավելի քան տասնամյա գոյություն ուներ, փայլուն վիճակում չէր գտնվում։ Աբովյանի առաջ կանգնած էր չափազանց դժվարին, մի մարդու ուժերից վեր խնդիր,— ոտքի կանգնեցնել այդ դպրոցը։ Եվ, չնայած խնդրի դժվարության, Աբովյանն իրեն հատուկ եռանդով ու ոգևորությամբ ձեռնարկում է դրա կենսագործմանը։

Դրության արմատական բարելավման համար Աբովյանը որպես տեսուչ առաջարկում և մասամբ կիրառում է մի շարք միջոցառումներ։ Նա հատուկ ուշադրություն է դարձնում հատկապես աշակերտների հաճախումները կարգավորելու, նրանց դեպի ուսումնարան գրավելու, աշակերտների մաղման դեմ պայքարելու ուղղությամբ, այդ նպատակով կանգ չառնելով անգամ խիստ վարչական միջոցառումների առաջ։

Չնայած բոլոր դժվարություններին, Աբովյանն ամեն կերպ աշխատում է իր առաջավոր մանկավարժական գաղափարները կյանքում կիրառել, որչափ դա թույլ էին տալիս աշխատանքի պայմանները գավառական ուսումնարանում և առհասարակ Հայաստանում ու Անդրկովկասում։ Աբովյանը Երևանի գավառական ուսումնարանում կենսագործում է դաստիարակության հումանիստական մեթոդներ, ռեալական կրթության, զննականության սկզբ-

բունքները, աշխատանքային դաստիարակություն և այլն։ Սակայն հասկանալի է, որ Աբովյանը՝ գոյություն ունեցող պայմաններում և ուսուցիչների առկա կազմով՝ շատ բան անել չէր կարող։ Առաջինը նա ինքն ամենևին էլ գոհ չէր իր ղեկավարած դպրոցի վիճակից։ Եվ այնուամենայնիվ, Աբովյանի տեսչությունը Երևանի գավառական ուսումնարանում անհետևանք չէ անցնում. հենց առաջին տարում աշակերտների թիվը խիստ կերպով աճում է, 90-ից բարձրանալով 190-ի։ Դատելով ուսումնարանի հաշվետվություններից, կարելի է պնդել, որ զգալի չափով բարձրանում է նաև աշակերտների առաջադիմությունը։

Երևանում Աբովյանի նկատմամբ դպրոցական և այլ իշխանությունների թշնամական վերաբերմունքը ոչ միայն չէ վերանում, այլ ավելի է ուժեղանում։ Մյուս կողմից էլ Աբովյանը վերջնականապես հույսը չէր կտրել հայկական դպրոցներում աշխատելու հնարավորությունից և երբ Ներսես Աշտարակեցին կաթողիկոս է դառնում, Աբովյանը 1848 թ. սկզբներին դիմում է նրան՝ Ներսիսյան դպրոց տեղափոխվելու նպատակով. Ներսեսը համաձայնում է. դպրոցական իշխանությունները նույնպես մեծ պատրաստակամությամբ տալիս են իրենց համաձայնությունը.— գոնե այդ ձևով նրանք վերջապես կարող կլինեին ազատվել «անհարմար» և «անհանգիստ» Աբովյանից։

Սակայն Աբովյանը, դեռ ուսումնարանի հանձնումը չավարտած, 1848 թ. ապրիլի 2-ին անհետանում է։

* * *

Աբովյանը ականավոր մանկավարժ էր (թեորետիկ և պրակտիկ) ոչ միայն իր ժամանակի հետամնաց Անդրկովկասի և Հայաստանի համեստ չափանիշներով, այլև 19-րդ դարի եվրոպական ու ռուսական առաջավոր մանկավարժության չափանիշներով։

Այդ են վկայում բազմաթիվ ժամանակակից ականավոր գիտնականներ, ճանապարհորդներ, Աբովյանի նախկին շատ աշակերտներ, անգամ դպրոցական և այլ իշխանությունների մի շարք ներկայացուցիչներ։ Այսպես՝ օրինակ, գերմանացի նշանավոր բուսաբան Կ. Կոխը, ծանոթանալով Աբովյանի և նրա մանկավարժական գործունեության հետ, հետևյալ կարծիքն է հայտնում նրա մասին. «Անկասկած, մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, որն այնպիսի զոհաբերությամբ նվիրված լինի

մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Աբովյանն էր։ Սակայն, դժբախտաբար, Աբովյանին ցույց չեն տալիս արժանի վերաբերմունք...։

... Եթե Աբովյանը, որպես Երևանի գավառական դպրոցի տեսուչ, կարողանա մնալ իր գործունեության ներկա շրջանի մեջ, եթե նրան գործոն աջակցություն ցույց տան իրեն ենթակա պաշտոնյաները, այլև պահանջված չափով գնահատեն նրան, սպասելի է, որ Երևանից մի նոր լույս ծագի դժբախտ ու մոռացված, դարերով ոտնահարված հայ ժողովրդի համար»։[1]

Աբովյանի նախկին աշակերտները պատմում են իրենց ուսուցչի մանկավարժական վարպետության, նրա դասերին տիրող հետաքրքրության ու աշխուժության մասին։ Ն. Աթանասյանը պատմում է. «դասը գնում էր այնքան աշխույժ ու կենդանի, որ մենք չիմացանք, թե նա ինչպես վերջացավ»։[2]

Հայտնի է այն հիացական գնահատականը, որ ականավոր գիտնական Վագները տալիս է Աբովյանի պանսիոնի աշակերտների գիտելիքներին։ Նույնպիսի բարձր գնահատանքով է արտահայտվում բանաստեղծ Բոդենշտեդտը Երևանի գավառական դպրոցի Աբովյանի աշակերտների մասին։ Աբովյանի պանսիոնի նախկին աշակերտ, ականավոր դրամատուրգ Գ. Սունդուկյանը հիշում է. «Նա (Աբովյանը— Մ. Ս.) է ինձ ռուսաց լեզվից պատրաստել։ Նա չլիներ, ինձ գիմնազիա չէին ընդունի։ Նրա մոտ պատրաստված աշակերտները Մոսկվայում, Պետերբուրգում էլ անվանի էին, ինչ թե Թիֆլիսում»։[3]

Սակայն իսկական ուսուցիչ-դաստիարակ լինելու համար բավական չեն միայն գիտությունը, անգամ մանկավարժական վարպետությունը. դրա համար պակաս կարևոր չէ սերը դեպի մանկավարժական աշխատանքը, սերը դեպի երեխաները. չինովնիկ ուսուցիչը լավագույն դեպքում կարող է երեխաներին տալ որոշ գիտելիքներ, բայց իրապես դաստիարակել նրանց չէ կարող. մանկավարժական աշխատանքն առանց սիրո, տանջանք է թե մանկավարժի և թե երեխաների համար։

Աբովյանը երեխաների դաստիարակության գործին անձնուրաց նվիրվածության, դեպի երեխաներն ունեցած անսահման սիրո

---

[1] «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», կազմեց Հր. Մուրադյան, Երևան, 1941, էջ 47։

[2] «Սովետական մանկավարժ», Երևան, 1940 թ., № 11։

[3] «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», էջ 122։

մարմնացումն, էնտուզիաստ մանկավարժի տիպար է։ Բացառությամբ թերևս Պեստալոցցու, անցյալի խոշոր մանկավարժներից չի կարելի մատնանշել մեկ ուրիշի, որին այս տեսակետից կարելի լիներ համեմատել Աբովյանի հետ։ Աբովյանի նվիրվածությունը երեխաների դաստիարակության ու կրթության գործին պետք է բացատրել նրա նույնպիսի նվիրվածությամբ իր ժողովրդին, նրա լուսավորության, նրա ապագայի գործին։

Ակադեմիկ Խ. Ֆրենին գրած իր նամակում Աբովյանը, պատմելով իր մանկավարժական գործունեության մասին Թբիլիսիում, ավելացնում է. «Երկու հարյուրի չափ աշակերտ ամեն օր շրջապատում են ինձ. սրանց սերը, սրանց համակրությունը բարձրացնում է ինձ ամեն երկրայինից վեր։ Մանկական աշխարհը վաղուց ի վեր բոլոր երկրային սրտահաճ բախտավորություններից ինձ համար ամենաբարձրն է եղել։ Մանուկներին կրթելն աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար»։[1]

Աբովյանն իր ամբողջ ժամանակը, ուժերը նվիրում էր իր սիրած գործին, չսահմանափակվելով սահմանված ժամերին իր պաշտոնական պարտականությունների կատարմամբ։

Հանրածանոթ են Աբովյանի բարձր հումանիզմը, այլասիրությունը, սերը դեպի մարդիկ։ Նրա այդ սերը եռակի ուժով հանդես է գալիս երեխաների նկատմամբ, որոնք, նրա ասելով, իր երկրային արքայությունն են։ Իր նախկին աշակերտներին ուղղած նամակներից մեկում[2] Աբովյանը գրում է. «Ով հիրավի, ո՞ր կապ, ո՞ր բարեկամություն կարէ լինել այնպէս ջերմ, այնպէս մաքուր և հաստատուն, որքան ուսուցչի և աշակերտաց»։ Հայտնի են այն զգալի նյութական զոհողությունները, որոնց առջև կանգ չէր առնում Աբովյանը իր աշակերտներին օգնելու համար, այն սերը և մտերմական կապը, որ գոյություն ուներ Աբովյանի և նրա աշակերտներից շատերի միջև. վերջիններս Աբովյանի համար ոչ թե օտար, անտարբեր անձինք էին, այլ «գառնուկ Խատիսյան», «աչքի լիս Աքիմյան» և այլն։

Այս բոլորն ապացուցում է, որ Աբովյանը ոչ միայն թեորիապես էր պաշտպանում, այլ և իր մանկավարժական պրակտիկայում լրիվ կերպով կենսագործում էր առաջավոր մանկավարժության կարևորագույն պահանջներից մեկը,— դեպի երեխաներն ուշադիր, ծնողական, սիրող վերաբերմունք ունենալու մասին։

[1] «Դիվան Խ. Աբովյանի» էջ 111։

[2] Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գրական Թանգարան, «Խ. Աբովյանի արխիվ», գ. № 20։

Հասկանալի է, որ Աբովյանի նման վերաբերմունքը չէր կարող նրա աշակերտների մեջ չզարթեցնել փոխադարձ սեր, մտերմություն ու կապվածություն իրենց ուսուցչի հետ. խոր երախտագիտության զգացմունքով նրանք իրենց սրտում պահում էին Աբովյանի պայծառ հիշատակը։

ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Աբովյանի, որպես լուսավորչի, կարծիքով, հայ ժողովրդի դարավոր տառապանքների պատճառներից մեկը եղել է խավարը, իսկական լուսավորության բացակայությունը. Հետևաբար, հայ ժողովրդի ազատագրման և փրկության կարևոր նախապայմաններից մեկը,— դարավոր այդ խավարի ու տգիտության լծից ազատագրվելն է։

Լուսավորությունը, կրթությունն ու դաստիարակությունը վճռական նշանակություն ունեն և՛ ժողովուրդների կյանքում, և՛ ամեն մի մարդու անհատական կյանքում։ Շատ հին վեճում այն մասին, թե ինչն է վճռականը մարդու զարգացման և հետագա բախտի համար,— ժառանգականությո՞ւնը, թե՞ դաստիարակությունն ու միջավայրը,— այլ առաջավոր մտածողների նման, Աբովյանը վճռական նշանակությունը տալիս էր դաստիարակությանը։ Տվյալ հարցում նույնպես Աբովյանը հանդես է գալիս միջնադարյան եկեղեցական գաղափարախոսության դեմ, մարդու ժառանգական մեղսալիության մասին եկեղեցական հայացքների դեմ, ֆեոդալական հասարակության ժառանգական-դասային հիմունքի դեմ։

Մարդու բարոյական և ինտելեկտուալ հատկությունները հիմնականում որոշվում են այն դաստիարակությամբ, որն ստանում է նա, այն շրջապատում, որի մեջ մեծանում ու գտնվում է նա։

Աբովյանը, հավատարիմ իր լուսավորական գաղափարներին, պայքարի է ելնում միջնադարյան կղերական, սխոլաստիկական դաստիարակության և ուսուցման դեմ, որոնք նրա ժամանակ դեռ իշխող էին Հայաստանի ու Անդրկովկասի դպրոցներում։ Դաստիարակության ու կրթության միջնադարյան-կղերական սիստեմին ու սկզբունքներին (ասկետիզմ, կույր հնազանդություն, սխոլաստիցիզմ, դոգմատիզմ և այլն) հակառակ, Աբովյանը առաջ էր քաշում կրթության և ուսուցման միանգամայն նոր նպատակներ և սկզբունքներ.— բազմակողմանի դաստիարակություն և կրթություն (մտավոր, բարոյական, ֆիզիկական, աշխատանքային, գե-

զարվեստական դաստիարակություն), աշխարհիկ դաստիարակություն և կրթություն, ռեալական կրթություն, տղաների և աղջիկների հավասար կրթություն և այլն:[1]

Աբովյանի մոտ մանուկ սերնդի բարոյական դաստիարակության հիմնական իդեալները,— բխելով նրա ընդհանուր աշխարհայացքից,— հանդիսանում են հայրենասիրությունը, դեմոկրատիզմը, հումանիզմը:

Ըստ Աբովյանի, հայրենասիրությունն է այն հիմնական բարոյական հատկությունը, որ անհրաժեշտ է դաստիարակել մատաղ սերնդի մեջ:

Աբովյանն իր ամբողջ գրական հանճարը և մանկավարժական տաղանդը ի սպաս է դրել, այդ գաղափարը քարոզելու, արմատավորելու հայ ժողովրդի ու նրա մատաղ սերնդի մեջ:

Դեմոկրատ հումանիստ Աբովյանի հայրենասիրությունը ոչ մի ընդհանուր բան չունի նացիոնալիզմի հետ. Նրա հայրենասիրությունը օրգանապես կապված է հումանիզմի, դեմոկրատիզմի հետ, որպիսի գաղափարներ ու զգացմունքներ Աբովյանն ամեն կերպ աշխատում է պատվաստել իր ընթերցողներին, իր սաներին: Բավական է հիշել թեկուզ նրա «Վերք Հայաստանի»-ն, որտեղ հայերի և տեղացի այլազգիների համագործակցության կոչ է արվում՝ ընդդեմ պարսիկ ստրկացնողների, հիշել նրա «Ամերիկու լիս քցիլը» իր ջերմ համակրանքով դեպի անդրօվկիանոսյան հարստահարվող ժողովուրդները, դեպի ստրուկ նեգրերը, որոնք դարձել են եվրոպական «քաղաքակիրթ» գաղութարարների ագահության զոհեր. Բավական է հիշել «Թուրքի աղջիկը» պատմվածքը, որի գաղափարական հիմքը բարձր ու ազնիվ հումանիզմն է:

Աբովյանն իր աշխատությունների մեջ քարոզում, ինչպես և իր անձնական օրինակով ու մանկավարժական գործունեությամբ ջանում է իր սաների մեջ արմատացնել այնպիսի բարոյական հատ-

---

[1] Աբովյանի մասին գրող հեղինակներից շատերը (երևի հենվելով Երևանի գավառական դատավորին Աբովյանի ներկայացրած զեկուցագրի վրա), Աբովյանին սխալմամբ վերագրում են նաև ընդհանուր պարտադիր կրթության պահանջը: Մինչդեռ Աբովյանն այդպիսի պահանջ չէ ներկայացրել և չէր էլ կարող ներկայացնել, քանի որ դա կլիներ կատարյալ ուտոպիա այն ժամանակվա Անդրկովկասի (անգամ Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի) պայմաններում, երբ 500—600 բնակչին ընկնում էր մեկ սովորող, անգամ Հոկտեմբերյան Ռևոլյուցիայի նախօրեին ցարական Ռուսաստանում դպրոցական տարիքի երեխաների 4/5 մասը դպրոցից դուրս էր գտնվում: Այդ խնդիրը մեզ մոտ ի վիճակի է լինում լուծելու միայն Սովետական իշխանությունը:

կանիշներ, ինչպես մեծահոգություն, երախտագիտություն, անշահախնդրություն, ծնողական, որդիական սեր, համեստություն, մարդկային արժանապատվության բարձր զգացմունք և գիտակցություն, շիտակություն, ճշմարտասիրություն, ազնվություն, արիություն, տոկունություն, ուժեղ կամք, աշխատասիրություն, նատաջանություն և այլն:

Բառոյական դաստիարակության մեթոդները: Նոր ժամանակի դպրոցը և մանկավարժությունը,— սկսած վերածնունդի շրջանից,— հանձինս առաջավոր մտածողների ու մանկավարժների, առաջադրելով դաստիարակության ու կրթության նոր նպատակներ ու բովանդակություն, դրա հետ միասին առաջադրում ու կիրառում են նաև բարոյական դաստիարակության նոր մեթոդներ: Այդ առաջավոր մանկավարժների թվին է պատկանում և Աբովյանը:

Դաստիարակության այդ մեթոդների հիմունքներն են.— հումանիզմը, մանկական տարիքի իրավունքների հարգումը, ուշադիր, սիրալիր վերաբերմունք դեպի խնամքի ու փաղաքշանքի կարոտ, զարգացող մանուկը, դաժան կարգապահության ու պատիժների վերացում, ընդհանուր առմամբ բացասական վերաբերմունք դեպի մարմնական պատիժը (թեպետ անգամ առաջավոր հումանիստ մանկավարժներից շատերը մինչև վերջը չեն կարողանում հրաժարվել մարմնական պատիժներից), վերացական բարոյական-խրատական քարոզների փոխարեն, դաստիարակություն կենդանի օրինակի, վարժության միջոցով և այլն:

Ելնելով այս հիմունքներից, Աբովյանն առաջարկում և ինքն էլ կիրառում է դաստիարակության մեթոդների և միջոցների մի ամբողջ զինանոց:

Բարոյական դաստիարակության ամենաէֆեկտիվ մեթոդներից մեկը, ըստ Աբովյանի, կենդանի օրինակի, անձնական օրինակի միջոցով տրվող դաստիարակությունն է: Այս պահանջը բխում է նոր մանկավարժության զննականության, կոնկրետության սկզբունքից: Օրինակի միջոցով դաստիարակության գաղափարը կարմիր թելի նման անցնում է Աբովյանի բոլոր մանկավարժական բնույթի երկերի, առաջին հերթին, նրա գլխավոր մանկավարժական աշխատության՝ «Պատմություն Տիգրանի» վեպի միջոցով:

Սովետական մանկավարժությունը, դպրոցը մեծ նշանակություն են տալիս հատկապես դաստիարակի անձնական օրինակին: Աբովյանի մտքերը այդ մասին մեզ համար նշանակալի արժեք են ներկայացնում:

Աբովյանը որպես մեծ մանկավարժ, հանճարեղ գրող, որպես պատմաբան, փայլուն կերպով կարողանում է օգտագործել գեղարվեստական խոսքի բոլոր միջոցները, ինչպես և պատմությունը՝ դաստիարակչական նպատակներով։

Բարոյական դաստիարակության նպատակով պետք է օգտագործել ոչ միայն գեղարվեստական խոսքի միջոցները, այլ և առհասարակ կենդանի խոսքը,— համոզման, խրատի, ամոթանքի, խրախուսանքի, գովեստի ձևով և այլն։ Եթե ցածր տարիքի երեխաների համար դաստիարակության այս միջոցները նվազ էֆեկտավոր են,— բարձր տարիքում, երբ երեխայի գիտակցությունը, բարոյական հասկացողությունները ավելի հասունացած են, ավելի ու ավելի մեծ չափով կարելի է դիմել դաստիարակության այդ միջոցին. սրա կիրառման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել, հատկապես, «Պատմություն Տիգրանի» վեպում։ Ի դեպ, պետք է ասել, որ Աբովյանի մոտ խրատները ընդհանուր, վերացական բնույթ չեն կրում, այլ ամեն անգամ տրվում են այս կամ այն կոնկրետ երևույթի, փաստի, վարմունքի առթիվ։

Մեծ հումանիստ Աբովյանը, ի տարբերություն իր ժամանակի Հայաստանի և Անդրկովկասի (և ոչ միայն այդտեղի) դպրոցներում դեռևս իշխող ճիպոտի և ֆալախկայի պրակտիկայի, քարոզում և իր մանկավարժական պրակտիկայում կիրառում է հումանիստական վերաբերմունք դեպի երեխան։ Մեզ արդեն հայտնի է այն անսահման սերը, որն Աբովյանը տածում էր դեպի երեխաները։ Հանրածանոթ է այն անջնջելի տպավորությունը, որ թողեց Աբովյանի այցելությունը խալֆա Շապուհի խոժոռ դեմքին ու ճիպոտների հարվածներին վարժված՝ Աշտարակի դպրոցի աշակերտների վրա։

Աբովյանը, ժխտելով միջնադարյան դպրոցի դաժան դիսցիպլինան ու պատիժները, իրավացիորեն ոչ մի դեպքում չի բացասում դիսցիպլինայի և այն պահպանելու համար երբեմն անխուսափելի պատիժների անհրաժեշտությունը. դեպի երեխաները ծնողական վերաբերմունք ունենալու հետ միասին, Աբովյանը խստապահանջ ուսուցիչ էր։

Ժխտելով միջնադարյան սխոլաստիկական մանկավարժության սկզբունքները, Աբովյանը, ինչպես և նոր, առաջավոր մանկավարժության մի շարք ներկայացուցիչներ (Ռուսսո, Պեստալոցցի, Ուշինսկի), առաջադրում են պրակտիկայի, գործունեության պահանջը նաև բարոյական դաստիարակության գործում. բավական չէ դիմել միայն երեխայի գիտակցությանը, անգամ զգացմունքներին. ան-

հրաժեշտ է, որպեսզի երեխան գործնականում կատարի այնպիսի արարքներ, որոնք ամրապնդում են պահանջվող բարոյական հատկությունը:

Սակայն երեխաների նկատմամբ կիրառվող պատիժների շարքում միշտ էլ առանձնահատուկ վերաբերմունք է պահանջել մարմնական պատիժների խնդիրը: Բոլոր երկրներում էլ մարմնական պատիժը դարերով սրբագործված է եղել այն աստիճան, որ նոր ժամանակների առաջավոր հումանիստ մանկավարժներից շատերն անգամ ի վիճակի չեն լինում մինչև վերջը հրաժարվելու դաստիարակության այդ «մեթոդից», որն այսօր էլ օրինականացված է շատ բուրժուական երկրներում (Անգլիա և այլն):

Եթե հաշվի առնենք այս բոլորը, այլև այն, որ հայկական դպրոցի թե՛ անցյալ և թե՛ Աբովյանին ժամանակակից պրակտիկան ամբողջովին հիմնված էր ճիպոտի դաստիարակության վրա, որն օրինականացված և լայնորեն կիրառվում էր նաև արքունի դպրոցներում, որտեղ պաշտոնավարում էր Աբովյանը,— ապա մեզ համար միանգամայն հասկանալի կլինի այն հակասականությունն ու անհետևողականությունը, որ Աբովյանն էլ հանդես է բերում տվյալ հարցում:

Տվյալ հարցին վերաբերող հիշողությունները, փաստաթղթերը խոսում են այն մասին, որ Աբովյանն իր մանկավարժական գործունեության հենց սկզբից թեորիայում սկզբունքորեն հակառակ է եղել մարմնական պատիժներ կիրառելուն: Սակայն մի շարք պատճառներով (իր մանկավարժական գործունեության սկզբնական շրջանում, դեռ անբավարար մանկավարժական վարպետությունը, բնավորության դյուրաբորբոքությունը և այլն), սկզբում Աբովյանը երբեմն, մեծ մասամբ աֆեկտացիայի վիճակում, դիմում էր մարմնական պատիժների օգնության: Իսկ իր մանկավարժական գործունեության վերջին՝ երևանյան շրջանում արդեն Աբովյանը ոչ միայն թեորիապես, այլև իր մանկավարժական պրակտիկայում հետևողականորեն մերժում էր մարմնական պատիժները:

*
* *

Աբովյանի դիդակտիկական հայացքները: Նոր ժամանակներում բարձրացող բուրժուազիային չէին կարող բավարարել միջնադարյան սխոլաստիկական-կրոնական կրթությունն ու ուսուցումը: Արդյունաբերության, առևտրի, տեխնիկայի հետագա զարգացման զուգընթաց, ուժեղանում է պայքարը ռեալական կրթու-

թյան համար, որը հանգում է ռեալական դպրոցների կազմակերպմանը Եվրոպայի զանազան երկրներում (առաջին հերթին՝ Ռուսաստանում, Պետրոս 1-ի օրոք)։ Ուսուցման բովանդակության և ուղղության փոփոխման հետ միասին, փոփոխվում են նաև ուսուցման սկզբունքները, մեթոդները,— մեքենայական սերտողության փոխարեն հանդես է գալիս գիտակցական ուսուցման, զննականության սկզբունքը, երեխաների ինքնուրույն մտածողության զարգացման պահանջը և այլն։ Առաջ է քաշվում երեխաների տարիքային ու անհատական առանձնահատկությունները հաշվի առնելու պահանջը և այլն։

Ինչպես արդեն նշվել է, Աբովյանի ժամանակաշրջանում, 19-րդ դ. առաջին կեսին, հայկական դպրոցում ու մանկավարժական մտքի մեջ սկսում են երևալ նոր մանկավարժական-դիդակտիկական գաղափարների առաջին ծիլերը, որոնց բազմակողմանի զարգացումը մենք տեսնում ենք Աբովյանի գործունեության մեջ։

Ինչպես հայտնի է, հայ ժողովրդի ազատագրման ու երջանկության կարևորագույն նախապայմաններից մեկը Աբովյանը համարում էր ժամանակակից լուսավորությունը. իսկ դրա համար պետք էր դեն նետել ավանդական սխոլաստիկական կրթությունը, վերջինս կառուցել ժամանակակից առաջավոր գիտական մտքի վրա, որն իր ժամանակի համար դրեթե համասար էր ռեալական կրթության պահանջին։ Կլասիկակա՞ն, թե՞ ռեալական կրթություն, այսինքն, փաստորեն միջնադարյան սխոլաստիկակա՞ն, թե՞ նոր, պրոգրեսիվ կրթության միջև եղած պայքարում Աբովյանն անվերապահորեն պաշտպանում է ռեալական կրթության պահանջը։

Աբովյանն անողոք քննադատության է ենթարկում գոյություն ունեցող դպրոցը և ուսուցումը։ Իսկ թե ինչպիսին պիտի լինի իսկական կրթությունը, Աբովյանը «Պատմություն Տիգրանի» վեպում պատասխանում է իր իդեալական մանկավարժ Վահանյանի բերանով։ Տիգրանի այն հարցին, թե ո՞ր գիտությունն է ավելի սովորել, Վահանյանը պատասխանում է՝ «Բնաբանությունը, առավել բուսաց պատմությունը, երկրիս, ու ինչ որ աչքդ տեսնում ա, նրանց պատմությունը, աշխարհիս պատմությունը ու հայի, ռսի, թուրքի լեզուն»։[1] Այստեղ տրված է ռեալական կրթության մի ամբողջական կոնցեպցիա։

Համաձայն ռեալական կրթության սկզբունքի, ուսուցման առանցքը դառնում է, մի կողմից բնագիտական-մաթեմատիկական գիտությունների, մյուս կողմից, նոր լեզուների դասավանդումը։

---

[1] «Ընտիր երկեր», Բ. հատ., էջ 189։

Աբովյանը հետևողականորեն պաշտպանում է ռեալական կրթության սկզբունքը թե իր պրակտիկ մանկավարժական գործունեության ընթացքում, և թե իր կազմած դասագրքերում ու ձեռնարկներում: Ռեալական, ընդգծված բնագիտական կրթության գաղափարը հետևողականորեն անց է կացվում «Պատմություն Տիգրանի» վեպում: Հիմնականում ռեալական կրթության սկզբունքով է կազմված և Աբովյանի «Նախաշավիղ»-ը: Սակայն պետք է ասել, որ այստեղ էլ երևում է Աբովյանի աշխարհայացքի սահմանափակվածությունը. հենց իր «Նախաշավիղ»-ում Աբովյանը ոչ միայն բնագիտական նյութերի կողքին տալիս է նաև կրոնական բնույթի նյութեր, այլ և հենց բնագիտական նյութերի մեջ հաճախ բնական երևույթների բացատրությունը կրում է կրոնական-նպատակաբանական բնույթ: Բայց Աբովյանի կրթական սիստեմում արտահայտված ռեալական կրթության սկզբունքը՝ ուղղված է կրթական հին սիստեմի դեմ, ըստ որում և հին, մեռած լեզուների դեմ, հանուն նոր, կենդանի լեզուների ուսուցման: Հանրածանոթ է Աբովյանի բացառիկ դերը աշխարհաբարի զարգացման գործում: Հարվածը գրաբարի մենաշնորհ դրությանը դպրոցում հանդիսանում էր հարված կլասիկական-սխոլաստիկական կրթության, հանուն նոր, ռեալական կրթության: Թբիլիսիի և Երևանի գավառական ուսումնարաններում Աբովյանը համարձակ և համառ պայքար է տանում, որպեսզի, ռուսաց լեզվի կողքին, պատվավոր տեղ տրվի և անդրկովկասյան ժողովուրդների— հայերի, վրացիների, ադրբեջանցիների մայրենի լեզվին: Դրա հետ միասին հայտնի է և այն բացառիկ նշանակությունը, որ Աբովյանը տալիս էր ռուսաց լեզվին և նրա դասավանդմանը: Բացի բնական գիտություններից և նոր լեզուներից, Աբովյանը շատ մեծ դաստիարակչական-կրթական նշանակություն էր տալիս պատմության, մանավորապես հայրենի պատմության ուսումնասիրությանը:

Ռեալական կրթության պահանջի հետ սերտորեն կապված է զննականության դիդակտիկական սկզբունքը.— ռեալական կրթությունը, որն առաջին հերթին, հենվում է շրջապատի առարկաների և երևույթների իմացության վրա, անհրաժեշտորեն պետք է կենսագործվի դրանց անմիջական ընկալման միջոցով, այսինքն լինի զննական:

Զննականության հարցում Աբովյանը շարունակում և զարգացնում է առաջավոր մանկավարժական մտքի լավագույն տրադիցիաները:

Զննականության սկզբունքը Աբովյանը կենսագործում է իր կազմած դասագրքերում ու ձեռնարկներում, ինչպես և իր պրակտիկ մանկավարժական գործունեության ընթացքում։

Աբովյանը հայտաբերում է երեխաների տարիքային առանձնահատկությունների ու հոգեբանության խորը ճանաչողություն, ինչպես և ձգտում ու կարողություն՝ ուսուցումը դարձնելու մատչելի ու հետաքրքիր երեխաների համար։ Այս տեսակետից հենց լայն մասսաներին մատչելի աշխարհաբարի պրոբլեմը հանդիսանում է ոչ միայն մեծ կուլտուր-քաղաքական խնդիր առհասարակ, այլ և միաժամանակ մեծ չափով մանկավարժական-դիդակտիկական խնդիր։ Ըստ Աբովյանի, արդյունավետ և խելացի ուսուցման նախապայմանն է «զննականությունը, պարզությունը և հիմնավորությունը դասավանդման ժամանակ.. Անցումը հայտնիից դեպի անհայտը, պրակտիկայից թեորիային, շնչավոր աշխարհից դեպի վերացականը..., անծանոթի համեմատությունը ծանոթի հետ, հասկանալ և հաճախակի կրկնել այն, ինչ մենք անցնում ենք.. ուսումնական առարկաների համապատասխանությունը... պատանեկության տարիքին և ըմբռնումներին...»։[1]

Սակայն ուսուցման արդյունավետության համար բավական չէ միայն նրա մատչելիությունը. ուսուցումը պետք է հենվի երեխայի հետաքրքրության վրա։ Աբովյանը խարազանում է մեր դպրոցներում տիրող տաղտուկը, որն սպանում է ամեն մի մտավոր ընդունակություն. մինչդեռ, ըստ Աբովյանի, պետք է կարողանալ ուսուցումը այնպես հետաքրքիր դարձնել, որ երեխաներն «ինքեանք քոլորովին մոռանան, թէ են ի վարժատան»։[1] Արդեն ուսուցման նոր բովանդակությունը և մատչելի լեզուն զգալի չափով լուծում են ուսուցման հետաքրքրականության խնդիրը. սակայն դրանք դեռ բավական չեն. պետք է նաև կարողանալ հետաքրքիր և գրավիչ կերպով երեխաներին մատուցել ուսումնական նյութը։ Իսկ դա Աբովյանին միանգամայն հաջողվում է, որովհետև նա իր անձնավորության մեջ համատեղում է տաղանդավոր մանկավարժին և գեղարվեստական խոսքի հանճարեղ վարպետին։ Այդ տեսակետից Աբովյանին բաժին է ընկել այնպիսի գրող-մանկավարժների նախանձելի բախտը, ինչպես Լ. Տոլստոյը, մասամբ Ուշինսկին, հետագայում սովետական ականավոր մանկավարժ-գրող Ա. Ս. Մակարենկոն, հայ իրականության մեջ Աղայանը և այլն։

Այդ տեսակետից, բացի «Նախաշավիղ»-ից, մեծ հետաքրքրու-

---

1 Աբովյանի արխիվ, գ. № 31։

2 «Նախաշավիղ», 1940 թ. հրատ. էջ 22։

թյուն են ներկայացնում «Ամերիկա լիս քյիլը» (որը գրված է որպես ուսումնական ձեռնարկ Աբովյանի աշակերտների համար) և «Պատմություն հին դարուց» ձեռագիրը: Առաջինում Աբովյանը նկարագրում է զանազան երկրներ ոչ թե գիտնականի չոր ու ցամաք լեզվով, այլ կարծես թե ընթերցողի հետ միասին տեղափոխվում է տվյալ երկիրը, որը նա ներկայացնում է որպես ականատես, վառ պատկերների միջոցով:

Աբովյանն ամբողջ ուժով հարձակվում է միջնադարյան դըպրոցում իշխող դոգմատիզմի, մեքենայական սերտման դեմ, քարոզելով և կենսագործելով ուսուցման գիտակցականության սկզբունքը, երեխայի ինքնուրույն մտածողության զարգացման պահանջը:

Ինքնուրույն քննադատական մտածողության պահանջի բնաբան կարող են ծառայել հետևյալ խոսքերը. «Կարծյաց հավատալ ու բանը մտքովը չփորձել, կնշանակի իր ձեռքով իր աչքը կալնիլ»:[1]

Արդեն իսկ Աբովյանի կողմից պաշտպանվող ռեալական, զննական-առարկայական ուսուցման սկզբունքը հանդիսանում է ուսուցման գիտակցականության կարևոր միջոց, քանի որ տվյալ դեպքում երեխաներն իրերի վրա չեն նայում ուրիշների աչքերով, չեն մտածում ուրիշների մտքերով, այլ հենվում են սեփական զգայարանների վկայությունների, սեփական դիտողությունների վրա:

Աբովյանն ամեն կերպ աշխատում է ոչ միայն երեխաներին զինել փաստական գիտելիքներով, այլև դրա հետ սերտորեն կապված, խթանել, զարգացնել նրանց մտավոր ընդունակությունները, ինքնուրույն մտածողությունը, նրանց մեջ զարգացնել սեր և ճաշակ դեպի մտքի աշխատանքը: Աբովյանը երեխաների առջև դնում է բազմաթիվ հարցեր ու խնդիրներ, որոնց նպատակն է՝ նրանց մեջ զարգացնելու դիտողականություն, ուշադրություն, երևույթների վերլուծության կարողություն և այլն: Աբովյանը շոշափում և հիմնականում ճիշտ է լուծում նաև ուսուցման սիստեմավորվածության ու հաջորդականության, գիտելիքների հաստատուն յուրացման սկզբունքները:

* * *

Հայտնի է, թե Աբովյանը որպիսի հսկայական կուլտուր-քաղաքական նշանակություն էր տալիս լեզվին ժողովրդի կյանքում: Դրանից բնականաբար բխում է այն առաջատար դերը, որով լեզվի ուսուցումը պետք է գրավի մատաղ սերնդի կրթության ընդհանուր

---

[1] Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», Բ. հատ., էջ 303:

սխտեմում: Սրանով էլ բացատրվում է այն բացառիկ ուշադրությունը, որ Աբովյանը նվիրում է լեզվի դասավանդման մեթոդիկայի հարցերին:

Աբովյանի մեթոդական սկզբունքները լեզվի դասավանդման ասպարեզում բխում են նրա լուսավորական-դեմոկրատական հայացքներից, նրա ընդհանուր մանկավարժական-դիդակտիկական սկզբունքներից. դրանց էությունը,— լեզուն և նրա ուսուցումը դեմոկրատացնելու, հեշտացնելու, լայն մասսաներին մատչելի դարձնելն է: «Նախաշավիղ»-ի մեթոդական ներածականում Աբովյանը իր դասագրքի հիմնական խնդիրներից մեկը համարում է հատկապես գրագիտության ուսուցման մեթոդների այդպիսի հեշտացումը. «և ոչ միայն ուսեալ վարժապետն որ, այլ և ամենայն համբակ և հայր կարէ այսօրինակ հեշտութեամբ ուսուցանել զերեխայն»:[1] Մինչդեռ դարերի ընթացքում կիրառված և Աբովյանի ժամանակ էլ կիրառվել շարունակվող ուսուցման մեթոդներն առհասարակ և մասնավորապես գրագիտության ուսուցման տառահնչական մեթոդը աչքի էին ընկնում անասելի դժվարությամբ և անռացիոնալությամբ:

Բացի մյուս բոլոր պատճառներից, գրագիտության ուսուցման այս մեթոդը էլ ավելի էր ուսուցումը դարձնում անմատչելի չքավոր խավերի երեխաների համար: Սրանով էլ պետք բացատրել այն, որ նոր ժամանակներում, մի շարք երկրներում առաջավոր մանկավարժները որոնում են գրագիտության ուսուցման ավելի հեշտ ու ռացիոնալ մեթոդ, որպիսին դառնում է 19-րդ դարում կիրառվել սկսվող հնչական մեթոդը: Ռուսաստանում հնչական մեթոդի առաջացումը և տարածումը 19-րդ դարի 60-ական թ. թ. պարտական են, առաջին հերթին, Ուշինսկուն:

Հայերի մոտ հնչական մեթոդի հիմնադիրը հանդիսանում է Խ. Աբովյանը, որը դեռ 19-րդ դ. 30-ական թ. թ. վերջերին այդ մեթոդով կազմում է իր «Նախաշավիղ»-ը: Տառահնչական մեթոդի խիստ քննադատությունը Աբովյանը տալիս է իր հայտնի «Խաղարկություն մանկանց»-ում: Աբովյանը հնչական մեթոդի երեք գլխավոր փոփոխակից (սինթետիկ, անալիտիկ և անալիտիկ-սինթետիկ), կիրառում է սինթետիկ հնչական մեթոդը: «Նախաշավիղ»-ի մեթոդական ներածականում Աբովյանը հանգամանորեն,— 14 էջի վրա,— բացատրում է իր մեթոդի էությունը, ուսուցչին տա-

[1] «Նախաշավիղ», էջ 13:

լիս է մանրամասն ցուցումներ, թէ ինչպես պետք է կիրառել դա.— պետք է «ի բաց թողուլ զլիմար անուանակոչութիւն տառից այբ, բեն, գիմ; ըթ և այլն. զամենայն տառս պարտ է ըստ բնական հնչման արտասանել»:

Աբովյանը շատ արժեքավոր ժառանգություն է թողել առհասարակ լեզվի դասավանդման վերաբերող հարցերի բնագավառում: Ելնելով իր առաջավոր դիդակտիկական հայացքներից ռեալական, առարկայական-զննական ուսուցման մասին, Աբովյանը պահանջում էր սահմանել ամենասերտ կապ լեզվի ուսուցման և շրջապատի առարկաների ուսումնասիրության միջև, երեխաների խոսքի զարգացումը սերտորեն շաղկապելով նրանց դիտողականության, մտածողության զարգացման հետ. Աբովյանի «Նախաշավիղ»-ը հիմնականում կազմված է հենց այդ ձևով: Այդ բոլորով Աբովյանը շատ մեծ չափով մոտենում է, բացատրական ընթերցանության սկզբունքին, որը 1—2 տասնամյակ հետո հանճարեղ կերպով մշակեց ու կենսագործեց Ուշինսկին: Աբովյանի մոտ նույն դիդակտիկական սկզբունքների վրա է կառուցված քերականության դասավանդումը, որտեղ անսահմանորեն իշխում էր ֆորմալիստական սխոլաստիկան: Քերականության դասավանդման մեջ Աբովյանն իսկական հեղաշրջում է առաջացնում: Ինչպես առհասարակ լեզվի, այնպես էլ մասնավորապես քերականության դասավանդման ընթացքում Աբովյանը ելնում է երեխաներին ռեալ առարկաների, երևույթների հետ ծանոթացնելու անհրաժեշտությունից, երեխաների դիտողություններից ու դատողություններից այդ առարկաների, երևույթների մասին, որոնցից և նա բխեցնում է լեզվական-քերականական կատեգորիաների ուսուցումը:

Աբովյանը գտնում է, որ առհասարակ տարրական դպրոցում լեզուն պետք է դասավանդվի գործնականորեն, որ այդտեղ երեխաներին լեզվի քերականական օրինաչափությունների հետ սկզբում պետք է ծանոթացնել առանց քերականական տերմինաբանության. առանց տրամաբանական սահմանումների:

Քերականական հասկացությունները բացատրելիս ու դասավանդելիս, Աբովյանը կտրականապես հրաժարվում է պատրաստի, դոգմատիկ բնույթի սահմանումներ ու ձևակերպումներ տալու տիրապետող պրակտիկայից: Աբովյանը այդ քերականական հասկացությունները հենց տեղն ու տեղը, աշակերտի աչքի առաջ, նրա ակտիվ մասնակցությամբ, դուրս է բերում կենդանի խոսակցական լեզվից: «Նախաշավիղ»-ի երկրորդ մասը (հայերենի քերականու-

թյուն, Աբովյանի արխիվ գ. 25) ամբողջովին կառուցված է հենց այդ ձևով. օր. դերանուն հասկացությունը բացատրվում է հետևյալ ձևով. «Չի լինիլ, որ ասենք՝ Մարկոսը Մարկոսի հորը տեսավ, Մարկոսի դասը սերտեց. սովորաբար ասում ենք՝ Մարկոսը իր հորը տեսավ...իր բառը ասա Մարկոսի տեղն է դրած, ուրեմն նույնս բառերն էլ, որ անվան տեղն են գործածվում, և ասին դերանուն, այսինքն փոխանակ անվան, օրօրինակ՝ ես, դու և այլն։[1] Շատ քերականական հասկացություններ բացատրելիս, Աբովյանը մեծ վարպետությամբ կիրառում է էվրիստիկ մեթոդը, այնպես անելով, որ աշակերտներն իրենք հանգեն ինքնուրույն եզրակացությունների և քերականական կանոնների ձևակերպման։ Քերականական հասկացությունները բացատրելու այս մեթոդական եղանակները այն աստիճան պահպանել են իրենց թարմությունը, որ անգամ մեր սովետական դպրոցի շատ դասատուներ կարող են այս հարցում Աբովյանից որոշ բան սովորել, եթե նրանք ցանկանում են քերականության դասավանդումը դարձնել հետաքրքիր և գրավիչ աշակերտների համար։

Աբովյանը խորը սեր էր տածում դեպի ռուս մեծ ժողովուրդը, դեպի նրա կուլտուրան, գրականությունը, լեզուն, որոնք նա չափազանց բարձր էր գնահատում։ Ռուսաց լեզվի կուլտուր-քաղաքական նշանակությունը չափազանց մեծ է, առանց բացառության, բոլոր ժողովուրդների համար և հատկապես հայերի համար, հաշվի առնելով ռուս և հայ ժողովուրդների միջև եղած հատուկ քաղաքական-կուլտուրական մտերմությունը։ «Վերք»-ում պահանջելով ամենից առաջ մայրենի լեզվի իմացություն և ապա՝ օտար լեզուների, Աբովյանը բացառություն է անում ռուսաց լեզվի համար, որի իմացությունը նա համարում է ոչ պակաս անհրաժեշտ, քան մայրենի լեզվինը։

Աբովյանը շատ մեծ բան է արել ռուսաց լեզուն քարոզելու և տարածելու համար, անդրկովկասյան ժողովուրդների, հատկապես հայերի կողմից այն ուսումնասիրելու համար, ոչ լոկ որպես գավառական ուսումնարանի տեսուչ և ռուսաց լեզվի դասատու, այլ նաև որպես «Նոր տեսական և գործնական քերականություն ռուսաց վասն հայոց...» մեծածավալ աշխատության հեղինակ։

Ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի սկզբունքներն Աբովյանի մոտ, բնականաբար, բխում են առհասարակ լեզվի, այդ

[1] Աբովյանի արխիվ, գ. № 25, էջ 12։

թվում մայրենի լեզվի դասավանդման սկզբունքներից, անպայմանորեն հաշվի առնելով ու մայրենի լեզվի դասավանդման առանձնահատկությունները:

Աբովյանը դատապարտում է՝ ոչ ռուս երեխաներին ռուսաց լեզու դասավանդելու գործում իշխող սխոլաստիցիզմը, մեքենայական սերտումը: Ըստ Աբովյանի, ոչ ռուսներին ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի սկզբունքները հետևյալներն են.— ա) ռուսաց լեզվի գործնական ուսումնասիրությունը, մանավանդ ստորին դասարաններում. այդ կապակցությամբ հատուկ նշանակություն է տրվում կենդանի խոսակցության, զրույցին, այսպես կոչված լեքսիկական դասերին. բ) քերականության ուսումնասիրությունը կենդանի խոսքի, գրական, պատմական և դաստիարակչական այլ բնույթի նյութի հիման վրա. գ) այդ բոլորի հետ սերտորեն կապված՝ ռուսաց և հայոց լեզուների դասավանդման համեմատական մեթոդը:

* * *

Աշխատանքային դաստիարակություն: *Աբովյանը աշխատանքային դաստիարակության գաղափարի առաջին մունետիկն է Հայաստանում և առաջիններից մեկը Ռուսաստանում առհասարակ: Նա աշխատանքային դաստիարակության ըմբռնման դեմոկրատական ուղղության պաշտպանն է:*

Մեծ դեմոկրատ Խ. Աբովյանը խորը սիրով ու հարգանքով է վերաբերվում դեպի աշխատավորները, դեպի նրանց աշխատանքը. բնական է, որ Աբովյանը ձգտում է երեխաների մեջ դաստիարակելու նման հարգանք և սեր դեպի աշխատանքը, ինչպես և նրանց պատվաստելու աշխատանքի որոշ հմտություններ, կարողություն ու սովորություն:

Աբովյանի ըմբռնմամբ, աշխատանքային ուսուցումը, ամենից առաջ, պետք է հետապնդի մարդու բազմակողմանի զարգացման հետ կապված՝ դաստիարակչական նպատակներ: Աշխատանքը և աշխատանքային դաստիարակությունը պետք է նպաստեն ինչպես երեխաների բարոյական դաստիարակությանն ու մտավոր զարգացմանը, այնպես և նրանց ֆիզիկական դաստիարակությանը: Աշխատանքը և աշխատանքային դաստիարակությունը մեծ նշանակություն ունեն մասնավորապես բնավորության, կամքի,

տոկունության դաստիարակության, բարոյական-ֆիզիկական կոփվածության համար։

Այդ բոլորի հետ միասին, Աբովյանը աչքաթող չէ անում աշխատանքային դաստիարակության գործնական-տնտեսական կողմը,— երեխաներին ապագա աշխատանքային գործունեության համար պատրաստելը։

Մեզ համար հատկապես արժեքավոր է և այն, որ Աբովյանը ոչ միայն թեորիապես է պաշտպանում աշխատանքային դաստիարակության գաղափարը, այլ և գործնական քայլեր է անում, այդ գաղափարը կենսագործելու.— Երևանի գավառական ուսումնարանի աշակերտներին նա գյուղատնտեսական-այգեգործական աշխատանք էր սովորեցնում ուսումնարանին կից կազմակերպված պարտեզում և Սարդարի այգում, որտեղ ուսումնարանին հատկացված էր բավական մեծ հողամաս այդ նպատակի համար (Աբովյանն ինքը Դորպատում լսել էր գյուղատնտեսության հատուկ դասընթաց)։

* * *

Ֆիզիկական դաստիարակություն։ *Հանդես գալով միջնադարյան դպրոցի ու դաստիարակության դեմ, Աբովյանը, բնականաբար, պետք է մերժեր նաև այդ դաստիարակության ասկետական իդեալը և պայքարեր բազմակողմանի զարգացած, լիարժեք մարդու դաստիարակության համար, ոչ միայն նրա «ոգու», այլ և մարմնի զարգացման համար, քանի որ ըստ Աբովյանի, առանց առողջ մարմնի մարդը ոչ թե լրիվ, այլ կես մարդ է։*

Աբովյանի հայացքները ֆիզիկական դաստիարակության մասին ամենից լրիվ կերպով զարգացված են «Պատմություն Տիգրանի» վեպում։ Աբովյանը կողմնակից է փոքր տարիքից երեխաների օրգանիզմը կոփելուն, ամեն տեսակ պայմանների սովորեցնելուն, այնպես, ինչպես այդ խնդիրը դնում էին նաև Ջ. Լոկկը, Ռուսսոն։

Դեմոկրատ Աբովյանի տեսակետից առողջ կյանքի և առողջ օրգանիզմի ամենաառաջին պայմանը հանդիսանում է աշխատանքը. պարապությունը այլասերում է մարդու և՛ հոգին, և՛ մարմինը։ Բացի դրանից, ֆիզիքական դաստիարակության միջոց են խաղերը, էքսկուրսիաները, զբոսանքները, ճանապարհորդությունները, տարվա բոլոր ժամանակներին և ամեն տեսակ եղանակներին։

Հայտնի է, թե Աբովյանը ինչպես հաճախակի իր աշակերտների հետ կազմակերպում էր զբոսանքներ, էքսկուրսիաներ, հեռավոր ճանապարհորդություններ, որոնք, բացի ընդհանուր դաստիարակչական ու կրթական նշանակությունից, հետապնդում էին նաև ֆիզիկական դաստիարակության խնդիրներ։

Աբովյանն ինքը բազմակողմանի զարգացած, ֆիզիկական բարձր կուլտուրայի տեր մարդու տիպար էր հանդիսանում. նա լավ հեծնորդ էր, հետիոտն ճանապարհորդ, երևելի ալպինիստ (3 անգամ բարձրացել է Արարատի գագաթը), լավ լողորդ, որսորդ։

Աբովյանի ծառայությունները ֆիզիկական դաստիարակության հարցում ճիշտ գնահատելու համար պետք է հիշել, որ գավառական ուսումնարանների (ինչպես և գիմնազիաների) ուսումնական պլաններով ֆիզիկական դաստիարակությունից ոչ մի տեսակ պարապմունքներ չէին նախատեսվում։ Աբովյանն այս հարցում էլ հարկադրված էր հանդես գալու ոչ միայն ավանդական միջնադարյան դպրոցի դեմ, այլ և իր ժամանակի արքունական դպրոցի ու գոյություն ունեցող պրակտիկայի դեմ։

* * *

Հանրաճանաչ է Աբովյանի բացառիկ դերը հայ ժողովրդի կուլտուրայի, գրականության, լեզվի զարգացման մեջ. Աբովյանը հայ նոր գրականության հիմնադիրն է. բացառիկ է նրա դերը աշխարհաբար գրական լեզվի պրոպագանդի, մշակման, զարգացման մեջ։

Սակայն այն բոլորից, ինչ հայտնի է, մի կողմից՝ դպրոցի և մանկավարժական մտքի վիճակի մասին Հայաստանում և Անդրկովկասում 19-րդ դարի 1-ին կեսին, մյուս կողմից, Աբովյանի մանկավարժական գործունեության և հայացքների մասին,— անկասկածելիորեն բխում է այն, որ Աբովյանն իրապես նաև հայ նոր մանկավարժության հիմնադիրն է։ Աբովյանի ժամանակ հայ դպրոցը և մանկավարժական միտքը, չնչին բացառությամբ, դեռ կրում էին իրենց վրա միջնադարյան կրոնականության, սխոլաստիկայի խիստ արտահայտված կնիքը. նորի արտահայտությունները մանկավարժական պրակտիկայում և թեորիայում դեռ պատահական էին, երբեմն կորչելով դեռևս իշխող հնի, միջնադարյանի մեջ, չտալով նոր որակ։ Առաջին անգամ Աբովյանին է հաջողվում ստեղծել առաջավոր, դեմոկրատական աշխարհհայացքի վրա հիմ-

նըված, նպատակաուղղված, խորը մտածված և ամբողջական մանկավարժական սիստեմ, քննադատորեն-ստեղծագործորեն օգտագործելով արևմտա-եվրոպական, ռուսական և հայկական դպրոցի ու մանկավարժական մտքի լավագույն ժառանգությունը: Աբովյանն ստեղծել է ժամանակակից համաշխարհային առաջավոր մանկավարժական մտքի մակարդակի վրա կանգնած մանկավարժական սիստեմ, որն իրապես նոր խոսք և իսկական հայտնություն էր հայկական և անդրկովկասյան իրականության մեջ, որոշ հարցերում կանխելով նույնիսկ ռուսական մանկավարժության կլասիկներին:

Աբովյանին բաժին է ընկել ոչ միայն նեղ-անձնական ողբերգություն. այդպիսի ճակատագրի են արժանացել և նրա ստեղծագործության պտուղները, դրանց թվում և նրա մանկավարժական երկերը. նրա կենդանության օրոք տպագրված «Նախաշավիղ»-ը ոչնչացվել է. դրա մի ուրիշ վարիանտը տպագրվել է Աբովյանի մահվանից 14 տարի հետո 1862 թվին և այն էլ անդամալուծված վիճակում.— նրանից հանվել են նրա ամենաարժեքավոր մասերը,— «Նախադրեցությունը», «Դիտողություններ նոր հայերեն լեզվի տարրական գրքի նպատակների մասին», ինչպես և մի ոտանավոր, որը հանդիսանում է յուրահատուկ դիդակտիկական դեկլարացիա: Դրանք լույս աշխարհ տեսան և դարձան ընդհանուրի սեփականությունը միայն Աբովյանի մահից մոտ մի դար հետո: Նույն վիճակին է արժանացել և Աբովյանի գլխավոր մանկավարժական երկը՝ «Պատմություն Տիգրանի», որը առաջին անգամ հրապարակվել է 1940 թ. հեղինակի «Ընտիր երկերի» Բ. հատորում: Դեռ մինչև այսօր էլ հրատարակման են սպասում Աբովյանի արխիվում պահվող բազմաթիվ կարևոր և արժեքավոր մանկավարժական բնույթի երկեր և փաստաթղթեր:

Աբովյանի մանկավարժական գաղափարները մանկավարժական հասարակայնության սեփականություն դարձան միմիայն Աբովյանի մահվանից մոտ մի դար հետո, Սովետական իշխանության օրոք: Աբովյանի գրական-մանկավարժական ժառանգության այդպիսի տարաբախտ ճակատագրի հետևանքով այդ ժառանգության փաստական նշանակությունը և նրա ազդեցության իրական էֆեկտն անդրկովկասյան և հայկական մանկավարժական պրակտիկայի և թեորիայի վրա շատ ավելի պակաս և թույլ է եղել, քան թե դա կարող էր լինել, եթե այդ ժառանգությունը լույս աշխարհ տեսներ և դառնար ընդհանուրի սեփականությունը դեռ Աբովյանի

կենդանության օրոք, կամ գոնե, անմիջապես նրա մահվանից հետո: Այդ դեպքում Աբովյանի մանկավարժական գաղափարները կդառնային իսկական ուղեցույց Անդրկովկասի և Հայաստանի մանկավարժական մտքի և դպրոցի համար. այդ դեպքում Աբովյանի մանկավարժական ժառանգությունը շատ ավելի ուժեղ ազդեցություն գործած կլիներ Անդրկովկասի և Հայաստանի դպրոցի և մանկավարժական մտքի հետագա զարգացման վրա:

Այս բոլորը, սակայն, ամենևին էլ չէ նշանակում, թե Աբովյանի մանկավարժական գաղափարները մինչև վերջին տարիները ամբողջովին մնացել են գրվանի տակ և նրանք ոչ մի չափով ազդեցություն չեն ունեցել և չեն բեղմնավորել հայ առաջավոր մանկավարժական միտքը. հենց միայն իր ժողովրդին, նրա լուսավորության գործը անսահմանորեն սիրող էնտուզիաստ-մանկավարժ Աբովյանի կերպարը չէր կարող չոգևորել և օրինակ չհանդիսանալ շատ առաջավոր մանկավարժների համար. բավական է հիշել, թե ինչպիսի անջնջելի տպավորություն էր գործել մանկավարժ Աբովյանը ապագա գրող և մանկավարժ՝ մանուկ Պ. Պռոշյանի վրա: Մյուս կողմից Աբովյանի «Նախաշավիղը» (հրատարակված 1862 թվին) թեպետ և չէր կարող տալ լրիվ պատկերացում նրա մանկավարժական գաղափարների ամբողջ հարստության մասին, բայց միաժամանակ նա չէր հանդիսանում սոսկ սովորական այբբենարան-դասագիրք. «Նախաշավիղ»-ը (ճիշտ է՝ ոչ լրիվ) Աբովյանի մանկավարժական-դիդակտիկական գաղափարների մարմնացումն է.— դասավանդումը աշխարհաբար լեզվով, գրագիտության ուսուցման հնչական մեթոդը, ուսուցման աշխարհիկ, ռեալական, զգալի չափով բնագիտական ուղղությունը, առաջավոր դիդակտիկական սկզբունքների կիրառումը, լեզվի քննական-առարկայական ուսուցումը և այլն:

Եթե այս բոլորի հետ հաշվի առնենք և այն հանգամանքը, որ Աբովյանի մանկավարժական գաղափարների հաղորդիչներ էին հանդիսանում նաև Աբովյանի մի շարք «ոչ մանկավարժական» երկեր («Խաղարկություն մանկաց», նրա մի քանի պատմվածքները և այլն), այն, որ առհասարակ Աբովյանի ամբողջ գրական ստեղծագործությունը նույնպես տոգորված էր դաստիարակչական-ուսուցողական ոգով,— ապա հասկանալի կդառնա, որ անգամ առանց Աբովյանի գլխավոր՝ բուն մանկավարժական երկերի հրատարակման էլ նրա մանկավարժական գաղափարները կարող էին զգալի չափով դառնալ հայ հասարակայնության ու ինտելիգենցիայի, ա-

մինից առաջ հայ առաջավոր ուսուցչության սեփականություն: Հայ նոր մանկավարժության հիմնադիր Աբովյանն իրապես նախառևոլյուցիոն շրջանի առաջավոր հայ ուսուցչության, առաջավոր մանկավարժների գաղափարական հայրն է, մանկավարժներ, որոնց առաջին շարքերում կանգնած են Աբովյանի դեմոկրատական, հումանիստական տրադիցիաների շարունակողները մանկավարժության մեջ,— Ղ. Աղայանը և Պ. Պռոշյանը:

* * *

Աբովյանի մանկավարժական ժառանգությունը սովետական մանկավարժության համար ներկայացնում է ոչ միայն պատմական հետաքրքրություն. դա ոչ միայն նշանակալից երևույթ է անցյալ դարի 30—40-ական թ. թ. Անդրկովկասի և Հայաստանի պայմաններում: Աբովյանի մանկավարժական գաղափարներից ու սկզբունքներից շատերը այսօր էլ դեռ չեն կորցրել իրենց անմիջական արժեքն ու թարմությունը սովետական դպրոցի և մանկավարժության համար:

Սովետական մանկավարժությունը քննադատորեն և ստեղծագործորեն Աբովյանից վերցնելու և օգտագործելու շատ բան ունի, սակայն առանց իդեալականացնելու նրան ու մոդեռնացնելու նրա մանկավարժական հայացքները, առանց վերագրելու նրան այնպիսի գաղափարներ ու ձգտումներ, որոնք նրա մոտ պարզապես չէին էլ կարող լինել նրա հայացքների պատմականորեն պայմանավորված սահմանափակվածության հետևանքով:

II

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. ԱԲՈՎ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ

Խաչատուր Աբովյանի ծննդյան տարեթվի վերաբերյալ հակասական կարծիքներ կան:

Տեր Կարապետյանն ու Տեր Սարգսենցը Աբովյանի ծննդյան թվականը համարել են 1804—1805 թ.:

Ըստ Երիցյանի Աբովյանը ծնված պետք է լինի 1811 թվին:

Ըստ Ա-դոի Աբովյանի ծննդյան թվականն է 1809-ը:

Սովետական շրջանում ևս Խաչատուր Աբովյանի կենսագրության վերաբերյալ աշխատություններում տարբեր կերպ է նշվել Աբովյանի ծննդյան տարեթիվը:

Այսպես, օրինակ՝ ընկ. Երվանդ Շահազիզը Աբովյանի կենսագրականում հայտարարում է, որ Աբովյանը ծնված պետք է լինի 1804—1805 թվականին:

Ընկ. Ռ. Զարյանը 1939 թվին հրատարակած «Աբովյանի կյանքը» գրքում (11 էջ) հայտարարում է. «ինքը Աբովյանն էլ չի իմացել իր ծննդյան ճիշտ թիվը: Հիշողությամբ նա թողել է մի քանի տարբեր թվականներ: Հավանական թիվը պետք է համարել 1809-ը»:

1916 թվին Ա-դոի կողմից արված և ընկ. Ռուբեն Զարյանի և այլ ընկերների պաշտպանած այս պնդումը ճիշտ չի, որովհետև Աբովյանի կենսագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միանգամայն հավաստի են Աբովյանի ինքնակենսագրական նյութերում նշված բոլոր տվյալները և նրա ծննդյան միակ «հավանական» և ճիշտ թվականը 1804 կամ 1805 թվականն է: Այս երկու թվականից ամենից ավելի ճշմարտացին պետք է համարել 1805-ը:

Եվ ահա թե ինչու՝

1. Իր համառոտ ինքնակենսագրության մեջ Խաչատուր Աբովյանը 1835 թվին որոշակի ասում է.

«1804—1805 թվին ծնվեցա ես Քանաքեռ գյուղում, 5 վերստ հեռու Երևանից (կարճ ճանապարհով): Իմ Հայրենական տունը

պատկանում էր մի նշանավոր և ամենից հարգվածի այս երկրում. 10 տարեկան հասակում ուղարկեցին ինձ Էջմիածին վանքը՝ ուսանելու, կատարելագործվելու համար, 1821 թվին գնացի Տփխիս, իմ հայրենիքը նվաճելուց հետո ես կրկին վերադարձա Էջմիածին, որպեսզի այնտեղ թարգմանի պաշտոն վարեմ պատրիարքի մոտ, 1829 թվին բարձրացա Պարրոտի հետ Մասիս սարը, 30 թվին գնացի Դորպատ— մնացի մինչև 35 թիվը:

Դիակոն Հայոց եկեղեցու Խաչատուր Աբովյան»:[1]

2. 1835 թվին գրված այս ինքնակենսագրությունից բացի Աբովյանը իր վերոհիշյալ ինքնակենսագրական տվյալների մի մասը հաստատում և ավելի մանրամասն կերպով պարզում է 1838 թվի դեկտեմբերի 15-ին Սինոդին գրած իր երկրորդ ինքնակենսագրականում, ասելով՝

«Ի տասնամենայ հասակի մանկութեան իմոյ մտեալ ի կրթութիւն և ընդ խնամակալութեամբ լուսածին գահու մայր Աթոռոյ Էջմիածնի, մնացի անդ զամս բազում ծառայեալ զքանի մի ամս իբրև դպիր, յետ ժամանակի մտեալ ի ծառայութիւն հանգուցեալ Անտոն արքեպիսկոպոսի, եկի նովին կոչմամբ ի Տփխիս և ուսեալ աստ զամս երկուս, վերադարձա կրկին ի սուրբ աթոռ 1826 ամին, մնացի յընթացս երից ամաց առժամանակ մի, ընդ ծառայութեամբ նորին Անտոն Սրբոյ, յետ վախճանի նորա Եփրեմ արքեպիսկոպոսի, յորմէ և ստացա զչորս աստիճան կիսասարկաւագութեան: Յետ մահուան նորա կարգեցա թարգման և գրագիր նորին վեհափառութեան հանգուցեալ Եփրեմ կաթողիկոսի, յոր ժամանակս ի 1829 ամի եհաս ինձ ողորմութիւն նորին կայսերական մեծութեան, որ պատճառ թողեալ զպաշտօն հոգևորականութեան, գնացի ի համալսարան Դերպտի...»[2] և այլն:

3. Ռուսաց կայսր Նիկոլայ I-ին գրած իր խնդրագրի սևագրության մեջ ևս Աբովյանն ասում է.

«Ի հասակի տասն ամաց մտի ի պաշտօն հոգևորականութեան ի սուրբ յԱթոռն Էջմիածին. յընթացս հինգ ամաց ուսեալ, ըստ կարեաց, զլեզու իմ Հայրենի, զհետ եղէ ուսանիլ զծաղկեալ լեզու և ռուսաց և այլոց ազգաց՝ եկեալ ի Թիֆլիս՝ ուսայ, որքան ինձ ժամանակն ներէր ինձ զայն և սակաւ ևս պարսկերէն...»:[3]

---

[1] Ներսես Տեր Կարապետյան «Խաչ. Աբովյան» 1897 թ., էջ 5:

[2] Դիվան Խաչատուր Աբովյանի, Ե. Շահազիզ, Արմֆանի հրատարակություն, 1940 թ. էջ 205։

[3] Նույն տեղում, էջ 200։

Ուրեմն՝ երրորդ անգամ Աբովյանը պնդում է, որ Էջմիածին է եկել տաս տարեկան հասակում, այնտեղ սովորել է «քաղում» կամ «չընթացս հինգ ամաց»— այսինքն մինչև 1821 թվականը, երբ նա մեկնել է Թիֆլիս։ Պարզ թվաբանական հաշվով եթե 1821 թվից հանենք նրա տաս տարեկան հասակը, ապա՝ հինգ տարվա ուսումն Էջմիածնում, կստանանք նրա ծննդյան թվականը՝ 1805-ը։

Եթե այս անհերքելի տվյալները ձեռքի տակ ունենալով՝ ընդունենք Ա-դոի առաջադրած և ընկ. Ռուբեն Զարյանի վերակենդանացրած այն կարծիքը, թե Աբովյանը 1809 թվին է ծնվել, մենք կկանգնենք անհեթեթ եզրակացությունների առաջ։ Որովհետև, եթե Աբովյանն իննը թվին է ծնվել և 10 տարեկան հասակում է եկել Էջմիածին (իսկ 10 տարեկան հասակում գալն անհերքելի է), ապա նա Էջմիածին պետք է գար 1819 թվին։ Այնուհետև, եթե նա «քաղում տարիներ» մնար Էջմիածնում, 3 տարի դպիր լինելուց հետո Էջմիածնում ծառայության մտներ Անտոն արքեպիսկոպոսի մոտ՝ և ապա մեկներ Թիֆլիս, այդ մեկնումը տեղի պետք է ունենար 1823—1824 թվականներին, մինչդեռ ինչպես մենք գիտենք, ոչ միայն ինքը՝ Աբովյանն է վկայում, որ 21 թվին նա գնացել է Թիֆլիս, այլ և 21 թվից այլևս Էջմիածնում չի եղել Անտոն արքեպիսկոպոսը, որի մոտ, իբր թե 1809 թվին ծնված Աբովյանը՝ ծառայության պետք է մտներ 1823—1824 թվականներին։ Հայտնի է, որ Անտոնը դեռ 1821 թվին Եփրեմ կաթողիկոսի հետ Վաղարշապատից փախչում է Վրաստան՝ ճանապարհն անցնելով Նախիջևանի, Շուշու վրայով, որտեղ և Եփրեմը 1822 թվին կաթողիկոսությունից հրաժարվելով, այլևս չի գնում Թիֆլիս, այլ գնում է Հաղպատ և Անտոն արքեպիսկոպոսի հետ միասին բնակություն հաստատում Հաղպատում։

Հայտնի է նաև այն, որ 1824 թվին Աբովյանին մենք տեսնում ենք ոչ թե Էջմիածնում, այլ Սանահինում, ուր նա ուսուցչի պաշտոն է վարում։ Ա-դոն և 1809 թվի այլ կողմնակիցներն իրենց հարց չեն տալիս նաև այն մասին, թե ինչպե՞ս կարող էր 9-ը թվին ծնված Աբովյանը 1824 թվին— այսինքն 15 տարեկան հասակում Սանահինում ուսուցիչ լինել։[1]

Մի կողմ թողնելով նաև այս երկրորդ հակասությունների շարանը, որոնց մեջ ընկնում են 1809 թվի պաշտպանները, մենք ավելի հավատ ենք ընծայում Աբովյանի սեփական վկայություններ-

1 Դիվան Խ. Աբովյանի էջ 197։

440—14

րին, որոնց համաձայն նա ծնված պետք է լինի 1805 թվականներին:

Որովհետև.

Ծնված լինելով 1805 թվին, նա Էջմիածին է եկել 10-ամյա հասակում, այսինքն 1815 թվին: Բազում ամս, շատ տարիներ— այսինքն՝ ամբողջ հինգ տարի, մնալով Էջմիածնում, որից վերջին երեք տարում դպրություն է արել, 1819-ին ծառայության է մտել Անտոնի մոտ և 1821 թվին գնացել է Թիֆլիս:

Այս ամենը հաստատվում է փաստական տվյալներով:

1. Անտոնն իրոք որ այդ ժամանակաշրջանում գտնվել է Էջմիածնում:

2. Աբովյանն իրոք, որ հիշատակվում է Էջմիածնի 1819 թվի «դպրաց ցուցակում», որպես Խաչատուր դպիր քանաքեռցի և եպիսկոպոսական օծման ժամանակ վկա է հագնում: Իսկ ինչպես հայտնի է, տաս տարեկան հասակում դպիր չէին ձեռնադրում և վկա չէին հագնում, հետևապես, եթե Աբովյանը ծնված լիներ 1809 թվին և հենց նոր միայն եկած լիներ Էջմիածին, չէր կարող ոչ դպրի պաշտոն ունենալ, ոչ էլ վկա հագնել, իսկ 1805 թվին ծնված 14 տարեկան պատանու նկատմամբ դա միանգամայն բնական է:

3. Աբովյանն իրոք 1821 թվին է Թիֆլիս գնացել, որովհետև՝ ինչպես հայտնի է, Եփրեմ կաթողիկոսն իր շքախմբով և կաթողիկոսական դիվանի անդամ Անտոն եպիսկոպոսի հետ միասին հենց 1821 թվին է, որ փող հավաքելու պատրվակով շրջագայելու ելնելով՝ մտադիր էր փախչել Թիֆլիս ու չվերադառնալ Էջմիածին, ինչպես և արավ: Միանգամայն բնական է, որ Անտոն արքեպիսկոպոսը իր հոգեվորդի Աբովյանին ևս պետք է խորհուրդ տար, գրեր ճանապարհից, որ նա էլ մեկնի Թիֆլիս՝ Անտոն արքեպիսկոպոսի մոտ լինելու համար, քանի որ իրենք՝ շրջագայության ելնելով, պետք է գնային Թիֆլիս:

Հենց այդ մասին էլ գրում է Աբովյանն իր վկայության մեջ՝ ասելով. «Եկի նովին (այսինքն Անտոն արքեպիսկոպոսի— Գ. Ա.) կոչմամբ ի Տփխիս և ուսեալ աստ զամս երկուս...»:

Այսպիսով՝ 1821 թվականին մեկնելով Թիֆլիս, Աբովյանն այնտեղ սպասում է Եփրեմի և Անտոնի տեղ հասնելուն մինչև 1822—1823 թվականները, և թերևս հենց այս իսկ ժամանակ սովորում է Պողոս վարդապետի դպրոցում՝ ինչպես այդ վկայում է Ս. Նազարյանը: Ապա Աբովյանը՝ տեսնելով, որ իր խնամակալը հաստատվել է Հաղպատում և Սանահնում, ինքն էլ վերադառնում է

նրա մոտ, Սանահին՝ և մի տարի (1823—1824 թվին) այսինքն 18—19 տարեկան հասակում զբաղվում է ուսուցչությամբ:

Իսկ 1824 թվի վերջին, երբ բացվում է Ներսիսյան դպրոցը, Աբովյանը կրկին գնում է Թիֆլիս, սովորում է Ներսիսյան դպրոցում, որտեղ մենք նրան տեսնում ենք 1825—1826 թվականների ընթացքում:

Այդ փաստն ապացուցվում է նաև նրանով, որ մեր Մատենադարանում գտնվող փաստաթղթերը (Ներսիսյան դպրոցի աշակերտների ցուցակը) ցույց են տալիս, որ 1826 թվին Խաչատուր Աբովյանը՝ որպես Ներսիսյան դպրոցի աշակերտ՝ պարգևատրվում է Մատթեոսի քարոզների ռուսերեն թարգմանությամբ:

Նույն թվին նա վերադառնում է Սանահին, որտեղ թարգմանություն է կատարում Կարամզինի «Ճանապարհորդություն»-ից:

Բոլոր փաստերը ցույց են տալիս, որ 1821—1826 թ. թ. ժամանակաշրջանում իր կյանքն Աբովյանը հիմնականում անց է կացրել ծննդավայրից հեռու, և ոչ Էջմիածնում, այլ Հաղպատում, Սանահնում և Թիֆլիսում, ինչպես նա ինքն այդ մասին վկայում է վերը կատարած մեր մեջբերումներում, իսկ Էջմիածին նա վերադառնում է միայն 1826 թվին, ինչպես վկայում է ինքն անձամբ և այդ հաստատում են այլ տվյալներ:

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ Աբովյանի մեզ թողած երեք ինքնակենսագրական տվյալներն էլ համընկնում են իրար, նրանք չեն հակասում պատմական իրական տվյալներին ու տրամաբանական դատողության, ուստի և ոչ մի հիմք չեն տալիս նրանց նկատմամբ կասկածելու: Իսկ եթե մենք Աբովյանի՝ իր իսկ տված ճիշտ ծննդյան թվականը՝ 1804—1805 թիվը, ցանկանանք փոխարինել 1809-ով, կանգնում ենք մի շարք հակասությունների առաջ:

Այդ անմիջական և ամենաստույգ աղբյուրներից բացի՝ հօգուտ 1805 թվականին է խոսում նաև չորրորդ կարևորագույն փաստաթուղթը, որը նույնպես հերքում է Աբովյանի 1809 թվին ծնված լինելու ենթադրությունը: Դա Խաչատուր Աբովյանի կնոջ՝ Էմիլիա Լոոզեի վկայությունն է: Էմիլիա Լոոզեն, անկասկած, հավաստի գիտեր իր ամուսնու ծննդյան թվականը և թոշակ ստանալու համար գրած իր խնդրագրի հետ Աբովյանի ցուցակ ծառայությանը ներկայացնելիս, նշում է, որ Աբովյանը անհետացել է քառասուն

և երեք տարեկան հասակում։[1] Իսկ քանի որ Խ. Աբովյանի անհետացման թվականը մեզ հայտնի է, ուստի 1848-ից հանելով 43-ը, կստանանք 1805 թվականը։

Աբովյանի երեք ինքնակենսագրական բնույթի թղթերում մատնանշված 1804—1805 թվականը համընկնում է նրա կնոջ մատնանշած թվականին և մեզ լիակատար հիմք է տալիս Աբովյանի ծննդյան թվականն ընդունել 1805-ը։

Բացի վերոհիշյալ փաստերից՝ Աբովյանի 1809 թվին ծնված լինելու դեմ են խոսում հետևյալ փաստերը.

ա) Աբովյանը Ներսիսյան դպրոցում եղել է մեծահասակ աշակերտների թվում։

բ) Համալսարանական շրջանում ևս Աբովյանը խոսում է այն մասին, թե փոքրահասակ տղաները՝ 13—14 տարեկանները, իրենից շատ բան գիտեն և համալսարան են մտնելու, իսկ ինքը՝ նրանցից մեծ լինելով՝ շատ ավելի պակաս գիտե։

գ) Ս. Քամալյանի նկարագրած Դորպատցի ծերունի պատմածի համաձայն հաշվարկումներ կատարելով՝ կստանանք, որ Աբովյանը համալսարան է գնացել 24—25 տարեկան հասակում և ոչ թե քսան։

Սակայն ինչի՞ վրա են հիմնվում Աբովյանի ծննդյան 1809 թվականի կողմնակիցները։

Փաստական առաջին առարկությունն անողը՝ Ա-դոն, հետագայում նաև ընկ. Ռ. Զարյանը և ուրիշները, հիմնվում են ռուսական գիմնազիայի արխիվում հայտնաբերված ցուցակների վրա, որոնք իբր ասում են, թե Աբովյանը 1809 թվին է ծնվել։

Այդ ցուցակները, որ գտնվում են մեր՝ Հայկական ՍՍՌ Պետ. Արխիվում և որ մենք ստուգեցինք Պետ. Արխիվի դիրեկտոր ընկ. Կ. Ստեփանյանի և Պետ. Արխիվի աշխատակիցների հետ՝ հետևյալ պատկերն են ներկայացնում։

Նրանք կազմված են գրագրի միջոցով և ոչ Խաչատուր Աբովյանի ձեռքով. վերաբերվում են դպրոցի բոլոր ուսուցիչներին։

Աբովյանի մասին տեղեկություններ կան 1844, 1845, 1846 և 1847 թվականների ուսուցչական ցուցակներում։

1844 թվի ցուցակում (գործ 779, էջ 7—8) Աբովյանի տարիքի հանդեպ նշանակված է միմիայն «3», որից հետո այլ թանաքով ավելացված է 5 և ապա՝ դարձված է 35։

1845 թվի ցուցակում (գործ 782, էջ 15) Աբովյանի տարիքի

[1] «Դիվան Խ. Աբովյանի», էջ 193։

դիմաց նշանակված է 36. ցուցակում կան ջնջումներ Աբովյանի զույք ունենալու վերաբերյալ։

1846 թվի ցուցակում (գործ 786, էջ 44—45) Աբովյանի տարիքը նշանակված է, ըստ բնագրի հին թանաքի, հավանորեն, 36, ապա նույն թանաքով վերը դարձված է ութ և վրայից այլ թանաքով ուղղված է 7։

1847 թվի ցուցակում (գործ 794, էջ 56) Աբովյանի տարիքը նշանակված է բնագրի թանաքով, ըստ երևույթին՝ 31, որից հետո 1-ը ուղղված է, ըստ երևույթին 4 կամ 7, ապա 8, որից հետո, կրկին այլ թանաքով՝ 8։

1847 թվի մի այլ ցուցակում՝ առանց ուղղելու— Աբովյանի տարիքը նշանակված է 38։

Այս բոլոր փաստաթղթերը, որ իրար նկատմամբ հակասական են, և, ըստ երևույթին հետագայում են ուղղված ու հարմարեցված 1809 թվականին, ուստի, հիմք ծառայել չեն կարող Աբովյանի ծննդյան թիվը 1809 համարելու համար։ Մենք ցավում ենք, որ ոչ Ա.-դոն և ոչ էլ ընկ. Ռ. Զարյանը՝ հենվելով այդ ցուցակների վրա, չեն հիշատակում վերոհիշյալ ուղղումները և թվերի մեջ եղած հակասությունը։ Մենք գտնում ենք, որ այդ ուղղումները կատարված են հետագայում, այն պարզ պատճառով, որ դժվար թե չորս տարիների ընթացքում էլ գրագիրը միևնույն սխալները կատարեր և, ամեն տարի ուղղելուց հետո՝ կրկին սխալվեր։ 1940 թվին հրատարակված Աբովյանի «Դիվան»-ում տպագրվել է նաև վերոհիշյալ ֆորմուլյար ցուցակ ծառայությունների 1843 թվի օրինակը, որտեղ նույնպես Աբովյանի տարիքը ցույց է տրված 34։ Անձամբ տեսած չլինելով այդ ցուցակի բնագիրը, մենք դժվարանում ենք պնդել, թե այնտեղ չի՞ կատարված արդյոք նման ուղղում կամ ցուցակն արտագրողի կողմից չի՞ կարդացվել արդյոք 4-ի տեղ 7, որովհետև մեզ ծանոթ ցուցակների ձեռագրերում երբեմն նրանք նման են, և կարող են շփոթ առաջացնել։

Անկախ այդ հանգամանքից՝ այս վերջին ցուցակը ես չի կարելի համարել հավաստի աղբյուր, որովհետև՝ այդ ցուցակն իր մեջ պարունակում է Աբովյանի վերաբերյալ այլ տվյալներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը։ Օրինակ՝ Աբովյանի կուսակրոնությունից ազատվելը, որ Սինոդը որոշել է 1839 թվի հունվարի 23-ին, այդ փաստաթղթերում (ըստ «Դիվան»-ում տպագրված պատճենի) ցույց է տրվում 1839 թվի փետրվարի 28-ը։

Այնպես որ՝ 1809 թվին ծնված լինելու վերաբերյալ՝ իբր թե հիմ-

նավորող այս գրագրային փաստաթղթերը միանգամայն անվստահելի են։

Երկրորդ փաստաթուղթը, որ հիմք են ընդունում 1809 թվականի կողմնակիցները, դա Խ. Աբովյանի՝ Նիկոլայ 1-ին կայսեր ուղղված նամակի սևագիրն է, որտեղ Աբովյանը օժանդակություն է խնդրում՝ Դորպատի համալսարան ընդունվելու համար. 1829 թվին գրված այդ նամակում Աբովյանն իրեն համարում է քսանամյա։

Սևագրության մեջ հապավումով գրված այս «քսանամյան» չի կարող հիմք ծառայել՝ պնդելու համար, թե Աբովյանը 1829 թվին եղել է քսան տարեկան։

Նիկոլայ 1-ինին գրած սևագիր այդ նամակի վրա Աբովյանին 1829 թվին քսանամյա համարողներն ուշ չեն դարձրել հենց թեկուզ այն տվյալներին, որ թվում է այդ նամակում ինքը Աբովյանը։ Նա ասում է. տաս տարեկան հասակում եկա Էջմիածին և ընդունվեցի հոգևորական պաշտոնի, այնուհետև հինգ տարի սովորեցի Էջմիածնում, այնքան ժամանակ էլ, ինչքան որ հնարավորություն թույլ տվեց (այսինքն 1821-ից մինչև 1826 թիվը ներառյալ— Գ. Ա.) սովորեցի Թիֆլիսում, որից հետո մտադրվեցի դիմել «Յաստուածախնամ քաղաքդ»՝ այսինքն Պետերբուրգ, ուսումս շարունակելու, բայց չհաջողվեց և Անտոն եպիսկոպոսի մահվանից հետո արդեն «ահա այլևս այս հինգ ամ էր՝ յորս անկեալ ի դուռն վտարանդութեան, ոչ զոք գտի ինձ օգնական և նպաստավոր այժմ...»։[1]

Այս տվյալները ևս ասում են, որ Աբովյանը Էջմիածին գալիս եղել է 10 տարեկան, 5 տարի սովորել է Էջմիածնում, 5 տարի սովորել է Թիֆլիսում, և ավարտելուց հետո ևս 5 տարի ձգտել է բարձրագույն կրթություն ստանալ ու չի կարողացել։ Գումարելով այս թվերը մենք տեսնում ենք, որ 1829 թվին Աբովյանը եղել է 24—25 տարեկան և ոչ թե 20։

Խնդիրն այն է, որ՝ նախ վերոհիշյալ գրության միմիայն սևագիրն է մնացել։ Հետևապես չենք կարող ասել, Աբովյանն այդ նամակն ուղարկե՞լ է ցարին թե չէ։ Այս հարցը հետաքրքիր է, նաև նրանով, որ իր նամակի այդ սևագրության մեջ՝ հենց «քսանամյա» բառից հետո, ջնջում է կատարված։ Եթե նամակն ուղարկված է ցարին, ապա սևագրի հապավված քսանամյան կլինի դարձված 23։ Նա տարիքը կեղծելու կարիք էլ չէր ունենա, որովհետև նույն նամակում նշված տվյալները պարզում են նրա իսկական տարիքը։

[1] «Դիվան», էջ 200։

Եվ վերջապես այդ նույն բանն են ասում և Ս. Նազարյանի հիշատակումները։ Ս. Նազարյանը, որ ծնված էր 1812 թվին, գրում է, որ Աբովյանն իրենից շատ ավելի տարիքով է եղել։ Այդ տարիների տարբերությունը պարզ դարձնելու համար կարելի է հիշել միայն այն, որ երեսուն թվին Աբովյանը գալիս է Դորպատ և ընդունվում համալսարանական դասընթացը, մինչդեռ չորս տարի հետո՝ 1834 թվին Նազարյանը մեկնում է Դորպատ, սկզբում դեռևս գիմնազիոնի կուրս անցնելու համար։ Այս հանգամանքը ևս ցույց է տալիս, որ Աբովյանի ու Նազարյանի ծննդյան թվականների միջև պետք է լիներ առնվազն վեց-յոթ տարվա տարբերություն։

Մենք ավելորդ չենք համարում հիշել Աբովյանի չորրորդ ինքնակենսագրական վկայությունը՝ Իվան Վասիլևիչ Ռոսկովշենկոյին գրած նամակը, ուր Աբովյանը իրեն 23 տարեկան է համարել այն ժամանակ, երբ վճռել էր թողնել հոգևորական ծառայության ասպարեզը և շարունակել իր կրթությունը Դորպատում։ Այդ մասին Խաչատուր Աբովյանը գրում է.

«Իմ կյանքիս 23 տարեկան հասակում, այդ մարդկության կյանքի կարևոր շրջանում, երբ մտավոր ընդունակությունները դադարում են իշխել վառ երևակայության և թեթև հիշողության երջանիկ ուժերի վրա, որի մեջ մարդս արդեն սկսում է օգտագործել պատանեկության ժամանակվա աշխատանքով ձեռք բերած գանձը, ես նոր միայն ձեռնարկեցի ձեռք բերելու այն, թողնելով հոգևոր կարգս, հայրենիքս, ծառայությունս, ոչ անկարևոր, որ խոստանում էր ինձ ապագայում փայլուն ասպարեզ իմ հոգևոր կոչման մեջ»։[1]

Ուրեմն, 1829 թվին Աբովյանն իրեն համարում է 23 տարեկան և ոչ քսան, ինչպես ենթադրել են ոմանք նրա կիսաջնջված սևագիր նամակից, որի մասին խոսեցինք վերը։

Դորպատ գնալու միտքն Աբովյանը հղացել է 1829 թվի սեպտեմբերին, երբ իր ասելով՝ նա արդեն քսաներեք տարեկան էր։

Այս վկայությունն էլ հաստատում է, որ Աբովյանի ծննդյան թվականը պետք է համարել 1805 թվականի վերջին ամիսները, որովհետև ըստ այս վկայության 1829 թվի կեսերին արդեն լրացած պետք է համարել Աբովյանի քսան երեք տարին և դեռ լրացած չէր լինի նրա 24 տարին։

Փաստը մնում է փաստ։ 1819 թվին Էջմիածնում դպիր եղած քսանաքեոցի Խաչատուրը 1819 թվին չէր կարող լինել 10 տարեկան. իսկ որ Մատենադարանում պահվող «դպրաց ցուցակում» եղած

[1] «Դիվան», էջ 214։

Խաչատուր Քանաքեռցին միևնույն Խաչատուր Աբովյանն է, այս մասին վկայում են Խ. Աբովյանի հետագայի բազմաթիվ նամակները, որոնց մեջ նա ինքն իրեն շարունակում է անվանել Խաչատուր դպիր Քանաքեռցի։

Վերջերս մեր կողմից Մատենադարանում հայտնաբերված դպրաց ցուցակը մի ավելորդ անգամ ապացուցում է, որ Աբովյանի ծննդյան մասին 1809 թվի ենթադրությունն անտեղի է. ուստի մեր առաջարկն է՝ ընդունել Խաչատուր Աբովյանի ծննդյան ժամանակը 1805 թվի վերջերը։

Դրա համար հիմք է տալիս ինքը Խ. Աբովյանը, որ հաստատ իմացել է իր ծննդյան թվականը և միշտ էլ միևնույն տեղեկությունն է հաղորդել այդ մասին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ի. ԵՆԻԿՈԼՈՊՈՎ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Աբովյանի լուսավորական գործունեության նշանակալից մասը ծավալվեց Թբիլիսիում, ուստի անհետաքրքրական չի լինի հետևել նրա կյանքի այն շրջանին, որ նա անց է կացրել այդ քաղաքում։

Աբովյանի Թբիլիսիում լինելու առաջին տարիների մասին քիչ բան է հայտնի։ Ինչպես հավաստիացնում են Աբովյանի բոլոր կենսագիրները, այստեղ, Թբիլիսիում,— նրա առաջին դպրոցը Պողոս Ղարադաղցու ուսումնարանն էր, որտեղ նա ընդունվեց 1820 թվին։ Այս ուսումնարանում Աբովյանը մնաց երկու տարի։

Թբիլիսիում շուտով բացվում է արևելյան լեզուների դպրոց, որի դիրեկտորի պաշտոնը վճռված էր հանձնել պրոֆեսոր-արևելագետ Շահան Ջրպետյանին, որը ցանկություն էր հայտնել Փարիզից Թբիլիսի տեղափոխվել։

Ջրպետյանը, կամ ինչպես նրան Ֆրանսիայում կոչում էին՝ Սիրբյեն, պատմագիտական բազմաթիվ աշխատությունների հեղինակ էր, այն ժամանակ համարվում էր արևելյան լեզուների լավագույն գիտակը, և Ecole des langues orientalis vivantes*-ում (Արևելյան կենդանի լեզուների դպրոց) գրավում էր պրոֆեսորական ամբիոն։*

Բայց Սիրբյեի, իբրև օտարահպատակի, այդ պաշտոնում նշանակվելուն վճռականապես դիմադրեց Կովկասի, այն ժամանակվա գլխավոր կառավարիչ Երմոլովը, գտնելով, որ՝ «անպայման ավելի օգտակար կլինի վստահել բնիկներին»։ Այդ պաշտոնին ներկայացվեց Գրիբոեդովը, որ Երմոլովի մոտ վարում էր օտար երկրների բաժանմունքի քարտուղարի պաշտոնը, և արդեն իրեն ցույց էր տվել որպես պարսկական և արաբական լեզուների գիտակ անձնավորություն, չխոսելով ֆրանսերենի մասին, որ նա գիտեր կատարելապես։

Մինչև այդ պաշտոնում հաստատվելը, Գրիբոեդովը եռանդով սկսեց Կովկասի անցյալի ուսումնասիրությունը:[1] Բայց, ինչպես հայտնի է, Գրիբոեդովն այդ նշանակումը չստացավ և շուտով (1823 թ. մարտին) թողեց Կովկասը:

Արևելյան լեզուների այդ դպրոցում, նրա կազմակերպման օրից, 1823 թ. (հետագայում նա վերածվեց հոգևոր դպրոցի և ի պատիվ Ներսես Աշտարակեցու՝ կոչվեց նրա անունով), Պողոս Ղարադաղցու ուրիշ աշակերտների՝ Թաղիադյանի, Շերմազանյանի և Ստեփանոս Նազարյանի հետ սովորում էր նաև Խ. Աբովյանը:

Գրիբոեդովի հետաքրքրությունը դեպի այդ դպրոցը չդադարեց նաև հետագայում: Այսպես, ըստ այդ դպրոցի սան Շերմազանյանի վկայության, Գրիբոեդովը (այն ժամանակ արդեն հռչակված որպես «Խելքից պատուհասի» հեղինակ) մի քանի անգամ այցելել էր դպրոցը, հետաքրքրվել նրա կյանքով:

Գրիբոեդովի այցելության այդ տարիները (1826) հենց զուգադիպում են Աբովյանի նույն դպրոցում լինելու ժամանակին: Ինչպես Ստ. Նազարյանն է գրում, Աբովյանը դպրոցից դուրս եկավ ջերմ սեր ունենալով դեպի գիտությունը և «իր հայրենիքին օգուտ բերելու ցանկությամբ վառված սրտով»:

Տասը տարի անցած Աբովյանը նորից Թբիլիսիումն է: Դորպատի համալսարանն ավարտելուց հետո գալով Թբիլիսի (1836), Աբովյանն ուսուցչի պաշտոն է փնտրում, բայց ապարդյուն: Քարացած, խավարամոլ հոգևորականությունը նրանից խույս էր տալիս, ինչպես լյութերականության ոգով կրթություն ստացած մի մարդուց: Սարսափելի կարիքի մի ամբողջ տարի անցկացնելուց հետո, վերջապես 1837 թ. փետրվարի 12-ին, նրան հաջողվում է Թբիլիսիի գավառական ուսումնարանում ընդունվել որպես տեսուչ և դասատու:

Թբիլիսիի նախկին առաջին արական գիմնազիայի արխիվում իմ հայտաբերած փաստական տվյալները, որոնք վերաբերում են Աբովյանի՝ Թբիլիսիի գավառական ուսումնարանում պաշտոնավարելու շրջանին, լույս են սփռում նրա կյանքի այդ տարիների վրա: Այդ փաստաթղթերը բնութագրում են նրա մանկավարժական գործունեությունը, և թույլ են տալիս եզրակացնել, թե վարչությունը Աբովյանի նկատմամբ ինչպես էր վերաբերվում:

Փաստաթղթերից մեկում (1840 թ. Անդրկովկասի ուսումնա-

[1] 1823 թ. հունվարին Կյուխելբեկերին գրած նամակը:

բանների վարչության գործ № 121), որ ունի՝ «Չինովնիկներ Վիտովիչի, Կրիժանովսկու և Պոնյատովսկու կողմից Թբիլիսի ուսումնարանների տեսուչ Աբովյանին հասցրած վիրավորանքների մասին» խորագիրը, խոսվում է Աբովյանի իրավազուրկ վիճակի վերաբերյալ։ Հիշյալ չինովնիկները վիրավորանք են հասցնում պարտեզում իր աշակերտների հետ զբոսնող Աբովյանին և երբ վերջինս բողոք է ներկայացնում այն ժամանակվա գեներալ նահանգապետին, սա դպրոցների վարչության միջոցով տալիս է հետևյալ սառն պատասխանը.

«Ձեր բարեծննդությանը խնդրում եմ հայտնել տեսուչ Աբովյանին, որպեսզի նա իրեն և իր աշակերտներին հասցված վիրավորանքի համար բավարարություն խնդրի ուր հարկն է, սահմանված կարգով, հարկ եղած դեպքում բողոքով դիմի դատարան կամ ոստիկանության, Վրաստանի քաղաքացիական նահանգապետին։ Թիֆլիսի զինվորական նահանգապետ, գեներալ լեյտենանտ Բրայկո»։

Առավել ուշագրավ է երկրորդ «գործը»՝ «Թիֆլիսի ուսումնարանի տեսուչ Աբովյանի բաց արած մասնավոր պանսիոնի մասին»։ «Գործն» սկսվում է Անդրկովկասի ուսումնարանների դիրեկտորի պաշտոնակատար Ս. Ձ. Վասիլկովսկուն ուղղած ռապորտով, այսպիսի բովանդակությամբ.

«Պատանի հասակից հոգուս մեջ կրելով իմ ազգակից մանուկներին նվիրվելու բուռն ցանկությունը, պաշտոնի անցնելու ժամանակվանից ես ձգտում էի հավաքել մի քանի պատանիներ, մեծ մասամբ իմ ազգից, և իմ ազատ ժամերը նվիրել նրանց դաստիարակության գործին՝ առանց որևէ հատուցում պահանջելու... Խոնարհաբար խնդրում եմ անհրաժեշտ ձևով ապահովեք ինձ վերոհիշյալ ձեռնարկությունս պահելու համար։ 1840 թ. հունվարի 31»։

Բոլոր ձևականությունները հաղթահարելուց հետո, վերջապես Աբովյանին թույլատրվեց բաց անել պանսիոն (1840 թ. փետրվարի 29-ին)։ Նրա ներկայացրած տեղեկագրից երևում է, որ Աբովյանի արական պանսիոնն ուներ 21 աշակերտ։ Աբովյանն ինքը դասավանդում էր ռուսերեն և գերմաներեն լեզուները և պատմություն, Երիցփոխովը՝ աշխարհագրություն, թվաբանություն և վայելչագրություն, մասնավոր ուսուցիչ Կերատենսը՝ ֆրանսերեն։ «Հատուկ վերակացու չկա մինչև այժմ էլ, քանի որ աշակերտները գտնվում են պանսիոն պահողի հատուկ հսկողության տակ»։

Նույն թվի հուլիսի 18-ին Աբովյանն արդեն գրում է. «Ես ան-

հրաժեշտ տալ փակել այն (պանսիոնը) և աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների, փոխադրել տեղիս գավառական դպրոցը և նրանց հետ պարապել միայն ազատ ժամերին»։

Այսպես կարճատև եղավ նրա պանսիոնի գոյությունը։ Ինչպես երևում է տեղեկագրի կետերից մեկին Աբովյանի տված պատասխանից, նրա պանսիոնը գտնվում էր «Երկրորդ գիմնազիայի տանը իր զբաղեցրած սենյակներից մեկում»։ Իր եռադասյան ուսումնարանն Աբովյանն այստեղ կոչում է գիմնազիա բարձր անունով։ Աբովյանի այս հիշատակումը հնարավորություն է տալիս այժմ եզրակացնելու, թե Թբիլիսիում երկար տարիներ Աբովյանը որտեղ է ապրել։ Նա ապրել է այժմյան Ռուսթավելու պողոտայի ծայրին, № 1 տանը։

Աբովյանի ծանր վիճակը ակնառու երևում է նաև նույն դրասենյակի № 91 «գործից»։ 1842 թ. սկզբին Աբովյանը կրկին անգամ դիմում է պանսիոնը բաց անելու մասին, որտեղ, ինչպես նա հայտնում է՝ «նկարչությունը պետք է դասավանդի Ռոցին, հայոց լեզուն և աշխարհագրությունը՝ Գասպարովը, իսկ ես Ռուսաստանի և ընդհանուր պատմություն, ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներ, իսկ թուրքերենը՝ տեղիս գավառական դպրոցի ուսուցիչ Միրզա-Շաֆին»։

Պանսիոն բաց անելու մասին Աբովյանի հետ միաժամանակ դիմել էր նաև ուսուցիչ Երիցփոխովը. այդ դիմումի վրա կարճ մակագրված է՝ «Աբովյանին մերժել, իսկ Երիցփոխովին թույլատրել»։

Երիցփոխովի պանսիոնում ֆրանսերենի և թվաբանության դասատուն Բուդաղովն էր՝ այն ժամանակ Թբիլիսիի ամենակրթված երիտասարդներից մեկը։

Ահա ինչպիսի ծանր շրջանում է Աբովյանն ստեղծագործել իր «Վերք Հայաստանի» վեպը։

Թիֆլիսում եղած շրջանում Աբովյանը ծանոթանում և մտերմանում է մի շարք մարդկանց հետ, որոնք, ինչպես և ինքը, չնայած համեստ հասարակական դիրք էին գրավում, սակայն պատվավոր տեղ նվաճեցին իրենց ժողովրդի գրականության պատմության մեջ։ Այսպես, Աբովյանի ղեկավարած դպրոցում թուրքերեն էր դասավանդում Միրզա-Ֆաթ-Ալի Ախունդովը, որ այդ ժամանակ արդեն Պուշկինի մահվան առթիվ գրված խոր զգացմունքներով լի բանաստեղծության հեղինակ էր, իսկ հետագայում հռչակվեց որպես ադրբեջանական մեծ փիլիսոփա և դրամատուրգ։

1840 թվի մարտին, «Նույն դպրոցի թուրքերեն լեզվի ուսուցչի պաշտոնից ազատելու մասին» Աբովյանին ուղղված զեկուցագրից հետո, Ախունդովը թողնում է դպրոցը, որից հետո Ախունդովին փոխարինեց նրա նախկին ուսուցիչ Միրզա Շաֆին, որի մասին, ինչպես Աբովյանն է ասում,— «տեղի բարձր հոգևոր վարչությունը և պատվավոր թուրքերը միանգամայն դրական են արտահայտվում»: «Միրզայի այդ հատկությունների մասին ես անձամբ և հաճախ հավաստիացել եմ» (տեսչի պաշտոնակատար Խ. Աբովյանի 1840 թ. մայիսի 3-ի ռապորտից):

Միրզա Շաֆին դեռևս Աբովյանի մոտ պաշտոնավարելու ժամանակ հայտնի էր որպես նշանավոր բանաստեղծ: Շտատով, Բոդենշտեդտի թարգմանությունների միջոցով, ամենուրեք նա մեծ փառքի արժանացավ, շնորհիվ իր «Երգերի»:

Որպես մերձավոր օգնական Աբովյանը հրավիրեց Գաբրիել Երիցփոխովին (1838 թ. փետրվարին), որն ավարտել էր Լազարյան ճեմարանը և Մոսկվայի համալսարանը: Նա դասավանդում էր մաթեմատիկա, գծագրություն և նկարչություն: Երիցփոխովը հռչակվեց իր կազմած բառարանով: Նախապատրաստական դասարանի ուսուցչի պաշտոնով Աբովյանը հրավիրեց (1839 թ. հոկտեմբերին) Լազարյան ճեմարանի նախկին սան Իվան Յ. Ախվերդովին: Նա հայտնի էր իր կազմած ադրբեջաներենի բառարանով և որպես «Հայաստանը 5-րդ դարում» գրքի հեղինակ: Նրա եղբայրը՝ Գեորգը հռչակվեց Սայաթ-Նովայի երգերի հրատարակությամբ:

Ինձ չհաջողվեց պարզել Խ. Աբովյանի փոխհարաբերությունները վրաց հասարակական գործիչների հետ: Կա միայն մի տվյալ, որ Աբովյանի աշակերտների թվում եղել է մի վրացի՝ Իվան Կերեսելիձե ազգանունով:

Կերեսելիձեն հետագայում դարձավ վրացական առաջին ամսագիր «Ցիսկարիի» առաջին խմբագիրներից մեկը, խոշոր հասարակական գործիչ և գրող: Պատանի հասակում նա վրաց խոշոր հասարակական գործիչ և գրող Ալեքսանդր Օրբելիանու սանն էր: Իր սանին Աբովյանի դպրոցը տալով, Օրբելիանին ինքը բարձր էր գնահատում Աբովյանի արժանիքներն ու անձնավորությունը:

Վրացական իրականության նկատմամբ Աբովյանի ցուցաբերած հետաքրքրության մասին է վկայում նրա «Մթածմինդա» բանաստեղծությունը, որի մեջ Աբովյանն իր տպավորություններն է արտահայտում այդ հռչակավոր լեռան և նրա վրա եղած վանքում ամեն տարի, ժողովրդի հոծ բազմությամբ, տեղի ունեցող տոնա-

կատարության մասին։ Այսպիսի տոնակատարությունների ժամանակ, ավելի քան որևէ այլ տեղ, կարելի էր լսել ժողովրդի կենդանի բարբառը, զրույցները, հեքիաթները, աշուղների երգերը, որոնք ամբողջությամբ ժողովրդից էին վերցրած։

1843 թիվն Աբովյանի համար նշանակալից եղավ։ Այդ թվին նա երկար ճանապարհորդություն կատարեց Հայաստանում, մի անգամ ևս, արդեն անցած ճանապարհով, բարձրացավ Արարատի գագաթը։ Այդ նույն թվին նրա համար ստեղծվեց ծանր վիճակ, որ ավարտվեց նրա Թբիլիսիից հեռանալով։

Կովկասի գլխավոր կառավարիչները վաղուց ի վեր սահմանել էին մի կարգ, որի համաձայն, երբ նշանավոր օտարերկրացիներ էին գալիս, նրանց ուղեկցելու համար նշանակվում էին ամենակրթված չինովնիկները։ Հայտնի է, որ Գրիբոեդովը մի քանի անգամ այդպիսի դեր է կատարել, 1822 թ. ամառը ուղեկցելով անգլիացի ճանապարհորդներին Կախեթիայում, ինչպես Ջ. Պալավանդիշվիլին՝ բարոն Հաքստհաուզենի ճանապարհորդության ժամանակ, և այլն։

1843 թվին Թբիլիսի եկավ նշանավոր գիտնական Մորից Վագները։ Նրան «ուղեկցելու և աջակցելու համար» նշանակված էր Աբովյանը (1843 թ. ապրիլի 5-ին)։ Ճանապարհորդության մանրամասնությունները Վագները հրապարակեց իր գրքում՝ „Reise nach dem Ararat und dem Hochlande von Armenien“. Stuttgart, 1848. Մինչ այդ, ճանապարհորդության առանձին տպավորությունները հաղորդված 1843 թ. „Горный журнал“-ում և այն ժամանակվա ամենատարածված „Библиотека для чтения“ ժուռնալի նույն թվի № 761-ում «1840 թ. Արարատի ժայթքումը» խորագրով։ Այդ երկրաշարժի հետևանքով շատ վայրեր, որ 1829 թ. Խ. Աբովյանը պրոֆ. Պարրոտի հետ տեսել էր՝ կամ ավերված էին, կամ բոլորովին սրբված (Ակոռի գյուղը, ս. Հակոբի վանքը)։ Վագներն ու Աբովյանն այս անգամ բարձրացան Արարատի հյուսիսային զառիվերով, 7 հազար ոտնաչափ բարձրության վրա։

Բոլոր տվյալներից դատելով, Աբովյանի ճանապարհորդությունը տևեց մինչև մայիսի 20-ը։ Թբիլիսիից Աբովյանին տեղափոխելու իսկական պատճառները պարզելու տեսակետից, հետաքրքրական է ծանոթանալ նրա հետագայի ամբողջ գրագրության հետ։ Հայաստանում կատարած ճանապարհորդությունից վերադառնալուց կարճ ժամանակ անցած, մայիսի 31-ին, Աբովյանն իր վարչությանը ռապորտ է ուղղում՝ այսպիսի բովանդակությամբ.

«Թիֆլիսի գավառական դպրոցը վաղուց է, որ գտնվում է շատ վատ վիճակում և լուրջ վերանորոգման կարիք ունի. բնակարանի համար ինձ հատկացված սենյակների առաստաղներից ջուրը կաթում է այնպիսի առատությամբ, որ հաճախ անհնարին է դառնում ամբողջ օրերով ո՛չ պարապել և ո՛չ բնակվել. դռները շատ հին են և այնքան խարխլված, որ ոչ մի կերպ հնարավոր չէ փակել... Դասարաններում վառարաններ բոլորովին չկան»: (№ 7 «գործից», „О разных сведениях к руководству за 1843 г.

«Գործում» ոչ մի տվյալ չկա, որից կարելի լինի դատել այդ պակասությունները վերացնելու ուղղությամբ վարչության ձեռնարկած որևէ միջոցառումի մասին: Ընդհակառակը... հենց այդ ժամանակ Աբովյանին առաջարկում են ռապորտ ներկայացնել իրեն փոխադրելու մասին: Որ նրան Կովկասի մայրաքաղաքից այն ժամանակ խուլ Երևան տեղափոխելը բոլորովին կամավոր չէր, այդ ակնառու կերպով երևում է թեկուզ իր իշխանավորին Աբովյանի գրած դիմումի սևագրությունից:

Հուլիսի 11-ին Աբովյանը ներկայացնում է այսպիսի բովանդակությամբ ռապորտ. «Տեղեկանալով, որ Երևանի գավառական դպրոցի տեսչի պաշտոնակատարը իր պաշտոնից ազատվում է, վարչությանդ խոնարհաբար խնդրում եմ ինձ փոխադրել հիշյալ դպրոցը»:

Այնուհետև Աբովյանն իր ձեռքով ջնջել է հետևյալ նախադասությունը. «և իմ պաշտոնը հանձնելու մասին՝ ում որ վարչությունդ ցանկանում է (խնդրում եմ) անել պատշաճ կարգադրություն»:

Հունիսի 19-ին Աբովյանն ստանում է այս բնույթի մի հրամանագիր (№ 619):

«Ձեր ցանկության համաձայն, ես, որպես ուսումնական մասի կառավարիչ, ըստ իմ վրա դրած պարտականության, Ձեզ նշանակեցի Երևանի գավառական դպրոցում ազատված տեսչի պաշտոնում, միաժամանակ, Ձեր ներկա պաշտոնում՝ իբրև Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի պաշտոնակատար՝ նշանակելով իսկական ուսանող Մոնաստիրսկուն: Այդ պատճառով առաջարկում եմ Ձեզ, Ձեր պաշտոնը օրինական հիմունքներով Մոնաստիրսկուն հանձնելուց հետո Ձեր երկուսի ստորագրություններով դիրեկցիային ներկայացնել հանձնողական թերթը և մեկնել Ձեր նոր պաշտոնավայրը՝ Երևան: Թիֆլիսի դպրոցից Ձեր աշխատավարձը պետք է ստանաք առ այսօր:

Դիրեկտորի պաշտոնակատար՝ Ի. Ռոսկովշենկո»:

Այս հրամանագրին հաջորդող Աբովյանի ռապորտը անհատու-կերպով վկայում է, որ նա դժկամությամբ էր թողնում Թբիլիսին։

1843 թ. հունիսի 21
№ 20

ՌԱՊՈՐՏ

Ի հետևումն վարչության սույն հունիսի 19-ի № 619 հրամանագրի, պատիվ ունեմ խոնարհաբար խնդրելու՝ բարեհաճ չի՞ լինի արդյոք, մինչև սույն թվի սեպտեմբերը հետաձգել ինչպես պ. Մոնաստիրսկուն պաշտոնս հանձնելը, նույնպես և Երևան մեկնելս, այն պատճառով, որ ընտանեկան գործերս և կնոջս հիվանդությունը միանգամայն անհնար են դարձնում իմ՝ Երևան մեկնելը։ Հետևանքի մասին խնդրում եմ հայտնեք հրամանագրով։

Հաստիքավոր տեսչի պաշտոնակատար Խ. Աբովյան»։

Այս ռապորտի վրա գրված է հետևյալ մակագրությունը։

«Այժմ և եթ դպրոցը պետք է հանձնվի Մոնաստիրսկուն, որից հետո Աբովյանը կարող է արձակուրդ խնդրել, որը նրան չի մերժվի։

Ռոսկովշենկո, հունիսի 27.»

Բերված փաստաթղթերից, բնականաբար, կարելի էր եզրակացնել, որ Աբովյանի «աքսորը» Երևան՝ հետևանք է Վագների հետ նրա կատարած ճանապարհորդության և նրա համարձակ զրույցների։

Այս երկու դեպքերը (Վագների հետ ճանապարհորդելը և «աքսորը» Թբիլիսից Երևան) հաջորդում են միմյանց շատ կարճ ժամանակամիջոցում, և որ հատկապես բնորոշ է՝ և՛ Վագներին ուղեկցելու հրամանագիրը, և՛ Աբովյանին Երևան փոխադրելու ամբողջ գրագրությունը ամփոփված է միևնույն № 6 «գործում»։

Սակայն, դատելով այն փաստից, որ Երևան հասնելուն պես, Աբովյանը, համաձայն իշխանությունների հրամանագրի, ուղեկցեց ոչ պակաս նշանավոր օտարերկրացիների՝ բարոն Հաքստհաուզենին և պրոֆեսոր Աբիխին, բացառում են այն ենթադրությունը, թե Աբովյանին Երևան փոխադրելու պատճառը Վագներն էր։

Աբովյանի «աքսորի» պատճառներն ավելի խորն են։

* * *

«Ուսումնական գործի ընթացքը Կովկասում 1802 թվից մինչև 1880 թիվը» պաշտոնական հրատարակության մեջ (Թիֆլիս, 1880 թիվ) տրված է հետևյալ համառոտ տեղեկությունը (էջ 23).

«1843 թ. մարտի 23-ին Թիֆլիսում հիմնված է ազնվական օրիորդների Անդրկովկասյան Ինստիտուտ և առաջին անգամ արտահայտված է Կովկասում հատուկ բարձրագույն ուսումնական հաստատություն հիմնելու միտքը։

Այդ տարիներին Թբիլիսիում համալսարան հիմնելու մասին ոչ պակաս հետաքրքրական տեղեկություններ ենք գտնում Ռոսկովշենկոյի մահվան առթիվ գրված հոդվածում։

Իվան Վասիլևիչ Ռոսկովշենկոն, որ այնքան մեծ դեր է կատարել Աբովյանի կյանքում, ոչ պակաս վճռական դեր է ունեցել նաև Թբիլիսիում համալսարան հիմնելու խնդրում։ Այս երկու խնդիրները որոշ չափով իրար հետ առնչություն ունեն։

Ո՞վ էր Ռոսկովշենկոն՝ Աբովյանի անմիջական իշխանավորը, երկար տարիներ Թբիլիսիի գիմնազիայի և Անդրկովկասյան դպրոցների դիրեկտորի պաշտոնակատարը։

Կենսագրական համառոտ տեղեկությունները նրան ներկայացնում են որպես միանգամայն օժտված հրապարակախոս, գրականագետ, թարգմանիչ, համալսարանական կրթություն ունեցող անձնավորություն։ 1837 թվից նա Լուսավորության Մինիստրության ամսագրի խմբագրի օգնականն էր։ Ամսագրում տպագրվում էին գիտական և հանրամատչելի հոդվածներ։ Իր պաշտոնի բերումով նա ծանոթացավ ժամանակի բոլոր հայտնի ռուս գրողների հետ։ Հարավային Ուկրաինայի մասին գրած պատմական հետազոտությունները, Շեքսպիրից կատարած փայլուն թարգմանությունները («Ռոմեո և Ջուլիետա», «Ամառային գիշերվա երազ» և ուրիշները), որոնք տպագրվում էին „Библиотека для чтения“ հանրամատչելի ամսագրում, Ռոսկովշենկոյի վրա դարձրին կոմս Ուվարովի ուշադրությունը, որ երիտասարդ հասակում «Արզամաս» խմբակի անդամ էր, իսկ այդ ժամանակ՝ լուսավորության մինիստր, Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, ռեակցիոներ։

1839 թ. Ռոսկովշենկոյին առաջարկվեց Թբիլիսիի գիմնազիայի տեսչի տեղը՝ համատեղելով նաև դիրեկտորի պաշտոնակատարությունը։ Նրան տրվում էր լիազորություններ և առաջարկվում էր ներկայացնել իր նկատառումները Կովկասում ուսումնական գործի դրվածքի մասին։

Թբիլիսիում Ռոսկովշենկոն սկսեց կիրառել Ուվարովի քաղաքականությունը։

Կոմս Ս. Ս. Ուվարովը, որ 1833 թվից ստանձնեց լուսավորության մինիստրի պաշտոնը, իր ռեակցիոն քաղաքականությունը

վարում էր կառավարության ծրագրի ոգով: Նա ասում էր, թե անհրաժեշտ է՝ «իշխել պատանեկության մտքերի վրա», նրան տալ իսկական ռուսական ուղղափառության, միապետության և ժողովրդայնության ուղղություն, որ «հանդիսանում է մեր փրկության վերջին խարիսխը և մեր հայրենիքի ուժի և մեծության ամենաճիշտ առհավատչյան»: Նրա տեսության էությունը հանգում էր այն կեղծ պնդումին, թե ռուս ժողովուրդն իր բնությամբ կրոնական ազգ է, ի սկզբանե ցարի հետ է և ճորտատիրական իրավունքի դեմ չի բողոքում:

Ինչպես Ռոսկովշենկոյի մահվան առթիվ գրված հոդվածում ասվում է, Ռոսկովշենկոն մեծ ջանք գործադրեց, որպեսզի «հերքի Պետերբուրգի բարձրագույն շրջաններում հայտնի դարձած՝ Թիֆլիսում համալսարան հիմնելու միտքը»: Նա գտնում էր, որ համալսարանը «կմեկուսացնի Անդրկովկասը», մինչդեռ «ընդհակառակը, համապետական շահերի տեսակետից անհրաժեշտ է ամեն կերպ ձգտել այդ հեռավոր ծայրամասի կապը Ռուսաստանի հետ ամրացնելուն»:

Թիֆլիսում համալսարան հիմնելու գաղափարին հակառակ, Ռոսկովշենկոն գտնում էր անհրաժեշտ Անդրկովկասի բարձր դասերի զավակներից ուղարկել Մոսկվայի և Պետերբուրգի ուսումնական հաստատությունները՝ ռուսական կրթություն ստանալու համար: «Ռոսկովշենկոյի այդ առաջարկությանը բարձրագույն իշխանության կողմից հավանություն ստացավ և Թիֆլիսում համալսարան բաց անելու միտքը վերջնականապես հերքվեց»:

1844 թվին Ռոսկովշենկոն անձամբ Ռուսաստանի մայրաքաղաքներն ուղարկեց 40 երեխա, որոնց թվում էր և Լորիս Մելիքովը:

Վրաստանի Կենտրոնական Արխիվի «գործերում» համալսարանի մասին պաշտոնական տվյալներ չկան: Այդպիսիք պետք է փնտրել Լուսավորության Մինիստրության «գործերում»: Անկասկած է, որ Թբիլիսիում համալսարան հիմնելու միտքը առաջադրել էին այնտեղ ապրող ժամանակի առաջավոր մարդիկ, ինչպիսիք են՝ Ն. Բարաթաշվիլին, Ա. Ճավճավաձեն, Խ. Աբովյանը, Միրզա Ֆաթալի Ախունդովը, Հախվերդյան եղբայրները, Գ. Պալավանդովը և ուրիշները (այն ժամանակ Թբիլիսիում հանրային գրադարան բաց անելու միտքը ևս ծագում էր նույն այդ առաջավոր ինտելիգենցիայից, որի ականավոր ներկայացուցիչներից էին Ն. Բարաթաշվիլին, Գ. Պալավանդիշվիլին, Դմ. Կիպիանին և ուրիշները):

Մի քանի տվյալներ հնարավորություն են տալիս ենթադրելու, որ Թբիլիսիում համալսարան հիմնելու կողմնակիցների թվում էր նաև հետագայում նշանավոր պրոֆեսոր-արևելագետ Լ. Զ. Բուդաղովը։

1840 թվին, երբ Թբիլիսիի գիմնազիայի թուրքերեն լեզվի դասատու Միրզա Յուսուֆ Շահնազարովը (որին Միրզա Շաֆին իր բանաստեղծություններում ծաղրել է), հեռացվեց, նրա տեղը հրավիրվեց Կազանի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը ոսկե մեդալով ավարտած Լազար Զախարովիչ Բուդաղովը, որը տիրապետում էր գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներին և հայերենին, որ իր մայրենի լեզուն էր։ 1843 թվին, Աբովյանի նման, նա էլ ստիպված էր թողնել Թբիլիսին։ Տեղափոխվելով Պետերբուրգ և մտնելով համալսարան, նա հռչակվեց որպես նշանավոր պրոֆեսոր և մի շարք աշխատությունների հեղինակ։

Իր գիտելիքները լավագույն կերպով կիրառելու Աբովյանի ձգտումը, որ արտահայտվում էր համալսարանի պրոֆեսոր դառնալու ցանկությամբ, բախվում էր մի շարք արգելքների։

1841 թ. Կազանի համալսարանում պրոֆեսորի տեղ ստանալու համար երեք տարի տանջվելուց հետո, բնականաբար, նրա մեջ պետք է ծագեր Թբիլիսիում համալսարան հիմնելու միտքը։

Այդ գործում որոշ հաջողություն ձեռք բերելու համար Աբովյանը բավականաչափ հիմքեր ուներ։ Հայտնի է այն ժամանակ հռչակված ակադեմիկոս Ֆրենի բարյացակամ վերաբերմունքը Աբովյանի նկատմամբ, որի մասին վերջինս արտահայտվում էր որպես «իր բարերարի»։

Եթե նկատի ունենանք ակադեմիկոս Խ. Ֆրենի այն ժամանակ ունեցած դերն ու նշանակությունը (նա է հիմնել Ասիական թանգարանը և հետաքրքրություն է առաջացրել դեպի Արևելքը) և նրա նկատմամբ մինիստր Ուվարովի լավ վերաբերմունքը, ապա զարմանալի չի թվա, որ Աբովյանը Թբիլիսիում համալսարան հիմնելու գործում հույսեր էր կապում նույն Ֆրենի և Պարրոտի մյուս բարեկամների հետ։

Հայտնի է նաև Ֆրենի հետաքրքրությունը Կովկասի նկատմամբ։ Այդ արտահայտվել է հենց նրա՝ «Արաբ, պարսիկ և թուրք գրողների տեղեկությունները Կովկասի մասին» արժեքավոր աշխատության մեջ և մյուս գործերում։

Խ. Աբովյանի և Լ. Բուդաղովի միաժամանակ Թիֆլիսից տեղափոխվելը որոշ չափով կարելի է բացատրել Թիֆլիսում համալ-

տարան հիմնելու նրանց ջանքերով։ Դրա համար նրանք այդպիսի խիստ պատիժ կրեցին։

Ռոսկովշենկոն հետագայում, Երևանում էլ Աբովյանին հանգիստ չթողեց։ Ինչպես երևում է «Պատմական ակնարկ Երևանի գիմնազիայի մասին» գրքից (Թիֆլիս, 1890 թ., էջ 36), 1846 թ. «Նորին պայծառափայլություն» իշխան փոխարքան՝ Ներսես կաթողիկոսի Երևան գալու ժամանակ դպրոցի տեսուչ Աբովյանի կատարած անպատշաճ արարքների մասին գրված զեկուցագրի առթիվ, հրամայում է. «Աբովյանին խիստ նկատողություն անել՝ ձերբակալելով երեք օր»։ Երկու տարի անցած, 1848 թվին, Աբովյանը պաշտոնից հեռացված էր։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

ՆՈՐ ՏՎՅԱԼՆԵՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

Աբովյանի կյանքի հարցերի շուրջը եղած գրականությունը թերևս ավելի քիչ է, քան պետք է լիներ, սակայն ավելի շատ՝ քան հայ հեղինակներից որևէ մեկի մասին։

Զարգացման այն ճանապարհը, որ անցել է Աբովյանի կյանքին նվիրված գրականությունը, նրա հետ կապված խնդիրները, թե ո՛վ ինչպես է լուծել հարցերը, ինչպես լուսաբանել մեծ գրողի կերպարը — քննության առանձին նյութ է, մեր կարծիքով, բավական հետաքրքրական, նամանավանդ բնավ չշոշափված։ Աբովյանի կյանքի ուսումնասիրության նվիրված յուրաքանչյուր աշխատություն մի կողմից ամփոփել է մինչ այդ եղած արդեն հայտնի փաստերը, մյուս կողմից՝ բացել նոր ու անհայտ դռներ, և այդպիսով հետզհետե ընդլայնել Աբովյանի կյանքի իմացության շրջանակները։

Աբովյանի կյանքին նվիրված ամենաընդարձակ աշխատությունների անգամ (Ն. Տեր-Կարապետյան, Ե. Շահազիզ) արխիվային նյութերի բավական հանգամանալից հետազոտության արդյունք լինելով հանդերձ, այնուամենայնիվ Աբովյանի կյանքից որոշ փաստեր, արխիվային նյութեր չեն օգտագործել։ Նշանակում է, այդ հետազոտությունների հեղինակները չեն նկատել կամ էլ նկատել են, բայց կարևորություն չեն տվել այդ փաստերին։ Քիչ չեն և այն դեպքերը, երբ կենսագիրներն արժեք են տվել, երկար կանգ առել առանձին մանրամասնությունների վրա, և ընդհակառակը, հարևանցի, թռուցիկ հայացք ձգել Աբովյանի կյանքի այնպիսի կողմերի վրա, որոնք հետաքրքիր են ոչ միայն իբր կենսագրական փաստ, այլև կյանքի առանձին երևույթների նկատմամբ Աբովյանի ունեցած հասկացողությունները պարզելու տեսակետից։

Ահա մի շարք այդպիսի տվյալներ, որ քաղել ենք Աբովյանի արխիվից, հանձնում ենք մեր գրական հասարակայնության ուշադրությանը։

Այս նոր նյութերը մի կողմից երևան են հանում Աբովյանի կյանքի որոշ անհայտ կողմեր, նոր մանրամասնություններ, առանձին հարցերի նկատմամբ Աբովյանի վերաբերմունքը, հայացքները, մյուս կողմից՝ արդեն հայտնի դեպքերից մի-երկուսը լրացնում և ճշգրտում։

9. 3. 48.

ԱԲՈՎՅԱՆԸ ԴՈՐՊԱՏ ՄԵԿՆԵԼՈՒ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

ՄԻ ՔԱՆԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ

Երվանդ Շահազիզի «Խաչատուր Աբովյանի կենսագրության» մեջ կարդում ենք հետևյալը.

Աբովյանը «արդեն իր բոլոր պատրաստությամբ տեսած է եղել (խոսքը Դորպատ ճանապարհվելու մասին է— Ռ. Զ.) ստացած է եղել իր ծնողների թույլտվությունը, 1829 թվի դեկտեմբերի 4-ին էլ, շատ թախանձելուց հետո, նրան հաջողվել է ստանալ և կաթողիկոսի թույլտվության կոնդակը, նույն թվի դեկտեմբերի 9-ին էլ՝ ուղեգիր (ОТКРЫТЫЙ ЛИСТ) *հայերեն գրած, և օրեցօր անհամբեր սպասել է Պարրոտի նամակին։... 1830 թվի ապրիլին, վերջապես, Աբովյանն ստացել է Պարրոտից մի նամակ», ուր հայտնված է, որ Դորպատ մեկնելու խնդիրը որոշված է։*[1]

Այն, որ ուսման գնալու համար Աբովյանը Եփրեմ կաթողիկոսից կոնդակ է ստացել, հայտնի չի եղել ոչ Մ. Տեր-Ազարյանցին և ոչ էլ Ներսես Տեր-Կարապետյանին։ Այդ մասին առաջին անգամ խոսք է եղել մեր գրած կենսագրական համառոտ ակնարկում, հետո նաև Շահազիզի կազմած՝ «Դիվանում», ուր հրապարակված է կոնդակն ամբողջությամբ։[3]

Կոնդակը, ճիշտ է, նորություն էր Աբովյանի կենսագրության մեջ, բայց այն միտքը, թե պատանուն հաջողվում է թախանձագին աղերսներով առնել կաթողիկոսի համաձայնությունը Դորպատ մեկնելու մասին, և դեկտեմբերի 4-ին էլ ստանալ կոնդակ՝ հիմնա-

---

[1] Երվանդ Շահազիզ. «Խաչատուր Աբովյանի կենսագրությունը», Երևան, 1945, էջ 14։

[2] «Աբովյանի կյանքը», Երևան. 1939, էջ 36։

[3] «Դիվան Խաչատուր Աբովյանի». կազմեց և ծանոթագրեց Երվանդ Շահազիզ, Երևան, 1940, էջ 97—98։

վորված չէ որևէ փաստական տվյալով: Մեզ համար, ինչպես երևի նաև Շահազիզի, հիմք է ծառայել Հակստհաուզենի պատմածը կաթողիկոսի և Աբովյանի հրաժեշտի մասին:[1]

Նորահայտ փաստաթղթերի ուսումնասիրությունը նոր մանրամասնություններ է պարզում:

Գևորգ Հախվերդյանի թղթերի մեջ գտնվել է Աբովյանի մի անտիպ ուղեգրությունը՝ „Поездка к развалинам Ани" անունով:[2]

Այս ուղեգրական աշխատության մեջ Աբովյանը, իր սովորության համաձայն, շեղվելով բուն նյութից, վերհիշել է իր կյանքի մի քանի մանրամասնությունները: Կան նորություններ և այնպիսի փաստեր, որոնք ճշգրտում են հրապարակի վրա արդեն եղած, սակայն լուսաբանության կարոտ որոշ տվյալներ:

Բերում ենք Աբովյանի այդ աշխատությունից մի հատված, ուր մեզ զբաղեցնող հարցի և այլ խնդիրների շուրջը կան ուշագրավ մանրամասնություններ:

...«Паррот уехал с одними лишь холодными [обещаниями, сделанными] милым тоном: «Постараюсь, но не могу обещать вам ничего прочного».—Мне надобно было только, по его железной воле, похлопотать о своем увольнении не из духовного звания, а со[3] службы на несколько лет. С окровавленным сердцем встретил я опять черные стены эчмиадзинские, никогда не казавшиеся[4] в столь страшном виде, как теперь. Целая неделя прошла для меня пытками невыразимыми. Ежедневно, почти, призван был я в страшный суд тогда еще могучего Синода, имеющего неограниченную власть над всею церковью и нацией даже. Упреки, угрозы, наставления одного, обещание епископского сана и места через 5 лет—после того дня,—другого—ничто не устрашало, не заманило меня. Покойник архиепископ Иосиф[5] Тер-Маруков, важнейший тогда член Синода, раз до полуночи старался всячески обольстить меня будущим моим карьером в звании епархиального архиеписк[опа] в Грузии или в России, основываясь на знании моем русского и арм[янского] языков, что и теперь ред-

---

[1] А. Гакстгаузен. „Закавказский край" часть 1. стр. 200.

[2] Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության Ինստիտուտի Գրական Թանգարան, Խ. Աբովյանի արխիվ, № 23: Այս փաստաթուղթը Գևորգ Հախվերդյանի արխիվում հայտնաբերել է Գրական Թանգարանի աշխատակից ընկ. Պ. Սիմոնյանը:

[3] Բնագրում՝ из:

[4] Բնագրում՝ паказавшиеся:

[5] Բնագրում Эоасиф.

жесть в монастыре. Он и правду говорил, но юному сердцу казалось[1] все это одною лишь химерою.[2]

Наконец, решились обещать мне отправить меня на свой счет в Москву в Институт Г. Лазаревых весною, лишь бы я оставил свое намерение последовать за этими лотранов (лютеран), не знающими ни постов, ни святых, ни даже бога. Я успокоился, но неосновательность этой надежды, которою старались святые отцы удержать и остановить меня от преследования за Парротом, открылась мне, по особенному ко мне его благоволению, покойником Иоанном, не бывшим тогда еще Патриархом, а старшим членом Синода. Ужас отчаяния объял меня с адскою силою. Я явился уже с твердою решительностью оставить свое духовное звание, как они не отпустят[3] меня. Синод, вычеркнув[4] меня из места своих братий, произнес на меня проклятие, на место благословения. Отобрали все мои вещи до нитки, оставляя на мне только платье одно. Горе тому, кто с этой минуты и поклониться со мной осмелился! Я вышел из монастыря без копейки, в темную ночь и провел ее в доме зятя, живущего и теперь в Вагаршапате (эчмиадзинской деревне). Товарищ мой, ученый священник, теперь в Бессарабии,—Мсур,—послал секретно свою маленькую шубу. Друг мой и учитель, ученый Иоанн Крымский, ныне епископ в Испагане, — 10 рублей серебром, по приказанию Патриарха, ослепленного и бездейственного уже по причине слабого здоровья, который очень поздно узнал обо всем происшедшем через Иоанна же, своего кабинетного секретаря. Одна его добродетельная душа сострадала со мною, одно его ангельское сердце открылось ко мне с благословением. Я был призван к нему в полуночи, когда все спало в монастыре сном глубоким. Слезы и топ этого божественного старца чисто патриархальных времен Авраамов и, уже 18 лет тому назад, и теперь поражают меня до глубины сердца.

— «Подойти ко мне мой Рафаэл,[5]—сказал он мне голосом,[6] потрясшим всю мою экзистенцию и теперь, голосом Исаака праведного,—«Подойди ко мне, любезный отрок благочестивого Абова; блага твоя цель, полезен твой путь. Но обещаешь мне не забыть родины и родной церкви,— вот мое объятие, вот мое благословение, вот и увольнение твое, исключающее тебя не из числа твоих братьев, не из сердца моего, а из службы

[1] Բնագրում՝ оказалось.
[2] Բնագրում՝ химериею.
[3] Բնագրում՝ пустят.
[4] Բնագրում՝ изчеркнув.
[5] Խոսքը Թովբիթի որդու մասին է։
[6] Բնագրում՝ с голосом.

одной. Да благословит Всевышний твой путь»,—произнес старец, обняв меня дрожащими руками и со любовью отца расцеловал, дал свою благотворную десницу к прикладыванию, дал и увольнительный лист, и я встал, ушел от него, чтобы навек благословить память его священную, блаженную, не забыл ли я нацию свою и церковь, пусть нация опять скажет, которая знает меня уже лет 11 после приезда из Европы!».

Ինչ է պարզում այս հատվածը։

Առաջին. խոստանալով հաջողել Աբովյանի ուսման գործը, Պարրոտը մեկնելիս նրա առաջ խնդիր է դրել՝ ազատվել ոչ թե հոգևոր կոչումից, այլ ծառայությունից՝ մի քանի տարով։

Երկրորդ. տարբեր աղբյուրներից հայտնի էր այն հալածանքը, որ առաջացել էր Աբովյանի շուրջը՝ ուսման մեկնելու կապակցությամբ։ Այս հատվածով եղած տեղեկությունները հաստատվում են ավելի փաստացի դառած։

Երրորդ. Աբովյանին խոստացել են Լազարյան ճեմարան սովորելու ուղարկել, եթե նա Դորպատ՝ Պարրոտի մոտ գնալու մտքից հրաժարվի։[1] *Այս հատվածից պարզվում է նաև, որ այդ եղել՞ է միայն խոստում։ Եվ Հովհաննես Կարբեցին, այս նա կարևոր է, որ այն ժամանակ Սինոդի ավագ անդամներից էր, բացում է գաղտնիքը, հայտնելով, որ Աբովյանը չպետք է հույսեր կապի այդ խոստման հետ։*

Չորրորդ. սարսափելի հուսահատության մեջ ընկնելով՝ Աբովյանը հաստատապես որոշում է հրաժարվել հոգևոր կոչումից, որպեսզի ազատ լինի և կարողանա իր սեփական բախտը տնօրինել ուզածի պես։ Եվ դա պատճառ է դառնում, որ Սինոդը, նզովելով Աբովյանին, միաբանությունից հեռացնում է։

Հինգերորդ. Դորպատից, 1832-ի մարտի 2-ին կաթողիկոսի անունով գրված ընդարձակ նամակից[2] *հայտնի էր, թե ինչպես Տեր-Մարուքյանը, նրա հետ նաև ուրիշները, Սինոդի վերոհիշյալ վճռից հետո, հարձակվում են Աբովյանի վրա, խլում նրա ունեցած-չունեցածը և դատարկաձեռն ճանապարհում։ Այս մասին աբովյանագիտության մեջ մինչև այժմ հայտնի փաստաթղթերում ոչ մի խոսք*

---

[1] Այս մասին խոսք կա նաև էջմիածնի Սինոդի բարձրագույն ժողովին ուղղված Աբովյանի մի դիմումի մեջ, որը ժամանակին հրապարակել է Ա. Երիցյանը։ Այդ դիմումը տեղ է գտել նաև «Դիվանի» մեջ (էջ 26)։

[2] Այդ նամակը, որ քաղված է Աբովյանի դորպատյան օրագրերից, առաջին անգամ լույս է տեսել Տեր-Կարապետյանի գրքում (էջ 122—130), ապա նաև «Դիվանում» (էջ 35—41)։

չկա, թեև Աբովյանը առիթ է ունեցել խոսելու այդ թղթերի մեջ՝ իր նկատմամբ էջմիածնի ունեցած վերաբերմունքի մասին։

Կաթողիկոսին գրված նամակում Աբովյանը կարող էր շատ բան չափազանցել, որովհետև դեռ թարմ էր այն վիրավորանքը, որ հասցրել էր իրեն Տեր-Մարուքյանը։ Կարելի էր այդպես մտածել, եթե այս ուղեգրական աշխատության մեջ նույն դեպքը հիշատակելիս չլիներ։ Տարիներ հետո[1] գրված ուղեգրական այս ակնարկում, նույն դեպքի հիշատակումը հաստատում է փաստը, տեղ չթողնելով այլևս կասկածի համար, թե նման բան իսկապես եղել է կամ ոչ, կամ որ Աբովյանը պատահած դեպքը ենթարկած լինի չափազանցության։

Այս փաստը ուղղում է այն սխալը, որ մենք թույլ ենք տվել Աբովյանին նվիրված կենսագրական ակնարկի մեջ, գրելով թե «Հրաժեշտի պահին մի խումբ հոգևորականներ հարձակվում են նրա վրա, խլում շորերն ու ճամբի պաշարը»։[2] Ուրեմն՝ այդ հարձակումը նախորդել է հրաժեշտի օրվան, և ոչ այնքան մեկնելու, որքան այն պատճառով, որ Աբովյանը համարձակվել է չէ թե միայն ընդդիմանալ Սինոդի կամքին՝ ուսման մեկնելու կապակցությամբ, այլ համարձակվել է հրաժարվել հոգևոր կոչումից։ Եվ վերջապես՝ այդ հարձակումը ամենևին կապված չի եղել Պարրոտի նամակի հետ, որովհետև այն մի քանի ամիս հետո է միայն ստացվել։

Շատ է զարմանալի, որ մի այդպիսի կարևոր փաստ Աբովյանի կյանքից՝ Շահազիզը չի օգտագործել 1945-ին գրած ընդարձակ կենսագրության մեջ, թեև իրեն ոչ միայն հայտնի է եղել վերոհիշյալ հալածանքը, այլև, ճիշտ է, մի փոքր սխալ ձևով, բայց դրանից առաջ օգտագործել է մի այլ առիթով։[3]

Վեցերորդ. այս հատվածը ցույց է տալիս, որ վերոհիշյալ հալածանքների շրջանում, Աբովյանը, թշնամիներից բացի, ունեցել է նաև սրտակից բարեկամներ, որոնք իրենց ուժերի ներածին չափով օգնություն են հասել նրան (Մսերյանց, Շահխաթունի և ուրիշներ)։

Յոթերորդ. Հաքստհաուզենի գրքից[4] հայտնի էր Աբովյանի ու Եփրեմ կաթողիկոսի հանդիպումը։ Այս տվյալը օգտագործված է

[1] Ուղեգրական ակնարկը անթվակիր է. մեզ թվում է, որ այն պետք է գրված լինի ոչ շուտ, քան 1847-ի վերջերին։

[2] «Աբովյանի կյանքը», էջ 37։

[3] «Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 12։

[4] А. Гакстгаузен, стр. 200.

Աբովյանի կենսագիրների՝ Մ. Տեր-Ազարյանցի, Ն. Տեր-Կարապետյանցի, Ս. Շահազիզի կողմից։ Ուղեգրական ակնարկի մեջ նույնպես խոսք կա այդ մասին։

Կենսագրական յուրաքանչյուր տվյալ որքան շատ աղբյուրներ ունենա, այնքան ավելի հավաստիություն է ձեռք բերում։ Ճիշտ է, այն, ինչ Հաքստհաուզենն է նկարագրել, ինչպես հայտնի է, քաղել է իրենից՝ Աբովյանից։ Բայց մեզ հայտնի չէ, թե ինչպես է Աբովյանը Հաքստհաուզենին հաղորդել և այդ նրա կողմից ինչ ձևով է վերարտադրվել։ Իսկ այս դեպքում մենք գործ ունենք մի փաստաթղթի հետ, որ պատկանում է անմիջապես Աբովյանի գրչին։

Հաքստահուզենի և Աբովյանի պատմածները միևնույն դեպքի մասին թեև մի փոքր իրարից տարբերվում են, բայց հակասական չեն։ Հաքստհաուզենի նկարագրածի մեջ կաթողիկոսի խոսքը ավելի լրիվ չափով կարելի է գտնել։ Սակայն դրա փոխարեն, Աբովյանի նկարագրությամբ կենդանանում է այն հալածական միջավայրը, որը և կաթողիկոսին ստիպել է կանչել Աբովյանին իր մոտ։ Հետո. կաթողիկոսի խոսքի մեջ, ըստ Աբովյանի պատմածի, կա մի կարևոր մանրամասնություն. պարզվում է այն հարցը, թե ինչպես է պատահել, որ Սինոդի վճռով Էջմիածնի միաբանությունից հեռացված Աբովյանը Դորպատում և այնուհետև՝ պահպանում է իր հոգևոր կոչումը, մինչև որ 1839-ին Էջմիածնի Սինոդը Աբովյանին, իր խնդրագրի համաձայն, ազատում է սարկավագությունից։[1] Կաթողիկոսի այն խոսքը, թե Աբովյանին տալիս է ոչ միայն իր օրհնությունը, այլև արձակման թուղթ, որով նա ոչ թե հանվում է միաբանների թվից, այլ միայն պաշտոնից՝ պարզվում է վերոհիշյալ հարցը։

ՄԻ ԷՋ ԴՈՐՊԱՏՅԱՆ ՕՐԱԳՐԵՐԻՑ

Աբովյանի կյանքի նույն այդ շրջանը լուսաբանող մի այլ, մինչև այժմ չօգտագործված փաստաթուղթ ևս գոյություն ունի։

Յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր ամիսը Դորպատում մի առիթ է եղել, որ Աբովյանը և Պարրոտը միասին, կամ Աբովյանը մենակ, հիշեն 1829-ի սեպտեմբերը, Մասիսի գագաթ բարձրանալը, դրա հետ կապված դեպքերը և այլն։

Այսպես, օրինակ, Պարրոտն իր բարեկամներին և ծանոթնե-

[1] Ն. Տեր-Կարապետյան, «Խաչատուր Աբովյան», 1897, էջ 131—132։

րին, այդ թվում նաև Աբովյանին, հրավիրում է իր տուն՝ Մասիսի գագաթը բարձրանալու տարեդարձը նշելու համար։

Այս մասին գրանցում կա դորպատյան օրագրերի առաջին էջերում։[1]

Մի անգամ, արդեն տարիներ հետո, Աբովյանը տանը մենակ մնացած ժամանակ, ուշ գիշերով հիշում է նախադորպատյան օրերը, իր կյանքի մի քանի մանրամասնությունները և դրանց մի մասը գրի առնում իր օրագրերի մեջ։

Աբովյանի կենսագիրներից առաջինը, որ օգտագործել է դորպատյան օրագրերը, Ն. Տեր-Կարապետյանն է։[2] Մ. Տեր-Ազարյանցը, որ կենսագրությունը գրել է նույնպես արխիվային նյութերի հիման վրա, ասում է. «մեզ հայտնի չեն Աբովյանի կյանքի բոլոր հանգամանքները Դորպատի մեջ»։[3] Նշանակում է, Ազարյանցի ձեռքի տակ չեն եղել Աբովյանի դորպատյան օրագրերը։ Աբովյանի դորպատյան կյանքից Ազարյանցը հիշում է միայն մի դեպք— Աբովյանի սրտառուչ հանդիպումը Ցահրադ Բաղալյանի հետ, և դրա հետ կապված մի շարք մանրամասնություններ, որ կենսագիրը քաղել է Բաղալյանին նվիրված ոտանավորի բավական ընդարձակ ծանոթությունից։ Այդ ոտանավորը մի քանի արտագրությամբ պահպանվել է Աբովյանի ձեռագիր մատյաններում։ Ն. Տեր-Կարապետյանից հետո, ուրիշները, մանավանդ Շահազիզը, շատ են օգտագործել դորպատյան օրագրերը։ Չնայած դրան, դորպատյան օրագրերը դեռ բավական նոր և հետաքրքիր փաստեր, տվյալներ և մանրամասնություններ են պարունակում։

Թե Կարապետյանը, թե Շահազիզը չեն օգտագործել դորպատյան օրագրերի վերջին էջերից մեկը, որի մեջ ուշագրավ տվյալներ կան Աբովյանի կյանքի այն օրերի մասին, որ նախորդել են նրա Դորպատ մեկնելուն։ Օրագրերից քաղում ենք Աբովյանի սեպտեմբերյան վերհիշումների մի մասը միայն, մի հատված, ուր մեզ զբաղեցնող հարցերի վերաբերյալ փաստեր կան։

Ահա այդ հատվածը։—

«Ես ինքնին ընտրեցի վասն իմ զպանդխտական վիճակն առ ի լնուլ զփափագ ցանկութեան իմոյ. ո՞րպիսի նեղութիւն, ո՞րպիսի

---

[1] Աբովյանի արխիվ. № 16։

[2] Ն. Տեր Կարապետյան, «Խաչատուր Աբովյան», 1897, էջ 33—82։

[3] Մ. Տեր-Ազարյանց. «Մեկ քանի խոսք Աբովեանի վերա» («Կռունկ», 1861, թիվ Է, էջ 536)։

[4] Նույն տեղ, էջ 537—538։

տանջանս ո՛չ կրեցի նոյնպէս ի հայրենիս իմ միմիայն վասն լու-
սաւորութեան իմոյ։ Տեսեալ զտգիտութիւն և զդժբախտութիւն ազ-
գակցաց իմոց և լսեալ զհամբաւ բարեբախտութեան և ծաղկեալ
վիճակի Եւրոպացւոց յամենայն ազգս կենաց, զի՞արդ ծանր թուէր
ինձ ապաբախտութիւն իմ անկեալ գոլով յայնպիսի երկիր, ուր և
ո՛չ մի ինչ ՝ի գիտաւորութեանց իմոց կարէր յառաջ գալ, և ի հեռի
գոլով յայնմ աշխարհէ, ուր բոլոր բաղձանք իմ թուէին իբրև ՝ի
սրբարանի կնքեալ. լեռինք կովկասեան թուէին ծածկել ի թիկունս
իւրեանց զայն ամենայն, զոր երիտասարդական իղձեալ իմ խոս-
տանայր ինձ։ Ո՞վ սքանչելի տենչանաց երիտասարդութեան, զի՞-
արդ քաղցր են նոքա մեզ, ամենայն աղէք փորձանաց ամենայն
արհամարհելի թուին մեզ միմիայն ՝ի լնուլ զնոսա։ Ոչինչ աղեր-
սանք, ոչինչ արտասուք նազելի ծնողաց, ո՛չ սէր հայրենեաց, ո՛չ
վտանգք ապառնի պատահարաց, շիջուցին ի յիս զայս եռանդին։
Հօգոց և թառաչ հանելով հայէի ի տարածեալ երկնամբարձ շղթայս
կովկասեան և հոգի կենաց իմոց յուսայի միմիայն ՝ի հիւսիսային
հողմոյ ստանալ, այն զի հարուստ ինձ միմիայն քարքարոսութիւն և
տգիտութիւն շնչէր։ Լսելիք հոգևորականաց մերոց ծանրացեալ էին
՝ի խնդրատուութեանց իմոց առաքել զիս անդ։ Ուր և յուսայի գտա-
նել սակաւ ինչ օգնութիւն առ ո՞ևիցէ, առ հայս և առ ռուսս ի յայլ
օտարս, դիմէի անդ անահ, աներկիւղ, խնդրելով զմիջոց միմիայն
գնալոյ ՝ի Ռուսաստան, անդ կամէի զիս յանձն առնել միմիայն
օրհասի իմոյ։ Անգամ մի յուսայի փախստեամբ ՝ի տանէ ծնողաց
իմոց հասանել նպատակի իմոյ։ Յայս սակս եղէ առակ նշաւակի
բազմաց։ Ոմանք ծիծաղէին ՝ի վերայ անկայուն բարուց իմոց,
այլք վերայ զգէտ մտատանջութեան և ո՞վ վարէր փակել զբերանս
օտարաց։ Իբրև վտարանդի ոք շրջէի ՝ի վայրէ ՝ի վայր, անհաս-
տատ, անկայուն. վիճակակից հոգևորականք նոյնպէս միայն կա-
մէին ցաւեցուցանել զիս, տալով ստորաց քան զիս զբարձրագոյն
աստիճան և նուաստացուցանելով զիս։ Այլ ես մտադրեալ էի ո՛չ
յանձն առնուլ աստիճան ինչ կամ պատիւ, մինչև լնուլ զմտադրու-
թիւն իմ. այլ զայս ամենայն ես թողում այլում ժամու լինելին
պատմել։ Զայն միմիայն ոչ կամիմ թողուլ ՝ի բաց, թէ սոյն այս և
այլ պատահմունք այնքան դառնացուցեալ էին զսիրտ իմ, և
խլեալ յինէն զհաւատարմութիւն մարդկան, մինչև թշնամի համա-
րեալ ինձ զամենայն մարդ, փախչել ի ժողովոյ նոցա և հալածա-
կան լինել յամայիս և ՝ի ձորս։ Այլ ամենախնամ նախասահմանու-
թիւն չէր անտես արել զիս։ Հետ անհնարին փորձանաց և նեղա-

կրութեան առաքեաց նա ինձ զկատարիչն ցանկութեան իմոյ, զորոյ անուանն գոհութեամբ կարդացից զամենայն աւուրս կենաց իմոց: Ազատութիւն հայրենեաց իմոց չէ՛ր աննշան վասն պարբերութիւն, վասն պատմութեան և օրհնալի ազգին իմոյ. և ես ՚ի յետին աւուրս ի 27 ամի կենաց իմոց, կրկին զսկիզբն արարի լինել զգիտաւորութիւն իմ: Յուսամ, որ ո՛չ այնքան երկարութեամբ ամաց, որքան զառնութեամբ կենաց և չարչարանօք մտաց բթացուցեալ և խանգարեալ էին զամենայն կարողութիւն հոգւոյ իմոյ:

Ես նորոգեցի զխնդիր իմ առ հոգևորականս մեր և առ այլ անձինս: Առաջինքն ընկալան զայն այնու պայմանաւ, զի եթէ ես ձրի ծառայէի նոցա, նոքա ուղարկելոյ էին ՚ի մերձաւոր պատահման ծախիւք իւրեանց ՚ի Ռուսաստան ընդ նուիրակաց ումանց. այլ և այս երկարեցաւ և նոքա ոչ կամէին արձակել զիս, նկատեալ յօգտատաւութիւն իմ, զի ես միմիայն էի ի բոլոր վանքին, որ թէև անկատար, այլ գոնէ ըստ մասին ինչ ռուսերէն հասկանայի և հոգևորականք մեր համարելով զիս գիտնական ոք, որովհետև բաց ՚ի ռուսերէնէն զհին լեզուն հայոց քաջ գիտէի, որ օտար իմն էր յայնժամ ՚ի մէջ նոցա և սակաւք գիտէին զայն: Խոստանային զպատիւ, զաստիճան վարդապետութեան և եպիսկոպոսութեան, եթէ ես թողլ տայի զդիտաւորութեան իմոյ»:[1]

Աբովյանն ասում է, որ շատ բան ունի պատմելու, որ ամբողջը չի ասում, որ դրա մասին խոսելու է մի ուրիշ անգամ: Իր այս խոստումը, դժբախտաբար, նա չի կատարել, ինչպես և անկատար է մնացել այն խոստումը, որ մի օր պատմելու է, թե ինչ է իր հետ խոսել Սինոդը[2] և այլն: Ո՞վ իմանա, գուցե և դեռ հայտաբերվեն այնպիսի փաստաթղթեր, որոնց մեջ գտնենք այդ ամենը:

Դորպատյան օրագրերից քաղված այս հատվածը, վերաբերելով ճիշտ այն շրջանին, որի վրա ինչ-որ չափով լույս սփռեց „Поездка к развалинам Ани" ուղեգրությունից կատարված մեջբերումը, իր մեջ պարունակում է մի քանի նոր և լրացուցիչ տեղեկություններ:

Այս փաստաթուղթը հետաքրքիր է առանձնապես նախադորպատյան շրջանը պարզող տվյալներով:

Պարզվում է, որ մինչև Դորպատ գալը, Աբովյանը իր ուսման խնդրով դիմել է նաև ուրիշներին, միայն թե հաջողի Ռուսաստան գնալ: Խոսքն ո՞ւմ մասին է— հայտնի չէ: Պետք է ենթադրել, որ

1 Խ. Աբովյանի արխիվ, № 16 ա:
2 Նույն տեղ, № 23:

դրանք եղել են ռուս և օտար ճանապարհորդներ, որ այցելել են նաև Հայաստան, թեև աբովյանագիտության մեջ դեռ որևէ ճանապարհորդի անուն հայտնի չէ, որ Աբովյանի կյանքում նախորդած լինի Պարրոտին։

Աբովյանը, ինչպես պարզվում է, դիմել է նաև բարձրաստիճան, գիրք և անուն ունեցող հայերի։ Թե ովքեր են այդ հայերը՝ նույնպես պարզ չէ։

Պարզ է, սակայն, որ Աբովյանը ոչնչի առաջ կանգ չի առել, միայն թե միջոց ձեռք բերի՝ ուսման հետ կապված իր ձգտումներն իրագործելու։ Նա նույնիսկ փախչելու փորձ է արել և այդ պատճառով դարձել ծաղրի առարկա։

Էջմիածնի հոգևորականությունը Աբովյանին վիրավորելու, նվաստացնելու նպատակով, նրա վիճակակից կրոնավորներին, նույնիսկ նրանց, որ իրենից շատ էին ցած և անարժան, բարձրագույն աստիճան է տվել։ Սակայն ոչինչ չի կարողացել Աբովյանին շեղել իր իդեալից։ Եվ այդ այն պատճառով, որ Աբովյանը հաստատ վճիռ էր կայացրել, ինչպես ինքն է ասում, հանձն չառնել որևէ աստիճան կամ պատիվ՝ մինչև որ իր մտադրությունը չկատարի։

Կամքը կոփող մի ծանր փորձություն էր այդ, պատանի Աբովյանի համար։ Թեև նա փորձել է չընկճվել, նահանջի ոչ մի քայլ չկատարել, բայց այնուամենայնիվ, ինչպես այս փաստաթուղթը ցույց է տալիս, հուսահատության պահեր շատ է ապրել։ Աբովյանը դեռ պատանի հասակից հալածված մարդու հոգեբանություն է ապրել։ Շատ դառնություններ են կուտակվել նրա հոգում, և այդ ամենը, ինչպես ինքն է ասում, խլել է նրանից դեպի մարդն ունեցած հավատը։ Նա այդ օրերին փախել է մարդկանցից, մենակություն որոնել, շրջել ամայի տեղերում, ձորերում։

Ի միջի այլոց նկատենք, որ օրագրերի այս հատվածում, Աբովյանը մտաբերելով 1829-ի վերջին ամիսները, իրեն հայտարարում է քսանյոթ տարեկան։ Այս ցուցումի համաձայն՝ Աբովյանը ծնվել է 1802-ին։ Մինչև այժմ եղած ծննդյան տարեթվերին (1804—5, 1807, 1809, 1810) ավելանում է մի նորը։ Այս տվյալը ոչ թե օգնում է պարզելու, ճշգրտելու, թե եղած տարեթվերից որն է հավանականը՝ այլ ավելի է խճճում Աբովյանի ծննդյան տարվա հարցը։ Բայց այդ մասին կխոսենք առանձին։

Աբովյանն ասում է, որ հոգևորականությունը թույլ չէր տալիս իրեն հեռանալ Էջմիածնից, ամեն կերպ արգելակում էր։ Դրա

պատճառներից մեկն էլ այն է եղել, որ մեր մեծ լուսավորիչը դեռ իր պատանի հասակում միակ ռուսերեն իմացողն է եղել ամբողջ վանքում։ Եվ, բացի այդ, միաբանության մեջ, ինչպես Աբովյանն է ասում, քչերն են գրաբար այնպես իմացել, ինչպես ինքը։ Այս ցույց է տալիս, թե ինչ մակարդակի վրա է եղել Էջմիածնի մտավորական միջավայրը։ Աբովյանը խեղդվում էր այդ միջավայրում։ Դրա համար էլ նա այնպես բուռն ձգտում էր հեռանալ։

Ի միջի այլոց նկատենք, որ Աբովյանի ասածները համընկնում են այն տպավորությանը, որ Էջմիածնից ստացել է Պարրոտը։[1] Սակայն անհավանական չէ, որ Աբովյանը այդ ներշնչած լինի Պարրոտին, որ ցույց տա, թե ինքը ինչ միջավայրի մեջ է գտնըվում, և դրանով ավելի համոզիչ դարձնի Էջմիածնից հեռանալու, Ռուսաստանում կամ մի այլ տեղ ուսում ստանալու անհրաժեշտությունը։

ԱՆՀԱՅՏ ԿԵՍ ՏԱՐԻ ԱԲՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԻՑ

Շահազիզը գրում է, որ 1829-ի դեկտեմբերի 4-ին Աբովյանը Եփրեմ կաթողիկոսից կոնդակ ստացավ և հաջորդ տարվա ապրիլին էլ՝ Պարրոտից նամակ։[2]

Աբովյանը Թիֆլիսից Դորպատ ճանապարհվել է հուլիսի 11-ին։ Իսկ Թիֆլիս նա պետք է ճանապարհված լինի ոչ շուտ, քան 1830-ի հունիսի առաջին օրերին։ Այդպես ենք կարծում, որովհետև Ալամդարյանի նամակը, որի մեջ ասված է, թե ինքը Թիֆլիսի զինվորական գավառապետից գրություն է ստացել Աբովյանին արված շնորհի մասին, գրված է 1830-ի հունիսի 24-ին։[3] Ալամդարյանը այդ ժամանակները եղել է Թիֆլիսում։

Հարց է ծագում— ի՞նչ է արել, ո՞րտեղ է եղել Աբովյանը այդ կես տարին, հաշված այն օրից, երբ կաթողիկոսից կոնդակ ստանալով՝ ազատված է եղել Էջմիածնում զբաղեցրած պաշտոնից։ Շահազիզը բավականանում է ասելով, որ Աբովյանը «օրեցօր անհամբեր սպասել է Պարրոտի նամակին»։[4]

---

[1] Fridrich Parrot «Reisi zum Ararat». 1834.

[2] Ե. Շահազիզ, էջ 14։ Ի միջի այլոց նկատենք, որ Ն. Տեր-Կարապետյանի գրած կենսագրության մեջ այս շրջանի վերաբերյալ ոչ մի թվական տվյալ չկա (տես՝ էջ 29—31)։

[3] «Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 267։

[4] Ե. Շահազիզ, էջ 14։

440—16

Աբովյանի արխիվում եղած մի շարք փաստաթղթեր հնարավորություն են տալիս ինչ-որչափով պարզել մեզ զբաղեցնող հարցը:

Պահպանվել են Աբովյանին հասցեագրված Մսեր Մսերյանցի մի քանի նամակները:

Մսերյանցը, որ Լազարյան ճեմարանում եղել է կրոնի և հայոց լեզվի դասատու, գրել է մի շարք կրոնական, պատմագիտական և բանասիրական ուսումնասիրություններ, հրատարակել գրաբար լեզվով «Ճռաքաղ» ամսագիրը, մագիստրական գիտական աստիճանին հասել, Աբովյանի էջմիածնական մտերիմներից է, նրա ուսակիցը, Աբովյանի նման դպիր և ոչ պակաս չափով հալածված էջմիածնի միաբանության կողմից: Թեև իրենց կյանքի ամենահասուն տարիներին Աբովյանը և Մսերյանցը շատ տարբեր՝ առաջինը դեմոկրատական, երկրորդը՝ ռեակցիոն ճանապարհներով գնացին, բայց մինչև Աբովյանի Դորպատ մեկնելը և մեկնելուց հետո էլ, դեռ առաջին տարիներին, նրանց միացնում էր մի կողմից հալածական ճակատագիրը, մյուս կողմից՝ այն ձգտումները, որ ծրագրում էին նրանք իրենց ապագա գործունեության մասին:

Շահազիզը, ինչպես ցույց են տալիս «Դիվանի» ծանոթագրությունները, տեղյակ է եղել Մսերյանցի նամակների գոյությանը, նրանցից մի քանիսը տեղավորել է իր կազմած «Դիվանում»: «Դիվան»-ում գրված է. «Աբովյանի արխիվում գտնվում են Մսերի մի շարք նամակները, որոնք բոլորն էլ առլցված են մտերիմ բարեկամական սիրով՝ Աբովյանի անձի հանդեպ»:[1] Սակայն, ինչպես երևում է, Շահազիզն ուշադրություն չի դարձրել կամ պարզապես նրա աչքից վրիպել է երկու նամակ, որոնց թվական տվյալները, ապա նաև թվարկության մեջ եղած մանրամասնությունները, պետք է որ հետաքրքրեին, զբաղեցնեին նրան:

Բերենք այդ նամակների թվագրությունը. ահա մեկը՝ «Ի 1 յունուարի, 1830 ամի ՚ի սբ. Էջմիածին». ահա և մյուսը՝ «Ի 20 մարտի 1830 ամի ՚ի սբ. Էջմիածին»:[2]

Նշանակում է, այդ ժամանակները, այսինքն՝ 1830-ի հունվար և մարտ ամիսներին Աբովյանը Էջմիածնից բացակայել է: Իսկ ո՞րտեղ է եղել: Նամակը հնարավորություն է տալիս այդ էլ պարզելու: Մարտի 20-ին գրած նամակում Մսերը խնդրում է Աբովյանին՝ ողջունել Առաքելին, որի հետ մի սենյակում է ապրում

---

1 «Դիվան Խաչատուր Աբովյանի». էջ 273:

2 Աբովյանի արխիվ, № 286:

նա։ Անկասկած, խոսքը վերաբերում է Առաքել Արարատյանին։ Իսկ Արարատյանը, ինչպես հայտնի է, Թիֆլիսումն էր ապրում։

Ուրեմն՝ այդ ժամանակները Աբովյանը եղել է Թիֆլիսում։

Մոտավոր մի հետք էլ կա Աբովյանի դորպատյան օրագրերում։ Իսկ այդ օրագրերը, ինչպես արդեն ասացինք, բավական լավ ծանոթ են Շահազիզին։ Վերհիշելով Դորպատ մեկնելու նախօրյակը, հալածանքը, Պարրոտից նամակ ստանալը և այլն, Աբովյանը գրում է— «Ի Թիֆլիս ստացեալ զնամակս զայս»...[1]

Ահա հետքեր, որոնցից կառչելով՝ բանասերը պետք է շարունակեր պրպտումներ կատարել, մինչև որ գտներ Աբովյանի՝ Թիֆլիսում գտնվելու մասին լրացուցիչ տվյալներ։

Եվ իսկապես կա մի փաստաթուղթ, որը մի կողմից հաստատում է, որ Աբովյանն իսկապես Թիֆլիսումն է եղել, մյուս կողմից որոշ գաղափար տալիս այն օրերի մասին, որ Աբովյանը անց է կացրել Թիֆլիսում։ Խոսքը վերաբերում է „Поездка к развалинам Ани“ ուղեգրական ակնարկին, որից մի այլ կապակցությամբ քաղվածաբար օգտվեցինք։

Մենք արդեն տեսանք, որ այն բանից հետո, երբ Աբովյանը համարձակություն ունեցավ հրաժարվելու հոգևոր կոչումից, նրա նկատմամբ եղած հալածանքը ծայրահեղ չափերի հասավ։ Բնական է, որ Աբովյանն օր առաջ պետք է գլուխն առներ ու փախչեր, որովհետև, ինչպես պատմում է, միաբանությունը սպառնացել էր նրանց, ովքեր կհամարձակվեին նույնիսկ բարևել նրան։

Աբովյանը, ինչպես քիչ հետո կտեսնենք, Թիֆլիս ճանապարհվել է 1829-ի դեկտեմբերի 5-ին։

Տեսնենք ի՛նչ մանրամասնություններ կան „Поездка к развалинам Ани“ ուղեգրական ակնարկում Աբովյանի կյանքի այս շրջանի մասին։

«5-го декабря 1829-го года столь достопамятного в жизни моей бесполезной, в суровую зиму, в тумане и снегу, с растерзанною душою я покинул и родину, и родителей, живущих и теперь во 20 верстах от Эчмиад[зина.] с которыми я не мог ни видеться, ни проститься, дабы не быть свидетелем их терзаний и слез и, может быть, по сыновней любви к ним, столь сильно кипящей и теперь во мне, не удерживаться от однажды предпринятого мною пути. Арарат и Алагез, святыни праотцев наших, свидетели тогдашних моих слез и стенаний и теперешних моих к ним бла-

[1] Աբովյանի արխիվ, № 16 ա։

теговений и преданности; но есть и живой свидетель этих сцен и происшествий со мною и в Эчмиадзине[,] и в Тифлисе. Здесь известный своею ученостью архиепископ Иоаннес Шахатуни, там учитель арм[янского] языка при гимназии Г. Араратов, друг и товарищ юных лет из деревни Шагриара, в 8 вер[стах] от Сардарабата, где жил тогда первый у родных, старался он утирать мои слезы и успокаивать меня отцовскими наставлениями, в Тифлисе утешал и часто накармливал, боясь монахов,[1] будучи тогда учителем в их училище, другой в продолжении четырех безнадежных мучительных месяцев, где часто и в насущном хлебе, и в щепочках нуждался я, чтобы утолить голод и согревать окостенелые от холода члены, пока наступило райское утро жизни моей радостным письмом Паррота. Этого письма на весь мир не променю!

Дорога шла через Сардарабат и Александрополь с ужасом и внутренним и наружным от суровости зимы, что в этом городе и на горах наших хуже и жесточе российской. Спутник мой, некто штаб лекарь Т.[,] которому не менее указывал пред тем, в продолжение трехгодичного знакомства с ним и в Эчмиадзине, и в Эривани, и в Канакире, родной деревне, куда и теперь переходит летом госпиталь Эрив[ани] услуги дружеские. Тот же, у которого я в чуме спал в Сардарабате, и с лекарством, и с чумою вышел от него, лишь бы спасти старика, моего благодетеля, от жестокой боли глаз, мучил грабил меня, ругал и оскорблял все святыни Армении, с которою он навек простился и где воспользовался он во все время своего пребывания одним добром, одною дружбою и оттуда выгнан был по причине дурного поведения и характера. Один патриарх и эчмиадзинские монахи подарили ему при мне, их единственном переводчике, несколько драгоценных перстней и табакерок, платков и парчей. И этот человек ругал при мне мое отечество, который слезы проливал перед патриархом и монахами при получении подарков. И этот человек грабил меня, похитив у бедного, неопытного юноши, как я тогда был, и 10 рублей сереб[ром], данных мне вроде милостыни от Патриарха чрез своего секретаря, о котором уже говорил, и шубу, драгоценнейшую памятницу столь ужасных дней; что же говорить о 74-х-дневном карантине, держанном нами в тогда суровом, разоренном Гумре[2] и теперь оживленном Александрополе, где и 10-ти летние сухари солдатские со времени турецк[ой] и персидской кампаний за благо неба почитали[,] лишь бы достать, где могли бы быть все жертвою голода и стужи, если не явился бы к нам, опять,

1 Բնագրում՝ монахов:

2 Բնագրում՝ Губре:

купец из Арм[ении] турецкой с запасом большим, с одеждами теплыми и с сердцем добрым и сострадательным. И этот человек, спасшийся опять через гайканца, проклинал Гайканию, чего же ожидать от других, к чему оскорбляться нам пустословиями некоторых безжалостных сердец, представлявших и представляющих гайканцев в таком виде, какого ни одна нация на свете не видала, не слыхала![1]

Ի՞նչ նոր կողմեր է պարզում այս հատվածը։

Առաջին. ե՞րբ է մեկնել և ճանապարհին ի՞նչ փորձանքների է հանդիպել։

Երկրորդ. Աբովյանի նկատմամբ սկսված հալածանքը շարունակվել է նաև Թիֆլիսում, ինչպես և այն, որ Թիֆլիսում քաղցած օրեր շատ է անցկացրել։

Երրորդ. ո՞վքեր են նրան բարեկամությամբ շրջապատել Թիֆլիսում։

Չորրորդ. ո՞րքան ժամանակ է մնացել Թիֆլիսում։

Հինգերորդ. Թիֆլիս մեկնելիս չի հանդիպել ծնողներին. այս ցույց է տալիս, թե իրոք որքան շտապելիս է եղել։ Հետո. երկյուղ է ունեցել, որ շատ սիրելով ծնողներին և մնաս-բարովի ժամանակ տեսնելով նրանց արցունքները, կարող է փոխել որոշումը և չգնալ։ Ի միջի այլոց նկատենք, որ մի այլ, դարձյալ չհրատարակված գործում[2] տանից նոր հեռացած և Պետերբուրգ հասած Աբովյանը ծնողների և հայրենիքի նկատմամբ ունեցած կարոտը շատ սրտառուչ նկարագրությամբ է տվել։

«Տակավին իբրև երազի շրջիմ, տակավին աչք իմ ո՛չ ցամաքին յարտասուաց, և շրթունք իմ, ի հառաչանաց, զոր սէր ձէր և կարօտութիւն հանեն, ճնշեն, ի սրտէ իմմէ։

Այլ զի՞նչ ասեմ. ո՛չ ես ցանկայի այնպէս կաթոգին թողուլ զձեզ և գալ աստ։ Զի՞նչ այս փոփոխութիւն կամաց և մտաց։ Ընդէ՞ր ո՛չ ձայն երաժշտութեան, ո՛չ տեսարանք և թատրոնք զորս յամենայն աւուր կարելի է տեսանել և զուարճանալ. ո՛չ դիւրացուցանեն զսիրտ իմ ցաւալից։ Ընդէ՞ր միշտ ձեր քաղցր զսիրտ իմ ցաւալից։ Ընդէ՞ր միշտ ձեր քաղցր կերպարանք ներկայանան մտաց իմոց յամենայն քայլս, յամենայն շարժմունս։ Ընդ՞էր ի

---

[1] *Աբովյանի արխիվ, № 23։*

[2] *Աբովյանի թղթերի մեջ պահվում է մի անխորագիր մատյան, որի մեջ արձակ և չափածո, ինքնուրույն և թարգմանական գործեր կան, մեծ մասը դեռ չհրատարակված։ Այդ մատյանում պահպանվել է «Ի վերայ հայրենասիրութեան» գրվածքը, որից մեջբերում ենք անում։*

լինելն իմ այդր ո՛չ ճանաչէի զգին բաղադրութեան իմոյ։ Ո՞ տայր ինձ թերևս միւս անգամ թռչել առ ձեզ, և հեղուլ ի ծոց ձեր զարտօսր իմ ջերմին. պատմել ձեզ զկարօտամաշ վիճակ ցաւագին իմ հոգւոյ։ Երկինք օտարք զրկեն զիս, ի ձէնջ տարածութիւն անհնարին խլէ զտեսութիւն ձեր յինէն։ Ընդէ՞ր ո՛չ դարձուցի զսայլ իմ, իմ միջոյ ճանապարհին առ ի միւս անգամ փարել զքաղցր լանջօք ձերովք։ Ո՜հ՝ ես բազմիցս կամեցայ զայս. այլ օտար սայլորդն միթէ զգա՞յր զվիճակ դառնավարեան սրտիս. զի կատարիցէր զհրամանս իմ։ Ննջեմ թէ յառնում, աստ արձանանան ինձ վայրք չքնաղատիպ սիրելի հայրենեաց իմոց. մայր իմ և քոյր կանգնին արտասուաթոր աչօք առաջի իմ. այլ ուրեք տեսանեմ զընկերս իմ և զհասակակիցս, որք, ի ներքոյ պայծառ երկնից աշխարհին մերոյ. առ կարկաչահոս աղբերօք խիք. կամ յատորոտս ծաղկազարդ լերանց. վայելեն զաւուրս իւրեանց խաղաղութեամբ, յորոց միջոյ ես միայն կամ զրկեալ և աստ՝ նոքա յայժմ երեկոյի դարձցին ի տուն, ուր մայր գորովագութ, եղբարք և քորք սիրով շրջաբոլորեացին զնա. այլ ես ո՞ւր վերադարձայց՝ եստն օտար՝ ի ժողովս անծանօթս, որոց կերպարանք և սիրտք գլխովին օտար են յինէն։ Ի մտածելն իմ զայս, սիրտ իմ պայթի, եթէ հնար իցէր արտասուօք կցել զայս նամակ այնպէս առաքէի առ քեզ»։[1]

Իսկ թե ինչ սրտաճմլիկ տեսարան է ներկայացրել իրենից Աբովյանի և նրա հարազատների բաժանումը, վկայում է դորպատյան օրագրերում պահպանված հետևյալ հատվածը.

«Անհնարին է ինձ նկարագրել զտեսարանն, ուր նազելի ծնողք փարեալ զինև աւելի ևս մահ իւրեանց ցանկային, քան զհեռանալն իմ ՚ի նոցանէ։

Ժամս բազումս անկեալ զպարանոցաւ միմեանց, միմիայն արտասուէաք, առանց տալոյ բարբառ ինչ։ Եղբարք իմ ՚ի սաստկութենէ ցաւոյ սրտի իւրեանց անիծանէին զճանապարհ իմ և մայր իմ ցանկայր ընդ իս կեալ և ընդ իս մեռանել։ «Տար զիս ընդ քեզ, ուր և երթաս, ես պատրաստ եմ տանել զամենայն ընդ քեզ, որդեակ իմ», ասէր գորովագութ կենսատուն իմ, ցուցանելով ինձ զբարերար ստինս իւր, որով սնուցեալ էր նա զիս։ Հազիւ հեռացեալ նոցա յաչաց իմոց, հոգի իմ կամէր ելանել, վասնորոյ բազմիցս վերադարձայ կրկին տեսանել զնոսա»։[2]

Վեցերորդ. այս հատվածում մի կենսագրական նորություն կա-

[1] Աբովյանի արխիվ, № 57։

[2] Նույն տեղ. № 16 ա։

մի փոքրիկ դեպք Աբովյանի կյանքից. թե ինչպես Եփրեմ կաթողիկոսին աչքերի ցավից ազատելու համար, սեփական կյանքը վտանգի ենթարկելով, Աբովյանը գնացել է դեղ բերելու Սարդարաբադից, որն այն ժամանակ ժանտախտով է բռնված եղել:

Վերջապես այս հատվածից պարզվում է, որ Աբովյանը Պարրոտի նամակը ստացել է ոչ թե Էջմիածնում, ինչպես գրված է Շահազիզի գրքում (նաև շատ ուրիշ կենսագրությունների մեջ), այլ Թիֆլիսում, այնտեղ եղած ժամանակը:

Նախ՝ Աբովյանը գրում է, որ ինքը չորս անհույս ամիսներ է Թիֆլիսում անցկացրել, մինչև որ Պարրոտի ուրախաբեր նամակը, ինչպես ինքն է ասում, իր կյանքի դրախտային առավոտն է բացել:

Կա և մի այլ, լրացուցիչ վկայություն:

Թիֆլիսից գալուց հետո Աբովյանը մի քանի նամակ է ուղարկել Ալամդարյանին: Երկուսը, որ միևնույն բովանդակությունն ունեն, պահպանվել են: Դրանցից մեկը հրապարակված է Շահազիզի կազմած «Դիվանում» (էջ 26—7): Մի նամակում, գրված մայիսի 28-ին, մանրամասնաբար պատմված են Էջմիածնում տեղի ունեցած դեպքերը, որ Աբովյանը լսել է Նիկողայոս Շմավոնյանից: Իսկ վերջինս ներկա է եղել նամակում նկարագրված դեպքերին: «Ուսումնակից իմոյ»— այսպես է կոչում Աբովյանը Շմավոնյանին: Նամակի վերջում էլ գրված է— «Զայս ամենայն ինքնին անձամբ անձին ցանկայր գրել առ ձեզ, հարազատն ձեր պարոն Նիկողայոս Շմավոնեանց» և այլն: Այդ Շմավոնյանը, Աբովյանի հետ միասին, սովորել է Ներսիսյան դպրոցում,[1] և, ինչպես երևում է, Ալամդարյանին նվիրված աշակերտներից է եղել: Աբովյանն ասում է, որ հետագայում նա խոստանում է «ամենայն յօժարութեամբ» Ալամդարյանին իրազեկ դարձնել այն ամենին, ինչ որ տեղի կունենա Էջմիածնում: Այս նշանակում է, որ Աբովյանին պետք է վերոհիշյալ Նիկողայոսը փոխարիներ, որովհետև ինքը բացակայելու էր: Ուրեմն՝ նրա մեկնելու հարցը արդեն վճռված էր:

Մի այլ, դարձյալ Ալամդարյանին հասցեագրված նամակում, ավելի որոշակի տվյալներ կան: Այդ նամակը գրված է մայիսի 23-ին: Նամակում պարզ ասված է, որ Էջմիածին վերադառնալը ոչ մի օգուտ չտվեց: Սինոդի անդամներից երկուսը արգելել են Ա-

[1] Աղ. Երիցյանց. «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հոգևոր դպրոցի». հ. Ա., Թիֆլիս, 1898, էջ 115:

բովյանին գրադարանից ոչ միայն օգտվել, այլև միաբանների միջոցով ստանալ իր ուզած գրքերը։ Այս ցույց է տալիս, որ թեև կես տարի, նույնիսկ ավելի էր անցել Աբովյանին նզովելուց, բայց հալածանքը դեռ շարունակվում էր։ Դրա ամենագլխավոր պատճառը անշուշտ այն է եղել, որ Դորպատ մեկնելու հարցը լուծվել էր Աբովյանի օգտին։ Անհավանական չէ, որ Աբովյանը Էջմիածնի գրադարանից մտադիր է եղել վերցնել այն գրքերը, որ հիշված են Պարրոտի նամակում. «Ձեզ հետ բերեք,— գրում է Պարրոտը,— Հայոց պատմության, մատենագրության և դավանության վերաբերյալ մի քանի գրքեր, հատկապես բառարան և ս. գիրք»։[1] Այդ նույն նամակում պարզ ասված է, որ միաբանները իրեն նախանձում են հաջող դիպվածի համար։ Հաջող դիպվածը Աբովյանի կյանքի այս շրջանում ոչ այլ ինչ էր, բայց եթե միայն ուսման հարցը։

Ահա մեկ ուրիշ տվյալ ևս։ Հունիսի 26-ին, երբ Աբովյանն արդեն Թիֆլիսում չէր, Ալամդարյանը նամակ է ուղարկել նրա անունով, ասելով, որ վաղուց Թիֆլիսի զինվորական գավառապետից մի գրություն է ստացել նրա համար արված շնորհի մասին։[2] Խոսքը Ստրեկալովի մասին է, որն ուղարկել է վերոհիշյալ թուղթը Ալամդարյանին, ինչպես և Վրաստանի թեմը ժամանակավորապես կառավարող Սիմեոն Բզնունուն, կազմելով այն Պասկևիչի մայիսի 29-ին գրված հրամանագրի հիման վրա։ Լիվենը Պասկևիչին Պետերբուրգից կարգադրություն ուղարկել է ապրիլի 23-ին։[3] Դրանից հետո, այն ժամանակ, երբ Պասկևիչը ստացել է հատուկ կարգադրություն նաև դրամի մասին (մայիսի 11-ին), նոր միայն, մայիսի 25-ին կազմվել է Ստրեկալովի անունով գրությունը։[5] Ալամդարյանը գրում է Աբովյանին, որ ինքը Ստրեկալովի թուղթը վաղուց է ստացել։ Կարո՞ղ էր պատահել, որ Ալամդարյանը, Աբովյանի անկեղծ բարեկամը, երկար պահեր մի այնպիսի գրություն, որի ուշացումը Աբովյանին արդեն հոգեկան մեծ ապրումներ էր պատճառել։ Հազիվ թե։ Բայց չէ՞ որ ինքն է գրում, թե ստացել է վաղուց։ Ի՞նչպես հասկանալ Ալամդարյանի այս վկայությունը։ Նշանակում է, Աբովյանը, դեռ Թիֆլիսում եղած ժամանակ, ար-

---

1 «Դիվան Խաչատուր Աբովյանի». էջ 263։

2 Նույն տեղ, էջ 267։

3 Աբովյանի արխիվ. № 564։

4 Նույն տեղ № 571։

5 Նույն տեղ. № 563։

գեն ստացել էր Պարրոտի նամակը, որին, ինչ խոսք, տեղյակ է եղել նաև՝ Ալամդարյանը, նամանավանդ, որ Պարրոտը նամակում խնդրել է Աբովյանին հավաստել Ալամդարյանին իր «սրտաբուխ հարգանքն ու շնորհակալիքը»։[1] Եվ, ըստ երևույթին, Ալամդարյանն էլ համոզել է Աբովյանին՝ այլևս զուր տեղ քաղցած օրեր չանցկացնել Թիֆլիսում, վերադառնալ Էջմիածին և սպասել այն պաշտոնական գրությանը, որը պետք է հաջորդեր Պարրոտի նամակին։

Հետո. Պարրոտի նամակը, գրված ապրիլի 4-ին, բնականաբար, պետք է ավելի շուտ հասներ Թիֆլիս, քան Լիվենի գրությունը, որ գրված է նույն ամսի 23-ին։

Կա և մի այլ հանգամանք։ Սարեկալովի թուղթը անթվակիր է։ Բայց այն, բոլոր դեպքերում, պետք է գրված լինի մայիսի 25-ից հետո։ Ե՞րբ է դուրս եկել Աբովյանը Թիֆլիսից և կարո՞ղ էր արդյոք ստանալ այնտեղ Պարրոտի նամակը, որը գրվել է ապրիլի 4-ին։ Թիֆլիսից վերադառնալուց հետո, Ալամդարյանին գրած առաջին նամակում Աբովյանն ասում է, որ ինքը գալուն պես չի կարողացել գնալ Էջմիածին և գնացել է մի շաբաթ հետո։ Նամակը գրված է մայիսի 23-ին։ Նշանակում է՝ նա Երևան կամ Քանաքեռ հասել է մոտավորապես մայիսի 15-ին։ Իսկ մի քանի օր դրանից առաջ էլ պետք է նա ճանապարհված լիներ Թիֆլիսից։ Նշանակում է, Սարեկալովի գրությունը Ալամդարյանը ստացել է մոտավորապես այն ժամանակները, երբ Աբովյանը վաղուց Թիֆլիսում չէր։ Իսկ եթե ճիշտ է, որ Աբովյանը Թիֆլիսից դուրս է եկել մոտավորապես մինչև մայիսի 15-ը, ապա ազատ կարող էր ստանալ Դորպատից ուղարկված նամակը։

Կա և մի այլ տվյալ— Արարատյանի 23 հունիսի 1830 թվակիր նամակը։ Նախ՝ պարզվում է, որ մայիսի 17-ին Արարատյանը Էջմիածին՝ Ղրիմեցու անունով, Աբովյանին նամակ է ուղարկել։ Նշանակում է, մայիսի 17-ին Աբովյանն արդեն Թիֆլիսում չէր։ Իսկ, ինչպես արդեն գիտենք, Սարեկալովը Պասկևիչից գրություն ստացել է մայիսի 25-ին, այն ժամանակ, երբ Աբովյանը Թիֆլիսից բացակայում էր։ Հետո. Արարատյանի նամակը սկսվում է այսպես. «Յայսմ իսկ ժամու ընկալա զթուղթդ և ուրախ եղե յանձնիմ, զի աճապարեցէք գալ ընդ աճապարել և բաղդի ձերոյ»։[2] Արարատյանն ասում է, որ չի պատրաստվում պատասխանել Աբովյանի նամակին, քանի որ շատ շուտով Թիֆլիսում նորից պետք

[1] «Դիվան Խաչատուր Աբովյանի». էջ 263։
[2] Նույն տեղ. № 222։

է հանդիպեն: Աբովյանն իր ընկերոջը տեղյակ է դարձրել այն պաշտոնական գրությանը, որն արդեն հիմք էր տալիս ճանապարհվելու: Նշանակում է, Աբովյանը Թիֆլիսում պաշտոնական գրություն ստացած չի եղել, այլապես այդ արդեն հայտնի կլիներ նաև Արարատյանին, որի տանը ապրում էր:

Եվ վերջապես, այս ենթադրությունը հաստատող մի տվյալ էլ գտնում ենք Աբովյանի դորպատյան օրագրերում: Մի օր Աբովյանը վերհիշում է այն ամենը, որ նախորդել է իր Դորպատ մեկնելուն: Ահա այդ նույն հատվածում, նա ասում է, որ, ստանալով այս նամակները, ինքը վերադարձել է ծնողների մոտ՝ նրանց օրհնությունը ստանալու:[1] Աբովյանը չի ասում, թե իր խոսքը ինչ նամակների մասին է: Բայց դրանից մի փոքր առաջ բերված են Պարրոտի որոշ արտահայտությունները, որ հիշեցնում են նամակը: Սա իրավունք է տալիս կարծելու, որ խոսքը վերաբերում է Պարրոտի նամակին:

Բացի այդ, կա և մի այլ, անուղղակի վկայություն նույն այս հատվածում: Աբովյանն ասում է, որ ինքը Թիֆլիսից վերադարձավ ծնողների օրհնությունը ստանալու համար: Ուրեմն՝ մեկնելու հարցը արդեն վճռված էր Աբովյանի համար:

ԴԵՊՔԵՐ ԵՎ ԴԵՄՔԵՐ ԱՅԴ ՇՐՋԱՆԻՑ

Քիչ առաջ բերված նոր նյութերը պարզեցին, թե որտեղ է եղել Աբովյանը 1829-ի դեկտեմբերի 5-ից մինչև հաջորդ տարվա մայիսի առաջին օրերը: Բավական ընդհանուր ձևով հայտնի են, թե ինչ նպատակով է նա գնացել Թիֆլիս և ինչ ծանր օրեր անցկացրել այնտեղ: Այժմ, բնականաբար, պրպտումները հնարավորին չափ պետք է պարզեն այդ շուրջ կես տարվա կյանքի առանձին մանրամասնությունները:

Ի՞նչ է արել նա Թիֆլիսում եղած ժամանակը:

Նախ՝ մեջ բերենք մի փաստ. Աբովյանի արխիվում պահվում է մի տետր, որը պատկանում է Աբովյանի աշակերտ Շահնազարյանին: Ի թիվս ուրիշ նյութերի, նրա մեջ արտագրված է Աբովյանի «Յազատութիւն Հայաստանեայց» խորագրով բանաստեղծությունը, որի տակ նշանակված է «՝Ի 19 յունվարի 1830 Կարին»:[2] Ձեռագիրը Աբովյանին չի պատկանում: Իսկ այն ամսաթիվը, որ նշա-

---

1 «Դիվան Խաչատուր Աբովյանի», № 16 ա.

2 Աբովյանի արխիվ, № 157.

նակված է թվագրության մեջ, իրավունք չի տալիս մտածելու, որ այդ բանաստեղծությունը կարող է Աբովյանը գրած լինել, քանի որ այդ ժամանակ նա Ալեքսանդրոպոլումն է եղել: Նա էջմիածնից դուրս է եկել դեկտեմբերի 5-ին և, իր ասելով, 75 օրվա չափ ստիպված, կարանտինի պատճառով, մնացել է Ալեքսանդրապոլում: Մինչդեռ բանաստեղծությունն իր բովանդակությամբ, հախուռն թափով, անձնական հատկանիշներով կասկած չի թողնում, որ Աբովյանի գրչի տակից է դուրս եկել:

Այս թվագրությունը մեզ մի պարզ թյուրիմացություն է թվում: Աբովյանի փաստաթղթերի մեջ այդպիսի «սխալներ» քիչ չեն: Օրինակ՝ նրա տետրերից մեկում մենք հանդիպել ենք «Գարուն» խորագրով բանաստեղծության, որը, ինչպես թվագրությունն է ցույց տալիս, գրվել է 1830-ի ապրիլի 4-ին, բայց Դորպատում:[1] Մինչդեռ հայտնի է, որ նա 1830-ի ապրիլին Թիֆլիսումն է եղել: Իսկ ոտանավորի բովանդակությունն իսկապես վերաբերում է Դորպատում ապրած առաջին գարնանը: Պարզ է, որ 1831-ի փոխարեն, մեքենայաբար գրել է 1830: Մի այլ օրինակ. Պատկանյան եղբայրներին ուղարկած 19-ը դեկտեմբերի 1830 թվակիր նամակից[2] այնպես է ստացվում, որ Աբովյանը 1830-ի օգոստոսի 13-ին Դորպատից իրենց նամակ է ուղարկել, որի մեջ պատմված է ոչ միայն ինչպես է տեղ հասել, այլև ուսման մեջ արած առաջին ոտնափոխը: Իսկ, ինչպես հայտնի է, Աբովյանը Դորպատ հասել է միայն սեպտեմբերի 3-ին: Օգոստոսի 13-ին նա ճանապարհին է եղել: Պարզ շփոթմունք է և ուրիշ ոչինչ: Նման մի թյուրիմացություն է, մեր կարծիքով, վերոհիշյալ բանաստեղծության թվագրության մեջ Կարինի հիշատակումը ևս:

Այժմ տեսնենք, թե Աբովյանը Թիֆլիսում ի՞նչ է արել իր գործի համար:

Պարզվում է, որ Սարևկալովը հունվարի 16-ին դիմել է Պասկևիչին:[3] Իսկ սա փետրվարի 5-ին գրություն է ուղարկել Պետերբուրգ՝ լուսավորության մինիստրին:[4] Ուրեմն՝ Աբովյանը Թիֆլիս հասել է այն ժամանակ, երբ Սարեկալովը արդեն դիմել էր, բայց

[1] Աբովյանի արխիվ, № 17:
[2] «Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 280:
[3] Աբովյանի արխիվ. № 563:
[4] Նույն տեղ. № 561:

համենայն դեպս նախքան Պասկևիչի կողմից գրությունն ուղարկելը: Մեզ ստույգ հայտնի չէ, թե ե՛րբ է իսկապես Աբովյանը Թիֆլիս հասել: Հավաստապես կարելի է պնդել այսքանը միայն. փետրվարին նա արդեն Թիֆլիսումն է եղել, գուցե և ամսվա սկզբներին, որով և պարզվում է, որ 75 օր Ալեքսանդրոպոլում մնալը չափազանցություն է:

Աբովյանը այցելել է Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ Ստրեկալովին: Նրա նպատակն է եղել հետաքրքրվել, թե ինչ ընթացքի մեջ է իր գործը: Տեղեկանալով, որ Ստրեկալովը դիմել է Պասկևիչին, Աբովյանը շտապում է հետևյալ խնդրագիրը ուղարկել նրան:

Его сиятельству
господину генерал-фельдмаршалу, е. и. в. генерал адъютанту главнокомандующему в Грузии и разных орденов кавалеру
Ивану Феодоровичу графу
ПаскевичуЕриванскому

Эчмиадзинского патриаршеского монастыря диакона
Хачатура Опоева

ПРОШЕНИЕ.

В прошедшем 1829 году прибыл в Ечмиадзин из Лифляндии Дерптского университета профессор Паррот с товарищами своими, для осмотрения вершин Араратских гор, но как им не были известны удобнейшие места для свободного прохода—на оные,—то я для указания и препровождения был командирован Ечмиадзинским армянским святейшим Синодом, то коль возвратился с ним благополучно, пожелав для образования себя отправиться вместе с ними в Московский или Санкт-Петербургский императорский университет; хотя же они обещались с таковом желании моем на отправление в университет ходатайствовать лично в здешнего высшего начальства, как объявлено мне и господином тифлисским военным губернатором генерал адъютантом и кавалером Стрекиловым, что по просьбе того профессора учинено представление вашему сиятельству, однако же я ожидаемого счастия и поныне не получаю.

А потому приемля смелость прибегнуть к стопам вашего сиятельства осмеливаюсь всенижайше просить: об отправлении меня в Московский

или Санкт-Петербургский университет для изучения российской грамоты и других наук чем самым осчастливете меня навеки учинить начальническое распоряжение.—Прошение писал со слов просителя 14 класса Гумальковский.

Диакон Эчмиадзинского монастыря Хачатур Апейов.[1]

31 марта 1830 г.
г. Тифлис

Թիֆլիսում Աբովյանը գեղեցիկ ձեռագրով պատրաստել է 1826-ին Երևանում գրված «Խնդամիտ զգացմունք երախտագետ Հայկազնոյ վասն ազատութեան հայրենեաց իւրոց» խորագրով բանաստեղծության երկու օրինակից,[2] տարբեր չափով և տարբեր ձևավորմամբ։ Անհավանական չէ, որ նա միտք հղացած լինի իր խնդրագրի հետ միասին այդ ևս նվիրաբերել Պասկևիչին, նամանավանդ, որ Աբովյանի այդ չափածոյի մեջ գովերգված է ռուս պետականությունը, ինչպես և ինքը՝ Պասկևիչը։ Իսկ մի օրինակի վրա նա խորագիրը պարզապես փոխել է, հիշելով Պասկևիչին և այլն։

Անցնենք մի ուրիշ հարցի. ի՞նչ շրջապատ է ունեցել Աբովյանը Թիֆլիսում։

Աբովյանի արխիվում պահպանվել է մի թուղթ, որ պարզում է մի անհայտ և միաժամանակ հետաքրքրական մանրամասնություն։ Նախ բերենք փաստաթուղթը։

ԽՆԴՈՒԹԻՒՆ ԻՄ

Պատմութեան այլ ո՛չ կարօտիմ, ըստ որում դուք ինքնին վկայէք ճշմարտութեանս թէ ո՛րքան զգալի են ինձ բանք Ձեր, ո՛րքան նրբին, ո՛րքան թափանցօղք, այնքան հոգեխառն մինչև յընթեռնուլ իմում զիւրաքանչիւր տողս, զիւրաքանչիւր բանս, նաև զբառս իսկ, զարտասուս ջերմագինս հոսեալ առատանամ ի բանս և յօրհնութիւնս զձեզ, զհոգւոյս մխիթարութիւն։ Ասա՛ ինձ՝ նազելի իմ։ Միթէ այս տաղտապանք իցեն զմիմեամբք, միթէ այս ջերմութիւն, միթէ այս հոգեկապ զուգակցութիւն՝ որք տագնապ և տարակոյս ուղեգնացութեանց իմոց, որքան ես սրտագիր առ այն

---

[1] Աբովյանի արխիվ, № 513։ Աբովյանի ուսման մեկնելու հետ կապված այս և նման մի շարք փաստաթղթեր Թիֆլիսի արխիվներից հայտնաբերել է ընկ. Ենիկոլոպովը։

[2] Նույն տեղ, № № 81, 84։

Ճկրտիմ այնքան ոտս յետս կասեալ՝ գնամ և մնամ, մնամ և գնամ։

Բաժանիմ հեռանամ՝ այս լոյս իմ աչաց՝ այլ անբաժան
անանջատ առ քեզ իմ

Գամ առ քեզ

Աղաչեմ զհարաւ՝ Ձեզ լինիլ կենսաբեր՝ և ես երբ եկեց՝
ի հիւսոյ

Գամ առ քեզ։

Կալցէ՛ ձեռն ա՛յն նաւեան՝ Արեւուգ զհորիզոն՝ ես ուր և
շրջեցայց, այլ անդրէն

Գամ առ քեզ։

Թէ անխև օրհասին՝ մեղմընթաց ուղղեսցին, յեւրոպեան ՝ի
ծոցում ո՛չ մնամ

Գամ առ քեզ։

Թո՛ղ լուծցին իմ աւուրք՝ Ձեր աւուրց փոխանակ՝ թող
յայնժամ ես մեռայց, մինչ դարձեալ

Գամ առ քեզ։

Կա՛ց մնա՛ կենդանի. կա՛ց մնա՛ ի՛րև իմ՝ ես ո՛հ [.....]
Անջի՛նջ պահեալ զյաւիտենից յիշատակ Ձեր,
Ձիմ խորհրդարանի կամ և մեռանիմ ՝ի Ձեզ՝ խնդրելով
և աղերսելով զՁեզ մանաւանդ
Մի՛ անտես առնել զերբեմնակի յիշատակութեամբ ձեզ
զպարտակիցն Ձեր

Զամենախոնարհ ծառայս Ձերդ անգին եղբայրութեան
ԶԽԱՉԱՏՈՒՐ ԱՆՏՕՆԵԱՆ ԱԲՈՎԵԱՆ[1]

1830
ապ. 20
՚Ի Տփխիս

Ի՞նչ է պարզվում այս փաստաթղթից։

Մինչև հիմա հայտնի էր, որ Աբովյանը Թիֆլիսում շփման մեջ է եղել իր նախկին ուսուցիչ Ալամդարյանի և Ներսիսյան դպրոցում իր հետ աշակերտած, իսկ այդ ժամանակ նույն դպրոցում դասատու Արարատյանի հետ։ Ենթադրել, որ նա ուրիշ ծանոթներ էլ է ունեցել, թե՛ այն շրջանից, երբ Ներսիսյանում սովորում էր, թե՛ նոր, այդ ժամանակները ձեռք բերած, կարելի է և միանգամայն

[1] Աբովյանի արխիվ, № 197։ Արխիվում պահվում է Վարդան Աբովյանի ձեռքով արտագրված բանաստեղծությունների մի տետր (№ 70), ուր կա և այս նյութը, որից և օրինակված է մեր բերած տեքստը։

հնարավոր. անհրաժեշտ վկայությունների բացակայությունը թույլ չի տալիս կոնկրետացնել այդ ծանոթությունները և կապերը։

Այս նոր փաստաթուղթը ոչ միայն հաստատումն է մի այդպիսի շատ ընդհանուր ձևով տրվող ենթադրության, այլև հնարավորություն է տալիս, բանասիրության աչքից անտես պահվող վարագույրի գեթ մի փոքրիկ ծայրը բարձրացնել։

Պարզվում է, որ այդ ժամանակները Թիֆլիսում ապրելիս է եղել մեկը, որով Աբովյանը հափշտակված է եղել։ Եվ ինչպես այդ հատուկ է Աբովյանին, զգացումները ոչ միայն քնքուշ են եղել, այլև մի փոքր բուռն։ Նամակը, դժբախտաբար, հնարավորություն չի տալիս պարզելու աղջկա անունը, իմանալու, թե ով է նա։ Պարզ է, սակայն, որ կրթված աղջիկ է եղել, համենայն դեպս մեկը նրանցից, որ գրաբար է իմացել և կարողացել է այս բանաստեղծական նամակը կարդալ և հասկանալ, եթե, իհարկե, ուղարկել է։ Ըստ որում նկատենք, որ Աբովյանը կարող էր և աշխարհաբար գրել, նամանավանդ, որ այդ շրջանում, կամ ավելի վաղ նրա գրած սիրային երգերի այն հատ ու կենտ կտորները, որ պահպանվել են, աշխարհաբար են։ Նշանակում է նամակի հասցեատիրոջ համար գրաբարը մատչելի էր։ Նամակից կարծես երևում է, որ աղջիկը ևս նամակներ է գրել և այնքան հոգեխառն, որ յուրաքանչյուր տողը ջերմագին արցունքներ է պոկել։

Աբովյանը դիմելով աղջկան, ասում է, որ իր ոտը կախ է. գնում է և մնում, մնում է և գնում։ Հայտնի է, թե ինչպես ոչնչի առաջ կանգ չառնելով Աբովյանը ձգտում էր իր կյանքի գլխավոր նպատակին այդ շրջանում— ուսման։ Այս առաջին, թվում է թե, միակ փաստն է, որ վկայում է նրա ներքին պայքարը. գնա՞ հասնի իր նպատակին, թե՞ մնա և վայելի իր սերն ու երջանկությունը։ Այս ցույց է տալիս, թե որքան զորեղ զգացմունքներով է կապված եղել Աբովյանը մեզ անհայտ այդ աղջկա հետ։ Ի վերջո Աբովյանը, իհարկե, որոշում է մեկնել, գնալ, բայց առանց սիրուց հրաժարվելու։ Նա աղջկան պարտավորեցնում է հիշել իրեն, իսկ ինքն էլ երդում է կապում, որ ուր էլ գնա, ինչ էլ պատահի հետը, միևնույն է, վերադառնալու է, գալու է աղջկա մոտ։

Նամակը կարծես հիմք է տալիս կարծելու, որ Աբովյանին այդ ժամանակ, այսինքն՝ ապրիլի 20-ին, արդեն հայտնի է եղել, որ ինքը մեկնելու է Դորպատ։

Այժմ փորձենք պարզել, թե էլ ո՞վքեր են եղել Աբովյանի շրջապատում։

Արարատյանի 21 ապրիլի 1831 թվակիր նամակը,[1] գրված Թիֆլիսից, Աբովյանին, մի որոշ չափով օգնում է պարզել այդ հարցը։

Թիֆլիսում Աբովյանին շրջապատած մարդկանցից մի քանիսի անունները հիշված են Արարատյանի այդ նամակում։ Օրինակ՝ Սոլոմոն Տեր-Ղուկասյանց, որ Արարատյանի ասելով «Հայասէր և հայրենասէր հայազուն բժշկապէտ» այսինքն՝ նա, որ, ինչպես հայտնի է, օգնել է Նազարյանին Դորպատ մեկնելու։ Տեր-Ղուկասյանցը, ինչպես երևում է, շատ մոտ չի եղել Աբովյանին, բայց անձամբ ճանաչել է նրան, լավ ցանկություններով լցված եղել դեպի նա, ուրախացել նրա հաջողություններով և որպես ավելի հասակով, արդեն կյանք մտած և իր համար դիրք ստեղծած մարդ, Արարատյանի միջոցով հարկ է համարել խորհուրդներ տալ ուսանողության մեջ գտնվող Աբովյանին։

Արարատյանի նամակում հիշատակված են նաև Աբել Գուրգեն-Բեկյանցը։ Երիցյանը սրան անվանում է «Թիֆլիսի այն ժամանակվա ազգասեր երիտասարդներից մեկը»։[2] Վերջինս մեր բանասիրական գրականության մեջ հայտնի է Քիշինևում գտնվող Ալամդարյանին Թիֆլիսի մի խումբ երիտասարդների անունից ուղարկված նամակով, ուր բարձրացված է թատրոն կազմակերպելու խնդիրը։[3] Արարատյանի ասելով Գուրգեն-Բեկյանցը չի մոռացել Աբովյանին, ասել է իրեն, թե որքան շատ է սիրում նրան, և ցանկություն հայտնել, նամակագրություն պահպանել հետը։[4]

Եվ վերջապես՝ Արարատյանի նամակում հիշված են Ալթանդիլյան եղբայրները, որոնց սիրո ողջույն է ուղարկած եղել Աբովյանը Արարատյանին գրած նամակում։ Իր այս նամակի հետ Արարատյանը ուղարկում է նաև նրանց գրածը։ Ե. Շահազիզը գրում է. «Հիշված Ալթանդիլյանները երկու եղբայր են եղել՝ Ջասլ և Սողոմոն. նրանք, ինչպես երևում է, նույնպես եղել են Աբովյանի դասընկերներից»։[5] Ներսիսյան դպրոցի առաջին շրջանավարտների ցուցակում, Ալթանդիլյան եղբայրները հիշատակված չեն։ Եղբայրներից միայն մեկը՝ Սողոմոնը նշված է Ներսիսյան դպրոցի այն աշակերտների հետ, որոնք դպրոց մտել են և միացել այն

[1] Աբովյանի արխիվ, № 227։

[2] Ա. Երիցյան, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի», հատոր I, էջ 256։

[3] Նույն տեղ. էջ 256։

[4] Աբովյանի արխիվ. № 227։

[5] «Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 284։

տասնմեկին, որ ավարտելուց հետո ցանկություն են հայտնել մնալ և շարունակել իրենց ուսումը,[1] այսինքն՝ այն ժամանակ, երբ Աբովյանն արդեն դպրոցն ավարտել էր և ճանապարհվել։ Սրա հետ միասին նկատենք, որ Աբովյանը և Սողոմոնը իրար ճանաչելիս են եղել դեռ 1826-ին (գուցե և ավելի վաղ), որովհետև այդ տարվա դեկտեմբերի 24-ին Աբովյանը Սողոմոնից նամակ է ստացել։[2] Աբովյանի արխիվում կան 1827 և 1828 թվերից նամակներ նույնպես։[3] Իսկ Զաալից, ավելի ճիշտ՝ Զաքարից Աբովյանի ստացած երկու նամակներն էլ վերաբերում են 1831-ին, այսինքն՝ ուղարկված են Դորպատ։ „Дражайший друг", „Любезнейший друг", այսպես է նա դիմում Աբովյանին։ Մի տեղ էլ նա Աբովյանին անվանում է „Старый друг", որից երևում է, որ վաղուց են իրար ճանաչում։ Եվ իսկապես, Սողոմոնի ամենավաղ շրջանի նամակներում հիշվում է Զաքար եղբայրն իր ջերմ ողջույններով։ Ինչպես երևում է, Աբովյանը մոտիկից կապված է եղել Ալթանգիլյան եղբայրների և ընդհանրապես նրանց ամբողջ ընտանիքի հետ։ Աբովյանի արխիվում պահպանվում են Սողոմոնի ավելի ուշ շրջանի նամակներից, որոնք գրված են արդեն Պետերբուրգից, ուր նա սովորում էր Պավլովյան կադետական կորպուսում։[5]

Արարատյանի 16 ապրիլի, 1831 թվակիր նամակում Ալթանգիլյանները դարձյալ հիշված են։ Հիշված է նաև մի հոգևորական, որին Աբովյանը ողջույն է ուղարկել։ «Յովհաննէս ավագէրէց առաջնորդարանիս ընկալեալ զիւր աջահամբոյր, օրհնէ զքեզ և գործս ձեռաց քոց»,— գրում է Արարատյանը Աբովյանին։[6]

Աբովյանի Թիֆլիսյան շրջապատը, իհարկե, այս մի քանի անուններով չի սպառվում։ Հետագա պրպտումները չենք կասկածում, որ նոր անուններ էլ կհայտաբերեն։ Բայց այդ քիչ է. պետք է ջանք թափել պարզելու, թե ո՛վքեր են այդ մարդիկ, ի՞նչ հայացքների տեր, ինչպես և պարզել, թե ինչ հարաբերությունների և կապերի մեջ են եղել նրանք Աբովյանի հետ։

---

1 Ա. Երիցյան, «Պատմություն 75-ամյա գոյության Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի..., էջ 117։

2 Աբովյանի արխիվ, № 246։

3 Նույն տեղ, №№ 241, 243։

4 Նույն տեղ, №№ 239, 240։

5 Նույն տեղ, № 245։

6 Նույն տեղ, № 228։

ՆՈՐ ԷՋԵՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ ԿՅԱՆՔԻՑ

ԱԲՈՎՅԱՆԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Պետերբուրգում Աբովյանը եղել է մի քանի անգամ։ Հաստատապես հայտնի է երեքը— մեկ 1830-ին, երբ Դորպատ էր գնում, հետո 1834—35-ին, ապա Դորպատից վերադառնալիս՝ 1836-ին։ Առաջին երկու այցելությունների մանրամասնությունները պարզող որոշ փաստաթղթեր պահպանվել են։ Այսպես օրինակ, առաջին այցելության մասին գաղափար ենք կազմում Աբովյանի օրագրերի առաջին էջերից։

Երկրորդ այցելությամբ վկայող աղբյուրները բավական շատ են։ Ն. Տեր-Կարապետյանը, արխիվային նյութերը նայելիս, մի ոտանավորի թվագրությամբ պարզել է, որ Աբովյանը իր կյանքի դորպատյան շրջանում, 1834-ի դեկտեմբերի 22-ին եղել է Պետերբուրգում։[1] Սրա վրա նա կանգ է առել տողատակի ծանոթագրությամբ, ի միջի այլոց, վկա բերելով նաև Աբովյանի որդուն։ Իսկ թե ի՛նչ նպատակով է մեկնել, ի՞նչ է արել այնտեղ, ո՞ւմ է հանդիպել և ո՞րքան է մնացել, ըստ երևույթին, չի հաջողել պարզել կենսագիրը, գուցե և դրան բոլորովին հետամուտ չի եղել նա։ Նրան հայտնի է եղել միայն, որ Աբովյանը Եղնակ Կամսարականի խնդրով Պետերբուրգում արտագրել է աշխարհաբար լեզվով գրված իր մի քանի ոտանավորները։ Նկատենք, որ դեռ 1893-ին, այսինքն ավելի վաղ, քան Տեր-Կարապետյանը գրել է իր աշխատությունը, տպագրվել էր Աբովյանի գերմաներեն լեզվով գրված հոդվածներից մեկի հայերեն թարգմանությունը, որի թվագրությունից պարզ երևում է, որ 1835-ի փետրվարի 7-ին Աբովյանը եղել է Պետերբուրգում։[2] Զարմանալի է, որ այս փաստը Տեր-Կարապետյանի աչքից վրիպել է։ Աբովյանի կյանքի պետերբուրգյան շրջանի վե—

---

1 Ն. Տեր-Կարապետյան, էջ 75։

2 «Արարատ», 1893, № 16։

րաբերյալ փաստեր հաջողեց պարզել Շահազիզը,[1] որը, սակայն, չնայած իր ձեռքի տակ եղած տվյալներին, զարմանալի ժլատ է գտնվել և հազիվ կես էջ է հատկացրել Պետերբուրգում Աբովյանի անցկացրած օրերին:[2]

Երրորդ այցելությունը վկայող ոչ մի փաստաթուղթ չի պահպանվել, բայց այն, ի հարկե, հաստատ պետք է համարել, որովհետև Աբովյանը Պետերբուրգի վրայով միայն կարող էր Դորպատից հայրենիք վերադառնալ: Պետերբուրգում լինելով և լավ իմանալով, որ ինքը երկար տարիներ այլևս այդ քաղաքը ոտք չի դնելու, պետք է ենթադրել, որ նա այցելած կլինի իր ծանոթներին՝ հրաժեշտ տալու համար: Հետո. եթե ճիշտ է, որ հայրենիք վերադառնալով Աբովյանը Հովհաննես Կարբեցուն ներկայացել է «այլասեր դավանությանց» մինիստրի հանձնարարական նամակով, նշանակում է Պետերբուրգում անպայման կանգ է առել, որովհետև այնտեղ միայն կարող էր ստանալ վերոհիշյալ նամակը:

Ն. Տեր-Կարապետյանը մի ամբողջ էջ է հատկացրել՝ նկարագրելու, թե ինչպես Աբովյանը Պետերբուրգում հանդիպում է լուսավորության մինիստրին և կայսրուհուն: Վերջինս առաջարկում է նրան «լինել Պետերբուրգի Հնագիտական Ընկերության անդամ, որի համար տալիս է Աբովյանին մի փառավոր ոսկետառ վկայագիր»:[3] Տեր-Կարապետյանն ասում է, թե այդ մասին իրեն պատմել է Վարդան Աբովյանը: Վերջինս իր հոր կենսագրին ասել է, որ իր սեփական աչքերով տեսել է կայսրուհու տված վկայագիրը: 90-ական թվականներին, երբ Տեր-Կարապետյանը գրել է իր աշխատությունը, այդ վկայագիրը արդեն կորած է եղել: Սրա աղբյուրը Տեր-Կարապետյանի գիրքն է:

Ս. Քամալյանի գրի առած հիշողությունների մեջ էլ կա այդ մասին: Դումբերգը նրան պատմել է հետևյալը. Աբովյանը՝ Պետերբուրգում ներկայանալու էր լուսավորության մինիստրին շնորհակալ լինելու ստացած թոշակի համար: Ըստ որում Պարրոտը նրան տվել էր մի ծրար մինիստրի անունով: Դումբերգն ասում է,

1 Մեզ համար անհասկանալի է, թե ինչու Շահազիզը ինչպես կենսագրության մեջ (էջ 62), այնպես էլ «Դիվանում» (էջ 322), գրում է, որ Աբովյանը Պետերբուրգ մեկնել է 1835-ի հունվարի սկզբներին, երբ Տեր-Կարապետյանին հիմք ծառայած ոտանավորի տակ պարզ նշանակված է դեկտեմբերի 22: Մինչդեռ այդ փաստը Շահազիզին ծանոթ է:

2 Ն. Շահազիզ. էջ 62—63:

3 Ն. Տեր-Կարապետյան. էջ 82—83:

որ իրենք լսել են, թե ինչպես կայսրուհին ցանկացել է տեսնել Աբովյանին, ընդունել է և նախաճաշիկի էլ պահել:[1]

Դորպատյան օրագրերը հիմք են տալիս ենթադրելու, որ Աբովյանը ուրիշ անգամներ էլ է եղել Պետերբուրգում: Դժբախտաբար այդ մասին հաստատ ոչինչ հայտնի չէ:

Աբովյանի երկրորդ այցելությունը Պետերբուրգ անհամեմատ քիչ է լուսաբանված, չնայած իր կարևորությանը: Բերում ենք մի շարք փաստական նոր նյութեր, որոնք լույս են սփռում նրա կյանքի այս թեև կարճատև, բայց կարևոր շրջանի վրա:

Աբովյանի արխիվում Պետերբուրգին վերաբերող փաստաթղթերից մեկը գրաբար լեզվով գրված ոտանավոր է:[2]

Այդ անխորագիր բանաստեղծության մեջ Աբովյանը նկարագրում է, թե ինչպես ինքը, տարագիր որդին, հրագնատալ եռանդով, անհամբեր շտապում է դեպի քաջազանց ազգերի հայրենիքը: Միտքը ձգտում է դեպի գթառատ ծնողի մեծ քաղաքը: Ճանապարհին հանդիպում է բքախառն, ձյունախառն կատաղի հողմ: Նժույգները սլանում են առաջ: Սահնակն ընկնում է ահավոր փոսերի մեջ: Աբովյանը բացում է աչքերը. հեռվում երևում է հրաշալի տեսարան. ամպախառն գոլորշիների միջից երևում են լուսավոր ապարանքների կատարները, ոսկե արձանների գագաթները. նրանք փայլփլում են, շուք տալիս իրար և ժպտում: Մյուս կողմից երևում են նավերն իրենց դրոշակներով, որոնք ծածանվում են տիրաբար: Այստեղ շարունակվում է բուքը, իսկ այնտեղ երևում են Պետրակայանի լույսերը, որոնք վառվում են՝ քաշելով նրան դեպի իրենց:[3]

Աբովյանի այս բանաստեղծությունը թվագրված չէ: Կարո՞ղ էր այն գրված լինել 1830-ին, Դորպատի ճանապարհին, երբ առաջին անգամ Աբովյանը ոտք դրեց Պետերբուրգ: Ի հարկե, ոչ: Նախ՝ բանաստեղծությունից չի երևում, թե նա անծանոթ քաղաք է ոտք դնում: Նույնիսկ՝ ընդհակառակը: Երկրորդ՝ Աբովյանը նկարագրում է, թե ինչպես ճանապարհին ձյունախառն հողմի է ինքը հանդիպում: Իսկ, ինչպես հայտնի է, 1830-ին Աբովյանը ամառ ժամանակ է եղել Պետերբուրգում՝ օգոստոս ամսին, հետևապես՝ պետք է

---

[1] «Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին». կազմեց և ներածականներ գրեց Հր. Մուրադյան. 1941, էջ 102:

[2] Այս բանաստեղծության վրա մեր ուշադրությունը հրավիրել է ընկ. Ռ. Նանումյանը:

[3] Աբովյանի արխիվ, № 53:

գրած լինի կամ 1834—35-ին, կամ էլ՝ 1836-ին, որովհետև երկու դեպքում էլ Աբովյանը ձմռան ամիսներին է եղել Պետերբուրգում: Հավանականը պետք է համարել 1834—35-ը, որովհետև բանաստեղծությունը գրված է այն տետրում և այն ոտանավորների հաջորդությամբ, ուր Եղնակ Կամսարականի մասին հիշատակություն կա:[1]

Ինչո՞ւ է Աբովյանը Պետերբուրգ մեկնել: Նրա թղթերի մեջ պահպանվել է Ներսես Աշտարակեցուն ուղղված 1834-ի հունիսի 10-ի թվակիր նամակի սևագրությունը: Այդ նամակից պարզվում է, որ Աբովյանը մտադիր է եղել մի քանի ամսով մեկնել Պետերբուրգ կամ Մոսկվա ռուսերեն լեզվի ուսումնասիրության մեջ խորանալու համար:[2] Նա որոշել էր հոկտեմբերին մեկնել և մնալ մինչև հունվար ամիսը, բայց չի հաջողվել և ճանապարհվել է դեկտեմբերին:

Գերմաներեն լեզվով Աբովյանի գրած նամակների մեջ կան երկուսը, որ անավարտ են և անհայտ, թե ում են հասցեագրված: Դրանցից մեկի մեջ, գրված 1835-ի հունվարի 27-ին, Աբովյանն ասում է, որ յուրաքանչյուր մարդու համար հետաքրքիր է ծանոթանալ նման մի խոշոր մայրաքաղաքի հետ. «Ո՞վ չի զարմանա,—

---

[1] Ի միջի այլոց ասենք, որ հայտնի չէ, թե Աբովյանը երբ է Դորպատից Պետերբուրգ մեկնել: Դեկտեմբերի 22-ին նա արդեն Պետերբուրգում է եղել: Աբովյանի արխիվում (№ 505) գերմաներեն լեզվով գրված մի նամակ որոշ հիմք է տալիս Աբովյանը գրում է իր «Ամենասիրելի ընկերոջը» (թե ով է՝ հայտնի չէ)—«դու կզարմանաս, եթե լսես, որ ես կարճ ժամանակում, մոտավորապես հինգ շաբաթի ընթացքում չորս տարբեր բնակարաններում եմ ապրել, որոնք քաղաքի զանազան մասերում են գտնվում և այն էլ բավական հեռու միմյանցից»: Այս նամակը գրված է 1835-ի հունվարի 28-ին: Նշանակում է, դեկտեմբերի 20-ին կամ 21-ին նա արդեն Պետերբուրգ է հասած եղել: Թե քանի օր է նա կտրել ճանապարհին՝ հայտնի չէ. գիտենք, սակայն, որ 1830-ին Պետերբուրգից նա դուրս է եկել օգոստոսի 26-ին և Դորպատ է հասել սեպտեմբերի 3-ին, երեկոյան դեմ: Ուրեմն՝ մոտավորապես նա ճանապարհին եղել է ութ օր: Հայտնի չէ նաև, թե Աբովյանը որքան է մնացել Պետերբուրգում, երբ է այնտեղից վերադարձել: Շահազիզը, ըստ երևույթին, վերոհիշյալ նամակի վրա հենվելով՝ գրում է. «Երկու շաբաթով գնացել է Պետերբուրգ, բայց մնացել է հինգ շաբաթ» (էջ 62): Պետերբուրգում մնալու հինգ շաբաթը, ինչպես ցույց է տալիս վերոհիշյալ նամակը, հունվարի 28-ին է լրացել, մինչդեռ Աբովյանը փետրվարի 7-ին Պետերբուրգում է եղել, որովհետև այդ օրն է ավարտել Արարատի գագաթը բարձրանալու մասին իր գրած նոր վկայությունը գերմաներեն լեզվով: Ըստ որում ոչ մի հիմք չկա կարծելու, որ դրանից հետո էլ չի մնացել Պետերբուրգում:

[2] «Սովետական գրականություն», 1941, № 11, էջ 97:

գրում է Աբովյանը,— եթե տեսնի հազարավոր զանազան դասակարգի, զանազան ծագումի, հագուստի, զանազան դիմագծերով մարդիկ, այնքան կառքեր, սայլեր, սահնակներ, ամբողջ օրը, վաղ առավոտվանից մինչև ուշ երեկո այս ու այն կողմ են գնում։ Ապշում ես, երբ շուրջդ ես նայում։ Բավական է միայն որևէ տեղ կանգնել Նևսկիյ պրոսպեկտի վրա, և առաջդ ծով է բացվում։ Ամեն ինչ հետ ու առաջ է ուղղվում ու հոսում»։ Աբովյանը մի փոքր հետո եզրակացնում է՝ «Այդ կյանքը չունի իր նմանը»։[1]

Կա և մի ուրիշ հետաքրքիր փաստաթուղթ, դարձյալ չհրատարակված, բայց Աբովյանի արխիվին ծանոթ բանասերներին հայտնի։ Կոչվում է «Ի վերայ հայրենասիրութեան»։ Նամակի ձևով է գրված, բավական ընդարձակ։ Ուղղված է հորը՝ «Քաղցրագութ հայր իմ»։ Բայց դա իսկապես նամակ չէ։ Նամակաձևը Աբովյանի համար մի միջոց է՝ հայրենասիրության մասին ունեցած իր մտքերն ու զգացումներն արտահայտելու համար։ Սա մի փաստաթուղթ է, որ դյուրությամբ թյուրիմացության մեջ կարող է գցել Աբովյանի կյանքի հարցերով նոր զբաղվողներին։ Կյանքից քաղած հարցերի կողքին այստեղ պատմված են այնպիսի բաներ, որ Աբովյանի կյանքում չեն պատահել, պարզապես հնարածո են։ Այսպես, օրինակ, Աբովյանը պատմում է, թե ինչպես ինքը եկել է Պետերբուրգ սովորելու, այնուհետև պատմված է, թե ինչպես դպրոցում տեղավորվելուց հետո, մի օր փողոցում հանդիպում է Խատիսյանին և անչափ ուրախանում։ Հետո արդեն, Պետերբուրգի կապակցությամբ գալիս են զանազան հայրենասիրական դատողություններ։ Աբովյանը Պետերբուրգում չի սովորել։ Եթե չլինեն նրա դորպատյան օրագրերը, ապա մենք կարող ենք կարծել, որ իսկապես եկել է Պետերբուրգ, գուցե և սկզբում տեղավորվել է այնտեղ, ապա նոր փոխադրվել Դորպատ։

Պարզապես Աբովյանը նպատակ է դրել իր առաջ՝ հայրենասիրական մի ակնարկ գրել նամակի ձևով։ Գրվածքի մեջ ամեն ինչ, նույնիսկ ամեն մի մանրամասնություն ենթարկված է այդ նպատակին։ Օրինակ, այն հատվածը, ուր նա նկարագրում է ծնողներից և ընդհանրապես հարազատներից հեռու գտնվելու պատճառով ունեցած իր ապրումները և այդ կապակցությամբ հիշում հայրենի բնությունը, ոչ այլ ինչ են, բայց եթե միջոց Աբովյանի համար՝ ցույց տալու օտարության մեջ գտնվող մարդու կարոտը հայրենիքի նկատմամբ։ Կամ օրինակ՝ Պետերբուրգում Խատիսյանին հանդի-

[1] Աբովյանի արխիվ, № 504։

պելում նվիրված նկարագրությունը։ Ի՞նչ է այս, եթե ոչ դարձյալ մի միջոց ցույց տալու, թե հայրենիքը խորապես սիրող, բայց նրանից հեռու գտնվող մարդը ինչ կապրի, եթե հանկարծ օտարության մեջ հանդիպի ծանոթ հայրենակցի։

Ինչ վերագրված է ակնարկի հերոսին՝ Աբովյանը շատ է զգացել ու ապրել թե ճանապարհին, Դորպատ գնալիս, թե մանավանդ Դորպատում հայրենակիցներին հանդիպելիս։ Նրա նկարագրվող բոլոր դեպքերը մի նպատակ ունեն— պարզել, թե ինչ խորը զգացում է մարդու համար հայրենասիրությունը։ Եվ այդ ամենը նրա համար, որ հետագայում այդ կապակցությամբ խորհրդածություններ անի։

Այս միտքը հաստատվում է և մի այլ տվյալով։ Այս նամակաձև ակնարկին, որի նյութը հայրենասիրությունն է, նույն մատյանում հաջորդում են երկու այլ նման ակնարկներ, բայց արդեն տարբեր հարցերի նվիրված. «Ի վերայ ժամադնացութեան» և «Ի վերայ հաղորդութեան»։[1]

Աբովյանն իր դորպատյան օրագրերում ասում է, որ 1830-ին իրեն չի հաջողվել, ինչպես հարկն է, Պետերբուրգը տեսնել, որովհետև նախ քիչ է մնացել, ընդամենը երկու օր, հետո ամպամած օրեր են եղել, դուրսը՝ անձրև ու ցեխ։ Չնայած դրան, Պետերբուրգը Աբովյանի վրա մեծ տպավորություն է գործել։[2] «Ի վերայ հայրենասիրութեան» մեջ Աբովյանը թողել է Պետերբուրգի մի այլ նկարագրություն։ Բերում ենք այդ հատվածը։ «Յայսպիսի երկայնաձիգ ուղի յայտնի է, զի յամենայն քայլս յանդիման լինէին ինձ նորանոր առարկայք, աստ քաղաքք պայծառաշէնք, անդ լերինք և անտառք չքնաղք, այլուրեք գիւղօրայք և դաշտօրայք զուարճալիք,— ամենայն անսովոր, վասն որո և նորահայելի վասն աչաց և սրտի մերոյ. և ՝ի վախճանի Պետերբուրգ այս անհագին քաղաք հրաշակերտ, որ յառաջին անդ հայիլն յափշտակէ զտեսողն, ուր զամենայն հանդերձս և լեզուս բոլոր աշխարհաց երկրագնդի մերոյ կարելի է տեսանել և լսել. ուր ամենայն փողոց, ամենայն արձան, ամենայն տուն երևին զամբողջ ուղեղս մարդկան վատնեալ առ ի հանճարել զայսքան բիւրատեսակ հրաշագործութիւնս»։[3]

---

1 Տեր-Կարապետյանը իր գրքի վերջում վերնագրերից մեկը շփոթել է և գրել է «Ի վերայ Նաւագնացութեան» էջ 136։

2 Տեր-Կարապետյան, «Խաչատուր Աբովյան», էջ 31։

3 Աբովյանի արխիվ, № 57։

Աբովյանը, ինչպես արդեն ասացինք, այս գրվածքում ամեն ինչ ծառայեցրել է մի նպատակի— բացատրել հայրենասիրությունը, ներշնչել ընթերցողին այդ զգացմունքի վեհությունը: Աբովյանը գրում է.—

«Ծող իմ Թանկագին: Հաւատա՛ ինձ՝ որքան հեռանամք ի Հայրենեաց, այնքան ցանկալի երևի նա մեզ, այնքան սաստիկս վառի և բորբոքի սէր մեր առ ազգ մեր և երկիր: Ընթեռնելով զվարս և զգործս մեծագործ անձանց, Թագաւորաց, զօրավարաց, գիտնոց, չիրաւի զարմանամ և պաշտեմ ի սրտի իմում զանուն նոցա և զգործս, բայց զի՞նչ կարծես, միթէ հանցե՞ն սոքա ՝ի սրտէ իմմէ զանուն հայազգի հսկայից և վսեմագործ անձանց: Ո՜ն և օ՜ն արասցէ ինձ տէրն: Որքան անեղաձաձանչ ևս իցեն ճառագայթք փառաց, և մեծագործութեանց նոցա, նոքա ո՛չ բնաւ մարթասցին նսեմացուցանել զփիշատակ և զանուն մերազնեայ քաջաց»:

Մի փոքր հետո, Աբովյանն ասում է, որ Պետերբուրգում տեսնելով Պետրոս Մեծի և ուրիշների արձանները, ցավում է, որ հայ ժողովուրդը իր մեծագործ զավակներին արձաններ չի կանգնեցրել: «... զայրանամ ՝ի միտս իմ. յանդիմանեմ զազգ իմ, ընդէ՞ր և սոքա ո՛չ վառնեցին զամենայն գոյս իւրեանց առ ՝ի կառուցանել և մերազնեայ հսկայից արձան»:[1] Բայց և անմիջապես Աբովյանը դատապարտում է իրեն, որ հետևելով, ինչպես ինքն է ասում, իր թույլ զգացմունքներին, նկատի չի առնում, որ Հայաստանը գրեթե երբեք կյանքի խաղաղ շրջան չի ապրել՝ այդպիսի գործերով զբաղվելու համար:

Աբովյանն իրեն հատուկ զգացմունքով է խոսում այն մասին, թե ինչպես Հայաստանի վրա, անապատի հեղեղի նման թափվել են պարսիկները, արաբները, մակեդոնացիք, հռովմայեցիք, հոները, գազանաբարո Աթիլլան, կատաղի Չինգիզխանը, անկուշտ Թամուրլանկը: Որտեղ նրանց ոտքը դրվում էր, այնտեղ անապատ էր դառնում: Կրակ է բորբոքվում, ասում է Աբովյանը, լսողների սրտում, երբ լսում են այս անգութ բարբարոսների եղեռնագործ ոճիրների մասին:

Մենք կանգ չենք առնում այն հարցի վրա, թե Աբովյանն ինչպես է բացատրում հայ ժողովրդի գոյության փիլիսոփայությունը,

[1] Ավելորդ չենք համարում հիշել, որ Աբովյանը այդ նույն հարցին անդրադարձել է Ալամդարյանի գերեզմանի վրա ասած ճառում և իր հոդվածներից մեկում:

նամանավանդ որ այս խնդրին նա անդրադարձել է այլ անգամներ ևս և երբեմն շատ ավելի հանգամանորեն։ Այդ սերտ կապ ունի Աբովյանի փիլիսոփայական հայացքների հետ, այդ այժմ մեր զբաղմունքի սահմաններից դուրս է։

Մեզ մնում է մի հարց պարզել. ե՞րբ և ո՞րտեղ է գրված «Ի վերայ հայրենասիրութեան» ակնարկը։ Այդ մասին գրվածքում ոչ մի խոսք չկա, ոչ էլ որևէ այլ հիշատակություն, որի վրա կարելի լիներ հենվել։ Նախ պարզ է, որ այս խոհերը առաջացել են Պետերբուրգում, մղում ստացել այն ամենից, որ նա տեսել ու զգացել է այնտեղ։ Մեզ թվում է, որ այս ակնարկը պետք է գրված լինի Պետերբուրգում և անպայման երկրորդ այցելության ժամանակ, այսինքն՝ 1835-ին։

Այստեղ, այս ակնարկում շոշափված հարցերը չափազանց մոտ են այն մի քանի խնդիրներին, որ զբաղեցրել են Աբովյանին 1835-ին Պետերբուրգում եղած ժամանակ։ Այստեղ նույնիսկ այնպիսի տողեր կան, որ, թվում է թե, պարզապես պատասխանն են այն հարցերի, որ առաջ է քաշել Աբովյանը մի այլ փաստաթղթում, որը նույնպես կապված է Աբովյանի կյանքի պետերբուրգյան շրջանի հետ։ Բայց այդ մասին հետո, իր տեղում։ Մի ներքին տրամադրություն կապում է այդ տարբեր փաստաթղթերն իրար հետ։ Դրանք խոհերի և ապրումների, մի խոսքով՝ Աբովյանի հոգեկան կյանքի նույնաշրջան ծնունդն են։

ԱԲՈՎՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՀԱՅ ՄԵԾԱՀԱՐՈՒՍՏԻՆ

Դորպատում եղած ժամանակ Աբովյանը շատ էր կարոտում հայրենիքը։ Մի անգամ, ինչպես հայտնի է, Աբովյանը հանդիպում է Ցահրադ Բաղալյան անունով մի հայ երիտասարդի։ Դորպատյան օրագրերի համապատասխան էջերը ցույց են տալիս, թե ինչպիսի ուրախություն է համակել Աբովյանին այս առթիվ։

Աբովյանը հետաքրքրվում է, թե ո՞վ է այդ մարդը, որ տուն-տեղ թողած եկել-հասել է այս հեռավոր վայրերը։ Պարզվում է, որ խոյեցի է (թե սալմաստեցի), Ցահրադ Բաղալյան անունով։ Աբովյանը գրում է. «Ի Պարսկաստանէ ելեալ նորա ՚ի Ռուսաստան ՚ի Նախիջևան, երկու որդիք նորա գերի ՚ի պարսից, ինքն կրեալ զզանազան հարուածս յաշխարհակցաց և ՚ի Ռուսաստան բնա-

դատեալ ելանէ յօտարութիւն, վաստակել, մուրալ զդրամս վասն ազատելոյ զորդիս իւր»...[1]

Աբովյանի վրա այս պատմությունը ցնցող տպավորություն է գործում: «Զգայարանք իմ փշրեցան, աչք իմ սևացան, գալարեցաւ սիրտ իմ և մտածմունք իմ, թէ մինչ ե՞րբ ազգ այսպէս թափառեսցի և մուրասցի ի տուն այլոց, անզօրացուցին զիս, երակունս իմ խաղաց արիւն, յաչս իմ ցնդեցան արտասուք»:[2]

Այս բոլորի տպավորության տակ Աբովյանը մի սրտառուչ բանաստեղծություն է գրում՝ «Զգացմունք ցաւալի սրտիս ՝ի տեսանելն իմ յօտարութեան զսիրելի հայրենակիցն իմ զՅահրադ Բաղալեան, ՝ի 1832 ամի, 2 մարտի, ՝ի Դերպտ» խորագրով, որը տարբեր ձեռագրերով գտնվում է Աբովյանի արխիվում և մինչև օրս էլ ամբողջությամբ լույս չի տեսել:[3]

Այս ամբողջ պատմությունը մենք մեջ բերինք մի այլ կապակցությամբ, գլխավորապես այն մտորումների, որ ունեցել է Աբովյանը այդ առթիվ: Ի՞նչպես օգնել Յահրադի նման հայերին— այս է զբաղեցրել նրան: Եվ ահա թե ինչպես է նա լուծել այդ խնդիրը: Վերոհիշյալ բանաստեղծության տարբերակներից մեկը ծանոթություն ունի, որի մեջ գտնում ենք այդ հարցի պատասխանը: «Այնպիսի Յահրադք,— գրում է Աբովյանը,— յիւրաքանչիւրում աւուր հարիւրաւորք շրջին ՝ի փողոցս քաղաքին մերոյ, վասն մշակութեան, և ո՞վ անկանի ՝ի միտս, թէ նոքա ևս արիւն մեր են: Զյիշեալ Յահրադն ևս աղքատութիւն էր հասուցեալ անդ: Աղքատութիւն, աղքատութիւն, որ զհազարաւորս ՝ի պատուական հայրենակցաց մերոց ի վերջին վախճան յուսահատութեան հասուցեալ տանջէ և մաշէ, այլ աստ՛ղ՝ ե՞րբ բացցի այն արշալո՛յս առաւօտեան, ուր ճոխք և փարթամք ազգին մերոյ գարման տարցեն նմանապէս ցաւամաշն իւրեանց մերձաւորաց և սրբեսցեն զարտասուս նոցա հոգետանջ: Երանի՛ ժամանակին, երանելի՛, որ ժամանակակից և մասնակից գտանիցէ այսօրինակ ազգաշէն հայրենասիրութեան»:[4]

Ուրեմն՝ Աբովյանն այն կարծիքին է եղել, որ այսպիսի դեպ-

---

[1] Աբովյանի արխիվ, № 16 ա:

[2] Նույն տեղ:

[3] Ի դեպ, երբ Աբովյանը Պարրոտին հայտնում է, որ ինքը Յահրադին նվիրված ոտանավոր է գրել, նա խնդրում է բանաստեղծությունը թարգմանել գերմաներեն: Աբովյանը խոստանում է թարգմանել չափածո: Եվ իր խոսքը կատարում է, որը անսահման ուրախացնում է Պարրոտին:

[4] Աբովյան արխիվ, № 58:

քերում հայ հարուստները պետք է օգնության ձեռք մեկնեն: Նա այն համոզմունքին է եղել, թե կարելի է մարդկանց խղճի վրա ազդել, հարուստների մեջ կարեկցություն առաջ բերել դեպի կարիքավորը, և դրանով փրկել դրությունը: Դրա համար էլ Աբովյանը կամենում է հայ մեծահարուստների մեջ հայրենասիրություն առաջ բերել, մղել նրանց ազգաշեն գործունեության:

Դորպատյան օրագրերում կան այնպիսի գրույցներ գրանցված, ուր զարգացվել է մոտավորապես նույն միտքը. օրինակ Աբովյանը և նրա դորպատյան ընկերները մտածել են, թե որքան լավ կլինի, եթե հայ հարուստները համախմբվեն և դպրոցներ հիմնեն և այլն: Այս միտքը Աբովյանին զբաղեցրել է նաև հետագայում: Աբովյանի ավելի ուշ ժամանակների գրությունների մեջ հանդիպում ենք նույն մտքերին, նույնիսկ այն տարիներին, երբ ոչ միայն չէին արդարացել այդ կապակցությամբ նրա ունեցած հույսերը, այլև մի շարք դեպքերում ակնհայտ կոնֆլիկտի մեջ էր գտնվել նա հայ բուրժուազիայի հետ:

Աբովյանը հույսը դնում էր այն բարձր մարդկայնության վրա, որ իր հետ բերելու էր լուսավորությունը: Հասարակական հարաբերությունները, բարոյական հիմքերն ամրապնդելու ձգտումը, որ ունեցել է Աբովյանը, վկայում է նրա և ընդհանրապես հայ լուսավորական շարժման դեմոկրատական մտածողության հակասական բնույթը:

Ուրեմն, Աբովյանին, դեռևս ուսանողական նստարանից, զբաղեցրել է հայրենիքի լուսավորության գործում հայ հարուստներին ներգրավելու միտքը, որը ամենացայտուն կերպով արտահայտված է 1835-ին գրած նրա մի նամակում:

Ի՞նչ նամակ է այդ:

1834-ի դեկտեմբերին Աբովյանը, ինչպես արդեն գիտենք, մեկնում է Պետերբուրգ: 1835-ի հունվարի 1-ին, այսինքն՝ նոր տարին նա Պետերբուրգումն է անցկացնում: Աբովյանը ռուսական կայսրության մայրաքաղաքից որոշում է մի նամակ ուղարկել հայ մեծահարուստներից մեկին, կոչելով նրան «ազգաշեն իշխան մեր», շնորհավորել նոր տարին, և մի սրտագին զրույց ունենալ, հայրենասիրական զգացմունքներ հրահրել, մի խոսքով՝ ազգային գիտակցություն առաջացնել:

Այդ մեծահարուստը Լազարյանն է:

Աբովյանը սկզբում բավական երկար խոսում է այն մասին, թե մարդկային կյանքը որքան նման է բնության մեջ տեղի ունե-

ցող փոփոխումներին։ Նա, որպես օրինակ, բերում է մարդու կյանքի պատմությունը ծնունդից մինչև մահ։ Ահա կույսը. համեստ, ոստոստալով, անբիծ վարքով, պարկեշտ կյանքով, անփորձ աշխարհից՝ գնում դիմում է իր օրհասի նախադուռը՝ որդիների մայր լինելու։ Կամ ահա պատանին. նա անվախ ընկղմվում է իր ճակատագրի հորձանքների մեջ։ Նա կարկառում է իր բազուկները գրկելու, ճմլելու երկրի կենդանի հյութը։ Այս աշխուժությունը, սակայն, անցնում է, դադարում է նրա եռանդի մրրիկը, նրա որոտները և կայծակները փոխվում են այր ամառվա ջերմ եղանակների, երբ ամուսնանում է։ Նրանք՝ այր և կին, ինչպես մի անձ, ինչպես մի շունչ եղած, նոր կյանքով՝ զավակներով են ապրում։ Այն ժամանակ, հարցնում է Աբովյանը, կարո՞ղ է արդյոք լինել և մի ուրիշ վայելուչ կյանք, կարո՞ղ է արդյոք այստեղ, երկրի վրա լինել և մի ուրիշ անտրտում դրախտ, քան ընտանիքը։ Հայրը արդեն ծերացած, ձյունափայլ մազերով, զմայլվում է, ուրախանում իր որդիներով և աղջիկներով, իր բոլոր տան ու տեղով։ Նրա խոսքը օրհնություն է, շունչը պաղատանք, աչքը մաղթանքի արցունքով լի՝ յուրայինների պաշտպանությունն է խնդրում երկնքից։ Որքա՜ն քնքուշ է նրա համբույրը, ինչպես ջերմ գրկախառնումը։ Նա մինչև անգամ գերեզմանի եզրին դեռ քաղցրությամբ է նայում նրանց վրա, գգվում է մեկին, խրատում մյուսին, սրան գրկում, նրան օրհնում, իսկ մի ուրիշին ծնկների վրա կամ ծոցն առնելով՝ սնում-կերակրում։

Աբովյանի սերը դեպի կյանքը շատ ցայտուն ձևով է արտահայտվել այս նամակում։ Նա սիրահարված է, հափշտակված նրանով։ Դրանից հետո բոլորովին զարմանալի չէ, երբ ասում է. «Ո՜հ՝ քանի՜ խորհրդալից, քանի՜ հրաշալի կեանք մեր. 'ի զուր դատեցաւ՝ որ զանէծս փոխանակ օրհնութեան կարդայ 'ի վերայ, երկրի, վշտամբեր անուանեաց զնա, փոխան օրհնաբեր անուանելոյ»։[1]

Սակայն զարմանալի է մի ուրիշ բան. Աբովյանը շատ լավ գիտեր, որ եկեղեցին երկրային կյանքը ճանաչում է որպես մի անցողիկ շրջան, ընդհակառակը, նույնիսկ տանջանքի ճանապարհ, որն անցնելուց հետո միայն հանդերձյալ աշխարհում մարդը արժանանալու է դրախտի։ Աբովյանն այս լավ գիտեր, և, չնայած դրան, նա ոգևորված խոսում է երկրային կյանքի մասին՝ հայտա-

[1] Աբովյանի արխիվ, № 184։ Աբովյանի թղթերի մեջ պահպանվել են այս նամակի երկու սևագրությունը (№ 76, № 184 ա)։

բարելով, որ սա է մեր դրախտը, սա է մեր երջանկությունը: «Աստ է դրախտ մեր, աստ երջանկութիւն մեր»,— գրում է Աբովյանը:

Եվ հետաքրքրականն այն է, որ Աբովյանի կարծիքով մարդու ձեռքին է իր ճակատագիրը: Ինքը մարդն է տնօրինում իր կյանքը: «Վայելել կամ կորուսանել զնա ՚ի ձեռ մեր միայն»,— գրում է նա:

Բայց ի՞նչպես հասկանալ երջանկությունը, ի՞նչ իմաստ ու բովանդակություն է այդ հասկացողության մեջ դնում Աբովյանը: Երբ մարդ հարուստ է և իր ուզածի պես վայելում է կյանքը— երջանկությո՞ւն է: Աբովյանի համար՝ ի հարկե ոչ: Եթե մարդ աստիճաններ և տիտղոսներ ունի— երջանկությո՞ւն է: Դարձյալ ոչ: Եթե մարդ իշխանություն ունի և կյանքը, ամեն ինչ ծառայեցնում է իրեն— երջանկությո՞ւն է— ոչ մի դեպքում: Աբովյանը միանգամայն տարբեր ձևով է հասկանում երջանկությունը:

Աբովյանն այդ նամակում գրում է. «Քանի՞ք մեռան ՚և թաղվեցան ի փուշս մոռացութեան, իշխանութեամբք, փարթամութեամբք, հարստութեամբք և տիտղոսովք իւրեանց, զի ըստ որում ո՛չ ծանեան նոքա զայս շաւիղ երկնացոյց, և կամ ծանուցեալ զնա, ոչ հետևեցան նմա. նոքա անձանց միայն, այլ ո՛չ աշխարհի եղեն նպաստ արարք»:

Աբովյանի այս միտքը պարզում է, թե ինչ է հասկանում նա՝ երջանկություն ասելով. երբ մարդ ոչ թե իր անձի, այլ աշխարհի օգտին է գործում:

Այդպիսի մարդը, Աբովյանի կարծիքով, անմահ է: Աբովյանը գրում է. «՚Ի մառախլապատ թիկանց հազարաւոր ամաց, դեռ կենդանի կանգնեն առաջի աչաց մերոց այսօր այսքիկ արք ականաւորք և ազգաշէնք, և գործք և յիշատակք նոցա անմահ մնացէ, որքան տակաւին երկիր մեր հաստատուն կայցէ ՚ի շրջանի իւրում: Նոքա հոգի եղեն դարու իւրեանց, գլուխ եղեն ազգի և պսակ մարդկութեան. և հոգի և սիրտ յետևորդացս անմոռաց պահեսցէ զանուն նոցա զանցս ժամանակաց... Նոքա փակեցին զդրունս յավիտենից և ՚ի ճակատս պատմութեան անջինջ, անխորտակելի մնաց արձան անմահութեան և սքանչանաց դիւցազնութեանց և մեծահոգութեանց իւրեանց: Յո՞ր ազգէ, յո՞ր տոհմէ, բարեկամն մարդկութեան ո՛չ հարցանէ զայս— այլ անաղարտելի սիրով կապակցեալ ընդ նա, կենդանագործէ օրինակովք նոցա զհոգիս յապա եկելոց»:

Նկարագրելով, թե ի՞նչ փոփոխություններ է ապրում բնությու-

նը կամ մարդը իր գոյության ընթացքում՝ Աբովյանը հանգում է հետևյալ մտքին. նոր տարվա շեմքը մուտք գործելուց առաջ մարդ պետք է հաշվի նստի ինքն իր հետ, թե ի՞նչ է արել, ինչո՞վ էր հարուստ իր կյանքը, թեև նոր միայն գնացած, բայց մեզանից արդեն անդարձ հեռացած տարում: Աբովյանը հարցնում է. «Ո՞ւր անցեալ ամն կրկնեմ միւս անգամ: Նա հատաւ ՚ի կենաց մերոց, միմիայն յիշատակք արժանաւոր անցից կան մնան դեռ ի միտս մեր»:

Առիթը թեև անցած տարին է, բայց Աբովյանի նպատակն է Լազարյանին, ինչպես և մյուս հայ հարուստներին ստիպել՝ հաշվեհարդարի նստելու, թե ինչ են արել իրենք չէ թե միայն նախորդ տարին, այլ ընդհանրապես իրենց կյանքում, ի՞նչ չափով են օգտակար եղել ուրիշներին, հայրենիքին, ժողովրդին, մարդկությանը:

Աբովյանը կամենում է, որ մարդն իր կյանքի ճանապարհն անցնի այնպես, որ երբ մի պահ շրջվի, հետ նայի — չտեսնի ավեր ու անապատ, անեծք և դառնություն: Մահն այն մարդու, որի միտքն ու հոգին զրկված են եղել մարդօգուտ գործերից, ոչ ազգականին, ոչ բարեկամին, ոչ էլ մերձավորին, Աբովյանի ասելով, ցավալի չէ, իսկ երկիրն էլ ընդհանրապես, նրա կարծիքով, ուրախանում է՝ զգալով իրեն թեթևացած այդ ծանր բեռից:

Ուրեմն ի՞նչն է կարևորը կյանքում. «Կեալ մարդկաբար, այլ ո՛չ պաճարօրէն»:

Տարբերելով մարդկային կյանքերն իրարից՝ Աբովյանն առաջ է քաշում իսկական մարդու հասկացողությունը, հասկացողությունը հոգեկան այն բարձր կյանքի, որով պետք է հագեցած լինի մարդու գոյությունն աշխարհիս երեսին:

Նամակի վերջին հատվածը որոշակի եզրակացություն է, որը որպես առաջարկ՝ Աբովյանը բարձրացնում է Լազարյանի և ընդհանրապես հայ մեծահարուստների առաջ: «Յայնցեալ յայս տարբերութիւն, զի՞նչ այլ կարէ ցանկալ Ձերդ Վեհազնութեան սիրտ հայրենասիրին, քան տեսանել զՁեզ պաշտպան և սատարիչ լինել անկեալ Հայրենույն: Կամի՞ք զանմահեա ստանալ զանուն, զի՞նչ այլ առեան կայցէ այս Ձեզ պատրաստագոյն, քան կանգնել ՚ի հոգիս Ձերազնեայ մանկաց զարձան անխորտակք, յոր երախտապարտ ազգակիցք կարդասցեն և փառաբանեսցեն զյիշատակ Ձեր պանծալի և յաւիժամ, մինչ յույք երկնաւորաց զՁեօք պարառեալ կապեսցեն ի գլուխ Ձեր զանթառամ պսակն երանութեան»:

Աբովյանը կամենում էր, որ հայ բուրժուազիան հայրենասեր գործի գլուխ կանգնած լինի: Եվ նա, ինչպես ասացինք, հույս է

ունեցել, որ մի օր այդպես էլ լինելու է: Սակայն նա մի շատ որոշակի նպատակ է ունեցել— մեծահարուստների օգնությամբ Հայաստանում դպրոցներ բանալ: Դա է պատճառը, որ Աբովյանը նամակում այն միտքն է հայտնում, թե երբեք ուշ չէ և կարելի է նույնիսկ կյանքի վերջին պահին էլ ուղղել թույլ տված սխալը, միայն թե մարդ զգա և գիտակցի դրա պահանջը: Նամակի վերջում, թեև անուններ չի տալիս, բայց, որպես օրինակ, հիշում է, որ հարուստներից մի քանիսը, մոռաքերելով իրենց անցյալ կյանքը, հոգ տարան ներկայի մասին: Երբ Աբովյանն ասում է, որ կյանքի մի քանի օրը բավական է, կորցրածը լրացնելու համար, ապա դրա տակ չի հասկանում հայրենասիրական այն գործունեությունը,, որի օրինակը ինքը կամ իր նմաններն են թողել: Իսկ եթե հայրենիքին օգտակար լինելու գիտակցությունը լինի, մի քանի օրն էլ բավական է, որ աչքերը փակելուց առաջ բոլոր հարուստները իրենց ունեցվածքը կտակեն ազգօգուտ նպատակների համար: Որ Աբովյանն իսկապես տարբերություն է տեսնում հարուստների ցույց տված օգնության և իր նմանների հայրենասիրական գործունեության միջև, ապացուցվում է մի այլ փաստաթղթով, որ ժամանակով նախորդում է սրան: Ներսես Աշտարակեցուն ուղղված մի նամակի սևագրության մեջ Աբովյանը խոսում է այն մասին, որ իրեն ոչ մի դժվարություն չի կարող վախեցնել, իսկ ինչ որ չի կարողանա անել չքավորության պատճառով, ինքը առաջարկում է անել «ազգասեր կարողներին»:[1]

Աբովյանի նամակն ավարտվում է մի քառատողով: Դա եզրակացություն է, մի ընդհանրացում, որ գալիս է վերջավորելու Աբովյանի միտքը, նրա բոլոր դատողություններն ու խորհրդածությունները: Տարիները, դարերը և ընդհանրապես ժամանակը թողնում-գնում են, աշխարհի երեսին մնում է միայն բարի գործի հիշատակը:

ԱԲՈՎՅԱՆ ԵՎ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Աբովյանի գրական ժառանգության մեջ քիչ չեն գերմաներեն լեզվով գրած էջեր: Նկատենք, որ նրա ժառանգության այդ մասը սակավ է ուսումնասիրված: Դրանք օգտագործել է գլխավորապես Շահազիզը՝ Աբովյանի կենսագրության մեջ: Դրանց մեջ բավականաչափ նամակներ կան, որոնց մի մասը հասցեագրված է Աբո-

[1] «Սովետական գրականություն», 1941, № 11, էջ 97:

վյանին, մի մասն էլ Աբովյանի գրածն է։ Գրել է, բայց հետո մտափոխ է եղել և չի ուղարկել, մի մասն էլ գրել ուղարկել է, բայց սևագրությունները բարեբախտաբար պահպանվել են։

Այս նամակները կարևոր են, և դրանց հիմնամանալից ուսումնասիրությունը շատ բան կարող է պարզել։ Աբովյանի մինչև այժմ անհայտ կապերն ու ծանոթությունները, միջավայրը, որի մեջ մի առժամանակ ապրել է նա, պարզելուց բացի՝ այս նամակների մեջ կան այնպիսիները, որոնք հետաքրքիր են նաև այն տեսակետից, թե ի՞նչ խնդիրներ ու հարցեր են զբաղեցրել Աբովյանին, ի՞նչ վերաբերմունք է ունեցել դեպի այդ խնդիրները և այլն, և այլն։

Գերմաներեն լեզվով գրված և մինչև այժմ չհրապարակված նամակներից երկուսը, որ վերաբերում են Աբովյանի կյանքի պետերբուրգյան օրերին, բերում ենք այստեղ հայերեն թարգմանությամբ[1] աննշան կրճատումով։

«Ձերդ գերազանցություն, ամենաողորմած պարոն.

Բարի եղեք թույլ տալ, Ձեզ մի հանգամանք առաջադրելու, որը ինձ վաղուց զբաղեցրել է, իսկ երեկվանից սկսած՝ ավելի սաստիկ և որը Ձեր ուշադրության համար պակաս արժեքավոր չի լինի։

Որովհետև որոշ չափով ինձ հայտնի են իմ արևելյան հայրենակիցների— հայերի և ուրիշների մտածելակերպը և կյանքը, ուստի բազմակողմանի փորձերով ապացուցված եմ համարում, որ նրանք ուրիշ ո՛չ մի այլ միջոցով չեն կարող ամենից լավ և արագ իսկական կրթության և լուսավորության հասնել, քան գեղեցիկ արվեստների՝ բանաստեղծության, երաժշտության և նկարչության միջոցով։ Եվ երբ ես Եվրոպայում առաջին անգամ տեսա այդ արվեստները իրենց իսկական լույսով և զգացի նրանց ներգործությունը նախ և առաջ եվրոպացիների, և հետո էլ ինձ վրա, ապա իմ առաջին և ամենագեղեցիկ ցանկությունը եղավ աշխատել տարածել այդ արվեստները իմ հայրենի երկրում։ Այդ ցանկությունը ես արտահայտել եմ ոչ թե մի անգամ, այլ շատ ավելի հաճախ, և այն բարյացակամորեն ընդունվել է և հաստատվել է այդ հրաշալի արվեստներին հմուտ մարդկանց կողմից։ Եվ երբ ես պատկերացնում եմ ինձ այդ արվեստների երկնային, սիրտս ազնվացնող հմայիչ ուժը, երբ ես նկատի եմ առնում արևելցիների կրակոտ, բուռն երևակայությունը, ապա այդ բոլորից այնպիսի սերտ

[1] Նամակների հայերեն թարգմանությունը կատարել է ընկ. Կ. Աբովյանը։

ներդաշնակություն է ստացվում, որ ես այլևս չեմ երկբայում, որ որևէ մեկը կարող է կասկածել այդ ճշմարտության նկատմամբ։ Ո՛չ միայն հայերը, այլև ամբողջ Ասիան, որպես մանկության օրրան՝ ինձ վրա պարտականություն են դնում՝ ո՛չ մի դեպքում չհրաժարվել այն ծառայությունից, որ ես ի վիճակի կլինեմ կատարելու։ Դա կլիներ մի անհաջող ձեռնարկություն, եթե ես համարձակվեի հիշյալ արվեստներն այդ նպատակով յուրացնել իմ այս հասուն հասակում և այդքան կարճ ժամանակում։ Սակայն օր ու գիշեր ես պատրաստ էի ապագայում ամեն հնարավորություններ գործ դնել, եթե իմ Հ ա յ ր ե ն ի ք ո ւ մ երիտասարդ մարդիկ գտնվեին, որոնք այդ տաղանդն ու ցանկությունն ունենային Եվրոպա գնալու և կատարելագործվելու։ Ոչինչ այնպես չէր բորբոքում իմ միտքը եվրոպական կրթության համար, ոչինչ այնպես չէր համապատասխանում իմ բուռն զգացումներին, ինչպես բանաստեղծությունը, երաժշտությունը և նկարչությունը։ Որքան էլ քիչ էին զբաղվում մեզ մոտ այդ չքնաղ արվեստներով, որքան էլ քիչ հասկանայի ես այդ արվեստները՝ այնուամենայնիվ նրա՛նք էին իմ ամենագեղեցիկ մտքերի ղեկավարները...։[1] Օր ու գիշեր ես պատրաստ եմ ապագայի համար ամեն հնարավորություն գործ դնել և գտնել իմ հայրենիքում այդ տաղանդի տեր երիտասարդ մարդիկ՝ նրանց այստեղ ուղարկելու համար։

Այժմ արդեն ներկայանում է, մի որքան զարմանալի, այնքան էլ անհասկանալի առիթ, որ այս կապակցությամբ գեղեցիկ հույսեր է խոստանում ինձ։ Մի քանի օր առաջ այստեղ է եկել իմ հայրենական Երևան քաղաքից մի երիտասարդ՝ Ստեփան Ներսիսյան անունով, որին ես ճանաչում եմ և որի մասին գիտեմ, որ նա՛ ոչ միայն բուռն ձգտում, այլև խոշոր ձիրք ունի պորտրետ նկարելու համար, և որը միևնույն ժամանակ ոչ մի վարպետի մոտ չի սովորել, այլ միմիայն ինքնակրթությամբ է այնտեղը հասել, որ ի վիճակի է բավական դուրեկան էտյուդներ իրագործել։

Ես նրան ոչ տեսել եմ, ոչ էլ նրա հետ խոսել, բայց ինչ որ երեկ բոլորովին պատահմամբ նրա մասին իմացա՝ նրա օգտին է խոսում։ Նմանապես արվեստի այդ բուռն ձգտումից դրդված՝ թողել է նա իր հայրենիքը, իր ծնողներին և այդ երկար ճանապարհորդությունը կատարել է մի օտարերկրացու հետ, որպես ծառա, որպեսզի այստեղ կատարելագործվի նկարչական արվեստի մեջ և,

[1] Բաց ենք թողնում մի պարբերություն, որը վերոհիշյալի կրկնությունն է։

ինչպես լսել եմ, մինչև այժմ էլ նա անօգնական է և անապաստան, և անձամբ կամենում է իր բախտը փորձել:

Ո՞վ կարող է նման արվեստի սերը գնահատել, եթե ոչ նույն այդ արվեստը իմացողը, նրա խրախուսողը: Եթե մեր բարերար կառավարության ողորմության մի կաթիլ կարող է և պետք է ընկնի մի այնպիսի անօգնական երիտասարդ մարդու սիրտը, ապա ես կցանկայի, որ այդ բանը կատարվի միմիայն Ձերդ գերազանցության, և ուրիշ ոչ որի միջոցով: Սրանով ի չարն չենք գործ դնում Ձեր բարյացակամ վերաբերմունքը դեպի իմ ազգը և դեպի ինձ, այլ կատարյալ վստահություն ենք տածում դեպի Ձեզ: Բարին ու գեղեցիկը կարող են միմիայն բարիի միջոցով ճանաչված լինել և զարգանալ: Նա իր բախտին արժանացած կլինի, եթե միայն կարողանա մտնել արվեստների ակադեմիան, և այն բարիքը, որ կստացվի Ձեր միջնորդության միջոցով՝ կծառայի հազարավոր մարդկանց օգտին: Իսկ Հայաստանը քի՞չ արտակարգ մարդիկ է ստեղծել, որոնց գործերը և կենսապատկերը մի թիզ հողով է ծածկված, որովհետև այնտեղ ոչ ոք չի եղել, որ նրանց հավերժացներ ապագա սերունդների համար: Որքա՞ն ընկճում է ինձ այս միտքը: Իսկապես չգիտեմ, թե ինչո՞վ կարող եմ իմ ազգի երիտասարդաց սրտերը կենդանացնել և ոգեշնչել առաքինության և հիշյալ նախատիպերին նախանձախնդիր լինելու իմաստով: Լավ կամ վատ՝ պառկած են մոռացվածների միևնույն շարքում: Թող չքնաղ մուսան՝ ինձ ուժ շնորհի, որ նրանց արժանիքները լույս աշխարհ բերեմ. ես կարող եմ իմ մասին միայն այնքան ասել, որ ես նրանց բարեկամն եմ. իսկ նրանց կյանքը նկարիչը միայն կարող է պատկերացնել: Որքա՞ն բախտավոր կլինեմ, եթե այդ երիտասարդ մարդուն, առանց իր գիտենալու, առանց իր խնդրելու, այդ ուրախ լուրը տանիմ, և նրանից անդրժելի երդում առնեմ հայրենիքին ծառայելու, նրա անունը փառաբանելու, նրա զավակների համար իր ամբողջ ուժն ու կարողությունը գործ դնելու և ամբողջ կյանքում շնորհակալ լինել այն մարդուն, որը նրա բախտի պատճառն է եղել:

Այս ցանկությամբ և խորին հարգանքով մնում եմ Ձերդ գերազանցության խոնարհ ծառա՝

1835, 21 հունվարի,
Պետերբուրգ

Խ. Աբովյան:

Մեծապատիվ պարոն պետական խորհրդական.

Այն կշտամբանքը, որ արել են իմ ազգին և իմ դասակարգին, շատ թանկագին րոպեներ է խլել ինձանից մինչև այժմ, երբ ես կարող կլինեի որևէ լավ բան անել և գլուխ բերել: Երկուշաբթի չեկա ճաշի ձեզ մոտ. ես բոլորովին այլ ցանկություն ունեի և, բացի դրանից, վերոհիշյալ միտքը կասեցնում էր իմ քայլերը:

Ոչ պնդերեսությունը, ոչ էլ որևէ արհամարհական վերաբերմունքը դեպի լավը ստիպում է ինձ այժմ այն ցանկությունը բացարձակ կերպով արտահայտել, այլ սեր դեպի լավը, *դեպի* մարդը, *դեպի* հայրենիքը...

Կիրակի օրը պատահմամբ լսում եմ, որ այստեղ է ժամանել իմ հայրենի Երևան քաղաքից մի երիտասարդ մարդ, Ստեփան Ներսիսյան անունով: Դեպի նկարչությունն ունեցած բուռն սիրուց տարված՝ թողնում է նա իր հայրենիքը, ազգականներին, մի իտալացի նկարչի ծառա է դառնում, և այդ անվան տակ տանելով ամենադաժան չարչարանքներ՝ իր տիրոջ կողմից, հասնում է Պետերբուրգ: Առանց նվազագույն գաղափար ունենալու այդ քաղաքի արվեստի սիրո և արվեստի գործերի մասին՝ նա կարծում է, որ կկարողանա այստեղ կատարելագործել իր արվեստագետի տաղանդը: Ես ճանաչում էի նրան դեռ այնտեղ, բայց կամենում էի նրա համար ծածուկ մի բան արած լինել՝ նախքան նրան տեսնելը: Երեկ պատահաբար հանդիպում ենք իրար: Չեմ ժխտում, որ ես իսկապես ցանկանում էի նրան տեսնել, բայց ինչպիսի՜ հանդիպում: Ես գտնում եմ նրան մի վարդապետի նախասենյակում, մարդերի մեջ խորասուզված, նստած: Ես ողջունում եմ նրա մեջ արվեստագետին այնպիսի հարգանքով և ուշադրությամբ, ինչպես վայել է այդ դասակարգին, և առաջարկում նրան նստել ինձ մոտ: Դժբախտը չի կարողանում սկզբում հասկանալ, թե ով է նրա հետ այդպես սիրալիր վարվողը, և ինչպես ես նկատում եմ, նա սպասում է անխիղճ վարդապետի թույլտվության, թե արդյոք իրավունք ունի՞ ինքը սենյակ մտնելու և ինձ մոտ նստելու, ինչպես որ ես ցանկանում էի: Վարդապետը թույլ է տալիս իմ խնդրելուց հետո միայն: Քաղաքավարության հակառակ չգնալու համար, ես միաժամանակ մոռանում եմ նրան, որպեսզի տանտերը դրանում ոչ մի կասկածելի բան չգտնի: Երբեմն-երբեմն խոր հառաչանքներ են գալիս դեպի իմ կողմը. սիրտս զգում է նրանց նշանակությունը: Այդ, անշուշտ, վիրավորված, բայց հուսալի զգացումի լեզուն էր, որով խոսում էր ինձ հետ առանց խոսքերի, թե ով եմ ես, որ այնպես

սրտիս մոտ եմ առնում նրա ճակատագիրը: Վարդապետի դուրս գալուց հետո, բռնում եմ նրա ձեռքը, նկատում եմ նաև նրա սև, ուշադրավ աչքերի արտասուքը և նրա բերանից իմանում ամենացավալի բաներ իմ սրտի համար: Հազիվ այստեղ հասնելով, նա իր տիրոջն ասում է, որ այլևս չի կամենում իր հայրենիքը վերադառնալ: Նա շնորհակալ է երկնքից և իր տիրոջից, որ այստեղ է եկել, որ նա ցանկանում է կամ այստեղ մեռնել, կամ վերադառնալ իբրև արվեստագետ՝ իր ազգի համար: Որքան ավելի շատ է արտահայտում իր այդ ցանկությունը, այնքան ավելի դաժան պատիժներ է կրում անսիրտ մարդու կողմից: Նա այստեղ ոչ ոքի չի ճանաչում, բացի մի հայից. վազում է նրա մոտ, և նա մի խնդրանք է գրում նրա համար.... ուր նա ցուցադրում է նրա ճակատագիրը և նրա ցանկությունը և թախանձագին խնդրում, որ կառավարությունը պաշտպանի նրան, ազատի և ուղարկի արվեստների ակադեմիան: Այդ խնդրագիրը դեռևս նրա մոտ է գտնվում, բայց չգիտի, թե ինչպես վարվի, որովհետև նրա տերը մեկնելու է այստեղից մոտ երեք շաբաթ հետո:

Սիրելի պետական խորհրդական, մի րոպե միայն մխիթարեցի նրան, հույսերով միայն թեթևացրի նրա ցավերը:

Ասիայում նկարչություն և երաժշտություն տարածելը իմ վաղեմի ջերմ ցանկությունն է եղել: Դրանց միջոցով կրակոտ արևելցիք ավելի շուտ կհասնեն կուլտուրայի, քան որևէ այլ միջոցով: Այդ մտադրությամբ ես կամենում էի արդեն հայրենիքիցս երիտասարդ մարդիկ ուղարկել այստեղ, եթե նրանք դրա համար տաղանդ և տրամադրություն ունենային: Եվ հիմա դրանցից մեկը այստեղ է առանց իմ խնդրանքի, առանց իմ առաջարկության: Մի՞թե աստծո մատը մասնակից չէ դրանում: Ես ինձ մոռացել եմ, ինչ որ անելու է՝ պետք է նրա՛ համար անել: Նա իմ հայրենի քաղաքիցն է, հետևաբար իմ եղբայրն է: Այժմ այլևս հաշվի չեմ առնի, եթե ինձ արհամարհեն այն նախատինքների հիման վրա, որ ստացել են իմ հայրենակիցները՝ իբրև շահամոլ մարդիկ: Այո՛, ես էլ եմ շահամոլ, սակայն սուրբ գործի համար: Ես էլ նրա նման մի դժբախտ կլինեի, եթե տեսնեի, թե ինչպես է ոչնչանում նրա տաղանդը: Նույն այս ցանկությունը ես արտահայտել եմ նաև նորին գերազանցության պարոն Ժուկովսկուն: Մի՞թե մեծահոգի բարերար կառավարությունից գթասրտության մի կաթիլ կպակասի, եթե նա երջանկացնի այսպիսի մի երիտասարդ մարդու: Ո՞վ գիտե, թե ինչ տաղանդ է թաքնված նրա մեջ: Ոչ, Պետերբուրգում կարող է և պի-

տի կատարվի նրա ցանկությունը։ Այդ ակնկալությամբ Ձեզ եմ մեկնում այս գրությունը, Ձեզ՝ որին տածում եմ մանկական սեր։ Ես ինձ կծախեի, եթե դրանով կարողանայի օգնել նրան որևէ կերպ։ Իմ աչքը նվաղ չափով է տեսնում ապագան, այդ բանն ասում եմ փորձի հիման վրա։ Հանգստությունս կորել է։ Բարի եղեք որոշել իմ ճակատագիրը, որպես այդ երիտասարդ մարդու ճակատագիր։

Անկեղծ հարգանքով Ձեզ անձնվեր և հավատարիմ՝

1835, 23 հունվարի
Պետերբուրգ

Խ. Աբովյան։[1]

Նախ՝ պարզենք, թե ում են ուղղված այդ նամակները։ Գրական Թանգարանի աշխատակիցները Աբովյանի արխիվը մշակելիս որոշել են, թե այս նամակներն ուղղված են Պարրոտի հոր — Գեորգ Պարրոտին։ Եվ, ըստ երևույթին, մի նամակը ճանաչվել է որպես մյուսի սևագրություն, նամանավանդ որ՝ 21 հունվարի թվակիր նամակը իսկապես որ սևագրություն է։ Երկրորդ նամակը կարող է պատահել, որ իսկապես ուղղված լինի Պարրոտին։ Գուցե և ուղղված է այն ակադեմիկոս Ֆրենին։

Թեև այս երկու նամակներում ընդհանուր կողմեր կան, որոշ հատվածներ կարծես նույնիսկ կրկնվում են, բայց և միաժամանակ միանգամայն պարզ է, որ նրանք տարբեր մարդկանց են ուղղված։ Ըստ որում, զգացվում է նաև այն տարբեր փոխհարաբերությունը, որի մեջ է Աբովյանը նրանց հետ։ Ոչ մեկի հետ էլ նա մտերմական հարաբերությունների մեջ չէ։ Հարգանքը, պատկառանքը պատշաճ հեռավորության վրա է պահում Աբովյանին երկուսից էլ։ Սակայն ճիշտ է նաև այն, որ Աբովյանը առաջին նամակում ավելի զուսպ է, պաշտոնական, մի փոքր կարծես նույնիսկ կաշկանդված, իսկ երկրորդ նամակում համեմատաբար վստահ, ավելի համարձակ։ Երևում է, որ մեկին ճանաչում է ավելի վաղուց և շատ ավելի առիթներ է ունեցել շփվելու, քան մյուսին։

Երկուսն էլ անվանի մարդիկ էին Պետերբուրգում։ Իսկ առաջին նամակը պարզապես սևագրությունն է այն նամակի, որ Աբովյանը հասցեագրել է, մեր կարծիքով՝ Շուլովսկուն։ Պարրոտի հորը գրած նամակում իրեն հուզող հարցերի մասին խոսելուց հետո, Աբովյանը իր պարտքն է համարում, ասել, որ այդ բոլորի մասին արտահայտվել է նաև Շուլովսկուն։

[1] Աբովյանի արխիվ, №№ 400, 401։

Ո՞վ է Շուլովսկին։ Մենք առայժմ չենք հաջողել պարզել։ Ըստ երևույթին բարձրաստիճան մի անձ, որը կարող էր դրական դեր խաղալ Ներսիսյանի հարցում։ Շուլովսկին, ինչպես երևում է, մոտ է կանգնած եղել արվեստի բնագավառին, որովհետև Աբովյանը նամակում նրան որակում է որպես արվեստն իմացող, արվեստի սեր ունեցող մարդկանց գնահատող, խրախուսող մի անձնավորություն։ Հետո․ նամակից պարզվում է, որ ոչ միայն Աբովյանը գիտե, թե ով էր Շուլովսկին, այլև վերջինս նույնպես ճանաչում էր նրան։ Ըստ որում, երևում է, որ Շուլովսկին բարյացակամ է տրամադրված եղել դեպի նա։ Աբովյանը, ըստ երևույթին, ինչ-որ խնդրով, երևի իրեն վերաբերող, դիմել է Շուլովսկուն, ստացել նրա օգնությունը։ Թերևս դա է պատճառը, որ հիմա էլ դիմելով Ներսիսյանի համար, Աբովյանը խնդրում է չկարծել, որ ինքը ի չարն է գործ դնում նրա բարյացակամ վերաբերմունքը։

Թե ինչ արդյունք է տվել Աբովյանի միջամտությունը՝ հաստատապես հայտնի չէ։ Աբովյանի արխիվում պահվում է Ներսիսյանի նամակը՝ գրված Աբովյանին։[1] Այդ նամակում, որ գրված է 1842-ին, Ներսիսյանն ասում է, որ ինքը հիշում է Աբովյանի ցույց տված սերը դեպի ինքը 1835-ին Պետերբուրգում։

Ի՞նչ են պարզում այս նամակները։

Այս նամակներով Աբովյանի կենսագրության մեջ մի նոր կերպար է մուտք գործում— նկարիչ Ստեփանոս Ներսիսյանց։

Ներսիսյանին Աբովյանը ճանաչելիս է եղել Երևանից։ Նրանց ծանոթության այս շրջանից, դժբախտաբար, ոչինչ հայտնի չէ։ Ներսիսյանի մասին գոյություն ունեցող գրականության մեջ կան հետևյալ կենսագրական տեղեկությունները։ Պարզվում է, որ նա սովորել է Էջմիածնում, եղել է տիրացու, ապա ուղարկվել է Թիֆլիս՝ Ներսիսյան դպրոցում ուսումը շարունակելու։[2] Շատ կարող է պատահել, որ Աբովյանը Ներսիսյանի հետ շփված լինի Էջմիածնում կամ Ներսիսյան դպրոցում։ Ի դեպ նկատենք, որ գրականության մեջ եղած տվյալների համաձայն, Ներսիսյանը ծնվել է 1808-ին. ուրեմն Աբովյանը և Ներսիսյանը գրեթե հասակակիցներ են եղել։

Այս նամակներում պարզվում է, թե երբ, որտեղ և ինչ հանգամանքներում է Աբովյանի և Ներսիսյանի ծանոթությունը հաստատուն հիմքեր ընդունել, և վերջապես, այս ընկերության հիմքերը պետք է որոնել ոչ միայն այն մարդասիրական վերաբերմուն-

---

1 Աբովյանի արխիվ. № 303։

2 «Նկարիչ Ստեփան Ներսիսյան» («Մշակ». 1812, № 12)։

քի մեջ, որ հանդես է բերել Աբովյանը իր հայրենակցին օգնելիս, այլև այն գաղափարական մղումների՝ որոնցից դրդված՝ Աբովյանը ոչ մի ջանք չի խնայել Ներսիսյանին օգնելու համար։

Աբովյանի նամակները պարզում են Ներսիսյանի կյանքի մի շատ կարևոր կետը — նրա բուռն ձգտումը դեպի իր ընտրած նպատակը։ Ներսիսյանի կերպարը Աբովյանի նամակներից ներկայանում է մեզ բավական ռոմանտիկ գունավորումով։ Միայն այն հանգամանքը, որ Ներսիսյանը թողել է հայրենիքը, ծառա է դարձել մի իտալացի նկարչի, ամենադաժան չարչարանքների ենթարկվել նրա կողմից, միայն թե Պետերբուրգ հասնի, ուր կարողանար կատարելագործվել նկարչության մեջ՝ բավական է, որ Աբովյանին ոգևորեր։ Ներսիսյանի կյանքի այդ կողմը շատ մոտ ու հասկանալի պետք է լիներ Աբովյանին։ Եվ ինչպես կարող էր Աբովյանը չօգնել Ներսիսյանին, թեկուզ և նրան ճանաչելիս չլիներ։ Ով նպատակ ունի և, ոչնչի առաջ կանգ չառնելով, այդպիսի կրքոտությամբ ձգտում է նպատակին, արժանի է հարգանքի և ամենայն ուշադրության։ Այդպիսի դեպքում չօգնելը Աբովյանը հանցանք կհամարեր։ Բայց այս հարցի մարդասիրական կողմն է, գուցե մի փոքր էլ մանկավարժական — խրախուսել ընկերոջը, որպեսզի նա հասնի իր ձգտած նպատակին։

Սակայն այս հարցը ունի մի ուրիշ կողմ ևս, ինչպես ասացինք, և դա շատ ավելի կարևոր է։ Իր ամբողջ կյանքում, դեռ պատանեկան տարիներից սկսած, Աբովյանը ամեն ինչ ծառայեցրել է հայրենիքի շահերին։ Այս նամակներում նա այն միտքն է զարգացնում, որ հայ ժողովրդի լուսավորության գործում շատ մեծ դեր կարող են կատարել արվեստները և, առաջին հերթին, բանաստեղծությունը, երաժշտությունը և նկարչությունը։ Մեզ հայտնի չէ որևէ այլ փաստաթուղթ, ուր Աբովյանը այդքան խոշոր կարևորություն տված լինի նկարչությանը և երաժշտությանը։[1] Նա ասում է, որ այդ միտքը հղացել է Դորպատում նշանավոր երաժիշտներին լսելիս, խորհրդակցել նրանց հետ և այն մտքերը, որ այժմ արտահայտում է՝ հավանություն են գտել նրանց կողմից։ Կարելի է ենթադրել, որ խոսքը Հենդելի մասին է։ Անհավանական չէ, որ Աբովյանի այն միտքը, թե հայերի և ընդհանրապես արևե-

[1] Ներսես կաթողիկոսին գրված 10 հունիսի 1834 թվակիր նամակի սևագրության մեջ Աբովյանը խոսելով, թե հայ երեխաները ապագայում իր գլխավորելիք վարժարանում ինչ առարկաներ են անցնելու՝ ասում է, որ երաժշտությունը պարտադրաբար պետք է բոլորը սովորեն։

լյան ժողովուրդների կուլտուրան բարձրացնելու գործում երաժըշտությունը կարող է շատ մեծ դեր խաղալ, ծագել է այն մեծ տպավորությունից, որն առաջացրել է նրա մեջ Հենդելի համերգը, ավելի ճիշտ՝ այն պատմությունը, որի շուրջը հյուսված է եղել երաժշտությունը։

Աբովյանն ասում է, որ ինքը բավական մեծ է,[1] որպեսզի ձեռք զարկի, օրինակ, երաժշտություն սովորելուն, բայց շատ է մտահոգված, որ իր հայրենիքից Պետերբուրգ և այլ քաղաքներ ուղարկվեն նկարչի կամ երաժշտի ձիրքով օժտված երիտասարդներ, և իհարկե, այն պայմանով, որ հետո վերադառնան և դպրոցների միջոցով այդ արվեստները տարածեն հայ և հարևան ժողովուրդների մեջ։

Այսպիսով, այս նամակները բավական նյութ են տալիս՝ ավելի լրիվ չափերով գաղափար կազմելու Աբովյանի լուսավորական ծրագրերի մասին։

Ներսիսյանը Աբովյանի համար մեկն էր այն մարդկանցից, որոնց օգնությամբ նա կամենում է իր լուսավորական ծրագրերն իրագործել։ Ի՞նչպես է Ներսիսյանը նայել այդ հարցերին։ Այն հափշտակությունը, որով նա իրեն նկարչությանն է նվիրել, լոկ արվեստի սե՞ր է, միայն այդքա՞ն, թե՞ շփման եզրեր է ունեցել այն նպատակների հետ, որոնց հետամուտ է եղել Աբովյանը։ Տեսնենք ինչ հիմքեր են տալիս, այդ տեսակետից, Աբովյանի նամակները։

Առաջին նամակը, ինչպես արդեն պարզ է, Աբովյանը գրել է Ներսիսյանին դեռ չհանդիպած, բայց տեղյակ այն մտադրություններին, որոնցով նա մի կերպ հասել է Պետերբուրգ։ Ժուկովսկուն խնդրելով հաջողեցնել իր հայրենակցի գործը՝ Աբովյանը խոստանում է Ներսիսյանից անդրժելի երդում առնել հայրենիքին ծառայելու, նրա անունը փառաբանելու, նրա զավակների համար իր ամբողջ ուժն ու կարողությունը գործ դնելու մասին։ Թեև Աբովյանը դեռ չի հանդիպել Ներսիսյանին, բայց ճանաչելով նրան վաղուց, ըստ երևույթին վստահ է եղել, որ իր ընկերոջ դեպի նկարչական արվեստն ունեցած բուռն սերը հայրենասիրական հիմքեր ունի։

Երկրորդ նամակը, որ գրված է Ներսիսյանին հանդիպելուց հե-

[1] Դորպատյան օրագրերից հայտնի է, որ Աբովյանը ոչ միայն հետաքրքրվել է երաժշտությամբ, սիրով հաճախել համերգներ, այլև որոշ չափով սովորել։

ռու, ցույց է տալիս, որ Աբովյանը չի սխալվել։ Ներսիսյանն Աբովյանին ասել է, որ ինքը պետք է կամ մնոնի այստեղ, կամ էլ՝ Պետերբուրգից վերադառնա որպես արվեստագետ՝ իր ազգին ծառայելու համար»։[1]

Այժմ տեսնենք, թե ինչպես են արտահայտվել Ներսիսյանի մասին նրա կյանքի ավելի ուշ շրջանի ժամանակակիցները։

«Հանգուցյալը,— գրում է «Մշակ»-ը Ներսիսյանի մասին,— լինելով վերին աստիճանի գաղափարական մարդ և իր անձը բոլորովին նվիրած լինելով իր ժողովրդին, մինչև մահն էլ աշխատում էր նրա համար»։[2]

Պերճ Պռոշյանը նույնպես արտահայտվել է Ներսիսյանի մասին։ Նա էլ իր հոդվածում խոսում է Ներսիսյանի հայրենասիրության, ինչպես և այն մասին, թե նա «այն անձնավորություններից էր, որ աշխատում էր գործել առանց իր եսը ցույց տալու»։ Պռոշյանի հոդվածից պարզվում է, որ շրջապատը Ներսիսյանին ծույլ է համարել։ Պռոշյանը անձամբ ծանոթ լինելով նկարչին, ասում է, որ Ներսիսյանը «այդ բամբասանքները բանի տեղ չի դրել»։ Դա հայտնի է եղել Ներսիսյանին և նա, ինչպես Պռոշյանն է ասում, բարեկամների նեղ և մտերիմ շրջապատում բացատրություն է տվել։ Պռոշյանն ասում է, որ Ներսիսյանը «նկարչությունից վեր էր համարում օգտակար գործի դերը»։[2]

Ուրեմն, ժամանակակիցների վկայությամբ, Ներսիսյանը գաղափարական մարդ է եղել, մեկն այն դեմքերից, որ հասարակության շահը գերադասել է ամեն ինչից։ Սրանք հատկություններ են, նկարչի բարոյական նկարագրի մեջ այնպիսի գծեր, որ բնորոշ են Աբովյանի և ընդհանրապես նրա դարաշրջանի առաջավոր մարդկանց համար։[3]

---

1 «Ստեփան Ներսիսյանի մահվան մասին». («Մշակ», 1884, № 41).

2 Պ. Պռոշյան. «Ստեփաննոս Ներսիսյան Երևանցի», («Տարազ». 1902, № 3)։

3 Նկատենք, որ Աբովյանի և Ներսիսյանի բարեկամությունը շարունակվել է Պետերբուրգից հետո նույնպես։ Հետագա շրջանի փոխհարաբերությունը վկայող մի փաստաթուղթ է մեզ հայտնի, որն այստեղ հրապարակում ենք։ 1842-ի նոյեմբերի 23-ին, Ներսիսյանը Պետերբուրգից մի նամակ է ուղարկել Աբովյանին, որը պահվում է վերջինիս արխիվում (№ 303)։

«Ուսումնականին Խաչատրոյ Աբովեանի՝

Ողջոյն և սէր անմոռանալի.

Արդարև, ըստ խոկականի յինի կեղծիս քաղցրահոգութեան լռելով մինչ ցարդ. այժմ ի գրելն իմ առ ձեզ զնամակ բարեկամութեան, որոց հասաքա-

Ի՞նչ նկարչական ժառանգություն է թողել Ստեփանոս Ներսիսյանը և կարելի՞ է արդյոք ընդհանրություններ տեսնել այդ կողմից նրա և Աբովյանի միջև։ Թե Ներսիսյանը որքան է նկարել՝ մեզ հայտնի չէ։ Դժբախտաբար նրա նկարչական ժառանգությունը

կաց խուկ է կարծիս, բայց ըստ պատրուքեան մեծահոգաց և ուսումնականաց՝ ներեսցի, թողլով, ի ժամու՝ յորում ձեռնհաս լիցի. արդ, իմ է այս ամենն սխալմունք, և ես գանգատեմ, ի հոլովմանէ ժամանակին ժամուցս, զոր արգելեին միշտ ի մտօ անել զապագայն· իսկ զինի այնր ամենի զգալով իմ զսէր ձեր զոր ցուցէք ինձ ի 1835 ամի ի Ս—Պետերբուրգ՝ համարեմ այժմ գրել ինչ առ բարեկամութիւն ձեր, զորմէ սպասեալ էի· ուստի հանդիպեալ պատահմանցն որ յիս՝ ուսուցանէ չխափանեալ զայն, որ է ի վերատեսչէն Աստուծոյ. վասն որոյ ցանկամ միշտ ունիլ, և առ այս ողջացուցի գրեմ առ բարեկամիդ զի իմասջիք և որ յաւուր միում ստացեալ եմ պակեթ մի ի Տէր Մովսէսէ Տէր Մովսէսեան որ էրն ի Պետերբուրգ, առ Լեյբ-մեդիկ Մարկուսին, չգիտելով իմ թէ յումմէ իցէ պակեթն տուրի առ նա, զոր չբացեալ նորա է հարց նախ, թէ Աբովեանն է այս, և ես չգիտելով արարի պատասխանի այն, զոր ի բանալն հաստատեցաւ զկարծիս. յետ յորոյ ընկալեալ իմ զսէր և զմարդասիրութիւն նորա և իմանալով զբարեկամութիւն ձեր՝ խոստանայ ունել և ընդիս զսէրն, զոր առ ձեզ և հրավիրէ զիս տանել յարաժամ երթ և եկութիւն առ ինքն որպէս եղեալդ բարեկամ. իսկ իմ զրադեալ ի տարաբախտ ժամանակի չերկարեցի զընթացս իմ առ նա, որ պարտաւորեալս մինչ ցարդ եմ։ Իսկ այժմեան զխտաւորութիւն իմ յորդորեաց զիս առնել ձեզ զայս գրութիւն, յուսամ զի մի անտես լինիցի ի ձէնջ, զոր խնդրեմ, նախ՝ ներել զանցեալն և տալ ի ժամանակի, զոր ամենևին սպասեցի, և երկրորդ՝ զընկալեալ իմ փոքր ի շատէ զուսումն նկարչութեան, զոր էի զեգբերեալ 'ի նայ, կամիմ այժմ զալ ի Տփխիս, վասն որոյ չգիտելով տեղայդ արդիւնաւորութեանցն, որ առ զարհեստն իմ՝ երկրային, ուստի ցանկամ մտանել ի պաշտօն ուսուցչութեան նկարագրութեանս տեղայդ նոր բացեալ ճեմարանին կուսանաց, զոր ոչ ոք կալեալ զխմս հավատարիմ քաց ի բարեկամէդ և ի պարուշէկ Արշակայ Տէր Ղուկասեանցէ, համարձակիմ, գրել առ ձեզ զնոմակս խնդրանաց, զի աշխատ լինել իմանալ յորպիսութիւն է վերոյիշեալ ճեմարանին, թէ զո՞յ այնր վկայականօք ուսուցիչ հաստատեալ՝ թէ ո՞չ, և կամ ի լինելն զուցէ կատարէ միայն զգ [...] և ոչ հաստատեալս. որոյ վասն աղաչեմ մի անտես առնուցու բարեկամդ իմ հետևիլ առ այս, և գրել փութապես զխնկութիւնն, եթէ զո՞յ հնար մտածիլ զիս 'ի նայ՝ աշխատեցայց մինչդեռ ժամանակ ի ձեռս է, առաքել զխնդրագիր իմ հանդերձ վկայական[օք] առ տեղւոյդ կուսակալն, և յետ այնր փութացայց և ես, 'ի տէր և, 'ի յառումն կարօտութեանց սիրոյ։ Ամենամաղթանաւոր ամենախոնարհ կրտսեր բարեկամ ձեր ազատական նկարիչ

«Ստեփաննոս Ներսիսեանց»։

Ներսիսյանի կենսագրությունից հայտնի է, որ Թիֆլիսում հաստատվելով, որպես ուսուցիչ, պաշտոնավարել է Ներսիսյան դպրոցում։ Անհավանական չէ, որ Աբովյանի աջակցությամբ նա տեղ ստացած լինի այդտեղ

ոչ միայն հավաքված չէ, այլև եղածն էլ անհրաժեշտ ուսումնասիրության ենթարկված չէ։

Ներսիսյանի նկարներից մեզ հայտնի է միայն յոթը, որից հինգը գտնվում է Երևանի Կերպարվեստի թանգարանում։ Մեծ մասը դիմանկարներ են։ Հայտնի է, օրինակ, որ նրա վրձինին է պատկանում Ներսես Աշտարակեցու յուղանկար դիմանկարը, որը ժամանակակիցներից ոմանք համարել են նկարչի ստեղծագործության գլուխ-գործոցը։ Բացի այդ, Ներսիսյանի վրձինին են պատկանում նաև Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի հանրածանոթ դիմանկարները։ Դրանց մասին մենք գաղափար ունենք գրականությունից։ Ներսիսյանի մասին տպագրված մի քանի հոդվածներում եղած հիշատակություններից, այդ նկարների լուսատիպ նմանահանություններից։ Կերպարվեստի թանգարանում գտնվում են գեներալ Մ. Երկայնաբազուկ Արղությանի, իշխանի Վասիլիյ Բեհբությանի, Եղիսաբեթ Աբովյանի[1] դիմանկարները, մի անհայտ կնոջ դիմանկար, ինչպես և «Պիկնիկ Քռի ափին» յուղանկարը։[2]

Պատկերած նյութի և նկարչական արվեստի տեսակետից ի՞նչ առանձնահատկություններով է աչքի ընկնում Ներսիսյանի ստեղծագործությունը։ Այս հարցի նեղ մասնագիտական կողմը մեզ չի զբաղեցնում։ Մեզ հետաքրքրում է Ներսիսյանի՝ որպես նկարչի դերն ու նշանակությունը մեր լուսավորական շարժման մեջ։

Ներսիսյանը ասպարեզ է մտել պրոֆեսիոնալ ուսուցման լուրջ ճանապարհ անցնելուց հետո։ Մի ուրիշ նկարիչ, որ Ներսիսյանի ժամանակակիցն է եղել, Հակոբ Հովնաթանյան, իր գործունեությամբ վերջավորեց հայկական և ընդհանրապես արևելյան մանրանկարչության տրադիցիան, ստեղծելով դիմանկարչական արվեստի չքնաղ նմուշներ։ Ներսիսյանով նկարչական արվեստը հայ իրականության մեջ զարգացման նոր հուն է մտնում։ Հովնաթանյանից տարբեր լինելով, նա իր հետ բերում է ռուսական նկարչական միջավայրի ազդեցությունը, առաջավոր տրադիցիաները։

Ներսիսյանը Պետերբուրգում կրթություն ստացել է մի այնպիսի շրջանում, երբ ռուսական նկարչության մեջ, ավելի ստույգ

---

[1] Եղիսաբեթը Գևորգ Աբովյանի մայրն է։ Այս այն Աբովյանն է, որի գերեզմանաքարը տեսնելով՝ Խաչատուր Աբովյանի անհայտացման առեղծվածը մի ժամանակ լուծված են համարել։ Գևորգ Աբովյանի մասին տես՝ Լ. Մելիքսեթ-Բեկի հոդվածը («Սովետական Վրաստան», 1941, № 7)։

[2] Աբովյանի նկարի հեղինակը, որ մինչև հիմա անհայտ է համարվում, Ներսիսյանը չէ՞ արդյոք։ Այս հարցը առաջ ենք քաշում հավանականության կարգով, մտադիր լինելով նրա քննությանը անդրադառնալ առանձին, մի փոքր ավելի հանգամանորեն։

Պետերբուրգի Արվեստների Ակադեմիայում տիրապետող ուղղությունը ակադեմիզմն էր։ Ակադեմիզմի ազդեցությունը Ներսիսյանի նկարների վրա, իհարկե, զգալի է։ Բայց Ներսիսյանի նկարները զտարյուն ակադեմիական չեն։ Ներսիսյանը երբեմն շեղվում է ակադեմիզմից և այն էլ բավական նշանակալից չափերով։ Այդ, ըստ երևույթին, արդյունք է այն ազդեցության, որ երիտասարդ Ներսիսյանի վրա ունեցել են Պետերբուրգի Ակադեմիայում խմորվող նոր տրադիցիաները, որ կապված էին դարաշրջանի համեմատաբար առաջավոր պահանջների հետ։

Ներսիսյանի շեղումը ակադեմիզմից, ռեալիստական ըմբռնումներին հարելը, մոտ են այն պայքարին, որ Աբովյանը մղել է գրականության քարացած տրադիցիաների դեմ։

Ներսիսյանը կանգնում է ռեալիզմի հողի վրա. դիմանկարչության մեջ նա կարողանում է գծել բնավորություն, մի որոշ չափով էլ թափանցել հոգեբանության խորքերը։ Առաջինը Ներսիսյանն է, որ տալիս է պեյզաժ։ Բնությունը Ներսիսյանի նկարում ոչ թե դեկորատիվ տարր է, այլ տրամադրություն, զգացմունք։ Մարդիկ բնության մեջ, միջավայր, կենցաղ, («Պիկնիկ Քռի ափին»)։ Կենցաղագրության մեջ բարեմիտ հումոր է նշմարելի և ընդհանրապես ժանրայնություն։ Թեման ակադեմիական չէ, լուծումը նույնպես։ Կատարման սկզբունքով էլ Ներսիսյանն այստեղ բավական հեռու է ակադեմիզմից։ Հավասարակշիռ կառուցման սկզբունքը՝ լինի առարկաների, թե գործող անձերի միջև, չափազանց բնորոշ է ակադեմիզմի համար։ Մինչդեռ Ներսիսյանը գործող անձերին հավաքել է մի անկյուն և որպեսզի մի կողմը միայն ծանրացած չլինի, մյուս կողմում տվել է լեռնանկարը։

Իր թեմատիկ աշխարհով էլ Ներսիսյանը ինչ որ չափով մոտ է կանգնած Աբովյանին։ Նրա կտավների գործող անձինք (Ներսես Աշտարակեցի, գեներալ Բեհբուտով) Աբովյանի վեպումն էլ կան։ Աբովյանի նման Ներսիսյանն էլ ոգևորված է հայ հնագույն կուլտուրայով, նրա ականավոր ներկայացուցիչներով։ Ներսիսյանի վրձինին է պատկանում Մեսրոպ Մաշտոցի մինչև օրս էլ չգերազանցված դիմանկարը։ Նա էլ Աբովյանի նման բնության սիրահար է։ Ներսիսյանը բնության նուրբ, և միաժամանակ բնական, զգացմունք ունի։ Նկարներից մեկի ժանրայնությունը մի որոշ չափով կապվում է «Վերքի» կենցաղագրական տեսարանների հետ։

Պետք է շարունակել պրպտումները, լրացուցիչ տվյալներ գտնել Ներսիսյանի կյանքից և, ըստ հնարավորության, հանգամա-

նորեն լուսաբանել նրա հայացքները։ Այս հարցի լուսաբանումը ունի կարևոր նշանակություն։ Ամենից առաջ դա օգնում է պարզելու, որ Աբովյանը իր լուսավորական գործունեության մեջ ոչ թե մենակ է եղել, ինչպես կարծել ենք, այլ զինակիցների հետ։ Մենք գիտենք, որ Աբովյանը համախոհներ ունեցել է, որ եղել են նրան գնահատող, նրա գործը խրախուսող մարդիկ։ Այդ հայտնի էր, բայց մինչև այժմ չէն պարզված, թե դրանք համախոհնե՞ր են եղել միայն, թե նաև զինակիցներ։ Աբովյանը ճակատում մենա՞կ է պայքարել, թե նրա հետ եղել են նաև ուրիշները։ Ներսիսյանի պատմությունը Աբովյանի կյանքում այդ տեսակետից մի շատ կարևոր և նոր դրվագ է։ Չմոռանանք, որ այս ավյալները վերաբերում են 1835-ին, այն շրջանին, երբ Աբովյանը տակավին ուսումնառության մեջ էր և ամբողջ ճակատով գործունեություն և պայքար չէր ծավալել։ Բոլոր դեպքերում մի բան պարզ է։ Դեռ այն ժամանակ Աբովյանը որոնել է իր նման մտածողներ, իր գործին համակիր մարդիկ։ Աբովյանը գիտեր, թե ինքը ինչ մեծ գործի է պատրաստվում, վստահ կարելի է ասել, որ նա ունեցել է իր դերի և նշանակության պարզ գիտակցությունը, բայց և միաժամանակ ըմբռնում էր, որ մենակ գործել չի կարող։ Դրա համար էլ վաղօրոք նրան զբաղեցրել, մտահոգել է այն հարցը, թե ապագայում ովքե՞ր պետք է իր հետ գործեն։ Ներսիսյանի հետ կապված այս ամբողջ պատմությունը ոչ այլ ինչ է, բայց եթե մի ձգտում Աբովյանի մեջ՝ հայ ժողովրդին լուսավորող ուժեր պատրաստել, ապագա գործիչներ։

Աբովյանի համար պարզ է եղել, թե Ներսիսյանը ինչ է անելու կրթություն ստանալուց հետո։ Աբովյանին հազիվ թե գոհացներ, եթե Պետերբուրգից վերադառնալուց հետո Ներսիսյանը բավականանար հայկական պեյզաժի չքնաղ տեսարանները կտավին հանձնելով միայն։ Այդ, իհարկե, պետք էր, սակայն գլխավորը, Աբովյանի կարծիքով, պետք է դպրոցը լիներ։ Ինչպես որ ինքը լեզու, պատմություն կամ աշխարհագրություն էր սովորեցնելու հայ աշակերտներին, այնպես էլ Ներսիսյանը նկարչություն՝ իսկ մի ուրիշն էլ երգ ու երաժշտություն։

Աբովյանի այս նամակները, ինչպես և նրա ձեռքով գրված յուրաքանչյուր փաստաթուղթ, երևան են հանում մեծ լուսավորչի բնավորությունը, խառնվածքը, այն մեծ և անկրկնելի անհատականությունը, որ ունեցել է նա։

Շատ բնորոշ է Աբովյանի համար մի փաստ։ Նա չի սպասել,

որ Ներսիսյանը նրան դիմի, խնդրի։ Այն տեղեկությունը, թե Պետերբուրգ է հասել իր հայրենակիցներից մեկը և ահա այդպիսի ձգտումներ ունի՝ բավական է, որ Աբովյանը համակվի նրա վիճակով և ամեն ինչ անի նրան օգնելու համար։

Հետո. Աբովյանին հատուկ է եղել չափազանց ոգևորությունը։ Ամեն մի ազնիվ ձգտում, հասարակական շահի հետապնդում ի վիճակի են եղել նրան ամբողջապես գերելու։ Այդպիսի դեպքերում Աբովյանն իր անձը մոռանում էր, իր գործերը մի կողմ դնում, ամբողջապես դառնում նպատակ, ձգտում, միայն թե նպաստի, օգնության հասնի։ Պարրոտի հորը գրած նամակի մեջ Աբովյանն ասում է. «Ես ինձ մոռացել եմ, ինչ որ անելու է, պետք է անել նրա համար»։ Ինչպես երևում է, Պարրոտի հորը կամ նրան, ում որ ուղղված է այս նամակը, հայտնի է եղել, թե ինչու է Աբովյանը Դորպատից Պետերբուրգ հասել, և ըստ երևույթին, նա իր կողմից պետք է մի որոշ օժանդակություն ցույց տար։ Երևի այդ նկատի ունի Աբովյանը և կամենում է, որ Պարրոտի հայրը, եթե իր համար մի բան անելու է, թող անի Ներսիսյանի օգտին։ «Բարի եղեք,— ասում է նա,— որոշել իմ ճակատագիրը, որպես այդ երիտասարդ մարդու ճակատագիր»։ Աբովյանն այնքան է համակված եղել Ներսիսյանի գործով, որ ոչ միայն հանգիստ չի ունեցել, այլև Ներսիսյանի հարցը համարել է իր սեփական հարցը։ Աբովյանն ասում է, որ եթե չլուծվի Ներսիսյանի խնդիրը, ինքը իրեն նույնքան դժբախտ է համարելու, որքան նա։ Որքան դժբախտ է զգալու իրեն, ասում է Աբովյանը, տեսնելով, թե ինչպես է ոչնչանում Ներսիսյանի տաղանդը։

Ներսիսյանի մասին գրած այս տողերը հիշեցնում են Աբովյանի այն նամակը, որ դրանից մի տարի առաջ նա գրել է Ներսես Աշտարակեցուն։ Աբովյանը և Ստեփանոս Նազարյանը Դորպատում լսում են, որ Ներսես Աշտարակեցին մտադիր է իրենց նյութական աջակցություն ցույց տալ։ Աշտարակեցուն գրած նամակի վերջում Աբովյանը անդրադառնալով այդ խնդրին՝ ասում է, ոչինչ, եթե չկարողանան իրեն օգնել, բայց շատ վատ կլինի, եթե Նազարյանը ոչ մի օգնություն չստանա։ Աբովյանը նամակում ոգևորված խոսում է Նազարյանի ընդունակությունների, գիտության մեջ խորանալու ձգտումների մասին և խնդրում, պաղատում ոչինչ չխնայել և օգնել նրան։ «Ես գերի կլինեմ նրան,— գրում է Աբովյանն այդ նամակում,— ով որ հանձն կառներ մի կամ երկու-երեք տարի հո-

դալու նրա կարիքները»։[1] Մի փոքր հետո նույն նամակում Աբովյանը գրում է. «Կարծում եմ, որ երեք-չորս ամիս և նա այլևս չպիտի կարողանա մնալ այստեղ չքավորության երեսից։ Ինչ անեմ, ավելի լավ եմ համարում ջրահեղձ լինել, քան թե տեսնել նրա թշվառությունը»։[2]

Եվ այս դեպքում էլ, ինչպես և Ներսիսյանի, Աբովյանին մտահոգել է ոչ միայն իր մտերիմ ընկերոջը օգնելու ցանկությունը, այլ այն օգտակար գործը, որ նա կատարելու է ուսումը ստանալուց հետո՝ հայրենիքում։ Աբովյանն Աշտարակեցուն գրում է, որ օգնելով Նազարյանին տեղափոխվել Դորպատ ուսման մեջ խորանալու համար՝ ինքը մտածել է այն բախտավորության մասին, որ հետո ժողովուրդը ստանալու է Նազարյանից։

Ուշագրավ է նաև այն համոզված տոնը, որով գրված են այս նամակները, մանավանդ երկրորդը։ Տեղ-տեղ նա կտրուկ է դնում հարցը, վճռական. «Ոչ, Պետերբուրգում կարող է և պիտի կատարվի նրա ցանկությունը»։ Այս և նման արտահայտությունները կարծես նպատակ ունեն ազդել ծերունի Պարրոտի վրա՝ դրական վճիռ կայացնելու։ Աբովյանն այնքան համոզմունք է հանդես բերում, որ այլևս տեղ չի թողնում կասկածի ու երկմտության։ Աբովյանը ոչ միայն խնդրում է Պարրոտին, այլև հուշում, նույնիսկ թելադրում, թե ինչպես վճռի հարցը։

Աբիխը իր մորն ուղղած մի նամակում Աբովյանի մասին այսպիսի միտք է հայտնել. «Աբովյանը,— ասում է նա,— մի տեսակ հանճար է։ Ձեզ համար հետաքրքրական կլինի մի նամակ կարդալ նրանից, որը թեև ըստ ասիականի հիպերբոլիկ է, բայց և այնպես թույլ է տալիս նայել այդ բացառիկ մարդու արտասովոր հոգուն»։[3] Աբիխն իրավացի է. Աբովյանի մի նամակն էլ բավական է, որպեսզի կարելի լինի գաղափար կազմել, թե իսկապես ինչ կայծեր են բոցկլտացել նրա հոգում։ Նկատենք, որ Պարրոտի հորն ուղղված այս նամակը Աբովյանը գրել է 1835-ին, երբ երիտասարդ էր, Դորպատում ուսանող, իսկ Պարրոտը ակադեմիկոս։ Բայց այնպես է գրված ամբողջ նամակը, հարցերն այնպես շոշափված, խնդիրներն այն ձևով արծարծված, նամակի ամբողջ տրամաբանությունը, տոնը, հոգեբանությունը առաջին բառից մինչև վերջինը մի այնպիսի մթնոլորտ են առաջ բերում, որ թվում է, թե հա-

1 «Սովետական գրականություն», 1941, № 11, էջ 98

2 Նույն տեղ։

3 «Սովետական գրականություն», 1943, № 4—5, էջ 197

վաստրն է հավասարի հետ խոսում: Աբովյանի այս նամակում, ինչպես և շատ ուրիշ նման փաստաթղթերում մեծամտություն, գոռոզամտություն չկա: Ընդհակառակը, նա գրեթե միշտ էլ կարողանում է անհրաժեշտ հարգանք հանդես բերել, որևէ ձևով դիմացինին չվիրավորել: Այն մարդիկ, որոնց Աբովյանը գրել է այդ նամակները, որևէ խնդրի համար դիմել, ի հարկե, երիտասարդ Աբովյանի համեմատությամբ կյանքի անհամեմատ մեծ փորձի տեր են եղել, նրանից զարգացած և մեծ կուլտուրայի տեր, և հարկ է, որ Աբովյանը, հասկանալով այդ՝ պատկառանքի զգացումով լցվեր նրանց նկատմամբ: Բայց որպես անհատականություններ՝ այդ մարդիկ շատ էին փոքր Աբովյանի համեմատությամբ: Եվ թեև բարյացակամ տրամադրված լինելով մեծ մասամբ ընդառաջ են գնացել նրա հարուցած խնդիրներին, շատ անգամ խորհուրդներ տվել նրան, այնուամենայնիվ ոչ միայն չեն ունեցել մտքի և հոգու այն թռիչքը, որ հատուկ էր Աբովյանին, այլև մեծ մասամբ չեն ըմբռնել, չեն հասկացել, հաճախ էլ սխալ մեկնաբանել նրա ազնվությունները, վերագրելով դրանք երիտասարդական անփորձությանը և այլն:

Աբովյանը շատ լավ գիտեր, որ ինքը ճշմարիտ է, որ եթե ոչ այսօր, ապա վաղը, համենայն դեպս ապագան պատկանելու է իրեն: Նշանակում է նա ունեցել է իր պատմական իրավացիության գիտակցությունը: Հիշենք այդ տեսակետից շատ բնորոշ փաստ— Աբովյանի այն նամակը, որ նա գրել է Դորպատից նորընտիր կաթողիկոսին՝ Հովհաննես Կարբեցուն:[1] Այդ նամակում Աբովյանը կաթողիկոսին խորհուրդներ է տալիս, գործունեության մի ամբողջ ծրագիր շարադրում, հայ ժողովրդի լուսավորության հեռանկարներ գծում և այլն: Թեև այդ նամակի հեղինակը շատ է երիտասարդ, Դորպատում ուսանող, դիրքով և աստիճանով էջմիածնի դպիր, բայց մեծ մարդ, խոշոր և ցայտուն անհատականություն: Նամակներում երևան է գալիս նրա շեշտված խառնվածքը: Հենց այս նամակներում դեռ բոլորովին երիտասարդ Աբովյանը մի քանի գլխով բարձր է կանգնած նրանցից, ում այդպիսի պատկառանքով և երախտագիտության զգացումով դիմում է, խնդրում:

Աբովյանն այնքան է ապրել հայրենիքի ցավերով, նրան այնքան է զբաղեցրել իր երկրի լուսավորության գործը, ապագան, որ մի ներքին ձայն իրավունք է տվել իր անձի միջով ներկայացնել ժողովուրդը, խոսել նրա անունից:

[1] Ն. Տեր-Կարապետյան, էջ 122:

Աբովյանին, ինչպես ցույց են տալիս այս նամակները, շատ է վշտացրել, նույնիսկ վիրավորել այն կարծիքը, թե հայերը շահամոլ մարդիկ են։ Դրան Աբովյանը փորձել է հակադրվել ոչ թե խոսքով, այլ գործով։ Ցույց տալու համար, որ այդպես կարծողները սխալվում են, չեն ճանաչում բուն ժողովրդին, որը նույնպես, ինչպես և ուրիշները, սեր ունի, Աբովյանի խոսքով ասենք, դեպի լավը, դեպի մարդը, դեպի հայրենիքը։ Աբովյանը ձգտել է, որ հայ ժողովրդի զավակները այնպիսի արժեքներ ստեղծեն, որ բոլորը տեսնեն և հավատան, թե ինչի է ընդունակ հայ ժողովուրդը։ Այս է եղել Աբովյանի երազը։ Նա ձգտել է ոչ միայն լուսավորություն տարածել հայրենիքում, այլև երազել է այն օրը, երբ հայ ժողովուրդը կկարողանա իր կուլտուրական կյանքով լայն շփման մեջ մտնել ուրիշ ժողովուրդների հետ։ Տգիտության մեջ խարխափող ժողովուրդը ծնել է մի մարդ՝ նկարչի տաղանդով։ Նա իր երկու նամակներում, հատկապես երկրորդում, վառ գույներով նկարագրում է Ներսիսյանի կրած տանջանքները խտալացի նկարչի՝ տիրոջ ձեռին, միայն թե կարողանա իր նպատակին հասնել։ Գուցե Աբովյանը գույները մի փոքր խտացրել է— կարող է պատահել։ Բայց դա չէ հարցը։ Աբովյանը կարծես դրանով ասում է— ահա ձեզ, թե ինչ ձգտումներ և ինչ հնարավորություններ են թաքնված հայ ժողովրդի մեջ։

Տարիներ հետո, Մուսին-Պուշկինին գրած նամակում Աբովյանն ասում է, որ աշխարհին հայտնի չեն այն չքնաղ գոհարները, որ կան հայ գրականության մեջ։ Աբովյանին ցավ է պատճառում, որ իր ժողովրդին չեն ճանաչում, որ նրա մասին թյուր, սխալ կարծիք գոյություն ունի։ Այդ հարցի մասին Աբովյանը հուսահատ զայրույթով է արտահայտվում։ Կարդում և զգում ես, որ նա այդ մասին անվրդով չի կարողանում խոսել։

Այսպիսով, այս նամակները պատճառ են դառնում, որ Աբովյանագետները զբաղվեն և ցույց տան, որ Աբովյանի լուսավորական գործունեության շրջանակները, կուլտուրայի տարբեր բնագավառներն ընդգրկելու տեսակետից, շատ ավելի լայն են, քան մինչև հիմա կարծել են։

ՄԻ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Անհավանական չէ, որ Աբովյանը Պետերբուրգում եղած ժամանակ ծանոթացած լինի Իվան Իվանովիչ Պանաևի հետ։[1]

Ինչո՛ւ ենք այդպես կարծում։

[1] Այս մասին խոսք կա նաև ընկ. Ա. Ղուբանյանի՝ «Աբովյանը և ռուս կուլտուրան» հոդվածում։

Թիֆլիսում Աբովյանը կապված է եղել Ալթանդիլյան ընտանիքի հետ. նա, ինչպես արդեն ասել ենք, մոտ է եղել Զաքար և Սողոմոն Ալթանդիլյան եղբայրների հետ։ Մանավանդ վերջինի հետ։

Սողոմոն Ալթանդիլյանը 1831-ին տեղափոխվում է Պետերբուրգ, ընդունվում Պավլովյան Կադետական կորպուսը։ Մի ժամանակ եղած, հետո ընդհատված նամակագրությունը Աբովյանի և Ալթանդիլյանի միջև, վերսկսվում է։ Ալթանդիլյանի գրած մի քանի նամակները պահպանվել են։ Մինչև հիմա, դժբախտաբար, հայտնաբերված չեն Աբովյանի գրած նամակներն Ալթանդիլյանին։

Աբովյանը, ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ, որոշում է օգնել ընկերոջը։ Նա, ինչպես պարզվում է, Ալթանդիլյանին գրել է, որ ինքը մտադիր է Սողոմոնին հանձնարարել Պետերբուրգում ապրող Պարրոտի հորը՝ ակադեմիկոս Գեորգ Պարրոտին, ըստ երևույթին այն նպատակով, որ Ալթանդիլյանը շփման մեջ լինի մի այդպիսի նշանավոր տան հետ, այցելի Պարրոտին, խորհուրդներ ստանա և ընդհանրապես վայելի մի այդպիսի հեղինակավոր մարդու հովանավորությունը։

...„Очень хорошо будет для меня иметь этакого благодателя в Петербурге, каков Паррот и буду вечно благодарен тебе за это"[1] գրում է Ալթանդիլյանը։

Ի միջի այլոց նկատենք, որ Ալթանդիլյանը արդեն որոշ կապեր ուներ Պետերբուրգյան հասարակության մեջ։ Ահա թե ինչ է նա գրում Աբովյանին.

„Я как приехал из Грузии... имел от моего брата Захара Степановича письмо к одной благодательной женщине и она приняла меня, к которой я и хожу в отпуск по большим праздникам".[2]

Իր նամակներից մեկում Աբովյանին Ալթանդիլյանը խնդրում է նամակներ գրել իրեն ռուսերեն լեզվով և տալիս է կադետական կորպուսի հասցեն։[3] Իսկ մի այլ նամակում, նույն Ալթանդիլյանը խնդրում է, սրանից հետո, նամակներն ուղարկել մասնավոր հասցեով։

„У нас в корпусе приказано ротным командирам читать письма написанные к кадетам"[4] գրում է Ալթանդիլյանը։

[1] Աբովյանի արխիվ, № 245։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղ, № 244։
[4] Աբովյանի արխիվ, № 245։

Այս մի ուշագրավ փաստ է, որն ավելի հետաքրքիր է դարձնում այն հարցը, թե ինչ բովանդակություն են ունեցել Աբովյանի նամակները:

Ի՞նչ հասցեյով պետք է Աբովյանը Ալթանդիլյանին գրեր: Ալթանդիլյանը խնդրում է իրեն ուղղված նամակները հասցեագրել Իվան Իվանովիչ Պանաևին:

1834-ի վերջերին Աբովյանը, ինչպես արդեն գիտենք, անցել է Պետերբուրգ, ուր մնացել է երկու ամսվա չափ, գուցե նույնիսկ մի փոքր ավելի: Միանգամայն բնական է, որ Աբովյանը Պետերբուրգում պետք է շտապեր հանդիպել իր ծանոթներին, վաղեմի ընկերներին: Մեզ հայտնի չէ, թե Ստեփանոսը, որին Աբովյանը հանդիպել էր 1830-ին Պետերբուրգում՝ Դորպատ մեկնելիս, այդ ժամանակները ավարտե՞լ էր արդեն իր ուսման ընթացքը Միխայլովյան հրետանային կորպուսում և ընդհանրապես դեռ Պետերբուրգո՞ւմն էր, թե ոչ:[1]

Ալթանդիլյանն այդ ժամանակ անշուշտ Պետերբուրգումն է եղել: Իր նամակներից մեկում նա Աբովյանին գրում է, որ ինքը տեղափոխվել է հինգերորդ դասարանը և իրեն դեռ մնում է սովորել չորս տարի: Ալթանդիլյանն այս գրել է 1833-ին:[2] Նշանակում է, Աբովյանի Պետերբուրգ եկած տարին նա դեռ սովորում էր:

Աբովյանը Ալթանդիլյանին հանդիպելու համար պետք է գնար կամ Պանաևի տուն, կամ էլ ուղղակի կորպուս: Այդ երկու հասցեներով միայն նա կարող էր գտնել ընկերոջը: Եվ եթե անգամ Աբովյանը Ալթանդիլյանին կորպուսում է հանդիպել, շատ բնական է, որ նա, Ալթանդիլյանը, Աբովյանին, որն առանձնապես շատ ծանոթություններ չուներ Պետերբուրգում, տաներ այն ընտանիքները, որոնց հետ ինքը մշտական շփման մեջ էր գտնվում: Չենք կասկածում, որ նա Աբովյանին տարել ծանոթացրել է նաև այն կնոջ հետ,

[1] Բանասիրական գրականության մեջ՝ քննության առարկա է եղել, թե ով է այս Ստեփանոսը: Այն կարծիքն է հայտնվել, որ Նազարյանն է (Ն. Տեր-Կարապետյան): Լեոն և Շահազիզը այս ենթադրությունը կասկածի տակ առան, որովհետև Նազարյանը նույն այդ ժամանակները՝ ըստ երևույթին դասավանդում էր Ներսիսյան դպրոցում: Այդ հարցը հաջողեց պարզել Պետերբուրգի աշխատակից ընկ. Գ. Հարությունյանը, նա այն միտքը հայտնեց, որ դա եղել է Ստեփանոս Գասպարյանը, Աբովյանի դասընկերը Ներսիսյան դպրոցից: Այս շատ հավանական է, բայց թե ինչի՞ հիման վրա է հոդվածագիրը պնդում, որ Գասպարյանը «վկայագիր ստանալով Ռուսաստան է մեկնել բախտորոնելու», մնում է չպարզված («Էջմիածին», 1947, հուլիս-օգոստոս, էջ 68):

[2] Աբովյանի արխիվ, № 245:

որի մասին գրել էր իր մի նամակում, բայց որի ով լինելը, դժբախտաբար, հայտնի չէ։ Իհարկե, նրանք անպայման այցելած կլինեն նաև Պանաևին, նամանավանդ որ Ավթանդիլյանին անկասկած հայտնի էին իր ընկերոջ՝ Աբովյանի գրականական հետաքրքրությունները։ Իսկ Պանաևը նոր, մի քանի տարի էր ընդամենը, որ ոտք էր դրել գրականության ասպարեզ՝ որպես բանաստեղծ և արձակագիր։ Այն ժամանակ Պանաևն ընդամենը 23—24 տարեկան էր, նշանակում է նույնիսկ ավելի երիտասարդ, քան Աբովյանը։ Բնականաբար շատ հետաքրքիր կարող էր լինել երկուսի համար էլ հանդիպել և զրուցել։

Մենք անկասկած ենք համարում այդպիսի հանդիպումը։

Ըստ որում այդ զրույցը առանձին հետաքրքրություն կարող էր ներկայացնել այն տեսակետից, որ նոր էր միայն ավարտվել Բելինսկու առաջին հոդվածի՝ «Գրական երազանքների» տպագրությունը։[1] Այդ հոդվածով Բելինսկին ոչ միայն միանգամից առաջին տեղը գրավեց իր ժամանակի քննադատների շարքում, այլև մեծ խառնաշփոթ առաջ բերեց գրականության մեջ։ Գրական հասարակայնության առաջավոր շերտերը ջերմ ծափահարություններով շրջապատեցին երիտասարդ քննադատի անդրանիկ ելույթը և, ընդհակառակը, պահպանողական ռեակցիոն շրջանները կատաղի հարձակումների անցան։

Աբովյանը Պանաևի հետ պետք է հանդիպած լինի գրական այս թունդ վեճերի շրջանում։ Իսկ Պանաևը, ինչպես մեմուարային գրականության փաստերն են ցույց տալիս, շատ էր ոգևորված Բելինսկու այդ հոդվածով, այնքան որ չկարողանալով զսպել իր հիացմունքը, նամակ է ուղարկել ազնիվ հանած քննադատին։ Ուրեմն՝ միանգամայն բնական է, որ հանդիպելու դեպքում Պանաևը անդրադառնար Բելինսկու հոդվածին և նրա շուրջը եղած կրքոտ մթնոլորտին։ Ըստ որում բանասիրությունը ոչ մի հիմք չունի պնդելու, որ Աբովյանը, անկախ Պանաևից, տեղյակ եղած չլինի, եթե ոչ Բելինսկու հոդվածին, ապա գեթ այն վեճերին, որ առաջ էր բերել «Գրական երազանքները» հոդվածը։

Պետք է հուսալ, որ մեր բանասիրության հետագա պրպտումները կկարողանան այս ենթադրությանն իրական փաստ դարձնող վկայություններ հայտնաբերել։

---

[1] «Գրական երազանքներ» հոդվածը տպագրվել է մաս մաս «Մոլվա» (Նադեժդինի «Տելեսկոպ» ժուռնալի հավելված) շաբաթաթերթի տաս համարներում։ Հոդվածի վերջին մասերը լույս են տեսել 1834-ի դեկտեմբերին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Աբովյանը արդեն Պետերբուրգում էր։

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆՅԱՆ ՕՐԵՐԻՑ
ԵՐԿՈՒ ԷՋ ԱԲՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ

ԱԲՈՎՅԱՆԻ ՃԱՌԸ ԱԼԱՄԴԱՐՅԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ

Խաչատուր Աբովյանի ծանոթությունը և կապը Հարություն Ալամդարյանի, ինչպես և այն ժամանակվա ուրիշ նշանավոր մարդկանց հետ, դեռ հարկ եղած չափով լուսաբանված չէ։

Հայտնի է հետևյալը. Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցում սովորելիս, Աբովյանը աշակերտել է Ալամդարյանին։ Դորպատյան հիշատակարանում կա մի այսպիսի գրանցում. «Նա (այսինքն՝ Ալամդարյանը— Ռ. Զ.) իմ աշակերտության ժամանակը ինձ դառն աչքով էր մտիկ տալիս և շատ վերք հասցրեց»։[1] Թե ինչ մանրամասնություններ են թաքնված Աբովյանի այս խոստովանության տակ՝ դեռ լուսաբանված չէ։ Այս հանգամանքը, սակայն, չի խանգարել, որ Ալամդարյանի և Աբովյանի կապը շարունակվի, երբ վերջինս արդեն թողել էր Ներսիսյան դպրոցը և գտնվում էր Էջմիածնում։ Նրանք հանդիպելու առիթ ունեցել են Աբովյանի Թիֆլիս մեկնած ժամանակները, առանձնապես 1830-ի սկզբներին։ Աշակերտի և ուսուցչի ծանոթությունը հետագայում փոխվել է մի ջերմ բարեկամության. այն մի քանի նամակները, որ պահպանվել են Ալամդարյանի և Աբովյանի փոխթղթակցությունից, այդ են վկայում։ Իր գրած նամակներում Ալամդարյանն Աբովյանին կոչում է «սիրելի որդյակ իմ Խաչատուր», իրեն էլ անվանում «նրա լավը և բարեբախտությունը ցանկացող հարազատ բարեկամ և հայր»։[2] Ալամդարյանը Աբովյանի ապագա առաջադիմությամբ ոգևորվողներից լինելով՝ ուրախ է եղել, որ իր նախկին աշակերտը մեկնելու է Դորպատ՝ ուսման. «Իմ սիրելի դաստիարակ,— ասում է մի տեղ

[1] Խ. Աբովյան, «Ընտիր երկեր», հ. 2-րդ, 1940, էջ 382։
[2] «Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 71—72, 267,270։

Աբովյանը Ալամդարյանի մասին,— դու ինձ օրհնությամբ օտարություն ուղարկեցիր»։

Շատ ավելի կարևոր է նամակների բովանդակությունը։ Այդ նամակները վկայում են, որ նախկին ուսուցիչը և աշակերտը այժմ կապված են գաղափարական բարեկամությամբ, թեև նկատենք, որ այդ ժամանակ էլ և մանավանդ դրանից հետո Աբովյանի և Ալամդարյանի աշխարհայացքներն չափես տարբեր էին։

Աբովյանը Դորպատումն էր, երբ Նոր-Նախիջևանում Ալամդարյանը սպանվում է։ Ալամդարյանի մահվան մասին Աբովյանը տեղեկանում է Մսեր Մսերյանցի նամակից։ «Բազմերախտ վարժապետի հանկարծական մահվան դառն խաբարը» այնքան խորն է ազդում Աբովյանի վրա, որ նա անհանգստանալով երկար ժամանակ ոչ մի գործի չի կարողանում ձեռք զարկել։ Մի շաբաթվա մեջ նա լսում է, բացի ուսուցչից, նաև իր հորեղբոր՝ Հարություն Աբովյանի և իր բարեկամ՝ Աղաջան Տիրմազանյանի մահվան մասին։ Աբովյանը իր խորը վիշտը թղթին է հանձնում մի երկարաշունչ բանաստեղծությամբ, որ կոչվում է. «Ողբերգութիւն ի վերայ մահուան բազմերախտ ուսուցչին իմոյ՝ Յարութիւն վարդապետի Ալամդարեանց, ազնիւ բարեկամին իմոյ Աղաջանայ Տիրմազանեանի, և քաղցր հօր[1] իմոյ Յարութիւնի Աբովեանց, զորոց զգօթալուրն ի միում շաբաթու ստացայ ի լինելն իմ ի Դերպտ 1834/21 նոյեմբերի»։[2]

Բացի այս, Աբովյանը, ինչպես պարզվում է նրա անտիպ հիշատակարանից, Ալամդարյանի մասին ռուսերեն լեզվով գրել է մի հոդված, մտադրություն ունենալով տպագրել այն «Սեվերնայա Պչելա»-ում։[3]

Հայրենիք վերադառնալիս, Աբովյանը մի քանի օրով կանգ է առնում Նոր-Նախիջևանում, ուր նա բավականաչափ ծանոթներ և մտերիմներ ուներ։ Վերջապես Նոր-Նախիջևանումն էր թաղված իր սիրելի ուսուցիչը՝ Ալամդարյանը։

Աբովյանի կենսագիրների մեջ Ներսես Տեր-Կարապետյանն է.

[1] Բացատրությունը, թե ինչու հորեղբայր ենք կոչում Հարություն Աբովյանին և ոչ հայր, ինչպես բանաստեղծության խորագրումն է, տես՝ Խ. Աբովյանի «Ընտիր երկերի» 2-րդ հատորին կցած մեր ծանոթագրությունները (էջ 387)։

[2] Խ. Աբովյան. «Ընտիր երկեր», հ. 2-րդ, էջ 383—387։

[3] Աբովյանի արխիվ. № 16 ա։

առաջինը, որ հիշատակել է Նոր-Նախիջևանում Աբովյանի կանգառնելու փաստը և այցելությունը Ալամդարյանի գերեզմանին:[1]

«Այս քաղաքը (խոսքը Նոր-Նախիջևանի մասին է— Ռ. Զ.) շատ սերտ կապված էր Աբովյանի վշտերի հետ. այստեղ էր սպանվել և թաղվել յուր ուսուցիչ Ալամդարյան վարդապետը: Մտնելով քաղաքն, առաջին պարտականությունն է համարում իմանալ նորա գերեզմանի տեղը, և երբ տեղեկանում է՝ զգացված սրտով, դառն տխրության մեջ ընկղմված՝ վազում է գերեզմանը, չոքում և համբուրում, արտասուքներով թրջում է կացնամահով սպանված հայ հոգևորականի սառն շիրիմը:

Բավական բազմություն են հավաքում նրա մոտ. նա յուր կսկիծը դրոշմել էր թղթի վրա, ոտանավորի միջոցով, որ հանում է և կարդում. ամենքը սարսում են, տեսնելով ուսուցչի և աշակերտի անհուն սերը (այս ոտանավորը ես չկարողացա ձեռք բերել. ըստ Վ.» Աբովյանի կորած չէ)»:[2]

Այդ մասին խոսք կա նաև Երվանդ Շահազիզի գրած կենսագրության մեջ:[3]

Տեր-Կարապետյանի և Շահազիզի հաղորդած փաստերը միմյանց չեն հակասում, այն տարբերությամբ, որ Տեր-Կարապետյանը Ալամդարյանի գերեզմանի վրա արտասանված ոտանավորը որոնել ու չի գտել, իսկ Շահազիզը ձեռքի տակ է ունեցել այն:

Ի՞նչն է հիմք ծառայել Աբովյանի երկու կենսագիրներին ոչ միայն ասել, որ նա Ալամդարյանին ոտանավոր է նվիրել, այլև հաստատել, որ գրածը կարդացել է գերեզմանի վրա և այն էլ բազմության առաջ՝ հայտնի չէ: Երկուսն էլ հաղորդած փաստը հաստատող որևէ տվյալ մեջ չեն բերում: Միակ հիմքը, ըստ երևույ-

1 Ներսես Տեր-Կարապետյան. էջ 83:

2 Ի միջի այլոց նկատենք, որ Ն. Տեր-Կարապետյանի որոնած և չգտած այդ բանաստեղծությունը, որ կոչվում է «Ի վերայ դամբարանի բազմերախտ ուսուցչի իմոյ Յարութիւն վարդապետի Ալամդարյանց. 'ի 1836 ամի 'ի 15 մայիսի 'ի Նոր-Նախիջևան», գտնվեց Աբովյանի թղթերի մեջ, և մենք հրատարակեցինք այն Աբովյանի «Ընտիր երկերի» բանաստեղծությունների շարքում (հ. 2-րդ, էջ 41—42):

3 Ինչու է Շահազիզը հաստատապես պնդում, որ Աբովյանը Նոր-Նախիջևան հասել է մայիսի 15-ին, չէ՞ որ դրա համար նա իր ձեռքի տակ ոչ մի ճշգրտված տվյալ չուներ: Այդ ամսաթիվը նա պարզապես քաղել է Ալամդարյանին նվիրված ոտանավորի խորագրից, իսկ ո՞վ ասաց, որ այդ ոտանավորը գրել է Նախիջևան հասնելու առաջին իսկ օրը: Չէ՞ր կարող արդյոք նա գերեզմանին այցելության գնալուց մի քանի օր առաջ կամ հետո գրած լինել:

թին, ոտանավորի խորագիրն է— «Ի վերայ գամբարանի»: Բայց այս էլ հայտնի է եղել միայն Շահազիզին, որովհետև երբ նա գրում էր Աբովյանի կենսագրությունը, այդ ոտանավորը ոչ միայն գտնված էր, այլև արդեն հրապարակված: Իսկ ինչի՞ վրա է այդ դեպքում հիմնվել Տեր-Կարապետյանը. չէ՞ որ նա ձեռքի տակ չի ունեցել ոտանավորը և նրա մասին գաղափար է կազմել Աբովյանի որդու՝ Վարդան Աբովյանի պատմածից միայն: Եվ չնայած դրան, Տեր-Կարապետյանը, ինչպես տեսանք, նույն այդ փաստը այնպես է արձանագրել, ինչպես որ Շահազիզը: Կարելի է ենթադրել, որ Վարդան Աբովյանը Տեր-Կարապետյանին հոր գրած ոտանավորի մասին պատմելիս հիշել է նաև վերնագիրը կամ գուցե միայն վերնագիրը, որը և կենսագրին նախ՝ առիթ է տվել որոշելու, որ գրըված է Նոր-Նախիջևանում, Դորպատից վերադառնալիս, և ապա հիմք է ծառայել մտածելու, որ այն արտասանվել է գերեզմանի վրա:

Իսկ ի՞նչ փաստ ունեն ձեռքի տակ երկու կենսագիրները պնդելու, որ այդ ոտանավորը կարդացվել է իսկապես գերեզմանի վրա, հասարակության առաջ: Չէ՞ որ Աբովյանը Ալամդարյանի գերեզմանին կարող էր այցելության գնացած լինել մենակ և, զգացված լինելով, տեղնուտեղը հորինած և գրի առած լինել վերոհիշյալ ոտանավորը: Եվ վերջապես՝ դա կարող էր և բանաստեղծական ձև լինել լոկ. տանը գրեր՝ երևակայելով իրեն գերեզմանի մոտ և այլն: Տեր-Կարապետյանը, կարծես նույնիսկ այդպես էլ մտածել է, որովհետև ասում է, թե Աբովյանը իր կսկիծը նախապես, մինչև գերեզմանատուն գնալը դրոշմել էր թղթի վրա, որը և այնտեղ հանում կարդում է:

Կարևորն այն է, որ առանց ձեռքի տակ հաստատուն փաստական հիմք ունենալու, թե՛ Տեր-Կարապետյանը, թե՛ Շահազիզը ճիշտ են արձանագրել փաստը, մի փաստ, որը, սակայն, կարիք ունի նախ ճշգրտման, ապա և լրացման:

* * *

Աբովյանը Ալամդարյանի գերեզմանի վրա և, այո՛, հասարակության առաջ ոչ թե վերոհիշյալ ոտանավորն է կարդացել, այլ ճառ, դամբանական:

Թեև մեր երկու բանասերները Աբովյանի կենսագրությունը գրել են արխիվային նյութերի բավական հանգամանալից ուսումնասիրությունից հետո, սակայն չհրատարակված թղթերի մեջ չեն նկատել մի դամբանական ճառ։ Դա, ըստ երևույթին, պետք է կարդացած լինի Ալամդարյանի գերեզմանի վրա։

Բերում ենք այդ ճառն ամբողջությամբ։

«Ժամանակ պանդխտութեան իմոյ էանց. Հայրենիքն ձգէ զիս բուռն զօրութեամբ առ ինքն, այլ ո՞ւր Հայրենեաց բարեկամն որ ցանք և սէր էր բախտաւորել, լուսաւորել զմերձաւորս իւր Թափառեալ։ Սիրտ իմ և ի հեռաւորութեան անդ զքեզ խնդրէր, քև պանծայր, միտք և երազք քև մխիթարիւր, քև զուարթանայր. այլ ո՞ւր գտանեմ զքեզ, դաստիարակ իմ սիրելի։ Դու առաքեցիր զիս օրհնութեամբ յօտարութիւն, և ես դառնամ այժմ տրտմութեամբ և ցաւովք, յաւիտեան զրկեալ ի փարելի տեսութենէ քումմէ, և ախտագրութիւնք մեր կործանեցան ի փարելի տեսութենէ քումմէ. ցինկութիւնք սրտից մերոց այժմ ընդ հողոյ հաւասարին. ուր և ելանեմ, ուր և հայիմ սուգ և կսկիծ յանդիմանի աչաց իմոց. ո՞ր հողմ կառապի փլոյց, խորտակեցոյց ի քեզ զյոյս և մխիթարութիւն բիւրաւոր անձանց։ Ո՞ սփոփեսցէ զսիրտ մեր վշտագնեալ. ո՛ տացէ մեզ զայն բերկրութիւն ընկերակցական, զոր միմիայն ներկայութիւն քո մեզ պատճառէր։ Ի հասակի առոյգ՝ արականութեան, յասպարիզի անհուն արգասատուր գործոց խզեաց կտրեաց անսիրտ օրհասն զկեանս քեզ՝ բարեկից։ Որդին կարօտեալ ցանկայ լսել զձայն քո քաղցրանոյշ, այլ տապան լռին, տապան անձայն միայն ցուցանէ զտեղի նորա։ Անմռունչ փակիք աստ ոսկերք տոնելիք՝ այլ կարէ՞ հարազատ բարեկամն հայիլ ի ձեզ առանց ողբալոյ զօրհաս իւր դառնագին։

Այդքան յաճախ մտանեք աստ, սիրելի Հայրենակիցք, յուխտ և յերկրպագութիւն սրբազան տեղւոյս. և զգա՞յ ոք արդեօք ի ձէնջ, թէ ո՞ր ցանկալի մարմին աստ ընդ հողով ծածկեալ, փոխանակ սիրելի իւր կերպարանաց զփոշի ոսկերաց իւրոց քեզ յանդիման կացուցանէ։ Տաղք և երգք նորա մինչև ցայսօր կան կենդանի ի բերանս և ի հոգիս զաւակաց մերոց, դուք պանծանօք յիշէք թէ Յարութիւն վարդապետն որպէս մխիթարէր, ներէր և շահէր զձեզ. այլ ափսոսայ ո՞ք արդեօք զկորուստ նորա անվճարելի։ Հեռացեալ ի տանէ և ի հայրենեաց, զրկեալ յընտանեաց և ի զաւակաց, նա պատրաստեալ էր մատուցանել զանձն ի զոհ վասն օգտի հայրենեաց և հայկազուն մանկանց, այլ սուր անողորմ դեռ ի ծաղկի

կենաց նորա, եբարձ զնա ի միջոյ մերմէ: Արժա՞ն է թէ ոսկերք այսքան տօնելիք հաւասարեսցին ընդ այնոցիկ՝ որք և ի կենդանութեան ո՛չինչ նշան բարեձևութեան կրէին յինքեանս: Նա՝ որ այսքան մխիթարութեան և բարեաց պատճառ եղև մեզ ի կենդանութեան իւրում, չէ՞ր պարտ գոնե վերջին [հրաժա]րմանն իւրում առանալ ի մէնջ նշան բաց շնորհակալութեան. Այլ ազգք արձանօք և յիշատակարանօք անմահացուցանեն զբարերարս իւրեանց, այլ զիա՞րդ առնեն սիրտք ձեր, թէ բարերարն և բարեկամն մեր այսպէս անշուք և անզարդ ի մէջ հասարակ ժողովրդեան հանգչի. կարէ՞ն որդիք ձեր ևս ցանկալ հանդիսանալ առաքինական և ազգօգուտ գործովք, եթէ ո՛չ տեսցեն զարս առաքինիս պատուեալ և պսակեալ ի ձեռդ հասարակութենէ:

Այլ զի՞նչ ասեմ. միթէ մեռանի՞ արդարն և առաքինին, եթէ աչք մեր երկրաւոր զրկին ի տեսութենէ նորա, միթէ չէ՞ գրեալ անուն նորա ի յերկինս և ի սիրտս երախտագէտ յետնորդաց, մի՞թէ բուռն հողոյ միայն իցէ բաժին նորա. ո՛չ, ո՛չ, դու յաւիտեան մնաս կենդանի վասն մեր[.] Հոգիդ երկնաքաղաքացի. մահն բաժանեաց միայն զմարմնաւոր քո տեսիլ, այլ հոգիդ բնակեան ընդ մեզ, և ընդ մեզ լիցի մինչև ի կատարումն աշխարհի, և ի յերկինս վերամբարձեալ դու նովիմբ քաղցր աչօք հայրութեան հայիս առ մեզ, որպէս երկրի աստ ի լինիլն քո ընդ մեզ:

Ի մեռանիլն Քրիստոսի օտար կանայք դիմեն ի գերեզման նորա, [...................] զնա, ի մեռանիլ բարեկամի մերոյ[,] ընտանիք և սիրելիք լան զնա և ի նշան սիրոյ տապանօք և գերեզմանովք յատկացուցանեն զտեղին, ուր հանգչին ոսկերք ցանկալին»:[1]

Աբովյանի այս ճառը կարծես ամբողջությամբ չի պահպանվել:[2] Անկարելի չէ, որ այս ճառը վերջանալիս է եղել այն ոտանավորով, որի մասին խոսք եղավ վերևում: Կամ գուցե և ճառին պարզապես հաջորդել է ոտանավորի արտասանությունը: Այդ մասին, սակայն, մեր ձեռքի տակ ուղղակի վկայություն չկա:

Որ այս ճառը Ալամդարյանին է նվիրված և պատրաստված

---

1 Աբովյանի արխիվ, № 47:

2 Աբովյանի այս ձեռագիրը անխնամագիր է, սևագիր, ջնջումներով և ուղղումներով, մի երկու տեղ էլ անընթեռնելի: Ձեռագրի վրա էջից մեկ և կեսն է զբաղեցնում դամբանականը, իսկ մնացած էջերը գերմաներեն և հայերեն լեզվով սևագրություններ են, ինչպես և մատենագիր, հայերեն լեզվով գրված դժվարությամբ կարդացվող մի ոտանավոր:

նրա գերեզմանի վրա կարդալու համար և անպայման Դորպատից հայրենիք վերադառնալիս, անկասկած, հաստատում են ճառի մեջ եղած մի քանի կետերը։

Նախ՝ հիշված են Ալամդարյանի անունը՝ Հարություն և կրոնական կոչումը՝ վարդապետ։ Երկրորդ՝ անմիջապես երևում է, որ Աբովյանը խոսում է մի մարդու մասին, որը մի ժամանակ եղել է իր ուսուցիչը և դաստիարակը։ Երրորդ՝ Աբովյանն ասում է, որ անողորմ սուրը վերացրեց նրան։ Հայտնի է, որ Ալամդարյանը սպանվել է։ Չորրորդ՝ Աբովյանը մի-երկու տեղ ասում է, որ նա մեր միջից վերացավ երիտասարդ հասակում։ Ալամդարյանը, ինչպես հայտնի է, սպանվել է 38—39 տարեկան հասակում։ Հետո՝ Աբովյանի խոսքի մեջ հանգուցյալը հիշվում է որպես բանաստեղծ։ Եվ վերջապես՝ Ալամդարյանին, որպես հայրենասերի տրված բնորոշումը համընկնում է այն գնահատությանը, որ ծանոթ է Աբովյանին դորպատյան հիշատակարանից։

Ո՞րն է արդյոք այն հիմքը, որ իրավունք է տալիս հաստատապես կարծելու, թե այդ ճառը Աբովյանը գրել է հայրենիք վերադառնալիս՝ Նոր-Նախիջևանում կանգ առած ժամանակ։ Դրա ապացույցը ճառի սկսվածքն է, այն մասը, ուր Աբովյանն ասում է, որ իր պանդխտության ժամանակը, այսինքն՝ Դորպատում գտնվելու շրջանն անցավ։ Դրանից հետո Աբովյանն ասում է, որ հայրենիքը բուռն զորությամբ է դեպի իրեն քաշում։ Այս կարող էր ասել այն մարդը միայն, որ հայրենիքից հեռու է եղել և այժմ հայրենիք դառնալու ճանապարհին է։

Ամբողջ ճառը կառուցված է այնպես, որ ասվել է կամ գոնե գրվել՝ գերեզմանի վրա արտասանվելու համար։ Եվ այն հանգամանքը, որ ճառի վերջում, դիմելով հայրենակիցներին, Աբովյանը հարցնում է, նրանք զգո՞ւմ են արդյոք, թե ինչ մարդ է այստեղ հողի տակ ծածկված, վկայում է, որ Աբովյանն իր ճառն ասել է Ալամդարյանի գերեզմանի շուրջը՝ հավաքված նոր-նախիջևանցիների առաջ։

Աբովյանի այս ճառը, բացի կենսագրական նորություն լինելուց, ուշագրավ է մի քանի այլ տեսակետներից։

Ամենից առաջ այս փաստաթուղթը թեև նվիրված է Ալամդարյանին, բայց շատ լավ է բնորոշում իրեն՝ Աբովյանին։ Ինչպես ասացինք, Աբովյանն ասում է, որ իր աշակերտ եղած ժամանակը Ալամդարյանն իրեն շատ վերք է հասցրել։ Հիշելով այդ, Աբովյանն այնուամենայնիվ իր ուսուցչին ու միայն նվիրել է երկու ո-

տանավոր, ուր նկարագրված է, թե ինչ խոր կսկիծ է առաջ բերել իր մեջ նրա մահը, այլև գերեզմանի վրա, ինչպես տեսանք, խորազգաց մի ճառ է ասել, մեծարելով Ալամդարյանին որպես նոր սերնդի դաստիարակի, բանաստեղծի և հայրենիքին նվիրված ազնիվ գործչի:

Այս փաստը գեղեցիկ վկայություն է Աբովյանի հոգու լայնության: Աբովյանը վշտացած է եղել Ալամդարյանի վերաբերմունքից, բայց և միաժամանակ խորապես գնահատելիս է եղել նրան՝ որպես ազգային-հասարակական գործչի: Աբովյանը կարողացել է հաղթահարել, հեռացնել այն դառնությունները, որ իր անձնավորության հետ են կապված, և առաջ քաշել, հասարակությանը ներկայացնել այն լավագույնը, որով Ալամդարյանը կարող էր օրինակ լինել երիտասարդ սերունդին՝ հայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:

Այնուհետև այդ փաստաթուղթը հետաքրքիր է նաև իբր Հարություն Ալամդարյանի բնութագրություն, որպես հայրենասեր մարդու արժեքավորում: Իր կրակոտ խոսքերով Աբովյանը կամեցել է Ալամդարյանի արժանիքները վերհանելով, հայրենասիրական զգացումներ բորբոքել իրեն լսող հասարակության մեջ: Նա կամենում է, որ աճող նոր սերունդն էլ, եթե պետք լինի, Ալամդարյանի նման թողնի տունը, զրկվի ընտանիքից, զավակներից, բայց պատրաստ լինի իր անձը զոհել հայրենիքին:

Ալամդարյանի մասին խոսելով, Աբովյանը առաջ է քաշում ժողովրդի արժանավոր մարդկանց հիշատակը հավերժացնելու հարցը: Դրան նա անդրադարձել է այլ առիթներով ևս: Օրինակ բերելով ուրիշ ժողովուրդների, որ իրենց ազգային գործիչներին հուշարձան են կանգնեցնում, Աբովյանը դիմում է նոր-նախիջևանցիներին և հարցնում, թե ի՞նչպես են նրանք հանդուրժում, որ Ալամդարյանն այսպես անշուք և անզարդ թաղված լինի: Չէ՞ որ, ասում է Աբովյանը, դիմելով նոր-նախիջևանցիներին, ձեր որդիները նույնպես կարող են կամենալ ազգօգուտ գործեր կատարել: Դրա համար պետք է նրանք իրենց նախորդներին հասարակության կողմից պատվով պսակված տեսնեն:

Այնուհետև Աբովյանն իր միտքը զարգացնում է այն ուղղությամբ, թե հասարակության շահերը պաշտպանող մարդու, ժողովրդին ծառայող գործչի հիշատակը անմահ է: Մարդը, առաքինին, ասում է Աբովյանը, չի մեռնում: Ճիշտ է, մեր աչքերը զրկվում

են նրան տեսնելուց, բայց այդպիսի մարդու անունը գրված է մնում երախտագետ սերունդների սրտերում։

Այսպես ուրեմն՝ Աբովյանը կարողանում է մի կողմ դնել ինքնասիրության վիրավորված զգացումը, բարձր կանգնել անձնական տրամադրություններից և Ալամդարյանի արժանիքները գնահատել հասարակական շահի տեսակետից։

ԴԵՌԱՀԱՍ ՕՐԻՈՐԴԻ ԽՆԴՐԱԳԻՐԸ

Աբովյանի չհրապարակված ձեռագրերի մեջ պահվում է մի արժեքավոր փաստաթուղթ։ Այդ փաստաթղթով, որ մի խնդրագիր է, ևս մի էջ է բացվում Նոր-Նախիջևանում Աբովյանի ապրած օրերից։ Խոսքը այն օրերի մասին է, որ նա անց է կացրել Նոր-Նախիջևանում 1836-ի գարնանը, մայիս ամսին, Դորպատից հայրենիք վերադառնալիս։

Շատ են կցկտուր այն տեղեկությունները, որ պահպանվել են Աբովյանի կյանքի այդ օրերից։ Ամեն մի նոր տվյալ առանձին արժեք է ձեռք բերում, որովհետև լույս է սփռում նրա կյանքի անհայտ կողմերի վրա։ Բայց հազիվ թե այդքան կարևորություն տայինք այս խնդրագրին, եթե նրա մեջ արծարծված մտքերը հետաքրքրություն չներկայացնեին Աբովյանի աշխարհայացքի համար, արժեքավոր չլինեին այն տեսակետից, թե ինչ է մտածել նա մի շարք խնդիրների մասին։

Նոր-Նախիջևանում եղած ժամանակ Աբովյանը շփվել է ոչ միայն Պատկանյանների, Խրիմաչյանների և ուրիշների հետ, մարդիկ, որոնց նա հանդիպել էր և հետները օրեր անցկացրել ավելի քան հինգ տարի առաջ՝ Դորպատ մեկնելիս և այնուհետև նամակագրության մեջ գտնվել հետները, այլև, ինչպես պարզվում է, նրանց միջոցով մուտք է գործել այլ ընտանիքներ ևս, նոր ծանոթություններ և բարեկամություններ հաստատել։

Աբովյանը, ինչպես երևում է, Դորպատից վերադարձած լինելով և համալսարանականի հռչակ ունենալով, Նոր-նախիջևանցիների համար հեղինակություն է եղել, սիրով ու համակրությամբ շրջապատված մարդ։ Որքան մեծ է եղել Աբովյանի հմայքը և իր շուրջը նա կարճ ժամանակում ինչպիսի պարզ և անկեղծ մթնոլորտ է կարողացել ստեղծել, որ Նոր-նախիջևանցի դեռահաս օրիորդներից մեկը, որի անունը, դժբախտաբար, հայտնի չէ, սրտագին անկեղծություն հանդես բերելով, իր ներքին աշխարհը բացել է նրա

առաջ, պատմել իրեն սպառող դժբախտությունը, նկարագրել այդկապակցությամբ ունեցած իր ապրումները և խնդրել նրա օգնությունը։

Դեռահաս օրիորդը (կոչենք նրան այնպես, ինչպես ինքն է իրեն կոչել խնդրագրի մեջ), ինչպես երևում է, Արովյանին պատմել է, թե ինչպե՛ս ծնողներն իրեն բռնությամբ նշանել են մի տիրացուի հետ, որը Նոր-Նախիջևանի քահանաներից մեկի որդին է։

Արդյո՞ք դեռահաս օրիորդն է Արովյանին խնդրել, որ գրի այս խնդրագիրը, թե՞ վերջինս է նրան խորհուրդ տվել քաղաքի դատարանին դիմել ամուսնությունը կանխելու համար — հայտնի չէ։ Բայց որ դատարանին հասցեագրված խնդրագիրը Արովյանի ձեռքով է գրված և դրա մի օրինակն էլ պահվել է մեծ լուսավորչի թղթերի մեջ՝ իրական փաստ է։

Ահա դեռահաս օրիորդի խնդրագիրը, որ բերում ենք ամբողջությամբ։[1]

Վերապատուելի դատարանին Նախիջևան քաղաքի ամենախոնարհաբար խնդիր

Ի [բաց թողնվ.] տէր Աղեքսանդրի.

Թէ զիա՞րդ ծանր և անվայելուչ է դեռահասակ օրիորդին մատչիլ գրաւորական խնդրանօք յատեան մեծարգոյ դատարանից մանաւանդ յայնպիսի հանգամանս՝ զորս համեստ սիրտ նորա հազիւ ի բերան բերել անգամ զօրել պարտ է, զգամ լիովին, այլ հարկ վիճակի իմոյ տայ ինձ մոռանալ զպարտաւորութիւն կանացի ցեղին, առ ի գտանել զարդարութիւն։

Առանց մի առ մի բացատրելոյ իմ զորպիսութիւն նշանադրութեան իմոյ ընդ որդւոյ Տէր [բաց թողնվ.] քահանայի, արդարախորհուրդ դատաւորիդ յայտնի է ամենայն։ Եթէ սէրն է ամուսնութեան առաջին և հարկաւորագոյն նպատակն և ես զնոյն պարտիմ առաջի աստուծոյ և մարդկան խոստանալ ունիլ ի սրտի, սիրել զայրն իբրև զանձն և հպատակ կալ նմա, ո՞րպիսի պատասխանի կարացից տալ ուրեմն աստուծոյ և խղճմտանաց իմոց, եթէ ես կեղծաւորաբար յանձն առից զայն առաջի սրբազնելի սուրբ սեղանոյն։ Ո՛չ մեղադրեմ ես զծնողս իմ, որք բնաւ յօժարեցան մատնել զիս այսմ տրտմալի վիճակի։ Ո՛չ պարսաւեմ ես զտիրացու [բաց թողնվ.], որոյ բնական յատկութիւնք և գովանի վարք

[1] Չորս էջից մեկ և կեսն է միայն զբաղեցնում խնդրագիրը, իսկ մնացած էջերը բաց են, անգիր, մի անկյունից միայն, ըստ սյունակների, գերմաներեն նշումներով։

ցուցէ աւելի և չափազանց ես իցեն, քան զոր ես ճանաչեմ, այլ վարելով իմ յետ նշանադրութեան մերոյ ընդ նմա ի քանի մի ժամանակս, սիրտ իմ վկայէ, թէ մեք չեմք ստեղծեալ վասն միմեանց. բնութիւնք մեր և սիրտք օտարք են զլխովին և տարաձայն. և անբախտութիւն երկոցունցս է ի բոլոր ապառնի կեանս, եթէ ձեռն ուրուք մխեսցի միաւորել զմեզ ամուսնական պսակաւ:

Եւ այժմ Ձերդ արդարամտութեան և մարդասէր կամաց թողում ապաստան զիմ ծանրագին օրհաս: Լինելով Ձեր հայր զաւակաց, հայր ընտանեաց զիա՞րդ հնար է Ձեզ անբախտ առնել զօրիորդ մի խղճալի՝ որոյ կենաց երջանիկ ժամանակն անդ ի յամուսնութենէ սկսանի յառաջ գալ, և ինձ սուգ և տրտմութիւն և թշուառութիւն անդերձանելի անձի պատրաստել: Կարե՞ն յայնպիսի ծնողաց [զարգանալ] զաւակք բարեխնամք՝ որք ինքեանք երկպառակութեամբ և անմիաբանութեամբ բնակին. եթէ ես վասն անձին յօժարեցայց կրել զամենայն դառնութիւն և ծանրութիւն կենաց, այլ ինձ բա՛ւ լիցի չար օրինակ լինել այլոց և իմայնեաց: Լա՛ւ է օր յառաջ տանիլ զամենայն վատահամբաւութիւն և բամբասանս, այլ զպարտաւորութիւն ա մ ո ւ ս ն ո յ և մ օ ր, զոր ունիմ ուխտել առաջի աստուծոյ. ո՛չ կարեմ լուծանել, եթէ անբախտութիւն իմ ես իցէ: Զայս օրէնք, զոր աստուած և եկեղեցի ամենայն ումեք, կամաւորապես թողու ընտրել, յուսամ թէ աշխարհական և քաղաքական դատաւորք ի լուսաւորեալ [տէրութեանս] ո՛չ բռնի տայցեն ինձ յանձն առնուլ և սովիմք յուսով սպասեմ արդարագոյն վճռոյ նոցա»:[1]

Ի՞նչ ճակատագիր է ունեցել հարցը. Աբովյանի գրած դիմումը որևէ արդյունք տվե՞լ է, թե ոչ, դեռահաս օրիորդը հետագայում նպատակին հասե՞լ է, թե ոչ: Թե՞ խնդրագիրը կազմվել է, բայց չի ուղարկվել, մնացել է թղթերի մեջ և միայն հիմա է լույս աշխարհ գալիս որպես մի սրտակեղեք դժբախտության միակ վկա: Այս ամենը անհայտ է:

Այս փաստաթուղթը կարդալուց հետո մեր աչքերի առաջ կանգնում է մի ջահել աղջկա պատկեր, մի դժբախտ, բայց բողոքող հոգի: Գրի է առնված շատ զգույշ, զարմանալի զուսպ, այնպես, որ մեզանից մի հարյուրամյակ առաջ ապրող հայ օրիորդի համար որևէ ձևով վիրավորական չլինի: Սակայն այդ զուսպ տողերի հետևը թպրտում է մի կենդանի սիրտ:

Դեռահաս օրիորդի անունից շարադրելով խնդրագիրը, Աբո-

1 Աբովյանի արխիվ, № 590:

վյանն արծարծել է սիրո և ընտանիքի հարցերի շուրջն ունեցած իր բարոյական ըմբռնումները։

Ամուսնության առաջին, հետևապես և հարկավորագույն նպատակը, Աբովյանի կարծիքով, պետք է սերը լինի։ Կինը պետք է ամուսնուն նախ և առաջ սիրի. անսեր ամուսնությունը հիմնված է կեղծիքի վրա։

Հետո. իսկական սեր, ավելի ճիշտ՝ երջանիկ ամուսնություն չի կարող լինել այն ընտանիքում, որ ամուսինների բնավորությունները միանգամայն օտար են միմյանց։

Այնուհետև առաջ է քաշվում զավակների խնդիրը. կարո՞ղ են արդյոք, ինչպես Աբովյանն է գրել, բարեբարո զավակներ առաջ գալ իրար չսիրող ամուսիններից։ Այն ընտանիքը, որ երկպառակություն ու անմիաբանություն կա, առողջ մթնոլորտ չէ երեխաների դաստիարակության համար։

Կյանքում պատահած ամեն մի դեպք երկու կողմ ունի— անձնական և հասարակական։ Դեռահաս օրիորդն ասում է, որ եթե անգամ ինքը անձամբ հոժարի կրել կյանքի բոլոր դառնությունն ու ծանրությունը, ոչ մի դեպքում չի կարող համաձայնել վատ օրինակ դառնալ ուրիշների համար։ Ասել է թե՝ բռնի ամուսնության դեպքում հլու-հպատակ լինել ծնողներին, անտրտունջ խոնարհվել, կեղծավորել, երբ չես սիրում՝ նշանակում է վատ օրինակ ծառայել ուրիշներին։

Այնուհետև խնդրագրի մեջ արծարծված է հասարակական կարծիքի խնդիրը։ Ի՞նչպես կնայի հասարակությունը, լսելով, որ դեռահաս օրիորդը, հակադրվելով ծնողների կամքին, չի միացել սիրացուի հետ, նամանավանդ, որ նրանք նշանված են և որպես այդպիսիներ, մի որոշ ժամանակ «նիստ ու կաց» են ունեցել։ Դեռահաս օրիորդը հասկանում է, որ ինքը ենթարկվելու է բամբասանքների, չարախոսության, բայց նա ամուսնու և մոր պարտավորությունը այնքան բարձր է դասում, որ ավելի լավ է սկզբից համբերությամբ տանի ամեն տեսակ զրպարտություն, քան, ենթարկելով բռնի պահանջին՝ ամուսնանա և, այդպիսով, խախտի այն հասկացողությունը, որը ինքը դնում է ամուսնության գաղափարի մեջ։

Կուռ տրամաբանությամբ զարգացնելով հարցերը, աստիճանաբար ընդարձակելով արծարծվող խնդիրների սահմանները, Աբովյանը դեռահաս օրիորդի բերանով՝ որպես հաստատ և ամբողջական համոզմունք՝ պաշտպանում է ճշմարիտ սիրո վրա պսակ-

ված ամուսնությունը, և հույս հայտնում, որ լուսավորված պետությունների մեջ դատավորների արդարամտությունն ու մարդասեր կամքը չեն ստիպի իրեն՝ բռնությամբ հանձն առնել այն, ինչ ամեն մեկին թույլ է տրված կամավորապես ընտրելու։

Չպետք է մոռանալ, որ հայ մեծ լուսավորիչն այս համոզումները հայտնել է մի իրականության մեջ, որտեղ հարսնացուն իր ապագա ամուսնու հետ մինչև հարսանեկան հանդեսը մի խոսք անգամ փոխանակած չէր լինում։ Այդպես էր Աբովյանի ժամանակ։ Այդպես է եղել նաև հետո, շատ երկար ժամանակ։ Այդ իմաստով մի բնորոշ տեղ կա «Ամերիկու լիս քցիլը» ակնարկում. խոսելով այն մասին, որ կինը հնդկացու աչքին «հայվանի նման մի զադ ա», Աբովյանը գրում է՝ «խոստովանություն մնա, մեր միջումն էլ էսպես ա»։ Եվ այն իրականության մեջ, ուր եթե ամուսինը ծեծի, կինը «պետք է ձեռը համբուրի և առաջին շոքած թողության խնդրի», Աբովյանը հանդես է եկել որպես կնոջ դատի պաշտպան, որպես ճշմարիտ սիրո քարոզիչ, որպես բարձր բարոյականության ջատագով։

Այն խնդրագիրը, որ գրել է Աբովյանը Նոր-Նախիջևանցի դեռահաս օրիորդի համար և այն մտքերը, որ արտահայտել է սիրո և ամուսնության մասին, մեր մեծ գրողի լուսավորական հայացքների համար չափազանց բնորոշ են։ Եվ այն, որ դա մտքի և հոգու մի հանկարծական թռիչք չէ՝ հաստատվում է ոչ միայն նրա մի շարք գեղարվեստական գործերով, այլև նույնանման մի գրությամբ, որի հեղինակը դարձյալ Աբովյանն է, բայց արդեն ուշ, ավելի հասուն տարիներին։.

1844-ից սկսած Աբովյանը զբաղվել է Մարիամ անունով մի երիտասարդ կնոջ խնդրով։ Այդ խնդրի մասին Աբովյանի նամակներից և խնդրագրերից մի քանիսը պահպանվել են։

Աբովյանը մի նամակով դիմում է Էջմիածնի Սինոդի ազդեցիկ անդամներից մեկին (անունը հայտնի չէ)։

... «Ի վերջոյ յայտնեալ և զիմս լիաբերան շնորհակալութիւն զբազմադիմի խնամոց և շնորհաց Ձերոց՝ ծովացելոց յիմ վերայ վստահանամ դիմել ամենայոյս սրտիւ առ Ձերդ բարձր սրբազնութիւն և խնդրել ի մասին ողորմելի որբացեալ անձին միոյ, զրկելոյ յամենայն մարդկային օժանդակութեանց, բայց քրիստոնէական մարդասիրութենէ։

Որբս այս է Մարիամ անուն կին մի Քանաքեռցի Մկրտումի դուստր, քեռորդի իմ, որ ի 11 ամի կենաց բռնաբարեալ գոլով

մտանել յամուսնութիւն ընդ Նիկողոսի Սուքիասովի՝ ահա 13 ամք են բաժանեալ կան ի միմեանց՝ այրն պատկեալ ունի և զորդիս, բայց ողորմելիս անհայր անմայր բնակի յօրէ յայնմանէ առ մօր իմում, գործ որոյ այժմ վճռեալ ի հոգևորական ատենի տեղւոյս՝ առաքեալ են առ բարձրագոյն Սինհոդոսդ։ Ոչ ընդդէմ աստուածային օրինաց և կանոնաց սրբոց եկեղեցւոյ մերոյ, այլ ըստ արդարութեան՝ աղաչեմ, եթէ հնար է, հրամայել փութով աւարտել զայն և ազատ առնել զողորմելիս ի կաշկանդանաց այսր անկրելի կապանաց»։[1]

Նամակն անթվակիր է, համենայն դեպս գրված է օգոստոսի 8-ից առաջ։ Կա մի նամակ ևս՝ գրված նույն թվի հոկտեմբերի 28-ին.

«Ահա երկրս գրով և անգամ մի բերանացի խնդրամատոյց եղէ Ձերումդ բարձր Սրբազնութեան ի մասին ողորմելի Քանաքեռցի կնոջն Մարիամայ, բայց որպէս նկատեմ, որպէս յընթացս 8-ն ամսոյ, ոչինչ իսկ վճռեցաւ այս գործ, նոյնպէս տարիք լրացին և նոյնն նոյնպէս մնացէ անկատար։ Թողում զայն, զի ի բոլոր կեանս իմ անգամ մի տեսեալ ի հարկէ և ի կարեկցութենէ՝ դիմեցի սոյն օրինակ խնդրով առ Ձերդ բարձր սրբազնութիւն և Ձերով միջնորդութեամբ ի սուրբ Սինհոդոսն, բայց որովհետև չգիտանեմ ինչ բաւականութիւն առ այն՝ ի գործ արդար և աստուածահաճոյ, օտարի և ոչ անձնական, ուրեմն ներեսցէ ինձ Ձերդ բարձր սրբազնութիւն վարել ըստ օրինաց տէրութեան, ոչ իբրև Խաչատուր Ձեր որդի , այլ իբրև աստիճանաւոր արքունական, յայնժամ կարծեմ թէ՝ որպէս հայտ է Ձեզ, կուսակալն և տէրութիւն, որք քաջ ճանաչեն զիս և յարգեսցեն զարդար բողոք իմ, բարեհաճեսցեն տալ ինձ բաւականութիւն և ի սոյն օրինակ գանգատանաց յարիցեն միմիայն անպատեհութիւն յանուն սրբոյ Աթոռոյ, զորս ոչ կամիմ և հայադդի գոլով, դարձեալ պահպանելով զյարգութիւն իմ առ սրբոյ Աթոռն՝ այս վերջինն հարցանեմ, նշանակել ինձ զմիջոց, յորում լրասցի գործն, կամ բացասել ինձ միանգամայն, զի արդար իրաւամբ տէրութեան պաշտեցից զողորմելի որբն և այրին»։[2]

Հայտնի չէ, Աբովյանը Մարիամի գործի կապակցությամբ կուսակալին դիմե՞լ է, թե ոչ։ Բայց 1845 թվին այս խնդրով նա որոշում է դիմել Ներսես Աշտարակեցուն։

1844-ի հունվարի 25-ին Պետերբուրգից Աշտարակեցին Աբի-

1 «Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 58։

2 Նույն տեղ, էջ 57—58։

ցի միջոցով մի նամակ է ուղարկել Աբովյանին, խնդրելով նրա սիրալիր աջակցությունը գիտնականին այն շրջագայության ընթացքում, որ նա կատարելու է Հայաստանում:

Աշտարակեցու նամակին Աբովյանը պատասխանեց մոտավորապես մի տարի հետո, երբ իր վրա դրված պարտականությունը կատարել էր, և կարող էր արդեն հաշվետու լինել:

Նկատենք, որ թեև Ներսես Աշտարակեցին արդեն հաստատվել էր կաթողիկոս, բայց դեռ չէր տեղափոխվել Էջմիածին: Աբովյանը, որ իր աշակերտ ժամանակը Աշտարակեցու կողմնակիցներից էր, բնական է, պետք է ուրախ լիներ նրա կաթողիկոսանալու: Աբովյանը, ըստ երևույթին, կարծում էր, որ չլուծված շատ հարցեր այժմ կկարողանա Աշտարակեցու միջոցով կամ օգնությամբ ոչ միայն լուծել, այլև հաջող իրականացնել:

Եվ ահա, Աշտարակեցուն ուղղված վերոհիշյալ նամակում այլևայլ հարցերի հետ միասին Աբովյանը խնդիր է բարձրացնում, որն իր շատ կողմերով հիշեցնում է Նոր-Նախիջևանցի օրիորդի համար գրված դիմումը: Ահա Աբովյանի նամակի այդ հատվածը:—

«Ո՛չ անվայել համարիմ ենթարկել ընդ ամին յաւս ամենազօրմած տեառնդ զպաղատանս ծառայիդ ի մասին տարաբաղդ որբացելոյ ուրեմն ողորմելոյ, Մարիամ անուն կնոջ միոյ Քանաքեռցւոյ՝ որ զամս տասն և հինգ տանջի չարաչար, գոլով անհայր, անմայր և անազգական զլխովին և ո՛չ գտանելով ճար և ազատութիւն ի մարդասէր հովուապետանաց մերոց: Ողբալի որբս այս ի 11 ամի հասակի իւրոյ բռնադատի ի մօրէ իւրմէ ամուսնանալ ընդ առն միում օտարականի, սիրեցելոյ միմիայն ի մօրէ: Բռնի բարձի ողորմելին յեկեղեցին, նովին բռնահարութեամբ կարդան ի վերայ նորա զկարգ ամուսնութեան յարգոյ մեր քահանայք, բայց հազիւ աւարտեալ զայն, խղճահար հարսն՝ իբրև այսահար ոք փախուստ առեալ անտի՝ դիմէ ի տունս հօրաքեռ իւրոյ, սպառնալ սրախողխող զինքն առնել և ո՛չ տալ զանձն և զանմեղութիւն ի ձեռս առն այնպիսւոյ, զոր ինքն ո՛չ կամի: Յօրէ յայնմանէ խափանի նոցա ամուսնութիւն, այր նորա վաղուց կրկին ամուսնացեալ՝ ունի և զորդիս անգամ, այլ տարաբաղդ կինս այս տանջի ցայս վայր, ո՛չ գտանելով ուստեքէ և յումեքէ օգնութիւն և ազատութիւն: Հովուապետական իրաւարանն Երևանայ միջնորդութեամբ իմով՝ քննեալ զամենայն գործս նորա՝ ազատեալ և արձակ կացուցեալ է զնա ամուսնանալ այսուհետև ընդ ում և կամի, այլ Սինհոդոսն Էջմիած-

նի ո՛չ հայելով ի բազմանուագ բերանացի և գրաւոր աղերսագրութիւն իմ զայսմանէ, աՀա՛ ամ մի լրանայ ամբողջ, գաղուստ Ձերդ վեհափառութեան պատճառ կալեալ՝ ո՛չ համարձակի իւրովին արձակել զնա խուպառ: Մա՞րթ է արդեօք մինչև ցայս վայր անգամ քակել զկապ մարդկային և զօրէնս աստուածային, անդ՝ ուր քարինք ևս աղաղակեն զանմեղութիւն և գոչեն մարդասիրութիւն. այլ ամենագութ արդարադատութիւն վեհափառ եպիսկոպոսապետիդ՝ քաջայոյս եմ, փութով հնարեսցէ և հրամայեսցէ ի բաց ընկենուլ զայն անլուր բռնութիւն և տալ զազատութիւն կապելոյն յանդուգն ձեռաց»:[1]

Այստեղ, ինչպես տեսնում ենք, թեև մի այլ առիթով, բայց դարձյալ նույն հարցերն են արծարծված: Ընտանիքի հաստատուն հիմքը ամուսինների փոխադարձ սերն է— այսպես է մտածում Աբովյանը: Ինչպես այն խնդրագիրը, այնպես էլ այս նամակը, պարզում են հայ կնոջ ստրկական վիճակը անցյալում: Սակայն կարծես այս նամակում Աբովյանի արած պատմությունը ոչ այլ ինչ է, բայց եթե այն տխուր ապագան, որ սպասում է Նոր-Նախիջևանցի օրիորդին: Մեզ հայտնի չէ, թե իսկապես ինչ հետևանք ունեցավ Աբովյանի գրած խնդրագիրը, բայց Մարիամի պատմության մեջ կարող ենք ընդնշմարել Նոր-Նախիջևանցի օրիորդի գործի տխուր շարունակությունը:

Ի՞նչով վերջացավ Մարիամի գործը, հասա՞վ արդյոք Աբովյանն իր նպատակին:

Աբովյանին, որ առանձնապես ուրախացրել էր Աշտարակեցու կաթողիկոս հաստատվելը, սպասում էր մեծ հիասթափություն: Ներսեսը մինչև Էջմիածին գալը, դեռ Նոր-Նախիջևանից, մի կոնդակով պատասխանում է Աբովյանի նամակին: Իր բովանդակությամբ այդ կոնդակը, ի հարկե, Աբովյանին ուրախացնել չէր կարող. Նրա առաջ քաշած հարցերի մեծ մասը ոչ միայն բարյացակամ վերաբերմունքի չէին արժանացել, այլև Ներսեսին հիմք ծառայել կշտամբանքով արտահայտվելու Աբովյանի մասին: Ինչ վերաբերում է Մարիամի խնդրին, ապա Ներսես կաթողիկոսը գրում է.

«Ո՛չ նուազ ևս՝ բերեալ կարծրագոյն բերանօք բղացումն իմ այն ի հնագոյն ժամանակաց զայրացեալ մինչև յոյժ՝ խստապահանջ նեղիչ մշտամրմունջ իմում կրից՝ միատարր յարատևութեամբ

[1] Ալեքսանդր Երիցյան. «Խաչատուր Աբովյանի կենսագրության համար նոր նյութեր», («Փորձ», 1880, № 8—9, էջ 195):

ճիրք և նախասահմանութեամբ իմն ընթացակից իմում մըշտակաշկանդ կենաց, տառապանք որբացեալ Մարիամ անուն կնոջ կամ աղջկանն բանաքեռցւոյ զի ցայս վայր անա այս ամիս գտանի յինեն ևս զրկեալ յիւրոց այցելութեանց ըստ նախագրեալ պատահմանցն: Այլև այժմ ըստորում հանդերձեալ եմք անձամբ ժամանել առ ձեզ յաջողութեամբ ամենազօր տեառն Աստուծոյ մերոյ ո՛չ անարժան համարիմ յառաջարկել ձեզ առ այն, զի Մարիամն այն հարուածեալ ի մօրէ իւրմէ և յայլոց ամենից շատ կրկին (˝) նշանակեցելոց՝ ի վերա հնդետասանամեայ տառապանացն ցարդ՝ համբերեսցէ սակաւ միւս ևս յիւրումն տարաբախտիկ դրութեան մինչև ժամանանեսցուք մեք առաջնորդութեամբ Աստուծոյ ո՛չ ևս անագան»:[1]

Թե ինչպիսի ընթացք ունեցավ Մարիամի գործին կաթողիկոսը Էջմիածին գալով՝ կտեսնենք մի փոքր հետո:

Աբովյանը, ինչպես երևում է, չէր հասկացել իր և կաթողիկոսի միջև եղած տարբերությունը, մի տարբերություն, որը հետագայում սրվեց և խոր հակասության վերածվեց: Ներսես Աշտարակեցին Աբովյանի համար իր դեմ չէր հանի Էջմիածնի միաբանությունը, որի հետ ինքը պետք է գործեր: Աբովյանի համար այդպիսի հանգամանքներ ոչ միայն նշանակություն չունեին, այլև պարզապես անհասկանալի էին: Նրա կարծիքով՝ կարևորը սկզբունքն էր, համոզմունքը: Հետո. Աբովյանը չէր ըմբռնում, որ Ներսես Աշտարակեցին ամենևին էլ այն չէ, ինչ առաջ էր, ռուս-պարսկական պատերազմի ժամանակ և դրան հաջորդած առաջին տարիներին: Թեև նկատենք, որ այն ժամանակվա Ներսեսը դարձյալ այնքան ճիշտ հասկացված չի եղել Աբովյանի կողմից: Ներսես կաթողիկոսը իր հայացքներով ոչ թե հայ հասարակական մտքի առաջավոր ներկայացուցիչների, այլ ընդհակառակը, պահպանողականների, ուրեմն և՝ Աբովյանի գաղափարական հակառակորդների կողմնակիցն էր: Եվ վերջապես, Աբովյանն այնքան էր աճել, բարձրացել իր շրջապատից, որ Աշտարակեցին չէր կարող ըմբռնել, հասկանալ նրան:

Աղեքսանդր Երիցյանը, որ Սինոդի արխիվում հայտագործել է Աբովյանի վերոհիշյալ նամակը, ըստ երևույթին, հանդիպել է և այնպիսի փաստաթղթերի, որոնք պարզելիս են եղել Մարիամի գործի վախճանը: Երիցյանը, ցավոք սրտի, արժեք չտալով այդ փաստաթղթերին՝ չի հրապարակել, այլ բավականացել է՝ դրանց

[1] Աբովյանի արխիվ. № 305:

հիման վրա գրելով հետևյալ ծանոթությունը, որը մեզ համար, մինչև իսկական փաստաթղթերի հայտաբերումը, վավերագրի կարևորություն ունի.

«Ինչպես Սինոդի գործերից երևում է, Ներսեսը չլսելով Աբովյանի խնդիրը, վճռեց, որ տիկին Մարիամը, իբրև յուր կամքով ամուսնացած և հետո յուր կամքով թողած յուր ամուսնուն, մըշտընջենական զրկվի ամուսնանալու իրավունքից։ Իսկ նորա ամուսինը, իբրև անմեղ այս գործի մեջ, դեռևս Սինոդի հրամանով նորից պսակվեցավ»։[1]

Ինչ խոսք, որ Մարիամի գործի այսպիսի ընթացքը չէր կարող Աբովյանին չվշտացնել, չվրդովել և մի որոշ իմաստով էլ հուսահատության մատնել։

Աբովյանը, սակայն, համոզված է եղել, որ գոնե ապագայում իրեն կհասկանան։ Գուցե և ունեցել է այն հույսը, որ թերևս իրենից հետո ընտանիքի և ամուսնության հարցերը այնպես լուծված կլինեն, որ այլևս կարիք չի լինի պայքարով նվաճել արդարացի վճիռը։

Աբովյանը չարաչար սխալվում էր, քանի որ նրա մահից հետո էլ, դեռ երկար տարիներ, փաստորեն մինչև սովետական կարգերը, նման դեպքեր պատահել ու կրկնվել են շատ անգամներ։

Այս հարցերում Աբովյանն այնքան հառաջադիմական հայացքներ է զարգացրել, այնպիսի խիզախ քայլեր արել, որ ոչ միայն շատ ժամանակակիցներ չեն հասկացել նրան, այլև տասնամյակներ հետո իսկ, հասարակական դիրք և կշիռ ունեցող դեմքեր սխալ, նույնիսկ վարկաբեկիչ բացատրություն են տվել։

Թե Նոր-Նախիջևանցի դեռահաս օրիորդի, թե քանաքեռցի Մարիամի դատերի պաշտպանությունը, որով հանդես եկավ Աբովյանը, վկայում են այն խոր հումանիզմը, որով տոգորված էր մեծ լուսավորչի աշխարհայացքը։ Աբովյանի ելակետը կյանքն է եղել, բնությունը, նրա խորհուրդը և ձայնը։ Փաստորեն Աբովյանը ըմբոստանում է այն քարացած օրենքների և կանոնների դեմ, որ եկեղեցին մշակել է ամուսնության, ընտանիքի և բարոյականության հարցերի վերաբերյալ։

---

1 «Փորձ», 1880, № № 8—9, էջ 195։

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՆԵՐԻՑ

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Աբովյանը, ինչպես հայտնի է, շատ է ճանապարհորդել։ Գուցե դասական հայ հեղինակներից ոչ մեկն այնքան առիթ չի ունեցել իր կյանքի տարբեր տարիներին շրջել Հայաստանը, լինել նրա քաղաքներում, գյուղերում, շփվել ժողովրդի հետ, նրա խորքերը մտնել, իմանալ նրա ժամանակակից վիճակը, հասկանալ, թե ինչ է մտածում նա և այլն, որքան Աբովյանը։

Աբովյանի համար շրջագայությունները սիրելի զբաղմունք են եղել։ Նախ՝ նա ընդհանրապես ճանապարհորդության սիրահար էր։ Հետո՝ նրան որպես գրողի, մանկավարժի և գործչի՝ ժողովրդի մեջ հաճախակի լինելը անհրաժեշտություն էր, և վերջապես, Աբովյանը ձգտում էր գեթ մի պահ դուրս գալ հեղձուկ այն մթնոլորտից, որ ստեղծել էին նրա շուրջը պահպանողական ուժերը։

Աբովյանը ժողովրդի մեջ իրեն լավ էր զգում, ինչպես և ժողովուրդը՝ նրա հետ։ Եվ այդ ոչ նրա համար, որ Աբովյանը ծագումով գյուղացի էր։ Նա թեև բավական տարիներ հայրենիքից հեռու էր ապրել, օտարության մեջ կրթություն ստացել, շփվել անվանի գիտնականների և բարձրաստիճան մարդկանց հետ և բավական հռչակված, այնուամենայնիվ չէր կտրվել ժողովրդից։

Ժողովրդի և Աբովյանի միջև երբեք անջրպետ չառաջացավ։

Ժողովուրդն ավելի լավ, քան նրա գրչակից ընկերները կամ դպրոցական պաշտոնակիցները, տեսնում էր, որ Աբովյանն այրվում է հայրենիքի սիրուց, ապրում հասարակական շահերով։ Եվ քիչ չեն եղել Աբովյանի կյանքում դեպքեր, երբ նա ուրիշների գործի համար միջամտել է, պայքարել այնպիսի հավատով և նվիրվածությամբ, որ շատ անգամ սեփական անձը դրել է վտանգի տակ։

Ժողովուրդը Աբովյանին համարում էր իր մարդը, հավատում նրան։

Աբովյանի թղթերի մեջ պահպանվել է մի շատ հետաքրքիր փաստաթուղթ, որը վկայում է նրա և ժողովրդի միջև եղած կապը։ Այդ փաստաթղթի արժեքը, մեր կարծիքով, չի սահմանափակվում Աբովյանի կենսագրությամբ։

Ի՞նչ փաստաթուղթ է այդ—բողոք, որ գրել են մի խումբ հայ գյուղացիներ ռուսաց թագավորին։ Բերում ենք փաստաթուղթն ամբողջությամբ։—

«Ամենաօգոստափառ մեծ միապետ ամենայն ռուսաց.
Ամենաողորմա՛ծ կայսր.

Ի գաղթել Օսմանեան հայոց յերկիր ամենաօրհնեալ թագաւորութեան Քո մեք ստորագրեալ ամենախոնարհ հպատակքս Քո գաղթեցաք ընդ նոսին ի կողմն Շորագեալու բնակութիւն կալեալ ի գեղջ միում Աստախան կոչեցեալ։ Աստ ումն ի մէնջ Ղազար անուն կարգեցաւ յայնմ ժամանակի կառավարիչ ի վերայ մեր։ Այս այր յօրէ կարգման իւրոյ ի կառավարել զմեզ ոչ դադարի նեղել, տանջել զմեզ վայրապար և դառնացուցանել զազատութիւն մեր պէս պէս անտանելի անիրաւութեամբք իւրովք։ Թագաւորութիւն քո ազատ է արարեալ զմեզ ի հարկաց զամս եօթն, բայց նա միշտ անպակաս յայսմիկ եօթն ամս միշտ առեալ է ի մէնջ հարկս, և թէ ո՞ւմ է տուե[ալ,] ոչ գիտեմք։ Երկիցս շինեաց եկեղեցիս ծախուք մերովք ժողովելով ի մէնջ 600 մանէթ, և հազիւ մախեալ 200 մանէթ, զմնացեալսն եկուլ ինքն, և թո՛ղ զայս զառաջնաշէն եկեղեցին շինեաց ամբարանոցս վասն իւր։ Վասն շինելոյ զճանապարհն Դիլիջանու կորզեաց ի մէնջ 150 մանէթս և հազիւ թէ զերրորդ մասն տուեալ մշակաց զմնացեալսն յափշտակեաց ինքն։ Ոչ միայն յարանց այլ նաև ի կանանց այրեաց առնու հարկս ընդդէմ օրինաց Տէրութեանդ։ Ի Բուլիկեանց այրւոյն էառ 20 մանէթ, և ի չէկ Սարգսի այրւոյն առեալ 16 մանէթ, թողացոյց տանիլ ի Ղարս առ ի ամուսնանալ անդ. և յայրւոյն Խաչօյի էառ բռնութեամբ 15 մանէթ[.] և որքան այրիք, որք ամուսնացեալք են ի մեզ, և գնացեալ այլուր, յամենեցունց նոյա առեալ է, յոմանց 15 մանէթ, յոմանց 20 մանէթ, և յոմանց 30։ Յընթացս եօթն ամաց գաղթականութեան մերոյ զամենայն աղջկունս մեր ըստ կամաց իւրոց տայ առն և առնու ի նոցանէ մի մի ոսկի առանց հարցանելոյ զծնողս նոցա

կամ զընտանիս։ Փոխեաց զանուն գեղջն Աստախանայ և կոչէ յիւր անուն Ղ ա զ ա ր ա պ ա տ, որպէս թէ ինքն ծախիւք իւրովք իցէ շինեալ։ 450 մանէթ փող եկեղեցւոյ մերոյ սեփականեալ ինքեան, ոչինչ փոյթ տանի շինութեանց եկեղեցւոյն։ Յամենայն ամի տայ բերել յԵրևանայ 20 լիտր բամբակ, և բաժանեալ ի վերայ մեր տայ գզել, մանել, գործել և հաստացանել ինքեան։ Ի լատերիա արկեալ զմի երիվար ի վերայ մեր էառ ի մէնջ 36 սոմար ցորեան։ Զայբեկիս նորա միշտ մեք տամք։ Ի տարին 100 չութ առնու ի մէնջ վասն վարելոյ զարտս, ի հնձելն 400 հնձուորս հանէ ի մէնջ. և վասն կրելոյ զօրանս 80 սայլ տամք։ Զամիսս ինն ի գիշերս [արս հինգ հարգաւ պահեմք սպառազինեալ զտուն նորա Զամն ողջոյն անդադար ծառայեցուցանէ զողորմելիսս ինքեան միշտ ի տանջանս և յանարգանս։ Յէնգեչայ ասացեալ գիւղէն քուրդ մի տամբ իւրով եբեր ի մեզ, զամենայն գրաստս նորա, զձիս, զոչխարս մեք պահեցաք, զայրելիս նորա մեք մատակարարեցաք և ինքն զկնի առեալ ի նմանէ զմի պատուական երիվար դարձոյց դարձեալ ի տեղի իւր։

Ի գործ ածէ վասն գողութեան զքանի մի քուրդս, ի ձեռն նոցա գողանայ բազում ինչ և տարեալ վաճառէ յանծանօթ տեղիս։ Ի դէմ դառնալ մեր այսքան անիրաւութեանց և բռնակալութեանց նորա բերէ զաչալիս ի Մօվրովէն և այնքան քանէ զմեզ մինչև տաբեշափ ժամանակաւ անկանել ի մահիճս հիւանդութեան։ Զի՛ք քան զմեզ ողորմելի բատրուկ և գերի ի ձեռս նորա, ազատացէ՛ք զմեզ Ամենաողորմա՛ծ Թագաւոր յայսմ անիրաւ նեղչէ և ի բռնակալէ մերմէ, զորոյ անօրէնութեանց և զչարութեանց հազիւ թէ զմի մասն միայն առաջի արարաք։ Գիւղ մեր բաղկանայ յեօթանասուն երկուց տանց, ամենեքեան մեք միաբան երդուեալ ի սուրբ եկեղեցւոջ գրեցաք լալով և ողբով զայս թուղթ աղաչանաց և յանձնեցաք երկուց գեղացւոց մերոց Ամբարայ Ղուկասեանց և Մանուկայ Զաքարեանց առ ի մատուցանել Ամենաողորմած Կայսերական Մեծութեանդ։

Զայս խնդիր ստորագրեալ են 50 անձինք գեղջն Աստախանայ»։

Այս փաստաթուղթը թվագրված չէ։[1] Աբովյանի թղթերի մեջ գտնված այս բողոքագիրը կարող է շարադրված լինել ոչ շուտ, քան 1838 թվականը։ Ուրեմն՝ 1838-ին կամ դրանից հետո։ Այդպես ենք կարծում, որովհետև փաստաթղթում խոսք կա այն մասին, որ վերոհիշյալ Ղազարը գյուղացիներից հավաքել է հարկեր

[1] Աբովյանի արխիվ, № 45։

որոնցից պետությունը նրանց ազատած է եղել, ինչպես հայտնի է, մի քանի տարով: Ահա այդ ժամանակները լրացել է գաղթած հայերի հարկազատության ժամկետը:

Ի՞նչ կապ կարող է լինել Աբովյանի և այս բողոքագրի միջև:

Շատ հավանական է, որ իր շրջագայությունների ժամանակ, Աբովյանը այցելած լինի այն ժամանակ Աստրախան՝ հետո Ղազարապատ կոչված գյուղը, ուր և գյուղացիները պատմած լինեն այն ամենը, ինչ գրված է բողոքագրում: Կամ եկած լինեն իր մոտ, տուն, կամ դպրոց, խորհուրդ հարցնելու, օգնություն խնդրելու համար: Եվ անհավանական չէ, որ Աբովյանը խորհուրդ տված լինի գրել այդ բողոքը՝ ուղղակի Թագավորի անունով: Գուցե և լսելուց հետո հենց ինքն էլ թելադրել է, ասել թե ինչ գրել և այլն: Եվ կարող է պատահել, որ Աբովյանը բողոքագրի ռուսերեն թարգմանությունն ուղարկել է Թագավորին, հայերեն օրինակը թողել իր մոտ:

Ի՞նչն է կարևորը այս դեպքում:

Ասացինք, որ Աբովյանը չի հեռացել ժողովրդից, չի օտարացել նրան: Եվ ժողովուրդն էլ վստահել է նրան, հավատացել: Եթե հիշենք այն զրույցները, որ ժողովուրդը հյուսել է Աբովյանի անհայտացման կապակցությամբ, ապա կտեսնենք, որ նա ժողովրդի երևակայության մեջ պատկերացրել է որպես մեկը, որի հետ կապել են հայրենիքի ազատագրության հույսերը: Այսպես, օրինակ, զրույցներից մեկի մեջ պատմվում է, թե իբր՝ ռուսաց Թագավորը Աբովյանին ասել է— եթե նա կկարողանա բարձրանալ Մասիս սարը, հասնել նրա կատարին, ապա ինքը ազատություն կտա հայ ժողովրդին: Աբովյանը բարձրացել է, բայց չի կարողացել հասնել մինչև կատարը, և հուսահատությունից իրեն անդունդն է գցել:

Գյուղացիների այս բողոքագիրը մի կարևոր փաստաթուղթ է նաև մեր պատմագրության համար: Այն գաղափար է տալիս, թե սոցիալական ինչ վիճակի մեջ են գտնվել հայ գյուղացիները ցարական Ռուսաստանում՝ 30—40-ական թվականներին: Այս փաստաթուղթը, ինչպես և սենատոր Գանի հետ կատարած ճանապարհորդության նվիրված ակնարկը, ուր խոսք կա բայազետցիների ապստամբության կապակցությամբ Բարսեղ-աղայի և ուրիշների ձերբակալության մասին, ցույց են տալիս, որ հայ գյուղացիների ճնշված դրությունը հայտնի է եղել Աբովյանին:

Դժվար է որոշել, թե այս փաստաթուղթը ինչ դեր է խաղացել այն հուսախաբության մեջ, որ իր կյանքի վերջին տարիներին Աբովյանն ապրել է ցարական Ռուսաստանից։ Սակայն որ նման փաստերը չէին կարող անհետ անցնել, պետք է իրենց որոշակի դերը կատարեին՝ կասկածից վեր է։ Աբովյանին հայտնի են եղել ռուս չինովնիկների անվան հետ կապված չարաշահությունները։ Գիտենք, օրինակի համար, որ Աբովյանին վրդովել է և նա իր գրվածքներից մեկում ծաղրել է այն արհամարհական վերաբերմունքը, որ Ռուսաստանից եկած չինովնիկների մեծ մասն ուներ կովկասցիների՝ հայերի, վրացիների և ադրբեջանցիների նկատմամբ, իսկ իր կյանքում, հատկապես մանկավարժական գործունեության ընթացքում, թե՛ Թիֆլիսում, թե՛ մանավանդ Երևանում՝ Աբովյանը չափազանց շատ առիթներ է ունեցել համոզվելու, թե ինչ է իրենից ներկայացնում ցարական չինովնիկությունը։

Այս փաստաթուղթը ցարական չինովնիկության՝ Կովկասում ծավալած չարաշահ գործունեության ապացույցներից է։ Եվ այս արդեն ոչ թե Ռուսաստանից եկած չինովնիկն է, այլ տեղացի, ժողովրդի միջից դուրս եկած, բայց նրա հաշվին ապրող Ղազարը և նմանները, ապագա տանուտերներն ու քյոխվաներն են, կառավարության այն ներկայացուցիչները գյուղերում, որոնց չարագործ կյանքը բավական լավ հայտնի է Աբովյանի հաջորդած հայ գրողների երկերից։

Բողոքագրի տակ ստորագրող գյուղացիները, ապրել են պատմական մի այնպիսի իրականության մեջ, որ կարծել են, թե հարցը վերաբերում է վատ չինովնիկներին։ Եվ ենթադրել են, թե Թագավորի միջամտությունը բավական է, որ, ասենք վերոհիշյալ Ղազարը, փոխարինվի մի ուրիշով՝ ամեն բան կարգին լինի։ Եվ գուցե բողոքագրի հեղինակները, ինչպես և Աբովյանը, մտածել են, որ վատ չի լինի, եթե Թագավորը լուր ունենա, թե ի՛նչպիսին է այն մարդկանց գործունեությունը, որոնք ներկայացնում են իր կառավարությունը տեղերում։ Այս սկիզբն է այն դժգոհության, որ մոտ ապագայում, արդեն Նալբանդյանի ժամանակները, պետք է հանգեր ցարիզմը ժխտող քաղաքական մտածողության։

ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Աբովյանը, ինչպես հայտնի է, շատ է կապված եղել իր աշակերտների հետ։ Գրականության մեջ բավականաչափ փաստեր կան

այդ մասին։ Ցրենին գրած նամակներից հայտնի է, օրինակ, որ եղել են այնպիսի շրջաններ, երբ աշակերտները Աբովյանի կյանքի միակ մխիթարությունն են կազմել։ Գրականության մեջ քիչ չեն փաստերն այն մասին, թե իրենք, աշակերտներն, ինչ սիրով են կապված եղել Աբովյանի հետ։

Այս շատ կարևոր հանգամանք է, և Աբովյանի կյանքում եղած նման փաստերը դիտել լոկ, որպես մի ջերմ կապ աշակերտների և նրանց ուսուցչի միջև՝ չի սպառի հարցի բոլոր կողմերը։

Աբովյանը, թեև գրել է ոչ պակաս, քան մեր հայ հեղինակներից որևէ մեկը, բայց իր կենդանության օրով փաստորեն ընթերցող հասարակայնություն չի ունեցել, որովհետև շատ քիչ գործ է կարողացել տպագրության հանձնել։ Եթե չհաշվենք ուսումնառության տարիներին Դորպատում և Պետերբուրգում հրապարակած մի հոդված գերմաներեն լեզվով, ապա 40-ական թվականներին «Կավկազ»-ում լույս է ընծայում Արարատի վերելքին նվիրած ուղեգրական մի ակնարկ ռուսերեն լեզվով, իսկ հայերեն լեզվով՝ «Ադելայիդա»-ի թարգմանությունը։ Աբովյանը սրանցով չէ մեծ, այլ «Վերքով» և ուրիշ երկերով, որոնք ժամանակին լույս չեն տեսել, բնականաբար և չեն ունեցել ընթերցողներ։ Եվ ահա, աշակերտները, ինչպես և բարեկամների մի նեղ շրջան, փաստորեն եղել են Աբովյանի ընթերցողները։ Նրա աշակերտները պատմում են, թե ինչպես Աբովյանը մաս-մաս գրել ու իրենց մոտ կարդացել է «Աղասու պատմությունը»։[1] Այս նա արել է Թիֆլիսում։ Պետք է ենթադրել, որ նույնը պետք է արած լինի նաև Երևանում։

Այսպիսի փոխհարաբերությունը բնականաբար խոր բովանդակություն պետք է հաղորդեր աշակերտների հետ ունեցած Աբովյանի կապին։

Աբովյանի ջերմ վերաբերմունքը դեպի աշակերտները, կապը նրանց հետ և սերը, մեզ հայտնի է մեծ մասամբ նամակներից, տարբեր գրվածքներից, ուր այդ մասին նա որևէ առիթով արտահայտվել է։ Իսկ թե այդ վերաբերմունքը ի՞նչ իրական ձևեր է ընդունել կյանքում, ի՞նչպես արտահայտվել՝ շատ քիչ է հայտնի։

Շահազիզը «Դիվան»-ում հրապարակել է աշակերտներին ուղղված՝ Աբովյանի նամակներից մի քանիսը։[2] Դրանք որոշ կոնկրետություն են մտցնում այն փոխհարաբերության մեջ, որ եղել է

[1] «Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին», էջ 110։

[2] «Դիվան Խաչատուր Աբովյանի», 1940 թ. էջ 81—87։

Աբովյանի և աշակերտների միջև։ Աբովյանի արխիվում, թեև ոչ շատ, բայց կան նոր նյութեր, որոնք վերոհիշյալ հարցի վրա լույս են սփռում։ Այդպիսի փաստաթղթերի թվին է պատկանում, օրինակ, մի անտիպ գրվածք, որ վերաբերում է սենատոր Գանի հետ Աբովյանի կատարած ճանապարհորդությանը։ Այդ ուղեգրական ակնարկը նամակի ձև ունի և որպես այդպիսին՝ ուղղված է Թիֆլիսի գավառական դպրոցի աշակերտներին։[1] Բացի այդ կան և առանձին աշակերտների անունով գրված նամակներ, ինչպես և նրանց նամակները Աբովյանին։

Ստորև բերում ենք այդ նամակներից մեկը, որ գրված է Երևանի գավառական դպրոցում Աբովյանին աշակերտած Գյորգի Շահնազարյանին։

Ի 19-ն հոկ. 1847,
Երևան

Գյորգի՛ ջան, ժո՛րժ ջան, իմ հրեշտա՛կ,
իմ հոգւույս լույս.

Օրը կիրակի, գիշերվան մութը չորս կողմս բռնած. էքուց ես ճամփի վրա. (Նաչալնիկի հետ Գյումրի ենք գնում)։ Էլի միտքս դո՛ւ ես, քունս դո՛ւ ես, երազս դո՛ւ ես։ Երանի՛ Մամադ Շաֆու աչքին, որ քեզ կտեսնի, երանի՛ նրա ձեռին՝ որ էս թուղթը քեզ կտա, նրա՝ բերնին, որ քեզ հետ կխոսի։ Ընչի՞ չեմ կարում արտասունքո՛վ լցնիլ էս թուղթը ու էնպես ղրկիլ քեզ. ընչի՞ չեմ կարում սիրտս հանիլ սրա մեջը դնիլ, որ իմ որպիսությունն իմանաս՝ երե՛սիդ ղուրբան, էդ հրեշտակային երեսիդ. էդ լուսաթա՛թախ պատկերիդ [։] Երևան դառել էր ինձ դժոխք, դո՛ւ էիր իմ մխիթարությունը, քեզ տեսնելիս աշխարհ, երկինք ու գետինք իմն էի համարում։ Ամեն մի ման եկած տեղդ, ամեն մի ասած խոսքդ, ամեն մի քաղցր հայեցվածդ՝ միտս[2] ընկնելիս, գլխիս կրակ էր վառվում, գլխո՛վդ ման տամ։ Երևանումը չար աչքից, չար լեզվից պռծա. Թիֆլիզ ընկա էն մարդի մոտը, որի լեզուն ու աչքը միմիայն չա՛րն էր, չա՛րն էր իմ անկաջը լցնում։ Մանդինովի ասած խոսքերը միտդ բեր ու իմացի՛ր՝ թե որ էնպես հուդա էր դառել, ուզում էր քեզ էլ ուտեմ, ինձ էլ, էնդով կիմանաս ամեն բանի պատճառը։ Կարծում էի ամեն սհաթ՝ թե Սիբիրն է իմ վերջը. Սիբիրը մարդ աչքի առաջին ունենալիս՝ էլ սե՞ր կգա միտքը, յա սիրելի, յա՛ որդի՞։ Ես վերջին թղթումը կարճառոտեն քեզ գրեցի իմ էն ժամանակ-

---

1 Աբովյանի արխիվ. № 20։

2 Բնագրում՝ միտքդ։

վան դառնության պատճառները. չերա՛ք ձեր ձեռը հա՞սավ, չերաք ինչպես ասել էի, էնպես ծածուկ կարդացի՞ք, որ Արարատովը չիմանա։ Ա՜խ, Արարատովն, ա՜խ, Արարատովը. ամեն տեղից որ հույս քեզ համար կտրվեց, նրան ապավինեցի. ինչպես իմ ընկեր, ինչպես իմ բարեկամ, որ քեզ իմ փողովը մասը[1] պահի, մինչև իմ Տիֆլիս գալը։ Քիչ էր մնացել տոռը պաշեմ, չա՛րեց, չա՛րեց։— Էնքան ժամանակ Թիֆլիս կացանք, մեկ օր մեկ ճիթ խաղող ղրկե՞ց մեզ, մեկ օր մեկ տանձ, յա մեկ ծիրան երեխեքանցս էլա լայեղ տեսավ, դո՛ւ վկայիր։ «Քո անումից մեծ կտրություն է, որ էս լկստած, լաքյաթա լավտուին հետդ բերել ես», մեկ օր Մանդինովի պատիվ ախպերն էնպես ասեց. երեսիս որ էս էին ասում, եղևից ի՞նչ կասեին, դու իմացիր։ Հետո Կոնին, Միրայի ախպերն էկան, Թարխանովն հո էնտեղ էր ու էնտեղ էր։ Ա՜խ, ամեն մեկ նրանց տեսնելիս, մաղերս բիզ-բիզ էին բռնում։ Մեկ օր մինչև Դավիթ Խերեդինովն էլ ինձ էնպես թաճրով հարցրեց, «բաս դու ասում էիր, էն երեխեն եթիմ ա, ես լսել եմ այժմ, որ նրան հեր էլ ունի, քեռիք էլ, ու լավ հալ ունին, էդ ի՞նչ կնշանակի, չե՛մ հասկանում, մեկ էլ ասում են՝ թե էդ երեխեն լավ երեխա չի, լավ ա, դուք դրան տիրություն եք անում» և այլն։ Անիծվի՛ չար լեզուն հազար անգամ։ Իմ տանըցիք հո՝ ասենք երեսից չէին ասում, չեմ ուզում ամեն բանը բաց անել, որ իմ էն վախտվա ամեն մեկ լած խոսքս, ամեն մեկ գլխիս եկած բալքալեն իմանաս։ Էս սհաթս էլ, որ լսել ա, որ դու Արարատովի մոտն ես, լավ գիտի, որ նա անփող քեզ հաց չի տալ, գիտի էլ որ նա ինձ փող է պարտ, էդ էլն էլ կհասկանա, որ բանն ինչպես է, ինչ օրից հետ որ էս խաբարը լսել է։ մեր տունը սուգ է մտել, հացս հարամ է. էլ ո՛չ իրար հետ խոսալ կա, ոչ ծպտալ։ Բայց ես— ուրախությունիցս երկինքն եմ թռչում. ընչի՞. Թիֆլիզումը միտք էի անում, որ քեզ հետս բերեմ, դուշմանը պետք էր փառախառ աներ, քեզ էլ մոտս պահել չէր ըլել, ինչպես լուսահոգի մորս կենդանության ժամանակը, ուրեմն ասում էի Թիֆլիզ մնաս, որ ամենի բերանը փակվի... Կնյազ Բեբթաբեկով, Կնյազ Արղությինսկիյ, որ ինձ շատ փող է պարտական մնացել, Խորխմազովի մերը, որի որդիքը համարյա՛ թե ձրի եմ սովորեցրել, ի՞նչ ասեմ, մեծավորներից որ հույս կտրվեց, իմ պարտականների յախեն բռնեցի, որոնց մեկն էլ պարոն Արարատովն էր, չելավ, չելավ. 600 մանեթ հենց Ստեփան Խերեդինովն է ինձ էս օր էլ պարտական, նրա մոտ թողալի էի իմ փողի հեսաբովն, Մանդինովն քեզ դրող հերիք էր, ի՞նչ անեի. Գյո՛րգի ջան, ժո՛րժ ջան. լեզուս

[1] Բնագրում՝ մասդ։

կալ էր ընկել, լեղս ցամաքել, հալբաթ որ մեկ գրող էլ ես էի դառել քեզ համար. վերջապես Սոլոմոնի էն մըմեղ լեզուն մեզ ամենիս խաբեց. հիմիկ փա՛ռք աստուծո, դուք գո՛նե էնպես տեղ եք, որ էլ չար լեզու, չար աչք ձեզ չի՛ դիպչիլ, թե որ Արտեմիցը զգուշ լինիք. չըլիմ, չիմանամ, նրան շատ մոտանաք, Թիֆլիզու առաջին լոթքերանց մեկն էլ դա՛ է: Արարատովենց Արտեմին եմ ասում. իմանո՞ւմ ես: Դրանից հեռո՛ւ կաց: Կուսակալի մասին ինչ որ գրել եմ, էնպես արա՛. մորիցդ բնավ բան մի ուզիլ, ինձ գրի, ես կհոգամ, ա՞խ Գյորգի՛ ջան, քեզ բան պակա՞ս կթողամ. խեղճ ի՞նչ ա կտրում. Գդակդ էլ էնդուր համար բերի հետս, որ ինչպես ասել էի, երեխայությունս չանես, լավ հաքնված ման գաս, էլ ո՛չ գիրքառը, ո՛չ կուսակալ հավատա՝ թե դու աղքա՞տ ես: Դու—աղքա՞տ, ես քեզ աղքատ կթողա՞մ. ասում եմ բան հոգանք. կորցրածը գտնենք, թե չէ իմ կյանքը քոնը չի՞: Հո գրել եմ քեզ նոր սերթուկ կարեն, բայց կուսակալի մոտ հին սերթուկով գնա, որ խոսքդ ազդու ըլի. լավ շորը ամեն մարդի կխաբի, անո՛ւմիդ ղուրբան: Աստծու կանե՞ս: Ինձ քո ձեռովն գիր գրի, որ կարոտս առնիմ, ուրիշի սև մի՛ անիլ տալ. ինչպես գրես, ինձ ռազի է: Արարատովին այժմ ինձանից շա՞տ ես սիրում, դա՞նա. բաս ես ջուրն ընկնիմ: Ջաֆեն ես քաշեմ, պտուղն ուրիշը վայելի՞: Դու քո հոգին, քո արդար անմեղ խղճմտանքը: Նրա առաջին գրած գիրը հալբաթ մեկ օր կտեսնիս, հալբաթ իմ գրերը ձեզ չի տալ, որ կարդաք, հետու բանի էության իմանաք: Ղազոն ա մնացել այժմ իմ միխիթարությունը. նրանից եմ քո կարոտդ առնում»:

Այս նամակի լուսանցքում ավելացված է— «Էս գիրը համբերությունով և ծածուկ կարդա՛ ու կամ հղի՛ր, կամ Շաֆու ձեռովն էլ եդ գրկիր, որ ուրիշի ձեռ չի՛ ընկնի»:

Երևանի գավառական դպրոցի աշակերտներից շատերն են սիրել և մոտ եղել Աբովյանին, սակայն դրանցից միայն երկուսն են արժանացել նրա արտասովոր սիրույն: Դրանք թեև տարբեր ազգանուններով— Գեղամյան և Շահնազարյան— բայց անվանակիցներ են եղել— Գևորգ: Եվ որպեսզի Աբովյանը տարբերի նրանց իրարից՝ մեկին կոչել է Գեորգ, մյուսին Գյորգի, երբեմն էլ Ժորժ:

Վերոհիշյալ նամակն ուղղված է Գյորգիին: Մինչև այժմ հայտնի էր միայն երեք նամակ, որ Աբովյանը գրել է Գեորգին և Գյորգիին միասին, և մի նամակ, որ գրել է առանձին Գեորգին:[1] Ուրեմն, նա-

[1] «Դիվան Խաչատուր Աբովյանի» էջ 86—87: Ի միջի այլոց հիշենք, որ Աբովյանի արխիվում պահվում է Աբովյանի մի նամակ ևս Գեորգ Գեղամյանին, որը դեռ հրապարակված չէ:

մակների այս շարքն ավելանում է մի նոր նամակով, որ ուղղված է Գյորգիին, թեև նկատենք, որ նամակում Աբովյանը տեղ-տեղ խոսում է այնպես, կարծես գրում է ոչ թե միայն Գյորգուն, այլ նաև Գեորգին։ Գեորգին և Գյորգիին ուղղված նամակներից մեկը գրված է 1847-ի սեպտեմբերի 11-ին, մյուսը՝ նույն թվի սեպտեմբերի 20-ին, երրորդ նամակը՝ նույն թվի դեկտեմբերի 24-ին։ Այս նամակը, որ գրված է 1847-ի հոկտեմբերի 19-ին, մի որոշ չափով լրացնում է այն բաց տարածությունը, որ կար սեպտեմբերին և ապա դեկտեմբերին գրված նամակների միջև։

Իր այս երկու աշակերտներին Աբովյանը սիրել է հոգու ամբողջ զորությամբ, ճշմարիտ և խոր սիրով, իր զգացումների մեջ երբեմն հասնելով այնպիսի չափերի, որ քաղքենիական հասկացողությունների տեսակետից կարող է մի փոքր տարօրինակ և անբնական թվալ։ Ոչինչ տարօրինակ չկա. Աբովյանն է այդ, իսկական, մեծ Աբովյանը, որին անկարող հասկանալու՝ քաղքենիական հասկացողությունը փորձել է պստիկացնել, իջեցնել իր մակարդակին։

Աբովյանը Գեղամյանին և Շահնազարյանին սիրել է հարազատի պես, նրանց գրեթե չի տարբերել իր որդուց— Վարդանից։ Իր երեխաներին, ծննդյան տոնահանդեսի առիթով նվերներ բաժանելով՝ Աբովյանը մտահոգվում է, թե ի՞նչ է ապա պարգևելու իրենից հեռու գտնվող, օտարության մեջ ապրող իր զավակներին՝ Գեորգին և Գյորգիին։ Այդպես էլ գրված է. Աբովյանը միշտ էլ այդ երկուսին համարել է որդիներ, զավակներ։ Աբովյանի միակ ցանկությունն է եղել փակել աչքերը այն ժամանակ, երբ Գեորգը և Գյորգին ուսում առած կվերադառնան։ Իր մի նամակում Աբովյանն ասում է, որ հեռվից իր հոգին, ինչպես ստվեր, շրջում է նրանց հետ, նրանց բոլոր քայլերի և շարժումների մեջ։[1]

Թե Գեորգը, թե Գյորգին շատ կապված են եղել Աբովյանի հետ։ Նրանց վերաբերմունքը դեպի բարերար ուսուցիչը տոգորված է եղել երախտագիտության խոր զգացումով։ Աբովյանի արխիվում պահվել են Գեղամյանի և Շահնազարյանի մի քանի նամակները. որոնք պարզում են այն անսահման շնորհակալությունը, որով լցված են եղել նրանք Աբովյանի նկատմամբ. «Բազմերախտ բարերար», «ողորմածագույն բարերար», «անեղական բարերար մեր և

1 «Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 8։

հայր» և այլն։ Այսպես են նրանք կոչում Աբովյանին իրենց նամակներում։[1]

50-ական թվականներին մոտիկ ծանոթություն է ստեղծվում Նալբանդյանի և Գեղամյանի միջև։ Վերջինիս մահվան առթիվ գրած հոդվածում Նալբանդյանն ասում է. «Մեծ հույսեր տալով յուր ապագա հառաջադիմութենից, այնպես գրավել էր յուր դաստիարակի (Աբովյանի— Ռ. Զ.) աշխույժ և կրակոտ ազգասեր սիրտը, որ Աբովյանը աշխատում էր նորա վերա, որպես յուր հարազատ զավակի վերա»։[2]

Գևորգ Գեղամյանը և Գյորգի Շահնազարյանը աղքատ ծնողների զավակներ են եղել. տարիքով իրարից տարբեր։ Իր նամակներում Աբովյանը գրեթե միշտ Գևորգին խնդրում է հետևել իր փոքրիկ ընկերոջը, իսկ մի տեղ էլ պարզ ասում է, որ ինքը նրան թողել է Թիֆլիսում նրա հույսով. «ապա թե ոչ, ոչ թողէի գնա ուսել, եթէ զամենայն ինչ ձրի տային» և այլն։ Աբովյանին առանձնապես անհանգստացնում է Գյորգու ճակատագիրը, որովհետև փոքր է, այն հասակում,[3] որ ի վիճակի չէ ինքնուրույն կյանք վարելու։ Այդ երկյուղը առանձնապես նկատելի չէ Գյորգիի նկատմամբ, թեև պակաս չափով չի սիրում նրան։

Այս նամակից պարզվում է, որ Գյորգուն (հավանաբար նաև Գևորգին) Աբովյանը նյութապես օգնել է դեռ Երևանում եղած ժամանակ և, ինչպես երևում է, այդ պատճառով տանը, Աբովյանի ընտանիքում անախորժ խոսակցություններ են եղել։ Գյորգուն խնամել է Աբովյանի մայրը և, ըստ երևույթին, Էմիլիան տրտնջացել է, որ ամուսինը պարբերաբար նյութական աջակցություն է ցույց տալիս իր աշակերտներին։ Ներսես կաթողիկոսին գրած նամակից հայտնի է, որ Աբովյանը 1847-ից դեռ բավական առաջ, ընտանեկան երջանկությունից զրկված է եղել. «Մտեալ յամուսնութիւն, վաղուց հրաժարեալ եմ յայնմանէ»[4] — գրում է Աբովյանը 1845-ի սկզբներին։ Ընտանեկան այդպիսի լարված մթնոլորտում ամեն մի մանրուք կնոջ ձեռին, ըստ երևույթին, դժգոհության

[1] Աբովյանի արխիվ, №№ 250, 251, 252, 253։

[2] «Հյուսիսափայլ», 1858, № 2։

[3] Աբովյանի արխիվում մեզ հանդիպեց մի տետր (№ 157), ուր նշանակված է Գյորգիի ծննդյան թվականը «Ծնունդ Գեորգայ Խաչատրեան Շահնազարովի ի 27 դեկտ. 1833»։ Ուրեմն՝ այդ ժամանակները Գևորգին եղել է մոտ 14—15 տարեկան։ Գեղամյանին նվիրված Նալբանդյանի հոդվածում ասված է, որ Գևորգը ծնվել է 1831-ին։

[4] «Փորձ», 1880, № 8—9։

պատճառ է դարձել։ Էմիլիան լսելով, որ Գյորգիին և Գեորգին Թիֆլիսում խնամում է Արարատովը Աբովյանին ունեցած պարտքի դիմաց, գժտվել է ամուսնու հետ։

Պարզվում է, որ Գյորգիին Աբովյանն ինքն է տարել Թիֆլիս և, ինչպես երևում է, մենակ գնացած չի եղել, այլ ընտանիքի հետ։

Աբովյանի նպատակն է եղել Գյորգուն ընդունել տալ պանսիոն կամ սապյորնի բատալյոնը։ Այս նամակը գրված է այն օրերին, երբ Գյորգու հարցը լուծված է եղել, որի մասին, սակայն, Աբովյանը տեղեկություն չի ունեցել։ 1847-ի հոկտեմբերի 10-ին Գեղամյանը Աբովյանին գրում է, որ ինքը և Գյորգին գիմնազիայում քննություն են տվել, իրեն ընդունել են չորրորդ դասարան, Գյորգուն՝ երկրորդ դասարան։ Գեղամյանը շատ ցավում է դրա համար և խնդրում է Աբովյանին՝ շտապել հետ, Երևան, որովհետև միևնույն է, Բանդուրովսկին հանգիստ չի տա նրան՝ թվաբանության պատճառով։ Տեղյակ չլինելով սրան, Աբովյանը խորհուրդներ է տալիս, թե Գյորգին ինչպես պահի իրեն, ում ներկայանա, ինչպես խոսի, որ ուսման գործը գլուխ գա։[1]

Աբովյանի հույսը սկզբում Թիֆլիսի հայ հարուստների վրա է եղել։ Նա համոզված էր, որ իրեն կհաջողվի գթաշարժել հայ հարուստներին՝ զրկանքի մեջ գտնվող, բայց սովորելու փափագ ունեցող աշակերտներին օգնել։ Մյուս հույսը կառավարությունն է եղել, կուսակալը, որին պետք է Գյորգին ներկայանար։ Բայց եթե ոչ մի տեղից օգնություն չլիներ՝ Աբովյանը որոշել էր անձամբ օգնել, եթե դա իր համար նույնիսկ մի ծանր զոհողություն լիներ։

---

[1] Միքայել Էմինին գրված Աբովյանի նամակներից մեկում կա մի այսպիսի տեղ.

«Ի նորումս գրեցի զպատասխանի գրութեան խորհրդարանի ճեմարանիդ ի մասին ատացման երկուց աղքատ աշակերտաց ի բնակչացն Երեւանի։ Նշանակեալք լինէին ի թղթի իմում ամենայն իսկ ոչ միայն կարեն, այլ անտարակոյս արժանի են առանձին շնորհաց և հովանաւորութեան ճեմարանիդ՝ գիտութեամբ. փորձեալ է, որ գլխաւորն է՝ չքաւորութեամբ և անտէրութեամբ բերեալք։ Բարեխնամութեամբ եւ առաջինքն են ի Հայաստանի։ Սոա չունի ոք փոյթ զայսպիսեաց, արդեօք արժէ՞ այդր գտանել աշխատ լինել հայրենասիրական ցուակցութեամբ ընդունել զնոսա ի դասս աշակերտաց ճեմարանիդ։ Ջերմեռանդութիւն և գրութիւն ի յարկս, դաղղիական և գերմանական լեզուս, որք ոչ ուսուցանին ի վարժարանս մեր, փութով կարեն սոքա ի ձեռս բերել այդր օժանդակութեամբ հասուն աշակերտաց»։

Մի նամակում Աբովյանն ասում է, որ ինքը պատրաստ է ցամաք հացով ապրել, միայն թե իր աշակերտները փառքով ու պատվով մնան Թիֆլիսում: Այդ նույն տեսակետից շատ բնորոշ է և այն, որ Աբովյանը Գյորգուն կտրականապես արգելում է որևէ օգնություն խնդրել մորից: Նա պահանջում է բոլոր դեպքերում իրեն դիմել:

Աբովյանի այս նամակը շատ կարևոր է մի էական մանրամասնությամբ:

Աբովյանն ասում է, որ Երևանը իր համար դժոխք է դարձել և Գյորգին եղել է իր միակ մխիթարությունը: Այս մի լրացուցիչ վկայություն է այն մասին, որ իր կյանքի վերջին տարիներին Աբովյանը իսկապես գժտված է եղել իր միջավայրի հետ, սրտնեղություն է ապրել և այլն: Թե ինչու է Երևանը նրա համար դժոխք դարձել՝ նամակից չի պարզվում: Հավանաբար խոսքը այն գաղափարական ընդհարման մասին է, որ վաղուց սկսված լինելով Աբովյանի և նրա հակառակորդ ուժերի դեմ՝ հետզհետե սրվել, խորացել է:

Աբովյանը Գյորգին բացատրում է, թե ինչու էր ինքը Թիֆլիսում մռայլադեմ: «Կարծում էի ամեն սհաթ՝ թե Սիբիրն է իմ վերջը. Սիբի՛րը մարդ աչքի առաջին ունենալիս էլ ու՞ր կգա միտքը, յա սիրելի, յա որդի»: Աբովյանը չի ասում, թե ինչն է ստիպել նրան մտածել, որ կարող է պատահել իրեն Սիբիր ուղարկեն: «Էս վերջին թղթումը,— գրում է Աբովյանը Գյորգին,— քեզ կարճառոտեն գրեցի իմ էն ժամանակվան դառնության պատճառները. երար ձեր ձեռը հասա՞վ. երար ինչպես ասել էի ծածո՞ւկ

Անկասկած է, որ խոսքը վերաբերում է Գեղամյանին և Շահնազարյանին: Այս նամակը գրված է 1847-ի օգոստոսի 17-ին, Թիֆլիսից, այսինքն այն ժամանակ, երբ Աբովյանը միջնորդներ է ձեռք առել նրանց Թիֆլիսում տեղավորելու համար, բայց արդեն աշակերտներին 1847-ի դեկտեմբերի 24-ին գրած Աբովյանի նամակում խոսք կա այն մասին, որ Ժորժը պետք է մեկնի Մոսկվա ի միջի այլոց. Աբովյանն ասում է Ժորժին, որ նա պետք է վերադառնա Երևան, իր մոտ պարապելու, որ մեկնի հեռու աշխարհ: Պահպանվել է Շահնազարյանի 3 հունվարի 1848 թվակիր նամակը, ուղղված մորը: Այդ նամակում գրված է. «Ես գալու միտ ունեմ, լավ ճանապարհորդի եմ մնում, որ գամ—այս տեղ գիմնազիայի պանսիոն մտնելու ուսման կարգեցավ. ինչպես պարոն Աբովյանն աշխատել է ինձ համար, նույն նպատակի վերա եմ գալի, որ ձեզ տեսնեմ, բանտրս հոգիս անեմ, և հետ դառնամ էլի 'ի Թիֆլիս. և գնամ 'ի Մոսկվա: Վասն որո խնդրեմ շուտով երեք ջուխտ գրվելոց հասցնես և մին լավ բամբակալի լեն ու բոլ արխալուխ ճանապարհի համար, որ չմրսեմ» (Աբովյանի արխիվ. № 385): Ինչպես պարզվում է 1848-ի հունվարի 26-ին Գեղամյանին գրած նամակից՝ Աբովյանը գնացել է Թիֆլիս և վերադարձին հետ բերել Գյորգին:

կարդացիք, որ Արարատովը չիմանա»։ Այդ նամակը, դժբախտաբար, չի պահպանվել։ Ըստ երևույթին Գևորգը և Գյորգին լսելով Աբովյանին և չկամենալով, որ մի ուրիշի ձեռն ընկնի և իմանան, թե ինչ է գրել իրենց ուսուցիչը՝ վերոհիշյալ նամակը ոչնչացրել են։ Նրանք կատարել են իրենց ուսուցչի պատվերը և դրանով էլ զրկել մեզ այն պատճառներն իմանալուց, որոնք կարող էին լույս սփռել Աբովյանի հոգեկան դրամայի շատ կարևոր կողմերի վրա։

Մի ուրիշ խնդիր ևս։ Այս նամակում Աբովյանը հորդորում է աշակերտներին՝ տանել դժվարությունները մի կերպ, մինչև իր գալը։ Թերևս խոսքը վերաբերում է նրան, որ Աբովյանը գալու էր Թիֆլիս գործով մի քանի օրով և վերադառնալու էր։ Կարելի է և այլ կերպ հասկանալ։ Գուցե խոսքը վերաբերում է ընդհանրապես Աբովյանի Թիֆլիս տեղափոխվելուն։ Դրանից հետո Աբովյանը իսկապես մի կարճ ժամանակով գնում է Թիֆլիս և վերադառնում։ Բայց Գեղամյանի նամակներից մի-երկուսի մեջ կան այնպիսի տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ խոսքը վերաբերում է ընդհանրապես Թիֆլիս տեղափոխվելուն։ Գեղամյանը Աբովյանին գրում է. «Աշակերտք թէ գիմնազիայի և թէ այլ ուսումնարանաց գլխները բարձրացրել են և անհամբեր Ձեր գալուստին են սպասում՝ որ իսկոյն գան Ձեզ մոտ»։[1] Այս քաղված է 1848 թվի փետրվարի վերջին գրված նամակից։ Նույն թվի փետրվարի 27-ին Աբովյանին Գեղամյանը գրում է... «Իմացա թե կաթողիկոսն Ձեզ գրել է գալ. չգիտեմ իրավի է թէ ոչ»։[2]

Երևանից Թիֆլիս տեղափոխվելու Աբովյանի ցանկությունը անպայման կապված է եղել այն ծանր կացության հետ, որի մեջ գտնվում էր Աբովյանը Երևանում։

Շահազիզը հրապարակել է կաթողիկոսի անունից գրված հրավիրագիր-նամակը։[3] Գեղամյանի նամակներից բերված քաղվածքները մի նոր վկայությամբ հաստատում են այդ նամակի բովանդակությունը, ինչպես և այն մեծ համբավն ու հեղինակությունը, որ վայելել է Աբովյանը Թիֆլիսի երիտասարդության, հատկապես աշակերտության մեջ։

Մեմուարային գրականության մեջ պահպանվել է մի կասկած, իբր թե Ներսես Աշտարակեցին հրաժարվել է տված խոստումից, և Աբովյանը հուսահատությունից վերջ է տվել իր կյանքին։ Իս-

[1] Աբովյանի արխիվ, № 250։

[2] Նույն տեղ, № 251։

[3] «Դիվան Խաչատուր Աբովյանի», էջ 222։

Ճշտապես ի՞նչ է եղել կաթողիկոսի հրավերից հետո, մինչև ապրիլի 2-ը, այսինքն այդ քսաներկու օրվա ընթացքում՝ հայտնի չէ։ Թերևս հետագա պրպտումները այս կասկածը հաստատող փաստաթուղթ երևան հանեն։ Փաստ է, սակայն, որ Աբովյանը չկարողացավ տանել օրավուր աճող դժվարությունները, խստացող հալածանքը, չկամեցավ ապրել այն գնով, որ գլուխ ծռի, խոնարհվի նրանց առաջ, ում դեմ պայքարել է իր ողջ կյանքում։

ԱԲՈՎՅԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Աբովյանը, որպես իր ժամանակի առաջավոր մարդ, ապրել է այն ամենով, ինչ տեղի է ունեցել իր շրջապատում։ Հասարակական-քաղաքական կյանքում կատարվող ամեն մի երևույթ նա դիտել ու գնահատել է հայ ժողովրդին լուսավորելու տեսանկյունից։ Նա իր քաղաքացիական պարտքն է համարել միջամտել շատ իրադարձությունների, իր խոսքն ասել, առաջարկել, խնդրել, բողոքել, պաշտպանել։ Եվ երբեք այդ խոսքը նա չի ասել անտարբեր, կիսաբերան կամ վերապահությամբ։ Ընդհակառակը՝ միշտ էլ հանդես է բերել կիրք, անկեղծություն, համոզվածություն։ Նա ապրում էր այն հարցով, որի մասին խոսում էր, իսկ երբեմն էլ՝ պարզապես այրվում։

Ահա մի այդպիսի փաստաթղթի մասին է խոսք լինելու այստեղ, մի նամակի սևագրության։[1]

Նախ՝ ո՞ւմ է ուղղված այս նամակը։

Նամակն ուղղված է Ներսես Աշտարակեցուն։

Ինչո՞ւ ենք այդպես կարծում։

Նամակն սկսվում է այսպես՝ «Սրբին վեհափառ»։ Վեհափառը կաթողիկոսական տիտղոս է, բայց դա դեռ խնդիրը չի լուծում, որովհետև Աբովյանը նման դեպքերում շատ էլ բծախնդիր չէր։ Հայտնի են դեպքեր, երբ ոչ կաթողիկոսի կաթողիկոսական տիտղոսով է կոչել նա։ Այսպես, օրինակ՝ 1834-ին Դուստհոֆից նամակ է ուղարկել Աշտարակեցուն, կոչելով նրան «քահանայապետ»։[2] Աբո-

[1] Աբովյանի արխիվ. № 190։ Այս նամակը թեև մինչև հիմա հրապարակված չէ, բայց մի քանի մեջբերում է արել նրանից ընկ. Հր. Քոչարը «Աբովյանի պայքարը հոգևորականության և սխոլաստիկայի դեմ» վերնագրով հոդվածում («Սովետական գրականություն», 1940, № 10—11 էջ 171—199)։

[2] Ի միջի այլոց այս հանգամանքը թյուրիմացության մեջ է գցել Աբովյանի արխիվը մշակող ընկերներին. Դուստհոֆից ուղղված այս նամակը նրանք դիտել են որպես այն ժամանակվա կաթողիկոսին՝ Կարբեցուն ուղղված նամակ։

վյանի մոտեցումը ոչ այնքան ձևական էր, որքան ըստ էության։ Նա Աշտարակեցուն կաթողիկոսի տիտղոսով էր կոչում, որովհետև նրան էր արժան տեսնում և ոչ Կարբեցուն։

Ի՞նչ հիմքեր կան նամակում։

Նամակի առաջին պարբերությունը ցույց է տալիս, որ նամակն ուղղված է նոր ընտրված կաթողիկոսին։ Մի տեղ խոսք կա Հովհաննես Կարբեցու մասին այն կապակցությամբ, թե ինքը՝ նամակ գրողը հանգուցյալ կաթողիկոսի օրոք հեռացել է լուսավորչական գահի հովանավորությունից և, ընդհակառակը, փափագել է միանալ նորից, բայց այն ժամանակ, երբ նոր կաթողիկոսը, այսինքն այն մարդը, որին ուղղված էր այս նամակը՝ կբարձրանա հովվապետության աթոռը։ Ուրեմն՝ բոլորովին պարզ է, որ խոսքն ուղղված է Կարբեցուն հաջորդած կաթողիկոսին, այսինքն՝ Աշտարակեցուն։

Ե՞րբ է գրված այս նամակը։

Հովհաննես Կարբեցուն, ինչպես հայտնի է, հաջորդեց Ներսես Աշտարակեցին։ Վերջինս էջմիածին եկավ իր հաստատվելուց բավական ժամանակ հետո՝ 1846-ի գարնանը։ Աբովյանի և նորընտիր կաթողիկոսի միջև նամակագրական սերտ կապ է եղել այդ շրջանում։ Աբիխի Հայաստան գալու և ճանապարհորդելու կապակցությամբ, կաթողիկոսը Աբովյանին մի կոնդակ է ուղարկել Պետերբուրգից դեռ 1844-ի հունվարի 25-ին։[1] Այդ նամակին Աբովյանը պատասխանել է բավական ուշ, մոտ մի տարի հետո, 1845-ի փետրվարի 15-ին, երբ արդեն կարող էր հաշվետու լինել իրեն արված հանձնարարության մասին։[2] Աբովյանի այս նամակի պատասխանը Աշտարակեցին ուղարկել է 1845-ի հոկտեմբերի 24-ին Նոր-Նախիջևանից։[3]

Նամակը, որի մասին խոսք է լինելու, թեև մի փոքր ուշ, բայց հաջորդել է այս նամակագրությանը։

Պետք է կարծել, որ գրվել է այն ոչ շուտ, քան 1847 թիվը։ Այս ենթադրության հիմք է ծառայում նամակում եղած հետևյալ արտահայտությունը... «Ընթացս քան ամաց ազատութեան հայրենեաց մերոց»։ Խոսքը պարսկական լծից ազատվելուն և ռուսաց տիրապետության տակ անցնելուն է վերաբերում։

---

1 «Դիվան Խաչատուր Աբովյանի». էջ 217։

2 «Փորձ». 1880, № 8—9։

3 Աբովյանի արխիվ. № 305։ Այս կոնդակը հրապարակված չէ, բայց նրա մեջ շոշափված հարցերը Շահազիզը համառոտ շարադրել է «Դիվանի» ծանոթությունների մեջ (էջ 218)։

Աբովյանն իր այս նամակը չի ստորագրել: Նա զգուշացնում է այդ մասին՝ թե վեհափառության մեծախոհ հոգին իր արդար խոսքը, որ ազգասիրությունից է բխում, թող մեղք չհամարի: Նա նույնիսկ փորձ է արել նամակի հեղինակի հետքերը կորցնել: Օրինակ՝ մի տեղ, սկզբի տողերում, Աբովյանը նամակի հեղինակին ներկայացրել է որպես մի անձնավորություն, որ հեռավոր երկրներ ոտքի տակ տալով՝ դիմել է Էջմիածին: Եթե հեռավոր երկրներ ասելով նա նկատի չունի Աբիխի հետ ունեցած իր շրջագայությունը 1844-ին, որ իսկապես ավելի լայն և հեռավոր սահմաններ ընդունեց, քան առաջներում կատարած նրա ճանապարհորդություններից որևէ մեկը, ապա այս պարզապես մի հնար է՝ նամակի հեղինակի հետքերը ծածկելու:

Չնայած դրան, մեր կարծիքով, Աբովյանին չի հաջողվել թաքնված մնալ, և այդ ոչ նրա համար, որ այդպես միայն Աբովյանը կարող էր այն ժամանակ գրել, արտահայտվել: Նամակում մի խոստովանություն կա, որից Աշտարակեցին հեշտությամբ կարող էր հասկանալ, թե ով է նամակի հեղինակը: Խոսքը վերաբերում է նրան, թե Կարբեցու օրոք ինքը հրաժարվել է հոգևորական կոչումից՝ մտադիր լինելով վերադառնալ եկեղեցի Ներսեսի կաթողիկոսանալուց հետո: Աբովյանը, ինչպես երևում է, մոռացել է, որ այդ մասին ինքն է գրել Ներսես Աշտարակեցուն ուղղած հայտնի նամակում (1845): Այնպես որ, Աշտարակեցուն բոլորովին դժվար չէր լինի հասկանալ, թե ով է այս նամակն իրեն ուղարկել:

Այժմ տեսնենք, թե Աբովյանի նամակը կյանքի ի՞նչ կողմեր է շոշափել, այդ կապակցությամբ ի՞նչ խնդիրներ հրահրել և, վերջապես, ի՞նչ մոտեցում և վերաբերմունք է հանդես բերել:

Աբովյանն ասում է, որ ինքը ոգևորված շտապել է Էջմիածին: Եվ այն, ինչ տեսել է այնտեղ՝ անկարող է լռությամբ մատնել.

«Ես ոչ կարեմ լռել, առ որ քարինք աղաղակեն, ես ոչ զօրեմ ծրարել ի սրտի զորոյ բորբոքեցին, և ազգն զկեցուցին, ամենայն հայրենասէր զգայ տանջանօք և հավիտեանս ավաղեսցէ տաշորմամբ»:

Իսկ ի՞նչ է տեսել Աբովյանը Էջմիածնում, ի՞նչն է, որ ստիպել է նրան խոսել, արտահայտվել, այլևս չլռել:

Աբովյանն ասում է, որ կովկասյան լրագրերը ճիշտ չեն ներկայացնում ժողովրդի վիճակը՝ պատկերելով հայ ազգը փառքի և բարեբախտության մեջ: Աբովյանն այդ լրագրերը կոչում է կեղ-

ծավոր, հեղինակներին՝ ստագիրներ կեղծապատիր դիմակներով, իսկ անհիմն գովեստները՝ խնկության օդաձայն շռինդ միայն:

«Զի՞նչ օգուտ և փառք մերազնեայց յազատութենէ Հայաստանեայց, մինչ նոյն ինքն Հայաստան առաւել ևս ի խաւարի տգիտութեան դանդաչէ, քան յաւուրս առաջինս ընդ բռնութեամբ բարբարոսաց»...

Աբովյանը նկատել է քաղքերի ապականություն, առևտրի մեջ խաբեություն, ատելություն միմյանց նկատմամբ, վարքերի ամեն կարգի և կերպի ապականություն, դեղխություն, ընկերական և կրոնական սիրո իսպառ բացակայություն և այլն:

Իր դիտած երևույթների աղբյուրն ու առիթը Աբովյանը, որպես լուսավորիչ, տգիտությունն է համարում:

Ո՞վ է մեղավոր:

Էջմիածինը, հոգևորականությունը, ավելի ճիշտ՝ այն ցավալի վիճակը, որի մեջ գտնվում է Էջմիածինը, այն ցած մակարդակը, որի վրա կանգնած է հայ հոգևորականությունը:

... «Եւ ուստի այս միշապապլուխ ախտ բարոյական, թէ ոչ ի պակասութենէ օրինաւոր և բարեկիրթ Հովուաց, որոց միայն պարտ է լինել «փոյթ և նկրտումն» հովուել և դարմանել զազգն արդարութեամբ և սրբութեամբ»:

Եվ Աբովյանը իր նամակում տալիս է Էջմիածնի անկման բավական արտահայտիչ նկարագիրը: Ընկերություններ կազմակերպելու, դպրոցներ բանալու, մի խոսքով հայրենիքը լուսավորելու փոխարեն «ի Էջմիածին և առ աղբերբ հաւատոյ և լուսոյ ազգին, զգոմշագեոյն մեծուցանեն և զգոմս անասնոց բարեզարդեն»:

Ահա և Աբովյանի կողմից գծված հոգևորականության պատկերը:

«Ի Հայաստան և աթոռակալք և ատենակալք հաւատոյ ի քուն, ի պարապորդութիւն, խռովասիրութիւն, ի ծուլութիւն, ի բամբասանս և որկրամոլութեամբ զմիմեանս գերազանցեն»...:

Աբովյանը նամակում ասում է, որ ինքը մտադրություն ուներ իր հոգևորական կոչմանը վերադառնալ, բայց ի՞նչն այլևս պետք է ջերմացնի իր և ընդհանրապես այսպիսի միտքն ունեցողների սրտերը — զամշագյո՞ւր, թե ուսումնարանների բացակայությունը, հոյակապ գո՞մը, գեղջկական դպրոցը, արդար անբավականությունը և բարեփույթ անձերի տրտունջը ազգի մեջ դեպի Էջմիածի՞նը, թե՞ հոգևորականների վարքը, հավատից չեղվելը:

Աբովյանը կատարում է մի մեծ և շատ էական ընդհանրացում.

«Կորեաւ Թշնամին հաւատոյ, այլ յարեաւ եղեռնագոյն ևս Թըշնամի, որ տապալէ զամենայն, այն է՝ կուրութիւն և խաւարամտութիւն հոգևորականաց մերոց, որք կորուսանելով զհարկ և զվարկ իւրեանց յաչս ազգին, ի կորուստ մատնեն և ամենայն սրբութիւն նախնեաց և ազգապետաց»:—

Նկատենք, որ Աբովյանը, ինչպես և լուսավորական շարժման այլ ներկայացուցիչներ, ունեցել է լուսավորված հոգևորականի իդեալը: Սրա մի պատճառն այն կաշկանդող սահմանափակությունն էր, որ առաջ էր բերում հետամնաց իրականությունը՝ իր կնիքը դնելով առաջավոր մարդկանց մտածողության վրա: Մյուս պատճառը այն էր, որ մեր լուսավորիչները ինքնուրույն պետությունից զրկված և աշխարհով մեկ ցրված՝ ժողովրդի համար եկեղեցին համարում էին այն ուժը, որն իբր թե պետք է կարողանար համախմբել բոլորին ազգային զարթոնքի շուրջը: Նույնիսկ այնպիսի շրջան է եղել, երբ Աբովյանը, ինչպես հայտնի է, միտք է հղացել նորից վերադառնալ իր հոգևոր կոչմանը: Այս, իհարկե, ցույց է տալիս այն հուսահատ դրությունը, որի մեջ գտնվում էր լուսավորիչ Աբովյանը իր ամեն մի քայլից առաջ՝ մի մեծ խոչընդոտի հանդիպելով:

Աբովյանը միշտ էլ քննադատական վերաբերմունք է ունեցել դեպի հայ հոգևորականությունը: Թե «Վերք»-ում, թե այլ փաստաթղթերում նա անընդհատ խարազանել է հոգևորականության մեծ մասի տգիտությունը, եսասիրությունը և այլն: Ամենից խիստ կերպով հոգևորականության քննադատությունը նա տվել է «Նախաշավիղին» կցված գերմաներեն լեզվով գրված բացատրականում՝ աշխարհաբարի կապակցությամբ: Նա ասում է, որ հոգևորականությունը իր էգոիստական ձգտումներից ելնելով՝ պաշտպանում է եկեղեցական լեզուն և ամեն միջոց գործ դնում՝ աշխարհաբարի դեմ: Ի միջի այլոց նկատենք, որ Աբովյանի քննադատությունը այդ փաստաթղթում վերաբերում է ոչ միայն հայ հոգևորականությանը: Եվ այդ հանգամանքը հավանություն չի գտել Գիտությունների Ակադեմիայի պաշտոնական շրջաններում: Չնայած այդ քննադատությանը, Աբովյանը շարունակ համոզված է եղել, որ կարելի է և պետք է հոգևորականությանը վերակրթել:

Այժմ նրա հիասթափությունը կատարյալ է:

Աբովյանը այլևս ոչ մի հույս չի կարող կապել հոգևորականության հետ, հոգևորականությունը տգիտության մեջ է պահում

ժողովրդին, արգելք լինում նրան՝ նոր և լուսավոր կյանքով ապրելու: Աբովյանը հիասթափված է նաև Ներսես Աշտարակեցուց:

Նկատենք, որ Աբովյանը բավական մեծ հույսեր էր կապում Ներսեսի կաթողիկոսանալու հետ: Այդ վկայող փաստերը բավականաչափ շատ են: Նախ՝ Աբովյանի հայտնի նամակը Աշտարակեցուն: Հետո Աբովյանի թղթերի մեջ պահպանվել է այն ճառը, որ նա պատրաստել է Ներսեսի ժամանման օրը ասելու համար, ինչպես և այն ոտանավորը, ուր նա արտահայտել է իր հույսերը:[1]

Աբովյանի հույսերը չարդարացան:

Եթե մեկ կամ երկու տարի առաջ Աբովյանը Ներսեսից դժգոհ էր, որ իր առաջադրած խնդիրներից ոչ մեկին նա դրական լուծում չտվեց, ապա այժմ, այս նամակը գրելիս, Աբովյանը վերջնականապես համոզվել է, որ համենայն դեպս Աշտարակեցին չէ այն մարդը, որի հետ կարելի է ժողովրդի լուսավորության գաղափարը կապել:

Աբովյանը հուզված է Աշտարակեցու դեմ, որ կաթողիկոսական գործերը թողած՝ մեկնել է Թիֆլիս և զուր տեղը ժամանակ է կորցնում այնտեղ և այդ այն ժամանակ, երբ Էջմիածնում կատարյալ թշվառություն է տիրում: Աբովյանն ասում է, որ Էջմիածնի գահի վրա բազմած է ագիտությունը, իսկ աչքի ընկնող հոգևորականները չեն զգում անկումը, որի մեջ են այժմ իրենք:

Իսկ մի տեղ շատ ավելի որոշակի է ասված. դիմելով Ներսես Աշտարակեցուն՝ Աբովյանն ասում է, որ ինքը և շատ ուրիշները մեծ հույսեր էին կապում նրա հետ: Հանձին Աշտարակեցու, Աբովյանը, ըստ երևույթին, պատկերացնում էր մի նոր Մխիթար աբբա, որ իր հետևորդների և աշակերտների հետ մի մեծ, մինչ այդ չեղած գործ է սկսելու հայրենիքում՝ բոլոր լուսավոր մարդկանց համախմբելով իր շուրջը:

Աբովյանը չի թաքցնում իր երբեմնի ոգևորությունը և հույսերը, որ կապել է ինքը Աշտարակեցու հետ: Անկում է, խորը անկում: Եվ վաղեմի փառաբանությանը փոխարինում է հանդիմանությունն ու մեղադրանքը:

«Զբաղումս տարաբախտ յետնորդաց Ձերոց՝ որոց ազգն պատուեալ, այլ ոչ հաւատացէ, այլ ոչ տացէ զձեռն յօժանդակութեան»,— հայտարարում է Աբովյանը:

Աբովյանը, ինչպես հայտնի է, այն համոզման է եղել, որ Հայաստանը պետք է ռուս պետականության հովանու տակ գտնի իր

[1] Աբովյանի արխիվ. № 48:

խաղաղությունը։ Իր նշանավոր վեպում արտահայտած հիացումը, երախտագիտության զգացումը տարածվում էր ոչ միայն ռուսների և Ռուսաստանի, այլև ռուսաց թագավորի, նրա պետականության վրա ևս։ Կյանքի վերջին տարիներին Աբովյանն անշուշտ ապրեց որոշ հուսախաբություն։ Մնալով ռուսական կուլտուրայի եռանդուն պրոպագանդիստներից մեկը հայ իրականության մեջ, Աբովյանը չէր գտնում արդարացած այն հույսերը, որ մի ժամանակ ուներ ինքը։ Այս եզրակացությանը, սակայն, որպես ընդհանրացած մտքի, մինչև հիմա Աբովյանի որևէ գրվածքի կամ փաստաթղթի մեջ չենք հանդիպել։ Իրականությունը շատ առիթներ է տալիս, և այս դժգոհությունը գնալով պետք է խորանար։ Բայց դա ի՞նչ էր— դժգոհություն ռուս միապետականությունից ընդհանրապե՞ս թե մասնավոր չինովնիկներից, թեկուզ բարձրաստիճան պաշտոնյաներից, ասենք ինչպես գեներալ Տրամ երկրորդը կամ մի ուրիշը, մի խոսքով՝ ով-որ արգելք էր դառնում լուսավորական գործունեության։ Նա հասկանու՞մ էր արդյոք, որ այս կամ այն պաշտոնյայի քայլը կառավարության քաղաքականության մի արտահայտությունն է. թե՞ վերագրում էր այդ մարդու հայացքին, անհատականությանը, անձնական վերաբերմունքին դեպի ինքը կամ նույնիսկ դեպի հայ ժողովուրդը։

Աշտարակեցուն ուղղված այս նամակը, որքան մեզ հայտնի է, առայժմ միակ փաստաթուղթն է, ուր հուսախաբության շրջան ապրող Աբովյանը արտահայտվել է ռուսական միապետության մասին, և այս նամակը այդ շատ բարդ, ուսումնասիրության կարոտ խնդրի մեջ մի որոշ պարզություն է մտցնում։

Աբովյանը մի քանի անգամ այս նամակում հարց է տալիս, թե ի՞նչ օգուտ, ինչ վնաս կամ ինչ բարեբախտություն Հայաստանի քաղաքական ազատությունից։ Ըստ որում, շատ հետաքրքիր է, որ Աբովյանն ասում է, որ ռուսների տիրապետության տակ անցնելով՝ Հայաստանը քաղաքական ազատություն է ձեռք բերել։ Նրան անսահման ցավ է պատճառում, հուզում, վրդովում, որ այդ ազատության պտուղներն այն չեն, ինչ որ պետք է լինեին։

Ո՞ւմ է նա մեղադրում. կառավարությա՞նը թե հոգևորականությանը։

Այս նամակում հարվածը գրեթե ամբողջությամբ ուղղված է հոգևորականության դեմ։ Այս ճիշտ է։ Բայց այն ամենը, որ տեղի էր ունենում կյանքում, որի համար այնքան վրդովվում է նա, կրակի տակ առնում եկեղեցին, նրա ներկայացուցիչներին, Աբո-

վյանի ասելով, տեղի է ունենում «ընդ թևօվք խնամած ամենաօրհ-նեալ Տէրութեան ռուսաց». կամ մի ուրիշ տեղ էլ ասում է. «ընդ վարագուրաւ պաշտպանութեան օրինաց» և այլն: Իսկ մի այլ տեղ, հիշելով, թե ինչպես անցյալում էջմիածինը ձգտում էր հայ կուլ-տուրայի կենտրոն դառնալ՝ Աբովյանն ասում է. «Յաւուրս մեծազօր արքային Նիկողայոսի և հզօր տէրութեանն ռուսաց գոմեշք և էշք պարտին զովանալ ի լեռս և պարա[ր]տանալ ի գոմս մեծակա-ռոյց»:

Աբովյանի վրդովմունքն ուղղված է և հոգևորականության, և միապետության դեմ: Ինչո՞ւ հայ հոգևորականությունը երկրի «քա-ղաքական ազատությունից» օգտվելու փոխարեն՝ թույլ տվեց, որ ժողովուրդը մնա տգիտության մեջ, որ բարքերի ապականություն և անառակություն տարածվի: Ինչո՞ւ էջմիածինը լուսավորության կենտրոն դառնալու փոխարեն՝ աննախընթաց անկում է ապրում: Չէ՞ որ կարծես ճիշտ հակառակը պետք է լիներ: Իսկ կառավարու-թյունն ինչո՞ւ է թույլ տալիս, նույնիսկ հովանավորում:

Այս է Աբովյանի եզրակացությունը: Առաջին միտքը նա պարզ և որոշ է արտահայտել, երկրորդ միտքը՝ հստակ ձևակերպում չի գտել, ավելի ակնարկի բնույթ ունի:

Մենք գործ ունենք Աբովյանի աշխարհայացքի զարգացման այն շրջանի հետ, երբ նրա հուսախաբությունը, ճիշտ է, դեռ բա-վական մութ և անորոշ ձևերով, բայց կարծես արդեն սկսում է շո-շափել առանձին երևույթների մեջ եղած կապերը, ընդհանրություն-ները:

Աբովյանն այս նամակը գրել է 1847-ին, բայց ե՞րբ, ո՞ր ամ-սին՝ հայտնի չէ, գուցե և տարեսկզբին: Նույն տարին, սակայն ար-դեն աշնանը գրվել է Շահնազարյանին ուղարկված նամակը, ուր արտահայտված է շատ որոշակի ձևով Սիբիր ուղարկվելու երկյու-ղը: Արդյոք այդ երկու նամակներն իրար հետ կապվա՞ծ չեն կամ նույնիսկ մեկը մյուսի հետևանք չեն:

Մի քայլ ևս, և Աբովյանի դժգոհությունները գուցե և հանգեին քաղաքական ընդհանրացման— միապետականության բացասման մտքին: Աբովյանը չհանգեց այդ մտքին, բայց նրա անձնազոհ գործունեությունը հայրենիքի լուսավորության համար ոչ միայն հաշտ չէր կովկասյան ժողովուրդների նկատմամբ միապետության բռնած դիրքի հետ, այլև օբեկտիվորեն ուղղված էր ցարիզմի վա-րած ռուսացման քաղաքականության դեմ:

Ցարիզմի բացասմանը հայ հասարակական-քաղաքական մտքի,

զարգացումը հանգեց հետո՝ հանձին Նալբանդյանի և նրա զինակիցների։ Երկու Ռուսաստանի՝ դեմոկրատական և ռեակցիոն Ռուսաստանների գիտակցությունը հայ առաջավոր դեմոկրատական միտքը ռևոլյուցիոն ընդհանրացման բարձրացրեց— ռուս ժողովրդի հետ՝ ընդդեմ ռուսական ցարիզմի։

* * *

Այն մի քանի լուսաբանությունը, որ տալիս ենք այս փաստաթղթի կապակցությամբ, իհարկե, չեն սպառում նամակի բոլոր կողմերը։ Չենք կասկածում, որ այս նամակը դեռ շատ ուշադրություն է գրավելու։ Մոտ ապագայում և հետո, դեռ երկար ժամանակներ, բանասիրական միտքը այստեղ կգտնի նոր կողմեր, և շատ հավանական է, որ դրանց լույսի տակ էլ առանձին խնդիրներ գուցե և բոլորովին այլ լուծում ստանան։ Նամակի վերջում Աբովյանն ասում է, որ շատ ավելի ասելիք ուներ, բայց իր վրդովված սիրտը ուժ և զորություն չի տալիս՝ շարունակելու խոսքի ընթացքը։ Այս խոսք չէ կամ միայն ձև, որ Աբովյանն ասել է նամակն ավարտած լինելու համար։ Խոսքի ամբողջ ընթացքը վկայում է, որ նամակի հեղինակն իսկապես շատ ավելի ասելիք ունի, քան կարողացել է արտահայտել նամակի սահմանափակ ծավալում։ Մի տեղ նա հարցնում է, ի՞նչպես կարողանա թաքցնել վերքերը, որ օրըստօրե մեր ազգի բոլոր մարմինը գիշատելով խորանում է։

Աբովյանը դիտել է կյանքը, տեսել ու նկատել, երբեմն խոսել, արտահայտվել, երբեմն լռել, հազիվ զսպել իրեն, մեկ հուսահատվել, մեկ նորից հուսադրվել, բայց միշտ կյանքի մեջ է եղել, հասարակության մեջ, մարդկանց հետ։ Եվ փաստերն ու տպավորությունները կուտակվել են, լեռնացել մեծ լուսավորչի հոգում՝ մի օր, մի տեղ հրաբխի պես ժայթքելու համար։ Կարդում և զգում ես, որ այս նամակը Աբովյանը գրել է ահեղ հուզմունքի մեջ, ներսից ամբողջապես այրվելով։ Այդ նամակից մեզ հետ խոսում է վիրավորված հայրենասերը։ Դա սովորական վերք չէ, այդ վերքը սրտի մեջ է։ Այլևս անկարող ցավերին դիմանալ, այլևս չկամենալով համբերել, լռել՝ Աբովյանի այնքան զգայուն հոգին այժմ ցասումնացած՝ շանթեր ու կայծակներ է արձակում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ինստիտուտի կողմից 5

I

Եղ. Թոփչյան—«Վերք Հայաստանի» վեպի իդեական բովանդակությունը 9

Դ. Դեմիրճյան—Գրական ժանրերը Խ. Աբովյանի ստեղծագործության մեջ 33

Վ. Պարտիզունի—Աբովյանը և Ռուսաստանը . . . 49

Հ. Մուրադյան—Աբովյանի քննադատական վերաբերմունքը Արևմուտքի նկատմամբ 81

Ա. Ղանալանյան—Ժողովրդական բանահյուսության տեղն ու դերը Աբովյանի ստեղծագործության մեջ 113

Գ. Ստեփանյան—Խաչատուր Աբովյանը և արևմտահայ գրականությունը 131

Մ. Սանթրոսյան—Խաչատուր Աբովյանը հայ նոր մանկավարժության հիմնադիր 173

II

Գ. Աբով—Խաչատուր Աբովյանի ծննդյան թվականը . . 207

Ի. Ենիկոլոպով—Խ. Աբովյանի Թբիլիսյան տարիները . . 217

Ռ. Զարյան—Նոր տվյալներ Աբովյանի կյանքից . . . 229

ԳՐԱԴԱՐԱՆ

ՏԵԽ. ԽՄԲ.՝ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ — ՍՐԲԱԳՐԻՉ՝ Ա. ԱՐՋԱՔԱՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 3/VIII 1948 թ., ստորագրված է տպագրության 22/IX 1948 թ., ՎՖ 04636, պատ. 440, հրատ. 569, տիրաժ 500, տպագրական 21 մամուլ, 1 մամուլում 38,400 տպ. նիշ։

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Աբովյան 104

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0508065

Գինը 20 Ռ.
[1ռ.]

Նուշի
2261